Գ. Ա. ԱՖՐԻԿՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՎԻՆ ՏՐՈՒԱՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА

Г. А. КАПАНЦЯН

ИСТОРИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА

(ДРЕВНИЙ ПЕРИОД)

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1961

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. Ա. ՂԱՓԱՆՑՅԱՆ

491.99-53

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(ՀԻՆ ՇՐՋԱՆ)

A 9399

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1961

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ

Ներկա աշխատությունն ավարտված և անհրաժեշտ մնացած մեկ գործն է, որի վրա հեղինակն աշխատում էր մինչև իր կյանքի վերջին օրերը: Աշխատությունը պատմական և անհրաժեշտ խոշոր արժեք ունի հայ ժողովրդի և հայոց լեզվի ծագումը պարզելու գործում: Հեղինակը հենվելով պատմական, դիցաբանական, լեզվական և ազգագրական հարուստ փաստերի վրա, քննության է ենթարկում հայոց լեզվի ազերը՝ խեթերենի, ուրարտերենի, շումերերենի, խուռիտերենի, լատո-մերրելերենի հետ: Երկրորդ մասում հանգամանորեն քննված է հայոց լեզվի հնդեվրոպական բազկացուցիչը՝ քերականական կառուցվածքը, հնչյունաբանությունը և բառային հիմնական ֆոնդը: Մի շարք քերական-կան ձևեր և բառաստեղծության ենթարկված են նոր մեկնաբանության:

Պատ. խմբագիր՝
Հ. Հ. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ակադեմիկոս Գր. Ղափանցյանի «Հայոց լեզվի պատմության հին շրջանը» նորիկա աշխատությունը նվիրված է հայոց լեզվի պատմության հին շրջանի մի շարք կարևոր հարցերի պարզաբանմանը: Հեղինակը պատմական, լեզվական ազգագրական և հնագիտական բազմաթիվ փաստերի հիման վրա փորձում է պարզել հայերենի գոյացման և հետագա զարգացման հարցերը, նկատի ունենալով փոքրասիական մեռած և հայերի հարևան ժողովուրդների լեզուների ազդեցությունը: Աշխատության առաջին բաժնի նյութերի զգալի մասը առանձին գրքույկով լույս է տեսել հեղինակի կենդանության օրոք: Հեղինակն այդ նյութերն ամբողջականացրել, որոշ մշակման է ենթարկել այս գրքում: Երկրորդ բաժինն առաջին անգամ է ներկայացվում ընթերցողներին:

Այս աշխատությունն արժեքավոր է հին և մեռած լեզուների վերաբերյալ իր հարուստ փաստերով, անսպառ նյութով ու նոր մոտեցմամբ: Հայոց լեզվի պատմության հին շրջանը հեղինակը շարադրել է բազմաթիվ հայագիտների և իր ուսումնասիրությունների փաստական նյութի ամենի օգտագործմամբ, նրա համառ և խոր վերլուծությամբ: Ինչպես ճիշտ նկատել է ինքը՝ հեղինակը «Նորիկա աշխատությունը հայերենի ուսումնասիրության մի նոր փորձ է... իր քննական մոտեցմամբ»:

Ղափանցյանը հայոց լեզվի և հայ ժողովրդի կազմավորման մասին նոր մոտեցում է հանդես բերում հատկապես 1930-ական թվականներից ասած, երբ հայագիտական հարցերի ավելի լայն ընդգրկման և պարզաբանման համար ուսումնասիրում է փոքրասիական մի շարք մեռած լեզուներ, ինչպես օրինակ՝ խեթերեն, ուրար-

տերեն, խուռիտերեն, բալալերեն և այլն։ Այդ լեզուները պատմության ընթացքում անհետացել են մինչև նոր դարաշրջանը՝ դիտական աշխարհին թողնելով լեզվական հարուստ փաստեր։ Հեղինակը հայկական և փոքրասիական լեզվական մի շարք ընդհանրություններ է հայտնաբերել, որոնք փոխառություններ չեն, այլ գալիս են վաղեմի ժամանակներից, ենթադրաբար հայ ժողովրդի կազմավորման շրջանից։

Աշխատության մեջ շարադրված է այն տոհմերի և ցեղերի դերը, որոնք մասնակցել են հայ ժողովրդի կազմավորման պրոցեսին։ Հեղինակը հայոց լեզվի ազգակցության հարցը պարզելիս առավել կարևոր է համարել հայերենի և հարևան հին լեզուների փոխազդեցության և լեզվական ընդհանրությունների փաստերի խորն ուսումնասիրությունը։ Գիտական մեծ արժեք են ներկայացնում գրքի այն մասերը, որոնց մեջ քննության են առնված մի շարք տեղանուններ, ցեղանուններ ու տոհմանուններ։ Հեղինակն իրեն հատուկ բծախնդրությամբ, հնէաբանական և դիցաբանական հարուստ փաստերի հիման վրա հանգում է արժեքավոր եզրակացությունների. բնորոշելով հայ ժողովրդի և նրա լեզվի առաջացման գործոնները, պարզաբանում է հայերենի և հարևան ժողովուրդների լեզուների ընդհանրությունները, նրանց էությունն ու կարևորությունը հասարակական կյանքի տարբեր պայմաններում, բացահայտում այդ ընդհանրությունների որակն ու աստիճանը։

Ղափանցյանը ենթադրում է, որ Հայասա-Ազդի ցեղն ունեցել է իր հատուկ լեզուն, որն ազդակից է եղել խեթական, բալալական, վրացական, հատկապես նրա արևմտյան ներկայացուցիչների՝ մեգրելական և ճանուկան (զանական) լեզուներին։ Այդ դիր չանցած և մեզ չհասած հայասական լեզուն արտացոլված է միայն ասորագրերի, ցեղանունների և տեղանունների մեջ։ Հայասական լեզուն, որը մինչև այժմ հայտնաբերված գրավոր հուշարձաններում չի պահպանված, ըստ Ղափանցյանի, հետզհետե խաչաձևվելով է մի կողմից հնդեվրոպական (սլավոնական-սկյութական և հունական) և մյուս կողմից՝ Արխմե-Շումերիա երկրի խուռիտական (սուբարեական) լեզվի հետ, որով և նա փորձում է բացահայտել հայկական և խուռա-սուբարեական լեզուների միջև եղած մի քանի քերականական ընդհանրությունների առկայությունը։

Հայ ժողովրդի կազմավորման պրոցեսին մասնակցած ցեղերի և նրանց լեզուների խաչաձևման բնութագրում Ղափանցյանը հաղթությունը տալիս է հիմնականում մեկ ցեղին և նրա լեզվին,

տվյալ դեպքում Հալլասա ցեղին ու նրա լեզվին: Նա այն կարծիքին չէ, որ խաչավորման հետևանքով իրը թե առաջանում է ինչ-որ մի նոր լեզու: Ընդհակառակն, նա քննադատում է Ն. Յա Մարի այն տեսակետը, թե հայերենը խառնածին լեզու է՝ կազմված հարեթա-արիական համազոր լեզվաշերտից: Սակայն Դափանցյանը, չժխտելով հայերենի հնդեվրոպական ծնունդը, գտնում է, որ հայոց լեզուն միատարր, միաձույլ չէ, այլ խառն լեզու է (смешанный язык): Իհարկե, հայերենի մասին այս տեսակետը թեև իր ժամանակին դիտական որոշակի հետաքրքրություն էր ներկայացնում, սակայն հետագայում հիմնավորում չգտավ:

Յաֆեթական, ուրարտական, խուռիտական և այլ փոքրասիական կամ այսպես կոչված ասիանիկ լեզուների ու հայերենի միջև եղած լեզվական ընդհանրությունները հիմք էին տալիս Դափանցյանին կարծելու, որ հայոց լեզուն իր ծագմամբ ասիանիկ լեզու է: Այդ տեսակետը նա պաշտպանում է նաև ներկա աշխատության մեջ: «Իմ կարծիքով,—գրում է հեղինակը,—հայերենի նախամամբ ծագումնաբանական (գենետիկական) հետևությունն անելը հօդուտ հնդեվրոպականի թերևս միակողմանի է... Լեզվական տեղային (ասիանիկ) փաստերը, ինչպես նաև հալ էթնիկալի, կուլտուրալի, կրոնի և նյութական կուլտուրալի տվյալները խոսում են հօդուտ հայերենի փոքրասիական կուլտուրական ծագման, հօդուտ այս ասիանիկ բնօրրանի»:

Դիտությունը մեջ այս տեսակետն արտահայտվել է դեռևս անցյալ դարի 60-ական թվականներից սկսած: Մի շարք դիտնականներ որոշակի խոսել են փոքրասիական հին լեզուների մասին և այն կարծիքն են հայտնել, որ այդ լեզուները ազգակից են հայերենին: Այդ դիտնականներից են Լասսեն, Բլաուեն, Գոշեն և ուրիշներ: Հայագետ Ֆերարիո Պատկանյանն այն միտքն է հայտնել, թե «Մինչև այժմ եղած խուզարկությունների եզրակացությունները հետևյալի մեջ են ամփոփվում. հայկական լեզուն իրանյան և արևելա-լիթվականյան խմբերի միջանկը բռնելով հնդեվրոպական անհայտացած (գուցե փոքրասիական) խմբի անկախ ներկայացուցիչն է»[1]:

Ճիշտ է, որ հայոց լեզուն բազմաթիվ լեզվական ընդհանրություններ ունի հին փոքրասիական (ասիանիկ) լեզուների հետ, որոնք ամփոփված են Գ. Դափանցյանի կողմից ներկա աշխատու-

---

[1] *Տե՛ս «Փորձ» ամսագիրը, 1880:*

թյան մեջ, սակայն հայերենը փոքրասիական կամ ասիանիկ լեզու համարելն ընդհանուր ճանաչում և ընդունելություն չգտավ, քանի որ հայերենի քերականական կառուցվածքի և բառային հիմնական ֆոնդի հնդեվրոպական բնույթը հաստատվեց գիտության մեջ բազմաթիվ անհերքելի, հիմնավոր փաստերով: Ղափանցյանը ևս, իհարկե, չի ժխտում հայերենի հնդեվրոպական ընտրը: Այդ մասին նա գրում է. «Հայերենի ձևակերպված պատմական կացությունը (5-րդ դարից) լեզվագիտության ընդունված չափանիշների տեսակետից մեզ թույլ է տալիս հորջորջել «հնդեվրոպական», բայց... այստեղ շատ բան ոչ միայն թվացող բնույթ է կրում... այլև ևս կասեի նախատրամադրված, որովհետև հայերենի հարուստ գանձը (գրաբարում և բարբառներում) իր ուսումնասիրության մեջ դեռ շատ հեռու է վերջացած լինելուց...»:

Ակադ. Ղափանցյանը գտնում է, որ «Հայերենի հնդեվրոպական նատվածքը... ունի մոտ չորս հարյուր արմատներ և բառահարբերական (քերականական) զգալի վկայություններ» (էջ 275): Նախ՝ հայերենի հնդեվրոպականությունը ոչ թե նատվածք է, ինչպես պնդում է հեղինակը, այլ նրա բնույթն է և ապա՝ հայերենն ունի ոչ թե չորս հարյուր հնդեվրոպական արմատներ, այլ՝ 8—9 հարյուր, որոնք անառարկելի փաստերով ապացուցված են Հ. Հյուբշմանի, Ա. Մեյեի, Հ. Աճառյանի և ուրիշների կողմից: Իսկ ինչ վերաբերում է հայերենի քերականությանը, ապա նրա ողջ կառուցվածքը հիմնականում հնդեվրոպական բնույթի է:

Հարկ է նշել նաև, որ վերջին տասնամյակի լեզվաբանական հետազոտությունները վերջնականապես պարզեցին մի քանի փոքրասիական մեռած լեզուների (խեթական, բալա, լուվիական և այլն) հնդեվրոպական բնույթը:

Հայերենի քերականական որոշ ձևերի և կատեգորիաների մեջ կան մասնակի, առանձին տարբերություններ հնդեվրոպական լեզուների համեմատությամբ, ավելին, հայոց լեզուն հնչյունական և ձևաբանական որոշ հատկություններով մասամբ հեռացել է հնդեվրոպական լեզուներից: Սակայն այդ տարբերությունները պետք է դիտել ոչ իրրև այլ ընտանիքին պատկանող լեզուների խաչավորման արդյունք, ինչպես պնդում է Ղափանցյանը, այլ հայերենի ներքին զարգացման օրինաչափություններ, սեփական առանձնահատկություններ: Բացի բառերից, անշուշտ, կան նաև բառատեղծական մասնիկներ, որոնք ընդհանուր են մի կողմից հայոց և փոքրասիական և մյուս կողմից՝ հայոց և կովկասյան լեզուների

մեջ։ Այդ ընդհանրութիւնները ո՛չ պատահական են, ո՛չ էլ սոսկ զուգադիպութիւններ։ Դրանք չի կարելի համարել նաև փոխառութիւններ։ Աշխատութեան մեջ նշված լեզվական այդ ընդհանրութիւնները դալիս են հայ էթնոսի կազմավորման ժամանակից և նոյնիսկ ավելի առաջ։ Սակայն նման ընդհանրութիւններ մենք չենք տեսնում բառահարստութեան (հոլովման և խոնարհման) ձևերի և քերականական հիմքերի մեջ։ Այդ են ապացուցում նաև այս գրքում եղած փաստերը։

Հ. ԿՈՍՏԱՆԵԱՆ

1. ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Որևէ կոնկրետ լեզվի կազմավորման և զարգացման հին փուլերի ուսումնասիրության համար, երբ մանավանդ բացակայում են նրա գրավոր վկայությունները, միակ հնարավոր այդպիսի ուսումնասիրության աղբյուրներ, թեպետ և սահմանափակ, կարող են հանդիսանալ այդ լեզվի հին հարևան և ազգակից լեզուները, որոնք գրավոր հիշատակարաններ ունեն։ Այդ հանգամանքը ամենանպատակահարմարն է, իսկ ազգակից լինելը պայմանավորված չէ անմիջական հարևանությամբ, քանի որ ցեղերը կարող են տրոհվել և իրենց հաստվածները գաղթել շատ հեռուն։

Ցեղային ու լեզվական սկզբնական ակունքները մոտավորապես միայն կարող են ընդգծվել. իսկ դրանք պատմականորեն աղերսակցվում են իրար հետ։ Հայաստանի տերիտորիայի հնագույն ցեղերի մասին մենք որոշ տեղեկություն ենք քաղում աստուրական, խեթական և ուրարտական բևեռագիր արձանագրություններից, որ շատ կարևոր է հայերի սկզբնական պատմության համար, սկսած Հայաս-Ազդի կոչված ցեղային դաշնակցություններից վերին Եփրատի վրա (Փոքր և Բարձր Հայք), մեր էրայից դեռևս 14—15 դարեր առաջ։ Բայց հայոց լեզուն ինքը դառնում է նույնպես պատմության աղբյուր, և համեմատական-պատմական մեթոդով նրա ուսումնասիրությունը այլ լեզուների հետ (մանավանդ հնդեվրոպական) հաստատում է հայերի ազգակցությունը և այդ հնդեվրոպական որոշ ցեղերի հետ, որ հաստատվել է դեռևս մեր էրայից յոթ դար առաջ (համեմատել մեր «առաջին թեզադիր» Պարույր Սևակ-որպես, որ սկզբնացի էր)։ Հայերենը ունի ուժեղ չափով շեշտված հնդեվրոպական նկարագիր, որը նստել է տեղական փոքրասիական

(տիպային) լեզուների վրա, այդպիսով կազմելով մի յուրատեսակ խաչասերված նոր լեզու:

Հալբերնը հետաքրքրական է ոչ միայն այդ երկու հիմնաբար կոմպոնենտների դեներգիայով, որ առանձին տեղ է գրավում լեզուների պատմության մեջ, այլև հարևան վրաց, ուրարտուխուրիտական և սեմական լեզուների հարաբերությամբ, թեպետ այստեղ ևս չի բացառվում այդ որոշ տարրերի «հարազատ» լինելը: Մենք իր տեղում կտեսնենք այդ բոլոր փաստերների լեզվական և պատմական նշանակությունը, որը երևան է բերվում համեմատական-պատմական մեթոդով, և մեծ ծառայություններ է մատուցում թե՛ ընդհանուր լեզվաբանությանը և թե՛ մասնավոր (կոնկրետ) լեզուների գենեզիսին ու զարգացման պատմությանը:

Իմ «Հայոց լեզվի ծագման շուրջը» գրքույկում[1] ես այդ մասին գրել եմ. «Ցվկալ լեզվի նախապրալին կացությունների (կամ կացության) ուսումնասիրության համեմատական մեթոդը թեպետև սահմանափակ է և անկատար, այնուամենայնիվ նա տալիս է որոշ ձեռքբերումներ, որոնք միանգամայն ունալ են և հաճախ հետագայում արդարանում են նորանոր գյուտերով, և հետևապես միանգամայն իրեն արդարացնում է և իր կիրառման մեջ տակավին միակն է: Հարկավ այդպիսի համեմատությունը ի կատար է ածվում հնչյունաբանական խիստ օրինաչափությունների հիման վրա, այլ ոչ թե կանխակալ և բռնազրոսիկ կերպով, երբ՝ անտես են առնում ժամանակը, պատմական հնարավոր աղերսները և լեզվական իրականությունները ուսումնասիրվող լեզուների կատեգորիաներում, ֆետիշացման ենթարկելով անգամ այժմյան հնչյունական դրությունը, մտահղացողաբար բաժանելով լեզուն էլեմենտների, տարրերի և այլն, լեզուների համընդհանուրի պատճառով չտեսնելով տվյալ լեզվի կոնկրետ կյանքը իր պատմական կեցության, շրջապատի, պայմանների և այլնի մեջ»: Ավատով ես նկատի եմ ունեցել Ն. Մառի չարաբաստիկ «Լեզվի նոր ուսմունքը», թեպետ անունը չեմ տվել: Նման նկատառումով գրել եմ.

«Հարկավ անգամ արդարացի էր Ֆր. Էնգելսը, երբ սրում էր ուշադրությունը լեզուների կոնկրետ-պատմական զարգացման (իսկ «պատմականության» համար նա մինչև իսկ զոհում էր հնդեվրոպական լեզվաբաններին) և իր «Անտի-Դյուրինգ»-ում ասում էր.

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ԳԱ Հասարակական գիտությունների «Տեղեկագիր», 1946, № 7, էջ 3—4:

«Մատերիան և ձևը հարաբերական լեզվին միայն այն ժամանակ են հասկանալի դառնում, երբ հետաքննում են նրա ծագումը և ատիճանական զարգացումը, իսկ սա անհնար է, եթե թողնել առանց ուշադրության նախ՝ իրենց սեփական մեռած ձևերը, և երկրորդ՝ ազգակից կենդանի և մեռած լեզուները»[1]։

Կ. Մարքսը և Ֆր. Էնգելսը իրենց գրքերում հաճախ են գործածում լեզուների նկատմամբ «ազգակցության» (родство) բառը, ինչպես և համեմատական մեթոդի դրական արժեքը։ Ֆր. Էնգելսը նման մոտեցմամբ հատուկ աշխատանք է գրել գերմանական ֆրանկերեն բարբառի մասին։

Ըստ էս, տոհմացեղային հասարակարգում, երբ մոտավոր քանակի և կուլտուրալի ցեղեր են խաչավորվում և դրանց տարբեր լեզուները իրենց ընդհանուր կառուցվածքով շատ էլ չեն հակասում իրար, թեպետ և ազգակից չեն, կարող է տեղի ունենալ այդ ցեղային տարբեր լեզուների խաչավորում իրենց թե՛ բառամթերքով և թե՛ քերականական տարրերով։ Հայոց լեզվի կազմությունը զգալի կերպով հենց այդպիսի պրոցեսի (կամ պրոցեսների) հետևանք է, քանի որ այն արտացոլել է հայ էթնիկալի ցեղային շրջանի մոտ հազարամյա պատմությունը՝ սկսած Հայասալի «հայ» ցեղերի պատմական ժամանակից (1400—1500 տարի առաջ) և վերջացնելով Արտաշես և Զարեհ թագավորների (երրորդ դարի վերջը կամ երկրորդ դարի սկիզբը) ժամանակաշրջանը, երբ արդեն Մեծ Հայքի (մոտավորապես նախկին Ուրարտուի) տարածության վրա կազմվել էր մի նոր տիպի հայերեն, որը բոլորին հասկանալի էր, ինչպես այդ շեշտում է հուշն հռչակավոր աշխարհագիտ Ստրաբոնը։

Հասարակական-տնտեսական, էթնիկական և քաղաքական հանգամանքներն իրենց ամբողջության մեջ վերցրած, իբրև տվյալ ժողովրդի ապրած պատմական անցյալ, իրենց որոշակի կնիքն են դնում նաև նրա լեզվական որակի վրա։ Եվ այդ լեզվի բարդ պատմությունը պետք է որ իր մեջ արտացոլի տվյալ ժողովրդի պատմությունը, որ մի դեպքում կարող է լինել պարզ և ոչ բազմատարր, իսկ մյուս դեպքերում՝ ալլյազան, ալլաքնուլթ և շատ բարդ տարրերով, կառուցվածքով և կոմպոնենտներով։ Հնդեվրոպական ողջ լեզվաբանությունը ուսումնասիրել է լեզուները, և հատկապես այդ արել է հայերենի նկատմամբ՝ կտրված տվյալ լեզուն

[1] Տե՛ս Ֆր. Էնգելս, Անթի-Դյուրինգ, 6-րդ հրատ., Մոսկվա, էջ 233։

իրեն կրող էթնիկական ձևավորման պատմական բարդ պրոցեսից, երբեմն իրեն հակընթաց և տարամերժ ուղղություններով կամ կողմերով: Չնայած այդ ուսումնասիրությունը դրվում է պատմական հողի վրա, բայց լեզվի ունակ զարգացումը իր անցյալի բոլոր մանրամասնություններով անտեսվում է և մեծ մասամբ այդ կրում է ֆորմալ և մեխանիստական բնույթ: Օրինակ, վերլուծվում է հայոց ուր (где, куда) բառածևը. դրա համար բավական է, որ կա նման իմաստ լեռնականներին (լեռնական) kur դերանվանական ձևը, և հետևապես կարելի են դարձնում դրանք հանել մի ընդհանուր ազգակցական բնօրրանից՝ հնդեվրոպական նախալեզվից, որի գոյությունը և անդադրությունը չի որոշվում (շատ բան չի փոխվում «լեզու-հիմք» նոր հոլշորջմամբ): Նախ, այլ մի քանի օրինակով ցույց չի տրվում, որ հնդեվրոպական արմատի բառակզբի k՞ անհետանում է (k՞o «ո, ով», k՞i—«ինչ, ոք»), երկրորդ, այդ q (ու-ր, ku-r) ածանցը հայոց լեզուն առնդնել է նաև այսր, այդր, այնր... դերանուններին սեռական հոլովում և երրորդ՝ չկա մի երրորդ լեզու, որ գործ ածեր նման դերանվանական մասնիկ: Ուրեմն լեզվաբանին մնում է դիմել նախալեզվի օգնությանը, անտես առնելով այդ երկու լեզուների այլ հնարավոր այդպիսի ընդհանուր լեզվահանգիպումները, թեպետ ընդունվում է, որ երկու լեզուների նման լեզվական (այն էլ՝ կասկածելի) տարրերի «նմանությունը» դեռ շատ քիչ է:

Նախալեզվյան նման «փրկարարը» կոնցեպցիային են դիմել, երբ հայկական արեւ (արևգ), երգ. իճճ („ճարբ"), ձի. մարմին և առաբ բառերը առաջաբանում են հնդկական ravi, arkà (rg), sîha, hàya, màrman և çubhra նմանիմաստ բառերով, բայց դրանք միասին հանելով նախալեզվից: Արդյո՞ք տարօրինակ չէ, որ ուրիշ լեզուներում դրանք չկան, իսկ մերձավոր արևելքում այդ լեզուների շփումը հնարավոր կարելի էր համարել և հայերենում եղածները՝ փոխառություն: Եվ, իսկապես, պատմական նոր տվյալները ցույց են տալիս, որ մեր էրայից մոտ մեկուկես հազարամյակ՝ առաջ հյուսիսային Սյուրիայում և Միտաննի երկրում (Հայաստանի հարավային սահմաններին կից) ապրել են հին հնդկական ցեղեր, որոնց ազդեցությունը եղել է այդ ժողովուրդների հոգուկ անձնանունների, ինչպես և կարգի, թվականների, զրագմունքի և մանավանդ բարձր դասերի (զինվորականություն և այլն) կազմած զինվորական հատուկ դնդի (mariani) կազմության վրա: Հետաքր-

թյամբ կարելի է եզրակացնել, որ այդ ընդհանուր բառերը հընդկերենից անցել են Հայաստանի անդրածիններին (պիցուք խուռիաներին և մասամբ խեթերին՝ Ծոխքում) և հետո մտել են հայոց նոր լեզվի մեջ, մանավանդ որ հնդեվրոպական նախալեզվում, ինչ դեպքում է եվրոպալում, մեր էրալից երեք հազար տարի առաջ չպիտի լինեին ձի (որպիսի բառը կա և Դաղստանի լեռներում), ինձ, վագր (այդ բառը ևս ugagra ձևով հնդկական է) բառերը։ Ինչպես տեսնում ենք, այս առաջարանությունների մեջ են պատմական եղելությունը անտեսելը է հանուն չեղյալ նախալեզվի։

Կամ վերցնենք նման մի դրություն՝ հայոց արտ բառը (< ցանվող, մշակվող հող), որը Ա. Մեյեն ուզում է հանել** արծ<*ածր հին ձևից և կապել հնդեվրոպական նախալեզվական *ag'ros նույնիմաստ բառի հետ։ Այդ արմատը կա հունա-լատինական (ἀγρός, ager), գերմանական (գոթ. akrs, հբգ. ackar, գերմ. Ackr, հիսլ. akr) և սանս. (ajra) ձևերի մեջ. իսկ նույն արմատից ազարակ և ածանցավոր հալ (և վրաց) ձևը «բոլորովին հնդեվրոպական մի լեզվից փոխառություն է» (Հ. Աճառյան, Արմատական բառարան, I, 745—747)։ Իմ կարծիքով հայոց արտ բառը կապ չունի ag'er կամ ag'r արմատի հետ (թեև կապակցվի, ինչպես նշվել է ուրիշների կողմից, սեմական arḍ, arz—«արտ» և նմաններին հետ), իսկ հունա-լատինական, գերմանական և հնդկական ձևերը առաջացել են ոչ թե հնդեվրոպական նախալեզվյան *ag'ro-ից, այլ պարզ փոխառություն են Միջագետքից, ուր շումերները ունեին agar կամ akar նույն իմաստով բառը։ Բայց քանի որ այդ շումերները ունեին և համանիշ ar «արտ» բառը, պետք է ենթադրել, որ agar-ը նրանց մոտ նշանակել է որոշ տեսակի մշակովի հողամաս և հետագալում որպես տերմինաբանական տերմին տարածվել է նաև Միջագետքից դուրս, օրինակ դեպի Փոքր Ասիա (Հայաստան), Միջերկրականի ծովի շուրջ (Հունաստան—Իտալիա և ալդտեղից գերմանացիներին)։ Մուսավորապես չափի տեսակետից նման բոլանդակություն ու տարածում ստացել է հեկտար կամ մու («որոշ հողամաս») եվրոպացիների (հեկտար) և ֆիննո-մոնղոլական ժողովուրդների մոտ (mu)։ Հայերը սեմիտների և խուռիտների (կամ Հայաստանի անդրածինների) միջոցով, բացի այդ ագարակից (agar որպես գեներմինատիվ գործ է ածվում և խեթական բնագրերը պրաֆիկալում), ունեն մի քանի և այլ փոխառություններ, ինչպես սում. udu «ոչխար»—հայոց օղի, սում. arik-gilim «բարձր ոտով (թռչուն)»—հ. արագիլ, zag «սահ-

մանի ակիզբը, ծագումը»=հ. ծագ (ակիզբը»), ծագել. mezu *«նայել»—սաստնցիների և մշեցիների՝ մնդել (նույն նշանակությամբ),* egal *«դղյակ»: Անդղ հատուկ անուններին, որ նշանակել է «բերդ» և ստացվել է* Agil *ձևից (համեմատել ակկադական* ekallu *նույն իմաստով) և այլն: Իսկ որ օտար ոչ հնդեվրոպական բառը կարող է ընկնել հույներին (արևմուտքում) և հնդիկներին (արևելքում), այդ ցույց են տալիս հուն.* παλαιστ *և սանսկր.* Paraça *բառերը, որոնք նշանակում են «կացին» և հնդեվրոպական տեսք չունեն, ինչպես ասում է Ա. Մեյեն: Երևի «հնդեվրոպական նախալեզվից» շատ բառեր որոշակի այլ ծագում ունեն:*

Վերջապես սուտգաբանական (էտիմոլոգիական) հետազոտությունները են կատարել որոշ գիտնականներ, տվյալ դեպքում հայագետներ, բնավ ծանոթ չլինելով բառի (արմատի) պատմությանը՝ իրեն կենկրետ լեզվի զարգացման հոդի վրա: Օրինակ, հայոց լեզվում գործել է ներքին զարգացման մի օրինաչափություն, որով տվյալ բառաձևը կարող է նոր լինել, ստացված լեզվական տարանմանությամբ մի հին՝ իրեն գոյակից ձևից, այնինչ այդ վերածված ձևին տեղյակ չլինելով վերջնում, համեմատում են հնդեվրոպական արմատների հետ, ելնելով հնչյունաբանական սխալ տվյալներից, այլ հիմքից: Օրինակ, հայերենում դիտվում է հնագույն ժամանակից, որ արմատը իր որակը կամ քանակը ուժեղացնելու համար կարող է կրկնվել, հետո կոմպոնենտներից մեկը իր որևէ հնչյունով տարբերակվել և ի վերջո այդ տարաձևած տեսակը կարող է և անջատվել, դառնալ առանձին բառարմատ, երբեմն ստանալով հարակից նոր իմաստ: Այդ անջատ ձևը կարող է ստացվել և առանց ձևական կրկնողության (через отпочкование): Մեծ ճմասամբ կրկնվող տեսակի մեջ առաջին բաղաձայնը ընկնում է կամ փոխվում մ բաղաձայնի, ինչպես—առոր-փառոր (առթովփառքով), աճիճ-պաճիճ, Ասիս-Մասիս, խճճել-մճճել, փշրել-մշրել, լուռ-մուռ, ոլոր-մոլոր և այլն[1]: Տարաձևի անմիջական անջատման ունենք օրինակ երկնակալի բարբառի արիր բառի մեջ, որ նշանակում է տարիք (рост, возраст), Մալաթիայի մասս ճմեծ, հաստ բառի մեջ (համմ. դրաբարի հաստատուն), մարանդի կամ մարանդու Արարատյան և Վանի բարբառներում, ճխոշոր և կլոր

---

[1] *Տե՛ս իմ* „О внутренних закономерностях армянского языка", Ереван, 1952, стр. 25—30.

մանզադա առացված «դևրանդիա» (коса) բառից, խորովու Աբարատյան բարբառում նշանակում է «թոնրի մեջ դրած կճուճով եփվող ձավարը, որի վրա կաթում է վերևից խորովուի (ոչխարի կամ այծի) յուղը», հետևապես առացվել է խորովու հիմնական ձևից։ Նա այդպիսի կազմավորում ևս տեսնում նաև ուսար (—որդի) բառի մեջ. առաշացած հին դուսար բառից (համմ. նաև մեր պատմաբաններին՝ «Եւ ծնաւ Արամանեակ ուսեր և դուստրս բազում՝ յորոց անդրանիկին Արամային, և ծնաւ Արամային ուսեր և դուստրս բազումս»։ Այդ ուսար բառը ամեն կերպ ճգնում են հանել հնդեվրոպական նախալեզվից և չեն գտնում։ Այդպես է նոր ձևավորում առացել և մուխ (дым) բառը հին ծուխ բառից, որը բուռ իս կապակցվում է խեթերի tuḫḫuis նուշնարմատ և նուշնիմաստ բառից և ոչ թե հնդեվր. smuqh արմատից, որ միացել է հունական, կելտական և գերմանական լեզուներով «հիել, ծուխ, ալրել իմաստներով։ Լայարդի և Մելիի՝ հայոց մուխ բառի այդ առուղղագրությունը չէր ընդունում Հյուբշմանը (տե՛ս Հր. Աճառյան, Արմատական բառարան, IV հ., էջ 1140—1141)։ Կարելի է նման բացատրություն տալ և հայոց առն «արու վարի ոչխար» բառին, որին մոտ են (փոխառյալ?) վրաց. arni «վարի ոչխար» և ասորական arnā «լեռան այծ», ծագեցնելով *war(e)n>garn (գառն) հնդեվր. հիմնական բառարմատից և ոչ թե կապակցել իրենց հնդեվրոպական «ընդհանուր» արմատից, որ կա և հունարեն arnejós «խոյ» (баран) բառի մեջ, այնինչ այդ վերջինի բուն իմաստն է «արու»։

Այս վերոհիշյալ մեթոդոլոգիական դիտողություններին ևս կավելացնեի և մեկը, որը լեզվի իսաչափորման բնույթի տեսակետից անշուշտ որոշ դեր խաղացել է։ Այդ կոնտամինացիան է։ Օրինակ, հնդեվրոպական *ego(m) «ես» հայոց լեզվի հնչյունաբանական օրինաչափություններով պետք է լիներ հայերենում *էծ կամ *էզ և ոչ մի կերպ չի կարելի հասկանալ վերջին «ծ» կամ «զ» հնչյունների փոխարինումը «ս» բաղաձայնով։ Իմ կարծիքով հընդեվրոպական մեր լեզվաշերտում դուցե սկզբում հենց այդպես էլ հնչվել է՝ *եզ> *եծ, բայց քանի որ հայերեն վերջնական շրջանում նրա հետ մերվել են նաև ուրարտու-խուռիտական լեզվական միացորդները, որտեղ «ես» (я) հնչվել է շատ մոտ բառաձևերով—ուրարտերեն iese, իսկ խուռիտերեն՝ isa, ապա հնչույթային կարող էր ձևակերպվել վերջնական hu հնչիւնածը, որպես այդ լեզուների նման բառերի մի կոնտամինացիա։ Իհարկե այդպիսի

146—2

II 9399 A

ԱԳԱՏՆՍՏՈ.

դեպքեր շատ կլինեն և պետք է դրանք բոլորը ի հայտ բերել, բացահայտել։

Ներկա աշխատությունը հայերենի ուսումնասիրության մի նոր փորձ է իր վերևը նշված մեթոդոլոգիական նոր քննական մոտեցմամբ, լեզվական նոր նյութերի երևան գալու առկայությամբ, հայ լեզվի բարդ (խաչավորյալ) լինելու տեսակետից, որ ակսվում է հայերի դեռ տոհմացեղատիրական շրջանից Հայաստանում, վերջացնելով հայ լեզվի վերջնական կազմավորմամբ՝ երրորդ դարում մեր էրայից առաջ Նախկին Ուրարտուի տերիտորիայում։ Եթե ճիշտ է, որ հայ լեզուն իր վերջնական կազմավորումը ստացել է երկու-երեք էթնոլեզվական մեծ կոմպոնենտներից ցեղատիրական շրջանում, ապա բացի այդ բոլորը բացահայտելուց, օգտագործելով ցայժմ հազած նյութերը և ուսումնասիրությունները, մենք պետք է նշենք այդ նորորակ լեզվի հիմնական օրինաչափությունները, զարգացման միտումները՝ տենդենցները։ Պետք է հետևել, որ հին հայերենի կացութական-ստատիկ վիճակը մեզ պիտի հնարավորություն տա իրրև այդ պատմալեզվական պրոցեսների և օրինաչափությունների մի դրսեւորում և արդյունք։

Նմանապես կոնկրետ պատմական հողի վրա պիտի դնել այսպես կոչված փոխառությունները կամ ազդեցությունները թե՛ դրաբարյան և թե՛ միջնադարյան նախագրաբարյան շրջաններում, կապված հայ ժողովրդի գոյացման պատմական պրոցեսի և շրջապատի հետ։ Հարկավ սրանով թերևս չի բացատրվում այդ փոխառությունների և ազդեցությունների առկայությունը նաև մեր լեզվի սկզբնական շրջանում, իր ցեղային էթնոսակունքների կուտակման և մերման ժամանակ, էի սկզբանէ անտիս։

Հայերենի հին շրջանի ուսումնասիրություն ասելով, մենք ընդգրկում ենք իմարին թե՛ նախագրային փուլը և թե՛ հետագա ընթացքը, թեպետ այդ նախագրային ուսումնասիրությունը մրցնում է այսպես կոչված համեմատական քերականության մեջ, իսկ հետագային շրջանի ուսումնասիրությունը՝ պատմական քերականության մեջ։ Մենք այդ բոլորը մտցնում ենք մի դիսցիպլինի մեջ, որը ընդգրկում է հայոց լեզվի պատմությունը իր հին շրջանում։ Այս չի նշանակում սակայն, որ մեր ողջ հայերենի, այսինքն և բարբառների իրակությունները (ֆակտուրան) թե՛ որպես բառաձևեր և թե՛ որպես արմատներ, չեն մտնում այս ուսումնասիրության մեջ։ Օրինակ, մեզ համար գոնելի են ա (ուխ) մասնիկը սոսի, ձնուի, ընդվի...), ա (վ) կրավորականի մասնիկը, որով նոր սիսեամ է

ստեղծվել մեր բարբառներում (ուտել-ուտվել, կարդալ-կարդացվել...) ի հակադրություն գրաբարի, ուր խոնարհման թեմատիկ սիստեմի (գրեմ-գրիմ, կարդամ «կարդում եմ և կարդացվում եմ»), կու || կը || կ եղանակիչ և ժամանակ ցույց տվող մասնիկի երևան գալը, ծագումը և պատճառը, անձնական (մարդկային) սեռի առաջացումը բարբառներում (տնաս մի ուսանող, բայց՝ տնաս իմ ուսանողին), ժամանակ ցույց տվող դերբայականների սեռը բարբառներում (ամսվա-ամսվանից, տարվա-տարվանից...), որոնց ուղղականը կարող է վերջանալ ամեն տնասկ բաղաձայնով: Մենք էլ չենք խոսում այն մասին, որ մեր հայկական այդ տարբեր լեզվամիավորներում (գրաբար, բարբառներ) ստեղծվել են նաև տարբեր շարահյուսական-ձևաբանական սիստեմներ, որոնցից կառուցվածքային մի սիստեմը հարում է թեքական ու սինթետիկ տնասկին (գրաբարը), իսկ մյուսը՝ կցական և անալիտիկ տնասկին (բարբառները և ալատենից՝ մեր գրական լեզուն):

Հայերենի հին գրային շրջանի (գրաբարի) բառային ֆակտուրան կարևորագույն նշանակություն ունի մեր համեմատական ուսումնասիրության մեջ, մանավանդ ոչ փոխառյալները, թողած դեռ ձևերը: Բայց նման տրժեք են ստանում և բարբառային հարատառ հայկական բառերն ու ձևերը, որոնք իրենց ծագումով նույնպես հին բառեր են: Որքա՞ն կշահեր հայագիտությունը, երբ մեր այդ հին և իսկական բարբառային բառարմատները հավաքված լինեին և ապագրված, ունենայինք իրենց հնարավոր ստուգաբանությունը և բացատրություններ: Այդ բառարմատական, ինչպես և հնչյունաբանական ու ձևաբանական (քերականական և բառակազմական) ողջ ֆակտուրան իրոք պետք է կազմեն հալ լեզվի (լեզվամիավոր) դանդը՝ ոսկե ֆոնդը, որն իր պատմական և բազմաձև ու բազմադան դրսևորմամբ (էացմամբ) դառնում է յուրով ասենն հալ ժողովրդի հոգևոր կուլտուրայի մի զորավոր ստեղծագործությունը, նրա հասարակական-քաղաքական ամենամեծ նվաճումը:

Եթե հայերենը իր նախնական լեզվաակունքներով առաջացել է որպես որոշ ցեղամիավոր (Հայասալի) լեզու, իրեն բարդ կոմպոնենտներով հանդերձ, ապա նա ապրել է որոշ տրանսֆորմացիա և պետականության ու դասակարգային հասարակության պայմաններում հատկապես զարգացում է կրթված դասերի միջոցով (քրմեր, թարգմանիչներ, գրողներ, գուսաններ...) և դառնում է արդեն պետական-գրական և համաժողովրդական լեզու, ապա այդ ընդհանուր լեզվի կողքին շարունակել են մնալ նաև բարբառները որպես տե-

գական-գրաբարյան խոսվածքներ, ունենալով իրենց առանձնահատկությունները, որոնք բնավ չեն կազմում տարաստումներ, գրաբարի հանդեպ։ Հասարակական, կուլտուրական և քաղաքական պայմանները տարբեր հետևանք են ստեղծել թե՛ ընդհանրության համար և թե՛ մասնավոր կերպով զարգանալու առումներից։ Ընդհանուր լեզվական կուլտուրայի մեջ մեր հին համաժողովրդական (միասնական) և գրային զարգացած լեզուն (գրաբարը) հարկավ դարձել է իր մշակմամբ առաջինը, լրացնելով հարստացրին և շատ բարբառային բառեր ու ձևեր։

Բայց և այնպես գավառական այդ բարբառները չկլանվեցին գրական ընդհանուր լեզվի կողմից, որպիսի երևույթ տեղի է ունենում միայն այժմ միասնության, ուժեղ կուլտուրայի և պետականության պայմաններում։ Այդպես եղել է և այլուր, սկսած դեռ հին հունական բարբառների վիճակից, որոնք ձուլվեցին և մտան մի ընդհանուր «կոյնե» կոչված պետական լեզվի մեջ, ինչպես նման երևույթ եղել է և անգլոսաքսան նման բարբառների համակենտրոնացման (կոնցենտրացիայի) մեջ այժմյան անգլերենում։ Սովորաբար գերիշխում է մի սկզբնական բարբառ, որ մշակվում, վեր է ածվում պետական ընդհանուր մի լեզվի, ինչպես այդ տեղի է ունեցել իտալերենի (Ֆլորենցիայի բարբառ), ֆրանսերենի (Իլդե ֆրանսի բարբառ), ռուսերենի (Կուրսկ-Օրլովի բարբառ) և այլ գրական-պետական նոր լեզուներում։ Երբ գրաբարը VII—IX դարերից կորցրեց իր կրողների, հայ ժողովրդի և կրթված դասերի պաշտպանությունը, կոնսոլիդացիան, ապրեց արտաքին և թուրքսելջուկյան, ինչպես և տնտեսական քայքայիչ պայմաններ, կորցրեց իր ֆեոդալների քաղաքական ներքին և արտաքին դիմադրության ուժը, ժողովուրդը, ինչպես և ֆեոդալները, զգեցին մեր երկրից, նկատեցին անգամ կորցրեց մեր գրաբարի նկատմամբ իր լեզվական կոնսոլիդացիայի աղեղությունը և այդ պատճառով գրաբարը վատատրեն դադարեց դրժածվել որպես կենդանի լեզու։ Այնուհետև գրաբարը մնաց իբրև նկատելու և պաշտոնական գրագրության մի մեռյալ լեզու՝ նման միջնադարյան լատիներենին։ Ամատրականները և ինտելիգենցիայի ներկայացուցիչները սկսեցին ապրատիկ կերպով գործածել և հարմարյուն տալ իրենց բարբառներին, խառնելով մեծ մասամբ գրաբարյան մեռած ձևերի ու բառերի հետ։ Միայն ռուս ժողովրդի քաղաքական և կուլտուրական հզոր պայմանները նպաստեցին հայ ժողովրդի ցիրուցան եղած բնակիչ հատվածների հավաքական կոնսոլիդացիային, գրագրություն (Հայա-

բյան, Ներսիսյան) առեղծվուն, գիր ու գրականություն զարգացնելուն և այլն, որի հիմքում ընկած էր կենդանի և հասկանալի ժողովրդական լեզուն, այն է՝ Արևելյան Հայաստանի հիմնական և կենտրոնական Արարատյան բարբառը, որը մշակվելով վեր է ածվել իր տրանսֆորմացիոն նոր փուլակի՝ գրական և համաժողովրդական, իսկ ներկա հայության քաղաքական կացության տեսակետից՝ նաև ամբողջ հայության լեզվի։ Այդ մեր նոր լեզուն, մշակվելով գրաբարյան, բարբառային (արարատյան), օտար լեզուների և մասնավանդ հզոր ռուսերենի ազդեցությամբ, կարողացավ հասնել այժմյան գիրխշող լեզուների աստիճանին, մեծապես գերազանցելով մեր հին պետականության և կուլտուրայի լեզուն՝ գրաբարը։

2. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառը սկսվել և մեծ մասամբ ամամանափակվել է մեր դասական լեզվի (գրաբարի) մասնավորությով, իրականությունների, հատկապես պատմա-համեմատական նոր լեզվաբանության տեսակետից։ Գրաբարյան տարրերը, որպես հայ լեզվի հնագույն մաս, համեմատվում էին այլևայլ լեզվախմբերի և նրանց այս կամ այն ներկայացուցիչների նման տարրերի հետ, լինեն դրանք հնչյունական, ձևաբանական, լեքսիկական։ Այս ասպեկտով մեր լեզուն շատ լուրջ ուշադրության արժանացավ հնդեվրոպական լեզուներն ուսումնասիրողների կողմից, քանի որ մեր գրաբարը, այդ առաջին օրյեկտը, միանգամայն ակնբախ և հեշտ կերպով ընձեռեց այդ հնարավորությունը։

XVIII դարի առաջին քառորդում, մինչև հնդեվրոպական լեզվաբանության երևան գալը, հայերենի (գրաբարի և «նոր» հայերենի) առաջին լուրջ ուսումնասիրությունը եվրոպական լեզվով եղել է Շրոդերինը[1]*, որտեղ մինչև իսկ բերված են մի քանի ճիշտ ստուգաբանություններ։*

Դեռևս 1833 թ. հնդեվրոպական դպրոցի հիմնադիր Ֆրանց Բոպը իր համեմատական քերականության մեջ է մտցնում նաև հայերենը, որպես այդ լեզվախմբի լեզու։ Այդ դեռ սկզբնական ճիշտ դիտողությունն էր, և բնական է, որ այդ ուղղությամբ գիտական հետաքրքրասիրությունը քանի գնար ավելի պահք է ուժեղանար, կոնկրետ դրսևորումներ ստանար և ավելի գիտական նվաճումներ տար։

---

[1] *Schröder*, Thesaurum linguae armeniacae, antiquae et hodiernae. Amsterdam, 1711.

Առաջին ձեռնարկած տեսությունը այդ ուղղությամբ այն էր, որ հայերենը մտնում է հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական ճյուղի մեջ։ Այս հաստնել և մակերեսային տեսության առիթ տվեցին այն բազմաթիվ իրանական բառերը, որ մտել են հայոց լեզվի մեջ, բայց ենթադրվել են որպես անմիջական բառատեսակներ իրաներեն ընդհանուր բառադանձարանում։ Այդ տեսակետը արծարծել են Պետերմանը, Վինդիշմանը, Դոշեն, Բյոտլինգըը, Ֆր. Մյուլլերը և մանավանդ Դե-Լագարդը իրենց մի շարք աշխատությունների մեջ[1]։ Վերջինին թվում էր, թե իրանական ցեղերը հնուց ողողած են եղել Փոքր Ասիան, որ իրանական հայերի այդ հնագույն շերտի վրա ավելացել է մի նոր շերտ ևս, որը գաղթականների շնորհիվ հասել է Արարատյան դաշտը և կերպարանափոխել նախկին հիմնականը՝ դինդարենին ազդակիցը։ Հետագայում, երբ պարթևները դրավում են Հայաստանը, ներմուծվում են արդեն նոր բառեր, որոնք տարբեր են սասանյան շրջանի իրանական բառերից (սրանք բոլորն էլ առկա են և նոր պարսկերենում)։ Հայոց հին իրանական շերտը նա կոչում էր «Հայկազյանը» (Haikanische), երկրորդը՝ պահլավի, իսկ երրորդը՝ սասանյան։ Վերջին երկուսը փոխառությունների մեջ են մտնում։

Հայտնի հայագետ և իրանագետ Հ. Հյուբշմանը քննադատեց և հերքեց հայոց լեզվի այս իրանյան ծագման կոնցեպցիան։ Նա դեռևս 1875 թ. Kuhns Zeitschrift (№ 23, էջեր 5—42) հայտնի

---

[1] *Petermann*, Grammatica linguae Armeniacae, 1837.

Windischmann, Die Grundlagen des Armenischen im arischen Sprachstamme (Abhandlungen der bayerischen Akad., IV. 2), 1846.

Sosche, De Ariana linguae gentisque Armeniacae indole proiegomena, 1847

P. Boetticher, Vergleichung der armenischen Consonanten mit denen des Sanskrit (Zeitschr. d. Deutschen Morgenländischen Geselschaft [կրճատ ZDMG], IV. էջ 347 և հետևյալները։ Arica, 1851; Zur Urgeschichte der Armenier, 1854.

Fr. Müller, Abhandlungen zuz armenischen Grammatik (Sitzungsberichte der Wiener Akademie der Wissenschaften [կրճատ SWAW], Wien 1861—1865; Armeniaca I. SWAW, 1865; Armeniaca II, 1870; Armeniaca, III, 1871; Armeniaca IV, 1874; Armeniaca V, SWAW, 1878.

De Lagarde, Gesammelte Abhandlungen, 1866; Beiträge zur baktrischen Lexicographie 1868; Armenische Studien Göttingenen, 1877.

Այս իրանական կոնցեպցիայով գրել է նաև հայ գիտնական Քերովբե Պատկանյանը—Ulben die Bildung der armenischen sprache տե՛ս Journal asiatique, XVI, St.—Petersburg, 1870).

լեզվաբանական հանդեսում Ueber die Stellung der Armenischen im Kreise der indogermanischen Sprache վերնագիրը կրող նշանավոր հոդվածում հերքից իշխող այդ տեսակետը, ասելով. «Ցուրաքանչյուր հայկական բառ, որը միանգամայն համապատասխան է պարսկերենին, պիտի ընդունել որպես փոխառություն» (էջ 8)։ Ի միջի այլոց նույն վերնագրով մի հոդված ունի և Ֆր. Մյուլլերը (SWAW, 1877), որը կարծես պատասխան էր Հյուբշմանին։ Վերջինս իր Armenische Studien գրքում, որը լույս է տեսել Լայպցիգում 1883 թ. նորից ժխտելով Մյուլլերի և Լագարդի մեղ հայտնի տեսակետները (էջեր 5—7), բերում է մինչ այդ տված 23 հայ արմատների (կամ բառերի) ճիշտ ստուգաբանություններ, որոնք ազգակից են հնդեվրոպական այլ լեզուների արմատներին, որով և ճիշտ ու կարելի է ասել վերջնականապես սահմանում է հայերենի այդ մասի պատմա-համեմատական հնչյունաբանության նորմաները (օրենքները)։ Կցելով այդ գրքում նաև համառոտ ձևաբանություններ, նա վերջին անգամ քննարկում է այն հարցը, թե հայերենը պիտի՞ համցնել հնդեվրոպական լեզուների իրանական ճյուղի մեջ, թե համարել ինքնուրույն հնդեվրոպական մի լեզու (էջեր 80—83), նկ պատասխանում է, որ հայերենը իր հնդեվրոպական մասով կազմում է առանձին լեզվաճյուղ, անկախ իրանականից կամ հնդիրանականից, և իրրև ինքնուրույն հնդեվրոպական լեզու նա (հայերենը) բռնում է Բալթիկ-սլավոնականի և իրանականի միջին տեղը։

Հյուբշմանի այս ճիշտ ուղին այնուհետև գործել ընդհանուր։ Հետագայում լույս տեսան շատ աշխատություններ, նվիրված հայոց լեզվի թե՛ բառերի ստուգաբանության, թե՛ քերականության և թե՛ մասամբ շարահյուսության։ Դրանցից են.

Քրիստիան Բարթոլոմեի ուսումնասիրությունները հատկապես հնչյունաբանության տեսակետից (BB, X, 1886, BB, XVII, 1891)։

Ֆրիդրիխ Մյուլլերը իր Armeniaca 6-րդ պրակով (SWAW, 1890) և հոդվածներով, որոնք տպված են WZKM (V—X) 1891—96 թվականներին։

Սոֆուս Բուգգեն իր Beiträge zur etymologischen Erläterung der armenische Sprache, I, Christiania 1889, II, KZ XXXII (էջեր 1—87), 1893; III Indog. Forsch. (էջեր 437—459) 1892։

Անտուան Մեյեի աշխատությունները հնչյունաբանության, ձևաբանության և շարահյուսության վերաբերյալ, տպված Mémoire de la Société Linguistique de Paris (MSL), պարբերական հան-

գնում VIII—IX *1894—1896)*, Indog. Forsch. (YZQ. T. V), *էջեր 329 և շար. 1895։*

Հ. Հյուբշմանի աշխատությունը հայերենի սեմական բառերի մասին տպված Zeitschrift der deutschen morgenländischen Geselschaft-*ում* (ZDMG) *№ 46, 1892։*

Բրոկկելմանի հոդվածը հայերենի հուն փոխառությունների մասին (Die Griechischen Fremd Wörter im Armenischen *տպված* ZDMT-*ում, № 47, 1893) և այլն։*

Սակայն XIX դարի բոլոր հայագիտական ու լեզվաբանական այս մեծաքանակ աշխատությունների գագաթնակետն ու գիտական ամփոփումը հանդիսացավ այդ դարի վերջում (1897) Լայպցիգում հրատարակած Հյուբշմանի նշանավոր «Հայկական քերականություն» (Armenische Grammatik) *գիրքը, որը 575 էջերում տալիս է հայոց բառերի ստուգաբանությունը։ Գրքի ներածականում դրված է* «I *մաս. Հայկական ստուգաբանություն», որից պիտի հետևեր, որ հեղինակը նպատակ է ունեցել տալ և ձևաբանության և թերևս այլ բաժիններ, բայց մահը (1908) խանգարել է։*

Ներածող (Arm. Gr.-*ում*) *հաջորդաբար բերվում են I դրվագում՝ պարսկական հատուկ անուններ (217 հատ) և հասարակ բառեր (686 հ.), որոնք փոխ են առնված հայերի կողմից, որանց հետ նաև փոխառյալ նոր պարսկական և արաբական բառեր (171 հատ). II դրվագում բերվում են ասորիներից (սյուրիացիներից) փոխ առած հատուկ (53) և հասարակ բառերը (133). III դրվագում՝ հայերենի հունական փոխառությունների անուններն և հասարակ բառերը (512)։ Տրվում են նաև փոքրաթիվ բառեր, որոնք մտել են հայ լեզվի կիլիկիական մեր պետության շրջանում (էջեր 389—391), ինչպես նաև կասկածելի ծագումով փոխառություններ, որոնք կազմում են IV դրվագը։ Վերջապես V դրվագում (էջեր 399—504) բերվում են իսկական հայ բառեր* (Echtarmenische Wörter), *ընդգրկելով 438 քննարկելի բառեր, որոնք իբր թե հնդեվրոպական ծագում ունեն։ Այս բառերի հնդեվրոպական ստուգաբանությունը առաջարկված է եղել նախորդ լեզվաբանների կողմից, ինչպես և Հյուբշմանի, բայց վերջինս խիստ գիտական քննարկման է ենթարկում և դրանցից հատուտ համարում (իմ հաշվով) երկու հարյուր իննսունութը, ուրիշ մոտ 300 հնդեվրոպական ծագումով հայ բառեր (արմատներ)։ Ըստ իս, հետագայում կարող էին հայտնաբերվել ևս մի հիսուն կամ շատ-շատ հարյուր բառարմատներ։ Այդ կարծիքին է և Ա. Մեյեն («մոտ չորս հարյուրյակ», տե՛ս նրա* Esqisse d'une

Grammaire comparée de l'arménien classique. Vienne. *1936 թվին)* Գրոփ. Հ. Աճառյանի *«Հայոց լեզվի պատմության» (1 պրակ, 1940 թ.) գրքերում այդ «իսկական» հայ բառերի թիվը հասցվում է մինչև 713, որն իմ կարծիքով անընդունելի է, ինչպես կանենանք իր տեղում:*

Հյուբշմանը իր կապիտալ „Armenische Grammatik" *գրքի մասին դրել է նաև մի կարևոր գրախոսական (տե՛ս* Indogermanische Forschungen, Anzeiger, X, *էջ 41 շար.): Մեյեն իր* Esquisse-*ում (էջ 15) այդ գրքի մասին գրում է. «Այդ միտքն է Հյուբշմանի կողմից ընդունված ստուգաբանությունների համար, որ դնում են (առհասարակ են) սկզբունքային հնչյունական օրենքները և հետևապես այն ուսմունքները* (doctrines), *որոնք դրսևորված են նրա աշխատությունների մեջ»: Բողնելով Դե-Լագարդի* („Armenische Studien", Goetingue, *1879), «Նորվեգացի գիտնական Սոֆուս Բուգեի աշխատությունները* (Beiträge zur etymologischen Erlatung der armenischen Sprahe, Christiania, 1889, *հոդվածները կան նրա* Zeitschrift-*ում,* XXXII 1—87, Indogermanische Forschungen, III, *437—459), որոնց հիպոթեզները ըստ Մեյեի կամ ուղիղ չեն և կամ կասկածելի, մենք կարևոր ենք համարում նշել մի քանի տարակարծությունները, որ ունեցել են Մեյեն և Պեդերսենը. Հյուբշմանի մի քանի ասածների դեմ (տե՛ս Մեյեի հոդվածները* Memoires de la Société de lingusitique de Paris, Vol., VII, *շար., «Բանասեր»-ում, որ հրատարակեց Բասմաճյանը) և* Holger Pedersen-*ի աշխատություններում—Կուհնի անվան հայտնի* Zeitschrift-*ի* (K—Z) *հետևյալ համարներում:* Bd. XXXVIII (1902) Zur armenischen Sprachge schichte *էջեր 194—240 և* Armenisch und die Nachbarsprachn, Bd. XXXIX *(1904) 334—240 էջերում: Պիտի հիշել նաև* E. Hiden, Armenische Studien *(տպիս է ստուգաբանություններ, տպված է 1906 թ.),* A. Meillet, Recherches sur la syntaxe comparée de l'arménien (M. S. H., X, XI, XII, XIV):

Finck-*ի կողմից հրկավարվող* Zeitschrif für armenisch Filologie *հանդեսը, որի առաջին հատորը լույս տեսավ Մարբուրգում 1901 թ., կարևոր դեր խաղաց լեզվաբանության մեջ:* Revue des études arménienne, *որը լույս էր տեսնում Փարիզում 1920 թվականից ծանոթացնում էր այն ամենին, ինչ որ պիտի հետաքրքրեր հայ լեզվաբանությանը, ունենալով և սեփական հոդվածներ:* G. Deeters-*ը զբաղվեց կովկասյան լեզուների ազգակցությամբ հայերենի վրա (տե՛ս նրա* Armenisch und Südkaukasisch, Leipzig, 1927):

Բացի բազմաթիվ հոդվածներից, որ տպված են «Հանդես ամսօրյայում», մանավանդ Հ. Աճառյանի հոդվածը այլեւս հայոց կրկնութիւնների մասին (Ibid., 1899 թ., էջ 202 և շար.), պիտի նշել Աւետեանի «Իննական քերականութիւն արդի հայերէն լեզուի» (Վիեննա, 1866), Karst-ի „Historische Grammatik der Kilikisch-Armenischen (Strasburg, 1901), Мсерянц-ի „Этюды по армянской диалектологии" (Москва, 1897 և 1901), Հ. Աճառյանի բարբառագիտական շատ աշխատութիւնները Դարաբաղի, Նոր-Նախիջեւանի, Մարաղայի, Ագուլիսի և այլ բարբառների, որոնք, բացի առաջինից, տպված են Էրեւանում։ Հատուկ ուշադրութեան է արժանի A. Meillet-ի Altarmenisches Elementarbuch, Heidelberg (1913) և Հ. Աճառյանի յոբհատարանոց «Հայկերենի արմատական բառարան»-ը, որի 1-ին հատորը լոյս տեսաւ 1926 թ., իսկ վերջինը՝ 1935 թ. (Նեղածութիւն, ինդեքս և լրացում)։

Հայ արմատների առուգաբանական աշխատութիւններ ունել են և շատ ուրիշները, ինչպես Շեֆտելոֆիցը, Պատրուբանին, Կարոլիդեսը, Դերվիշյանը և այլն, որոնք նպաստել են եղած հիմնական գործի հաջողութեանը։ Եթե Եվրոպայում այդ գործի կարեւորութեան և հիմնադիր լեզուաբաններ էին Հյուբշմանն ու Մեյեն, ապա մեզ մոտ այդ ընթացքի բեղմնաւոր շարունակողն էր պրոֆ. Հր. Աճառյանը։

Ի վերջո նշենք, որ հնդեվրոպական լեզուաբանութիւնը հայ լեզուի ուսումնասիրութեան ու զարգացման համար շատ մեծ նշանակութիւն ունեցաւ, դրական մեծ արդիւնք, և վերջ տրվեց նախորդ սխալ տեսութիւններին, մանաւորապես հայ-իրանական կոնցեպցիային բնագաւառում։ Ի միջի այլոց ոմանք առաջարկում էին հայոց լեզվի հնդեվրոպական ճյուղաւորութեանը միացնել նաև թրակիական-փռւգիական լեզուները, որչափ որ ըստ հունական աղբյուրների (Հերոդոտոս, Եվդոքսոս և այլն) դոյութիւն է ունեցել այդ երկու ժողովուրդների մեջ էթնիկական և լեզվական որոշ աղերս։ Բայց նկատի ունենալով թրակիական և փռւգիական լեզուներից մնացած նշուածը (բառեր, ձևեր), այդ աղերսակցութիւնը չի ճշտվում և արդարանում, այն մերժվում է Գարագաշյանի, Տաշյանի, Մարքվարտի, Աճառյանի և ուրիշների կողմից (տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմութիւն, հ. 1, Երեւան, 1940, էջեր 131—133)։ Անտարակուսելի է նուիմպիոսի աղգակցական կապը հայերենի հընդեվրոպական մասի և հնագոյն Իլլիրիական լեզուների միջև, որոնք դուրս են ածվել Բալկանյան թերակղզում, որովհետև Մարքվարտի

բերած երկու բառերի (մանր և իլլ. manu, սուին և իլլ. sibyna) նմանությունը դեռ բավական չէ, մանավանդ վերջինը (սուին) իր համապատասխան բառաձևերը ունեն նաև սեմական և իրանական լեզուներում:

Հին հայերենի բուն հնդեվրոպական տարրերն, այնուամենայնիվ, իրենց քանակով գերիշխող չեն, մանավանդ բառարմատների տեսակետից (մոտ 350—400), և մեզ մոտ են չսուզաբանված չորս հազարից ավելի ոչ փոխառյալ բառեր կամ արմատներ: Ավելի լավ է վիճակը, ինչպես կտեսնենք ձևերի (մասնիկների), մանավանդ քերականական ձևերի (թեքույթների) տեսակետից: Հնչյունական բաղադրնական վիճակը հիշեցնում է մասամբ կովկասյան կամ սեմական լեզուների բարդ սիստեմը: Շատ գիտնականներ սկսեցին քննական վերաբերմունք ցույց տալ գեպի ողջ հայերենի հնդեվրոպական գենետիկական պարզաբանությունը: Առաջինը այս քննադատաններից հայտնվեց Ն. Մառն էր, որ առաջարկեց հայերենի այդ գենեզիսը հասկանալ որպես երկրնույթ («արրիհոտրնեթական»), խոսելով նրանից որ հայերենում առկա են որոշ քանակի վրացամոսկան տարրեր, մանավանդ բառեր, իսկ վրաց լեզվաընտանիքը կովկասյան լեզուների հետ նա համարում էր «հարնեթական», ազգակից սեմական լեզուներին, ուստի Ն. Մառը հետևությամբ գալով, որ հայերենն էլ ուրարտերենի հետ պիտի մտցնել այդ հարնեթական լեզվախմբի մեջ: Այս սխեման հիշեցնում է արտաքուստ հնդեվրոպաբանների նախալեզվի ծառը, քանի որ Ն. Մառը առաջարկում էր «նոյան» նախալեզուն, որի դուստր ճյուղավորումներն են նախ հարնեթականը և հետո՝ սեմական և քամյան լեզուները: Հարնեթական լեզուների քանակը հետզհետե ավելացվում էր միանգամայն տարբեր լեզուներով (վերշիների, էլամիտների, բասկերի և այլն), *և վերջում, Ն. Մառը, հրաժարվելով լեզուների ծագումնաբանական - ազգակցական կոնցեպցիայից, քանակական թվականներից անցավ առաջիկա և չորս չարաբաստիկ էլեմենտների լեզվատեսչական ընդհանուր կոնցեպցիային, որը հակագիտական էր և մերժվեց:

Բայց լեզվի հնդեվրոպական բնույթի ազգատ լինելը փաստ է և արձանագրված մինչև իսկ A. Meillet-ի կողմից իր նշանավոր Esquisse-ում (II հրատ., էջ 144, I հրատ., էջ 111), ուր կարդում ենք. «Բայց, ամբողջությամբ վերցրած, հայոց լեզվի հնչյունական և ձևաբանական սիստեմը խորապես տարբեր է հնդեվրոպական նման սիստեմից»[1]:

[1] "Mais dans l'ensemble, le système phonique et morphologique de l'arménien est profondement distinct de celui de l'indoeuropéen".

Իմ կարծիքով հայ լեզվի ուսումնասիրության ավելի առաջադիմ, հիշյա դիտական և բեղմնավոր այս վերջին փուլը, որը կարելի է կոչել «հնդեվրոպաբանական», չի սպառում հայ լեզվի ծագման ու ձևավորման խնդիրները, լինելով սահմանափակված նյութի և քննական միջոցների մեջ։ Վերջին 30—40 տարիների պեղումները Միջագետքում շատ բան փոխեցին նյութական և հոգևոր կուլտուրաների ուսումնասիրության բնագավառում, մանավանդ մի շարք նոր լեզուների և էպիգրաֆիկ նյութի հայտնաբերման հնարավորությամբ։ Ավելացան խեթական և ուրարտական լեզվով գրած բնիսադիր արձանագրությունները, իսկ որ ամենից գլխավորն է, Փոքր Ասիայում հայտնաբերվեցին նոր լեզուներ և պետություններ։ Այս վերջիններից մեջ են խեթական կոնֆեդերացիան իր երկու բնիսադիր լեզուներով՝ նախախեթական («խաթթյան») և խեթական, որոնցից շատ գրականություն է մնացել միայն վերջին (խեթական, նիսիտական) ձևով, որն ավելի նոր է։ Մենք չենք խոսում «հիերոգլիֆ» խեթերենի մասին։ Հայտնաբերվել են խեթական բնիսադիր լեզուների հետ նաև լուվի և պալա լեզուները, թողած դեռ Բողազ քյոյի, խեթական այդ մայրաքաղաքի (Hattusa) արխիվում գտած ակկադական և խուռիտական լեզուներով գրած արձանագրությունները։ Ամենահետաքրքրականն է հայերի և հայ լեզվի տեսակետից Hatasa-Azzi կամ Hatasa ցեղատոհմական մի միավորյալ երկրի գոյությունը (1400—1200 թթ.) բուն խեթական արձանագրությունների, որը ըստ Պաուլ Կրետշմերի 1932 թ. հայտնած կարծիքի, համընկնում է «հայ» անվան հետ։ Այս ցեղապետության («թագավորության») մասին տե՛ս իմ „Хайаса—колыбель армян" ուսումնասիրությունը (Երևան, 1947)։ Այդ նոր փոքրասիական լեզուների, ինչպես և նախկինում հայտնի լյուդիական, լիկիական, էտրուսկական, խուռիտական, ուրարտական լեզուների մեջ կան որոշ, թեպետ ոչ շատ, ընդհանուր տարրեր, թե՛ կառուցված քային և թե՛ ֆակտորային, որի հիման վրա առաջ են քաշում «սասիանիկ (սասիանական) կամ «փոքրասիական» լեզվախումբ։ Որ Հայաստա երկիրը համընկնում է մեր հետագա Փոքր և Բարձր Հայքերին, դրանում կասկած չկա, մանավանդ առաջինին։ Վ. Գրոսցեն այդ «մեծ քաղաքական կազմակերպությունը» (Ein grosseres politisches Gebilde) անվանում է Երզինգա—Երզրում ճանապարհի վրա (տե՛ս Revue hittite et asianique, 1934, Fasc. ?), իսկ ֆրանսիացի գիտնական Ֆ. Կավենյակը նույն ժամանակում (RHA, էջ. 14) գրում է. «Հայաստան XIV դարում մի մեծ միապետություն էր (monarchie),

ընդգրկելով ամբողջ արևմտյան Հայաստանը։ Մեզ հայտնի է նաև, որ հուշն մատենադիրները Արմենիա անվով, մինչև չորրորդ դարի վերջը, հասկանում էին հենց այդ Փոքր Հայքը։ Բոլոր ավյալներով հաստատված է այդ Փոքր Հայքի բնօրրան լինելը հայ ժողովրդի և լեզվի կազմակերպության համար։

Հայասալի լեզուն, որպես որոշ ցեղախմբի լեզու, պետք է պատկաներ ասիանիկ լեզուներին և ավելի հին ժամանակ գոյություն ունենար։ Ամենից շատ նա ենթարկվել է խեթերենի ազդեցության կամ խաչավորման, ինչպես այդ երևում է հայերենի և խեթերենի համեմատական ուսումնասիրություններից, նկատի ունենալով նաև խեթերի հայացման հնարավորությունը (12—7 դարերի ընթացքում)։ Ենթական բնութագիր գրաֆիկայի առանձնահատկությունը նշում է նաև, որ խեթերեն լեզուն բառեր է փոխ առել նաև հարևան ցեղերից կամ ժողովուրդներից։ Ըստ ուրարտական աղբյուրների, Մոփքում և Զորրորդ Հայքում, այսինքն Արածանու ստորին հոսանքում ընկած երկրամասերում (Ծարոնից արևմուտք) իշխում էին խեթերը (իրենց առաջնորդներով), օրինակ՝ Շահունի կամ Շահնի դինաստիան՝ որոնք հետագայում նույնպես հիշատակվում են։ Այնպես որ խեթական լեզվական տարրերի մուտքը հայացիների լեզվի մեջ անտարակույս է, ինչպես կտեսնենք հայերենի մատենիալի հիման վրա։ Ես աշխատել եմ ցույց տալ ոչ միայն փոխառյալը, այլև ընդհանուր ասիանիկ լինելը։ Հայ լեզվի (գրաբարի) մեջ եղած արևմտյան վրացական (ճան-մեգրելական) ընդհանուր տարրերը (մոտ 30 բառարմատ) անշուշտ գալիս են Հայասալի ժամանակից, և ես այդ կապակցությամբ վրաց արևմտյան մասի այն ցեղերի հետ, որոնց առաջնորդը եղել է լեգենդար Ագոն, նկատի ունենալով, որ Ծորոխի մոտ եղած Հայասալի այդ մասը կոչվել է Ագդի։ Թևրևս վրացական նման տարրեր նաև հայացել են, էլ չեմ ասում, որ շատ ճան-մեգրելական բառեր Հայասալի հայերը փոխ են առել (ճանճ, շունչ, սովորել և այլն)[1] և հետագայում դաղթելով Ուրարտու (Մեծ Հայք) մտցրել մեր բոլոր բարբառների մեջ։ Հնդեվրոպական տարրերի մուտքը հայոց լեզվի մեջ բարդ է թե՛ ժամանակի, թե՛ տեսակարար կշռի, և թե՛ որակի տեսակետից, որի մասին մանրամասն կխոսվի առանձին։ Իսկ ուրարտական և խուռիտական բառերի մուտքը հայ լեզվի մեջ պիտի համարել

---

[1] Տե՛ս իմ О взаимоотношении армянского и лазо-мегрельского языков, Ереван, 1952 г.

պարզաբանել փոխառությունների նոր որակի և արտանիշոմատիայի հասած հայ նոր լեզվի մեջ:

Այսպես, ըստ էության, պիտի դնել հայ լեզվի ծագման և ձևավորման (դենդեիսի) խնդիրը: Մաքուր հնդեվրոպական չի կարելի համարել նրանի ունենալով ձևաբանական և մանավանդ արմատների բառակի (10%) առկայությունը, ինչպես խեթերեն լեզուն, որ ավելի է հնդեվրոպական իր քերականության մեջ, քան բառապաշարը շատ քիչ է հնդեվրոպական:

Թևեա ասիանիկ որոշ լեզուների մեջ եղած հնդեվրոպական (արևմտյան խմբի) էլեմենտներից, նման հունականին, կար և հայասայի լեզվի մեջ, նրանի ունենալով հայասական հատուկ անունների արմատների և ձևերի կազմությունը, ինչպես աստվածանուններ—Trittituni և Unagasta հասկանալով առաջինը որպես «եռադեմ» (треххвостный) կազմած tri «երեք» և titun «պոչ» (համմ. հայոց տուն<*tutun tut արմատից) նման հունական Triton աստվածանվան: Հայասական Unagasta—մի քանի անգամ հիշվող և տարբեր անկերում պաշտվող աստվածանվան կազմությունը հավանորեն nag- կամ unag արմատից է (=?) և -ast ածանցից, որ կա և հունարենում. ինչպես ազոլիաստ, էնտուզիաստ, էկլեկտիաստ և այլն: Հայերենի մյուս հնդեվրոպական տարրերը կարող են լինել այլ որակի, կապված հետագայում (VI—IV) եկած կիմմերասկյութական ներխուժումների հետ և հատկապես ալավոնականի հետ: Հայերենը իր քերականական մասով ավելի է հնդեվրոպական, թեև բառակազմական միջոցներով կարծես թե հավասար դրության մեջ է (հնդեվրոպական թե ասիանիկ), իսկ արմատների (բառերի) քանակի տեսակետից դերազանցորեն ասիանիկ կամ տեղական է: Մաբատարատ (ուրմին և սուպերատարատ) թե ատարատ խնդիրը կորոշվի ուսումնասիրության վերջնական տվյալներով, թեպետ նախկին իմ հետազոտությունների տվյալներով, որոնք լրիվ չէին և թեպետ սխեմատիկ, դերակշռում է ասիանիկ լեզուների բաղկացական բովանդակությունը:

Այն փաստը, որ հայերին օտարներն անվանում են արմեններ, որ դրանց հուն աղբյուրները ազգակցում են փռյուգիացիներին, որպես վերջիններին «եռանորդներ» կամ «ժապառանդներ», և armen-, ormin- և նման տեղանուններ է տեսնում Բալկաններում, թեպետ դա շատ կասկածելի է և չի ճշտվում, իսկ հուն ավանդություններում արգոնավորդին ազգակցում են հուն արշավորդների դեկավարի հետ և այլն, այս բոլորը առիթ կտան հայ ժողովրդի ծագման և ստուգաբանության համար մի տեսակ նախապաշարում

և կանխակալ մոտեցում: Այս, անշուշտ, հունական էթնո-կուլտուրական և առևտրական-տնտեսական էքսպանսիայի հետևանք էր, որ իր գագաթնակետին հասավ Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակ: Հույն որոշ գրողներ ոչ միայն հայերին, այլև մեդացիներին, վրացիներին և ուրիշներին պատրաստ էին բնրել տալ Հունաստանից: Արմեն էթնիկական տերմինը դարձավ դիտնականների համար հայերի և հայ լեզվի ծագման և կազմավորման համար մի անսակ կիզակետ (фокус), որ ամեն բան պիտի արտացոլեր: Այդ անունը նաև դարձավ նկատի հայ հնդեվրոպացիների անունը և մինչև հիմա դրվում էր այդ երկու անունները—մեկը հնդեվրոպական նկատների համար (արմեն), իսկ մյուսը՝ Հայաստանի բնիկների կամ անդրադիններին համար (հայ): Հնդեվրոպական նկատի ցեղերի անունը (կամ անունները) մեզ հայտնի չէ: Իսկ armen- կամ ավելի ճիշտ՝ armin- ցեղանունը շատ լավ բացատրվում է Հայաստանի հարևանում եղած մեր էրայից գեռ շատ դարեր առաջ arim (հմմտ. Համերոսի մոտ հիշվող արիմներին) և Arme կամ Arime երկրանունը ասսուրական և ուրարտական բնագրերի տրամաբանությունների մեջ, որը համընկնում է հետագա Անգեղ տուն (Angelene) նահանգի հետ իրեն հին Nihiria կամ Nihria գլխավոր քաղաքով, որ երևի նշանակել է «բերդ» (—անգղ. որ նույնն է նշանակում): Այդ երկրամասը մեծ մասամբ հիշվում է Šupria-ի հետ, որն ավելի արևելք էր, այժմյան Մուֆարկին մոտ (=հին Տիգրանակերտ): Իսկ Դարեհոսի Բեհիստունի (Բիսուտունի) ժայռի հին պարսկական արձանագրության Արմինա (Armina, որից arminiya «արմինացի» տեղանունը իրեն -ina տեղ ցույց տվող մասնիկով այդպես է կազմած): Ինչպես տեսնում—Ḫatte և Ḫattina, Palestina (փղշտացիների երկիր), Ḫattar-ina, Lulu-ina (Լուլու ցեղի տեղ, թշնամու երկիր), Bia-ina (բիա ցեղի երկիր=Վան), Naṣibina (=Մծբին) և այլն. այդպիսի կազմություն են տեսնում նաև Կարին, Գագին, Ագին, Թալին, Արտին և այլ հայկական տեղանունները: Արմեն և Շուպրիա երկրները մեզ են շատ բարի (=Քուռ) ժողովուրդների շրջանը, որոնց լեզվից մոտ քառասուն հատուկ և հատարակ անուններ են մնացել հայերենում:

Հայոց լեզվի ուսումնասիրության ընդհում ևս բոլորը եմ համարում նախ վերցնել այդ լեզվի հնագույն ակունքները ասիանիկ լեզուների կապակցությամբ, հետո հնդեվրոպական մասը իր բոլոր դակ ուսումնասիրությամբ և քննությամբ և վերջապես դրարբի սիստեմը, օրինաչափությունները և չստուգաբանված արմատներն ու ձևերը:

Ի ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՎ ԼԵԶՎԻ ԿԱՋՄԱՎՈՐՈՒՄԸ

Թեպետ լեզվի և իր կրողի միջև չկա մշտնջենական անհրաժեշտ կապ և պատմությանն ներկար ու ձիգ ընթացքում ցեղերն ու ժողովուրդները հաճախ են անդի տվել ավելի ուժեղների առաջ և ենթարկվելով կրոնական, քաղաքական-պետական, տնտեսական ու կուլտուրական ճնշող ներգործությանը, փոխել են լրիվ իրենց լեզուները, լավագույն դեպքում թողնելով իրենց առաջվա լեզուները որպես ամենալավ իրենց գրավոր հիշատակարանների մեջ, թեպետ հայ ժողովրդի անցած որոշ հատվածները այդ նույն գործոնների ազդեցությամբ դարձել են դյուղերով ու շրջաններով թուրք կամ պարս (Սղերդի շրջանում), այնուամենայնիվ հաստատ կարելի է ասել, որ հայերն իրենց դասական լեզուն չեն լսրացրել պատրաստի վիճակում որևէ տրիշից, ոչ տեղում՝ Փոքր Ասիայում, և ոչ էլ դրսից՝ բնորոշ հայ լեզուն կապված է հայ ժողովրդի գոյացման հետ, նոր ծնունդ ու կազմվածություն է, կապված որոշ ցեղերի կամ ցեղախմբերի որոշ միավորումների, նրանց քաղաքական դերի ու գերակշռության հետ։ Այս նշանակում է, որ եթե պատմական Հայաստանում եղել են մոտ հիսուն մեծ ցեղերի կամ առհմացեղային միավորներ, ապա դրանց լեզուները համաչափ կերպով չեն մասնակցել հայ լեզուն կերտելու մեջ, ինչպես նաև հայացումը չի սկսվել և ձևակերպվել մեր պատմական հայրենիքի բոլոր ծայրերում կամ գավառներում։ Հայաստանի ցեղերը հետզհետե հայացան, կազմելով հայ նոր ժողովուրդը 7—8 դարերում

մեր թվարկությունից առաջ, բայց կազմակերպվող, կուլտուրապես ավելի զարգացած և պետականորեն դեկավարող կորիզը — ցեղախումբը որոշ առմանական վիճակ ուներ։ Եվ այս պարագաներում նոր նոր ցեղեր անգամ գալին Հայաստանի տերիտորիայում, ինչպես, օրինակ բուլկարները (հյուսիսային Կովկասի բուլկարներից), որոնք նստել էին Վանանդում (Կարսի նահանգում), կամ սակայն (սկյութական) մի ցեղ կամ ցեղախումբ, որը հաստատվել էր Սյունիքում («զոկերը»), դրանք լավագույն դեպքում պիտի ձևավորեին հարկական բարբառները, բայց ոչ մի ազդեցություն արդեն կազմակերպված պետական լեզվի վրա, որ ավելի մշակված էր և ուժեղ։ Նման ուղիով է ընթացել ժողովուրդների և պետականության կազմավորումը և այլուր։ Օրինակ, ռուսական-սլավոնական ցեղերի խմորումը սկսվել է Դնեպրի ավազանի որոշ մասում (Վոլին), առնչվելով այդ տեղերի վաճառականության, Կիևի դերի և Դնեպրի վրայով նոած տրանզիտային ճանապարհի հետ (дорога из варягы в греки)։ Հետագայում Նովգորոդի, Գալիչի և ավելի ուշ Մոսկվայի, Տվերի, Վլադիմիրի և այլ քաղաքների կազմավորումով և վերջապես Մոսկվային ենթարկվելով կազմվում է ռուս մեծ ժողովուրդը, որը հետզհետե նվաճելով Վոլգայի և Օկայի միջին տարածությունը, ինչպես և Վոլգայի ավազանը Կազանով և Աստրախանով, ենթարկում է իրեն այլալեզու նոր նոր ցեղեր, ընդգրկելով նաև Սիբիրը։ Արդյոք այդ чудь, мари, весь, мордва, чуваш, удмурт և նման այլևայլ ֆիննական, թյուրքական կամ մոնղոլական ցեղերը կազդեին ռուսաց լեզվի վրա։ Իհարկե ոչ։

Ուշագրավ է մեր հին ժողովրդական բանահյուսությունից այն հատվածը, որ բերում է Մ. Խորենացին Վարդգես մանուկի մասին։ Վերջինս «հաստատած գնացեալ», այսինքն՝ անջատվելով յուրայիններից (իր ցեղից) գալիս է տեղերի գավառից (Վրաստանում) այժմյան Ապարանով, Քասախ գետի ընթացքով, դեպի Արարատյան դաշտը, այժմյան Վաղարշապատի մոտ, ուր իր կայանն էր դարձրել հայ Երվանդը։ Գալու նպատակն էր՝ «կռել կռիվ զդուն Երուանդայ արքային», այսինքն՝ միանալ հայ էֆենսին կամ ցեղախմբին, հայանալ, թևակոխ տեսածի գրված է «ինամիանալ, փեսայանալ»։ Եվ այդպես ամենուրեք։ Ցեղախմբերը մեծանալով և միավորվելով սրոհվում էին արդեն այս հողի վրա՝ դասակարգայինի, որը և հիմք էր ծառայում պետության ստեղծելու իր թաղավորներով։

Մաշտոցի ասելով Արտաշեսի և Զարեհի ժամանակ (189 թ. մեր էրայից առաջ) հայ ժողովուրդը «միաբանություն» էր, այնինքն՝ ամենաբնիկ իրար հասկանում էին։ Իմ կարծիքով այդ ընդհանուր հաղորդակցության լեզուն մոտ պետք է լիներ Մ. Խորենացու կողմից բերած ժողովրդական («Դողթնա-ի) այն բանահյուսական կտորների լեզվին, որ երգվել կամ ասվել են Վահագնի, Վարդան մանուկի և Արտաշես ու Սաթենիկի մասին։ Այդ լեզվին շատ մոտ է Փավստոս Բուզանդի ժողովրդավիպական լեզուն։ Եվ թեպետ այդ երկու ժամանակակիցների մեջ ընկած է մոտ 650 տարի, այնուամենայնիվ այդ ժողովրդական լեզուն շատ չափազ է փոխված լիներ։ Իշարկի պետական կառավարության սկզբունքների (օրենքներ, դատավարություն, բաժանքի, առ ու ծախի դոկումենտներ, արտաքին հարաբերություն և այլն) և մանավանդ կրոնական պահանջների հետևանքով այդ ժողովրդական լեզուն ավելի պետք է մշակվեր, հղկվեր ու զարդանար։ Այդ, ըստ իս, երևում է և մեր մեհենական պրակտիկայի մեջ, երբ Անի քաղաքի (Եփրատի վրա) հեթանոսական տաճարում կար մեծ գրադարան-արխիվ, որից օգտվում էին և օտարները, ինչպես նախապես ասորի Բարդայծանը, որը «ընթերցեալ զմեհենական պատմութիւնն, յորում և զգործս թագաւորացն... փոխանակ գամենայն ի լեզու ասորի, որ և ապա անտի լեզու ի յոյն բանս» (Մ. Խոր., II, § 66)։ Հայտնի էին Անիի այդ Արամազդի տաճարի պետական քրմերը՝ Ողումպը և Մաժանը, իրենց պատմություններով։ Իսկ այդ կրոնական ֆակտորը երբեմն ավելի ուժեղ էր լինում, քան ազգային-լեզվականը, երբ, օրինակ, հայ-վրացական սահմանամերձ գոտում քրիստոնյա միաբնակ (մոնոֆիզիտ) վրացին հեշտությամբ դառնում էր հայ, իսկ երկաբնակ (դիոֆիզիտ) հայ քաղկեդոնականը գերադասում էր դառնալ վրացի։

Հայ լեզվի կազմավորումը բնական է, որ պետք է սերտ կապվի հայ ժողովրդի պատմության հետ, թե՛ իր ծագումով՝ գենեզիսով և թե՛ վերջնական կազմավորմամբ ու զարգացումով։

Հայոց պատմությունը մեզ մատչելի է դարձել անցյալի մի շարք փաստական ավյալներով։ Նախ՝ գրավոր բազմաթիվ վկայություններով՝ թե՛ ազգային աղբյուրներով և թե՛ օտար։ Հետո հնագիտական կուլտուրայի մնացորդներով, սկսած հնագույն շրջանից։ Վերջապես այս խնդրի համար նշանակություն են ստանում հայ ֆոլկլորի և դիցաբանության, հայերի մարդաբանական և ազգագրական մի շարք վկայություններ և այլն։ Եթե որպես ազգու-

թյուն, որ առաջացել է որոշ ցեղերի միախառնումից ու անանատական-հասարակական նոր փոխակերպումից. հայ ժողովուրդը էականանում է 7—3 դարերում, ապա այդ ֆորմացիայի ամմացնդային և կուլտուր-պատմական ակունքները մեզ նույնպես պետք է հետաքրքրեն: Եղած ավյալները առայժմ մեզ բերում են այն եզրակացության, որ պատմական Հայաստանի (փոքր և մեծ) հողի վրա եղել են ոչ միայն այլևայլ ցեղեր[1], այլև պետություններ՝ Հայասա, Խուռի-Միտաննի (մասամբ), Ուրարտու:

Եվթական բնիկ արձանագրությունները 1400—1200 թթ. (մեր էրայից առաջ) հաճախակի հիշատակում են Հայասա (Haiaša) կամ Ազզի (Azzi) կոչված երկիրը կամ պետությունը, որն ընդգրկում էր Եփրատի, Ճորոխի և Արաքսի վերին հոսանքների մեջ եղած տարածությունը[2]: Հետագայում այդ տերիտորիան մտնում էր Փոքր և Բարձր Հայքերի մեջ: Արևմուտքից գալիս էր խեթերի «վերին երկիրը», որի մասն էր կազմում Գալա կամ Բալա երկիրը, որը բավականին զարգացած էր նրանում և բնում էր հարթ տարածություն, ինչպես Կևկիա և Իրիս գետերի ընթացքում: Եվթական թագավորները պայմանագրեր կնքած Հայասայի հետ, օրինակ խնամիական կապեր էին հաստատում նրա թագավորների հետ, օրինակ Խազանայի հետ և Հայասան համարում էին իրենց վասալ մի պետություն: Նրը շուրջ 1200 թ. խեթական մեծ պետությունը վասալիացիների, անդրծովյան մի քանի նկվոր ժողովուրդների (ցեղերի), ինչպես դուց

---

[1] Տե՛ս իմ Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Ереван, 1940 г. էջեր 71—76:

[2] A. Götze-ն իր մի հոդվածում („Bemerkungenzu dem hethitischen Text" տե՛ս Revue hittite et asianique, 1930 թ., հոկտ., էջեր 24—25) համաբերով Ազզին Հայասայի մաս, գրում է վերջինիս մասին հետևյալը. Ein grösseres politisches Gebilde, wie es Azzi-Hajasa zweifellos ist in dem angegebenen Sector der hethitischen Ostgrenze nur denkbar, wenn es die Euphrat-Strasse Erzingan-Erzerum einschliesst": Իսկ F. Caraignac-ը նույն ժուռնալի 1934 թ., Fasc. VII, էջ 14, Հայասան համարում է մի մեծ միապետություն, որը բռնել է պատմական Հայաստանի ամբողջ արևմտյան մասը. „he Hajasa a été au XIV e siècle une grande monarchie, Couvrant toute l'Armenie occidentale": Հոդվածի վերնագիրն է „He premier royaume d' Armenie": Այս կարծիքները ես չեմ բերում իմ „Хайаса—колыбель армян" գրքում հիշյալ ժուռնալը ձեռքիս տակ չունենալու պատճառով: Աւագինը կամ ատյիններից այդ անվան (Haiasa) և հայ անվան կապի մասին ասել է նշյալ Մաթիբոսյանը) տե՛ս Caucasica, Fasc. 7, 1931, Leipzig, էջ 43): Գալ կրնչմերը նույնն ասել է 1932 թ. Anzeiger der Wien Axad., 1932, էջ 28 և շար.):

և հալասցիների, կաշկալցիների հարված է տակ կազմալուծվում է։ Պետք է ենթադրել, որ Հալասան ոչ միայն անկախանում է, այլև տարածվում է, հատկապես դեպի հարավ, դեպի Մելիտենե, որ այն ժամանակ կոչվում էր Թեգարամա կամ Թագարամա (—ասսուածաշնչի «Թոգարմա»)։ Այդ է պատճառը, որ Հալիը, հալերի (resp. հալասացիների) նահապետը, համարվում է Թորգոմի որդի։ Հալասա բառացի նշանակում է «հալա ցեղի (աստծո) տեղ», ուր վերջին -սա (-sa) մասնիկը, կազմած հարաբերական -ս (-s) մասնիկից (թևերս լայն լեզվով) և ա (a) վերջամասնիկից, որ տեղ է ցույց տալիս, մտնում է մի շարք տեղանունների մեջ, ինչպես՝ Խաթթուսա (խեթերի մայրաքաղաքն է), Թուրլուսա (կամ Թուրլասա) «խուռխուռների տեղ», Զազղիսա «զազանների տեղ», Նինասա «Նինա աստծու տեղ», Տարխունտասա «Տարխունտ աստծու տեղ» և այլն, և այլն։ Հալասայի (Խալասայի) հասկանական տերերը հայ անվան հետ ընդունվել է շատ գիտնականների կողմից և կարծես թե այժմ կասկած չի հարուցում, մանավանդ որ պատմականորեն հենց այդ Փոքր Հայքն է եղել հալերի բնօրրանը, որանցից 7-րդ դարից սկսվել է այդ հայա, ազգի, բայա ցեղերի տեղաշարժը դեպի Բոհ, Արաքսի և Արածանի-Ադձնիքի շրջանները։ Այս տեղափոխության պատճառը պիտի համարել VIII դարի վերջերը հանդես եկող կիմմերներին, որոնք հետևյալ դարում տակն ու վրա արին ամբողջ Փոքր Ասիան, ինչպես և տակերի (սկյութացիների) հետ նպաստեցին Ասորեստանի կործանմանը։ Այդ gimirri (հայոց Գամիրք = Կապադովկիա) ցեղանունը այնքան տպավորություն է թողել հալերի և վրացիների վրա, որ gmiri, հայոց Գմիր նշանակում է «հերոս, զորավոր», իսկ saka-ն հայոց մատ դարձել է սկա (ska) > հակա (hska)։ Այս անվան հետ եմ ես կապում և մեր Գարեգին Սկա-որդուն, առաջին հալ Թագադիր Թագավորին, ինչպես ասում է Մ. Խորենացին[1]։ Նա, ուրեմն, տակերի որդի էր, որոնց առաջնորդը ըստ սորբ գրոց Աբգանաղն էր։ Եվ

[1] «Սկա» անվան էթնիկ նշանակությունը բմբռնումը մեզել է ոչ միայն «Սկա-որդի» հոլջոլջման մեջ, այլև մասամբ մեր պատմագիրների մոտ։ Օրինակ, Անանուն պատմիչը, խոսելով Բագարատ Փառեդյանի մասին, որն բնագառջում է հայոց առասպելական Արշակ—Վաղարշակին, ավելացնում է. «Զայս արա Արշակ արքայ ասպետ Հայոստան երկրին, որ էր իշխան և հրամանատար, ամենայն թագաւորութեանն հրամանաց դլուխ, և հայր արքայի, և եղբայր, որում եւ իշխանութիւն տէրութեանն այնոցիկ։ Նա կատարեաց գեսկայսն, որ զօրաժողով եղեն ի վերայ Նորա ի Միջագետս Ասորւոց։ Տե՛ս Քերովբե Պատկանյան, Պատմութիւն Սեբեոսի, 1887, էջ 9։

իզուր չէ, որ հայերը կոչվում էին ըստ այդ ավանդությունների (առաջ հայերի և Կորյունի մոտ) նաև «աստքանաղյան առն»: Հավանաբար հայասցիներին միացնող նոր «պատակագիր թագավորը», այսինքն արդեն ժողովրդի թագավոր, ոչ թե առաջնորդ, եղել է այդ Գարեյրը:

Հայասցիների, ազգի և բալա ցեղերի որոշ փոքր քանակը անցել է Քուի մոտով դեպի հյուսիս՝ Վրաստան, ուր հունա-հռոմեական աղբյուրները հիշատակում են achai-oi անունով ժողովուրդ, որը «a» նախդիրով, ինչպես այդ հատուկ է և արխազական լեզվին (= a-bas-k-; A-kharthnə «Վրաստան», A-rus-nə «Ռուսաստան» և այլն), ծագած պիտի լինի chai անունից: Ավանդներում կան երկու «բալա» անունով բարբառներ, ինչպես նաև Վրաստանում «Գալա կացիոս» անդանունը: Իսկ azzi ցեղանվան առկայությունը ևս ուզում եմ տեսնել վրաց առասպելական թագավոր Azo-ի անվան մեջ: Գառահական չափիսի համարել, որ այս ցեղերի տեղափոխության ուղղությամբ կատարվել է նաև վրացական ցեղերի տեղաշարժը Ճորոխի ավազանից կամ Քուի վերին հոսանքից դեպի այժմյան Արմավիր—Թրիլիսի շրջանը, ինչպես տեղանունների հիման վրա այդ ուղում է հաստատել Բոլտունովան:

Արաքսի հովտով դեպի արևելք այդ նույն հայ-ազգի և բալա ցեղերի տեղաշարժի առկայությունը հաստատում են հետևյալ տեղանունները—Բաղաց աշխարհ, Բաղաբերդ..., Բալա-Կարան (—Բալա ցեղեր) կամ Կարաբալա «ցեղ բալա» (—Ղարաբաղ), Բալաճառա կամ Ռուսի բալա «Բալա գետ» (—Բուլղար-չայ Ագրբեջանում), Aza կամ Haza քաղաքը Փոքր Հայքում և վերին ու ներքին Ազա գյուղանունները Դողթանում, Անի (= Կամախ, հին Kummaha) քաղաքանունը Եփրատի վրա Հայասայում և Անի ամրոցը, որպես Բագրատունյաց մայրաքաղաք Ախուրյան գետի վրա, Aripsa բերդը Հայասայում և Արավիս (Ծարահեդում), Արաւսեակ կամ Արաւիս (գետ և գյուղ Երիվնջակում, Արաքսի մոտ) և այլն: Իսկ այդ ցեղերի գաղթը իրենց նախկին տեղերից դեպի հարավ և հարավ արևելք՝ Արածանի ստորին հոսանքով դեպի Ադծնիք, հետո և դեպի հյուսիս, վկայում են —Բալա-հովիտ, Պալուճի, Պաղաճակաց տուն, Բալուր Պաղին, Բաղեշ..., Հազզու..., Հայնի, Հայոց ձոր և այլն:

Նկատելի է, որ ամենից շատ տեղանուններ մնացել են Բալա կամ պալա ցեղախմբի անունով, որովհետև հայերն են այդպես անվանել. իսկ հայ կամ ազգի համեմատաբար քիչ են, և բնական

է, որ այդ նոր հայերին բնիկները պիտի կոչեին, ինչպես, օրինակ, ուրարտացիք ասել են «Հայոց ձոր» Վանից հարավ-արևելք, ուր Խոշոր դեմի ավազանում առաջին անգամ հայեր են հաստատվել։ Նմանապես Հալնի անունը տվել են Տիգրիս գետի վերին հոսանքում բնակվող արիևները—շուպրիտները, որը իր -ևի (-իևի) մասնիկով նման է Աղձ(ի)նիք կազմութեյան հին Alzi ձևից (Alzini հնչում են և ուրարտական արձանագրութեյուններում)։ Պաղին (<Palina) անունով գյուղ կար ոչ միայն Բալուի մոտ, Արածանիից հարավ, այլև Դիարբեքիրից մոտ 40 կիլոմետր դեպի հյուսիս։ Որքան էլ բազմաքանակ են եղել այդ բալա ‖ պալա ցեղերը և կուլտուրայով թևերա հայացիներից ոչ պակաս, այնուամենայնիվ Ուրարտուում գերիշխել են ոչ թե դրանք՝ բալալեցիք, կամ ուրարտական տարրը, այլ ևկվոր հայացիք, որոնք Աղձնիքում խառնվել են Ar(i)me և Šupria շրջանների խուռիտական (շուբար կամ սուբար) ժողովրդի հետ։ Այստեղից է և Armine անունը, որով հայերին կոչեցին մեդացիք ու պարսիկները, իսկ հետո հույներից յուրացվելով տարածվեց ամենուրեք։ Միայն վրացիք են մեզ անվանում սոմեխի և քրդերը՝ ֆլա (ֆլակի գեմանի «հայոց լեզուն»[1]։ Թևեա արիևները (Arime երկիրը իր Niḫ(i)ria գլխավոր քաղաքով) հիշվում են շատ հին ժամանակից ասորական, խեթական և ուրարտական արձանագրութեյուններում, և թևե Հոմերոսի նույն arimoi ցեղանունը, որը նա կապակցում է Կապադոկիայի Արգեյոս լեռան հետ, այնուամենայնիվ այդ Արիմեն, որ ըստ իս Անգեղտունն է հայոց ժամանակ («բերդատուն» angł «բերդ» բառից) Շուպրիայից (Տիգրանակերտից՝ Մոաֆարկինից) դեպի արևմուտք, յոթերորդ դարում արդեն մեծ մասամբ ասորացել էր, կորցրել գրեթե իր խուռիտական լեզուն և հեշտութեյամբ տեղի տվել հայացիների լեզվին, խառնվելով նրա հետ։ Այսերը (ուրարտացիք) դեռ հինգերորդ դարի վերջում մնացել էին առանձնացած և վարձկան զորք էին տալիս արմեններին, այսինքն՝ հայերին, ինչպես վկայում է Քսենոֆոնը իր «Անաբասիս» գրքում։ Այնուամենայնիվ

---

[1] Տե՛ս իմ Хайаса—колыбель армян գիրքը (էջեր 171—209)։ Այստեղ, օգտվելով տոհմից, ուզում եմ առաջարկել մի բառային առաջարանութեյուն, այդ «բալ» (=вишня) բառի մասին է, որը կա և վրացերենում։ Այդ անունը ևս կապում եմ Bala (Pala) պոնտական երկրամասի հետ, ինչպես կեռասենդ բազաբանունից ունենք կեռաս „черешня", pontic—«պոնտական» անունից «պնդուկ» («ֆընդըկ»), persic—«պարսկական» անունից ռուսաց персик «պեկձ»։

պետք է ընդունել, որ հայոց նոր լեզուն, որի փայլուն վկայությունը մեր հին դասական լեզուն է (գրաբարը»), կազմվել է հայասցիների, խեթերենի ու խուռո-ուրարտական լեզուների, ինչպես և հնդեվրոպական մի (կամ մի քանի) լեզվի խառնուրդով[1]։ Այդ վերջին հանգամանքի (հնդեվրոպական շերտի) մասին պատմական անմիջական տվյալները քիչ են, որովհետև փոլուդիացիների լեզուն, որքանով նա հայտնի է, նման չէ հայերենին, ինչպես պնդում էին հին հույն մատենագիրները («հայերը փռյուգիացիների հետնորդներն են» ըստ Հերոդոտի), իսկ սակերի (սկյութացիների) լեզվից մեզ ոչինչ հայտնի չէ։ Մինչև իսկ ստույգ չէ, թե այդ սակերը, որ եղել են պատմական Հայաստանի տերիտորիայում (հարավ-արևելքում) որքանով միատարր կամ հնդեվրոպական են։ Ամենամեծ նմանությամբ հայոց լեզվում կա մի սավար, բայց չդներիշխող շերտ, թե՛ լեքսիկայում և թե՛ քերականության մեջ, որ մեր լեզուն կապում է հունարենի և ալանոնականի հետ։ Այսպես արդեն ինքը՝ հայոց լեզուն է հանդիսանում մեր ժողովրդի պատմական զոյացման մի աղբյուր, որ ոչ միայն համընթաց է արտահայտվում մեզ հայտնի պատմական հնագույն դեպքերի ու փաստերի, այլև վկայում է մեզ չհասած և ոչ լրիվ պատմական իրադարձությունների մասին։ Ինչպես տեսնում ենք, լեզուն ևս պատմության համար մի աղբյուր է, այն էլ՝ հնագույն, ինչպես մարդու դամբարանը իր ոսկորներով ու գանգով, հետը դրած զարդերով, սրերով, ամանեղենով ու կենակերով, նկարած զարդերով կամ հավատալիք նշաններով և այլն։ Ի դեպ ասեմ, որ հայերը իրենց մարդաբանական հատկությունները պատկանում են «արմենոիդ» կոչված փոքրասիական տիպին, որը սակայն այդ Փոքր Ասիայից դուրս էր գալիս թե՛ դեպի արևելք և թե՛ դեպի արևմուտք[2]։ Այս հանգամանքն էլ միանգամայն դեմ է խոսում հայերի եվրոպայից գալուն («հնդեվրոպական նախահայրենիքից») և հաստատում նրանց բուն փոքրասիական ծագումը, իսկ հայ լեզուն որպես փոքրասիական կամ ինչպես հիմա ասում են՝ ասիանիկ լեզու։

Որ պատմական Հայաստա-Ազդի, ինչպես և հարևան Գալա || Բալա երկրի ցեղերը, ուխերորդ դարի վերջից սկսած (կամ յոթերորդի սկզբից) հիմնական ասպատակող ցեղերի ճնշմամբ

---

[1] Տես. խմբ. պրոֆ. Գր. Ղափանցյանի առաջադրած այս թեզը չի հիմնավորվում։

[2] Արևելքում այդ տիպը հասնում է մինչև արևելյան Գարակատան, իսկ արևմուտքում նա միակվում, շաղկապվում է Դինարյան տիպի հետ բալկաններում. տե՛ս A. Götze, Kleinasien, München, 1933, էջ 17։

սկսեցին դիմավորապես տեղաշարժվել հարավ Եփրատով և հետո Արածանիի սաորին հովիտը և այդտեղից մասամբ Վանա լճի հարավային շրջաններով դեպի Վան-Տոսպ («Հայոց ձոր») և մեծ մասամբ դեպի Աղձնիք, այսինքն՝ Տավրոս լեռնաշղթայից հարավ, տեղավորվելով հին Arime և Šupria երկրամասերում և այլն, դրա համար մենք ունենք և այլ պատմական վկայություններ։

Նախ՝ ունենք հունական աղբյուրներից (Ստրաբոն, XI, §§ 12, 14) վկայություն, թե Ադիաբանդր Մակեդոնացու արշավանքների մասնակիցներ՝ Կիրսիլ Փարսալացին և Մենի Լարիսացին ասել են, որ արդնադարդ Արմենոսի ուղեկիցներից [=հայերը] ոմանք բնակվեցին Ակիլիսենայում [Եկեղիք – Եկեղյաց գավառ Փոքր Հայքում], որը առաջ ենթարկվելիս է եղել Մոփքի իշխանության, ոմանք էլ հաստատվել են Միսպիրիսիտում [ուղղել է՝ Շուպրիտիս = հին բնաբառիր Šupria, Arime-ից արևելք] հասնելով մինչև Թալաքենե և Ադիաբենե, այսինքն՝ Հայկական բարձրավանդակից դուրս։ Երկրորդը՝ պատմական չորս Հայաստանների հաջորդաբար կազմվելը (I և II, III և IV Հայք), ինչպես որ նկարագրված է Մովսեսացու կողմից և Ծուստինիանոս կայսրի նովելներում, աշխարհագրորեն վկայում է նույնպես Հայաստանի բնակիչների վերոհիշյալ ուղիով տարածվելու մասին։ Եվ վերջապես՝ Դարեհոս 1-ինի տասներեքերորդ սատրապությունը հնում ընդգրկում էր հայերի բնակության այդ վերոհիշյալ տեղերը, սկսած հայերի հարավային նշածս շրջաններից դեպի Արածանիի սաորին հովիտը, անցնելով Մելիտենեից ի վեր, մինչև Սև ծովը, որ իհարկե արտացոլել է ոչ միայն անտեսական ու ճանապարհային նկատառումները, այլև էթնիկական և քաղաքական[1]։ Այդ ճանապարհնե-

[1] Ըստ Հերոդոտի հայերը պակտիների հետ մտնում էին XIII սատրապիան, սահմանակից էին արևմուտքում կիլիկեցիներին [=Մելիտենե] եփրատ գետով, իսկ արևելքում բաժանվում էին մատիենեներից Տիգրիսի մի վտակով, հավանորեն Զավ գետով։ Այսպողները, որոնք դեռ չէին հայացել, սատգեդների, բուդյանների և մյուսների հետ մտնում էին Դարեհոսի XVIII սատրապիան և սահմանակցում էին արևելքում այն մատիենների հետ, որոնք ապրում էին Արտոպատենեում (Գարակասան), սկսած Արաքս գետից դեպի հարավ։ Ուրմիա լճի կողմերը՝ հայերի վերաբնակմամբ այսրդոները բռնում էին հյուսիս-արևելյան կողմը։ Գետի ցեղը Ն. Ադոնցը անդավորում է Բախտան (Արևելյան Տիգրիս) գետի ավազանում, ի նկատի ունենալով դրանց նմանությունը (Pakti և Boxtan). տե՛ս նրա „Арм. в эп. Юст.», էջ 393։ Ըստ Քանոֆոնի կենտրիտ գետը (=Бохтан) հյուսիսային ափի հայ գյուղերը ավերվել էին կորդուների կողմից, երբ նա անցնում էր այդ գետի սաորին հոսանքը։ Այդ էլ վկայում է հայերի և պակտիների սահմանի մասին։

թացքի այն մասը, որ հյուսիսային Միջագետքում և հարավային Հայաստանում է ընկած, հայտնի էր դեռ Ասորեստանի թագավորների արշավանքի ժամանակ։ Մինչև իսկ պարսիկ սատրապներն էին օգտվում նույն ուղիով, որ հայտնի էր հնում որպես Դարեհոս 1-ինի «Մեծ ճանապարհը»՝ Շուշից մինչև Սարդ։ Մեհրուժան Արծրունին պարսից Շապուհ արքայի զորքերով համառապես ընթացել է այն ուղղությամբ—«Ի ընդ Ադձնիս և ընդ Մոխս մեծ ընդ Անգեղ տունն ընդ գաւառն Անձտայ ընդ Մոխս Շահունից, ընդ Մզուր գաւառն և ընդ Դարանաղն, ընդ Եկեղեաց, զկոչմանս այնց գաւառացն Շապուհ թագաւորն պարսից հանդերձ անթիւ զօրօքն առպատակել հնդեալ ծաւալէր բազմութեամբ իրրև զջուրս բազումս (տե՛ս Փաւստոս Բյուզանդ, Ր. Գատեկեանց, Գնեերբ., 1883 թ., էջ 120)։

Այն ուժեղ հակահարվածը, որ ամենց Դարեհոս I դեպի Բալքանն և Ադիաբենն տարածված Հայաստանի ցեղերին հինգ ճակատամարտներում (Զուզա, Տիգրա, Ուխիամա և Օտիարա կենտրոնում Արմենիայում, և Իրավալի մոտ Ասորեստանում) տեղից նրանց քաշվել հյուսիս դեպի լեռները և լեռնադաշտերը, հայացման ենթարկելով նախ Ուրարտուի արևմտյան մասը (Տարոն)։ Արդեն հինգերորդ դարի վերջերում ըստ Քսենոֆոնի հայերը գտնվում էին Կենտրիտ (Բոխտան-սու կամ Արևելյան Տիգրիս) գետից հյուսիս, սահմանակցելով Կորդուաց աշխարհի հետ։ Նրանց Օրոնտա (Երվանդ) թագավորը ենթարկվում էր պարսից սերրապտությանը։ Մյուս հայ թագավորը՝ Տիրիբազը՝ իշխում էր Արածանի ստորին հոսանքում և վերին Եփրատի (Կարա-սու) նախկին Հայասայի հողերին՝ ի մեջ առյալ և նապերիանների ու բասյաններին սերիտարիան (—Սպեր և Բասեն)։ Այս վերջին հանգամանքը խոսում է հայացիների նաև դեպի արևելք տեղաշարժի մասին, Ձորոխի և Արաքսի հովիտներով։ IV դարում հայացման պրոցեսը ընդգրկում է նաև Արարատյան դաշտը, ուր IV և III դարերում իշխում էին դարձյալ Որոնտիդները (=Երվանդյանները), որոնց հաջորդում է Արտաշես I (որդի Զարեհոդրի) Ամամիերում և հետո Արտաշատում։ Բուն Հայաստանի (Փոքր Հայքի) բնակչությունը այնքան նոսրացել էր և ընկել հարևանների ազդեցության տակ, որ Արտաշեսը ստիպված էր նորից նո վերցնել այս շրջանները, ինչպես Կարինը և Դերջանը խալիբներից և մոսխոլիներից (=աշտարակարնակ-ներից), Եկեղեաց գավառը՝ կատաոններից։ Հայերի տարածվելը հարավից (Ադձնիքից) դեպի հյուսիս՝ Արարատյան դաշտը, որ եղել է Արածանիի հովտով դեպի Հարք, Ապահունիք, Բագ-

բանդ և Ալրարատ, արձագանք է գալ նաև հայ բանահյուսության մեջ, ինչպես վկայում է Խորենացին, ուր նկարագրվում է Հալկի, Արմենակի ու Արամայիսի չվելը Բաբելոնից և նրանց հետ կապված լեգենդները[1]:

Երբ Հերոդոտը ասում է, թե Հալիս և Եփրատ գետերը բաժանում են Արմենիայից կամ նրա լեռներից (գիրք I, 72 և 180), ապա այստեղ պիտի հասկանալ հետագա Փոքր Հայքը, կամ հին Հայասան: Նմանապես, երբ նա հայերին մոցնում է Դարեհոս I-ի տասներեքերորդ սատրապիան և այսրդոններին (ուրարտացիներին) տասնութերորդ սատրապիան, ապա դրանով ևս շեշտվում է արմենների (—հայերի) տարածվելը միայն Եփրատի հյուսիսային մասում: Այս նույն հինգերորդ դարի հույն գրող Քսենոփոնի վկայությամբ, մոտավորապես 400 թվականներին մեր էրայից առաջ, արմենները (—հայերը) արդեն ունեին երկու Հայասաններ, մեկը Աղձնիք—Տարոնում և կենտրիտ գետից հյուսիս, որ Որոնտի իշխանության տակ էր, իսկ մյուսը՝ Ծոփք—Փոքր Հայկ, որ նա կոչում է «Արևմտյան Հայասան» և կառավարվում էր Տիրիբազի կողմից: Բայց նրա վկայությամբ արմենների հետ դեռ կային մարդերը, խալդերը, տաոխները և խալիբները, այսինքն Ուրարտուի կենտրոնական, արևելյան և հյուսիսային մասերը դեռ հայացված չէին: Ուրեմն, երբ Դարեհոսի Բհիստունի (Բիսուտունի) արձանագրության մեջ պարսկական բնագրի Armina բառին ակկադական (աասուրա-բաբելական) թարգմանության մեջ կարդում ենք Uraštu, ապա այդ չպիտի հասկանալ ձևականորեն, որ դրանք քաղաքական և տերիտորիալ առումով նույնն են: Ակկադական բնագրերը նույնիսկ հինգերորդ դարի վերջին քառորդում դեռ պահում էին իրենց ականջին հարազատ Ուրաշտու (<Urartu) հորջորջումը, երբ արդեն վաղուց այդ պետությունը չկար: Եվ ընդհակառակը, պարսիկների համար Ուրարտուն անցյալի տրադիցիա չուներ, իսկ նրա հարավում (Arime>) Armina երկիրը իր ճոր ներքոր հայերով հինգ անգամ ուժեղ ապստամբում է Դարեհոսի դեմ, իսկ արմենացի Արախան (որդի Հալդիտայի) ապստամբում է Բաբելոնում, որպես վերջինիս կառավարիչ: Պարզ է, որ պարսիկների համար նշանակություն էին ստանում այդ Արմինալի բնակիչները, որոնք հին արմեններն էին (Arime երկիր և ժողովուրդ), ողողված խաղաղասեր գաղթականներով: Շատերը ուշադրություն են դարձրել,

[1] Տե՛ս նրա «Պատմություն Հայոց», գիրք I, գլ. Ժ—«Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս» (տողեր 12—13) կամ «Արդարացուցանէ և այս զասացեալ զրոյցս անդրեառ» (տողեր 20—21) և այլն:

որ արմինացիները (arminiya) իրենց կողմից տրված հինգ ճակատամարտում մի ընդհանուր դնկավար չունեին, այլ յուրաքանչյուր անգամ նրանք «հավաքում էին» (hagmata) և առանձին-առանձին կըռվում. և այստեղից եզրակացնում են, որ այդ կռվողները դեռ ապրում են տոհմացեղային առանձին միավորներով: Ակադ. Վ. Սարուխանն իր մի հոդվածում՝ „Новые данные истории Армении, засвидетельствованные Бехистунской надписью" (տե՛ս «Տեղեկագիր» ԳԱ, Հասարակական գիտություններ, 8, 1946, էջեր 31—38) նույնպես ճիշտ նկատում է, որ պարսիկների այս թշնամին „Не было коренное население Армении—Урарту, а племена, очень недавно вторгнувшиеся в Армению" և նա առաջարկում է այդ ներխուժողներին համարել սակեր (սկյութացիներ), որոնք այդ ճակատամարտերից հարյուր տարի առաջ (623 թ.) անցել էին Մարդին-Վարուր ուղղությամբ. իսկ չէ՞ որ Իզալլայի ճակատամարտը հենց նույն տեղում է եղել, այսինքն՝ Վարբրանից հյուսիս-արևելք: Ինչ խոսք, որ այդ ներխուժները եղել են Հայասայի հարևերը, թերևս և սակերի հետ, Գարուր Ակ-արդու, այսինքն՝ Սակյան Գարուրի գլխավորությամբ, ինչպես այդ կարելի է ենթադրել ժողովրդական բանահյուսության տվյալներով բուն Մ. Վարենացու Ինքը (Armina) բառը կազմած է տեղ ցույց տվող -ina մասնիկով, ինչպես ուրարտական Bia-ina (=Ուրարտու), Ḫatina («Հեթների երկիր»), որ խեթական արձանագրություններում գրվում է Ḫattina, huluina «լուլուբների>թշնամիների երկիր», Argištiḫina «Արգիշտիական» (=Արմավիրն է)..., Naṣibina «Նեղիբինն» (=հայոց Մծբին), Palestina (փղշտացոց երկիր), Madaena (<Madaina) «մեդացոց երկիր», Ḫattarina «խեթացիների քաղաք» (խուռիտական արձանագրությունների մեջ), Kuzaštarina և այլն: Հայոց մեջ -in վերջավորություն անցնող տեղերը (Կարին, Գաղին, Արտին, Թալին և այլն) նույն կազմությամբ են: Արմինան, որ համընկնում է հետագա Անգեղտանը, ուրարտական, խեթական և ասորեստանյան արձանագրություններում հնչվել է Arime կամ Arme, իսկ հետագայում ձևակերպվել իբրև Armina: Մայրաքաղաքն է եղել Նիհիրիա (Niḫiria կամ Niḫria), որը խուռիտերենում հասարակ բառ է, թերևս «ամրոց, դղյակ» նշանակությամբ, որ հետո փոխարինվել է angl<agil=սումերական egal, ակադ. ekall-u «պալատ» բառով: Հայասատնում այդ բառը հասցել է որպես հատուկ անուն Անգեղ ձևով (անհ. հոլ. Անգեղ, այստեղից է Անգեղ տուն, Տորք Անգեղալ) և ամենուրեք նշանակում

է «բերդ, ամրոց»։ Ուշագրավ է Փավստոս Բուզանդացու այն խոսքերը, որ նա տալիս է այդ Անդեղ տան կենտրոնին, Անդղին, որը «Ոստան լեալ էր Հայոց վաղ վաղ», ուր և թագվել են (I—IV դարերում) նրա ասելով հայ թագավորները։ Համեմատել նաև ասորիների վկայությունը „Ostan Arzōn“ նույն կետի նկատմամբ (=Արզանիալի մայրաքաղաք)։ Բայց հայոց թագավորներին ինչպես և հոգևոր առաջնորդներին (Գրիգոր Լուսավորիչ և այլն) նույն ժամանակ թագում էին Դարանաղյաց Անիում, այսինքն Հայոստանի կենտրոնում՝ Թիլում։ Ըստ իս, այս ևս վկայում է հայերի նախնի (Հայոստա=Փոքր Հայք) և հետագա (Անդեղ տան=Armina) քաղաքական հանգրվանների մասին, իրրև տրադիցիայով սրբազնագործված վաղեմի հայ բնօրրանների։ Իհարկե Հայոստանից տեղափոխված հայերը իրենց երկրորդ հանգրվանում՝ Armina-ում և դրան մոտամբ բուն Ուրարտուում են թափանցվել են լեզվական խաչավորման, խառնվելով այդ տեղի խուռռո-ուրարտական («նախիրյան») լեզուների հետ։

Հայոստա-Աղդի և Բալա (Պալա) երկրների ցեղերի հետ նրանք նույն ժամանակներում (VII դար) կիմմերների ճնշման տակ, Ուրարտու են տեղափոխվում նաև խեթական նախկին երկու հպատակ ցեղեր կամ նրանց որոշ մասը։ Դրանք են manda և šāla (=šāla), որոնք ըստ խեթական օրենսգրքի (կոդեքսի) ի թիվս այլ ցեղերի կամ քաղաքների (Tamalki, Ḫatrā, Zalpa և այլն) ազատ էին իրենց դինվորներին տալ մի շարք պարտադիր աշխատանքների, նման մեր «կոռ» և «բևեկար»-ի (=luzzi և šaḫḫan)։ Անկասկած է, որ հայ նախարարական տոհմերը—Մանդակունի և Սաղունի (կամ Սլկունի) առաջացել են խեթահպատակ այդ արտոնյալ երկու ցեղերից, որոնց անունից կազմված է mandak «մանդացի» և sal(a)k «սալացի» կամ «սալցի», ցեղային պատկանելության կամ ծագում ցույց տվող -ak ‖ -k մասնիկով (համմտ. բազակ «բալացի», Արմենակ «արմինացի»... էտրուսկերեն romak «հռոմայեցի», spartak «սպարտացի»..., հայ-կ «հայացի», bas-k «բասկի», etrus-k «էտրուսկի», a-baz-g (ա)բազգի (—արխազ), gur-g «գուրացի» (որից груз-ин, gurǯ-i և այլն)։ Երևի այդ manda և sala ցեղերը եղել են իրանական և թափառական ավարառուներ, որովհետև ասուրական արձանագրություններում հիշում են ավազակաբարո umman manda («մանդա» մարդիկ) բազմաթիվ ցեղ (կամ ցեղեր), որոնք եղել են նաև ալժմյան Դիարբեքիրի (Ամիդի) մոտ։ Այդ հայացած Մանդակունի և Սաղունի (Սլկունի) տոհմերը

հանդես են նկել միասին ոչ միայն խեթական կողքում, այլ նաև հետագայում, իրենց նոր տեղում, այն է՝ Տարոնի հյուսիս-արևմտյան շրջաններում — Մանզակուներիք Արշամունիքում (Բինգյոլից հարավ), որ մի ժամանակ Տարոնի մասն էր, և Ս(ա)կունիք Օդական բերդում (արժմյան Ախլաթ), որը Արածանիի վրա է։ Մ. Խորենացին էլ դրանց միասին է հիշում («Պատմ. Հայոց», II, § 8)։ Նույնպես նրանք միասին են հիշվում Դաշնամակում (47-րդ և 48-րդ տեղերը), ինչպես նաև «զինվորական» փաստաթղթում (14-րդ և 15-րդ տեղերը)։

Թողած մասերի մասին, որի mesx ձևից Ն. Մառը հանում էր somexi «հայ» վրացերեն բառը, մանրամասնենք նաև արևելքից Հայաստան մտած մարդերի, մազերի (—մարների) և մանրացինների մասին, որոնք գրավել են Մարդաղի և Մարդպետական, Մանազի կամ Մանազանի շրջանները, ինչպես և կազմել Ամատունի «Մոբացան» նախարարությունները։ Իրանական ծագում ունեն նաև Դիմաքսյան, Կամսարական և թերևս Գնունի հայ ֆեոդալական տները։ Իսկ Խորխոռունիները, ինչպես ճիշտ նշել է Խորենացին, առաջացել են Ասո նահապետից, որը Հայկի սերունդից է նա համարում, սակայն դա խուռիտների ցեղանունն է, և գուցե ակնարկվում է խուռական-շուպրիտական ծագումը, ինչպես «ձենո»-ից նա սերում է Մամիկոնյաններին, սակայն այդ «ձենո»-ի տակ պիտի հասկանալ ոչ թե չինացու, այլ «ճան» (—լազ) ժողովրդին։

Եթե վերցնենք Ուրարտուի բնիկ կոչված տոհմերն ու ցեղերը, որ եղել են Հայասա և Բալա ցեղամիությունների դալու ժամանակ, ապա անգամ մոտավոր չի կարելի տալ դրանց թիվը։ Տիգլաթ Փիլիսար 1-ինի ժամանակ, XII—XI դարերի միջում, Արածանիի ստորին հոսքում Դիաու ամենաուժեղ ցեղի կամ ցեղախմբի շուրջը հավաքվել էին 60 այլ ցեղեր կամ տոհմեր՝ ասորեստանցիներին դիմադրելու համար։ Քաոանեների երկրանունների մի առանձին ցուցակում հիշվում է, օրինակ, Šinibirani երկրանունը, իսկ այլ արձանագրություններում նաև Ginzibir անունը, որոնք ստացել նշանակում են «Ծին տոհմեր (ցեղեր)» և «Գինդ տոհմ (կամ ցեղ)» bir բառից (տե՛ս ստորև)։ Եթե դնկավարվենք VIII դարի միայն ուրարտական արձանագրությունների տվյալներով, թողած հարևանական տեղանունների և նախարարական անունների վկայությունները, ապա Այրարատյան դաշտում և շրջակայքում, Շիրակում ու Կարսի նահանգներում և Բագրեւանդում, մենք կհանդիպենք մոտ երկու տասնյակ ցեղապետների անուններ։

Օրինակ, Սևանի ծովեզրյա շրջանում հիշվում են չորս ցեղապետություններ—Վելիքունի (—Նոր Բայազետի մոտ), Ադախունի (Բյուրականդունի մոտ), Լուերու (Ադամխանի մոտ) և Արգուկի (Զաղալուի մոտ), վերջին երկուսը «ալրանուն» որոշիչով: Վելիքունին, որ հայոց Գեղարքունին է հնչյունադարձությամբ, ուներ 22 «քաղաքներ», որոնք փաստորեն տոհմերի ամրացված նստավայրերն են, ենթարկվելով մի «թագավորի», որը դրանց ցեղապետն էր: Արմաւիրի մոտ հիշվում է ուրարտացիներին թշնամի (lulu=լուլուբե) Ադա անունով մեկի ցեղը, որը նահճում է Արդիշտիի կողմից: Շիրակում կար էրիա ցեղը, Տաշբուրունի մոտ՝ էրիուա ցեղը, Սաբիրամիշի մոտ՝ Աշտուա ցեղը, Դալիշանի մոտ՝ Կուլի ցեղը, դրացի «իշխանությունն», Կաղզվանի մոտ՝ Աբիլիաճի ցեղը, որը հայոց Աբեղեան (Աբեղոյ Աբեղեան, Աբեշինից) տոհմն էր, հաբեան Գաբեղեանին (համմ. Գաբաղ Գաբեղեան), Ախուրյանի աջափնյա մասում հիշվում են Լիքի ցեղերը, որոնց մեջ Վերդայի ցեղը (համմ. Վարձա հայ անունը, որից Վարձաւունի): Արրաճիի ցեղը (համմ. Հայոց Հաւնունեաց տոհմը), Կարսի շրջանում կար Իգանիի ցեղը, որից թևրևա հայոց Գնունի. Ալաշկերտի հովտում հիշվում են Լուշա, Կատարզա և Վիդերու ցեղապետների հոդամասերը, որոնց հետ հաճախ հիշվում է և Ապունի (—Հայոց Ապահունիք) ցեղապետությունը: Այս բոլոր ցեղանուններդ, որպես երկրամասեր, կրում են թե՛ ալրանական որոշիչի և թե՛ երկրի անուններ և մտնում էին մեծ մասամբ էրիունի կոչված ընդհանուր ցեղամիության մեջ, որը կարծես թե պետություն կազմելու առաջին փորձն էր մինչև ուրարտացիների այստեղ ներխուժելը: Բացի այդ էթնունիից, որ համապատասխանում էր պատմական «Ալրարատ» նահանգին, կար և Վեդուբ մարզու անունով էթնունի երկիրը, որ ընկնում էր Սևանա լճից հարավ: Այսքանով բավարարվենք գաղափար տալու նախահայկական տոհմերի ու ցեղերի խառնության մասին որոշ տերիտորիայում: Իհարկե սա լրիվ չէ և հաղիվ ցեղերի մի երրորդ մասը լինի: Հետագա հայաստանի մոտ երկու հարյուր նախարարությունները նույնպես վկայում են մեր տոհմերի ու ցեղերի երբևիցե շատությունը, բայց դեկավար և բազմանդամ ցեղեր Ուրարտուի ժամանակ, այսինքն հայերից առաջ, եղել են անշուշտ քիչ, թևրևա հիսունից ոչ ավելի, ինչպես նման քանակի ցեղապետություններ հիշում է Սարգոնը՝ Աղվանքում իր քառն և վեց լեզուներով:

Ուրարտուի տերիտորիայի վրա, ինչպես տեսնում ենք, կազմվել են ցեղերի չորս միություններ՝ դաշնակցություններ: Առա-

շինը՝ Արաժանիի ատրին հատանքում (հյուսիսային մասում) Դիաու ցեղի շուրջը, թվով վաթսուն և մեկ տոհմ թե ցեղ։ Սա զուտ պաշտպանողական նշանակություն ուներ ասսուրական Տիգլաթ Փիլեսեր 1-ին (1114—1076) թագավորի դեմ և շատ շուտ կազմալուծվեց, տեղի տալով IX դարում նոր ցեղամիություններ։ Վերջինս զարգացավ, հիմնվելով գլխավորապես ուրուատրի և Բիա (որից Bia-ina) ցեղերի վրա, որոնք ենթարկվեցին դասակարգային դիֆերենցիացիայի, և ատրիատիրական աշխատանքի հիման վրա բռնծնցին և մոտ երեք հարյուր տարի պահեցին Ուրարատու պետությունը, որը շատ մեծ ծավալ ստացավ իր նվաճված բազմաթիվ ցեղերով ու տոհմերով, բնական ընթացքով մասամբ հետագա մեծ Հայաստանի մասերը։ Երրորդ ցեղամիությունը, որ նվաճվեց ուրարտացիների կողմից, դա մեր նշված էթիուհի կամ էթիուխի երկիրն է, որ համընկնում է պատմական Այրարատին իր հետագա «ում» հայկական բարբառով։ Վերջապես չորրորդը դա Հայաստանի ցեղերն ու Արմինա երկրի խառնիատ-ուրարտական ցեղերի կամ ժողովուրդների (Völkerschaft) միությունն է, որ ձուլելով Ուրարտուի և շրջապատի բազմաթիվ ցեղերը VII—III դարերում մեր էրայից առաջ ստեղծեց հայ ժողովուրդը և իր պետականությունն ու լեզուն։ Ուրարտուից դուրս, 1400—1200 թվականներին, ստեղծվել են երկու ցեղապետություններ—Հայասա և Ազզին Եփրատ—Ձորոխ—Արաքս գետերի վերին հատանքում և Ուասե—Միտաննի ցեղապետությունը՝ հյուսիսային Միջագետքում, որոնց տերիտորիանները մասամբ մտել են հետագա Փոքր և Մեծ Հայքերի մեջ։

Խոսելով հայ նախարարության տոհմային ծագման հիմունքների մասին Ն. Ադոնցը իր „Армения в эпоху Юстиниана" կլասիկ գրքում առաջ է քաշում չորս տոհմատիրական հասկացությունների—mamak, aspet, malxaz և tēr, որոնք գալիս են Հայաստանի տարբեր կողմերից և նշանակում են տոհմի դեկավարին։ Այսպես mamak-ը, որ նա կապում է Մամիկոնյան տոհմի հետ, պետք է հասկացվի իբրև «հայր»՝ համընկնելով վրաց mama «հայր» բառին, որովհետև Մամիկոնյանները ճենական ծագում ունեին, այսինքն՝ ճանապարհ-լազական։ Երկրորդ տերմինը՝ aspet-ը ծագելով արևելյան մեր դրացի աշխարհից՝ Իրանից, եղել է սկզբում vispati «տան (=տոհմի) պետ», որ հետո մասնավորվել է Բագրատունյաց տոհմի նկատմամբ։ Երրորդը՝ malxaz-u ծագում է հարավից, որպես սեմական բառ, նշանակում է «իշխան»,

մակդիրն է հանդիսացել Աորխոռունի տոհմի դեկավարի և առանձնանալով դարձել է Մաղխազունի (կամ Մաղխազ) նույն տոհմի նախամարդ։ Վերջապես չորրորդը՝ tēr-ը արտացոլում է արևմուտքը, որտեղից եկած հնդեվրոպական տարրերը, որ մտել են հայոց կոլեկտիվի մեջ։ Այդ անունը, titajr «աղամարդ» բարդությունից, մանում է տերություն, տիրություն, տանուտեր և այլն կարևոր հասարակական-անտեսական և քաղաքական նոր հասկացությունների մեջ։ Ա. Աբոնցը ընդհանրապես ճիշտ է նշում հայերի բարդ և բազմատարր լինելը և մասնավորապես մեր երկրի չորս կողմի հարևանների ներգրումը կամ կապը մեր ժողովրդի էթնիկական զոյացման խնդրում։ Նա նույն դրքում շեշտել է հայերի հնդեվրոպական և արամեական (լավ կլիներ՝ արամական-արմենական) տարրեր ակունքները, ծագումնաբղյուրները։

Բայց ևս կուզեի հայ ժողովրդի ծագման հարցը մի քիչ այլ կերպ դնել։ Ըստ իս, մենք պետք է հետաքրքրի նաև, թե որոնք են այն տերմինները, որպես պատմական հուշարձաններ, որ «տոհմ» են նշանակել, որքանով դրանք արտացոլել են այդ տոհմի զարգացման տարրեր փուլերը և ինչ ծագումով են։ Նմանապես կարևոր են դրանց տարրերությունները՝ ըստ քաղաքական հանդամանքների և նվաճողների ազդեցության։ Վերջապես արդյոք նրել է ընդհանուր ասիական անուն—«տոհմ» հասկացության համար։

Ստուգաբանական ընդհանուր գննումը նման բառերի «տոհմ» կամ «ցեղ» նշանակությամբ, պարզում է, որ դրանք առաջանում են տարրեր բնիմաստից—տուն (resp. վրան), ծնել (ծնունդ) կամ սերել (սերունդ), ցյուղ կամ տեսակ, արմատ կամ ծուցք և այլն։ Օրինակ. այդպես են սլավոնական род—народ բառերը родить «ծնել» իմաստից, կամ գոթական kuni (վերին գերմ. kūnne), հունարեն genos, լատ. gens և այլն բառերը gen (հայոց «ծին») արմատից «ծնել» իմաստով, մեր հայոց տուն բառը (տուն Թորգոմա, Պաղնատական տուն, Անգեղ տուն և այլն) ունի այդ «տոհմ» իմաստը (և ընդարձակ լայնացած իմաստ), կամ այդ բառը, որ պարակերտնում ցյուղ է նշանակում և հայոց մեջ ստացել է «տեսակ, տոհմ—ցեղ, ազգություն և ազգ (—нация) իմաստները։ Այդպիսի օրինակները, իհարկե, շատ են և դրանց իմաստաշրջումները արտացոլում են հասարակության այդ կոլեկտիվների աստիճանական զարգացման ընթացքը։ Այժմ վերցնենք պատմա-

կան այդ հին վկայութիւնները հայ ժողովրդի և լեզվի վերաբերմամբ։

Ասիանիկ, ինչպես և մերձավոր արևելքի մի քանի լեզուներում, առկա էր bir կամ ber բառը «տուն» նշանակութեամբ։ Նեթական բևեռագիր լեզվում կարդում ենք. È-ir (È=«տուն» պատկերագիրը) կիսագաղափարագիր և կիսահնչյունական գրութեամբ բառը, որ բարեբախտաբար այլուր ևս գալիս և լրիվ հնչյունական գրութեամբ bi-ir, որը կարելի է կարդալ և pi-ir (-pir)։ Հատկապես նշելի է bir šaḫḫan(n)aš, որ նշանակում է «տուն կոթի կամ պարտադիր աշխատանքի», որովհետև կային և այնպիսիները, որոնք ազատված էին այդ կոսից կամ պետական պարտականից։ Օրինակ, օրենսգրքում (§ 54) կարդում ենք. «Մի ժամանակ գինվորները Մանդա, Սալա, գինվորները քաղաքի Տամալիի, Նեմուա, Ասորա, Զալպա, աղեղնավոր մարդիկ, հյուսն մարդիկ, Ձի մարզողները luzzi աշխատանքը չէին տանձնում (և) šaḫḫan աշխատանքը չէին կատարում»։ Այստեղից պարզ է, որ կային այդպիսի դժվար աշխատանք կատարողներ (bir šaḫḫannaš «տուն աշխատանքի») և չկատարողներ, ազատվածներ։ Այստեղ bir բառը ըստ իս կարող է նշանակել և «տոհմ», որովհետև «մանգա» և «սալա» թափառական տոհմեր կամ ցեղեր էին, բայց ոչ տանձին տներ։ Ավելի արևմուտք նույն հին Փոքր Ասիայում bir բառը «տուն» իմաստով գործ էին ածում լյուդիացիք—aaraλ biraλk «բակը և (-k) տունը» (տես kleinas Forsch, I, էջ 70), Թոդած միանպիական βόρτον բնակարան, տնեցիք բառը (տե՛ս Fr. Hrozny, Spr. d. Hethiter, էջ 60, ծան. 1)։

Նեթական աշխարհից դեպի արևելք, ալսինքն Եփրատի հյուսիսային մասից դեպի բուն ասորական, հետագա հայկական շրջանները, մասնավորապես Վանա լճից դեպի արևմուտք՝ Տարոնի, Տուրուբերանի և Աղձնիքի գավառներում ևս միացել են բազմաթիվ տեղանվանական հիշատակարաններ մեզ հետաքրքրող bir ‖ ber «տուն>տոհմ» բառի վերաբերմամբ։ Ասորական թագավորներն իրենց արշավանքների նկարագրության ժամանակ 23 նախրյան ցեղերի դեմ հիշում են դրանց թվում Ginzibir և Šinibirani տեղանունները՝ որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ տոհմանուններ «Գինզ(ի) (—Գինչ)? տոհմ» և «Շին(ի)—տոհմեր»։ Այդ անունների „i" (ի) հնչյունը պետք է կարդացվի, քանի որ բևեռագրության մեջ չկար առանձին բաղաձայն z կամ ŝ և գրվում էր zi, ni։ Մենք դիտենք, որ Տիգրանակերտը, ըստ Սարտոնի, շին-

վել է Oliberia կոչված տեղում, որը բառացի նշանակում է «Օլի տոհմի տեղ»։ Վերջապես հայկական մատենադրության տվյալներով մենք ունենք Տուրուբերան կամ Տարուբերան ընդարձակ տարածությունը, որ բառացի նշանակում է «տավր(ու)—տոհմեր կամ ցեղեր», ուր tauz նշանակում է «ցուլ» և դրծ է ածվում նաև հընդեվրոպական և մանդղա-թուրքական լեզուներում։ Վանա լճից հյուսիս մենք ունենք Առբերան(ի) դավառը, որը նշանակում է «Ար—տոհմերը», ուր ar փռքրասիական (ասիանիկ) լեզուների տվյալներով կարող է նշանակել «արծիվ», «հնվներ», «ընկերք». այսօրեղ հավանորեն արծիվ է նշանակում։ Ուրեմն ունենք «ցլապաշտ (ցլատոտեմ) ցեղերը և «արծվապաշտ (արծվատոտեմ) ցեղերը։ Այս չի վիճում արդյոք դրանց անատոլապահական և որսորդական նախնական կենցաղի մասին։ Բայց վերոհիշյալ վիճաբանություններից, ber «տոհմ—ցեղ» բառը դրծ է ածվել և նախաբարական հնամանոների մեջ՝ Տարբերունի, որը նշանակում է Տարուբերանի հետ, Տամբեր «տավ, տոհմ» և Քաջբերունի, որը հավանորեն ըստացվել է Քաշբերունի ձևից, նշանակելով kaš (=kaška կամ gaš-ga) ցեղից. համեմատել Սյունիքի «Քաշաթաղ գաւառ», «Քաշի մարդ», «Քաշունիք»։ Եթե այս ճիշտ է, ապա կաշկա (գաշգա) ցեղերից որոշ հատված նույնպես գաղթել է Սյունիք, ինչպես բալա, ազգի և հալերը։ Սյունիքում կար և առանձին գյուղ Բերան անունով, որ կարող է նշանակել «տոհմեր», ինչպես և Ուրբրունի գյուղը նույն տեղում թերևս «սեփ տոհմ» նշանակությամբ։ Վերջապես Արարատյան դավառում ունենք Այլաբերք գյուղանունը (սեռ. հոլ. Այլաբերից), այժմյան Ալափարը, որ նշանակել է «Այլ (անտոհմ) տոհմեր», ինչպես Աղիովիտ, էլի կամ Այլի (Վանա լճից արևելք) նույն ali կամ ajli տոհմանունով։ Միևնույն տոհմի կամ ցեղի հատվածները կարող էին լինել տարբեր և հեռավոր վայրերում, ինչպես պիտենք մարդերի, խալդերի, մատիենների, մանդանների և այլոց մասին։ Այնպես որ ali, ajli, ēli u oli (oliberia-ի մեջ) կարող էին լինել նման հատվածներ մի մեծ տոհմից կամ ցեղից, ինչպես դեռ հիմա էլ քրդական ցեղերի մեջ է նկատվում։

Հայոց Տամբեր նախաբարական տոհմանունը կարծես թե համընկնում է խուռիտական Tembira (Tembiru) կամ Tiambiri ‖ Tiambira ‖ Tiambera անձնանվան հետ, որ հայտնի դարձավ մեզ հին Նուզի (=այժմյան Քիրքուկ) քաղաքում պեղած ազգուսե արձանագրություններից։ Կա և առանձին Biru, Beru, Beiru անունը, ինչպես և Կապադովկիայի ազգուններից (տաբլետներից) հայտնի

Berua և Beruaḫš-u անունները։ Վերջին անունը պիտի նշանակի «տոհմի պետ», «տոհմի իշխան»։

Հայաստանից հյուսիս ընկած վայրերում, այն է՝ Վրաստանում և վրաց լեզվում, նույնպես նշվում է ber «տոհմ» բառի առկայությունը։ Օրինակ, կախարների հովիտը Աջարիայում կրում է այդ անունը, որը անցել է և հայերին, որպես փոխառյալ հատուկ անուն («ի թու. ՈՂԴ (1224 թ.) կամաւն աստուծոյ ևս Քուրդս որդի կախայրներին... ևկի ի սուրբ ուխտս կնչառուա», տե՛ս «Վիմական տարեգիր» Կ. Կոստանյանի, էջ 87)։ Սվանեթիայում կա «ձվիբերի» կոչված համայնք և լճանունք։ Հայտնի է նաև Սաբներո (Saberio) տեղանունը, որ բառացի նշանակում է «տոհմատեղ»։ Վրաց ազգանունները—Բերիձև, Շնշաբերիձև, Ղոդոբերիձև և այլն նույն beri «տոհմ» արմատից են, թեպետ այդ beri անունը այժմ հասկացվում է որպես «ձեր, ձերուկ», արտացոլելով անշուշտ տոհմավարդին։ Մինչև իսկ ռազմական դեկավարությունն համար ընտրվող, իսկ հետագայում ժառանգական առաջնորդը՝ թագավորը կրում է այդ նույն տոհմանունը կամ ցեղանունը։ Օրինակ, գերմանական kuni «տոհմ» բառից է kuning «թագավոր» (որից ռուսաց княгиня, князь) կամ գերմ. thiude «ժողովուրդ» անունից ունենք thiudans «թագավոր», ինչպես երևի er(i)—«ժողովուրդ, զորք» բառից, որ ունեն վրացիք, հավանորեն առաջացել է արարատական erila կամ erela «թագավոր» բառը (համեմատել գերմ. volk «ժողովուրդ» և ռուսաց полк «զորագունդ», պարսկ. kāra «ժողովուրդ, բայց և «զորք»)։

Ինչպես տեսանք, Փոքր Ասիայում և նրանից դեպի արևելք ընկած երկրներում գոյ է ունվել bir ‖ ber «տուն>տոհմ» անունը, որը դեռ մինչև հիմա էլ վերապրուկային ձևով միացել է վրացերենում «ծնորսուկ» իմաստով, թողած տեղանուններում։ Հայաստանի և Վրաստանի տերիտորիաներում իշխել է ber ձևը, իսկ Փոքր Ասիայում (խեթերի և լյուդիացիների մոտ), bir ձևը։ Ֆր. Հրոզնու ասելով այդ բառը անցել է մինչև իսկ սաամերներին pir ձևով և «տուն» իմաստով, թեպետ նա մատնանշում է և հին եգիպտական նույնիմաստ pr բառը (տես նրա Sprache der Hetiter, էջ 60, ծան. 1)։ Ըստ իս այդ bir ‖ ber գուտ փոքրասիական (ասիանիկ) բառը խուռիտների միջոցով անցել է սաամերներին և եգիպտացիներին, մանավանդ որ վերջիններս երկար ժամանակ տիրել են Սյուրիային, ուր ապրում էին նաև խուռները (ըստ Աստվածաշնչի), այսինքն՝ խուռիտները։

Սակայն հայոց լեզուն իր բառապաշարում այդ ber բառը այդ ձևով չի պահել, թեպետ, ինչպես տեսանք, տեղանունների և տոհմանունների մեջ մնացել է։ Այդ ber-ը կենդանի լեզվում, թերևս նրա իշխող բարբառում, դարձել է վեր կամ վէր (տես. հոլ. վերի կամ վէրի)։ Այդ նա տեսնում եմ հարսնավեր և փեսավեր բարդ բառերի մեջ, որոնք նշանակում են «հարսի տոհմի ներկայացուցիչ» (հարսանիքի ժամանակ) և «փեսայի տոհմի ներկայացուցիչ», կամ ինչպես հիմա ժողովուրդը ասում է «հարսնախպեր» և «փեսախպեր»։ Համանորեն Արմավիր, Տարավեր, Վաղավեր, Շուրավեր և նման տեղանունների մեջ այդ վեր (վիր) մասը նույն «տոհմ» իմաստն ունի։ Իսկ հին „b" (բ) բաղաձայնի անցումը հետագա հայկական (v) (վ) բաղաձայնին հաստատվում է շատ օրինակներով։ Համեմատել ուրարտ. Biaina—հայոց Վան, ուրարտ. abili= հայոց աւելի (օրինակ, ուր. ebani ebani—ukidi abili dubi=երկիրը երկրիս ավելացրի), ուր. ebani «երկիր»=հ. աւաճ (մեզր. abani «տանդ», վրաց. ubani «թաղամաս»), ուր. չեզոք բայերի անցյալ ժամանակի 3 դեմք եզակի -abi (uštabi «ընթացա, արշավեց», nunabi «հեռվա» և այլն)—հայոց -աւ նույնպիսի բայերում։

Այս ընդհանուր ասիանիկ ber>հայոց վեր ‖ վեր «տոհմ» բառը, որ սկզբում «տուն» էր նշանակում, հայոց լեզվում խոպան վերացավ և Իրանի քաղաքական-կուլտուրական հզոր ճնշման հետևանքով փոխարինվեց «տոհմ» կամ «ազգ» փոխառյալ բառերով։ Այդ նույն ազդեցության հետևանքով գրեթե մղվեց alx «տոհմ» իմաստով սեմական-ասիանիկ բառը, պահվելով աղխ ձևով, բայց իմաստափոխված. այն է՝ ասո անասցած չունեցածը (=скарб) և ազնվականին տուներ մեծացած հասարակ (սորուկ) ժողովուրդը, ռուսերեն ասած՝ челядь։ Այս բառերից է և հայոց աղախին բառը—սրանցից mo-axle նույն իմաստ և նույնածագում բառին։ Aḫi սեմականում նշանակել է «ընտանիք» (արաբերենում) «ժրան, տուն» (հին հրեաների մոտ) և «ժրան» (Eḫal-u աստուա-բաբելացիների մոտ)։ Վերջինը գրեթե է ածվել և ուրարտական բնագրերում (É. HAL. LU) որպես գաղափարագիր։ Բայց այդ բառը, ըստ էության, գրեթե է ածվել և խառխառներենում, ուր ehal- ‖ eḫi- ‖ aḫi-ձևով մտել է մի շարք բարդ անունների մեջ, ինչպես -Eḫli-Tešup (Eḫāl—Tešup) Aḫli—Šar (Aḫlip—Šar), Eḫlip—Ugur և այլն. համեմատել նաև խառխառներեն — ehlianaš, eḫlita, eḫlipakku (տուն, կահ-կարասի է) հասարակ բառերը (տե՛ս Nuzipersonal na-

mes, էջ 208—209)։ Վրացերենում այս agi «լեռան, տուն, բնակություն» սեմական-խառխառական բառին աղերսակցվում է քարթ. S-axli «տուն», մեգր. oxori(id) և սվաներեն mo-axle «աղախին»։

Հայոց լեզուն արխաիզմներով կարողացել է պահել սեպագրական հին բառեր առհմական հասարակության սերմինոլոգիայից, ինչպես օրինակ զարմ և ցեղ բառերը։

Զարմ բառը, որ նշանակում է «ցեղ, սերունդ», առացել է ըստ իս որոշ երանգավորում իբրև լավ ցեղ կամ առհմ, երբ զբաղեցրել է առհմի մեջ բարձր իշխող խավը։ Այդ են վկայում քաջազարմ, բարեզարմ, լուսազարմ, կայսերազարմ, զարմանի «սերունդի համար պահված էգ ձի» (Աճ., Արմ. բառ., I, 713)[1]։ Իհարկե դա պիտի լիներ լավ (ազնիվ) էգ ձի, սովորական էգ ձին չէր պահվի այդ նպատակով։

Մեր բարբառներում ևս պահվել է այդ բառը, ինչպես, օրինակ՝ սալմաստցիների, արարկիրցիների, մշեցոց և սիրիսեցոց մոտ, վերջիններիս մոտ նախատական «շան զարմ» արտահայտության մեջ (Ib., II, 910—911)։ Այդ բառի սկզբնական «զ» բաղաձայնը, ինչպես շատերն են դիտել, նախածանց է և հետևապես բառը կազմած է «արմ» արմատից, որը ի միջի այլոց բացի «արմատ» նշանակություններից ունի նաև փոխաբերական «ցեղ, զարմ, հիմ, խարիսխ» նշանակությունները։ Այդ արմ բառի ծագումը ևս կապում եմ ուրարտական armuzi բառի հետ, որը գործ է ածվել Զվարթնոցի բևեռագիր արձանագրության «անհաջի ֆորմուլա»-ի մեջ («Աստվածները... թե՛ նրա անունը, թե՛ առհմը, թե՛ սերունդը հողին թող հանձնեն»)։ Arm-uzi կազմված է -uzi ածանցով, որը շատ հաճախ է գործածվում ասխանիկ և խեթական լեզուներում (—հայոց -ուճ մասնիկին)։

Հայոց ցեղ (=племя) բառը, որ Հ. Աճառյանը բացատրում է «ազգատոհմ, սեռ. առհմ» (Արմ. բառ., VI, 1039), ևս համարում եմ հին բնիկ (=ասխանիկ) բառ։ Սրանից են ցեղապետ, ցեղընտիր, ցեղակից, երկցեղ և այլ կազմություններըը։ Նկատի ունենալով երկցեղ բառի «երկպատակավոր» իմաստը, Աճառյանը հետևելով Հյունքերբեյանին, Գաստրոնին և այլն, առաջարկում է ցեղ բառի մեջ տեսնել հնադարյն «բաժանմունք» իմաստը և կա-

[1] Հիշենք նաև զարմի այդ բարձր գործածությունը ժողովրդական հին բանահյուսության մեջ։ «Ոչ է օրէն դիւցազն զայլոց դիւցազանց զարմից բառնալ դիւցազնութիւն». համեմատել նաև Զարմայր հատուկ անունը, որ նշանակում է «քաջամոր մարդ»։

պահպանել ցեղում «ճնդիկ», պատանի» հնդեվրոպական բայարմատի հետ։ Ըստ իս երկրորդ բարդության «երկպատակ» իմաստը նոր է, փոխաբերական, և ոչ թե սկզբնական։ Մեր գրեթե բոլոր բարբառներում էլ այդ ցեղ բառը գործածական է և տեղ-տեղ առացել է «պիս, կերպ» իմաստը։ Դուցե ծագմամբ այդ ցեղ արմատը սկզբնական «տոհմ, սերունդ» իմաստով (համեմատել ցեղիլ «սերիլ, աճիլ», ցեղնալ «բռնանիլ, առաջ գնալ» ըստ Ա.Ճ.) Կովկասյան լեզուների հետ է կապվում, եթե նկատի ունենանք ուտիերեն ցիլ բառը, որ նշանակում է մարդու սերմ (ըստ Գ. Բուշմանյանի հաղորդման), ինչպես մեր սերունդ, սերմն և սեռ բառերը առաջացել են սերել բառից («ազգ սերիլ»)։ Իսկ մենք գիտենք, որ հին -il (-իլ-) հնչյունակազմիչը հետագայում հաճախ դառնում է -ել (-եղ), որի համար օրինակները բազմաթիվ են։

Ցեղի մեջ մտնողների քանակի մասին մենք ունենք մի հետաքրքիր տեղեկություն դեռ 12 դարից (մեր թվարկությունից առաջ)։ Ասսուրական արձանագրությունների տվյալներով մուշկերը (մոսոխ, մեսխ) ներխուժել և տիրել էին 50 տարի Ալզի (Աղձնիք) և Բութուլումդի երկրները, լինելով 20000 հոգի հինգ թագավորների գլխավորությամբ, սակայն Տիգլաթ Փիլեսար ասսուրական թագավորը դրանց շարքում և վանում է այդ տեղերից։ Կասկած չկա, որ այդ հինգ թագավոր կոչվածները եղել են ցեղապետներ և դրանց ցեղը բաղկացած պիտի լիներ առնվազն չորս հազարից, եթե հավատար բաժանենք այդ 20000 մոսխերին, այն ինչ այդ ցեղերը իրոք պետք է լիներին ավել և պակաս[1]։

Հայաստանի շատ տեղեր և վայրեր, որ կրում են հոգնակերտ «ք» մասնիկը, կարող են իհարկե վկայել ընտանիքների և տոհմերի (կամ թերևս ցեղերի) մասին, բայց իհարկե ոչ ամեն մեկը։

---

[1] Ասորեստանի թագավոր Թուքուլտի-Նինուրտա (889—884) նամանավանդ հիշատակում է մոսխերի երկիրը. բայց Տիգրիսի ակունքներից հարավ։ Սարգոն 2-րդը (722—705) նույնպես ընդհարվել է մոսխերի (muŠki) հետ հարավարևելյան Միլիտենեում կամ քիչ հարավ։ Մյուս կողմից մոսխերին մենք տեսնում ենք կապադովկիայում, որի մայրաքաղաքը ըստ Սարգոնի կոչվել է «Մազաք», այժմյան Դայաերին՝ Կեսարիան։ Վերջապես մոսխերը նրանած են եղել մերձպոնտոսյան շրջաններում և վերին Ֆրաթի հովտում (համեմատել Պլինոսի moschorum troctus, Ճորոխ գետի մոտ), Սարգոնի տակով «Մելիդուպատի մահից հետո Մոսխիան բաժանվեց երեք մասի—մեկը դրավեցին կոլխերը, երկրորդը՝ իբերները, երրորդը՝ հայերը։ Մեսխական տարերը իբերներին տանձնատրաել են հայերից։

Օրինակ, կարք (=Կարս), Դողք (=Դող), երերուք, Կնչաուք, Եկեղիք և այլն այդ չեն վկայում (Եկեղիք նշանակել է «գաշտաբնակներ» ասմական eḫi-u և «գաշտ» բառից, երկնկայի գաշտի մասին է, «Եկեղացա»-ն է), բայց օրինակ Կուտալք, Կորճալք, Արշտուանիք. Մակք և այլն կարող են խոսել այդ տոհմերի մասին։

Ուրարտուից հարավ ընկած ասմիտները (աստուածները, սրբությիք, հրեանները) տոհմին—ցեղին (կամ մարդուն) պատկանող անձնավորության համար բառին ավելացնում էին -ai մասնիկը, օրինակ, kald-ai «քաղդեացի» χaldai-oi «խալդներ» հոնարանն oi հոգնակիով ավելի ճիշտ «խալդյաններ», խալդ աստծու պաշտոներ, madai «մեդացի», Mankai «մանկյան, մանկ ցեղին պատկանող» (խոսվում է Տիգրանակերտի պաշտպան Տիգրան II-ի զորահրամանատարի մասին), aššurai «ասորի», arminai «արմին, հայ», kossai-oi «կասսիտներ», ortai-oi օրտացիք, օրտ ցեղին պատկանողներ (տպրում էին Մարքերդի դաշտում VI դարում և ինչու հաալոլոգիայով ստացվել է orort «ուրարտ» անունից, համեմատել և Որդ-ունի հայ նախարարությունը), korduoi-oi «կորդուցիներ», gimirrai «գմիրներ, գամիրներ» (Գամիրք). Ինչու մեր Կորճալք «կորճներ», Կուտալք «կուտներ» և այլն, և այլն։ Դուցե մինչև իսկ մեր Շարալ և Սկալ անուններն նույն ասմական էթնիկ վերջավորությունն են կրում նշանակելով «շար տոհմին (ցեղին) պատկանող» (համեմատել Շար-ուր, Ա-շար-ունի) և sak (=սկյութ) ցեղին պատկանող, ասմական լեզվով ասած՝ sakai։

Ասոի-ուրարտական լեզուներում, որոնք Եփրատից արևելք էին, էթնիկական և ընդհանրապես ծագումնական մասնիկն էր -ḫi (ին) կամ մասնավորապես -uḫi (-ախի) օրինակ, խուռ՝ Ḫepit Ḫalpaḫi «Հեպիտ (աստվածուհի է) Հալպա. Հալեպացի», այսինքն՝ «Հալեպում պաշտվող Հեպիտա», ինչպես մենք ասում ենք «Մշո սուրբ Կարապետ»։ Տորք Անդիդեալ «Անդրում պաշտվող Տորքը», որովհետև նաև այլ վայրերում պաշտվող Տորքեր և Հիպիտներ կային։ Կամ ուրարտ. Erta-ḫi ebani «Էրիտյան երկիր (Էրիայի երկիր), Sardur Argišti-hi «Սարդուր Արգիշտյան» (Սարդուր Արգիշտիի, Сардур Аргиштоаич) և այլն։ Հատկապես նշելում է -uḫi (-uḫe) ձևով այդ մասնիկը և կարծես ին էթնիկական իմաստով, ինչպես, օրինակ, խուռ. Ḫurruḫe umini «խուրրյան երկիր», Ḫattuḫi «խաթթյան».... ուրարտ. Welikuḫi «վելիքյան» (երկիր). Etiuḫi «էթիյան». Wiḫiruḫi «Վիխիրյան» (երկիր). Urminiuḫi «Ուրմինյան (երկիր) և այլն. Բայց Ուրարտուում ավելի դոր-

ծածական է -uni, որը համարժեք է -uḫi-ին, ինչպես Etiuni, Welikuni (=Գելգարքունի), Adaḫuni (Քյոլանդրան—Ծովինարի շրջան Սևանա լճից հարավ), Apuuni (=Ապահունիք), Argukiuni (=Զաղալուի շրջան, Սևանի հարավ-արևելք), Lueruni (նույն տեղում), Buzuni և այլն, և այլն, որոնցից Adaḫuni, Lueruni և Argukiuni ունեն սկզբում «տէր» (տղամարդ) որոշիչը՝ դետերմինատիվը, որը բացահայտ կուլտ է տալիս տոհմ կամ ցեղ, սկսված Ադամ, Լուերի և Արգուկ անվամբ նախահայրից, ինչպես այդ հաճախ է լինում։ Այդպես է և Ĕriaḫi, որը ունի կամ «երկիր» որոշիչը և կամ «տէր» որոշիչը։ Այստեղ պետք է նկատենք, որ շատ ցեղեր կամ տոհմեր իրենց ծագումը հանում են այսինչ կամ այնինչ աստծուց։ Ուրարտական -uni ցեղանվան կամ տոհմանվան վերջավորությունը մեզ և հետագա հայերին, որոնք ունեն ոչ միայն արձագունի, պահունի, վիրունի (արարատյան բարբառ) և այլն, այլև Բագրատունի, Մահատունի[1], Ռշտունի, Մոքսոեանի, Աբծրունի և այլն։

Ինչպես տեսանում ենք այս «Հայ ժողովրդի և լեզվի կազմավորումը» հատվածից, ուրարտական շրջանի տոհմերն ու ցեղերը, ինչպես և դրանց որոշ շրջանի միութիւնները (օրինակ էթիունի) մեզ քիչ թե շատ հայտնի էին, հատկապես ավելի լավ հետևյալ Ուրարտուում—հետագա Բագրեւանդում և Այրարատում, ի մեջ առյալ Զանգվի և Սևանա լճի ավազանները։ Դրանք, ինչպես և Վանա լճից արևելք գտնվող բուն ուրարտացիք, պետք է մնացած լինեին մինչև դարի վերջը (մինչև Քսենոֆոնը), երբ արդեն Աղձնիքում և Տարոն-Տուրուբերանում, ի մեջ առյալ հին Արմե, Շուպրու և Կինաբիանա դեսի շրջանի հին Մուրուշկիա խուռիտական շրջանները, հոծ մասսայով արդեն բռնել էին Հայասա-Ազդիի ցեղերը, ինչպես և հավանորեն դրանց ազգակից՝ բազմաթիվ բալա կամ պալա ցեղերը։ Վերջիններս նստել էին Բալա հովտում և Բադեշի շրջանում։ Դրանց կից մարզերում էին հաստատվել Ամիթիայից գաղթած մանդա և սալա ցեղերը։

Քաղաքական ակտիվ կորիզը կամ խմորումը ձևակերպեցին հայերը՝ Հայասա-Ազդի հիմնական դևկավարող ցեղերը, որոնք այս նոր տեղերում ևս կարողացան կազմակերպվել, դիմադրել պար-

[1] Սահատունի տոհմանունը, որ կապվում է Ախուրյանի աջ ափի հետ (Մրեն) քան ևս ծագում է հրեական Sahar (Սահար) անձնանունից, որ դարձ է ածվում Աստվածաշնչում։ Արդյո՞ք Տիգրան 2-րդի կողմից բերված և Երուսաղեմում բնակեցված հրեաներից չի՞ մնացել այդ անունը։

սիկներին, և ենթարկելով իրենց այդտեղի արմիններին — չուպրիտներին, այսինքն՝ խուռիտական որոշ ցեղերի, առաջ բերին հայ ժողովուրդը։ Բալա (պալա) ցեղերը Ծարոնում, իբրև ցեղակից, բնական է, որ պիտի խառնվեին հայերի հետ։ Էնգելսն ասում է. «Ազգակից ցեղերի միութիւնը ամենուրեք անհրաժեշտութիւն է դառնում, իսկ շուտով նման անհրաժեշտութիւն է դառնում հենց դրանց ձուլումը և դրա հետ մեկտեղ՝ բաժան-բաժան ցեղերի երկրամասերի միացումը ամբողջ ժողովրդի ընդհանուր տերիտորիայում»[1]։ Բուն ուրարտացիների (Վանի շրջան) ձուլվելը ըստ իս սկսվել է IV դարում։ Հյուսիսային Ուրարտուի շրջանների խալդերը դեռ կային, որոնք այդ դարում գորք էին տալիս արմիններին (հայերին). թևպետ հայերը այդտեղ գալու ժամանակ նրանք քաշվել էին լեռները և դրանց իբր թև կյանքս պարսից թագավորն է հաշտեցնում։ Իմ կարծիքով «խալդացիներ» ասելով անպատճառ չպիտի հասկանալ այն ուրարտացիներին, որոնք պետութիւն ստեղծեցին և արձանագրութիւններ (200-ից ավելի) թողին, այլև նրանց ենթարկվող այն ցեղերին, որոնք խալդ ասածն (այսինքն՝ Ուրարտուին) ընդունում էին։ Համեմատել Սղերդի մոտ 25 քուրդ գյուղեր, որոնք կոչվում են «Խալդան»։

Հայաստանի տերիտորիայում նախկին ազգակից և ոչ ազգակից ցեղերի աստիճանական և տարբեր ժամանակներում հայացումը հետևեալ առաջ էր բերում տարբեր և մանր «Հայքեր» (Հայաստաններ), որոնք հետո միացվեցին և կազմեցին Մեծ Հայաստանը Տիգրան 2-րդի ժամանակ։ Այս աստիճանական քաղաքական և էթնիկական միավորման պրոցեսում զուգընթացաբար կրնան պիտի դային իհարկե նաև տարընթացութիւններ տնտեսական, դասակարգային, կուլտուրական և բարբառային տրոհութիւններով։ Այդ վերջին հանդամանքներին նպաստում էին Հայաստանի նախկին ցեղերի ու տեղերի տարբեր պայմանները, այնպես որ հայ ժողովրդի և նրա լեզվի այդ կոնսոլիդացիան կամ ինտեգրացիան բնականորեն պիտի հետը բերեր և իր տարբերացումը՝ դիֆերենցիացիան։

Հայ ժողովուրդը, արդեն իր ձևավորմանը հասած, շարունակում է իր մեջ ձուլել նորանոր ցեղեր ու ժողովուրդներ, մանավանդ հյուսիսում։ Լինելով «արմենոիդ», հայերը իրենց մեջ առան տարբեր ծագման և ռասայի շատ էթնիկական տարրեր, մինչև իսկ

[1] Ֆ. Էնգելս. Ընտանիքի մասնավոր սեփականութեան և պետութեան ծագումը, էջ 142—143 (առն. հրտ., 1934 թ., հայ. հրատ., Երևան, 1948, էջ 216)։

փոլոդիացիներին և սկյութացիներին։ Դեռ ութս գիտնական Մ. Լոմոնոսովն էր ասում, որ „Ни о едином языке [=народе] утверждать невозможно, чтоб он сначала стоял сам собой без всякого смешения"։ Եթե հունական հին աղբյուրները պրնդում են, որ հայերը փոլոդիացիների հետնորդներն են և նրանց հետ լեզվական ընդհանրություն ունեն, սակայն ժամանակակից համեմատական ուսումնասիրությունները այդ չեն հաստատում, թեպետ հնարավոր է որոշ փոլոդիական ցեղերի միաձուլումը Փոքր Հայքի հայերի հետ, մանավանդ որ փոլոդիական Աստիս աստծու պաշտամունքային որոշ հետքեր են անցել հայերին (տե՛ս իմ «Արա Գեղեցիկի պաշտամունքը»), ինչպես և ասորական բառի ծագումը փոլոդիական գերագույն աստված Sabazios-ից։ Հայ լեզուն այնուամենայնիվ ունի մի սակավ նասոված հնդեվրոպական կոչված լեզուներից։ Այս խնդիրը պահանջում է պատմականորեն լուծել այդ երևույթը։ Արդյո՞ք փոքր Հայքի նախկին հայասացներն էին լուրացրել այդ տարրը, թե հետագայում արդեն Արմի-Արմինալում են ասացել և խոտրել իրենց նոր լեզվում հավանորեն սակրից, թե գուցե և երկուսովք։ Լեզվական փաստերը, ինչպես շեշտվել է, պատմական աղբյուր են և այն էլ հին և համառ։

Հատկապես հայ էթնոգենեզիսի տեսակետից և մանավորապես նրա կազմավորման մեջ մտնող տոհմական ներքին զարգացման, տոհմի անդամների փոխհարաբերության և կուլտուրական-տնտեսական տեսակետից մեծ հետաքրքրություն և պատմական աղբյուր է ներկայացնում հայ լեզվի այն փաստը, որ մեր պատրոնոմիկալի և թվականների մեծ մասը հնդեվրոպական ծագում ունեն։ Թվականներից բացի «հարիւր» բառից ածածը բոլորը հնդեվրոպական են (հազար և բիւր թվականները իրանական փոխառություններ են)։ Իսկ պատրոնոմիկալի մեջ հնդեվրոպական են —հայր, մայր, եղբայր, քոյր, որդի, հաւ «պապ», հան(ի) «տատ», տալդր, տալ, նու, հարսն, կնոջ, քնոջ, կին, ամուսին, դուստր..., ոչ հնդեվրոպական՝ մեծ մասամբ ասիականի են հետևյալ բառերը — պապ, տատ, թոռն և ծոռն, զաւակ և ճաւակ, անիր, որդեքոյր, փեսայ, քեռի, եղբ, թարմաթոռ, աղջիկ, ճեռ և այլն։

Հետագայում, երբ մանրամասնորեն կքննվեն այն բնիկ բառերը, թե՛ հնդեվրոպական և թե՛ ասիանիկ, որոնք կվերաբերեն նիստ ու կացին, հավատքին, վարուցանքին, տնտեսությանը, տեխնիկային, բանականությանը, մետաղամշակմանը, կահկարասիքին, հրանել-կարելուն, որսորդությանը, մարչությանը, ռազմական տերմինոլոգիային, առևտրին հարաբերությանը և այլն, կարելի կլինի

որոշ ներքակցություն գալ հայերի առնմանին և նատակյաց համայնքի կյանքի ու կուլտուրայի վերաբերյալ։ Շատ բան է այդ տեսակետից ասում Քսենոֆոնի նկարագրությունը հայ գյուղի մասին իր «Դյուրապետում» (κυρόπαιδεια)[1]։ Շատ բան իհարկե հայտնի է հայերենի կաղմավորման հետ առնչակցվող և հին հասարակություններից (խեթերից, խուռիտներից, ուրարտացիներից), ինչպես օրինակ, գարնջուր պատրաստելը և եղնգներով խմելը։ Հատկապես պետք է նշել ուրարտական «Կարմիր բլուրի» պեղումներից հանած մի շարք ձեռքերումները իրենց կառուցումներով, հարդի (դարմանի) օգտագործումը՝ պատի ամրացման և կավե տղյուսների մեջ, ցորենի, գարու և կորնկի մշակումը, ինչպես խաղողի, կարմիր գարեջրի տաշումը և հղկումը, բրոնզե սամաններին (քաասերի) առկայությունը, ինչպես և մուրճի, բոլտի, գամերի օգտագործումը, երկհարկանի շինքերը և այլն և այլն։ Եթե այդ առարկաների և տեխնիկական միջոցների հետ պահպանված լինեին և համապատասխան բառերը, ապա դա մեզ լրիվ կրավարարի, ինչպես հաճախ Իրանի հետ ազգակցության հնաոճությամբ մեր հին բառերը փոխարինված են պարսկական տերմիններով։

Արդեն մեր էրայի առաջին դարում նախկին առնմատիրական հասարակությունները վերածված պիտի համարել պատակարդալորեն շերտավորված համայնքների և տերությունների։ Վերջիններն իրենց գյուղ-համայնքով (շիններով) հարում էին արևելյան-

[1] Ն. Ադոնցը իր „Армения в эпоху Юстиниана" գրքում այդ մասին գրում է (էջեր 390—391)—«Հայ գյուղի նկարագրությունը Քսենոֆոնի մոտ, տաս հազար հույների նահանջի ժամանակ, մեր թվարկությունից մոտ 400 տարի առաջ, բավականին բնութագրում է երկրի հասարակական կենցաղը։ Հայաստանը բազմացած էր բացառապես գյուղերից, որոնց գլուխն էին կանգնած պետեր (начальники) κωμάρχαι կամ ἄρχοντες τῆς κώμης. Կոմարխները հանդիսանում էին վարչության օրգաններ առարապի կողմից, որոնք պարսից թագավորի ներկայացուցիչներն էին։ Հայն այդ պատմագրի կողմից գյուղերի նահապետական պատկերի նկարագրությունից դժվար չէ կռահել, որ կոմարխները գյուղերում բնակվող առնմների պետեր էին։ Գյուղերի չորքն եղած հատկանշական պատվարը (вал), գետնի տակ փորած բնակարաններով նախնադարյան տնտեսությունը, ուր մարդկանց հետ միասին ապրեցրած էին կենդանիները—ոչխարները, այծերը, կովերը և առհասարակ տնային պաշարը (скот), այդ բոլորը ոչ այլ ինչ են, քան առնմային մեծ հանրակցության պատկանելիության նշաններ։ Այն ամբողջ, որ ուղեկցում էր հույներին, մերժում էր այն ամենը, ինչ որ տալիս էին նրան առարները, բայց «երբ նա հանդիպում էր իր առնմակիցներից մեկին, միշտ վերցնում էր նրան իր հետ», այդ հայրական խնամքի մեջ չի կարելի չտեսնել այն գծերը, որոնք հատուկ են պետին—առնմի հորը»։

պարսկական տիպի ավատատիրական հարաբերություններ։ Հռոմեական գրող Պլինիոսը իր Historia Naturalis գրքում (Տե՛ղն ունի հրատ., VI, 10) գրում է, որ Արշակունիների Հայաստանում հաստատվելու ժամանակ, ասենք՝ առաջին դարի կեսին, այդ երկիրը բաժանված է եղել 120 սատրապությունների, որը, ինչպես տեսանում ենք, զինվորական բնույթ է կրել։ Սակայն Ն. Ադոնցը շատ ճիշտ կերպով այս բանի հիմքում ուզում է տեսնել նախկին տոհմատիրական կոլեկտիվների մնացման վրա առաջացած ավատական իշխանությունները, թեկուզ և իրենց զարգացման սկզբնական փուլում („владетельные княжества, хотя бы в начальной фазе их развития" տե՛ս նրա Арм. в эп. Юст., էջ 392)։ Իշարկե հայ ժողովրդի կազմավորումը, ի նկատի ունենալով լեռնային կամ դաշտավարական պայմանները, երկրի կտրվածությունը լեռնաշղթաներով և ձորերով, նորանոր ցեղերի կամ մանր ժողովուրդների ներգաղթով և այլն, տալիս էր այդ երկրին որոշ տարաժամանակյա և դիպուկ զարգացման և ձուլման հանգամանքներ, որի ազդեցությունը մնում էր գեռ երկար ժամանակ, մինչև մինչև դարերը։

Հայոց ման և հայ լեզվի դերը համարելով ազգակից հարավազգի և բալա ցեղերի խմորումը Ուրարտուի հարավում՝ Տարոն-Աղձնիքում, դրանց լեզվի խաչավորումը խուռի-ուրարտական արմինական լեզվի հետ, ինչպես որոշ հնդեվրոպական լեզուների հետ, այնուհետև պետականության պայմաններում այդ միատեսակ ձևավորված լեզուն, մշակվելով և հարստանալով իրեն է ենթարկում և հայացնում տեղական այլևայլ լեզուներ, որ հայ պետականության ընդարձակվում է։ Այդ նոր լեզուները տեղի էին տալիս, բայց ոչ թե ազդում արդեն կազմակերպված «հայկական» լեզվի վրա, պահելով որոշ չափով իրենց տեղական բառերը, այն էլ սահմանափակ քանակով և երբեմն նախկին լեզվական որոշ ձևերով։ Հենց դրանով պիտի բացատրել մեր բարբառների զոյացումը ընդհանուր պետական լեզվի կողքին, որը ավելի շուտ դառնում էր ընդհանուր պետական։ Գրի և գրականության առաջ գալը 5-րդ դարում վերջնականապես կնքեց այդ միատեսակ լեզվի («գրաբարի») հաստատվելը, որն արդեն մինչ այդ ձևակերպվել էր։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՑԱՍԱՑԻ ԼԵԶՎԻ ԱՂԵՐՍԸ ՀԱՐԵՎԱՆ ԽԵԹԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՎՐԱՑԵՐԵՆԻ ՀԵՏ

ՀԱՑԱՍԱՑԻ ԼԵԶՈՒԻՆ

Հայասայի լեզվից դժբախտաբար ոչ մի նմուշ չի մնացել։ Միայն կարելի է ենթադրել, որ այդ լեզուն ազգակից կարող էր լինել բալալերենին, որից նույնպես ոչինչ չունենք։ Էմիլ Ֆորրերը կարծում էր, որ դրանք երկուսն էլ մոտ եղած պետք է լինեն վրացական տիպի լեզվին։ Սակայն ես ուզում եմ այդ Հայասա-Ազզի միասնական երկրի տեղանուններին ու մարդկանց—աստվածների անունները քննել, արդյոք դրանք որևէ բան չե՞ն ասում։

*Այդ կողմից հետաքրքրություն կարող են ներկայացնել աստվածանուններ—*Terittitūni-, Korḫuḫu-, Unagašta-, Baltaik, *իսկ տեղանուններից՝* Laḫirḫila, Arbita, Pāttel (ariga)։ *Պետք է նշել, որ տեղանունները չեն ենթարկվում խեթական լեզվի ձևաբանությանը, այսինքն՝ չեն կրում ուղղական հոլովի «Ծ» ձևույթը, ինչպես որ այդ արվում է այրանունների և աստվածանունների հետ, թեպետ* Ḫalaša—«Հայասա» *կազմությունը իր -sa բառակազմական մասնիկով կրում է այդ խեթական-լուվիական, այսինքն՝ արևմտյան փոքրասիական լեզուների ազդեցությունը։*

Ամենից շատ հետաքրքրական է Terittitūnis *(ուղղ. հոլով) աստվածանունը։ Գրեթե հայասայի կերպով կարելի է ընդունել, որ այդ բառը նշանակել է «եռատեղ, եռագիծ», այսինքն՝ բարդվել է* teri *մասից, որ գրվել է* tri *հնչման համար*[1]*, քանի*

[1] *Խեթերենում «երեք» (tri-) բառը նույնպես գրվել է* te-ri, *որ հնչվել է* tri *(տե՛ս* E. Sturtevant, Hitt. Glos., 1936, *էջեր 182, 190)։*

որ բառակրկնում երկու բաղաձայն միասին բնեռագիրը չի կարող տալ, և tituni մասից, որ հավանորեն նշանակել է տուսան, տատան (=պոչ)» և կամ «տուս» հայոց աղտունձ-ը առացվել է tutun նախնականից (համմ. տատան), որը տարբերվում է հայատական titun-ից իր «իմ» սրմատական ձայնավորով։ Թևրևս այդ tiūni նշանակել է «մատանին», այսինքն՝ tri-tit-ūni «երիքմատանի. հոմատանց», ի նկատի ունենալով վրաց thithi «մատ»։ Իսկ tri «երիք», որը, ինչպես տեսանում ենք, դուռ հնդեվրոպական թվական է, կար և հարևան խեթերենում (տե՛ս E. Sturtevant, Hitt. Gloss., Philadelphia, 1936, էջ 190)։ Իսկ եթե ընդունենք, որ այդ tri-ն եղել է նաև Հայասայի (և Բալայի) լեզվում, իրրև բնիկ բառ, ապա կարելի է եզրակացնել, որ հայոց թվականների հնդեվրոպական ծագումը գալիս է դեռ Հայասայից։

Մեր Trititūni (Tritītōni) անվան հետ արտաքին նմանություն ունի հուների Τρίτων աստվածանունը, որը ջրի աստվածն էր և Պոսեյդոնի որդին։ Եթե ծագումնաբանական կապ է եղել, այսինքն՝ հույները այդ անունը վերցրել են Փոքր Ասիայից, որ հաճախ ենք տեսնում սրանց աստվածանունների մեջ, ապա այդ Τρίτων-ը առացված պիտի լիներ հապլոլոգիայով *Τριτοτον ձևից։ Հին պատկերացումով «երիքտատանի, երիքղլխանի, երիքպոչանի» և այլն, շատ տարածված անուններ էին, ինչպես հիմա էլ հեքիաթներում ունենք «երիքգլխանի դև»։ Ընդհանրապես «երիքը» և «յոթը» մի տեսակ սրբագնապրծված թվեր էին ամեն տեղ։ Մեթեների մոտ, ասկալն, ես չեմ հիշում այդ բարդությունների աստվածանունները։

Հայասայի Karḫuḫuš աստվածանունը լրիվ չի կարդացվում, եղծված են „kar“ (կամ „ka-er“) նշանակող բնեռագրերը, բայց Նարպանդիջի հիերոգլիֆ—խեթական մի արձանագրության մեջ կա լրիվ գրությամբ այդ աստվածանունը, որը, ինչպես տեսանում ենք, միայն Հայասային չէր պատկանում։ Բառը բարդ է, կազմված kar և bubu մասերից (ն ուղղ. հոլ. վերջավորությունն է)։ Վերջին մասը կարելի է համեմատել խեթական (թե՛ բնեռագիր և թե՛ հիերոգլիֆ արձանագրություններում) buba «պապ» բառի հետ, որը տեսանում ենք և խառխառներն հատուկ անուններ մեջ՝ Ḫuha, Ḫuban, Nišbuba, Šubišbuba, Aribuba (*«նվիր պապին») և այլն։ Հայոց մեջ ևս կհամեմատենք արարկիրցոց «խոխոռ» բառը (խոխոռն կոչա), որով վախեցնում են երեխաներին։ Պետք է ասել, որ բնեռագիրը չունի հատուկ «ջուր» հնչման համար նշանագիր և այդ արտահայտում է «ջուր» նշանով, այնպես որ Karbubu գրությունը տվյալ

դեպքում հնչվել է karxoxo (Կարխոխո)։ Գրոֆ. Հ. Ամատունի իր «Գավառական բառարանում» (Թիֆլիս, 1913, էջ 481) բերում է հետևյալ տվյալները այդ խոխ կամ խոխո բառի մասին. 1 «Խոխ (Երզնկայում և Մանիսայում) երևակայական էակ մը՝ որով մանուկները կվախեցնեն. նաև և խոխոն (Մանիսայում)—պարս. kux «կնիւն» (կընիվ). 2. Նույն կնյունով շինված տպիղ և ահռելի կերպարան՝ որով տղաքը կը վախցնեն. 3. որդ։ Կա և խոխալ բայը (Տրապիզոնում և Մանիսայում) «քէն (ոխ) պահել, նախանձարկ ոգի տածել» (անոր մի խոխար, կերածին խմածին կը խոխա»։ Ըստ ես, այդ խոխ կամ խոխո բառը, ինչպես ցույց է տալիս և արարկիրցոց նման բառը, իրոք որ «երևակայական էակ» է և ոչ մի կապ չունի պարսկական kux «ձիու կամ շան ճանճ»—բառի հետ (որից մենք կունենայինք «կոխ» կամ «քոխ» փոխառությունը) և հնագույն անդրկան. այսինքն՝ Հայաստանի և շրջապատի երկրների թանկագին մի ժառանգություն է։ Այդ է վկայում «խոխոս» (չխոխ) բառի պահպանվելը միայն այն հայկական բարբառներում, որոնք նախկին Հայաստանի և նրա հարավային կից երկրներումն են գտնվում (Երզնկա, Արաբկիր, Մանիսան) կամ այդ տեղերից են գաղթել (Տրապիզոն)։

Հետևյալ ածանցավոր անունը Unagaštaš գրությամբ հնչվել է իր տեղական (Հայաստանի) գործածությամբ Unagast(a) և հավանորեն ածանցյալ բառ է unag- արմատով և -ast(a) մասնիկով։ Վերջինս մոտ է խեթական -aštі ձևին, ինչպես dalugaštі—«երկարություն» palhaštі «լայնություն» և այլն, որը կա և սլավոներենում ость (<—ostі) ձևով, ինչպես старость, юность և այլն։ Հայերենում կարծես թե ածանցի հիմքում ընկած է -st-, որը ավելանում է բայի խոնարհիչի (ա, և, ու, ի) վրա, օրինակ՝ գգաս-ի, գգաստ, իմանամ—իմաստ, հանգչիմ (hangi-)—հանգիստ, գոլիմ—գոլիստ, պահիմ—պահեստ, բայց և պահուստ, ինչպես թաղչիմ—թաղուստ, ապրիմ—ապրուստ և այլն։ Սակայն հայկական -ast(a) մասնիկը ավելի դեպքում՝ Unagast(a) բառի մեջ՝ պետք է ներգործող (ակտիվ) իմաստ արտահայտեր և ոչ թե բայի գործողությունը (կամ արդյունքը) դրսևորեր, այսինքն պիտի լիներ այն տիպի, ինչպես մեր գգաստ «գգացող» (և ոչ թե գգացում, գգացություն), ինչպես անենք և հարուստ «կարող» կազմություններ։ Թերևս կապ ունենա սրանց հետ խուռիտական մասնիկը գոյականների մեջ (համեմատել հատուկ անուններ—Enniša, Ithiša կամ Ithišti, Iviša, Taḫrišti (տե՛ս Nuzi pers. names [NPN], էջ 258),

ինչպես և ուրարտական Argišti *թագավորի անունը, համեմատել խուռիտերենի* -(a)st *բայամասնիկը, որ ըստ էության պատճառական բայեր է առնդծում, ինչպես նույնը և ուրարտերենում (խուռ.* šuramaštien *«շտապեցնեն, ինձ շտապեցնի»,* tataštiten *«սիրել կոտ»* iddušta *«տարվում», ուրարտ.* buraštubi *«ծառայեցիր»,* amaštubi *«քանդեցի»,* nuluštubi(?) uluštaibi *«տաշնորդեց»: Ենթադրվեն հայատական* unag- *արմատը կարելի է ընդունել «ես» նախածանցով, ինչպես նմանը կա խեթերենում («դևսը, сюда») և սլավոններենում («դինը, туда») և* nag- *արմատը հասկանալ «առնել, ուղարկել» իմաստով (համեմատել խուռիտերեն* nak- *=ակկադական* mašar-u *«ուղարկել»): Այն ժամանակ* U-nag-ast(a) *աստվածանունը կնշանակի «ուղարկող, առնող, փոխադրող», ինչպես ուրարտական պանթեոնի մեջ հիշատակվում է* AN aluše uruli-we šiuali *«աստված, որը հոգիներ է փոխադրում»:*

Baltaik *աստվածանունը ունի* -ik *նախագական-փաղաքշական մասնիկը, որ հայերենում և վրացերենում ևս կա, և* balta *բնից, որ իրեն վերջին «a» ձայնավորով կարծես թե վկայում է արամեական բնօրրանը, իսկ* balt *արմատով հարում է ակկադական* balṭ-u *«կյանք» բառին: Համեմատել նաև ակկ. հատուկ անուններըը— Balṭu-kašid «կյանքի հասած», Balṭu-šar(u)—մեր «Բագրատաբ», որը նաև պատահում է «կապադովկիական ազգանուններում», ուր գրվել է* Baldu-šar (Ba-al-du-šar). *այս անունը, ինչպես գիտենք, կրել է նաև Բաբելոնի վերջին թագավորներից մեկը: Ուրարտական արձանագրություններում հիշվում է նաև Դիաու ցեղին ենթակա ոմն* Baltul *(գրված է ածականի ձևով* Baltul-hi ebani *«բալտուլյան երկիրը»), ուր վերջին* -ul *մասնիկը ինձ հիշեցնում է խուռիտական* Gilgamišal *այրանունը,* Gilgameš *հայտնի դյուցազնի անունից կազմած. հայերենում նման կազմություն ունի Թաթուլ հատուկ անունը փոքրասիական* tat- *բնից (արմատից), որից կազմված են շատ այրանուններ (*Tette, Titti *և այլն) և որը խուռիտերենում նշանակել է «սիրել»: Այսպիսով ինչպես* Baltaik *աստվածանունը հայասցիները փոխ են առել սեմիտներից, ինչպես և իրենց դյուտերը* Ugur *աստծուն, որը սպանդարամատի աստվածն էր և ուներ իշաարի դաղափարանիշով գրված մի կին: Ուրեմն հայասացիք ունեին և «կյանքի» (*balṭu=*սումեր.* Tilla*) և «հոգիներ փոխադրող» աստվածներ:*

Հայասացի տեղանունների լեզուն գննելիս, մենք միայն կանգ կառնենք մոտ տասնհինգ տեղանուններից մի քանիսի վրա: Ես

չեմ կանգ առնի -hi հատկացական մասնիկով տեղանունների վրա, ինչպես Kummaha, Gašmiaha, Šammuha և այլն (այդ մասին տե՛ս իմ „Хеттская"-ն կամ „Суффиксы и суффигированные слова в топонимике древней Малой Азии", Ереван, 1948 թ., էջեր 25—29)։ Մեզ զբաղեցնելու են Lahtrihtla, Arhita և մանավանդ Pattiarik տեղանունները։

Առաջինը՝ Lahtrhtla-ն բարդ բառ է, ունենալով իր մեջ Lahtr, որ այրանուն է, և hila, որ մասնավորապես կա և խեթերենում և նշանակում է «հյուղ, портик храма»։ Այրանունը անշուշտ հնչվել է Lahr-, որ տեսնում ենք կապադովկիական բնիկ մի բառի մեջ—La-ah-ra-ah-šu (Lahr-ahšu), որտեղ -ahšu նշանակել է «իշխան, տեր» (համմ. խեթ. haššu—«թագավոր») և մտնում է մի շարք նման կազմությունների մեջ (Berw-ahšu, Arzan-ahšu, Hist-ahšut Kin-ahšu- և այլն)[1]։ Այնպես որ Lahr-hila նշանակել է «Լահրի հյուղակ, նախասենյակ»։ Բայց ինչպես է որ այդ Լահրահյուղ դարձել է բնակավայր («քաղաք» գազաթուրագրերը փաստորեն նշանակել է «բնակավայր»)։ Այստեղ ամենահետաքրքիրն այն է, որ որոշիչը դրվում է որոշիչից հետո, ինչպես հայերենում, օրինակ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Յոթաբարերդ և այլն։ Բայց այդ խեթական hila-ով ունենք և հակառակ կազմություններ, ինչպես ցույց է տալիս Մելիտաչի խեթական մի թագավորի (իշխանի) անունը, որը հնչվել է ուրարտական մի արձանագրության մեջ Hila-ruada «տնակ (նախասենյակ) Ռուապի»։ Վերջին բառը աստվածանուն է և գործ է ածվել, օրինակ, հիերոգլիֆ խեթերենում J. Gelb, Hittite hieroglphs, II, Chicago, 1935 թ., էջ 29։ *Ru-ta-â-si =փոքրասիական Ռուդոյ այրանվանը)։

Երկրորդ հետաքրքիր տեղանունն է Arhita, որը եղել է թե՛ Հայաստանում և թե՛ նրանից հարավ ընկած Իշուվա երկրում (Մարքեդից հյուսիս)։ Այդ անունը ածանցյալ է -ita մասնիկով, որով օրինակ խեթերենում կազմվում էր գործիական հոլովը, թեպետ այդ մասնիկը եղել է խուռիտական և այլ փոքրասիական լեզուներում, ինչպես և կա վրացերենում։ Համեմատել քաղաքանունները —Anzita (Անձիթ), Amith (Ամիթ), Xarzidh (Խարզիթ), Sewith (Սևիթ Սատնում, Նեբջինից հյուսիս), Turhumit (Յոզգատի և Մելջինեանի միջև, հիշվում է կապադովկիա-

[1] Տե՛ս Stefens Ferris Personal names from cunliform inscrip, tions of Cappadocia, Wew-Haven, 1928, էջ 76 և 84։

յի տատրական արձանագրություններում)։ Կա և Erhita անունով քաղաքանուն, որը նույն կազմությունն ունի, այսինքն erh- բառի դրծիական հոլովաձևով է։ Իսկ arh- ‖ erh- ‖ irh նշանակել է «սահմանս», ուրեմն Arhita պիտի լիներ «Սահմանալին» (բառացի «սահմանով—սահմանից»), թեպետ չի բացառված այդ -ita-ի մեջ տեսնել վրաց ēthi-ի նման տեղ ցույց տվող մասնիկ։ Ինչպես Somxitha, Mçxitha, Rusethi, Herethi և այլն։

Վերջապես հայատական Pāttei(arig) քաղաքանունը, որի նմանը կար և խեթերի մոտ Pittiariga ձևով, համընկնում է երրորդական մոտ եղած Բդբատիճ անվան, և պիտի ենթադրել, որ -arig ‖ -rig (-ariga ‖ -riga) ինչ-որ տեղ է ցույց տալիս (համեմատել Šerigga, Išmirigga, Pattiariga, Harmuziga և այլն)[1]։ Ինչպես ցույց են տալիս մեր Բթատիճ, Գաղատատիճ, Գալլատիճ, Զարդատիճ, Մոկատիճ, Արջոյ ատիճ և այլ անուններդր, այստեղ ևս որոշիչ առաջին կոմպոնենտն է այդ բարդություններից մեջ, ինչպես նույնը տեսանք Lahr-hila հայատական տեղանվան մեջ։ Այդ բառակազմության տեսակը, որ հատուկ էր Հայատային, համընկնում է, ինչպես ասացի, հայկականին։ Իսկ ատիճ «տեղ, բնակատեղի» բառը թե՛ որպես առանձին հատուկ տեղանուն և թե՛ այլ բառերի հետ որպես բարդության երկրորդ մաս, ունի մեզ համար նաև այն պատմական նշանակությունը, որ առնչված լինելով Փոքր Ասիայի խեթական (թե պրոտոխեթական) լեզվատեղծական բնագավառում, թերևս մեծ չափով նրա հյուսիս-արևելյան մասում, նա տարածվել է հայասյինների և բալալցիների գաղթի հետ թե՛ Արաքսի հովտով դեպի արևելք և թե՛ հարավ-արևելյան ուղղությամբ դեպի Արածանիի առափին հոսանքը և հայկական Տավրոսից մինչև Մոկաց գավառը։ Այլպիսով, ուրեմն, այդ բառը չկա Վորձյանք, Հաշտյանք, Տարոնի հյուսիսային մասում, Տուրուբերանում, Հարքում, Բագրեվանդում և ողջ Վասպուրականում,—մի բան, որ համընթաց է և հայերի կազմավորմանն —սկսած Հայասայից։ Համեմատել նաև մեդրելական orenji (*օրենջիա*). „приют, место существования (*տե՛ս* И. Кипшидзе, Грам. мегр. языка, 101), որի «ն» բաղաձայնը այնպես է առաջացել «ջ», «ճ»-ից առաջ, ինչպես հետագա հայերենում ունենք Աբինջ, կարմունջ, գառնունջ (գառն

[1] Հայոց Գայլատիճ, Մկնատիճ, Արջոյ ատիճ և այլ կոմպոզիցիաներում այդ «ատիճ»-ը ցույց է տալիս «տեղ, բուն, վայր» (կիր ատիճ «խեթերի տեղ»)։

բուլս է)<դառնուճ-ից և այլն։ Հետաքրքիր է վերջապես, որ Փոքր Հայքում այդ «սուիճ» բառի բարդությանն հետ պահվել են մինչև իսկ խնթական բառեր, ինչպես Aladar-ariza «հացապլուղ», ուր aladdar խնթերենում նշանակել է «ցորենի հատիկներ» (համմ. հայոց աղանդեր<alander<aladdar-ից), կրճատվելով նաև ladar ձևի նույն նշանակությամբ (ըստ Ֆերդ-Ջոմմերի), որը նույնպես մտցել է Լիթարիճ գյուղի անվան մեջ, որ եղել է անշուշտ, *Լիդարարիճ և գոնվել է Շապին Կարահիսարի մոտ[1]։

[1] Տե՛ս նաև իմ „Хайаса—колыбель армян", էջ 44, ծանոթությունը Ախճ անունը գոթ է ածվել և բուսանուններին հետ, ինչպես էրզրումի մոտ գոնվող Սունկառիճ և Paskarič (Բագկառիճ)=Փոքր Հայքի Bazvašīya-ին, որ Մելիտինեի ամրոցն էր։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՑԱՍԱՑԻ ԼԵԶՎԻ, ԱՑԻ ԿԵՐՊ՝ ՀԱՑԵՐԵՆԻ ԱՂԵՐՍԸ ՎՐԱՑ ԼԵԶՎԱԽՄԲԻ ՀԵՏ

Հայոց լեզվի աղերսակցությունը վրաց լեզվախմբի հետ, ըստ իս, սկսվել է դեռ Հայասալի շրջանից, այսինքն՝ մեր էրայից մոտ տասն և հինգ դար առաջ, եթե ոչ ավելին: Եթե Հայասական ցեղերը բռնած էին մոտավորապես Սևբասեիա—էրզերում տարածությունները, վրաց ցեղերը դասվելով նրանց հետագայի տեղադրությունից, նույնպես մոտ էին այդ հայասական շրջաններին, այն է՝ բռնել էին Ճորոխի միջին և առաջին հոսանքը և Պարխարյան լեռներից հյուսիս, սահմանակ տարածություններ: Կարող էին լինել վրաց ցեղերը և Հայասալի մեջ, ինչպես որ եղել են և Քուռ գետի ավազանում և այլուր: Բայց հայ-վրացական հնագույն լեզվական աղերսի բնօրրանը պիտի փնտրել Ճորոխի մոտերքը, ուր դրվից կամ խառն էին ապրում այդ ցեղերը: Վրաց հետագա էարևմտյանաց լեզուն, այն է՝ լազերինն ու մինգրելերինը, որ այժմ ոմանք կոչում են «զաներենն», իրոք բռնած է եղել հենց վերոհիշյալ տեղերը, և ի զուր չէ, որ այդ լազամեգրելական լեզուն այնքան մոտ կապակցություն և ընդհանրություն է ցուցաբերում մեր հին և նոր լեզվի հետ: Միայն այդ աշխարհագրական և լեզվական համեմատությամբ կարելի է բացատրել որոշ լազամեգրելական բառերի ու օրինաչափությունների մուտքը հնագույն հայ շրջաններն ու բարբառները, կապվելով հայասցիների և բալասցիների դպրի հետ:

Հյուսիս-արևելյան Փոքր Ասիայի այս մասում, Հալիսի, Վերին Եփրատի և Ճորոխի միջև բռնած տարածության վրա խեթա-

կան ազգություններն հիշատակում են բալայեններին, որանցից արևվելք՝ Հալաստա-Ազդի երկրի ցեղերին, և դրանց երկուսի միջև հարավ ընկած Կաշկա կամ Գաշգա ամազոկարարու ցեղերին: Կոլխիդական ժողովրդի մասին հաղորդում են ուրարտական մարգուբ 2-րդի արձանագրությունները, ինչպես նաև հունական ազբյուրները. ավելացնելով խալներին, վնխիրներին, տիրաբեններին, մոսխերին, խալիբներին, խալդայներին, իվերներին, սաններին և այլն: Հետաքրքիր է մեզ համար armeno-chalib ժողովուրդը, որ առաջի նշանակում է արմենական խալիբներ, այսինքն՝ հայերի մեջ ապրող խալիբներ:

Ինչպես կային suanno-kolxoi «սվանական կոլխեր», այսինքն՝ սվաններին մեջ ապրող կոլխեր, եգեր-սուանք «եգերի (=մեգրելիայի) սվաններ», leuko-syroi (փոխանակ lyko-syroi) «լյուկիական սիրիացիներ» և այլն: Դժվար կլինի ենթադրել, որ Գոնաասի և Ձորոխի հովտի այդ բոլոր ցեղերը միևնույն լեզվով կամ բարբառներով էին խոսում: Դրանց տարբեր խմբավորումները առաջացրել են լազերին (ճաներին) և մեգրելներին, թեպետ սվաններին, որոնց լեզվի և գուցե էթնիկ կազմության վրա ազդել են շերքեզները, ազգի ցեղը և լեզուն: Ես չեմ կարծում նաև, որ Հալաստա-Ազդի ցեղախմբավորման և քաղաքական ուժեղ միավորման մեջ, ուր թևերս թագավորի ժառանգական հաջորդականության կար, նույնպես միաձույլ մի լեզու է եղել, կամ թե մի լեզվի տարբեր բարբառներ: Հավանորեն այստեղ էլ եղել են մի քանի տարբեր լեզուներ: Կարելի է ենթադրել, որ Ազդի երկրորդական ցեղախումբը, որ մտել է այդ մեծ Հալաստա-Ազդի ցեղադաշնակցության մեջ և դրավել է այդ թագավորության հյուսիս արևելյան մասը, եղել է վրացական, եթե նկատի առնել վրաց այն ավանդությունը, ըստ որի նրանց առաջին թագավորը (=Նահապետը) եղել է Ազո (Azo) անունով մի մարդ, ինչպես հայերի մեջ եղել է Հայկը, այնինչ դրանք ազգի և հայա ցեղանվան անձնավորություններ են (персонификация): Մինչև իսկ բալա (պալա) և հալա (achai-oi անվան տակ) ցեղերից որոշ հատվածներ անցնելով Սև ծովի ափերով միացել են վրաց էթնիկական կոլեկտիվներին, եթե նկատի առնենք սվաններին երկու զրաբար բարբառները, կամ հունահռոմեական ազբյուրների achaioi ցեղին, այսինքն՝ ախայների ներկայություն այժմյան վրաստանի արևմտյան սահմաններում, արխազներին մոտ:

Յոթերորդ դարից սկսում է ոչ միայն հայերի էթնոկազմավորումը, որպես ժողովուրդ, այլ նաև վրաց, ի մեջ առյալ և լա-

դո-մեդրլնդներին: Այդ մի ընդհանուր պրոցես էր, որ ընդգրկել էր Հայկա—Նիբրատա—Ձորոխ դետերի մեջ ընկած ցեղերին, ուժեղ խթան ունենալով կիմմերների քաղաքական-ռազմական դերը և տնտեսական-հասարակական նախքին պայմաններըր: Հետաքրքիր է նաև, որ այդ ընդհանուր նոր պրոցեսին դալիս միանում են խալդալ կոչված ինչ-որ ցեղ (կամ ցեղեր) և ալարոդներ, որոնցից առաջինը՝ խալդալները, տառացի «խալդ աստծուն պաշտող» (xald-ai «խալդյան, халдянин», ai սեմական մասնիկով) միացան ազդական ցեղախմբավորման, իսկ ալարոդները (= ուրարտները) մտան հայ ժողովրդի կազմության մեջ, բանելով Այրարատը, այսինքն՝ ուրարտական ժամանակի նախկին ցեղամիության էքվիտնիի (էքվիտխիի) անդր:

Հայ և վրաց ժողովուրդների շփումը Ձորոխի հովտում շարունակվից այդ ժողովուրդների քաղաքական և էթնիկական կոնսոլիդացիայից հետո, թե՛ մեր էրայից առաջ՝ վերջին երկու-երեք դարերում, և թե՛ հետո, մինչև ալարարական շրջանի ավերածությունները, երբ այդ տեղի հայերը, որոնցից այնքան տեղանուններ են մնացել Ձորոխի հովտում, ստիպված էին թողնել իրենց վաղեմի բնակատեղերը: Այդ հովտի Սպերի շրջանումն էին բագրատունիները և Տայքում՝ Մամիկոնյանները, որոնք հավանորեն ճանաչան (յազկան) ծագում են ունեցել:

Հայ և վրաց ժողովուրդների այս հաստվածների շփումն ու ներթափանցումը, ցեղային և կրոնական հողի վրա, թեղած դեռ հնագույն Հայասա-Ազդի ժամանակաշրջանը և մինչև յոթերորդ դարը (մեր էրայից առաջ), բնականաբար պետք է առաջ բերեր լեզվական որոշ ընդհանրություններ, որ պետք է պատմականորեն ճշտորոշվի ըստ կազմության և պատկանելության: Հատկապես հայվրացական այս լեզվատեսության զբաղվեց Նիկողայոս Մառը, որն ի հակադրություն հնդեվրոպագրանական տեսակետի և հայերենի միակողմանի ուսումնասիրության, առաջ քաշեց իր հարեթական կոչված լեզուների ալդակցության, որոնց մեջ մտցնում էին հայերենը, որպես խառն բնույթի լեզու, վրաց լեզվախումբը, ուրարտերենը և այլն: Ն. Մառը նույնպես ուժեղ շեշտում էր նաև կուլտուրական մեծ աղերսը Ձորոխ-Տայքի այդ շրջաններում, որպես հանգուցային կուլտուրաբաշխ մի կենտրոն: Ավելի դժվար է պատմական ճիշտ հողի վրա դնել հայերենի և քարթվելյան (արևելյան վրացերենի) խնդիրը, որը նույնպես զրույթյուն ունի և Ն. Մառի ուսումնասիրությունների խնդիրներից մեկն էր կազմում: Այդ խնդր-

բով (հայ-վրացական), մասամբ զրաղվել եմ և ես, բայց, ինարկե, կարիք կա ամբողջացնելու և գիտական ճիշտ եզրակացություններ հանգելու։

Մենք այստեղ կբերենք հայերենի և լազո-մեգրելական լեզուների աղբյուրը, օգտվելով Ն. Մառի, Հ. Կիպշիձեի և այլոց աշխատություններից։ Նախ և առաջ ևս կմատնանշեմ այն հնչյունատրանական օրինաչափությունները, որոնք բնութագրում են արևմտյան (լազո-մեգրելական) և արևելյան (քարթվելական) լեզուները և տարբերացնում են դրանք, թողած դրանց ուրույն բառամթերքը և ձևաբանությունը։ Արևմտյան խումբը կարելի է կոչել նաև š (շ) կամ շչական լեզուներ կամ բարբառներ, իսկ արևելյանը՝ s (ս) կամ սուլական լեզու։ Բացի այդ, կան և այլ տեսակի հնչյունահամապատասխանություններ։

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Բոլոր վրացական (քարթվելական) լեզուները և բարբառները հարուստ են բաղաձայններով, հատկապես սիբիլանտներով ու դրանցից կազմված աֆրիկատներով (ս, շ, ղ, ժ, ձ, ճ, ց, չ, ձ, ջ) և այլևայլ պալեթականներով (խուլ-ձայնեղ, խուլ շնչեղ, պալեթաշփական-աֆրիկատներ), որոնք այնքան շատ են նաև կովկասյան լեզուներում։ Այդ հարստությունը անդրադարձել է հայերենում։ Ինչպես իրանյան օտարները ազդվել է կովկասյան հնչյունական հարստությունից։ Հայերենի համար նպատակահարմար հող է եղել և ասիանիկ լեզուներում, հատկապես խուռիտական և ուրարտական լեզուներում։ Հայերենը վրացերենի և ուրարտերենի նման խուսափել է տևական (երկար) բաղաձայնից, այն ինչ որ կոչում են «կրկնակի բաղաձայն» (consonne géminée) և փոխարինել է կամ մենով կամ երկու անջատ բաղաձայնով։ Բայց հայերենը ի տարբերություն վրացական արտասանական ունակության, չի սիրում երկու կամ մի քանի բաղաձայններով բառ սկսել, իսկ եթե սոսկված այդպիսիները փոխ է առել, ապա բառասկզբում մացնում է մի ձայնավոր։ Միայ մասամբ այդ լինում է բառամիջի ձայնավորը (համեմատել իրանական šx-ով սկսվող բառերը) և կամ այդ բաղաձայնների մեջ «բ» կամ այլ ձայնավոր են խցկում, նման այժմյան պարսկերենի, թուրքերենի և արաբերենի, բացառությամբ sp, st, sk, šp, št, šk, šp', št', šk' (šph, šth, škh) և նման կոմպլեքսներին։ Վրացերենը ոչ միայն ունակ է մի քանի բաղաձայններով (մինչև հինգ) բառ սկսել, այլև որոշ բաղաձայն բառասկզբում դարձրել է երկու հատ, ուժե-

պացնելով երիսեղվել է, և առաջվել են այսպես կոչված «դեցնասիվ» շարքերը (децессивные ряды ըստ ակադ. Դ. Ախվլեդիանու)։ Այդպիսիներն են մեծ մասամբ ծկ՛ (ʧʒ), ծկ՛ (ʧʒ), ճկ (ʤʒ), ճկ՛ (ʤʒ), ցք (ʦʰ), ցխ (ʦʰ), չք (ʧʰ), չխ (ʧʰ), ձղ (ʣʢ), ջղ (ʤʢ), սձ (sʃ), zg, šg հնչյունակոմպլեքսները, որոնց մի մասը կարելի է պաշտպանել սեմական և հալվական լեզուների ազգակից հին բառաձևերով, ինչպես այդ ցույց ենք տվել Ն. Մառը։ Օրինակ, նա իր աշխատություններում և դասախոսություններում համեմատում էր վրաց ղապարի (zγaparі) «հնչիւնթ» և սեմ. (արաբ.) dzabar (ձաբար) «խոսք, արտահայտություն» (слово, речь, изречение), լազ. zesqu (<*zesu) „дрозд, орел, черная птичка" (= груз. šawšia, šošia) = հին հրեական sūs «ծիծեռնակ», վրաց zγvari «սահմանս» = հին հրեական ṣīār «սահմանս», վրաց šxami «թուչն» (<*šami) = արաբ. sam, սիրիական semā «դեղ», վրաց jγveni («ձղվենի< *ձվենի) «նվեր» = հայոց ձուն, վրաց çxviri (ցխվիրի) «քիթ, դունչ = էլամական siri, հայոց ցո-ուկ (արմատն է ցիս կամ ցուս) «քիթ, դունչ» (ЗВО, XXII, 85)։ Սրանց վրա ևս կավելացնեի նաև վրաց zγua (զղուա) «ծուխ» առաջված *zua նախնական ձևից, որը կա նաև ուրարտերենում şue (tsue) «ծուխ» և հայոց ծուխ բառերի մեջ, վրաց scavla «սովորել, սովորցնել» = հայոց սովոր-ել, ուր վրաց scavl- <sawl-, որը արևմտյան բարբառում ըստ օրինաչափության պիտի տար sowor (համեմատել նաև մեր բարբառների սովո-ել, սովոր և այլն)։ Նման մի երևույթ անդր է ունեցել նաև հալիբենում, անկախ վրացերենից և միանգամայն այլ բնույթի, որի մասին կխոսվի իր տեղում։

Այժմ բերենք վրաց այդ երկու լեզուների (արևմտյան և արևելյան) հնչյունաբանական փոխհարաբերությունը.

Արևելյան (քարթվելան) (սիբիլանտ)	Արևմտյան (լազո-մեգրելյան) (շչական)
s (ս)	š (շ)
z (զ)	ž (ժ)
j (ձ) = d͡z	ǰ (ջ) = d͡ž
c (ծ) = t͡s	č (ճ) = t͡š
ç (ց) = t'͡s	č̣ (չ) = t'͡š
e (է)	ə (ա)
a (ա)	o (ո)

] (ა)	r (ր)
r	r (ր) կամ] (ջ)
ոչ լիաձայնաթյուն	լիաձայնաթյուն (полногласие)

Հայոց լեզուն իր հնչյունաբանական արտահայտություններով հարում է արևմտյան վրաց լեզվախմբին: Մանավանդ հատկանշելի է այդ երկուսի մեջ r ‖ l հնչյունադարձը, ինչպես և լիաձայնաթյունը. թեպետ այժմ որոշ վրացագետներ, ինչպես Ա. Ձիքթաուան. հակված են պնդելու, որ այդ լիաձայնաթյունը սկզբում հատուկ է եղել և քարթվականին („полногласие основ являлось исходным состоянием картвельских языков". տես Изв. АН. т. VII. вып. 1, отд. лит. и языка, 1948 г., էջ 28 „О лингв. чертах картвельских языков"): Հայերենի մեջ եղած նման օրինակները կամ հնչափոխական երևույթները կարող են դիտվել և որպես ազդեցություն կամ փոխառություն այդ արևմտյան վրացական լեզվաճյուղից և ընդհանրապես վրաց լեզուներից, բայց կարող են լինել և անկախ, որպես հնագույն արտահոբմացիայի արդյունք Գոնտս—Փոքր Հայքի (մասամբ և Բարձր Հայքի) տարածքյունների բնիկ հայասական և վրացական ցեղերի միջև:

Օրինակ, հայերենում դիտվում է ղ ‖ ջ հնչյունափոխություններ դողդողալ > դողդոջալ բառերի մեջ, որ կրկնավոր է պարզ դողալ բայից: Եվ փաղփաղել «փայփայել, պլպլալ», որ և փողփողել (id), բայց անունք և պաղպաջել նույն իմաստով: Մինչև իսկ դիտվում է մեր բարբառներում ռ ‖ ջ կամ ր ‖ ջ փոխանցումը, ինչպես, օրինակ, Արարատյան բարբառում. ալառել պարզ մուռ «կսկիծ, վիշտ» (իրոք՝ նևրքին ցավ) բառից ունենք մրմռա (< մրմռաս) „ноющая боль" (մուռը հանկ «վրեժը հանկց», մրմռաս ավել ջանին «ցավը տարածվեց մարմնի վրա»), բայց և մրմռնջալ, որից մրմնջալ «մրմռալ», ինչպես նմանը մրմռալ > մրմնջալ, նշանակում է „бормотать", որպես բնաձայնական բառ: Մյուս դեպքերում, երբ հայոց բառը զուգադիպում է արևմտյան վրացականին, պետք է կանկրետ մոտենալ խնդրին: Օրինակ, հայոց ճանճ բառը նույնությամբ տեսնում ենք մեգր. ճանճի (> ճանճդի) բառի մեջ «ճանճ» իմաստով, որը համապատասխանում է քարթվական մ-ձեռի (արմատն է՝ «ժեր») նույնիմաստ բառին: Այստեղ քարթ. «ժ» > մեգր. «ճ», «ե» ձայնավորը համապատասխան է մեգր. «ա»-ին և «ր» > «ջ», այսինքն՝ «ժեր» > ճաջ > ճանջ > ճանճ: Այդպես թևերս քարթ. սալի «հոդի» = մեգր. շարի > շանջի (ըստ Ն. Մառի), որը հայոց շունչ

բառն է: Կարելի է պնդել արանց փոխառության վրա, մանավանդ առաջինի (ճանճ). բայց դժվար է նույնը պնդել հայոց առ «գիր» բառի փոխառության մասին լայներեն ցառ «գրել» արմատից tš>t փոխանցմամբ (վրացերեն «ծեր» արմատն է «գրել» իմաստով ծեր > ճար > առ) ինչպես նմանը տեսնում ենք վրաց ծելի «առարկա» և հայոց «առարկա» բառերի մեջ նույն լեզու-մշակութային լեզվական միջնորդության շնորհիվ, թեպետ կա ուրարտ. zali ‖ tsali «առարկա»: Այս և նման օրինակները, որ բերում է Ն. Մառը, շատ են: Երբեմն հնչյունական առերևութությունը ավելի է արգելում: Օրինակ, ևս կամանանջևի մեգր. ნინო «հիպոտա» (յագ. ნინო և ნოინო), որի դիմաց հայերենը ունի ջին «խմիչքս փառ, հիպոտա» կամ մեգր. ნამა «տանել, առնել, տալ, «кормить» և հայոց ջամբել (<*ջամ-) նույն իմաստով: Ավելի են հնչյունական առերևույթում քարթ. ბნიხა «давить ճնշել», մեգր. ი-ნიმახ „давильная, точило" և հայոց ճրնշ-ել, որոնք բոլորն էլ ազգակից են (ծագում են) առաջաբարբարոսական (ակիդական) sanak-u «ճնշել» բայի հետ: Այդ իմ առաջարկությունը պարզ կլսվի և տալիս cnex ‖ činax ձևերի ավելի մոտիկությունը, քան հայոց č(i)nš- (ճ)ի(նշ-) ձևի, որը սակայն իր «ճ»-ով մոտ է մեգրելական ձևին (ნინახ-): Մեգր. ndur- «բարկանջալ, «роптать, быть недовольным» ունի իր սկզբում ნ (n) հավելյալ ձայնավորը, ինչպես ունենք ն-ջապի «թթենի», ն-տվրի, «փուշ», ն-դարա «լաց», ն-ծարն, «դանդ» և այլն, և հետևապես ndur-ի արմատն է dur, որի կրկնությամբ կունենանալինք durdur կամ ավելի շատ turtur (n-tur > ndur առաջընթաց առնմանությամբ), իսկ turtur-ը կարող էր դառնալ t(u)rtu(n)ǰ = բարկանջ, որը ի դուր են հանում անմիջապես քարթվելական tr-tinva «տրտնջալ» կրկնավոր բայից: Այդպիսի օրինակներ շատ են և մասամբ կպարզվեն առաջ ընդհանուր բառամթերքը քննելիս:

Վերցնենք այժմ լիաձայնության (полногласие) խնդիրը,—մի երևույթ, որ կա և ուրիշ լեզուներում (город կամ град և город, злото կամ злато և золото, хлод կամ хлад և холод և այլն): Այդ, ինչպես ասվել է, հատուկ է և վրացական արևմտյան (լազո-մեգրելական) լեզուներին, ինչպես քարթվելական k'mari (քմարի) «ամուսին, муж» և մեգրելական k'omoǰi (քոմոջի), քարթ. jaγli (ձագլի) «շուն» և մեգր. ǰoγori (հալ բարբառներում, օր. Աշտարակում «զազար շունը»-ը այն շունն է, որը միջակ մեծությամբ է և փորը գետնահան է, մռութը կպչում է գետնին), քարթ. kreba «հավաքել» և մեգր. korophua և այլն:

Հայերենում պետք է նշել -ավոր-ել և բարբ. scavla (<*savla) ուր „l" դառնում է „r" (ր), ինչպես ձագլի—ջողորի, ինչպես քարբ. caplı «շագանակ» և Ղարաբաղի ցողպուր (<*«ճոպոր»-ից) «ընկույզ». այդպես է ըստ իս նաև մեր գորով «սեր, գութ» և քարբ. k'var- «սէր, սիրել» արմատը, որից հայերենում սպասելի էր kovor > korov, բայց որովհետև korov «ուժ» է նշանակում (որից կորովի), ուստի այդ կորով «սեր, գութ» բառը տարանմանվել է գորով ձևի. այդպես է նաև մեր խորով-ել և քարբ. xurva նուիրմասս բալը և ի զուր է Հ. Աճառյանը մեր լեզվի անմիջական հին շրջապատը թողնում և խորովել բալից «խոր» արմատ ստեղծում, ազգակցում խարել «զազել» արմատին և հանում չգո. հնդկեր. qor ‖ qer արմատից, որից են իբր սանս. kūḍayati «խանձել» (սանս. kuṇḍayati «այրել»), հուն. ke'ramos «բրուտի կավ թրծած սաման, կղմինդր, աղյուս», լատ. cremo «այրել», հրդ. herd. անգլ. hearth «օջախ», սլավ. և ռուս. курить և այլ «ցնդակից»-ներից (Արմ. բ., III, 397—8, 628—9)։ Թևրևս մեր գավառական կոտոփ „ком" (կոտոփ թուք) բառը ձևացած լինի մեզր. (լավ) korop'ua «հավաքել» (գնդել) բալից, որպես վոխառություն։

Լեռնաշխարհի երևույթը հատուկ է հայերենին և մանավանդ որոշ բարբառներին, անկախ լայն-մեզրելականից, և այդ ունակությունը կարող էր դալ Հայաստա-Ազգիի հայկական լեզվախմբից։ Իր ասպետ, r, l, l հնչյունների ներթափանցման կապակցությամբ ակզբնական արմատական բազաձայնից հետո, մենք դեռ կխոսենք այդ լեռնաշխարհորության մասին։ Իսկ ընդհանրապես ամեն մի լեռնաշխարհ բառադրության դեռ բավական չէ պնդելու այդ կազմության ձևափոխության մասին մի ինչ որ նախկին ոչ լեռնաշխարհ իր կացության։ Օրինակ, եթե մի խորամ «խոտի խրձիկ» (Աշտարակում երկու խորոմը միասին կապած տալիս է մի խուրձ) կարող էր հավանորեն առացվել xram∿xarm, xorm∿xrom և նման հին ձևից, այդ չի կարելի ասել մի խոնաս, ծարաս, կեղևքել, բողբել և նմանների մասին, ուր մանավորապես xon-aw և car-aw բառերը ունեն -aw վերջամասնիկը xon- և car արմատներից. ինչպես ունենք Կճաս, Որդնաս, Սուկաս և նման տեղանուններն մեջ, և այն ժամանակ xon և car պետք է նշանակին «քացություն», «ջուր» (համմա. վրաց. cḳali, cḳaro, առացված cal-, car- արմատից «ջուր» իմաստով)։ Դեռ ավելին կասեի, եթե բողբել բալի -որ մասը կարելի է գտնել և կապակցել, օրինակ, բորբոքել բալի կազմության հետ, քանի որ կա բորբ մասը առանձին, ապա շողոքորբ

բառի շողոք մասը այդ դրությունը կարող է և չունենալ, ի նկատի ունենալով ողոք բառը, որ հնում եղել է *հողոք և մանավանդ վրաց slek'a (սլնքա) «հարթել, կակղացնել» (ena-moslek'ili «լեզուն կակուղ, շողոքորթ», տե՛ս Н. Марр, Осн. Табл. к грам. груз. яз., СПБ, 1908, էջ 6, ծան. 8)։

Այժմ քննենք այն լեքսիկական ընդհանրությունները, որոնք կամ փոխառություններ են միմյանցից և կամ ի սկզբանե մի բնից են և կապում են հայերենը այդ լաղական և մեգրելական լեզուների հետ։ Վերջիններից բառերը բերում ենք միասին։

ԼԱԶՈ-ՄԵԳՐԵԼԱԿԱՆ ԵՎ ՀԱՑՈՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՌԱՄԹԵՐՔԸ

Մինչև առանձին բառերին անցնելը, ավելորդ չեմ համարում կանգ առնել այդ լեզուներում հանդիպող մի քանի բնաձայն բառերի ու կազմություններին վրա, որոնք կտրված չեն իրարից և կարող են նպաստել որոշ օրինաչափություններ ճշտելու։ Այդպես, օրինակ, մեգրելերենում ունենք բարբանճի (barbanči) «աղմուկ, ամբոխ», որից հնչյունաբանորեն անանջատ չէ լաղերեն բարբալափ (barbal-ap') «ցնդաբանություններ եմ ասում», և հայոց բարբանջիմ նույն այս իմաստով։ Անտարակույս բոլորի սկզբնական աղբյուրն է bar-bal- կրկնակ ձևը, ինչպես տալիս է լաղերենը, որ հնում l > ǰ փոխանցումով տալիս է barbaǰ և „n" հնչյունի հավելմամբ „ǰ"-ից առաջ՝ barbanǰ։ Նմանապես ունենք լաղերեն խիրխին- (xirxin) «խրխնջալ» բայը, որի դիմաց մեգրելերենը տալիս է խուրխինի (xurxini) կամ խիրխինի (xirxini) «խռմփալ» (храпение, храпеть, пыхтать, տես Грам. мегр. яз., 409), որտեղ արմատն է xir- և կրկնվելով տալիս է առաջընթաց առնմանություն xir-xin (< xir-xir-ից), իսկ հայերենում այդ կրկնությունը եղել է xir-xir և ապա xir-xiǰ, որ „n" բաղաձայնի հավելմամբ „ǰ"-ից առաջ տալիս է խրխինջ։ Այդպես համեմատել նաև արդեն հիշված մեգր. n-dur- «տրտնջալ» (роптать, быть недовольным), որից n-durili «տրտնջացող» (недовольный) և վրաց drtwin-va (< dur-tuin-) „ропот", իսկ հայերենում *tur-tur > tur-tuǰ > տրտունջ։ Այդպես նաև բին «թպռտալ» արմատից ունենք գրաբարում և այժմյան լեզվում բորոտ «տրտի թպռտալը», որից և արաբատյան բարբառում բոքնջալ «երևնալի դես ու դեն ընկնելը» հիվանդության ժամանակ (Աշտարակում, Վաղարշապատում), որը առացվել է թիր-թինջ < թիր-թիր կրկնավորից, նման լաղերեն t'ir-t'in (ot'irt'inu) «թպռտալ, դողալ» (mat'irt'inen „трепещу,

дрожу" «Этимология», Грам. чанс. яз., 147): Թողած յազ. b-gor--ам „кричу, ругаюсь" և հայոց գոռ-ալ բառերի նմանութիւնը, ևս հատկապես կենդանի բնաձայն բղոր- (bγor-) «մռնչալ» (рычать) յազական արմատը, որը առացվել է պարզ բոր- (bor-) նախամանից, ղ (γ) բաղաձայնի զարգացմամբ բառասկզբի բաղաձայնից հետո (տե՛ս վերը). այդ bor- «մռնչալ» հին արմատը ևս ունենում եմ հայոց բոռ-ալ, պոռալ բնաձայնների մէջ: Համեմատել նաև յազերէն բղու (bγu) „филин", որը նոյն է bu և ար համազոր է հայոց բու նոյնիմաստ բառին:

Լազո-մեգրելական և հայկական ընդհանուր բառերից մատնանշենք հետևյալները, անկախ նրանից, թե դրանք փոխառյալ են կամ բնիկ:

1. bardi (լազերէն), „стог, в частности папоротника, собираемого для унаваживания почвы" (Н. Марр, Грам. чанс. яз., 129): Հ. Աճառյանը այս բառը իր Արմ. բ.-ում (I, 1003—1005) դնում է որպես փոխառութիւն հայոց բարդ բառից, որ նշանակում է «դեզ» (խոտի, հացաբուլեների). «ոչ պարզ. բաղադրյալ», որից բարդակ «խուրձ, դեզ», բարդել «դիզել, կուտել» և այլն: Այս կարծիքը կարելի է պաշտպանել, ի նկատի ունենալով, որ հայերն իրենք ևս փոխ են առել պարսկերէնից, ուր buland «բարձր» առացվել է bard-and, ինչպես salar առացվել է sardar ձևից, gul< <wəl-<vard-ից և այլն: rd>l հնչյունափոխութիւնը զուտ պարսկական բարբառային է, մյուս իրանական բարբառներում ունենք barz- «բարձր», ինչպես ավեստա barzant «բարձր, բարձրութիւն», barzah «բարձրութիւն», պահլ. burz «բարձր» (=պարսկ. burz), օսերէն bärzond և այլն: Բարդ բառը պահել են նաև հայ բարբառները, ինչպես Ալաշկերտում, Խարբերդում, Կարինում, Մուշում, Մոկսում, Վանում և այլն, ուր նշանակում է «հունձքի որոշ չափ» (30—40 խուրձ). տե՛ս Արմ. բ., I, 1004: Լազերէնը իր bardi բառը չէր կարող փոխ առնել պարսկերէնից անմիջապես, առանց հայերի միջնորդութեան, ըստ աշխարհագրական դիրքի, քանի որ վրացերէնում այդ բառը չկա, իսկ հարևան հայոց Կարինի (Էրզրումի) բարբառը գործ է ածել այդ բառը, որպես 30—40 խրձից բաղկացած մի դեզ: Հայերից փոխ են առել քրդերը (part բարդ, 30 խուրջ). Արմ. բ., (ibid.):

2. bardi (մեգր.) „куст, терновый куст, чаща" (Кипшидзе, Грам. мингр. яз., 201), որին մատ է և վրաց bardi „чилига" (Чуб. Груз. Рус. сл., 1887 г., 97), որը բուլս է, և ափխազ. abard

„чилига, куст"։ Հ. Աճառյանը բերում է այս բառերը (Արմ. բ., I, 1033) որպես փոխառություններ հայոց բարի populus pyramidalis, тополь" բառից։ Բայց ինչպես տեսնում ենք, իմաստները տարբեր են—մի կողմից «թուփ» և մյուս կողմից բարի „тополь"։ Մեր բարբառները նույնպես հաստատում են հայոց բարի բառ այս իմաստը (тополь), ինչպես Ալաշկերտը, Մուշը, Խարբերդը, Վանը, Երևանը (Արար. բարբառ), Զեյթունը, Մոկսը և այլն։ Միայն Առանձնում դա նշանակում է «ալդինների և պարտեզների եղերքի ցանկապատ» և Նիդակիսալում «շինովածանյութի փայտեր, որոնք ընդհանրապես բարի ծառից են կարված լինում» (Ibid.)։ Փոխառության հարցը ըստ իս սխալ է դրված։ Դրանք ընդհանուր կովկասյան-միջերկրածովյան բառեր են։ Այստեղ պետք է հիշել Գարատաղ (Բարատաղ) քաղաքանունը, որ տատոյի նշանակում է «բարատաղ» կամ «թխտաղ», նման Որդնաղ, Կճաղ, Ձիրաղ..., վրաց Thelavi («թխտաղ») և նման կազմություններին (տե՛ս իմ Историко-лингв. значение топонимики древней Армении, Ереван, 1940, էջ 110), Ոչ ապացուցելի պիտի համարել Հ. Աճառյանի կարծիքը նաև լազ-մեգր. bax- (բախ-) „бить, уларить" բառի մասին, որ իբր փոխառյալ է հայոց բախ-իմ բառից։ Թերևս դրանք բոլորն էլ Հայաստա և Բալա (Գալա) ժողովուրդների բառամթերքից են, այն էլ՝ բնաձայնական։

3. *gara, ngara* (մեգր.) «լաց, ողբ» կամ «լալ, ողբալ» (Ү Кипш., 214), լազ. *mgar*-(o-mgar-u, o-mgar-inu) կամ *bgar*-(o-bgar-u, o-bgar-inu) նույն նշանակությամբ („плакать", Грам. чанс. яз., 166)։ Թևսկա Ն. Մաոը դրում է լազերեն mgar- (bgar-) միասին, առանց դառնալու սկզբնական m կամ b, բայց իրոք արմատը եղել է gar, ինչպես ցույց է տալիս հայոց հայրապատում գեր (ger) նույնիմաստ բառը, որ առաջին անգամ կարողացավ գտնել ինքնուրույն Նորայր Բյուզանդացին։ Գործ է ածվել հատկապես գեր գործել «լալ, ողբալ» դարձվածքը (Յովհաննու Ոսկիբերանի Մեկնութիւն Թղթոյն Պօղոսի, Վենետիկ, 1862, հատ. Ա, էջեր 206, 492, 751, 832)։ Ն. Բյուզանդացին հայոց այդ ger «լաց, ողբ» բառը համեմատում էր պարսից ɣirī «լալլուն», որ լինի «դժբախտ և աղաղակաւ» բառի հետ (տե՛ս Արմ. բ., II, 139—141)։ Ըստ Հ. Աճառյանի կարելի էր դնել փոխառության խնդիր պարսկերենից, քանի որ ունենք պարսկ. ɣ- հայոց գ (ɣund = գունդ) համապատասխանությունը։ «Բայց ձայնավորները համապատասխան չեն» (Ibid, 141)։ Ըստ իս, մեգրելա-լազական gar արմատի գոյությունը վե-

կայում է հօգուտ հայոց այդ հազվագյուտ բառի ինքնուրույն գոյութեան։ Բուն վրացերենում այդ արմատը չկայ։

4. gordi (մեգր.) «դորա, лягушка» չի կարելի դասել հայոց դորտ բառից։ Կարելի էր դնել հայերենից փոխառյալ, բայց կա և Բուշերեն—kuarti (ყვარტი) նույն իմաստով։ Իզուր են հայոց այդ բառը համարում հնդեվրոպական և համեմատում լատիշական warde, արևել. լատիշ. vargle և լիտվերենների varlė «դորա» բառերի հետ, սերված իբր թե նախնական ընդհանուր wordo ձևից (Արմ. բ., II, 287)։ Բառը (gort-kuart-) ավելի շուտ բնաձայնական տարավորութիւն է թողնում։ Հ. Աճառյանը մեգրելական gordi բառը դնում է որպես փոխառյալ հայերենից (ibid. էջ 288)։

5. doķia կամ duķia (մեգր.) „курочка", որը Կիպշիձեն համեմատում է հայոց դոխ «աղավնու ձագ, курочка» բառի հետ։ Մեգրելերեն բառի վերջին -ia մասը փաղաքշական վերջածանց է, և ուրեմն արմատն է doķ-։ Համեմատությունը հայոց այժմյան գավառական դոխ բառի հետ ճիշտ է և մեգր. Ķ (ք, որ չպետք է շփոթել y բաղաձայնի հետ) =հայոց խ։ Հայոց դոխ բառը, որ հին գրականությունը (գրաբարը) չի պահել, տարածվում է Կարինի (Էրզրումի) բարբառից սկսած դեպի արևելյան բարբառը և մինչև Ղարաբաղ, Բանանց և Ղարադաղ (Պարսկաստանում), այնինքն՝ Գոնտոսի մոտերքից մինչև Աստրախանական, իսկ սա հայասցիների և բալկյերների տեղափոխության մի որոշ ընթացքն է։ Լազերի մոտ այս բառը հավանորեն եղել է, բայց բառարաններում չի բերված։ Վրացերենում չկայ։ Ըստ Հ. Աճառյանի «Գավառական բառարանի» (էջ 282) ունենք «Դոխ Ախց. կր. Աղավնի, Ջ. Ղրբ. լրբամարդի, Յ. դրբ. դրդ. վառակին մեծ հավ, որ դեռ չէ ածած, հավին ու վառակին մեջտեղը»։ Իսկ Ս. Ամատունու բառարանում («Հայոց բառ ու բան», 169, 603) կարդում ենք «Դոխ Ախլցխ., Ախլք. աղավնի, ըստ Աստր. դոխ՝ աղավնու ձագ։ Դոխ Գնձկ., Բննց. հավի մի տարեկան էգ ձագը»։ Ի նկատի ունենալով, որ Ախալքալաքիի և Ախալցխեխի հայերը Կարինի կամ նրա շրջանից են գաղթած և Բանանցն ու Ղարադաղը կապված են Ղարաբաղի բարբառի հետ, ապա պարզ պետք է լինի այդ դոխ բառի որոշ իմաստը «աղավնու կամ հավի մեծ ձագ» և տարածումը արևմուտքից (Գալա, Հալաստա, Կոլխիդա) մինչև Բաղաց ցեղերի Bala-karan «բալա ցեղեր» կամ kara-bala «Կարաբախ») վերջին կանգառներում։

6. *Ndʒul-* ‖ *dʒul-* (մեգր.) „плавить", օրինակ t'irindʒule «մյունը հալվում է», ndʒlap'iri «ձուլվածք» (сплав, տե՛ս Կիպշ.,

288), O-ndɣulap'ari «հալվելու բան» (подлежащий плавке, предмет плавки)։ Այս մեդրելական dɣul- արմատին պիտի կցել լազերեն dɣul- „перезревать, прокиснуть" (Ներկա 1 դ. m-dɣul-ur), ինչպես թարգմանում է Ն. Մառը, (Грам. чанс. яз., 141), որ փաստորեն վերաբերում է պատղների լիսկելուն շատ հասնելուց։ Ընդհանուր մեդրելալազական արմատն է dɣul- (դղուլ)— լսկել, հալել, ձուլել իմաստով և «դեցեսիվ» շարքի հնչյունաբանական օրինաչափության հիման վրա, ինչպես նկարագրված է վերևում, այս dɣul- արմատը հնում եղած պիտի լիներ dul- (դուլ-), իսկ այս նախնական արմատը հետ չէ ըստ իս հայոց ձոյլ-ձուլել արմատից։ Այստեղ երկու հանգամանք են պահանջում առանձնահատուկ ճշտելու, նախ հարկավոր է, որ հայերենում բառասկզբում ձ հնչյունը առաջացած լինի զդ-ից նաև այլ դեպքերում (բառամեջ շատ կա -խոդ ‖ հնդ, հերդ „черед" (= վրաց xvedri «մաս») և հերձել, լորդ «վարար» և լորձ-անք և այլն). երկրորդ, հարկավոր է, որ հայոց ձոյլ ձևի դիմաց լիներ և ձող- (ձոլ-) նախաձևը, ինչպես թոյլ ձևի դիմաց ունենք թող-ում, նշոլլ ձևի դիմաց՝ շող-ալ, «արձոլլ» (= ցանց) բառի դիմաց նաև արձող և այլն, և հետևապես լազո-մեգր. dul-ին հավերժնում պիտի համապատասխաներ dol- (> ձող-), որպես հնչափոխական տեսակ։ Բայց հայոց ձոյլ արմատին, որ գրվում է նաև ձոլգ և ձիւղ (Աբմ. բ., IV, 511), գրվում է հնդեվրոպական ծագում և ձուլել (ձուղել, ձիւղել, ձօղել) «թափել, ձուլել» > «պնդացնել, զօղել, ամրացնել» իմաստով կապում են հնդեվր. g'heu- «թափել, հեղել, ձուլել» արմատի հետ, ավելացած -lo մասնիկը։ Այդ հնդեվր. արմատին է պատկանում հուն. χέο[<χew-o] «թափել, հեղուլ» [лить], χύσις «թափում, հալում», χυλός «հյութ, հուլդ, համ», լատ. fundo [fu-di] «ձուլել, հեղել, թափել» („d"-ն ածական է), գոթերեն giut-an („t" ածականով) «ձուլել» (= գերմ. giessen) և այլն։ Այս հնդեվր. g'heu- արմատից են հանում նաև հայոց ձեւ և մինչև իսկ ձօն «նվեր» բառերը, որի համար առհասնում են g'hu- = հայոց *ձու + ան (նման պաշտել-պաշտօն) և առացվել է իբր թե ձու ան > ձաւն (ձօն), որ բացարձակ կցկցանք է, իսկ վրացական խմբի (քարթվելական և լազո-մեգր.) նման արմատի առկայությունը համարվում է «պատահական նմանություն» (Աբմ. բ., IV, էջ 525)։ Ըստ իս, հնդեվրոպական պիտի համարել միայն հայոց ձեւ բառը (отливка > форма իմաստաշրջումով), իսկ ձոյլ (ձուլել) և ձօն բառերը տեղական, կապված վրացական լեզուների հետ, որպես Հայասայի բառեր։

7. Korali (լազ. Վիցեուում)— այն փայտը, որով խփում (ձեծում) են բամբակը և կամ ջարդում են ընկույզը (H. Марр, Грам. чанс. яз., 137)։ Մեգրելերենում այդ բառը չի գործածվում, բայց կա վրաց. kopali կամ kombali (ըստ Чуб. բառարանի) „дубина, палка“։ Այս բառը կա նաև հայոց բարբառներում, ինչպես և արժմյան պարսկերենում և քրդերենում։ Չի արձանագրված հայ և վրաց հին դրականության մեջ և թվում է, թե հարավային կովկասյան ծագումով պիտի լինի։ Ըստ Հ. Աճառյանի (Գաւ. բառ., 393) այդ բառը գործ է ածվում Երև., Ղրբ., Վն., Տր., Տփ. կոպալ ձևով և Երև., Ղրբ., Տփ. կոմբալ ձևով, նշանակելով «խոշոր գլխով հաստ փայտ, բիր, մանակ»։ Բայց Երևանի և Ղարաբաղի բարբառներում՝ նաև «կարճ ու հաստ փայտ է, որով թմբկահարը թմբուկը կռնձնի» (աջ ձեռքի փայտն է), իսկ Համշենում այդ կոպալը նշանակում է այն փայտը, որով ծնծում են եղիպատացորենը կամ տանձը և խրնձորը մսուրքի մեջ (Տրապիզոնում՝ կանեփը ծնծելու մի գործիք է)։ Ինչպես տեսնում ենք, Համշենի հայերն ու Վիցեի լազերը այդ «կոպալ» բառը միևնույն իմաստով են գործ ածում։ Հ. Աճառյանը մատնանշում է նաև նոր պարսկ. kōbāl «երկաթի դավազան», քրդերեն kupal, kopal (gopal) «հովվի մահակ», վրաց. կոբալի, կոմբալի և ուտիերեն կովալ։ Ըստ Ս. Ամատունու բառարանի (էջ 358) Արարատյան բարբառում կոպալ նշանակում է «բարակ կարճ փայտ, որով դափաչին խփում է դափի տակին», բերելով Գ. Գրոշշանից (Սոս ու Վարդիթեր, 271) հետևյալ կտորը «Դափաչին էլ կոմբաջին կոպալին տվուց»։ Աշտարակում այժմ էլ կոպալը այն փոքրիկ ($1^1/_2$ թզաչափ) փայտն է, որով թմբկահարը ձախ ձեռքով խփում է թմբուկը տակից, իսկ կոմբաջով, որ համեմատաբար մեծ է և մեծ գլխով, խփում են թմբուկի վերին երեսը (աջ ձեռքով)։ Արտաղ մեզ հետաքրքրում է kombaǰ ձևը, որ առացվել է kombal, սա էլ kobal < kopal ձևից։ Հնչյունական l > ǰ (կոմբալ > > կոմբաջ) փոխանցումը, ինչպես մատնանշվել է վերևում, զուտ լազո-մեգրելական և հայկական է, թեպետ և լազերենում ու մեգրելերենում այդ բառը (kopal) և նոր բառաձևը (kombaǰ) չկա։ Չնայն որ լազերի մոտ բառը միայն Վիցեուումն է գործ ածվում, իսկ այլուր և մանավանդ մեգրելերենում չկա, ապա պիտի եզրակացնել, որ kopal բառը լազերին անցել է հայերից։ Այդ բառի ներկայությունը վանեցոց մոտ, ինչպես և քրդերի, թողած դեռ պարսկերենը, վկայում է նրա տարածման մասին հարավային Հայաստանում։ Վրացական (քարթվելյան) և ուտիական ձևերն ևս հաս-

տատում են այդ բառի տարածվելը Անդրկովկասում։ Ծագումը հավանորեն կովկասյան-ուրարտական է։

8. Око (մեգր.) „нужно, хочет", ко (լազ.) „нужно" Արևմտյան լազերենում այդ ко մասնիկով կազմվում է ապառնին և դրվում է խոնարհվող բայաձևի (առբեստի) վերջում, ինչպես վ-ոդղի-կո, ոդղի-կո, ոդղա-կո, վ-ոդղի-կութ, ոդղի-կու-թ, օդղակո-ս (=կխառնամ, կխառնես և այլն) կամ ճար- «դրել» արմատից՝ բ-ճարի-կո, ճարի-կո, ճարա-կո և այլն։ Դեռ 1940 թվականին ևս մատնանշելի այդ ко մասնիկի և հայոց կու մասնիկի թե՛ հնչյունական և թե՛ ֆունկցիաների ընդհանրությունը։ Բայց այնուամենայնիվ որոշ վերապահում է առաջանում այդ ճանաչման (լազական), այն էլ արևմտյան միայն բարբառի այդ ուժեղ դերի մասին, որ ստիպել է բոլոր հայ բարբառներին լուրացնել այդ իրեն ко (> կու) մասնիկը։ Այդ տեսակետից ակնհայտ է հայոց կու մասնիկի փոխառությունը։

9. martini (լազ.) „чайка" անշուշտ, նույնն է պրաբարի մրախիմն բառի հետ (հոդն. մրամանք, սեռ.-տր. մրամանց), որ նշանակում է «ծովափին ձկնակեր մի թռչուն»։ Աշտարակում և Օշականում հիմա էլ այդ թռչնանունը գործ է ածվում։ Ըստ Ս. Ամատունու (Հայոց բառ ու բան, 495) դա է «գլուխը սև, թևերը մոխրագույն, և սպիտակախառն կապույտ կարճ և տափակ, ոտքերը կարճ, սև և թաղանթապատ ջրասեր թռչուն»։ Թեպետ այդ մրախիմը փոքրիկ մի բառ է, ինչպես ինձ են հաղորդել, այնուամենայնիվ կարելի է համեմատել լազերեն martini „чайка" բառի հետ, զանց առնելով իմաստների որոշ տարբերությունը,— մի բան, որ հաճախ է պատահում թռչունների անունների մեջ։ Բայց հետաքրքիր է, թե ինչ միջնորդավոր շրջաններով է այդ բառը անցել և մանավանդ պահվել Արարատյան բարբառի վերոհիշյալ երկու գյուղում։

10. ragvi (մեգր.) «թռչարդ» (թռչունների համար) և լազ. ragi (Վիցեում), «թռչարդ» (մկների), ereki (Վիցե), ireki (Ռոպե) „силок для птиц", որոնք ըստ իս կազմվել են մեգր. ragv- „набрасывать(ся), накидываться" բայից, ալսինքն՝ ragvi (ragi) «թռչարդ» բառը հիմնականում նշանակել է „накидка", վրան գցելու (ցանց և այլն)։ Այս լազո-մեգրելական տվյալներից պետք հանել և հայոց երագազ (արագազ) «կենդանիներ բռնելու ցանց» գոյականը, որի վերջին -ազ (-az) մասը ածանց է։ Հետևաբար նույն ծագումով է նաև որոգայթ «թռչարդ, ծուղակ» բառը -այթ (ait') ածանցով։ Erag- կամ arag- արմատաձևը այնպես է հարաբերում orog-ին, ինչպես ունենք աճար և ոճոր-ք «առատատոհ»

(=լազ. ճերի *ceri* Հոպեում, վրաց ճերի čeri «առուատաղ») ապագայիմ և սողոպիմ «երերալ, դեղերել, գալթակղել», որպես տարբեր անգղերի (բարբառների) արդյունք։ Հալևրենում -ալի ածանցը ունենք և ճառագալթ բառի մեջ (ճառագ-ում բայից), որի հետ համեմատել սումեր. zalag 'shining, resplendent' և խառիտերեն zalli «ոսկի», այսինքն՝ փայլուն։

11. *rĭkali* (մեգր.) «երկար, բարձր» („длинный, высокий", ինչ կիպչիձեի մոտ Грам. мингр. яз.)։ Այս ածականը (ორდალი) կարող է ազգակցվել հայոց երկ-ար, երկ-այն բառերին, եթե իմարկե մեգրելական բառը հին տնաք ունի և չի այլակերպված ու փոփոխված հնչյունական մի այլ ձևից։ Դժբախտաբար լազ-մեգրելական լեզուներով հին գրականություն չի եղել, իսկ գրավոր անցյալով քարթվականը նման բան չունի (վրաց grjeli «երկար», այլ արմատ է և անցել է մեգրելներին ginje „длинный, высокий" ձևով)։ Բայց հայոց erk- արմատը (erk-ar, erk-ain) կարող է խառիտական ծագում ունենալ, ինչպես ցույց կտրվի իրեն տեղում։

12. *tep'uri* (լազ.) — լազական կլոր սեղան մի ցածլիկ ոտի վրա։ Այս բառը Հ. Աճառյանը համարում է փոխառյալ հայկերենից, նկատի ունենալով խարբերդցոց դեպուր «փայտե կլորիկ սինի, որի վրա հաց են ուտում» (Արմ. բ., II, 1173). իսկ իր «Գավառական բառարանում» այդ խարբերդցոց բառը տեփուր ձևով թարգմանել է «փայտե կլորակ փոքրիկ սեղան» (էջ 1026)։ Այդ ձևով գործ են ածում նաև Ակն, Բալու, Երևան [Արաբ. բարբ.], Սեբաստիա, Տրիգիա, Թեփուր ձևով՝ Խնուս, Համշեն, Ղարաբաղ, բոլորն էլ «տափակ, թաղլաս, սինիճ, որպես փայտե կլոր մատուցարան, որի վրա հաճախներներ (ցորեն, բրինձ և այլն) են մաքրում, տեսիրում»։ Կար և հին գրականության մեջ -բափուր «փայտե սկուտեղ, թեփսի», որը մեր այս գավառականների հետ իրր թե փոխ է առած նոր պարսկերեն tafur բառից, որ թարգմանում են «անօթք քարեղեն և խեցեղեն» (ibid. էջ 1172)։ Պիտի առարկել, որ նախ պարսկերենը այլ իմաստ ունի (անոթ „сосуд") և քարից կամ խեցիից շինած, և երկրորդ, որ հին փոքրասիական և թեթև խառիտական լեզուներում եղել է նման բան, եթե ի նկատի ունենանք խեթական օրենսդրքում *tapulli* „unplateau" (code hittite, 122—123), ինչպես թարգմանում են Hrozny և Carruthers (Hittite glossar", E. Sturtevant, 1936, էջ 152, 'plate, dish'??), բայց ըստ Süter bock-ի (ZA, № 7, X, 61), այդ tapulli բառը, որ ունենում է և «մետաղ» (URUD) որոշիչը, նշանակել է կարևոր ինչ-որ գործիք, բայց ոչ

դանակ (տե՛ս Supplement to a Hit. Gl., էջ 42)։ Դուցե մեր տեփուր-թափուր բառը դալիս է խառխտական աշխարհից, ուր եղել է tapri- աթոռի մի տեսակ է („a kind of seat", ibid, 42), որը կարող էր և կլոր սեղան նշանակել, նման առաջ стул-стол բառերի անցման։ Հավանորեն Փոքր Ասիայի վրայով են լատացվել լատիներեն tabula, հուն. tabla և այլն, որ նշանակել է տախտակ, հետո նաև սեղան և մտել է եվրոպական լեզուների, ինչպես և թուրքերենի մեջ (տֆալկա)։

13. tutuli (լազ.) «ղեսա, ազդր» (бедро)։ Այս բառը անշուշտ ածանցավոր է -uli մասնիկով, իսկ tut- արմատը պիտի ազգակցել մեր մի շարք գալառական բառերի հետ, որտեղ գտնում ենք նույն բառը։ Այսպես, Դարթաղում ունենք տուճա «նստո տեղին» (Ամատ., 646, օրինակը «Գլը-Գուղիա»-յից 188) կամ տուճդի «նստուլք» (Աճառյան, Գալ. բ.), նույն Դարթաղում և Շամախիում՝ տուճդուռուզ (<*տուճդռուզ) «նստուլք» (մարդու, անասունի և այլն)։ Արարատյան բարբառում ունենք մանկական բառ տուտուզ նույն իմաստով, իսկ որպես ածական կա նաև Վանի տուտուզ և Դարթաղի տուտուռուզ «տուռած, դուրս ցցված» բառը, ինչպես որ -ուզ մասնիկով ունենք խլուզ (Մոքս, Ռշտունիք) «սուր տար ցցված անկյունած» (ականջ, քար և այլն), տռուզ «լեցուն, տառք» (ծառապատղ, ընդեղեն), պլուզ «փոքր», ճլուզ «շատ նվազ, նիհար մարդ», զռուզ «խռճռուճ» և այլն։

14. ni-k'it'i (մեգր.) «դունչ, մռութ, քիթ» (рыло, морда, нос)։ Այս մեգրելական բառաակզբի „ni" (< n) հավելված է և կիպշիճներ իրավամբ դասում է։ Անկասկած այդ բառը փոխառյալ է հայերենից՝ քիթ բառից, իսկ բուն մեգրելական նույնանիշ բառն է joŋo (ջոնջո) „рыло, морда", որի հայկական ներկայացուցիչն է դունչ, ինչպես մեգր. joŋo «մողես, խլիզ» բառի դիմաց ունենք ղողոշ = աքրաթոթիշ «մողես» (Առձ. Բ., 256, 830), այսինքն՝ հայերենում բառաակզբի „d"-ին մեգրելերենում համապատասխանում է j (ջ)։ Ինչ վերաբերում է nik'it'i բառի ni հավելվածին, ապա ընդհանրապես վրացական և լազ-մեգրելական այդ ni- հնչմանը հայերենը տալիս է քի- (ən-), ինչպես niči «ընծա» (բուն քարթվելեանում սպասելի էր nici), nigozi «ընկուզ», որի արմատը gus դրսընկում է և սեմական լեզուներում և ուրեմն հայոց այդ ձևը փոխառյալ է վրացականից ni- հավելվածի պատճառով։

15. Ɣeji (լազ. և մեգր.) «խոզ, վարազ», որը Ն. Մառը ճիշտ կերպով համեմատել է հայոց կինճ կամ կինջ նույնիմաստ բառի

հետ (տե՛ս նրա „Яфет. к в арм. яз.)։ Լազո-մեգր. γ = հայոց k ունենք նաև լազ. γlep- „мягкая кожура грецкого ореха“ և հայոց կլեպ բառերի մեջ։

16. jgud (մեգր. ǯgǯɷ)։ m-jgud-un „растет, прорастает, пробивается“ միանգամայն ազերբակից է Արարատյան բարբառի ծրկբրել „прорастать, пробиваться“, օրինակ. երևելի առումը ծրկբրել ա, ցանած ցորենը (կամ տնկած կորիզը) ծրկբրել ա։ Հետաքրքիր է, որ մեգրելական ձայնեղ ձգուդ ձևին հայերենը համապատասխանում է խլարաղաձայն ծկ(ու)բ— ձևով, որը թերևս փոխառություն է։

17. ckit-on-ua (մեգր.) „щипнуть“, որը իր ckit- (ծկիտ-) արմատով մոտենում է հայ բարբառների ճմկրել (Արար.) կամ կճմբել, կզմբել նույնիմաստ հայերենին։ Ըստ երևույթին հայոց ճմկր- > կճմբ- ձևերը հնում եղել են առանց «մ» հնչյունի, այսինքն եղել է ճկրբ > կճբր։ Մեգրելերենում սպասելի էր ckit-onua (ճկիտ-ոն-ուա)։ Կիպշիձեն (էջ 381) չի անջատում «n» բաղաձայնը, համարում է արմատական (ckitonua, ckitonap'a) և այդ տեսակետից այդ մեգրելական բառի բաղաձայնները ckin (ծկոն) համաձայն են հայոց գավառական čmkt' կամ kčmt' նույն չորս բաղաձայններին, փոխելով n ‖ m։

18. čvit- ‖ čut- (մեգր.) «փակել աչքերը»։ Այդ նուիտ- ‖ նուտ- արմատի դիմաց հայոց բարբառները (Արարատ, Մարթ.) տալիս են նըտ-ել մոտավորապես նույն իմաստով։ Ս. Ամատունու բառարանում կարդում ենք (450)— «ճմռել (աչք) —մի աչքը խփելով՝ մյուս աչքով մի բանի վրա սուր նայել» (օրինակ, աչքը ճմռեց, քարով ուժեց աղունըկին վե քցնց, աչքը ճըռնց, թվանքը քցնց)։ Այս բառը այժմ էլ գործ է ածվում Վաղարշապատում։ Մարթերդում, ըստ Հ. Աճառյանի «Գավ. բառ-ի (737). «ճմռել—աչքերը կիսափակ և ծուռ նայել», ճմիկ կամ ճմիկ աչվի «աչքերը կիսափակ և ծուռ նայել»։ Հայոց այդ գավառական նըտ- արմատը առացվել է նիտ կամ նուտ լրիվ ձևից։

19. čkvad- ‖ čkvid ‖ čko[r]d- (մեգր.) „разорвать, истребить“ (Кипш., Грам. м. яз., 394), čkwid- ‖ čkid- „ломаю, разрываю“ (Марр, Гр. ч. яз., 227) և čkod- „разорвать, оторвать“ (ibid., 226)։ Մեգրելական և լազական այս բայաձևերը բարբառային և նշխարբարառային տարբերություններ ունեն և առաջացել են հիմնական čkod- կամ čkod- «ճղել, ճեղքել, պոկել» ձևից, որը ավելի հնում, որպես բարդացած դնցնսիվ շարքին պատկանող (տե՛ս վերը),

առացվել է պարզ čod- (ճոդ-) արմատից: Հայ բարբառներում դրան համապատասխանում է ճոր- ձևը, որն ունի նույն նշանակությունը, երբեմն հավելացած «ռ»-ով: Այդպես են — ճոթ ամառ, պատառ, կտոր» (հացի, հողի, շորի և այլն). երեք հողը և երեք մանր ճոթք կից իրարից. էրսանքի կոչեցնել ճոթն տամ վախմ վանքիս (Ջամբռ, 290, 287): Մի ճոթ հաց տուր, փեշից մի ճոթ կտրեց (տե՛ս Ս. Ամատունի, 442): Այնուհետև ճոր բառը մասնավորապես առանում է առաց „отрез"-ի իմաստ, որպես նոր անկար շոր («Ինացին երեան ճոթ առանց, հարսանիքի շորերը փեսայի և հարսի համար, որ գնվում է. իսկ հարսի համար, որ նաև կարվում է. «ճոթ կտեք էրթ»). ճոթ անել «բաժանել» («ձի, հարստությունն ճոթ արին»), ճոթ ճոթ գալ «կտոր կտոր գալ» (=նազ անել, փքվել, իրեն մեծ պահել): Ճորոհել «խիստ պատառել, լայն ճեղքել» (Ամատ., 442): Այս արմատը և ձևերը գործ են ածվում գրեթե բոլոր բարբառներում (տե՛ս Աճառյան, Գրաբ. բառ., 728), ինչպես Ագա, Ախալքալաք, Ախն, Արարկիր, Բլուխանիա, Բալու, Զելիճուն, Լեհահայոց մոտ, Խնուս, Խարբերդ, Համշին, Մոկս, Մուշ, Շատախ, Չարսանջակ, Պոլիս, Վան, Տիգրանակերտ և այլն: Իհարկե կան և ածանցյալ ձևեր, ինչպես —ճոթեղեն, ճոթիկ (Մուշ), «պղտիկ կտոր», ճոթոռտել և այլն:

20. čkori (մեր.) սորուկ, „раб" paton čkorala (=վրաց baton-ḳmoba („крепостничество") առացի՝ барство и рабство (տե՛ս Кипшидзе, էջ 298, 392): Այդ čkori (ճկորի) բառը ըստ իս առաջացել է čori հին ձևից, ինչպես čk կամ čk և նման բարդությունները կազմվել են պարզ č բաղաձայնից (տե՛ս վերը): Իսկ čor ճոր բառաձևը մեգրելական (և լազական) նորմալ հնչյունափոխն է car- (ծար-) նախնականից, ինչպես վրաց kaçi (կացի) «մարդ» բառի դիմաց ունենք մեգրելալազական koči (կոչի), վրաց cabli «գազանակ» և լազ.-մեգր. čuburi (<*čobori-ից) և այլն: Մեգրելական čkor-<čor-ից, իսկ վերջինիս *čor ձևափոխումը *car-ից հաստատվում է հայոց car'a (ծառա) բառով, որը արամեական „a" վերջավորությամբ (կամ սուրբլյան ?) առաջացել է սուրբլյան-խուռիտական šarri, zarra սորուկ, ծառա բառից, ինչպես ցույց կտրվի իր տեղում: Թերևս մեգրելական այս հին čor- (ճոր-) սորուկ արմատաձևի հետ կապ ունենա նաև հայոց ճորտ բառը, որը X դարից հայտնի է մեր հին գրականության (և վիմական արձանագրությունների) մեջ, ինչպես նաև գործածական է մեր մի շարք բարբառներում (Աբար., Մուշ, Ղազախ, Ղարաբաղ, Ջուղա, Սալմաստ, Տփղիս, Ագուլիս և այլն): Վրաց լեզվում ևս կար čorti

(ճորափ) բառը, բայց «արձան, статуя» իմաստով, ինչպես կարդում ենք Զուբինովի բառարանում, թեպետ վրաց հին գրականության մեջ կարծես թե բացակայում է, իսկ իմաստն էլ դժվարությամբ է կապակցվում մեր նորա «ապաստավոր, փոքրավոր, ծառա» բառի հետ։

21. Xin- (o-xin-u, լագ.) „бледнеть, линять, желтеть от лихорадки" (Марр, Грам. чанс. яз., 232)։ Լազերեն այս բայանձը գործ է ածվում միայն արևելյան բարբառում՝ Ծոպևում, իսկ արևմտյան (Աբենք-Վիցե) բարբառում ապանելի է xun- կամ xon- ինչպես ունենք արևմտյան nusa «ծնորհարար» և արևելյան nisa (արդյոք փոխառյալ չէ՞ հնդկեր. snusa- «հնա» բառից), gub- և gib- «ելնել», gut'- և git'- «կանգնել», t'or- և t'ir- «առանել», kod- և kid- «շինել, կառուցել», k't'ur- և k't'ir- «փոխանակել», škor- և škir- «սուված լինել», çor- (çor-) և çir- (çir-) «մաղել, processать» (համեմատել՝ рор-ել ‖ ծորել ‖ սորել) con- և cin- «կախել» և այլն։ Այդ ահռակներից արևմտյան xun- կան xon- ապանելի ձևի հետ, որ դժբախտաբար բառարաններում չի վկայված, կարելի է համեմատել հայոց դավառական խոն-անալ կամ խուն-անալ «զուրը դցել» (շորի, դիխարկի մասին), որ գործ է ածվում, օրինակ, Արարատյան բարբառում, Ղազախում, Լոռիում, Ղարաբաղում, Տիգիսում։ Մնգրելերենում այդ արմատը չկա։ Իսկ լազերենի վերաբերյալ ընդհանրապես պիտի ասել, որ հայոց նուիրարմատ բառերը ավելի հարում են նրա արևմտյան բարբառին (համեմատել նաև նրա ko և մեր կու մասնիկների գործածության բայաձևերի մեջ, ներկայի կամ ապառնիի համար, ինչպես և մատնանշած վերևի լազ. çor- (çor-) և մեր рор-ել, որի սորել փոխոխակը մեր բարբառներում նշանակում է նաև «ալյուրի մաղելը ջրաղացքարի տակից ալրաւունը»)։

22. Merp. p'aluri „блек".

Լազո-մեգրելական բառամթերքի կապը հայոց լեզվի հետ անուրա հնում ավելի շատ եղած պիտի լինեն։ Դժբախտաբար գրանութեան բացակայությունը այդ արևմտյան վրաց բարբառներում մեզ հնարավորություն չի տալիս ճիշտ և անմիջական հետազոտությունը ապահովել։ Բայց և այնպես բերած երկու տասնյակ օրինակները գրական կերպով են լուծում մեր և այդ լեզուների պատմական աղերսը, որը ինչպես մատնանշվել է, ոսկ ազգակցության կամ փոխառության հողի վրա չի կարելի գնել։

Ըստ Ն. Մառի և Հ. Աճառյանի հայերենից են փոխառյալ հե-

տալով լազո-մեգրելական բառերը. 1) anderi *(լազ.) «աներ չունեցողը», որ ըստ Մառի հայոց անոնթր բառն է. 2)* t'ani *(լազ.)* „naxтание" *ըստ նույնի հայոց թան բառն է. 3)* ma(r)kart'i *«մածնի համար մակարդ», ըստ Հ. Աճառյանի մակարդ բառից. 4)* maraka *(մեգր.) «խոզերի գոմ», որը Կիպշիձեի բառարանում համեմատված է հայոց մարագ* „сеновал" *բառի հետ, բայց ըստ իս փոխառություն է. 5)* omok'sura *(լազ.)* „ясли" *«մսուր», որ Ն. Մառը համարում է հայոց մսուր բառը հնչյունական որոշ փոփոխմամբ. 6)* pat'i *(լազ.)* „кусок доски" *«տախտակի կտոր», որ Մառը համեմատում է հայոց փայտ բառի հետ, բայց անշուշտ որպես փոխառություն. 7)* suriki „скворец (пепельного цвета с белыми пятнами, летает в стае), враг саранчи" [=*թռի դուշ, розовый скворец*], *որը Հ. Աճառյանը համարում է հայոց* սարեկ *բառից փոխառալ, թեպետ հարցականով (Արմ. բառ.). 8)* k'erendi „коса", *«գերանդի», որը Ն. Մառը համեմատում է մեր «գերանդի» բառի հետ, անշուշտ իրրև փոխառություն. 9)* gabari *(մեգրել.)* „плоскогорье" *«բարձրավանդակ», որը Կիպշիձեն տրոհում է* ga *«լուսե» և* bari *«հովիտ»* (равнина), *բայց հնարավոր է, որ դա լինի փոխառություն հայոց գաւառ բառից. 10) մեգրելական* arvani „ступка деревянная" *առացվել է անշուշտ* avan < havan *բառից, որը կամ հայերենից է փոխ առած (հաւան «անոթ»), որը իրանյան բառ է, կամ թե անմիջապես այդ վերջինից (պահլ. hāvan, ավեստ. hāvana, պարթ. hāvan և այլն) կամ թուրքերենից (havan), որը նույնպես փոխառալ է իրանականից: Լազ.-մեգր.* kalmaxa „форель", *«իշխան» ավելի մոտ է հայոց «կարմրախայտ» բառին քան, վրաց* kalmaxi:

Բնական է, որ հայերը ևս, որ այդքան շփվել են լազերի և մեգրելների հետ, բառեր և թեկուզ ձևեր պիտի վերցնեին այդ լեզուներից: Ի հարկե բերել սպառիչ ցուցակ տեղի ունեցած բոլոր փոխառությունները և սպառել այդ խնդիրը իհարկե հնարավոր չէ: Այստեղ ևս ես կմատնանշեմ այն հայկական փոխառությունները լազո-մեգրելերենից, որ այժմ արված են և կամ նոր եմ առաջարկում: 1) Բոզի *«աբեղակ» ըստ Երեմիա Մեղրեցու բառարանի (էջ 56), որ բերում է Արմ. բառ., I, էջ 1127, ևս համարում եմ մեգրելերենից փոխառալ թեպետ և աղավաղված, ինչպես հաճախ կարդում ենք այդ բառարանում համեմատել մեգր.* bža *(բժա), վրաց* mze *և լազ.* mžora: *2)* Բուրջ *մեր բարբառներում (օրինակ Աշտարակում) «նոր կանաչող ուռու ճյուղերի բողբոջը», որի հետ նույնն*

է լազերեն p'urǰi „почка", «բողբոջ», do-p'urǰe „сложился в почку, завязался, дал завязь"։ 3) խամրել «թառամել, թոշնել, փչանալ», խամուր արմատով (վաղախամուր, դիւրախամուր և այլն) ըստ իս ավելի մոտ է լազամեգրելական xom- կամ xum- «չորանալ, չորացնել», xomula «չորացած, չոր», ձևերին, քան վրաց xmeli «չոր» ga-mxmari «չորացած, քարթու» ձևերին xm- արմատով, ինչպես որ առաջարկում է Հ. Աճառյանը (Արմ. բ., III, 334)։ 4) կակալ (Մուրջուր, Կարին, Համշեն, Տիգիս) «ընկույզի վրայի կճեպովը միասին» (Աճ. Գավ. բ., 540). Աշտարակում նշանակում է «կանաչ կեղևը հանած (ծառը թափ տալուց հետո) ընկույզ», կակալել «ընկույզը կանաչ կեղևից հանել» (ասվում է նաև ձուձուկ անել) անշուշտ փոխառյալ է լազ.-մեգր. kakali—„орех" (Ռոպնում), „штука ореха, мелкого и грецкого" (Աբինա, Վիցխ), okakali (Վիցխում) очищать мелкий орех от шелухи (Марр. Гр. чанс. яз., 150) kakal-ua (մեգր.), „очищать орех от шелухи" (Кипш., Гр. мегр. яз., 251), թեպետ kakali բառը կա և բան վրացներենում (քարթվականում)։ 5) կճիճ կամ կճուճ «պտուկ» (горшок), որ կան նաև բարբառներում (Ախց., Երև., Ղզ., Տփ., Պրր., Ղրր., Ագլ.) կճուճ ձևով, իսկ Սևրաստիայում «զչիջ» և «զչիզ» (Արաբկիրում ևս կճիկ) փոխառությունն պիտի համարվի լազո-մեգրելական խմբից, նկատի ունենալով մեգր. čkǰi (ճկուջի), որից և čkudi (ճկուդի) «անօթ». „сосуд", me-čkuǰe «բրուտ», իսկ սա իր հերթին առաջվել է čuǰ-<čur նախարմատից (čk<č, ǰ<r, ինչպես ցույց է տվել), որ և պահպանվել է հին վրացներենում čuri (ճարի) „посуда, сосуда, кувшин винный" (տես Чуб., Груз.-рус. сл., 1887 г., էջ 1715—1716)։ 6) ձողպուր «ընկույզ» Ղարաբաղում, որ առաջացել է «ճռպուր» հին ձևից (ճղ<ճ) և համընկնում է մեգր. čuburi «շագանակ» (каштан) բառի ձևով, բայց ոչ իմաստով, և լազո-մեգրելական հնչյունական համապատասխանությունն է վրաց (քարթ.) cabli (ծարլի) «շագանակ» բառին, վրաց լեզվում ևս կա čuburi (ըստ Чуб.-ի բառարանի), բայց իմարին որպես փոխառություն, որտեղից թեև անցել է և արևվելքի հայերին մինչև Ղարաբաղ, և կամ գուցե հին բալա (պալա) ցեղի գաղթի հետևանքով է (VII—III դարեր մեր էրայից առաջ) այդ լազ.-մեգր. *čobur-ը ենթացել է ղարաբաղցիների («բաղդ» ցեղի) մեջ։ 7) Մոնր մի շարք անդրադարձ (Դվ., Երև., Ղզ., Ղրր., Ղրդ., Վն., Տփ.) նշանակել է «վանքի ընծայացու, վարդապետի քով ծառայող մանչ կամ սպրվող տիրացու» (Աճ., Գավ. բառ., 793), ըստ Ս. Ամատու-

նաև բառարանի (էջ 488) այդ բառը Արարատում, Վանում, Լոռիում և Ալաշկերտում նշանակել է «աշակերտ, առավելապես վանական դպրոցի», որից մանթաթիդ, մանթութիւն («աշակերտութիւն») -ibid. Փոխառութիւն պիտի համարել մեգր. mot'a (հդհն. mot'alep'i) «թոռ, внук», լազ. mot'a (Ռոպն. Վիցն), „детеныш; внук", Աբխազում՝ mont'a. Արխավարում՝ mont'ala „детеныш". Թևպետ իմաստները տարբերվում են (հայերենում մոնթ իսկապես նշանակել էր «փոքրավոր», որ հետո չէ «զավակ, детеныш» լազ-մեգրելական բառիմաստից։ 8) Ոչխար „овца" փոխառյալ է նույն լազո-մեգրելական լեզուներից (= լազ. čxuri. մեգր. šxuri), որի վրացական ձևն է çxovari, çxvari «կենդանի, ոչխար», թևպետ հայոց բառի սկզբի «ո» հնչյունի նշանակութիւնը ինձ մնում է մութ (թերևս երկու բաղաձայնից խուսափելու համար բառամիջում եղած «ո») čxovar (ձայնավորի կրկնութիւնն է)։ 9) Ճանճ կամ ճանճ փոխառութիւն է նույն լեզուներից, ինչպես այդ մատնանշվել է Մառի, Աճառյանի կողմից նաև նախորդ բառի վերաբերմամբ, համեմատել մեգր. čanǯi, čandi «ճանճ, муха» (Н. Марр, К вопросу о ближайшем сродстве арм. яз. с иверским, ЗВО. հատ. XIX, 1909, էջ 1072), որի համեմատ վրացերենը ունի m-ceri (Մըծերի)-id։ 10) Լակոտ «շան ձագ» փոխառյալ է ըստ Հ. Աճառյանի կովկասյան լեզուներից, ի նկատի ունենալով վրաց lekvi «շան լակոտ», «առյուծի կորյուն», լազերեն laki, lak'i, լաճի «շուն», lakoti «շան ձագ», ևս կավելացնեի նաև մեգր. lakvi, „щенок"։ Բայց ավելի ճիշտ կլիներ համարել լազերենից փոխառյալ թե՛ „a" ձայնավորի պատճառով, որը հատուկ է մեգրելերենին, և թե՛ -nuա (լակոտ) վերջածանցի բնույթով, որը Ն. Մառը իզուր ուղում էր իգական սեռի նիշ համարել (տե՛ս Արմ. բառ., III, 143—144), որովհետև Աարպատականի թուրքերենում կա läkätä «լակոտ, տխմարթ բառը -ät հնչմամբ։ 11) Ջոչ անել (չոչել), Արարատյան բարբառում նշանակում է «երեխայի չորքթաթի դնալը», որը ըստ իս գալիս է մեգր. čoč-ua = վրաց čočva նույն իմաստով. բայց որովհետև մեր թաթ „лапа" և վրաց t'at'i(id.) բառը տալիս է լազ.-մեգր. լեզուներում t'ot'i(id.), այսինքն՝ o ձայնավորով, իսկ čoč- նույն արմատի ձևափոխութիւնն է, ուստի հայոց և վրաց čoč- ձևերը պիտի համարել այդ լեզուներից փոխառյալ (համեմատել մեգր. čoč-ua „лезть, пользти", Кипш., Грам. мегр. яз., 366)։ 12) Լոր (< լազ) «լայն քայլ» (Արար., Լոռի, Ղազախ) հավանորեն փոխառյալ է լազ.-մեգր. լեզուներից. համեմատել մեգր. o-lage „порог

у ворот", որը Կիպշիձեն վրաց laji «բայլ» բառի հետ նույնարմատ է համարում, և ուրեմն մեգր. o-lage նշանակում է „место для шага, чтобы перешагнуть" (Грам. м. яз., 269)։ 13) Կռակիր Աշտարակում նշանակում է այն ընկույզը, որի միջուկը դժվար է դուրս գալիս. համեմատել լազ. kerketa „твердый орех" (kerketa neji «կճղկճվա նձախ» = ամուր ընկույզ), որը գործ է ածվում և վրացերենում։ 14) Խախուրր «կոկորդ, глотка» (Վաղարշապատում) համընկնում է մասամբ մեգր. xorxota „глотка" բառին, բայց հավանորեն երկուսն էլ գալիս են խեթերեն huharti (խուխաբտի-) նույնիմաստ բառից, չլինելով մեկը մյուսից փոխառություն։ 15) Փիճի- «մի տեսակ մայրի, pinus sativa, որ Հ. Աճառյանը (Արմ. բ., VI, 1229) համարում է փոխառյալ վրաց p'ičvi «մի տեսակ մայրի, сосна», մեգր. pičvi. լազ. p'inčo «մի տեսակ եղևնի»։ Արժի էլ այդ բառը գործածական է Գոնտական շրջանում, հայոց Մատրջուրի, Հաճինի և Սվնիքալի բարբառներում, հին ժամանակ նաև վրաց գրականության մեջ։ Հյուբշմանը վրացական խմբի այս բառը համարում է հայերենից փոխ առած (Arm. Gr., 397)։

ՈՉ ՓՈԽԱՌՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՑ-ԼԱԶԻ-ՄԵԳՐԵԼԱԿԱՆ ԲԱՌԵՐ ԵՆ

Սոխ բառի առկայությունը հայերենում, մեգրելերենում և պարսկերենում իրավամբ առիթ էր տալիս Կ. Կիպշիձեին հարց դրնել ոչ թե հայերենի փոխառության մասին պարսկերենից, ինչպես Հյուբշմանն էր ընդունում (Arm. Gr., 238), այլ ի նկատի ունենալով և մեգրելերեն (soxi „лук, цыбуля") համարել պարսկականը փոխառյալ հարեթական լեզուներից։ Պարսկերենում այդ բառը (sōx) չի բացատրվում որպես իրանյան ծագումով և բացակայում է այլ իրանյան բարբառներում (Հ. Աճ., Արմ. բ., VI, 316 «Բառս ծագումն ու առուգաբանությունը հայտնի չէ»)։ Բայց և այնպես Հ. Աճառյանը հայոց սոխ բառը, որ գոյություն ունի նաև մեր բոլոր բարբառներում, բացառությամբ Ղարաբաղի և Շամախայի, իր «Արմ. բառարանում» դրել է որպես իրանականից փոխառյալ։

Օշոշ „ромашка, երիցուկ, фр., camomille", գործածական է Արաբ., Կարինում և Ղարաբաղում, օշոշիկ կամ օշոշուկ Մուշում (Աճ., Գաղ. բառ., 1135, տե՛ս և Ամ., Հայոց բառ ու բան, 681)։ Համեմատել մեգր. (Кипш., 295) և վրաց ošoša „будра, кротовик" (Чуб., 1001, ošmeša, ošoša, ošošia)։ Չի կարելի դնել փոխառության խնդիր։ Հայերենում վերջածանց -ոշ (-օշ) մասնիկը հայտնի է նաև այլ բուսերի անուններին մեջ, ինչպես -ճոշ, թե-

շոշ, մոլոշ և այլն, թեպետ կա և ոչ բառանուններին մեջ, ինչպես բրիշոշ, լմփոշ, բմփոշ, դանդալոշ, պրկոշ, մոթոշ և այլ ածականներում:

Ականջ „yxo" համարում եմ լազո-մեգրելական kuǰi «ականջ» բառին ազգակից, առացված նախնական *a-kvar* ձևից, որպես դուդանեո լազո-մեգր. և վրաց *kuri*-ին: Համեմատել, օրինակ, լազ. kwari (kuari) և kuri «ազռավ» և մյուս կողմից v հնչյունի անկման համար kwali *(խոպան)* kali *(Աթինա)* «պանիր» հայոց ոչխար > ոչխար և այլն, իսկ r > ǰ սովորական հնչյունափոխություն է այդ լազո-մեգր. և հայկական *(հայասական)* լեզուներում, ինչպես լազո-մեգր. piǰi «բնաբան, դեմք, ատիճ» և վրաց piri(id.), p'uǰi «կոպ» վրաց p'uri(id.), (ǰiǰi > ǰindǰi), «արմատ» և վրաց jiri *(ձիրի)* -id և այլն, իսկ հետագայում ǰ բաղաձայնից առաջ մանում է n *(ն)*: Այնպես որ a-kwar > akwaǰ > akaǰ > akanǰ: Հնդեվրոպաբաններըը հայոց ականջ բառը, որ դրաբարում հոդնակի ձևով էր *(ականջ-ք)*, ցանկանում են ուսկե բառի երկակին դարձնել, ինչպես աչք և ակն (Meillet), բայց, ինչպես Հ. Աճառյանն է ասում *(Արմ. բ., I, 79)* «Ձևաբանորեն շատ այլափոխված է ականջք և ստուգաբանորեն դժվար բացատրելի. ազդվելով աչք բառից, սա [akan-] էլ ստացել է չք հավելվածքը, որ հետո դարձել է ջ՝ նախորդ ընդհանրի պատճառով: Ինչպես տեսնում ենք, պատճառաբանությունը շատ թույլ է և բնաղրոսիկ [ա(ն)կն > an-kan > akanč-k' > akanǰ-k?!]: Հայոց ականջ բառը ազգակից է լազո-մեգր. kuǰi «ականջ» բառին, բայց ոչ փոխառյալ:

Երինջ «էգ հորթ» Ն. Մառը իրավամբ կապակցեց մեգր. oriǰi կամ orinǰi «տավարը» (скот), orǰi «կով» բառերի հետ, միացնելով նաև հայոց արջառ «խոշոր եղջյուրավոր անասուն» (H. Марр, Яфет. элементы в яз. Армении, ИАН, 1912, էջ *834)*: Ն. Մառը հայոց երինջ և արջառ բառերը համարում էր փոխառություն մեգրելականից, իսկ Հ. Աճառյանը ընդհակառակն է ընդունում, որովհետև վրացերենից փոխառությունն համարելը ճիշտ կլիներ միայն այն դեպքում, երբ այդ [երինջ] բառը ուրիշ կովկասյան մի որևէ լեզվի մեջ էլ գոյություն ունեցած լիներ *(Արմ. բ., II, 820—821)*: Ըստ էս, Պոնտոս-Կոլխիդա, ինչպես և Հայասա երկրամասերում եղել են երկու ձևով արմատներ, մեկը հայասական arinǰ ‖ erinǰ սովորական a ‖ e նախահնչյունով, որ շատ տարածված էր նաև խեթևերենում և խուռիտաերենում, իսկ մյուս արմատաձևը՝ orinǰ, որը հատուկ է եղել այդ լազոմեգրելական ճյուղին, և մի կողմից ունենք

*ari]-al>*արջառ, *eri]>erin]* *իսկ մյուս կողմից ori]i և orin]i ուր «ոտ» բաղադրիչը (erin], orin]i նորամատ է) և or(i)]-ի։ Փոխառության հարցը, ինչպես տեսանում ենք, դուրս է քննում, եթե նկատի ենք ունենում հայերի և հարևական լեզվի ծագումը Հայասայից, որը մոտ էր վրացական վերոհիշյալ ցեղերին։*

Ձխիլ «փորոտիք, աղիք», ձխլ-ել (Երև., Տփ.), ճղլ-ել (Տրապ.) «ճմլել, ճզմել, սեղմելով ճնշել» (գլուխը ճղլել), ճղուկ (Նորք.) «շատ հանելով կակղած» (օրինակ, ճխլուկ ծիրան), ճխլատրել (Ախալք.), «ճմրթկել, տրորել», ճխլտվել (Երև.) «ճզմվել, ճնշվել» և այլն շատ մոտ են հնչում մեգրելական cilix-ua *(ծիլիխ-ուա)* „сжимать, выжимать" *լազ.* cilax- *(ծիլախ-)* ocilaxu „давить руками, выжимать сок руками"։ *Հայոց բառարմատը ճխիլ< *ճիխիլ ավելի մոտ է մեգր.* cilix-*ին քան լազ.* cilax-*ին, իսկ իր «ճ» բաղաձայնով ավելի է արտահայտում այդ լազո-մեգր. շչահնուիչյան կոնսոնանտիզմը, քան իրենք են պահել։ Ինչպես ըստ մեր գավառական բառարանների (Աճառյանի, Ամատունու) այդ ճխիլ արմատը գործածական է մեր բարբառների հյուսիսային հատվածում (Արաբ., Լոռի, Ղազախ, Թրիլիսի, Տրապ.), մոտ վրացական լեզվախմբին, արևմտահնդկյուիլ դժվար է գնել անմիջական փոխառության խնդիր լազո-մեգրելականից (վրացերենում այդ արմատը չկա)։*

Պատահական նմանություն կարելի է տեսնել մուրճ „молот" *«չաքուչ» բառի և լազ.* burçuli *(բուրճուլի) «տապար կեռիկով» բառերի մեջ, ինչպես նաև լազ.* kudi *(Վիցեում) «մեծ ու թռչուն, որ նստում է փտած ծառաբների վրա և խփում է կտուցով»* m-kudi *(Արխավուրում)* „дятел" *և մեր բարբառային ծառկուտուր* „дятел" *բառերի արմատների (kut-) մեջ, քանի որ դա բնամոլնական է (կուտ-կուտ, նման ռուսց* тук-тук*) և այլն։*

Բայց մի բառ է պահված մեգրելերենում, որը եթե ճիշտ է իմ կողմից առաջարկվում, ապա մեծ պատմական նշանակություն կարող է ունենալ։ Դա p'ap'ala „обрыв, пропасть" *բառն է։ Եթե այստեղ -ala ընդունենք որպես ածանց, ինչպես* boši *«տղա» և* bošala *«երիտասարդություն, քաջություն»,* kazaxi *«գյուղացի, կազակ» և* kazaxala *«առաքինություն» և այլն, այն ժամանակ այդ* p'ap'- *արմատը ևս կկապակցվի մեր փամբ (փամփ) լեռան անվան հետ, որից Փամբակ, հետո Փամբչին գյուղանվան հետ, որը գտնվում է Բադիշի ձորի լանջի վրա, խոսխոսներն* pab- *«սար, լեռ», որից հատուկ անուն* Papḫi *կամ* Pab-hi *«լեռնային», ուրարտ.*

baba *տատ, լեռ, հարց պամպ (Մ. Ուռհայեցու մոտ) բարձր տեղ, բարա (Երեմիա Մեղրեցու բառարանում) բլուրը, ափափայ դժվար և ապառաժ տեղերը: Մեգրելերեն* p'ap'-ala *իրոք նշանակելու է բնակավայրեր, ապառաժոտ բլուրներ, այսինքն ասած տարբեր (լեռան) հատկություններ: Այդ* p'ap'- *բառի մուտքը արևմտյան վրացաստան կարող էր լինել կամ հին հայերի միջոցով և կամ այն խալդերի (ուրարտական ցեղերի) միջոցով, որոնք* xaldai- *անվան տակ անդամակցեցին լաղերի մոտ՝ Ծանիկա < Ճանիկա (Խալդիա): Այս պատմական երևույթի հետ ըստ իս պետք կապակցել մեգրելական երկու լեռնդնների մեջ Ճացած ուրարտա-խաուխիտական անունները: Մեկը* Ant'ari-žina *աստվածանունն է, որի հիշատակը մեգրելները կատարում են Մեծ Պասի սկսվելուց նախորդ օրը, ընթրիքի ժամանակ, առնելով հատուկ պատրաստված հաց, մեջը դրված կոնաձև պանրուկ: Տան տերը, որին ընկնում է հացի այդ պանրավոր մասը, աղոթք է անում հացը կտրելուց և բաժանելուց հետո և խնդրում է այդ* Ant'ari-žini-*ին, որ նա շատացնի անասունների քանակը: Ի. Կիպշիձեն, բերելով այդ լեռնդնի իր մանրամասնություններով* (Грам. иверс. яз., 194—195), *ցանկանում է այդ անունը առաջարանել արխազական* alt'ari „бог, покровитель скота и хуторского хозяйства" *թեպետ ի նկատի ունի և արխ.* ança, ançwa *տատ: Բայց նա ըստ իս իզուր է խմաստավորում այդ միանձնական* Ant'ari-žini-*ն, որ բերված է* Сборник материалов по описании племен и местностей Кавказа, *հատոր XXXII, բաժ. III, էջ 99—100, և դասավորում* žini Ant'ari *իբրև մեգրելական* žini *«վերին, երկնային», որը սովորաբար սկզբում է դրվում (համեմատել* žini boria *«վերին քամի», žiniši ort'a «վերին օրթա»,* žino-sk'ua *«աղնվականաց»,* žin-malu *«վերև թռչող ուրուր»): Պետք չէ վերադասավորել և խմաստավորել: Այդ տեսակետից ևս այդ* Ant'ari-žina-*ն կհամեմատվի աստվածական աղբյուրներում բերված մի անվանապրի* (эпоним) *հետ, որ ապրում էր Ադադ-Ներարի I ժամանակ (1310—1280) և կոչվում էր* Andari-sini. *Ծան Սոդենը այդ անունը համարում է հնդիրանական և տեսնում է հընդկական* Indra-sena *անվան մեջ: Սրա առաջին մասը պետք է տեսնել ըստ իս ուրարտական* Andaria *անվան մեջ, որ կատարում էր Շամպրիա (Տիգրանակերտի) շրջանը Ասորբանիպալի ժամանակ (VII դարի վերջը), թողած դեռ խաուխիտական* Antar-ati *(կա և* Antar-atli*),* Antare *ալրանուններըը, իսկ երկրորդ* žini *մասը, որ գրվում է, պետք է տեսնել մի շարք խաուխիտական և ուրար-*

տական անուններին մեջ -şina (-şini), -sina, -zina (zini), -zana (-zani) մասով, ինչպես խուռիտական անուններն են (Նուզիից)— Paişina, Paizana, Purnazini, Bir(i)azina, Uttazina, Ambizina և այլն։ Ուրարտական մի արձանագրության մեջ հիշվում է էթիունի երկրի (= Արարատ. նահանգ) Diuşini թագավորությունը (H. Mapp и H. Орбели, Археол. эксп., 1916 г. в Ван, стр. 47, II այունակ, տող 51)։ Այդ -şina ‖ -şini կամ -zina ‖ -zini մասը անշուշտ հնչվել է -žina ‖ -zini, որովհետև բևեռագիրը չի տալիս ž հնչյունը և այդ արտահայտում է ş, z և մինչև իսկ s գրությամբ (E. Speiser-ը առաջարկում է գրել z̄), իսկ ճիշտ այդ հնչումը բուն իսկ պետք է տանել Antari-sina, այսինքն՝ մեզր. Ant'ari-žina աստվածանվան և հայոց Արաժին Aražin (անդանուն է) նմանապես աստվածանվան մեջ։ Հիշած Pai-şina, Andari-sina և Diuşini այրանունների առաջին կոմպոնենտները նույնպես աստվածանուններ են. -Pai (պալ. պայկ „փառ, պար"), Andar= հնդկական Indra ավեստ. Andra, որը Գ. Կրևչմերը ցանկանում է փոխառություն համարել խեթ, Inara աստվածանունից, որը նույնպես դիմաստան («վիշապաքաղ») էր. իսկ էթիունյան թագավոր Diu-şini-ն (Իգանյան, Իգանիի որդի) նույնպես պարունակում է աստվածակիր (թևոփոր) կազմություն, ուր diu- մասը հավանորեն է հնդկական dēv «աստված» (իրաներենում՝ դև «չար աստված»)։

Մյուս մեղրելական լեգենդը, որ արտացոլում է նման ուրարտական ներդրում, դա Aram-xutu կամ Eram-xutu հերոսի մասին է, որ կարդում ենք նույնպես Ի. Կիպշիձեի մոտ (էջ 196), քաղած պրոֆ. Ցագարելու „Мингрельские этюды" (I, 72) և վերոհիշյալ Сборник-ից (XVIII, отд. III, էջեր 49—58)։ Այդ հերոսհսկան հայտնի է դառնում իր խիզախ հարձակումներով Ջվար պյուդի վրա (Ջուգդիդիի գավառակում), բայց ի վերջո հաղթվում է ջվարցիների կողմից, որոնց օգնում են սուրբ Գևորգի և սուրբ Կիվիրկեի (—Կիրակոս) պատկերները՝ իկոնաները, որ նույն տիպիկ էին։

Այդ Արամխուտուի գլուխը և զենքերը մատուցվում են սրբերի պատկերներին, մանավորապես և նրա մի հսկա մահակը երկաթե գլխով, որը իբր հիմա էլ գտնվում է ս. Գևորգի տեղական նկեղեցում, բայց իրոք դա մի սովորական մահակ է, որ հետևները մատն են ածում լեռնականները։ Արամ-խուտուն համարվում է կամ պաեն (հյուսիսային Կովկասի կարաչայ-բալկար), կամ չերկեզ-կաբարդացի և կամ արխազ (ibid.)։ Մեղրելերենում կամ խեռու կամ

խուտու ալրանուն և խնտուշմուխուի կամ Նուտուշ-Մախուի անունով գյուղ Սամուրդականի շրջանում (Ib., 400)։ Բայց արդյոք այդ xutu-ն ուրարտերեն ḫuṭu բառը չէ, որ նշանակել է «քաջ» (տե՛ս, օրինակ, Արդիշտիի խորխորյան արձ. VII, տողեր 15—16)։ «Մարդը ինձ տղամարդություն UŠ = ZLKARU „мужество“ (արվից, և քաջություն և ուժ)։ Այդ ḫu-ṭutubi բառի արմատը կա Ḫuṭuini աստվածանվան մեջ, ինչպես խեթական inara— նշանակում է թե՛ «քաջություն, արիություն», թե՛ այդ իմաստով աստվածանուն է (—աստղ. KAL) և թե՛ ալրանուն է։ Իսկ Aram անունը թևրևս ուրարտական հայտնի Arame թագավորի անունն է (IX դար), որ այդքան քաջություններ է արել նաև հայոց ավանդություններում (ըստ Մ. Խորենացու)։ Պետք է ենթադրել, որ ուրարտական պետության այլևայլ ցեղեր այդ թագավորի, ինչպես և Ասա-Շամիրամի շուրջը ստեղծել էին բազմաթիվ զրույցներ, և հավանորեն այդ ցեղերի մի քանիսի միջոցով նման պատմություն անցել է Սև ծովի ափերին գտնվող վրացական որոշ ցեղերին կամ ժողովուրդներին, որոնք հետագայում փոխելով ու փոփոխելով այն ըստ պատմական իրադրության, կապել են արդեն քրիստոնեական շրջանի և շրջակա ժողովուրդների հետ (ալան, չերքեզ, Քրխազ), սակայն հիմնականում պահելով անունները —Aram-xuṭu «Արամ քաջ» և Antari-sina «Անդար աստված» (?)։

* * *

Ի վերջո ավելորդ չեմ համարում, բացի վերոհիշյալ բառային ընդհանրություններից, ընդգծել և մի քանի քերականական ազերասակցություններ, որ հատկապես հատուկ է հայերենին և լազո-մեգրելականին, թեպետ ընդհանրապես պիտի շեշտել, որ ձևաբանական կառուցվածքը հայերենի և վրացական ողջ լեզվախմբի միջև բավական տարբեր է և՛ արտացոլում է այլ լեզվամտածական կացություն, մանավանդ բայերի սեռերի տարբեր ըմբռնումով, և այդ առանձնահատկությունների ձևակերպումով բայի գործածությունը ոչ միայն դիմավոր տարրերի մասնիկներով է, որ տարբերական է լեզուներում, այլև օբյեկտի (անմիջական և կողմնակի) վերաբերյալ մասնիկներով, որ դրվում է դիմավոր բայի սկզբում։ Սեռերի (роды) առանձնահատկությունը վրաց լեզուները և հայերենը մոտ են իրար, եթե չհաշվենք m նախամասնիկի մեռած դրությունը, որ անուններին մեջ մարդիկ է ցույց տալ և գալիս է վրացերենի կող-

կապան սուբստրատից, ինչպես ցույց է տվել առաջին անգամ ակադ. Ի. Ջավախիշվիլին, և այժմ ընդունված է վրացագիտների կողմից։ Թևրևա իրերի և կենդանիների անուններուի մեջ ևս միացած լինի նման մնռած սեռանիշ։

Հայոց լեզվում, որ այդքան մոտ կողմեր ունի լադո-մեդրելական հետ, և քանի որ ավելի հին ձևով է միացել (V դարից) գրավոր միաստաիքներում, երբևիե կարող է տալ լեզվական իրականիյունների ամենափոքր վկայում, որ չի պահել այդ լադո-մեդրելական խումբը։ Օրինակ, այդ լեզուներում տեսնում ենք j>ž, ինչպես ori> juri>žuri «երկու», Jordania>Žordania, Jakobia>Žakobia և այլն։ Մասը այդ հնչյունափոխությունը երևի նկատի ուներ, որ առաջարկում էր հայոց յոլով «շատ» և ժողով բառերի ազգակցությունը։ Թնական պետք է ընդգծել, որ jolov ձևը չի վկայված լազերենում կամ մեգրելերենում, որ կարող էր և չլինել և հատուկ լինել միայն Փոքր և Բարձր Հայքի (Հայասայի) հայ լեզուներին։

Եթե խոսենք ձևաբանության մասին, ապա պետք ևս պատմական որոշ կոնկրետությամբ պետք է ցույցերկել, նկատի ունենալով ոչ միայն հայկական և լադո-մեդրելական տվյալները տվյալ պահ կամ այն ժամանակում, այլև ավելի ընդարձակ «լեզվաընտանիք»։ Օրինակ, մեգրելերենում գործիական հոլովի վերջավորություններ -t' -t'i (լազերենում՝ -t'e) հանդիպում է սեռական -ši (կամ -še) ձևից, „путем тупого подъема... š в t'" (Кипш., 022—023, տե՛ս նաև Н. Марр, Грам. чан. яз., § 16, в. „тупым подъемом согласного š в t' род. п. še дифференцирован в t' и использован в качестве твор. падежа)։ Իհարկե նույն ձևով է բացատրվում նաև քարթվելական գործիական հոլովի -it' վերջավորությունը։ Բայց չէ որ կա բևեռային խմբերենում նույն գործիականը -it հոլովաձևով, ինչպես և հիերոգլիֆ խեթերենում -ta („Abl.-Instr.")[1] նույն հոլովաձևը, որ հնդեվրոպագիտներից ոմանք ցանկանում են նախալեզվի -ot բացառականի ձևից հանել (լատ. od, սանս. -at)։ Վրացերենում գործիական այդ -it' ձևը (=մեգր. -t', -ti, լազ. -t'e) մի ժամանակ նաև բացառականի իմաստ էլ է արտահայտել՝ օր. ավետարանում՝ k'alak'it'a k'alakad «ի քաղաքէ ի քաղաք», ինչպես և հայոց որոշ բարբառների (գրական լեզվի նույնպես) -y վերջավորությունը, որ առաջացել է «ի»-ից (հորից, հնից, մանկից...)։ Ուրիշ -l'i ‖ t' վերջավորությունը խեթերենում (բևեռա-

[1] Տե՛ս I. Gelb, Hittite hieroglyphs, III, 1942, Chicago, էջ 41.

դիր և հիերոգլիֆ) վրացերենում և լազո-մեգրելականում, ինչպես նաև հայոց որոշ բարբառներում («ց» —հոգուց, քարից) ցույց են տալիս, որ որոշ տարածութ֊յան մեջ բնակվող ցեղերի լեզվում եղել է այդ t՝ մորֆեմայով գործիական-բացառական (կամ բաց.-դործ.) միասնական հոլովաձև, ինչպես ունենք լատիներենում մի Ablativus և Instrumentalis հոլովաձև:

Փոքրասիական հին լեզուների այս կապակցութ֊յան մեջ թերևս պետք է ծագումնաբանորեն դիտել և մեգրելական ներկա դերբայի -enǰ ‖ -end վերջամասնիկը, ինչպես lur- «քնել» բայից lurenǰi «քնած» (спящий, Кипш., 274), ma- նախածանցով և -enǰi, ինչպես r «պոլութ֊յուն ունենալ, կալ» արմատից՝ ma-r-enǰ-i «էական, գտնվող» („спящий, находящийся"): Ներհերենում հայտնի է ներկա դերբայի -anza ‖ -anda, որ չեզոք բնույթի ունի կամ կրավորական: Բայց մեգրելականում ունենք նաև -inǰa ‖ -inda, օրինակ, šk'urinǰa ‖ šk'urinda «վախկոտ», čk'orinǰa «բարկացկոտ» և այլն:

Մեզ այստեղ հետաքրքրում է լազո-մեգրելական ձևաբանութ֊յան պղպեցութ֊յունը հայերենի վրա, որ բնականորեն թևքման մեջ ի հայտ չէր գա, բայց բառակազմութ֊յան մեջ հնարավոր էր, քանի որ լեզուների փոխհարաբերութ֊յան խնդրում լեքսիկալից հետո բառակազմութ֊յունն է իր ածանցներով ներթարկվում փոխվելուն և լուբացմանը:

Այս կողմից ևս կմատնանշեի հայոց -ար կամ -եր մասնիկը, որ հատկացում է ցույց տալիս, բայց բարդված (հավելացած) ուրիշ ածանցներով՝ -էն (-en) և -իմ (-im), ինչպես հայերեն, հունարեն... մոերիմ, հաւատարիմ, իսկ -էն և -իմ մասնիկները առանձին տեսնում ենք նաև -կանաչ-եղ-էն, լուսնդէն..., ուշիմ, խոհեմ և նմաններին մեջ: Համեմատել լազ. noγ-ar-i՝ «քաղաքային, քաղաքցի, վաճառական» (noγa «քաղաք, շուկա»), pulera «համպալինը», (pula Աթինայում և Վիծում «Համպ»), žangeri «ժանդոտ» (žangi «ժանդ»), šoleri «թուջած» (šol- «թուջել») և այլն:

Հայերենում փոխառութ֊յուն պիտի համարել -ի մասնիկը, ինչպես լայնշի, բոլորշի և այլն, ի նկատի ունենալով մեգր. p'ar-t'aše «լայնշի, ազատորեն» (широко, раскрыто, настежь). dγoši «օրինակ» (dγa «օր»), xološi («մոտավոր, մոտիկ»), (близкий, xolo «բառից»)... լազ. ordoši «առավոտյան» (ordo «առավոտ» բառից), որը թևրևս կա հայոց վաղորդայն «վաղ առավոտ» բառի մեջ -այն

ածանցով, ինչպես որով -այն գոյականի մեջ. seriši „ночной" xeši «ձեռնային, խոհուն» (xe «ձեռք») և այլ և այլն:

Մեգրելերենում կա բայից կազմվող անվան կազմության -u ածանցով, ինչպես dgum-u «դնող» (ставящий), k'ot'am-u «գգող, նետաձիգ» (бросающий стрелок), տե՛ս Кипшидзе-ի մոտ, էջ 94, որոնց հետ անմիջապես համընկնում է հայոց՝ հատու, հոգաբարձու, հատու, ազդու և այլ նմանները: Ըստ այդ ձևը լազերենում: Իրժվար է հայոց ձևը համարել փոխառության, իր պրոդուկտիվ տեսակետից, որ այսօր էլ գեռ ներգործուն է:

Բայց հայոց համշենի բարբառը գործ է ածում այդ բայի անորոշ ձևի -ուշ վերջավորությունը, ինչպես ուտուշ «ուտել», խմուշ «խմել» և այլն: Մեգրելերենը ունի -uša նույն ձևը supinum-ի համար, ինչպես Ի. Կիպշիձեն է ասում (էջեր 095—096), օրինակ, o-t'as-uša „для посева, чтобы посеять", mi-o-zadap'-uša „чтобы встретить, навстречу" և այլն, որը կարող է փոխարինվել -alo ձևով (o-čar-alo „чтобы писать, для писания" miozadap'ulo" на встречу, чтобы встретить"):

Մեգրելական այդ -uša (՝ -alo) հավասար է մեր արմատական -ելու, -ալու (ուտելու, կարդալու), որ առացվել է հին -ելոյ, -ալոյ դերբայական ձևից (տրակ. հոլ. անորոշից): Ինչպես դիտենք, համշենցիները ապրում էին Ճորոխի հովտում և հետևապես բաժանված էին մեգրելներից Աջարիայով և Թուրքիայով, որոնցից հյուսիս են ապրում միայն մեգրելները (Սամուրզականի և Զուգդիդի, ինչպես Սենակի շրջաններում), բայց հայոց այդ բարբառի -ուշ վերջավորությունը կամ վկայում է այն պատմական իրադրության, երբ մեգրելները և լազերը դեռ չէին անջատված և կամ այն, որ մեգրելական այդ -uša ձևը հատուկ է եղել և լազերին, որոնք այժմ չեն գործածում, բայց մի՛ժամանակ ունեցել են և հայերը, նրանցից փոխ են առել:

Ես արդեն խոսել եմ մեր բարբառների կու մասնիկի մասին, որը առնվում է սահմանական եղանակի ներկա և անցյալի անկատար և կամ պայմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակները փոխ առնված լինելով լազական լեզվից, թեպետ ապառնի պետք է մատնանշել, որ դա (oko > ko «պիտի») ընդհանուր լազո-մեգրելական եղանակիչ է: Համեմատել նաև մեգրելական պայմանական եղանակը (условное наклонение) ապրիտից կամ անցյալ անկատարից այդ ko-ի հավելմամբ վերջից -b-čari-ko „чтобы я писал, если бы я писал" (2 դ. čari-ko, 3 դ. čaru-ko

և այլն) կամ b-čarundi-ko, čarundi-ko և այլն (Кипшидзе, էջ 068—069, § 78)։ Նշանակալից է, որ ko մասնիկի գործածությունը կա արևմտյան լազերենում (Աթինա և Վիծե-Արխավա ենթաբարբառներում) և միգրելերենում, իսկ դրանց միջև ընկած Հոպևի բարբառում ապառնին առնդծվում է բայաձևին ավելացնելով minoŋ «ցանկանում եմ», ginoŋ «ցանկանում եսս», unoŋ «ցանկանում է»։

Նմանապես մեր «անկատար դերբայի» -ում վերջավորությունը, որը համապատասխանում է ներգոտական հոլովի ձև („um" բարբառներում), համընկնում է ճանապարհ (լազական) նման ձևին -b-čar-um, čar-um, čar-um-s և այլն, որը (-um) այլ ձևափոխություններով (-up' -ob և այլն) հատուկ է ողջ քարթվելական լեզվախմբին։ Ինձ թվում է, որ ճիշտ է ակադ. Ա. Շանիձեի տեսակետը, ըստ որի նոր հայերենի ածդ -ում մասնիկը սերում է լազո-մեգրելական լեզուներից։

Վերջապես պիտի ընդգծել և բարդ բառերի կազմության նըմանությունները լազո-մեգրելական լեզուների և հայերենի մեջ։ Օրինակ, լազ. ունենք cianuri-mianuri „давний, предавний", որ հիշեցնում է մեր հաց-մաց, խճճվել-մճճվել և այլն. կամ լազ. mǰveši-mǰvuši „древний, предревний", որ ձևափոխությամբ նման է մեր մանր-մունր, խառն-խուռն և նման կազմություններին, ուր արմատի ձայնավորն է տարաբնականում։ Իհարկե կան և տարբերություններ կրկնավորների կոմպոնենտների ձևափոխությունների մեջ, որոնց քննությունը այստեղ տեղին չէ։

Որպես եզրակացություն կարելի է ասել, որ փաստ է հայոց լեզվի, թե՛ դրաբարի և թե՛ բարբառների, սերտ առնչակցությունը լազո-մեգրելական լեզվախմբի հետ, և այդ արտացոլում է թե՛ տարբեր ժամանակաշրջաններ, որ պետք է ավելի կոնկրետավորվի, և թե՛ ապացուցում է, որ հայացման պրոցեսում, ինչպես մասամբ և հետո, հայկական ցեղաֆերմենտները (hala, azzi, bala...) հմնական կերպով առնչակցվել և խառնվել ու ներթափանցվել են վրացական այդ արևմտյան ցեղերի ու լեզուների հետ։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՂԵՐՍԸ ԽՈՒԿԻԻ ԵՎ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՀԵՏ

*Արդեն քանիցս նշվել է, որ Հայասա-Ազզի ցեղերը, կիմմերների ասպատակութիւնների հետևանքով, ստիպված էին մեծ մասամբ թողնել իրենց վաղեմի բնօրրանն՝ վերին Եփրատի (Կարասաի) շրջանները, որոնք հետագայում մտնում էին Փոքր և Բարձր Հայքերի մեջ: Այդ ցեղերը միացած հայոնի բալայցիների հետ, որոնք հայասացիներից արևմուտք էին, գաղթեցին Արաքսի հովտով դեպի արևելք և Եփրատի հովտով դեպի հարավ մինչև Արածանիի սկզբին հոսանքը և այնուհետև դեպի հին հայոց Տարութերան—Աղձնիքը, տարածվելով Տիգրիսի վերին հոսանքի վտակների ավազանում: Այդ վերջին տեղումն էին գտնվում բնևատիբ ազրյուրների Արիմե (—հայոց Անգեղ տուն) և Շուպրիա (արժմյան Մուֆարկին—Տիգրանակերտ) երկրները: Ասսուրական ազրյուրների բազմաթիվ վկայութիւններով դրանք միշտ միասին էին հանդես գալիս և դիմադրում ու երբեմն էլ դաշնակցում էին ասորեստանցիներին, ինչպես Անգարիայի ժամանակ, որ ապստամբել էր Ասսուրբանիպալի դեմ: Դիտական արդի հետազոտութիւններով ընդունված է, որ այդ տեղերը, ընդհուպ մինչև վանի լճի հարավային լեռնաստանը, կազմում էին խուռխո-ասորիների վերջին բնակավայրը, ուր դեռ VIII դարում խոսվում էր այդ լեզվով և դեռ լիովին չէին ձուլվել սեմիտների կազմից: Արիմե կամ Արմե հետագայում հայոնի է դառնում Բեհիստունի պարսից արձանագրութեան մեջ Armina անունով նոր -ina տեղանուն կազմող ածանցով, ինչպես ասացվեցին Ḫatina, Naharina, Urartina (կամ Urrar-

tina), Nasibina (Մծբին) և այլն։ Հայասցիները, որ բռնել էին Ar(i)me >Armina և Šupria խուռիների այդ նախկին երկրամասերը, VII—VI դարերի ընթացքում քաղաքականորեն արդեն այդ արիմ խուռիների և կազմալուծված Ուրարտուի դերն էին ստանձնել և պարսիկ մեդացիների կողմից իրենց հայտնի Արմինայի ժողովուրդն էին հաշվվում, ինչպես ասուրաբաբելացիների նույն ժամանակվա հորջորջմամբ դրանք էլի նախկին իրենց ծանոթ ուրարտացիքն էին, այսինքն՝ բռնել էին Ուրարտու պետության քաղաքական տերը։ Պետք է ենթադրել, որ Տիգրիսի այդ վերին հոսանքում բնակած և լեռներով պաշտպանված տարածութիւնները, ի մեջ առյալ Թերևս և Տարոնը, խոսում էին խուռիտական դեռ մնացած բարբառներով (VII—VI դարերում), իսկ Մուքդում իշխում էր խեթերինը, գոնե VIII դարում, դատելով ուրարտական արձանագրութիւններից։ Ենթերն ևս այդ ժամանակ սկսել էին «ապազգայնանալ», կորցնելով իրենց լեզուն և անհետանալով որպես ժողովուրդ չորրորդ դարում (մեր էրայից առաջ)։ Էթնիկորեն այդ ամբողջ շրջանում, սկսած Մուքդից (խեթական նախկին տիրութի) և վերջացնելով Անդեպատան (Armina) և Սղերդի—Մոփարկինի մարզերը, ուր դեռ մնացել էին շուբարի-խուռիները, ամենաուժեղ տարրը հանդիսացան նկատի հայա-բալալցիները, որոնք և ենթարկեցին ու ձուլեցին այդ արդեն թուլացած ժողովուրդներին ու ցեղերին։ Հալ ժողովրդի էթնիկական և լեզվի հիմնական ֆորմացիան (կտրիճը) այդ կերպ է եղել, վերջանալով երրորդ դարում, երբ հայերը յուրացրին ողջ Ուրարտուի և շրջակա երկրների որոշ տարածութիւնները, որոնք հայացվեցին։ Ամենաուժեղ էթնիկական լեզուները այդ ամբողջի մեջ բնականաբար պետք է լինեին խուռիներինը և նրան մոտամբ ազդակից ուրարտերինը։ Այդ տեսակետից մենք այսուհետ պետք է հնարավորին չափ ի հայտ բերենք լեզվական այն տարրերը, որոնք այդ լեզուներից մտել են հայոց լեզվի մեջ, թե՛ դրաբարի և թե՛ բարբառներին։ Եվ այդ տեսակետից մեծ հետաքրքրութիւն և պատմական արժեք են ստանում մանավանդ այն լեզվական հանդիպումները, որ դուգադիպում են տեղական հայ բարբառների և հին նույն տեղի խուռիտական և ուրարտական լեզուներին։ Բայց որովհետև ուրարտական և խուռիտական այդ լեզուների շատ տարրերը (բառեր և ձևեր) մեզ մնում են դեռ անըմբռնելի, ուստի ստորև բերվող մեր այս լեզվական համեմատական ուսումնասիրութիւնը հարկավ կլինի շատ թերի։

Յուսի լեզվից արժի նշանակալից քանակով վկայություններ ունենք, ինչպես 1887 թ. Եգիպտոսի Թել էլ-Ամարնա գյուղում (Նախկին ոստանը Փարաւոն Ամենհոտեպ IV-ի) հայտնաբերված թագավորական արխիվի (338 փաստաթուղթ) մեջ Միտաննի պետության թագավոր Ծուշրատտայի հաշվակավոր նամակը գրած Ամենհոտեպ III-ին: Այս նամակը, որ խուռիներեն է և պարունակում է 496 տող (սկզբի 7 տողը, որպես հանդիսավոր ողջույն, գրված է ակկադերեն), մինչև հիմա էլ ամենակարևորն է ցարմ հայտնաբերված խուռիտական բոլոր փաստաթղթերում և գրված է ժողովրդական պարզ լեզվով: Բողազ-քյոյ գյուղի (հին Հուտտուսա քաղաքը) խեթական թագավորների արխիվում ևս հայտնաբերված են խուռիտական բնեռագիր արձանագրություններ, ընդհանուր քանակով մոտ հազար տող, որոնք լեզվով և ժամանակով մոտ են Միտաննիի նամակին, բայց ոչ նույնը, և մեծ մասամբ ծիսական-դիցաբանական բնույթ են կրում, բացի Գիլգամեշի էպոսի թարգմանության պատառիկից: Ինչ են օգնում այդ բնագրերի հասկացմանը Ռաս-Շամբրայում վերջերս գտնված բաղմաթվանագիր բնեռագիր ոտանավորները, որոնցից գլխավորն ունի 62 տող (17 պարագրաֆի վերածված), իրրև կոչ աստվածներին, չհաշված առանձին մի թերթ աստվածանուններով: Այդ Ռաս-Շամբրայում (հին Ուգարիտ, հյուսիսային Սիրիա) գտնվել է և սումերա-խուռիտական բառարան (135 բառերի թարգմանություն, բայց մասամբ եղծված), որը ավելի է նպաստում խուռիտերենի վերծանման առաջընթացին, թեպետ ընդունվում է, որ այդ խուռիտերենը մի առանձին բարբառ է եղել: Վերջապես հին Մարի երկրամասում, այսինքն՝ այժմյան Թել-Հարիրի շրջանում, ուր Յարուր վտակը թափվում է Եփրատ, գտնված են խուռիտական շուրջ բնեռագիր արձանագրություններ, որոնք Համմուրապիի ժամանակաշրջանից են և կրոնական բնույթ են կրում:

Գիտնականներից շատ-շատերը նշում են նախ, որ կրոնական բնույթի արձանագրությունների լեզուն ինքնատիպ և առանձին բառեր ու ոճեր ունեն, այնինչ սումերա-խուռիտական բառարանը առանձնապես շեշտում է իրավական և տնտեսական տերմիններ. երկրորդ, որ այդ տեղերի լեզուն, ինչպես և Նուզիում (Քերքուկի մոտ) գտնված ակկադական բնագրերի խուռիտական հատուկ անունները, կրում են տարբեր բարբառների բնույթ,— մի բան, որ բնդ-

գծվում է նաև «սուբար» («շուբար») և «խուռի» տերմիններին գնահատման ժամանակ։ Եվ իրոք, ի՞նչպես կարող էր մի լեզու լինել այն հսկա տարածության մեջ, որը ընդգրկում էր հյուսիսային Միջագետքը, Սիրիան, Հայաստանի հարավը, Թևրևս Կիլիկիան։ Երկարատև քաղաքական միաձուլ գոյությունն ևս չկարողացան ստեղծել այդ սուբարի-խուռիների, նեթե չհաշվենք կարճատև Միտաննին (1400—1200)։ Այդ տեսակետից հայոց լեզվի աղերսը պիտի լիներ հյուսիսային խուռիականների հետ, որ մոտ էր Արմինա և Շուպրիա երկրամասերին, իսկ հայերին հենց այդտեղ են տասնյին անգամ հանդիպել նրանք, ինչպես հաստատում են նաև հուշարձանները, Թողած Փոքր Հայքը (resp. Ակիլիսենին)։

Այժմ տեսնենք թե որքան հասարակ և հասուկ անուններ ունեն հայերը, ժառանգած այդ շուբար-խուռիներից։

1. ašt «կին» (женщина—жена), սովորածական բառարմատ է զանազան բնորոշ և ածանցյալ ձևերով բոլոր խուռիական տարբերակներում (բարբառներում), ինչպես ašta, որից հետևյալ անձնանունները՝ Aštaḫuta, Aštaqanza, Aštakina և այլն նոդիում, aštu- կամ ašdu ածանցավոր aštuḫ(ḫ)i ‖ ašduḫ(h)i «կանացի», իգական բառի մեջ, aštuzzi—հազուստի տեսակ է, կանանց հասուկ անունների մեջ, ինչպես Ašdu, Ašduanti, Aštuatana, Ašduašar և այլն. ašti կամ ašte բունը ուղղականում aštiš, հայց. հոլովաձևում aštin և այլն, ինչպես և կանանց անձնանուններիմեջ —Ašte, Ašten, Ašdallia և այլն։ Համեմատել հայոց ասա-ել «ամուսնության համար նշանած ընտրել, աղջիկ ուզել» (մեկ անգամ գործածված Տիմոթեոս Կուզի «կնիք հաւատոց», էջ 168), որից ասող «աղջիկ ուզող, նշանած, փեսացու» (մեկ անգամ, անդ էջ 283), ինչպես ռուսերեն ունենք жена բառից жениться (=առնել) և жених (ասող)։ Տիմոթեոս Կուզի հայ թարգմանիչը անշուշտ Հայաստանի հարավից է եղել, որտեղ և պահպանվել է այդ թանկագին խուռիական ծագումով բառը։ Այդ բառը բերում է Հ. Աճառյանը (Արմ. բ., I, 566—567), որը սխալ կերպով առլիս է և Առձ. բառարանը «հասուկ—նշանվիլ աղջկան»։

2. pap- կամ pab- «լեռ, սար», որից ածանցավոր papni և papaḫḫe «լեռնային» նաև «արևելյան», որը և աշխարհագրական անուն է դարձել Papanḫe (Babanḫe), որպես երկրանուն։ Կան և արական անձնանուններ—Parante (Babante), Ar-baba «նվիրյալ լեռան», Ari(p)-parni (id. ?), Tatip-papni, Zilip-papni..., իգական անձնանուն Papaia։ Ցոհաննես Ծրիպրիխը այդ խուռիական

pap «լեռ, սար» բառի հետ համեմատում է նրան ազգակից արարատական babani «լեռնային», որը ածանցական է պարզ bab(a) արմատից և որը տալիս է ի միջի այլոց ներմիա Մեղրեցու բառարանը՝ բարա «բլուր», խուռիտական pap-ին ևս կից նաև ափափա «դժվարամատչելի լեռնային ժայռեր», որը, ինչպես տեսնում ենք իր վերջին «ա»-ով սիրիական տեսք ունի։ Նմանապես մենք տեսնենք Բիթլիսի կիրճի լանջի վրա Փապշէն դյուղանունը, որը շեշտում է փապ կամ փափ բառի նաև «գառիվայր» իմաստաստաբրեբակը։ Նույն այդ արմատին են պատկանում Փամփ լեռնանունը (որից Փամբակի ձոր) և Փապակ անձնանունը։ Թերևս կապ ունենա նաև փապ կամ փապար «ճնդղ ժայռերի մեջ»։ Տես վերը միգրելական p'ap'ala գառիվայր, обрыв բառի մասին։

3. *Sarri* կամ šarri «ժառա», որ գրվում է երկու նշաններով՝ šar (sar) և ri. Թեպետ կա և պարզ sar (šar), ինչպես և sar-ra (šar-ra) և sar-ru (šar-ru)։ Արտաքուստ հնչյուններով համընկնում է ակկադական šar-ru «թագավոր» բառին, որի հետ և շփոթվել է։ Ըստ իս խուռիտական այդ sarri (‖ sarra) բառի «ժառա» նշանակությունը արդարանում է ոչ միայն սումերա-խուռիտական nam. gar. ra=sar-ri համեմատությամբ, որ բերվում է Թաս-Շամրալի վերոհիշյալ բառարանում (III, 31), և նշվել է նաև արիշների կողմից (A. Götze, Die Annalen des Muršilš, Leipzig, 1933, էջ 228), այլև այդ բառի առկայությամբ հայերի և վրացիների մոտ, թագավոր դեռ այլ հանգամանքներ, մասնավորապես կրոնա-դաղափարական հին մտայնություններ։ Նախ, իմաստի տեսակետից պետք է ասել, որ սում. nam. gar. ra բառը այլուր փոխարինված է nam. ri կամ nam, ra ձևով և համապատասխանում է ակկադ. šallatum «նվաճված քաղաքներից տարվող բնակչություններ», թեպետ nam. ra թարգմանում են ոմանք նաև «դերի, տարակ, կոլոն» (տես Götze-ի մոտ նույն տեղում)։ Հետո, իզուր են ոմանք ցանկանում այդ խուռ. šar-ri (šarra) բառը համարել փոխառություն ակկ. šarru «թագավոր» բառից։ Հաճախ է բնորոշիր արձանագրություններում պատահում այսպես ասած «ներբուսածին» արտահայտություն, երբ օտար բառով կամ այդ նույն հնչումը արտահայտող դաղափարագրով են գրում արվյալ վանկը կամ բառը։ Միայլում են նաև խուռիտական այդ բառը փոխառություն չհամարողները (Վայդներ, Դեսսաուա), որոնք ուզում են կապակցել խուռ. šar— «պահանջել, խնդրել» բայի հետ։ Տարօրինակ կլիներ վերջապես, որ սերիատիրական այդ հին աշխարհում գոյություն չունենար «սարուկ» բառը, երբ, օրինակ, այդ սովորա-

կան բառ էր աստւածաբարեխօսների կամ կաստիանների մոտ։ Համեմատել յատկ. ward-u (>urd-u) *ստրուկ»,* wardutu *ստրկութիւն և անձնանուններ*—Waradtašmetu, Waradteia (Waradtešup *անվան կրճատումն է),* Waradkenuni, Waradkubi, Waradduri *(պատուի ծառայ),* Urdidigiat *(«ծառայ Տիգրիսի») և այլն, որոնք դործ են ածել և Նուղիի խուռիտներին. կաստիանների մոտ նուիրական կար* mele *«ստրուկ» բառը, որ նուիրական մտնում է անձնանուններ կազմող բառերի մէջ, ինչպես—* Melešipak=Melemarduk, Melešibarru, Melesah, Melešugab *և այլն, որտեղ* šipak=marduk, šibarru *աստուածանուններ են, նման արաբական Աբդուլլահ, Աբդուլմելիք, Աբդուլմեսիհ և նման կազմութիւններին* abd-u *«ըստ-բուկ բառով։ Այսպես պետք է հասկանալ և խուռիտական անձնանունները—* Šartešup *կամ* Tešupšar *«ստրուկ Տէշուպի»,* Šartilla *կամ* Tillašar *«Տիլլա աստծո ծառան»,* Duršar=*ուրարտ.* Šardur *«ծառա (աստծո) պատիւ» (—տառերի, ինչպես ունենք ակկադ. այրանում* Dur-ili-šu *«նրա աստծո պատը»* wall of his god), Paišar *«Պալ դեմոնի ծառան»,* Enšar *«աստծո ծառա»,* Ewrišarri *«թագաւորի ծառա»,* Aḫlipšar *«իմ* (-ip) *տան ծառան»*[1] *և այլն։ Բողազքոյի խուռիտական բևեռագրերում* (KUB, XXVII, 11) *հիշւում են «հայրական աստւածները»* (DINGIRmeš-našuš [=ennašuš] attannibinašuš) *այսինքն՝ այն աստւածները, որ մեր հայրերն են պաշտել (տող 9), բայց նաև «ծառաւթական» (=ծառանների) և «թագաւորական (թագաւորների) Տէշուպ աստւածը» (տողեր 14—15—* dU-aš šarraššihinibiniš ebriššiḫinibiniš), *ինչպես և ընդհանրապես (տող 18) ծառանների և «թագաւորների» (=տերերի) կողմից պաշտւող աստւածները։ Տուշրատտայի նամակի* zarra *բառը (I կոլոննա, տող 89) պիտի հասկանալ կամ «ծառա» կամ «ծառայի»* (zar-) *հետ (-ra)»*[2]։ *Զաղար-Բաղարում (Մարդինից հարաւ) պեղ-*

---

[1] *Կան և աստնձին խուս.* aḫli *կամ* eḫli *հաստատ բառ (տե՛ս* KUB XXVII *46* i *19′, 25′, 26′,* eḫliannaš, *իսկ* KUB VII 56 i 28′ eḫlita *ուղղագրական հոլովաձևով)։ Ըստ իս այդ բառը հաւանորէն նշանակել է «տուն, վրան», հետո թերևս նաև «տոհմ, ազգ», կամ «ազգ» челядь և ազգակից պիտի լինի մեր* ազխ *(որից ազախին), ամանների* mo-axle *«ազախին», վրաց.* s-axli, *մեգր.* d-oxori *«պալատ», հրեակ.* aḫl *«վրան», արաբ.* ahl *«ազգականները», родня բառերի մէջ։*

[2] *Տուշրատտայի նամակի այդ տեղում ասւում է. «և քո հերայր Նիմմուրիան, եգիպտական թագաւորը, արձան* apli (?) *շինեց և Խեթիների քաղաքը, Շիմիկի աստծո քաղաքը, նկար և Շիմիկիի համար, իր աստծո, իր հոր*

ված ակկադական սրձանագրութիւնների խուռիտական անուններին մէջ ևս šarri բառի š (s) տառի փոխարէն գրված է նաև z, ինչպես և Ուգարիտում գրված 'Ewrzr=սովորական Ewrišarri, Zmg-n-d= սովորական Šimigi-nid «Շիմիգի աստծո համար»։ Այսպիսով տեսնում ենք, որ բացի Նուզիից (Քերքուքից 15 մղոն հարաւ արևմուտք, Յորդան-Քափիա գետի մոտ) և Բողազքյոյից, ուր գրված է šarri (sarri), šarra (sarra) և šar (sar) այլ տեղերում, ինչպես Ջաղար-Բաղարում, Միտաննիում և Ասս-Շամրայում, այսինքն՝ Հայաստանից հարաւ ընկած խուռիտական վայրերում գրված է zarri, zarra և zar, որոնք հնչունափոխութեան պիտի վերադարձվին հայց ձառա բառով, թեպետ սպասելի է նաև *ճառա ձևը, որը պահվել է մեզրևլերենում čori>čkori «սորուկ» ձևով, անցած կամ հայերից (Փոքր Հայքի վրայով) և կամ այդտեղ նկած խալդացիների (խաղտիների միջոցով)։ Համեմատել հայոց զաւակ „дитя“ և ճաւակեր «աղջիկ զաւակ». խարզիր տեղանունը և հայոց խրճիթ, խեթերեն zavall— «հրիչ, դէմ» և հայոց ճիւաղ և այլն։ Հայոց «ճառա» (գրաբարի ճառայ գրութեան վերջին յ տառը իրեն չի արդարացնում) գրութիւնն ու հնչումը կարող էր պահանջել բևեռագիր ոչ միայն zarra, այլև ṣarra, ի նկատի ունենալով ասորա. ṣaḥ= ծով, ասորա. ṣari (zari)=ծառ և այլն։

4. nera «տալդեր կինը», жена деверя“։ Տուշրատտայի նամակի չորրորդ սլունակում (IV, 62) կարդացվում է ne-e-ri-iw-wu-u-la-ān (=nēri-iwwu-la-an) նախադիր «կին» (SAL) որոշչով։ Այդ չի նշանակում, որ nēri— պիտի լինի կնոջ հատուկ անուն, ինչպես որ ասել է J. Fridrich-ը („Kleinasiatische Sprachdenkmäler“, ուր գրված է SALNi-e-ri-iy-yu-û-la-an)։ Նրա հասարակ անուն լինելը մատնանշել է սկզբում Կնուդտոնը, իսկ հետո նաև Յենդենը, Մեսերշմիդտը, Բորկը և ուրիշներ։ Յենդենը այդ nēri-ն թարգմանում էր «հորաքույր» կամ «մօրաքույր» (Tante), իսկ Բորկը հարցականով՝ «ընկերակցուհի, սպասուհի» (Begleiterin, Sklavin). տե՛ս նրա „Mitanni breif“, էջ 96, թեպետ 81-րդ էջի վրա չի թարգմանում, այլ նկարագրում է „für meinenēra-Frauen“. Տուշրատտայի նամակի այդ պարբերութեան մէջ (IV, 58′—68′) ասում է, որ նա իր աղջկանը տվել է կնութեան եգիպտական

համար, նա հասցրեց (доставал)։ Իսկ հայրական տներից բոլոր այդ սրձանիկները (taše), շատ և շատ գնդեցիկ, ծառան (կամ՝ ծառայի հետ) քո կողոր իր երկիրը... այդ սրձանիկը (ֆիգուրան) ուղարկեց...» (տողեր 84—90)։

թագավորին, ինչպես որոշված է նրել (58′—59′), բայց շարունակությունը լավ չի հասկացվում, թեպետ և բնագիրը շատ լավ պահպանվել է: Փիչ բան կարելի է հասկանալ միջտեղից և վերջից: Միջում խոսվում է երկու neri կանանց մասին (62′) և վերջում (65′—68′), որ հիշվում են այդ կանանց անունները՝ Տադուխեպա և Վեդուխիտա, որոնց ուղարկվում է զարդարանք (ըստ Բոլկի՝ azalta zukan «կզարդարեն մանյակով»?): Առաջինը (Տադուխեպան) Տուշրատտալի աղջիկն է և Փարաոնի կինը, իսկ Վեդուխիտան երևի Տուշրատտալի կինն է: Մեղ հետաքրքրող բառի սկիզբը պիտի լինի nēra-, որի „a" ձայնավորը -iwwu «իմ» էնկլիտիկալից կամ դերանվանական վերջածանցից առաջ կորչում է, ինչպես šēna «եղբայր» բառը šeniwwu-š «եղբայրս»: Ոչ մի կասկած, որ nēra- նշանակում է երկու եղբայրների կանայք միմյանց հանդեպ, տալդեր կինը (жена деверя), ինչպես ցույց է տալիս նաւնահանչ և նաւնանիշ հայոց ներ կամ ներ բառը, որը ունի սակայն և մի այլ նշանակություն «ամուսնու մի կինը մյուս կնոջ հանդեպ»: Այս իմ առաջարանությամբ միանգամայն ջուրն է ընկնում հայոց այդ բառի բանի կապակցությունը սանս. yātar, հունարեն enátēr, լատ. janitrix, լիտվական jentere և այլնի հետ, թեպետ Ա. Մեյեն հայոց բառը դնում էր փակագծի մեջ, երբ համեմատում էր այդ հնդեվրոպական բառերի հետ, երևի ինքն էլ չէր հավատում (տես նրա „Introduction"-ի ռուսերեն թարգմանությունը 1911 թ., էջ 333) և 1938 թ. (էջ 392), թեպետ պետք է ասել, որ Հյուբշմանը չէր ընդունում այդ առաջարանությունը (Arm. Gram., 478): Գալով հնդեվրոպարան հայագիտների այդ միաուիաւոր և հնչունաբանորեն ոչ արդարացվող մեկնությանը, ես 1946 թ. (տե՛ս իմ „К происхождению арм. языка", էջ 10, ծան. 1) հարց դրի հայոց ներ բառի առաջարանությունը՝ կապակցել լիկիական ner բառի հետ, որ հարցականով թարգմանվում է «քույր»: Ուրախ եմ, որ խուռիտական nēra բառը դալիս է հաստատելու այդ երևույթի նույն բառերի փոքրասիական ծագումը: Հայոց այժմյան բարբառները ևս այդ «ներ»-ը պահել են, բայց ոչ հյուսիսայինբարբառները, այլ հարավայինն և արևմտյան, ինչպես Ախալցխա, Ախալքալաք, Ալն, Թարթրեղ, Կարին, Համշեն, Նոր-Նախճևան, Պոլիս, Ռումինիայի հայերը, Սեբաստիա, Սուչավա, Տիգրանակերտ, Ալանբեկ, Հաճին, Զեյթուն, Սվեդիա (տես Հ. Աճառյան, Արմ. բառ., V, էջ 94), և հետևապես չեն գործածում այդ «ներ» բառը Տարոնում (Մուշ, Բիթլիս, Բալու...), Վասպուրականում, Գարս-

կահալքում և ամբողջ Անդրկովկասի հայ բարբառները, եթե չհաշվենք Ախալցխան և Ախալքալաքը, որոնց ժողովուրդը, ինչպես նաև Լենինականը Կարինից (Էրզրումից) են գաղթել։

5. ḫind-u «գինդ, серьга»։ Այս խուռիտական բառը, որը նաև հոգնակի է լինում (ḫintena, na- խուռ. հոգնակերտով), գտնվում է ակկադերեն գրված մի նվիրացանկում (Geschenkenliste, опись даров, որ Տուշրատտան ուղարկում է իր քրոջ Տադուխեպային հետ Ամենհոտեպ III եգիպտական թագավորին (տես Knudtzon, Die El-Amarna Tafeln, Leipzig, 1915, որը տպված է Vorderasiatische Bibliothek № 2 սերիայում)։ Այդ ուղարկելիք առարկաները կազմում են իշարկի Տադուխեպային օժիտը, և մեզ հետաքրքրող ḫindu բառը, որ տրված է ակկադական -u վերջավորությամբ, որպես ուղղական հոլով, պատահում է այդ ցուցակագրման երեք անգամ (EA 25, 12′, 31′, 37′)։ Նույնիսկ են նաև zallewa, որը նշանակել է բրոնզից շինած ինչ որ առարկա (տես J. Friedrich, Kleine Beiträge zur churritischen Grammatik, Leipzig, 1933, էջ 3, ծան. 2, Թևրևս ապարանջան (?)։ Ḫindu բառը բերված է հետևյալ կապակցություններով— 4 ḫintena ḫurāṣu (տող 12), 4 ḫirtena ḫurāṣu uḫḫuzu (տող 31) և 4 ḫindu ḫurāṣu (տող 37)։ Ակկ. ḫurāṣu նշանակում է «ոսկի», իսկ uḫḫuzu «ժամկված», իսկ ինչ է նշանակել խուռ. ḫind- բառը։ Սրա թարգմանությունը չի արվում և անտարակույս նա պիտի լինի «գինդ, серьга», որը բնականորեն զույգ թվով պետք է նշվեր («չորս գինդ»), և ոսկով պատած (ḫurāṣu uḫḫuzu), որտեղից՝ ոսկեզօծված։ Հայոց գինդ բառը, որպես նյութական կուլտուրայի հին արևելյան միացորդ, նույնանում է իր ծագմամբ այդ խուռ. ḫind- (=xind) նույնիմաստ բառին, Թևպետ բնաձայնների ḫ նշանը հայերենում անգրագոնում է մեծ մասամբ «խ» հնչյունով (ավելի քիչ «հ»-ով) և միայն երկու դեպքում հայոց «կ»-ով, ինչպես ակկ. ḫubātu «գոփել, թալանել» (ḫabtu «տվար, թալան») և հայոց «կապուտ», ակկ. (և ասոր.) ḫaṣṣinu «տապար, топор» և մեր «կացին»։ Համեմատել նաև խեթերեն ḫand- «հատատանել» և գրաբարում կանգադնել «հատատանված»։ Հնդեվրոպարան հայագետները մեր գինդ բառը հանում են հնդեվրոպական նախալեզվից, ի նկատի ունենալով սանս. vandhura «կառքի բունը», ասվրբ. ueṇdo «դարձած, շրջած», հին բարձր գերմ. uuindinga— կանանց մի զարդարանք է, գերմ. wenden «շրջել»։ Այսպես առաջարկեց առաջին անգամ Լիդենը (Armenische Studien, 5—7), հանելով այդ բոլոր հնդեվրոպական բառերը «կլոր»

դաղափարից, որը պաշտպանվում է Աճառյանի կողմից (տես նրա Արմ. բ., I)։ Մեր բերած փաստերը հակառակ են դրան։

6. tiwe «խոսք, բառ», նաև «բան, իր», հոգնակի tiwenaթույլ կա նաև tiw- (tiwiiwan, tiwiwwan, tiwāllān, tiwāttān)[1], որը երևի tiwe ձևի կրճատումն է (համեմատել nēra և nēr- կամ šena և šen ածանցման ժամանակ)։ Ուռխուական tiw- արմատը անշուշտ նշանակել է «խոսել» և եթե հնարավոր էր tiw- ‖ tow- այսինքնպիսին, ապա ևս կհամեմատեի այդ խուռ. tiw- արմատի հետ հայց բովել «կախարդել», բովիչ «դիւթիչ, կախարդ» («Թովիչ քաղցրագոյն բանիւք հանէ զօձն ի դարանէ իւրմէ»), Թովել (կրկնավոր է) «կախազել»։ Հ. Աճառյանը այս բով- արմատի հնագույն իմաստը դնում է «խոսել, շշնջալ, ձայնել (մանավանդ ընդհատ ընդհատ)», հետո նաև «խոսքով կախարդել, կարդալով հմայել», ինչպես լատ. oro «աղեկ, խոսել» և oraculum «մարգարեության, աստվածային պատգամ», գերմ. sprechen «խոսել» և spruch «կախարդական կամ անիծական բանաձև», հին անգլ. spell «պատմություն, խոսք, արտասանություն» և անգլ. spell «հմայք, դյութություն», հին սլավ. гадать «խոսել» և «բախտ գուշակել», обаять «խոսել, խոսակցել» և «հմայել, կախարդել» (Արմ. բառ., II, 1282—1282), որոնց վրա ևս կավելացնեի— говорить և заговорить, խեթ. uttar կամ addar (սեռ. հ. uddanas) «խոսք, իր, գործ, մոգական ասույթ, բանաձև» և uttania «դյութել, կախարդել», լատ. canto «երգել» և անգլ. incandation „чары, колдовство" և այլն։ Հ. Աճառյանը հայ. բով- արմատը ազգակցում է սանսկ. stu- «գովել, օրհնաբանել», որից stotra կամ stoma «գովասանք, գովասանական օրհներգություն», ավեստ. stav,- stu- «գովել, օրհնաբանել, պատվել», բոլորն էլ կրոնական իմաստով, ինչպես և հայերենի թովել «դյութել, կախարդել»։ Բոլորն էլ, թե հայերենը և թե հնդիրանական բայերը հանում է նախալեզվի tou- ձևից (ibid., 1282)։ Բայց ինձ թվում է թե խուռ. div- (tiw-) արմատը ավելի անմիջական և պատմականորեն ավելի արդարացնող պիտի համարել, քան հնդիրանական stou- ‖ stu- արմատը մանավանդ որ հնդեվրոպական այլ լեզուներում այդ արմատը այդ իմաստով չկա, իսկ հայերեն ձևը նաև փոխառություն չի կարելի համարել և կամ նախալեզվից բխեցնել։

---

[1] Տե՛ս E. Speiser, Introduction to Hurrian, Wew-Haven, 1941, էջեր 226—227։

7. *Kanzu* (ka-an-zu-ú *հիշվում է որպես ինչ-որ բույս* (šammu) *համանիշների մի թերթում* (KUB XXVII, 38 III B), *ինչպես կարդում ենք* Nuzi personal names, Chicago, *1943, էջ 233 (կբ-ճառ* NPS): *Երևի այդ խուռիտական բույսը օգտավետ, հատավետ և վայելուչ ու գնդոցիկ բարձրությամբ էր, և ինչպես որ այժմ կան* Salbi, Fidan *և նման իգական անձնանուններ (Մանուշակ, Շուշան, Հասմիկ...), այսպես էլ Նուզիի փաստաթղթերում կարդում ենք այդ* kanzu-*ով կազմած անուններ (միայն կանանց)—* Allaiqanza *(«կանգա-տիրուհի»),* Aštaqanza, *(«կ. կին»),* Kanzaia, Qanzu, Ḫašipqanzu, Qanzušalla *(«կ. կին»): Հայերենում պիտի համապատասխան* kanz-*ին ունենայինք *կանճ կամ *կանձ բույս-անունը, բայց ունենք միայն կանճոխ կամ կանջուխ «դավադան, ցուպ, ձող» (Դավիթ Անհաղթի «Գիրք սահմանաց»-ի մեջ, ԺԲ), որի վերջին -ոխ կամ -ուխ մասը հիշեցնում է խուռի-սարբատական* -uḫi *ծագման (պատկանելիության) ածանցը, իսկ* kanč- (kanj-) *հավանորեն այդ լեզուներում նշանակել է «եղեգ», որը թե վայելչակազմ է և թե նյութ է տալիս ձեռնափայտի և նետի: Համեմատել ռուսաց* трост *«ձեռնափայտ», որը սկզբում եղեգից է եղել, ինչպես ցույց է տալիս* тростник *«եղեգ» բառը: Եղեգի մասին որպես «ենթա» և «նվագելու գործիք» ես իմ* „О концептуально-идеологической стороне некоторых урартских слов и выражений" *տպված գրագրում* „Archiv Orientalny" *հատորում նվիրված Բ. Հրոզնուն,* „Symbolae Hrozny", I, *1949, էջեր 360—373:*

8. *tuldi, որի հետ կա* šammk *«բույս» բառը* (šam taldi), *ավելացած որ դա Շուպրիալումն է* (ina Šubari *Շուբարիում), գործ է ածվել թերեն և որպես կնոջ անուն՝* Duldu *թեպետ կա և այրանուն՝* Dulduqqa (Tuldukka), *տես* NPN, *էջ 268 (Գ. Գուրվեսի թերթում): Կասկած չկա, որ այդ բառը պահվել է հայոց մեջ թե հնում տուղտ, երբևիցե և տիղտ ձեռ (=*althaea pallida WK *բուս Տիրացյանի,* Contributo § 329)—*Աբեղ, բառ.,* VI, *էջ 971, թե նաև այժմյան բարբառներում նույն ձեռ: Ըստ Հ. Աճառյանի հայերենից է փոխ առած վրաց* tuxti „mauve rose, althée ordinaire" (ibid., *էջ 972):*

9. ḫinzur—*խուռիտական արմատը գործ է ածվել թե Բողազքոյի խուռիտական բնագրերում և թե մեզ հայտնի է միացել որպես իգական անուն Նուզիի ակկադական տարեհաններից: Բողազքոյից ունենք* ḫinzurilaš, ḫinzurulaeš, ḫinzurinna, ḫinzurugan-

na *Մարիից* ḫinzuruš *(տես* NPN. 217*), իսկ Նուզիից հատուկ անուններ—*Ḫinzurala *և* Ḫinzuri *թեպետ հիշվում է* ḫinzuri *որպես նաև մի ամսանուն: Կասկած չկա, որ այդ բառը նշանակել է «խրճոր» և որևէ հայոց բառը չպիտի կապակցել որպես փոխառություն ասոր.* hazzura *«խնձոր» բառից (ըստ Հյուբշմանի՝ հակառակը), որը, ինչպես այժմ անում ենք, ավելի հետո է հայոց ձևից քան խուռի* ḫinzur-*ը: Հայերի մոտ, ի միջի այլոց, կար և կնոջ անուն— խնձոր, խնձորիկ, որպես միջնադարյան հատուկ անուններ. (13—14 դարերում ըստ Հ. Աճառյանի «Անձն. բառ.», II, 515):*

10. Ḫašuntarḫi *հատուկ աստվածանուն է, հիշված Բողազքյոյի խուռիտական տեքստերում* Piša(i)šarḫi. Tarpantuhi *և* Šuru(ḫ)ḫi *աստվածանունների հետ, որոնք բոլորն էլ բուսական (վեգետացիոն) աշխարհից են: Դրանց մեջ վերջին* -ḫi *կամ* -uḫi *ածանցը, ինչպես ասվել է, ծագում և պատկանելություն են ցույց տալիս, որ կա և* Bitenḫi *աստվածանվան մեջ («ջրային, водяной»* witen ‖ widar *«ջուր» բառից):* Ḫušundar*— բունը կա և հայոց խաշընդեղ բառի մեջ, որ նշանակում է „rheum, ревень" մի տեսակ բույս, որը օգտագործվում է որպես դեղ ծննդաբերության ժամանակ և որպես լուծողական: Ձևով հայոց բառը աշխատ է հարաբերում խուռ.* ḫašuntar-*ին, ինչպես նաև նույնանիշ բառին, ընդ որում վրաց* čakundela-*ն, ինչպես և այդ իրանական ձևերը, Հ. Աճառյանը համարում է հայերենից փոխառյալ, որովհետև հայերենում կա և առանձին նաև նույն նշանակությամբ: Բարդության երկրորդ* -dar *մասը, որը կա նաև իրանական* čavdar *«տարեկան, рожь»,* gendumdar *«ցորեն» բառերի մեջ, իրոք նշանակել է «խոտ, բույս, злак" և հայերենում ժողովրդական տուգաբանության է ենթարկվել դեղ բառի հետ, որ նշանակել է «խոտ, բույս, злак» (տաքդեղ, «պղպեղ», դեղել «թմրամոլություն», ինչպես* отравить *բայը* трава *«խոտ» բառից:*

Հայերենում կա և կապնդեղ բուսանունը (=լատ. ligusticum, levisticum*), որը նմանապես բնիկ ասիանիկ-խուռիտական ծագում պիտի լինի (*kapundara?): Խուռիտական* Tarpantuḫi *աստվածանունը նույնպես ևս համարում եմ բուսական աշխարհից ծագած: Եթե հանենք նրա* -uḫi *հայտնի ածանցը, ապա նրա բունը* (tarpant-) *կիսապակսվի հունական* terebinthos *բառանման հետ, որն անշուշտ իր տևաքով (-inth- վերջածանցով) փոքրասիական ծա-*

դում ունի, նման labyrinthos. Korinthos և նման բառերին։ Իսկ terebinth-ը հայտնի փշատերև այն ծառն է, որի քերծվածքներից դուրս են հանում տերպենտին կոչված հեղուկը— սկիպիդարը, որը պաշտվել է, ի միջի այլոց. Սիրիայում, իսկ խուռիների կողմից այդ ծառի աստվածացումը ցույց է տալիս, որ տերպենդին-սկիպիդարը պաշտվել է նաև խուռէ-սուբարների մոտ։ Այդ ծառից ստացված լուղի մասին, որպես զինվորների օծանելիք ցրտից, խոսում է Քսենոֆոնը, երբ նրա զինվորները անցնում էին Բարձր և Փոքր Հայքերի միջով, խալիբների երկրին մոտ («Անաբասիս», գլ. 4, 12—14)։ Šuru(b)hi խուռիտական աստվածանունը ևս կապակցում եմ խաղողի պաշտամունքի հետ, ի նկատի ունենալով սեմական ծագում ունեցող սորեք sorekh (Երբայեցերեն) ընտիր սև խաղողը, որին թերևս ազգակցվի մեր բարբառների սորոկ (Նոր Բայազետ) կամ սորըք (Բուլանըխ) բուլսը, որն ունի նեղ և երկարն տերևներ, դեղին ծաղիկներ և մանր սև հատ. վերջինից պատրաստում են դառը ձմի (տես Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 508, «շալկի» բառի տակ)։

11. ḫurr- խուռիների ցեղանունն է և հանդես է գալիս այլևայլ ձևավորումներով, ինչպես Ḫurri կամ Ḫurra (Hu-ur-ra) քաղաքանուն, Ḫurlaša (id.) ḫurla «խուռիա», ḫurlili «խուռներեն», Ḫu-u-ur-ra (xōrra) աստվածանուն, Ḫurruḫe umini «խուռյան երկիր» և այլն։ Աստվածաշնչի հրեական ḥorî և հունական χορρατος ձևերը ցույց են տալիս xorr արտասանություն։ Վերջապես հայ ավանդությունները (Մ. Խորենացի, I, § 12), նույնպես խոսում են հօգուտ այդ արտասանության ի դեմս խոռ Նահապետի, որը Հայկի տղան էր և Խոռխոռունյաց նախարարության անվանադիր ստեղծողը,— մի նախարարություն, որ նաև Մոդխաղոնի (Մաղխազ) մականունով, առաջին տեղն էր գրավում, տալով թագավորին 10 հազարից ավելի զորք (այդ իշխաններր գրավում էին Վանա լճից հյուսիս ընկած հողամասերը)։ Բայց ըստ ինքյան, հայերի մոտ այդ Խոռ ցեղանունը պահվել է որպես հասարակ բառ, որպես այդ ցեղերի (կամ որևէ ցեղի) թողած մի ազգությունքյան հայերի վրա։ Հ. Աճառյանը իր Արմ. բառ.-ում (III, 300) բերում է Բարսեղ Ձնոնի «Մեկնություն ս. աւետարանին որ ըստ Մարկոսի» (Պոլիս, 1826) գրքից, որ XIII դարումն է գրվել, հետևյալ կտորը (էջ 81), «Բազումք ոչ վասն Աստուծոյ, այլ յաղագս ընչասիրութեանն և խոռ և ոխշա բարուցն՝ յաղթեցին հնշուութեանն մարմնոյ և փափուկ կենաց»։ Այստեղ «խոռ» բառը համանիշ է

ոիշտ բառին, որ ժլատ է նշանակում, նման մեր «զոկ» նմանիմաստ ցեղային բառին։ Ցեղանվան փոխանցումը այդ մարդկանց աչքի ընկնող հատկանիշին շատ սովորական է. օրինակ հայերի վրա թուրքերի կատարած գաղանութիւնների հետևանքով այդ բառը սասցել է «անխիղճ բռնակալութիւն», ինչպես նաև սկա (-սկա, սկզութացի), «հսկա, великан», պարթև «վայելչակազմ», վրաց մոտ gmiri (կիսմարնների անունը) «հերոս», kerket'i (չերքեզների անունը) «վայելչակազմ, стройный" և այլն, և այլն։ Պետք է ընդունել, որ խուռիտները, ավելի ճիշտ խուռերը, առատրական և խաբող, գլխող մարդիկ էին, դոնե որոշ ժամանակում։ Պետք է նկատել նաև, որ բնաոազիր rr (երկու r) կոմպլեքսը հայերենում վերարտադրվել է «ռ» բաղաձայնով ոչ միայն ḫurr(i)=խոռ, այլև sarri ‖ zarra=ծառա համապատասխանութեան դեպքում, թեև այդ rr կրկնակի դրութիւնը ցույց է տալիս, որ ռ (ŕ) հնչյունը եղել է նաև խուռիտերենում և խեթերենում։

12. pal- բայարմատը Տուշրատտայի նամակում նշանակում է «հնդրել, ուզել», բայց կարող է նշանակել նաև «հարցնել» (anfragen, erbitten)։ Ուգարիտի սում.-խուռ. բառարանում pal-išu թարգմանվել է «ասաց» (I, 17)։ Եթե սկզբնականը եղել է «խընդրել», ապա այդ pal- արմատին կարելի է կցել հայոց պաղ-ատ-ել բայը, եթե միայն վերջին -ատ մասը արմատական չէ, ինչպես ունենք կորել և կորատել։ Կա խուռիտերենում, օրինակ, հենց Տուշրատտայի նամակում pa(a)li կամ paala (pāla) «կեղծիք, սուտ» իմաստով— ...urḫēn *pa-a-la* gulia-ma, *pa-a-li*-mān urḫa gulia-ma *(եթե) ճշմարտութիւնը որպես կեղծիք չի* (-ma) *ասում, իսկ* (-mān) *կեղծիքը որպես ճշմարտութիւն չի* (-ma) *ասում* (II, 106)։ Այդ pāi-ը շատ է նմանվում մեր բաղայք բառին (<bala-), որ նշանակում է «հերյուրանք» և իզուր են հանում բաղ- «կեղծ» արմատից որպես «կեղեցանք», որը ավելի շուտ «բաղեշնո» բուլսանունից է։ Բայց ամենաուժեղ առարկութիւնը հնչյունականն է. մի կողմից խուռ. սկզբնական p=հայոց պ կամ փ (pap- ‖ pab=«հոռ»—ափափա, Փապ., pal-=պաղ-ատ-ել, և մյուս կողմից pāl «հերյուրանք»— հայոց բաղալք)։

13. šir «զլուր գալ», širašše «զլուրեկան», որը հնչվել է sir- համեմատել մեր «սէր»— սիրել, սիրուն և այլն։

14. paš(š)- «ուղարկել», որից pašiṯḫi «դեսպան, առաքյալ», pa(š)šar- (օր. pašariwaen կամ paššariwaen «կարող է չուղարկել»), paššiama «չի ուղարկում» և այլն։ Արդյոք մեր պաշար

բառը, որ նշանակում է «ճանապարհին վերցնելիք ուտելատը», ինչպես վրաց sagzawi «պաշար» (gza «ճանապարհ» բառից). չի տարաբացել այդ խուռ. բառից, որը ունենցել է նույնպես -ar (pašar- ‖ paššar-) վերջածանցը: Համանորին մեր տատար, խանգարել, խաթարել և նմանները գալիս են խուռիտներենից: F. Bork-ը, ի միջի այլոց, խուռ. šat(t)- թարգմանում էր «օդնել», որ մատ է մեր «տատարել» բային, բայց մյուսները օրինակ E. Speiser-ը այլ կերպ են թարգմանում (ըստ Speiser-ի «միասին»): Բնականաբար տատի արտահայտությունը եղել է բազմաձայն, և ինչպես խեթերենում և ուրարտերենում ենք տեսնում դրա դիմաց հայոց համապատասխան բառերում լինում է ս (s) կամ շ (š) բաղաձայնը: Ըշխոթել պաշար, տատար, խաթարել, խանգարել և նմաններին -ar ածանցը, որ գալիս է խուռի-ուրարտական լեզվատունից այն -ar մասնիկի հետ, որ առնդվել է հետագայում արդեն կազմակերպված հայոց լեզվում ar- «առնել» արմատից (առ-ն-եմ, արար-ի), որը տեսնում ենք մեծարել, զարդարել և նմանների մեջ:

15. puh— «փոխել» թե հատարակ բառ, ինչպես pu-û-hu, puhi-zzaru, puhukara- (նման Տուշրատտայի նամակի tadukara-, riddukar-, agukar- բայաձևերին -kara մասնիկով), և թե հատուկ անունների մեջ, ինչպես Puḫi, Puḫišenni ‖ Puḫašenni (փոխնդրայր=եղբոր փոխարեն) Puḫimenni («հարսի փոխարեն») և այլն, որոնք հայտնի դարձան մեզ Նուզիի պեղումներից: Այժմ էլ արեվելքում սովորություն կա մեռածից հետո նորածին երեխային տալ բազալ (=փոխարեն) անունը, որը, ինչպես տեսնում ենք, գոյություն ուներ մեր էրայից առնվազն հազար հինգ հարյուր տարի առաջ: Հայոց փոխ արմատը իր բազմաթիվ ածանցավորություններով (փոխանակ, փոխարեն, փոխարա, փոփոխել և այլն) անշուշտ գալիս է մեզ այդ խուռիտական լեզվաշխարհից, բայց այդ արմատը կա նաև ակկադական լեզվում. հետևապես թե հայերենը և թե խուռիտերենը պիտի համարվեն փոխառություն այդ սեմիտներից: Բայց այդչոք ակկ. puḫu «փոխել» բուն սեմական է, այդ մեզ հայտնի չէ և կարող էր ինքը սեմիտների լեզուներից փոխառալ լինել, ինչպես այդ ապացուցված է շատ դեպքերում: Հ. Աճառյանը իր Արմ. բառ.-ում (VII, 189) հայոց բառը գնում է տատուրներենից փոխառություն, բայց ինչպես տեսնում ենք, այդ փոխառությունը, եթե իրոք եղել է, կատարվել է խուռիտ-արիներին միջոցով:

16. kir-ai ('ker-ai) «երկար» ըստ Ուզարխոի բառարանի (IV, 28): Այստեղ վերջին ai-, այլուր -ae համարվում է ածական-

մակրայ առնդող ածանց, ինչպես nir-ae «թևերով», pahir-le «յուղ». tubu-e «ուժեղ» այլևայլ ձևափոխություններով (F. Speiser, Intr. to Hurr., 118—119)։ Բայց այդ kir- (ker-) արմատը ընդունում է և այլ ածանցներ, ինչպես kiraše (keraše) «երկարություն», kirar- (որից kirara, kirariaš, kirarinna, kirarinnilam; անս NPN, 225). նման ḫaš- «լսել» արմատից՝ ḫašarinni, tat- «սիրել» արմատից՝ tatar-ae, raš- «ուղարկել» արմատից՝ paššariwaen «թող չուղարկեն», urbarinni «մորթող» (մսագործ), որի հետ համեմատել urbumma epēšu «մորթել» (ինչպես «քերթել», «մորթի անել», ուր epēšu «կկոպ.— «անել»)։ Կա և հատուկ այրանուններ (նուզիից) այդ kirar կամ kerar ածանցավորից, ինչպես Kerar, -Tešup, Kerar-Tilla։ Իմ կարծիքով հայոց երկ-ար և երկ-այն ածականները կազմված երկ- (erk-) արմատից անդրադարձնում են այդ խուռիական kir- «երկար» արմատը, որը դարձել է e-kr>erk, թևերս այն պատճառով, որ խուռիներենում հնչվել է kr-ar, kpaše և այլն, դրան հետագայում, իսկ հայերը խուռափելով երկու բաղաձայններով բառ սկսելուց kr>rk (kr-ar>rkar) սկզբում ավելացրել են ի (e) ձայնավորը, ինչպես երկու (‖ կր-կին), երկաթ բառերի սկզբում։ Կա և մեկրելերեն rikali «երկար», որի նմանությունը հայոց er-kar-ի հետ թևերս սոսկ արտաքին է, քանի որ հայերինը ունի և erk-ajn, «ծերունի» արմատն է erk-։ Ակկադական 'rk «երկարացնել», 'ark-u «երկար» նմանապես չի կարող համեմատվել հայոց այդ erk- արմատի հետ, քանի որ ակկադական այդ արմատի մեջ տասերորդ kh (=մխրուք), որ հայերը իրենց ակկ. փոխառություններում միշտ պահում են։

17. gil- (gel-) կամ kil- (kel-) թարգմանում են «բարեկիցիկ», «բարեկիցություն», բայց ըստ իս պիտի նշանակի «գեղեցիկ, գեղեցկություն»։ Այդ բառը հաճախ է պատահում Բողազքյուղի խուռիական տեքստերում (KUB, XII, 12; XXV 47) ke-e-lu, ke-lu-bi-en-ni, ke-lu-uš, ge-lum, ge-lu-uš, իսկ մի անգամ էլ Տուշրատտայի նամակում (I, 89) gi-lu-u-šu-a, որը հավանորեն արտասանվել է gilošwa։ Բայց ավելի շատ է պատահում հատուկ անունների մեջ, որոնք մեզ հայտնի են Բողազքյոյից, Նուզիից, Նիպպուրից և այլն և պարունակում են այդ արմատը, ինչպես անունք Բողազքյոյից—Kili, Kilari, Šen-gila, Kilia, Kil-Tešup, Keluš-Ḫepa (կնոջ անուն) և այլն։ Իսկ Նուզիի փաստաթղթերում մեծ մասամբ գրվում է սկզբնական „g"-ով, ինչպես— Gel-Tešup, (որից փաղաքշական՝ Gelteia, Gelte (Gelia, Kilia, Gel-Tilla, Ge-

lip-erwi, Gilim-matka *կնոջ անուն*), Gelip-šarri *կամ* Kilip-šarri, Gelip-Ugur *և այլն* (NPN, 224)։ *Այդ* gel- ‖ gil- *բառը հատկանալու համար ապավինում են հայտնի* gelti *կամ* kelti *բառին, որը հայտնի է շատ տեղից և ի միջի այլոց նաև Տուշրատտայի նամակից, որպես խուռիտական հավասարարժեքը ակկադական* šulmu, šulmānu, šullumu *և թարգմանում են այդ* gelti-*ն «բարեկեցություն, благополучие» արմատը տեսնելով* gel- (kel-)։ *Ըստ իս այդ բառերը* (gelti *և* gel-) *կարող են և կապ չունենալ, և ի նկատի ունենալով հայոց գեղ, գեղաձի, գեղեցիկ բառերի* geł *արմատը, որը կարող էր առաջանալ և* gil- *նախնականից, ես առաջարկում եմ խուռ. բառը ևս այդպես թարգմանել, օրինակ,* Gilu-Hepa *կնոջ անուն հասկանալ «Գեղը խնպածի» (=Գեղեցիկ Հեպա, այսինքն՝ Հեպիտ). ինչպես ունենք* Tadu (Tatu)- Ḫepa «*սերը Հեպային*», Gel-Tešup «*գեղը Տեշուպի*», Gelip-šarri «*գեղեցիկ իմ* (?) *Թագավոր*», Šen-gila «*եղբոր գեղեցկությունը*», Keluš-Ḫepa *(կնոջ անուն), ուր* keluše ‖ qeluše *գոյական է («գեղեցկություն»),* -še *գոյականացնող մասնիկով։ Մենք գիտենք, որ ամենահիրելի դիցուհին Հեպիտն էր, որը աստուրա-բաբելական Իշտարի նման հորջորջվում էր «Հեպիտ սքանչելի»* (Hepit mušni) *և տարօրինակ չէր, որ փառաբանվեր նաև նրա գեղեցկությունը, ինչպես կան ակկադերենով կազմված անուններ* Inbi-Šamaš «*Շամաշի միրգը*» (фрукты Шамаша). Gimill-Tešup «*Նվերը Տեշուպի*» (=*խուռ.* Ar-Tešūr), Zikn-Adad «*մորուքը Ադադի*», Šer-lštar «*ոտը Իշտարի*», Izza-ṭabu «*Իշդան լավ*», Tab-lštar *(կնոջ անուն) «լավ է Իշտարը» և այլն, և այլն։*

18. Šauška *կամ* Šawuška *խուռիտների հայտնի աստվածուհին է, հավասար Իշտարին, որի գաղափարագրով երբեմն գրվող* (^{d}EŠ$_4$. DAR-ru-uš-ga)։ *Տուշրատտայի նամակում* (I, 76) *գրված է* ^{d}Ša-uš-gaš *կամ* URU Ni-i-nu-a-a-we ^{d}Ša-uš-ka-a-we (III, 98), *որ նշանակում է Նինևիայի Շաուշկա աստվածուհին։ Ուգարիտի փաստաթղթերում ևս հիշվում է* susk *(կամ* swsk*) բաղաձայնական գրությամբ, ուր հիշվում է նաև նման աստվածուհի Հեպիտը ուղղագրման հոլովաձևով՝* Hrt-d*։ Եթե Հեպիտը իջևաղն էր Փոքր Ասիայում (զլխավորապես խեթերի մոտ), ապա Շաուշկը՝ խուռիտների մոտ, թեպետ Հեպիտը սպորադիկ կերպով հիշվում է ոչ միայն Միջագետքի հյուսիսային մասում, այլև շատ հարավ։ Հեպիտը վերածել է հայերի հեպիտ>հոպիտ ձևով, ինչպես և հրապտիմ-խոպտիմ բայերի մեջ (տես վերը), մտնելով մեզ մոտ հավա-*

նորին արևմուտքից, Եփրատի կողմերից: Թևրևա Հալասալի դվեսավոր աստծու կինը եղել է հենց այդ Հեպիրը, որ դժբախտաբար դաղափարապրով է գրված (Իշտարի դաղափարապիրը): Բայց ինձ թվում է, որ հարավային ուղղությամբ ևս մեզ մոտ պետք է ենթացած լինի նույնպիսի և նույնարովանդակ Šauška դիցուհին, որ արմենների աղղեցությունը պիտի համարել: Այդ ևս ուզում եմ տեսնել մեր շոշոկել բայի մեջ, որ նշանակում է «գեղեցիկ երևալու համար ձևեր անել, ալևշկիլ, նազկոտիլ» (Ծովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Թղթոցն Պօղոսի, Վենետիկ, 1862, հատ. I, առ Տիմոթէոս առաջին, էջ 68): Բայց կա նաև շոշակաես առնել, որ ձևապիրն է տալիս (տես Տիլոն Երբալեցու ճառերից, հատ. III, Վենետիկ, 1892, «Կանոք իմաստնոց», էջ 81) և իզուր է Հ. Աճառյանը փոխում շոշականս ձևի (Արմ. բառ., V, 401), մանավանդ ունենք երեմիա Մեղրեցու մոտ վրիպակով գրված շողակեալ «հրոչակեալ» և շուշակեալ «հռչակեալ» փոխանակ՝ շոշակեալ կամ շուշակեալ: Այս ցույց է տալիս, որ Ոսկեբերանի մոտ ևս եղել է գրված շուշակել կամ շոշակել: Ես չեմ կասկածում, որ այստեղ մենք ունենք Šauška դիցուհու անունը, պահված որպես նրա հատկությունը՝ նազկոտանքը (жеманство, кривляние): Փիլոնի շոշականս առնել ոճի դեմաց հուն օրիգինալը տալիս է ἐγκαλλωπίζομαί, որը Վելամաննի բառարանը թարգմանում է „рисоваться, чваниться“, այսինքն՝ հայերեն վերոհիշյալ ճիշտ թարգմանությունը: Մենք հիշենք, որ հենց այդպես էլ հպտիմ (խպտիմ) բայը նշանակել է Հեպիտ դիցուհու աստրիուսը դարձած հասարակ անուն: Նույն աստվածուհիները տարբեր տեղերում պաշտած և տարբեր ցեղերի միջոցով մտած Հայաստան, տվել են այդ ժողովուրդների նման ըմբռնումները, որ այդ Šauška և Hepit դիցուհիները որպես դեղեցկության և սիրո աստվածուհիներ, ունեցել են «նազկոտանք, կոտրտվելը, միմոսությունը, գալթակղությունը, գլխով ու շորերով երևան գալը»: Հնչյունաբանորեն հայերենում Šauš- պիտի վերածվեր շոշկ->շոշկ-, շուշկ-, որ դարձել է շոշակ-, շուշակ-, ենթարկվելով -ակ վերջացող բառերի ազդեցության: Իսկ որ աստվածների անունները կարող են անցնել իրենց աչքի ընկնող հատկանիշի վրա, դրա համար ունենք, օրինակ, Attis-Attin փռյուգիական աստծո ամորձատման հետևանքով հայոց աթինեալ «առնականության կորցրած», իրանական Mithra աստծո անունից՝ hammitria «կատարյալ», որը դարձել է մեզ մոտ ամեհի որպես փոխառյալ բառ, Tarku փոքրասիական հին անունը լիկիացիների

մատ դարձել է ընդհանրապես «աստված» (նման մեր «աստուած» բառին փռյուգիական Sabazios հատուկ աստվածանունից), բայց խեթերի մոտ ունել է նաև tarkua — «բարկանալ, կատաղել, պարել» ('rage, be furious, be mad; dance', տես E. Sturtevant, Suppl. to Hitt. Glos., Philadelphia, 1939, էջ 42)[1]։ Ձեղանումների նման զուգորդություններն մասին (բուն աղբյուրներում) տես վերը խոս «ժլատ» բառի մասին ասածը։ Ես կողմում եմ նման իմաստաբանական փոխանցում մարդկանց հատուկ անուններից ծագած հասարակ անուններում, ինչպես կույր, король, մոմպատիլ, խուլիգան և նմաններում։

19. Šantaluqqan (KUR, XXVII 1 ii 26) Šandalluqan (KUR XXVII 6 i 12) խեթերական աստվածանուններ, որ ինչպես անում ենք, դասվում է Բողազքյոյի անքաններում («աստված» որոշիչով), նույնանում է Šantalluk խեթերական այրանվան հետ նաև փաստաթղթերում։ Ինչպես ճիշտ դիտում են, այդ անուններ ածանցյալ է Šanta կամ Šanda հայտնի աստվածանունից -(a)ll-lul- վերջածանցով, որ կա նաև Nutalluk և թերևս Timaluk (Arti-maluk անվան մեջ) անուններում մեջ։ Իսկ Šanta (Šanda) կամ հանարեն վերարտադրությամբ Sandon փոքրասիական հայտնի աստված էր, հավասար Միջագետքի Մարդուկին, կար և խեթական Šantawia իգական անուններ։ Հավասարվում էր նաև Vartragne — Վահագնին, և պետք է ենթադրել, որ նրա ֆունկցիաների մեջ էր մտնում նաև ամպրոպը, այդ կողմից լուրացնելով Տիշպակի որոշ կողմը։ Ինչպես lensen'-ը (տես Հանդ. ամս., 1904, էջ 184) և Roth-ը (ՀԱ, 1927, էջ 744) առաջին անգամ մատնանշեցին այդ աստվածանունը, որ «օդի, մանավանդ կայծակի աստվածն» էր, պիտի նույնացնել հայոց շանթ (շանդ) «կայծակ» բառի հետ։ Բայց իմ կարծիքով, ոչ թե կայծակից է առաջացել այդ աստվածը, կրելով այդ կայծակի անունը, այլ ընդհակառակը։ Šanta-ն եղել է երկնքի, անձրև-ամպրոպի և թերևս վիշապների դեմ կռվող աստվածը, պաշտվել է նաև Հայաստանի հարավային և թերևս արևմտյան մասերում (Հայաստանի և Ուրարտուի պանթեոնում չկար),

[1] Ինձ թվում է, որ Արմինայի մեջ մտնող Անգեղ տան Տարք աստվածը, որ հարավ արևմուտքից (Կիլիկիայից և այլն) է մտել հայերի մոտ, պիտում Մ. Խորենացու հին ձեռագրերում պիտի լիներ Տարք, որ պատմագրել է Տարք ձևի, պահված մի քանի ձեռագրերում, իսկ հետո փոխած Տորք նոր ձևի, թերևս Troko ձևն ևս կար փոքրասիական որոշ լեզուներում։ (Համեմատել Τρεχανδα անգղ Կիլիկիայում)։

ինչպես Տորքը, լուրացվել է հայ ժողովրդի կողմից և մացել է հետագայում (քրիստոնեության ազդեցությամբ է) որպես հասարակ շանթի «կայծակ», նման մեր ժողովրդական Մովիմար կամ Մովիան («Մովի աստված, ոդի») հասուկ անվան, որ հիմա դեռ մացել է որոշ բարբառներում միայն «կայծակ» նշանակությամբ: Ըստ էս, հարավային կամ հարավ-արևմտյան շրջաններից (Սիրիա, Կիլիկիա) մեզ մոտ է եկել ոչ միայն խուռիտական Šauška հայտնի դիցուհին (Թոդած Հապիա) (Հիպիա ձևով մտած նույնչափ հայտնի նույնատաշտոն աստվածուհուն թափանցման ճանապարհները), Tarku աստվածը, Šanta աստվածը, այլև դեռ խուռիտական Nupatik-ը (հիշվում է նաև Ուգարիտի արձանագրություններում Nbdg բաղաձայններով), որը ըստ երևույթին լեռան աստված էր: Պատահական չէ, որ Բագբևանդի (Ալաշկերտի մոտ) նպատ սարը ոչ միայն կրում է այդ անունը, այլև պահում է Nupatik-ի աստվածային ֆունկցիան ի դեմս նրա լանջին կառուցված (հեթանոսական տաճարի տեղում) հռչակավոր «Երկնք եկեղեցին» (Ուշքիլիսան), հին Բագավանը, որ տառացի նշանակում է «Աստուծո տեղ (վայր)»:

20. ewri— «տեր» շատ հաճախ է գործածվել խուռի բնագրերում Բողազքոյից, Տուշրատտայի նամակում, մի «խեթական» հիերոգլիֆ արձանագրության մեջ (iwrina- ձևով), որը գտնվել է Կարգամիշում: Նուզիի աղյուսակներում մեծ մասամբ դրսիխոսությամբ է ewri ձևով: Բայց այդ ewri բառը սովորական է և ուրարտացիների մոտ՝ dHaldie eurlie «Խալդ տիրոջը» (կամ dHaldie eurie-ukie «Խալդան տիրոջս»): Ոչ մի կասկած, որ այդ ewri «տեր» (ըստ E. Speiser-ի „bord") բառը հայերը ժառանգել են awri- ձևով, ինչպես՝ աւրիորդ (awri-ord) «տիրոջ որդի», բայց հետագայում սացել է «տիրոջ աղջիկ, барыня, барышня", հետո ունենք աւրեար, որ հաճախ դրվում է որեար և նշանակում է տառացի «տերեր» և օրեակը (աւրեանք) նույն իմաստով: Ն. Մառը թարգմանում էր դեռ 1903 թ. „знать" (ազնվականություն), իսկ Ն. Ադոնցը ընդունում էր որպես նախարարության մի ռազմական հաստատություն: Հայոց բառը արտացոլում է հյուսիսային հայ բարբառների հնչյունափոխական այն առանձնահատկությունը, որ „e" ձայնավորով սկսվող օտար և բնիկ բառեր փոխում էր „a"-ով, ինչպես ewri->աւրի, խուռ. en- աստված»>ան- (Մովի-ան, Ան-բերդ...): Էլ չեմ խոսում այն բազմաթիվ դեպքերի մասին, որ «ր» (r) և դ (t) հնչյունների առաջ տեղի է ունեցել այդ e ‖ a ալոևրնացիան, ինչպես Երասխ ‖ Արաքս "Eriza ‖ Ariza,

Erwand ‖ Arwand ‖ Orwond Êr ‖ Ara *առասպածանունը, երագ ‖ արագ, եղինջ ‖ աղինջ, եղտիւր ‖ աղտիւր և այլն և այլն։ Մխիթարյանները աւրեար ‖ որեար բառը թարգմանում էին սովորական «մարդիկ» բառով (այդպես է Հ. Աճառյանի մոտ «Արմ. բառ.»-ում)։ Նրանք չէին իմանում, որ նեթե «ազատորեար, հայորեար, հալ մարդիկ, գլխավորները» (ըստ Առձ. բառարանի), աւագորեար և այլն։ կարելի է վերագրել ազատանուն, ապա «ծառայորեար» բառը նույնպես այդ քաղաքական ֆունկցիայի համար է և նշանակում է «իշխողներ» (կառավարողներ և այլն), որոնք ծառաներից են բարձրացել այդ բարձր տեղին։ Գառամելյան շատ դեպքեր կան, երբ ծառաները բարձրացել են իշխանության գլուխ։*

Մուռի-հայկական հասարակ անունների ազգակցականության քանակը իհարկե երկու տասնյակով չի սահմանափակվել։ Մուռի լեզվի նորանոր փաստերի հայտնաբերումը և հաջող ուսումնասիրությունները հնարավորություն կընձեռեն ապագայում այդ ընդհանուր բառամթերքը ավելի հարստացնելու։ Մուռի բառերի իմաստը ճշտելու համար երբեմն հայերենը կարող է վճռական դեր խաղալ և ընդհակառակը, ինչպես վերևում ցույց տրվեց։ Իսկ երբեմն էլ տեսական-ձևական մոտեցումը, որ զուտ հիպոթետիկ բնույթ է կրում, ավելորդ չպիտի համարվի։ Օրինակ խառ durupi բառը Տուշրատտայի նամակում (III, 108—124, հինգ անգամ) Բորկը տառադարձում է toropi և թարգմանում «համաձայնություն, պայմանագիր, դաշինք» (տես նրա Der Mitanibrief und seine Sprache, Königsberg, 1929, էջեր 76, 105), իսկ Ե. Ախլյանը (Intr. to Hurrian, էջեր 71, 115) գրելով turubi կամ durubi թարգմանում է «երկյուղ, վտանգ» (danger) կամ «կարիք» (need), որը ինչպես տեսնում ենք անորոշ է։ Եթե դիմենք հայոց լեզվի օգնությանը, որ որոշ պայմաններով (հնչյունական օրինաչափությամբ և այլն) և զգուշությամբ անհրաժեշտ է մինչև իսկ, ապա ես կարող էի պաշտպանել Բորկի թարգմանությունը, մանավանդ որ այդ հասկացում անընդհատ խոսում է նամակագրության (tuppe «պղյուսակ» և հոգն. tuppena) մասին։ Հայերենում կա թոռոմ («հյուսված շոր, հագուստ») և ցանցի նման իրար կցկցված շոր կամ գրահ», որի հիմնական գաղափարն է «կցկցված, հյուսված» (=խեթ. tarup— «հյուսել, կցկցել, դաշնավորել»), իսկ այդ «հյուսել» գաղափարից հետու չէ «դաշն, միություն» իմաստը, ինչպես գերմ. Bund «դաշն», binden «կապել» բայից, խեթ. išḫiul «դաշն, միություն», išḫia «կարել» բայից, ռուս. союз հին -юз «կապել»

բալից և այլն։ Բայց այս իմ տեսական առաջարկը ունի մի հնչյունաբանական առարկութիւն, այդ այն է, որ վրաց. „r“ (ոչ rr) մի բաղաձայնի դիմաց հայերենում ունենք ռ, իսկ sarri (zarri) և մեր «ծառս» համեմատութեան մեջ ունենք վրաց. rr=հայց ռ։ Այստեղ կարող է լինել տեղական-խուռիտաբանի (Միհրանեան բարբառի) առանձնահատկութիւն, որը, ինչպես վերևում տեսանք, Նուզիի և Բողազքոյի խուռիտական բառերի կրկնակ բաղաձայնների դիմաց (-šalli, anne, elli, menni...) տալիս է մի բաղաձայնով գրութիւն (šala, ene, ela, mēna և այլն), մանաւանդ որ Տուշրատտայի նամակի մեջ չկա šarri (կամ sarri) գրութիւնը, բայց կա zar-ra, որը հավանորէն նշանակում է «ծառայի հետ (տես վերը)։

Անցնենք խուռի-հայկական հատուկ անունների ուսումնասիրութեան։ Այստեղ ևս պատահում են հնչյունաբանական առանձնահատկութիւններ, որոնք իրենց պատճառները ունեցել են, բայց մեզ անհայտ, ինչպես խուռ. z- հայ. z (ղ), այնինչ մյուս դեպքերում, բնականոն փոքրասիական և խուռի-ուրարտական այլ անունների համեմատութեան ժամանակ լինում է, օրինակ, խեթ. z=հայց č (ճ)։ Ես արդեն մատնանշել եմ հենց հայց զաւակ և ճաւակիթ բառերի մեջ այդ բազմազանութիւնը, որը անշուշտ բարբառային և ժամանակային հանգամանքներով պիտի բացատրել։ Նմանապես խուռիտական t կամ tt հայերենի հատուկ անուններում լինում է տ (t) և թ (t‘), նմանապես դժվար պարզաբանելի, քանի որ գրութիւնը չի տարբերում պարզ պալեթականները և ասպիրատ պալեթականները։

Բերենք այստեղ խուռիտական հատուկ այրանունները, քաղելով դրանք Նուզիում հայտնաբերած ակկադական տնտեսական, դատական, իրավական այլևայլ փաստաթղթերից (NPN), անկախ նրանից, թե որտեղից են դրանք մտել խուռիտների մոտ, բուն խուռիտական են, թե լուրացրած ակկադերենից կամ կասիտերենից։

1. *Akitta* (‖ Akitti, Akitte)=Ակիթ, որը վարդապետ էր (տես Ղազար Փարպեցու «Թուղթ առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1904, էջ 196)։ Խուռիտերենում վերջամաս -i(t)ta կա նաև Ennita, Ḫupita, Ikita, Miššita, Ukkitta և Zikita այրանուններում։

2. Arditi (‖ Artiidi, Ardiidi)=Արտիթ, որը հայոց եպիսկոպոս էր Բասենում (համեմատել նաև Արտիթես Մ. Խորենացու մոտ, էջեր 99 և 219)։ P. Purves-ը (NPN, 203) այդ Artiti-ն բաժանում է Ar-titi, որը I. Gelb-ը (ibid., 35) համարում է կաս-

կածելի: Ard- արմատը (<ar- «տալ, նվիրել»), որ կա նաև տրատեսնում (ard-iše «նվեր»), բարդված է նույն -it՝ (-ith) ածանցով, որը մանում է ոչ միայն հայոց Ակիր, Արտիր բնաշխ տրանունների մեջ, այլև Ասիր (Ասատանիներից էր. տես, Ք. Ասքրանու մոտ, 147). Բիր, Զուիր, Գնիր (Դերջանի եպիսկոպոս, տես Մ. Խորենացու մոտ 335, 340):

3. Bazi (Pazt) կամ Baza=Բազ, որը Հալիի թոռն էր, անվանադիրը Բզնունի նախարարության: Յուրաքանչյուր անունը շատ տարածված անուն է եղել, որովհետև երևան է գալիս ոչ միայն Նուզի-Գաստրի, այլև Նիպպուրի, Ասատոլիայի և այլ աղբյուրներում և համարվում է «խուռա-անատոլիական» (NPN, 244): Նուզիից մեզ հայտնի է և ածանցավոր Pazaku տրանունը, որը համընկնում է Խորենացու մոտ լեգենդար իշխանավոր բազուկ անվան հետ:

4. Puta կամ Puttu (Puddu) =Բութ, դյուցազոր քուրմ էր, կամ Բուտ, որ Աստվածների տոհմի իշխաններից էր, խուռիաներին բառը հաճախ Putu-Ḫepa կնոջ անվան մեջ, որ տատոցի նշանակում է «Ḫեպա (=Ḫեպատ) աստվածուհու սպասավորուհին» և այլոր գրվում է կիսագաղափարական ձևով՝ ERUM-ḫe/hi-pa „servent of Ḫepa (NPN, 248): Համեմատել նաև վրաց Budu, որ իր վերջին „u" ձայնավորով այնքան մոտ է խուռիաներենին: Հ. Աճառյանը «Հայ անձնանունների բառարանում» (II, 425) հայոց Բութ (Բուտ) անունը հանում է տատրական (սիրիական) bud «նկնդեցական հակիչ» բառից: Հայ-վրացական անուններըը ըստ իս անկախ են տատրականից և նրանց «սպասավոր» իմաստը (servent) կար խուռիանների մոտ երկու հազար տարի մեր էրայից առաջ, որ տեսնում ենք, օրինակ, Pudu-Ḫepa իգական անվան մեջ:

5. Dada (Dadā) ուր քաղաքի III դինաստիայի ժամանակաշրջանի տրարական անուն է (տես I. Gelb, Hurrian and Subarian, Chicago, 1944, էջ 95, 109): —Հայոց Դադի կամ Դադիու: Հիշվում է նաև խուռ. (և տրարատական?) Dade այրանունով մեկը, որ Arziza (=Արճիշ?) քաղաքից էր: Համեմատել նաև վրաց Dadiani, Dadeškeliani ազգանուններըը: Արդյոք խուռիտական անունը կապ չունի խեթ. բնիկաղբական Datta և խեթ. հիերոգլիֆական Tatta տատվածանվան հետ (I. Gelb, Hitt. hier, III, 48), որը թերևս մանում է և հայոց Դատվան (Dat-van) քաղաքվանի մեջ, Վանա լճի հարավ-արևմտյան անկյունում, որը տատոցի նշանակում է

«Դատ. աստծո բնակավայր» (Dat-ը փոխարինում էր Տիշպակ ջրի և ամպրոպի աստծուն)։

6. *Dudukaia*, որը իրեն Dadu- մասով=հայոց Դուդու անվանու ներառելիներում -kaia բարդ մասնիկ է համարվում (-ka և -ia), որ անում ենք նաև Ḫanukaia, Ḫerrikaia, Innikaia, Kanukaia, Pallakaia և այլ բառերի մեջ (NPN, 222)։ Կա նաև հայոց Տուտա և բարդ Տուտևորդի հատուկ անուններըը, որոնք այս թիվին են պատկանում։ Թևրևս խառխատական-հայկական բառերը վերջին հաշվով սեմականից փոխառյալ լինեն, ուր կան թե Dûdu աստվածանունը և թե՛ անձնանուններ —Dûdu, Dûdu abu-šu «Դադան նրա (šu) հայրը», որոնք հայտնի են մեզ Նուզիի տաբլետներից, որպես խառխաների անուններ։ Ե. Շրադերը („Die Keilinschriften und das Alte Testament», Berlin, 1902, էջ 483) այդ Dûdu աստվածանունը կապակցում էր ծագմամբ սեմական dâd, dîd dûd «սիրելի» արմատի հետ, որից և «քեռի» նոր նշանակությունը (NPN, 303)։

7. *Zaza*=հայոց Զազա, որ կրում էին մի քանի Զաքարյաններ XIV—XV դարերում։ Կա և փոդա քշական Զազիկ (Աճ., «Անձն. բառ.», II, 163)։ Ուշի բառը հայտնի է ոչ միայն Նուզիից, այլև կապադովկիա տաբլետներից, որպես բնիկ տեղական բառեր (F. Stefens, Pers. names of Capp., 70, 85)—Zazia, Zaz, Zaza (աստված), Zazuni։ Ի միջի այլոց հայոց Զազա անունը հիմա էլ դործ է ածվում մեր դյուղերում, օրինակ Աշտարակում, ուր կա հիմա էլ Զազենց ազդանունը և «Զազի դուզ» հարթավայրը։ Դուցե հայոց Զազ և Զաջուռ անուններըը բարբառային այլ ձևեր են, հին հնչյունի դիմաց ածյալ «ջ» (փոխանակ «ճ»)։

8. *Zige* կամ *Ziki*, (արական և իդական) Նուզիի և կապադովկիական աղյուսակներից (Stefens, Pers. nemes of Capp., 70) =հայոց Զիկ, որը Հ. Աճառյանը համարում է փոխառություն պարսկ. Zik անձնանունից (Անձն. բառ., II, 208), բայց մենք դիտենք, որ պարսիկներըը հնում իրենք էին փոխ առնում Միջագետքից, մինչև իսկ հատարակ անուններըը (օրինակ պարսկ. Vitaksa= բղեշխ, տես Вестник древней истории, 1949, № 3, էջեր 11—13)։

9. *Ḫinzuri*, *Ḫinzuraia* իդական անուններըը (Նուզիից)= մեր Նշնոր, Նշնորիկ միջնադարյան անուններին, որոնք կազմված են անկախ խառխաերենից, քանի որ հատարակ ծագում ունեն և հայոց «Հնձոր» բառից են (տես վերը)։ Սրանով վերանում է հա-

լոց այդ բառի փոխառության խնդիրը ասորական ḫazzūrā բառից, բայց ակկադական ḫašḫurr-u-ն «խնձոր» բառի առկայությունը կարող է խոսել այդ բոլոր ձևերի (խուռ., հայոց և ասորի) փոխառության մասին Միջագետքից:

10. Ḫušuše, Ḫušušaia որպես իգական անուն ḫuš- արմատից և -(ū)še դոլականացնող ածանցից (կա և Ḫušḫušu կրկնակ արմատով իգական անուն) (=նուշուշ, կնոջ անուն է և զործածական է եղել X—XIII դարերում («Անձն. բառ.», II, 362):

11. Ḫutta (‖ Ḫutti, Hutaia, Hutia) =նութա, որը Սասունի հայ իշխաններից մեկն էր և իր Մմբատ, Մուշեղ և Նեբսես եղբայրների հետ, բյուզանդական Մավրիկիոս կայսեր հրամանով, գնաց օգնելու վտարված պարսից Խոսրով թագավորին («Անձն. բառ.», II, 555):

12. Ḫuia (Ḫuuia) բացի Նուզիից հիշվում է նաև Բողազքյոյի փաստաթղթերում (KBo, III, 3, Col. III, Us. 2) որպես Կարգեմիշի իշխան=Հոյ, որ հայոց լեգենդար կառավարիչներից մեկն էր Գևրճ, Արբուն, Բազուկ, Հոյ, Ցուսակ, Կայպակ և Սկայորդի շարքում (Մ. Խոր., I, § 20), այսինքն՝ մինչ սկյութական շրջանում (VII դար): Թևրևս խուռ. Ḫuia և հայոց Հոյ անուննները առաջացել են hoi- հասարակ անունից, որ հայերենում (արմինևերենում) դեռ մնացել է «փառավոր, ամուր» իմաստով (հոյական, հոյանուն), ինչպես նաև խուռիտական ḫu-ú-e (KUR VIII 60 obv. 8), ḫu-e-ni-wa-an (ibid., I, 14), ḫu-u-iš-ta (KUB X 63 II 11) և հատուկ անուննների մեջ մտնող Ḫui կամ Ḫuip- մասով—Ḫuišša, Ḫui-Tešup (կրճատ Ḫuite). Ḫui-Tilla, Ḫuip-erwi, Ḫuip-Tilla և այլն:

13. Ḫambizi կամ Ḫaburzi (<Ḫabbur-dSin «շառավիղը Սին աստծու») =Համբուժ անվան, Համբուժեան նախարարական տոհմանվան մեջ, որը «Դահնամակում» բռնում է քառասունմեկերորդ տեղը (տես Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Петербург, 1908, էջ 250) «զորանամակում» սխալ «Հարուժեան», էջ 252, իսկ Նեբսեսի վարքի «կնոջ դահնամակում» Համուժեանք, (էջ 258): Պետի նշել, որ Համբուժ=խուռ. Ḫamburzi ինչպես և վերևում բերված Հոյ=խուռ. Ḫuia համեմատության մեջ խուռ. ḫ ոչ թե համապատասխան է հայոց «խ» բաղաձայնին, որ սովորական է այլ դեպքերում, այլ հայոց «հ»-ին: Խուռիտերենում այդ հատուկ անունը փոխառության է ակկադերենից-սումերերենից: Սումերական լեզվով ḫabbūru նշանակում է «ճյուղ, շառավիղ» (stock, shoot, sprout" (NPN 305, A. Makrae-ի գրած հատվածում), իսկ

sin աստծու անունը բարդութիւններում հաճախ դառնում է -si կամ -zi փոխվում է նաև Zi-ni, Zi-i-ni կամ Sin-ni-i կամ Zi-ni-a, ^{d}Sin-ni-ia, Sin-nia-ia, Si-ni-a, համեմատել այդ անունը որպես բարդութեան երկրորդ էլեմենտ -*A-bi-^{d}-sin*, A-bi-zi, A-bu-zi, A-pil-^{d}sin (*որդի Սինի*), Ą-bi-zi, Mu-hur-^{d}sin (*հանդիպումը— ընդունումը Սին աստծո*), Mu-ḫu-ur-za, Šarru-^{d}sin, Šarru-zi և այլն։ Ալդպես և Ḫu-bur-^{d}sin կամ Ḫa-ab-bu-ur-^{d}sin և Ḫa-bu-ur-zi (ibid., 311)։ *Մեր Համբուժ- կամ Հաբուժ- անունը առացվել է այդ Ḫaburzi-ից, որը ցույց է տալիս, որ խուռ.* (resp. *սումերա-ակկադական*) z *կամ* s *բաղաձայնը կարող է տալ հայերենում շ (ժ)։ Գուցե Աբա-ժին անունը նշանակել է «նվեր Սին աստծո», իսկ եթե* sie ‖ zin *փոխաբերաբար նշանակեր հետագայում «աստված» «Աբա-ժին» կարող էր նշանակել «Աբա-աստված»?։ Համեմատել մեդրելական* Antári-žina, *հնդկ.* Andari-sina *և այլն, որ պիտի նշանակին «Անդար աստված»։ Հայոց* Hambuž- *և ակկ.* Ḫuburzi-*ի խուռ. ձևի հետ համեմատել ասորական* Kambuzia *անունը* (Kn. Tallqist, Assyrian Personal Names, 1914, *էջ 274*), *որ ալնքան հիշեցնում է պարսից* Kambūses *անունը։*

14. *Kuari* (ku-a-ri *կամ* ku-ú-a-ri) *Նուզիում արական և երբեմն իգական անուն է* (NPN, 89)=Կուառ, *որը իբր հնդկական Դևմհարթ-Դիանոն իշխանների որդին էր Տարոնում, հիմնում է իր անունով Կուառս գյուղը և Խոռհան ու Մեշտի եղբայրների հետ կուռքեր է դնում այդ իշխաններին։ Խոռհան անունը անշուշտ ցույց է տալիս խուռիտական ծագումը և որոշ ցեղերի կամ տոհմերի գալը Տարոն-Տուրուբերան։ Թերևս սա արձագանք լինի նաև այն ժամանակաշրջանին, երբ հնդկական որոշ ցեղեր բարձր դիրք էին գրավել իրենց ազնվականութեամբ և* maryannī *զորքով, որ այդ ազատանուն տոհաններից («քաջերից») էր կազմվում, իշխում էին թե խուռի-Միտաննիում և թե հյուսիսային Սյուրիայում, թողած դեռ հնդկական դրանց լեզվի ազդեցութեանը, որը ըստ իս եղել է նաև հայերի էթնոսականքների վրա, անմիջապես թե միջնորդապես։*

Խուռիտական և հայկական անձնանունների հանդիպման դեպքեր կարող ենք ավելի բերել, եթե իհարկե ձևական և արտաքին բնույթ չկրեն, որ երբեմն անխուսափելի է դառնում։ Օրինակ, ունենք խուռ. անձնանուն Warašama *և հայկական Վարշամ, խուռ.* Zarmia (Zarwia) *և հայոց «զարմ» (=ցեղ, սերունդ), որը իզուր ենք հանում զ+արմ «ծառի բուն» (համեմատել և Զարմայր հատուկ անունը), խուռ.* Atikka *և հայոց Աթիկ և այլն։*

Թևերա խառխոների միջոցով է մեզ անցել ամպրոպի և կռիվների աստուծո Adad աստծո անունը, որպես պրպանուն. Քեպետ խառխոների մոտ այդ Adad անունը առանձին չի գործածվել բուն նշած նյութերի և միայն մասում է սեմական բարդ անունների մեջ, որոնք լատացվել են և խառխոների կողմից, ինչպես օրինակ, պրպանոններ—Adad uballiṭ «Ադադը տվեց կյանք», Adad-nošir «Ադադը—հովանավոր (է)», Zupradad (>Zurbadda) «Ադադի մադիները» և այլն: Այնուամենայնիվ հայերին անցել է այդ Adad անունը, այն էլ որպես առանձին պրպանուն Առատ ձևով, ինչպես հանդիպում ենք Առատ Հովհաննէս, Առատ Գնունի և այլն: Նմանապես կասխոների Ḫarpa (Ḫarbe) աստվածանունը (էնլիլին համազոր) մտել է խառխոների մոտ, որպես պրպանուն կամ անվան մի մասը Քե՛ այդ ձևով, Քե՛ Ḫarme ձևով: Օրինակ, նախիրց ենք—Ḫarbaniwe (Ḫarpaniwe) և Ḫarme, ինչպես նաև Ari-ḫarpa կամ Ari-ḫarm(e)e, Ḫaš-ḫarba կամ Ḫaš-harme, Kizzi-ḫarpa (Kizzi-harbe), Mele-ḫarpa (սարսկ «Մարրպաի») և այլն: Ինձ թվում է, որ մեր առասպելական հայկազնի Հարմա անունը ավելի մոտ է այս խառխատառած Ḫarme-ին, քան հունական Hermes-ին, թեկուզ վերջինը փոքրասիական ծագումով լինի:

Վերջապես կան խառխատական պրպանուններ, որոնք թվում է թե պետք է լինեն երևելիների թոթովանքի արդյունք (Lallwörten), բայց այսանդ ևս կարելի տեսնել աղգակցական նմանութիւններ, ինչպես խառ. Kakki (Gakki), Kakkia, Kakku, Kakkuia, Kakkuzzi (Gakuzi), Kik(k)i, Kik(k)ia, Kukkuli, Kuku (Gugu) և այլն, և մյուս կողմից հայոց Գագ, Գագիկ, Կակ... վրաց Kakuli, Kakuçi և այլն (տես NPN, էջեր 222, 226, 229). Թեպետ նման անուններ կան նաև Կապադովկիայի հնագույն ժողովուրդների մեջ, ինչպես Gaga (աստվածանուն), Gagia, Gakii (F. Stefens, Pers. names of Capp., 82, 83), ինչպես նաև աստուրական բնագրերում Gagii, Gagu և այլն (ibid., վկայակոչելով Kn. Taliquist, Assyr. pers. names, էջ 79)[1]:

---

[1] Ըստ. F. Stefhens-ի („Pers. names of Cappadocia", էջ 38) բերած այլևայլ գրքերից հավաքած անուններից, աստուրական աղյուսակներում («Բյուր-Քեպեն»-ից, Կեսարիայի մոտ) ի միջի այլոց հանդիպում ենք սեմական կազմության հետևյալ պրպանունը— Me-šû-rabi և Me-šar-rabi, որոնցից մանավանդ առաջինը շատ նման է մեր Մեսրոպ անվան, թեպետ սրտանքի էր Մեշրոպ:

Խուռի և հալ լեզուների այդ ազգակցական փոխհարաբերությունը կարծես թե բառամթերքից այն կողմը չի անցնում, լինեն այդ բառարմանները հասարակ թե հատուկ։ Ես թողնում եմ այն ընդհանրությունը, որ օրինակ այդ երկու լեզուները „r"-ով բառ չեն սկսում, սեռեր չունեն, որովհետև այդ երևույթը հատուկ է բոլոր վոքրասիական և մի շարք այլ լեզուներին, ընդդրկելով և խնթերևոնը („r"-ով բառերի բացակայությունն և սեռերից մեկի արտահոն և իգականի ներկայությունը անուններում, դերանուններում և դերանվանական վերջամասնիկներում)։

Խուռիաների հոլովման և խոնարհման թեքույթներից հալց լեզուն ոչ մեկը չունի, ինչպիսիք են ուղղ. (էրգատիվ), -š սեռ. -we, տր. -wa ուղևորման -ta կամ -da. ներգոյական -a կամ թե բայերի մեջ ներկայում—I դ. -au, II դ. -u, III դ. -ia (հոդնակին լավ չի հալտնի), անցյալում նույնը բայց -uš մասնիկով՝ aruš-au «տվի», aruš-u «տվիր», aruša «տվեց», ինչպես որ ապառնիի համար -et կամ -ill մասնիկն է ավելանում՝ kat-et-au «կհաղորդեմ», katilliet-a (katillit-a) «կհաղորդի», gipanet-a «կուղարկի» և այլն։

Խուռիաների կցականությունը ևս հայերենը դրեթե չունի, որը լինում է ամեն մի բառի հետ, նման խնթերևոնին և մասամբ ուրարտերենին։ Հալերենը միայն մի բանով է դրանց մոտենում, այդ այն է, որ դերանվանական վերջածանցներ (հոդեր) է դնում թե անուններին վրա (հալր-ս, հալր-դ, հալր-ն) և թե բայաձևերի վրա (գրեցաւ-ն, գրեցեր-դ, ասիմք-ս...), որով մեր լեզուն մոտենում է դրանց, բայց ոչ միայն խուռիտերենին։ Համեմատել խուռիտերեն ḫaš- uš-au-n pisand-uši-tta-ān «լսեցի (ḫašušau) նրան (-n) և (-ān) ուրախացրի (pisand-uši) ինձ (-tta), Šeni-wwu-šš-ān ašti šaruša..., undu-mān arušau-n և (-ān) եղբայր իմ (-wwa) նրան (-šš) կին (ašti) ուղևց (šaruša)..., ապա և (undu-man) ավևցի (arušau) նրան (-n)»։

Բառակազմության ընդհանուր մասնիկներ (ածանցներ) ևս դրեթե չկան խուռիտերենի և հալերենի մեջ։ Կարելի է ընդունել it՝ (-ɨt) ածանցը, ինչպես խուռ. Ennita (կա և Ennia), Ikita, Miššita, Ukkita, Zikita (կա և Zike, Zige), իսկ հալերենում՝ Արտիթ, Մարդիթ, Մաճիթ, Տիրիթ, Գնիթ, Ակիթ և այլն։ Կարելի է սահմանել և -ukka, -uk ածանցը—Dušuk, Šašuk, Ḫašuk (իգական անուն), Kaltuk, Kizzuk, Naḫaruk, որի դիմաց հալց Արջուկ, Հաւուկ. Սիւուկ, ինչպես և գառնուկ, խոզուկ, մանչուկ և այլն։

Քննարանական կապի դրության բացակայությունը այդ լեզուների մեջ թերևս պիտի բացատրել նրանով, որ խուռիտականների ձևաբանական այդ միճակը դրաբարի մեջ հայտնի միճակից եղել է մոտ երկու հազար տարի առաջ, և բնական է, որ ուժեղ տարբերը այդ կողմից բացակայում են կարելի է ենթադրել, որ խուռի այն լեզուն, որ հյուսիսում (Ազնիբրում և այլն) է գործածվել, որոշ չափով հնում է եղել Միտաննիի լեզվից, որը փաստորեն մեր քննելիքն էր հայերենի համեմատ: Եվ այդ հյուսիսային խուռիտերենը, որ ևս կանխանեի պատմական կերպով սրմինեների, ավելի մոտ է եղել ուրարտերենին, ինչպես ցույց են տալիս մի շարք բառային և ձևաբանական հանդիպումները այդ երկու լեզուների մեջ: Այդ հյուսիսային խուռիտերենից, որը Արմինա և Շուպրիա և լեռնական մասերում է խոսվել, անցել են հայերին, այսինքն՝ Հայասայի նվիրներին, ավելի շատ հատուկ անուններ, ինչպես և աստվածանուններ (Hapit ‖ Hepit, Šauška, Tark-, Šanta-, Ara, Nupatik), քան ուրարտերենից, որից ընդհակառակը ավելի են ձևվեր մնացել, բայց էլի համեմատաբար քիչ: Վերջապես ուրարտերենի լեզվական միճակը մեզ հայտնի է համեմատաբար ավելի ուշ շրջանից (VIII – VII դարեր), այսինքն խուռի-սրմիններենից յոթ դար հետո: Եվ բնական է, որ այդ ուրարտերենը, որը դեռ շարունակել է ապրել հինգերորդ դարում մեր էրայից առաջ, ավելի անմիջական լեզվական նյութ պետք է ներդներ նորագտվելիք հայերենի մեջ, քնանա էթնիկորեն հայերը հինգերորդ դարում, մանավանդ Բանանիոնի ժամանակ, երբ «հայոցները» դեռ կային, մոտ էին իրենց էթնիկական և զուտ լեզվական ձևակերպմանը: Այժմ անցնենք հայ-ուրարտական այդ լեզվական ազնության:

ՈՒՐԱՐՏԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԶՎԱԴԱՐՔԸ

Ուրարտուի տերիտորիան համեմատաբար ավելի հարմար և հանդիստ վայր եղավ յոթերորդ դարից սկսած հայ (Հալաասալի) պետականության, ինչպես և պատ (բալա) բազմաթիվ ցեղերի համար, քան իրենց վայրերը Վերին Եփրատի և Գնդաուսի շրջաններում, ուր նրանք ապրում էին որպես հարևաններ երկրորդ հազարամյակում մեր էրայից առաջ: Եթե Ազնիբրում, որ Ուրարտուի և Ասորեստանի կռվախնդրերն էր, այդ նվիրները չէսան ուժեղ հակադիր և ոտքի վրա ցեղեր, չհաշված պատերից պետության քաղաքական ճնշումը, ապա այդ անդական խուռի-ուրարտական ցեղերին հնարա էր ենթարկել և միության կազմել, խառնե-

լով դրանց հետ, ինչպես որ նրանք եվ նրանց շաբաթի (շաբաթային) և տարին խառնանները իրենց լեզուն գրելիս կորցնելու ընթացքում էին, ներթարկվելով արամայեցիական (սիրիացական) նոր սկսվող ուժեղ ազդեցության, դրա դիմաց հյուսիս ընկած լեռնային և Տարոնի, Վասպուրականի, ցեղերը դեռ դերծ էին այդ ասիմիլյատորական հոսանքի ազդեցություններից եվ հալոց լեզուն հիմնականորեն, մանավանդ քերականական տեսակետից, պիտի լաբացներ, մնար, խոչընդոտ այդ Աղձնիք-Տարոն (Տարաբերանի) լեզվատարրերը։ Իսկ Միտաննի խառնական լեզվատարրերը մանավանդ քերականության տեսակետից, ինչպես արդեն տեսանք, դուրս չպիտի տեսնային այդ VII—V դարերում։ Դժբախտաբար Տարաբերանի այդ լեզուներից դրասեր մենք ոչինչ չունենք, միայն կարելի է ենթադրել, որ դրանք միջին տեղը պիտի գրավեին հին Միտաննի խառնուրդների և համեմատաբար ավելի նոր ուրարտական միջև։ Իսկ այդ վերջինը, եթե համարյա համարենք «ուրարտա և «խալդ տերմիններդը, որ ամեն պարագայում չէր կարող լինել («խալդյան... նշանակում էր «խալդապաշտ», «խալդերի-վանեցկիների իշխանության և այլ տատծուն ընդունող), ապա փաստ է, որ կենդանի լեզուները այդ խալդերին անվան տակ շարունակել են տալով մինչև հիմնական դարի վերջերը, մինչև Քանանեացների ժամանակ։ Այժմ վերցնենք պարզունակ մեզ հայտնի Ուրարտուի իշխողների լեզվի և հայերենի համեմատական քննությունը և տեսնենք, թե ինչեր են յուրացրել նվիրոր հայերը, արդեն հայացրելու։ Վերցնենք նախ ուրարտա-հայկական ընդհանուր բառամթերքը, իսկ հետո և քերականական տարրերը։

1. abili «ավել, ավելի, больше։ Այս բառը գործ է ածվում մեկտեղ ebani ebanitukedi abili dabi նախադասության մեջ, որը մեկ անգամ պատահում է մեկտեղ ասդամական արձանագրությունների մեջ (Արգիշտիի և Սարդուրի)։ Մ. Ներսիսեանը իր հրատարակած Սարդուրյան նոր արձանագրություններ (Հ. Օրբելու կողմից գտած, Վանի ժայռի արձանագրությունների) աշխատության մեջ (էջ 40 և շարունակությունը), հենվելով ասատրական նման ասդամական արձանագրությունների māta ana mātija utir «Երկիրը երկրին կցեցից նման արտահայտությունների վրա, ուրարտական վերոհիշյալ նախադասությունն էլ այդպիսի է թարգմանում (անս նաև J. Fridrich, Einf. ins Urartäische, էջ 62—63)։ Երկուսն էլ abili dubi գրած են մեկտեղ, իսկ իմաստի տեսակետից J. Fridrich-ը ուրարտ. այդ բառը սկզբում (ծագմամբ) համընկ-

ներ այդ ակկադական *turru* «շրջել» (drehen, wenden) կամ «դնել» (hinzufügen) բայի իմաստին։ Ես ևս կարծում եմ, որ abili-dubi) ընդհանրապես է ուղիղ որպես «միացնել, դնել», բայց ի նկատի ունենալով հայոց «ավել, ավելի» բառը, որից յաւելուլ (-ավելացնել), առաջարկում եմ ուրարտ. այդ նախադասությունը թարգմանել՝ «(այդ) երկիրը երկրին (ebani-ukie-di) ավելացրի»։ Արգիշտի I մի արձանագրության մեջ, որը ըստ Հ. Օրբելու ճիշտ ենթագրության ենացորդն է վանա ժայռի արևելյան նշանի մեծ քարակոթողից (որ չի հասցել), ս. Մահակ եկեղեցու գոհասեղանի տակ է անդավորված, մենք կարդում ենք այդ ուրարտական նախադասությունը այլ բարդություններով (տողեր 8—19)—„3KUR ebanieli edini suṭuqubi LUtaršuanarani abili-dubi KUR ebani-ukie-di...“ =երեք երկիրներ առգանեցի, (իրենց) մարդկանցով միասին (-rani) ավելացրի իմ երկրին՝ երկիր Կալխի..., երկիր Ասկալասին (և) քաղաք Շաշիլուինին։ Վերջմասնիկ -ra «միասին» կա և խուռիներենում։ Իսկ -uki «իմ» կամ նաև ka-uki-(kai-uki) «առջևս» (ka կամ ավելի հաճախ kai նշանակում է «առաջ»), -di ուղղորման հոլովի վերջավորությունն է։ Abili բառը ազգակից եմ համարում հայոց աւել „более“, abili dubi «ավելացրի» (прибавил), ուր ուրարտ. b=հայոց ւ կամ վ, ինչպես *Biaina*=Վան, անց. կատ. կրավորական-չեզոք -abi—հայոց աւ և այլն։ Abili dubi «ավել արի» (=ավելացրի) ոճի մեջ երկրորդ մասը (dubi) առանձին բայ է, անցյալ կատարյալ առաջին դեմք եզակի, և *du*- արմատը այդպես բարդությունների մեջ կարծես թե ներդործականպատճառական իմաստ է պատճառում նախորդ բառին, ինչպես -atḳana dubi «պաշտամունք արի» (=պաշտանցի), ipša-dulini «խմել արվելու» (=խմեցվելու), niki duli «տուդգ, ուղևցի» (?), nipsi duli «գոհ, գոհեցի» (կա և nipsi dulini Զվարթնոցի արձ., տողեր 19, 23), wili duli «գունդ արի» (=հավաքեցի?), որի համար կա նաև welisini «գնդալինն», well šusini «մեկ գունդ» և այլն։ Հայոց աւել(ի) բառը ուղում են կապել հունարեն ophéllō «մեծացնել, ուռցնել, աճեցնել, ավելացնել, շատացնել», óphelma «աճում», óphelos «օգուտ, շահ», նման հնչյունական հարաբերությամբ, ինչպես հայոց աւել «ավելուլ» գործիք, веник և հուն. ophéllō «ավլել», óphelma «ավել» (տես Աբմ. բառ., I, 803, 807)։ Բայց հայերենում հնդեվրոպական ծագում ունենալու դեպքում ապասելի էր *որել կամ *արել, ինչպես ճիշտ դիտում է Հ. Աճառյանը (անդ, էջ 803)։ Մյուս կողմից ուրարտերեն abil(i) բառի

դիմաց ավելի շուտ հայերենում սպասելի էր ափ կամ արեղ, ինչպես ուրարտական ժամանակի Abilianiḫi անդանունից է, հայերենում ավել է Աբեղեան, Աբեղենից նախաբարբառյան անունը, պահելով իրեն B =հայց Բ (b)։

2. baba «ես, սար, гора», որից babani «լեռնալին» և Baba աստվածանունը Մհերյան դռան արձանագրության մեջ (տող 21/68)։ Հայերենում այդ բառը մաքուր կերպով պահել է երևմիա Մեղրիցու բառարանը, ինչպես ասվել է խուռիտական հիշված pap- ‖ pab- նույնիմաստ բառի մասին։ Հայց Փափ-ենն, ափափա, Փամփ-փամբակ, պանդ և նման բառերը գալիս են Հայաստանի արևմտյան մասից, Վանի լճից արևմուտք, այնինչ Բարձր երկիր բառը մացել է ուրարտերենից, չվոխելով b բաղաձայնները, ինչպես Abilianiḫi=Աբեղեան հատուկ անուններին դնելքում (այդ նախաբարբառյունը դանվում էր Արածանու ավազանում, Կաղզվանի մոտ)։

3. ebani «երկիր», որին ազգակից է հայց աւան «գյուղաքաղաք», «մեծ գյուղ» բայց նաև «դաշտ», ինչպես Կուրեղ Ագնքանպրացու մոտ է (Մեկնութիւն Աստվածաշնչի, Թադևոսյան ցրքի մեջ) ուր աւանապետ նշանակել է «դաշտաապետ» կամ թե «աւան այն ասի, որ լանդէ ոք մասն ի շինուած գրաւիցէ» (տես Արմ. բառ., I, 794—795)։ Աղգակից եմ համարում նաև մեդրել. abani «տեղ» և քարթվելյան ubani տեղամաս, «թաղամաս»։ Համեմատել նաև Gardabani վրաց քաղաքանունը (=«Գարդաբան»)։ Մեդրելյանն և հայկականն ձևերը հին „e“-ով սկսող բառերի մեջ պիտի լինեին „a“-ով սկսող aban կամ avan։ Հայերենը այս դեպքում „b“ բաղաձայնի դիմաց ունի v (w), ինչպես ուրարտ. abili =հայց աւել օրինակի մեջ։ Ուրարտերեն բառը իններորդ դարի վերջից է, և պետք է ենթադրել, որ նա իր հերթին ազգակից է հիներդելիֆ խեթ. umene «քաղաք» և խուռիտական Umini «երկիր» բառին, որը սմանք (Bork, Speiser, Sagce...) գրում են amini բնիկ ձևի u (ոչ ú) հնչյունի պատճառով։ Նույն այդ umini (omini) բառի հետ պետք է առնչակցել խեթ. -uman վերջամասնիկը (Hattušumanas, Palaumanas), որով ցույց է տրվում տվյալ քաղաքին կամ երկրին պատկանողի նման մեր -ացի (Կողբացի...), -եցի (Սորենացի...) մասնիկին։ Ըստ էս, ասորական awwānā, թալմուդական avnā «իջևան, բնակարան», քրդական awāni «շինք, շեն տեղ» և սանսկր. avani «երկիր, հող» փոխառություններ են այս հին ասիանիկ լեզուներից։ Եվ իզուր են ուզում հայց աւաճ

բառը համարել պարսկերենից փոխառյալ, ուր կա միայն հին պարսկ. āvahana «դիրք, տեղ» (=ասեղկր. āvasana «քաղաք»): Ասուր. և հին. խեթերեն umen ‖ umin (‖ uman- «ժողովուրդ», Umman Menda «Մանդա ամարդիկ, ժողովուրդ») և վրաց uban «արար. elan հարց ասան և այլն բառերը տարբեր հնչյունական ձևափոխություններ են միևնույն արմատի m ‖ w սովորական հերթափոխությամբ (ալանբնագիտության), որ այդքան հաճախ է այդ բնագավառում (համեմատել նաև էլամական uwanis «քաղաք» առացված *umani- բնից):

4. eurī «տեր» (և խուռ. ewri-) միացել է հարց արեար (օրեար)=օրևանք տերեր, մեծեր և օրիորդ բառերի մեջ, որոնց բունն է awri-e ‖ a սովորական փոխանցումով բառասկզբում: Հետևենում ոչ միայն ուրարտական բառասկզբի „e"-ն է դառնում „a" (ebani=ասուն, ewri-=տեր-), այլև „u"-ն դառնում է նույնպես „a", ինչպես Urarț-(u) Արարատ (Արարատ), Urrana քրմի անունը =հ. Արձան քրմապետ:

5. ḫat-ubi «կարեցի, բաժանեցի», սովորական ոճ է ասգմական արձանագրությունների մեջ— ենթահնդի A երկիրը..., կարևյի (ուզեայա, ուզեայա) մինչև (պուե) B քաղաքը» և այլն: Ḫaṭ- արմատը աղբակից պիտի համարել հարց ճառանում և խեթ. ḫaṭi- նախդիմատար բայարմատներին:

6. ḫuš «դցել, бросить» օրինակ Չիարթնացի արձանագրության մեջ— aluše KI apulie aluše A^{mes} ḫušulie (35'—36') «ով հաղոյ ծածկի, որ քրերը դցեց (արձանագրությունը), կամ ինչ Սարգոն VI արձ. վանի հյուսիսային ժայռի արձանի նիշատակ -ali iṣtuše mānuḫušibi «ինչ... միացել էր, ես դուրս կորզեցի» (ըստ J. Fridrich-ի „Hess ich hinausgeben", տես Caucasieb, Fasc., VII, 1931, էջ 84): Ուրարտական բոլի արմատը անշուշտ հնչյուն է ḫoš- և պիտի կապակցել հարց ճուռնի բայարմատի հետ, որ նշանակում է «հոսել, վազել, հոսել, թափել, ցոլանը երկնքով հարթից քոլել, վերից ցած դցել, դահավիժել»: Վերջին իմաստը «դահավիժել, ցած դցել» միանգամայն համընկնում է ուրարտ. ḫuš- (=hoš-) արմատի իմաստին:

7. ḳiura- (qiura) «հող» շինարարական հարանի հատվածում „ḳiurani ḳuldini manu uigiel uštini sidauri, որը մի անգամ դրվել է KI^{mes} ḳuldini manu և այլն (Corp. Iser. chald, 149, XXXIX աղյուսակը), ուր KI գաղափարագիրը փոխարինում է սովորական ḳiura կամ ḳira «հող» (ḳirani ṣirabae manu..., «Կարաքալպի արձ., տող 4, Արաքսի վրա»): Հնչյունական lu (lw)>l փո-

խանդուքը պատահում է և այլ դիպքերում, ինչպես arniušinili *և* arnišinili (=RU^{meš}-li *գլխավորություններ, գլխավորություններ*)։ *Հայոց լեզուն այդ* kira (qira) *հոդը ձևը յուրացրել է հին* ekira *(նկիրա) ձևով, դնելով սկզբում „e" ձայնավորը և հետագայում ավելացնելով „r" երկին բառի պատճենությամբ՝* erkin-ekir *ինչպես բաբրուաներում ունենք երկինք-գետինք, ուր երկինն է պրիմատը, ասիմիլյացիայի ենթարկվողը (առաջնության բառային ասիմիլյացիա)։ Համեմատել երկնքի առաջնության տեսակետից մեր երկինէր երկին և երկիրս (կամ երկինէր երկին, երկինէր երկիրս) խեթական* nepis tekann-a *երկին և գետինն և այլն։*

8. paḫini գարշտ, խոշոր եղջյուրավոր անասուն (եզ, կով), որ ամենատարածական բառն է ազգական արձանագրություններում, որպես ավերատեսչության առարկա։ Համեմատել հայոց պախրք տատամ, արջառ, նախիր, որը փոխաբերաբար նշանակում է նաև տունիք, պարտս, հինգ, ստացվածք, ապրանք, դրամ։ Կա և պախպայ (id.), պախրեին եմի քիչ դրամ (տես Ասմ. բառ., V, էջ 781)։ Այդ վերջին իմաստները (ապրանք, ինչք, դրամ, ունեցած) բխում են առաջին իմաստից, ինչպես ճիշտ նշում է Հ. Աճառյանը, վիրակաչելով լատ. pecus *և* pecunia *հինգ, ապրանք, դրամ, արծաթ, արտերին* māl *ունդ, տավար և ապրանք, հարստություն, ինչք, որոնց վրա ևս կանգնեցնելի սլավոնական (ռուսաց)* скот *և գերմ.* schatz *գանձ, հարստություն նախնական* skat *ձևից։ Կան և սեմական նման մեր պախրք-ին հետևյալ բառերը— սասր.* baqrā *գնախիր, եբր.* bāqār *գարշտ, կով, ցուլ, արաբ.* baqara, baqra *ունդ, կով, ասսուր.* bukḳuru *գնդրկիկ։ Արաբերենից է փոխառյալ հետագա հայոց պաքարայ նույնիմաստ բառը (ibid., 781)։ Մեր բարբառներից Զեյթունը, Սվիդիան և Հաճինը այդ պախրք բառը պահել են տեղ նշանակությամբ, իսկ Երևանը, Տփղիսը և Ղարաբաղը ունեն պախրա տեղջնեռա իմաստով (ib., 783)։ Սեմական ձևերը ավելի մոտ են հայոց բառին վերջին „r" բաղաձայնով, իսկ ուրարտերենը սկզբի տպ բաղաձայնով, ասորերենով վերջին իր n (ն) բաղաձայնով։*

9. pili, pilie (=pile) գրանցք, որին համընկնում է հարավային խաւխաներեն pala=*սահմ. pa, (տես* Kleinasiatische Sprachdenkmäler, *էջ 153, հրատ. J. Friedrich-ի, Berlin, 1932)։ Համանական է, որ ուրարտ. pili (pile) գրանցք բառը նշանակած լինի սկզբում տեխտված, ի նկատի ունենալով հայոց նույնասլաս պեղ-ում բառը, որի ավելի հին արմատը պետք է լիներ*

pil- ինչպես այդ անունում ենք տրիշ արմատների մեջ (Սկղբնատրոս=Silvestros, Բարսեղ=Basilios, նշանաւոր=illustris և այլն)։

10. šani «անոթ, աման» (Gefäss), որը կարդում ենք կելիշինո տրարտական հայտնի երկլեզվյան (տրարտա-ասատրական) արձանագրության մեջ (VI տունակում), ուր տասուր. naši-ţiqar erī „er brachte Gefässe von Err" նախադասության է համապատասխանում տրարտերենում՝ naḫuni šani ERI (տես A. Götze, Lur Kelischin-Stele, ZA, HF, V, էջ 108)։ Հայերենում այդ տրարտ. -šani (հնչվել է san) բառի դիմաց ունենք նուխանանչ և նուխիմասա սան (san) «մեծ կամ փոքրիկ կաթսա» բառը, որն անշուշտ տրարտերենից (խուռիտերենից) է մտել մեր լեզուն։

11. šerdulie «ճնդքել, paccerem" ապառնի 3-րդ դեմք եղակի, գործ է ածվում անեծքի հատվածում (տես այս քարարձանը šerdule"), գրվում է še-ir-du-li-e կամ երբեմն še-ri-du-li-e, որոնք ցույց են տալիս šerdule արտասանությունը։ Ես այդ թարգմանությունը տալիս եմ նկատի ունենալով հայոց շերտ «փայտի ջարդված փտոր, պանրի կտոր», «ցանկապատի ցից», շերտել «շերտ շերտ կտրել, դնել, ջարդել, ճնդքել». շերտակոտոր կամ շերդակոտոր անել «տապարով ջարդել, կոտրատել», շերտափակ «ցիցերով փակած՝ գոցած»։ Ուրարտերենում Šerdulie կարելի էր անսակարնորեն բաժանել և šer-dulie, որ dulie կլինի ապառնի 3 դ. «կանե, сделает», ինչպես ունենք՝ atqanaduli «պաշտամունք արի», nepsi-duli, šišul-duli «ծես կատարեցի», ter-duli ի նկատի ունենալ terubi (‖ terulubi) «գրի, հատատուցի, նշանակեցի» և այլն և այլն։ Բայց ավելի դեպքում šerd- պիտի դնել պարզ արմատ, մանավանդ որ կա ոչ միայն հայոց շերտ ‖ շերդ այլև արաբ. šart «մարմինը շատնել», տասր. šarat «պատատոտել», թող թե հնից հայոց շատնել, որը կարող է հերթափոխ ձևը լինել շերտ ‖ շերդ արմատի։ Վերջապես ուրարտերենում ունենք և տրիշ նման մեր šerd- պարզ ձևին, օրինակ, ինչպես nuld- «ընդարձակել» (նոր Բայազետի արձ.— aluše KUR Biainili nulduali «Ով Բիայնա երկրները ընդարձակեց»)։

12. Uiri «գնր, պարարտ, жирный» գործ է ածվում Մհերյան դռան արձանագրության մեջ (տող 26/83 u-i-ti կամ [u]-i-e-ri), որպես հատկանիշ գոհվող ոչխարի։ Մենք հին աղբյուրներից (Ասողիկ, Ստեփանոս Տարոնեցի և այլն) գիտենք, որ ասոժուն կամ ասոլիկներին շատ սիրելի էր մատուցել գոհ պարարտ կենդանիներով։ Ուրարտական

արդ բառը և նշանակությունը ևս հաստատում եմ հայոց յոյր «պատրաստ բառով»։

13. ul-adi «աղեղորվեցին» (Սարգսյան Նիշալի V, 4 տրձ.— uladi KUR Etiuniedi «աղեղորվեցի Էթիունեի երկիրը»)։ Այս չեզոք անոի ula- ձևի կողքին կա և ulu «աղաղակել, գնացուցանել», որ անհնչի ֆորմալային վերջումն է դրած ածվում ul-ulie ձևով (հանցավորիս... Խալդ, Թեյշեբա, Արև) և այլ (աստվածները թե arḫiuruliani թե inaini թե nara բնաշնջման մասանին)։ Այդ արմատը առկա է հայոց Ուղի „направление, путь" ուղիղ (որից ուղղորդ) „правильный" և նման բառերի մեջ։ Համեմատել և վրաց vla «չվիլ»։

14. uḫ- «առագել, հոսեցնել» դրած է ածվել uḫulini ձևով Ռուսա I Քինէիդոլի արձանագրության մեջ Վանի մոտ (28'—32') —«ջրեր Ալայնի գետից առաջ տարավ Ռուսախենային [=Թոփրակ կալե], որ ջրերը Ալայնի գետից Տուշպանյան դաշտը առագեն, որ ջրերը Ռուսախենային համար խմելու ծառայեն» (? ipsadulini)։ Թերևս ալս uḫ- արմատից է և uḫu «արշավանք, поход», որ կարդում ենք Սարգսյան արձանագրության մեջ (21'—23')։ ištidi uḫudi URU Meliṭaani..., nunabi [I]Ḫiḫeruadani ka-ukie «ալս արշավանքիներ Մելիտան... եկավ Խիլարուադան առջևս»։ Ալս uḫ- արմատին ազգակից եմ համարում հայոց ուղխ «ջրի հոսանք, սելավ, поток»։ Իմաստի և թերևս ծագման տեսակետից համեմատել խեթ. laḫui «թափում է ջուրը, և выливает» և laḫḫa «արշավանք», թոդած գեռ ləx- (լըխ-) բնաձայնական արմատը ջրի խուլ շարժվելու մասին (տես Ն. Մառի անվան կարինեանի աշխատություններ, 3, 1948 թ., Երևան, Պետհամալսարան, «Երկու բաղաձայն բառէլեմենտներ», էջեր 5—211)։

15. uduli «խաղող»=հայոց ստղի «վայրի խաղող», որանց հետ համեմատել նաև արաբ. duali և ասիերեն toli նույն նշանակությամբ։ Թերևս եղել է արարա. նաև aduli «խաղող» ձևը (տես ատրե)։

16. şue «ծով», şuini «ծովալին»=հայոց ծով և վրաց zγue (id.), որը առացվել է zue հին ձևից։

17. şišuli «ծես, արարողություն, ритуал»։ Գործ է ածվել 1908 թվին Արմավիրում գտնված Սարգսյան մեծ արձանագրության մեջ (տող 10) adulie şišuli tananini [I]Argištili [I]SAR durie tini «խաղողիս» (փոխանակ udnlie?) ծես կատարվեց Արգիշտու

և Մարդուբի անվամբ։ Դրան ազգակից են հայոց ծուս և վրաց ծնսի (ծնսი) նախնական բառերը։

18. urb- «զոհել» ունենք urbulini «ձեռք», օրինակ Աշրաստարդալի (Վանից արևելք) արձանագրության մեջ (տողեր 4—5)— «մի գառ խայդ աստծան զոհվից» (nipsi-dulini), «մի եղը խայդ աստծան զոհվից» (urbulini)՝, կա և urbuaši «զոհարան», —urbika «զոհաղբ, «մարթող» (ուղղ. հոլ. ur-bi-i-ka-a-še, urbikani-kal —«զոհաղի առաջ»), մարդ դիտչիով, տես Ամասիայի 13 տողանոց արձանագրության ձախ քարի ութերորդ տողը և աջ մասի իններորդ տողը (միջին քարը կարել է) խուռիներենում ունենք urbum-mu epēšu «քարթիել» (epēš-u «անել» ակիռադերեն է), urbarinni «քարթող, մարթող» -ar սովորական մասնիկով (E. Speiser, Intr. to hurrian, 115, 135)։ Ուշագրավ պիտի համարենք արտաքսա-խուռիական urb- «զոհել, մարթել» բայը, որը թևերս orb- է հնչվել։ Ի նկատի ունենալով որ «զոհել, մարթել» բայը ունենում է «հնդել, возлиять» իմաստը, ինչպես spant- խնթիներեն բայի առումներն են (համմ. և հայոց spand), ես ենթադրում եմ, որ մեր գոլտասական որպիլ կամ որթիլ (Արաբ., Դարտարդ) «հնդակի՝ դինի, ջուր և այլն քոժակով կամ գրալով վերցնել և նարիկ թափել տանդր ազգակից պիտի լինի այդ ուրարտա-խառ. orb- «զոհել-դնդել, թափել, возлиять» արմատին։

19. uruli «հողի», որը ևս հանում եմ Մհերյան դռան արձանագրությունից (տող 9/45)—GUD 2 LUDINGIR aluše uru-live šu-all «ևզր (և) երկու ոչխար [պիտի զոհել այն] աստծան, որը [աստացի ով] հողիներ է փոխադրում»։ Ունենք անհժշի ֆորմատիվի և նշանակիչ arḫi uruliani բառը, որը inaini (=?) և nara (=?) բառերի հետ զուգման է ներկայվում։ Arḫiuruliani, որ մի անգամ և դառ գառ է գրված (arḫi «մի տող վերջում և uruliani «մյուս տող սկզբում) բուռ իս նշանակում է «մատիկ հոգիներ», այսինքն «տզրուտակը, родня, տզրակիցներըն։ Այդ uruli բառի վերջին -ul մասը պիտի համարել ածանց, ինչպես ունենք šišuli «ծնող», իսկ ur- «հողի», թևերս և uru- «մենք» տեսնում ենք հայոց արխական „призрак" և մանավանդ մեր գոլտասական ur ‖ ura «հողի» բառերի մեջ, ինչպես, urpumu սալիս ա «հողաս մեջ տալիս է» (Աստվածը) կամ urbu սալիս ա (նոյնը), ur urbu սատցվել է urayu ձևից, ինչպես՝ տղա, բալց տղէս, երէխա, բալց երեխէս և այլն։ Այդ «տրամ (կամ urէս) տալիս ա» ոնը տգատ կերպով կարելի է թարգմանել «ես ներքուստ զգում եմ», «հնազանդելով զգում եմ, уменя в душе отдается»։

20. *weli* «զորագունդ, գունդ» (ú-e-li) երբեմն LÚ «մարդ» արտիշխոյն Ն. Մառը թարգմանում էր „созыв, ополчение" (Археол. экск. 1916 г. в Ван, табл. V, էջ 54)։ Կա հաճախական ձևը— *weli dubi* «հավաքեցի, զորահավաք արի», ունենալով LÚhuradinili «զինվորներ» կամ LÚA, Sᵐᵉš «զորքեր» առարկան։ Հետո ունենք— LÚ*weli* šusini «գունդ մեկ» (uštadi LÚ*weli* šusinie KUR Welikunigidi ḫaubi KUR Welikunini KUR-nie «զբաղվեցի մեկ գնդով Վելիքունիդ երկիրը (և) զբաղեցի Վելիքունյան երկիր(ներ)ը», Սարդուրի Նիշալի V արձ., տողեր 16—17)։ Կա նաև ածանցյալ LÚ*welisinie* (Արդիշտիի Խորխորյան IV արձ. 79—80 տողերում՝ LÚ. A. Sᵐᵉš-şie LÚwelisinie... dastrani ḫarḫaruubi «զորքերի մեջ գնդային...)։ Հիմնական «հավաքված» գաղափարը հնում որոշ ռազմական պայմաններում դառնում է զորագունդ, նման գնդի. Volk «ժողովուրդ» և առաջ полк «գունդ» ազգակից բառերի իմաստաշրջման։ Համեմատել և քրդերեն gund «գյուղ», իրանական gund «գունդ, ком", որից գնդակ։ Այդ նկատառումով արարատական *wel-* բառը ևս ուզում եմ անվանել հայոց գեղ «գյուղ» բառի մեջ, քանի որ դրաբարյան գեղ, ունենալով սեռ.-տրակ. գեղջ (որից գեղջուկ) ցույց է տալիս, որ հնագույն ձևը արմատը եղել է գեղ, իսկ *wel-*>գեղ հնչյունական փոփոխությունը մենք տեսնում ենք նաև Welikuni - Գելարքունի տեղանվան մեջ, թողած դեռ այդ w>g փոփոխությունը մի շարք հնդեվրոպական ծագում ունեցող հայ բառերի մեջ (համեմատել նաև վեր>գեր)։ Ինչպես մենք հետո գտնում է մեաձք, ձեւք>ձեաւք, եւրճ>եաւրճ և այլն, այդպես էլ «գեղ»-ը դարձել էր գեաւղ, որ բնավ հնագույն չէ, ինչպես ոմանք են գրում։ Իսկ w (հայոց ւ) ձայնորդի բառամիջում ավելանալու դեպքեր մենք ունենք ոչ միայն գեղ>գեւղ (>գիւղ) բառի դեպքում, այլև ըստ առիծ>առւիծ (>առիւծ), եղ („елей", „ἔλαιον, oleum)>եւղ) (>իւղ)..., ինչպես մատչիմ>մաւտ, ճեսամ>հեւս>հիւս, գ(ի)ա-անիմ (եղիտ «գտավ»)>գիւտ, արած-ևմ>արաւտ և այլն։

Ուրարտա-հայկական լեզվական ընդհանրությունները անշուշտ շատ են եղել։ Կան դժբախտաբար նմանություններ, որ կարծես թե ձևական են, արտաքուստ, այսինքն՝ հնչյունական կազմով նման են, բայց ուրարտերեն բառի բուն նշանակությունը չի պարզվում,

ինչպես ունենք ikukani «նուշ» *բառի կողքին նաև* inukani, *որ կարծես* ini «ատլս», *որից* inuki «ատլսե» *և կարելի է ենթադրել և* inukani, *ինչպես ունենք Չվարթնոցի արձանագրության մեջ* inukaḫini (umeš.ini tini inukaḫinie ¹Rusainie *տարվից անուն ապ նուշենի՝ Ռուսայան»): Եվ հետևապես կարելի էր ենթադրել* inukani *նման նշանակությամբ մի դերանուն և կապակցել հայոց ինքն-ինքեան դերանվան հետ:*

Հետո լինում են դեպքեր, երբ հայկական բառը չի առոգված խառատի և կամ ձևի տնտակներից, որ հաճախ ազավաղված է լինում գրչագիրների կողմից: Օրինակ, երեմիա Մեղրեցու բառարանում (տես Արմ. բառ.-ում) բերված է «մեղարդ» բառը, որը թարգմանվում է «լուսին»: Եվ քանի որ այդ բառարանը երբեմն շատ հին արաբատական բառեր է պահել (օրինակ, բառա «լույս»), ապա ևս հատուտ կարող եմ պնդել, որ այդ մեղարդ-ը ազավաղված է սեղարդ ձևից երկաթագիր Ս և Մ տառերի շփոթությունից, իսկ արաբականն šelardi (ši-e-la-ar-di-e) *տրակ. հոլովով՝ 1 եզ. 2 ոչխար Առված Սին-ին, որը գուգահեռ տեքստում գրված է «Առավոտ Սեղարդի-ին», տես Մեներյան դասն արձ., տող 7/41): Մարիում հայտնաբերված խուռիտական աղյուսակներից մեզ հայտնի է* šindi šalardi *(տես* Speiser Intr. to Hurr., 27), *ուր* šindi *նշանակում է «լոթ», իսկ* šalardi-*ն հավանորեն նշանակել է «առտղ»: Այդ բառերի* -ardi *մասը կա և* šinuiardi *առտվածանվան մեջ երեք թողնենք* Ardi(ni) *առտվածանունը, որը կասկածելի է ընդունվում, որպես արև առտված (ըստ* J. Fridrich-*ի պիտի կարդալ* Šiwini «արև» *առտված=խառ.* Šimigini): *Ուրարտերեն* šelardi-*ն հնչվել է* selardi *(սեղարդ>սեղարդ), ինչպես* š *տառը հնչվել է* s *նաև* šani *(=հայոց սան). Tušpa=հայոց Տոսպ և նման դեպքերում: Ուռ.* šindi šalardi=«Մեծ արջ» (Большая Медведица)?:

Վերջապես ուրարտական բառեր կան, որոնք իմ կարծիքով հնդեվրոպականի նման և նույնիսկ առանց բառերի հետ միասին են ձևավորել հայկական համապատասխան բառերը: Օրինակ, ուրարտերենը ունի ieše (=iese) «ես» *և խառ.* iša- (=isa) «ես», *որոնք կարծես թե ավել են հայոց* bu es *բառը, բայց մյուս կողմից հնդեվրոպական* eg'o(m) *դերանունը հայերենում պիտի դառնար ես* ես, *որ սակայն այդպես չի հնչվում, այլ վերջի «ձ» բաղաձայնի փոխարեն տալիս է* u (s): *Այստեղ անշուշտ ներգործել են ուրարտա-խուռիտական* ies- || is- «ես» *բառերը: Այդ կրկնակի ազդեցությունը երկու այդ տարրեր լեզվական ակունքներից մենք տեսնում*

ենք նաև մեր «այլ» բառի ծագման խնդրում: Հնդեվրոպաբաններն մեր այլ բառը հանում են «նախահնդեվրոպական» alyo- ձևից, որից նաև հունարեն ἄllos «ուրիշ», թեպետ կան մարդիկ, որ առաջարկում են և allo- նախաձևը, որից կիպր. aῖlos, լատ. alius, գոթ. aljis, հին իռլ. aile և այլն (Արմ. բառ., I, 249—250): Բայց ևս պիտի ավելացնեմ, որ եղել է և ուրարտ. uli- «այլ, ուրիշ» և խուռ. u-u-li «այլ» ('other', Speiser-ի մոտ, 24), որը հնչվել է oli: Կարելի է ենթադրել, որ ուրարտերեն uli-ն ևս հնչվել է oli, իսկ քանի որ ուրարտ. սկզբնական u (=o) ձայնավորանիշը հայերենում անդրադարձել է „a" ձայնավորով (Urart=Արարադ, Urzana=Արձան), ապա սպասելի էր և oli>*ali>այլ: Այստեղ ևս, ինչպես es դերանվան առաջաբանութեան դեպքում, եղել է այդ խուռի-ուրարտական լեզվաշերտի միջամտութեյունը, գոնե բառի յուրացման պարմաններում, նրա պատմական լինելութեյան ժամանակ: Եվ այդպես անշուշտ և շատ այլ դեպքերում: Մինչև իսկ կարելի է պնդել ուրարտ. ag-ubi «տարա» (ջրանոց, մարդկանց դեպի վան), at-ubi «կերա» բայերի հնդեվրոպական նման բայերի հետ ազգակից լինելու մեջ (համեմատել խեթ. at- ‖ et- «ուտել», խուռ. ag- ‖ ak- «վարել, տանել»), որոնք չեն համընկնում հայոց ած-եմ և ուտ-եմ ձևերի հետ, որոնք նույնպես հնդեվրոպական ag- և ot- արմատին են պատկանում: Հնդեվրոպական տեսք ունի և ուղղական հոլովի (agentivus, ergativus) „s" վերջավորութեյունը, ինչպես uli-še «ուրիշը այլ մարդ», alu-še «ով», Argišti-še և այլն, եթե դրանց հետ բայը ներգործական սեռի է: Նման անձնական ենթական -š ուղղականով և անցողական բայի հետ ունի նաև խուռիտերենը (Giliašš-ān paššitḫiwwuš tiwe anti guluša «և Գիլիա դնապանս բառն այն ասաց»): Անմիջական խնդիրը (ուղիղ խնդիրը) երկու այդ լեզուներն էլ առանում է -n վերջավորութեյունը, եթե առարկան անձնանուն է: Այս երկու վերջավորութեյունները (ուղղ. -š հայց. -n) նույնպես հնդեվրոպական տեսք ունեն, բայց ինարկե սա կարող է մեզ թվացող լինել:

Ձևաբանական ընդհանրութեյուն ուրարտերենի և հայերենի միջև ևս տեսնում եմ հետևյալ դեպքերում: Ուրարտերեն բայաբունը „a" ձայնավորով տալիս է կրավորական կամ չեզոք բայասեռի ֆունկցիա, ինչպես šia-bi «երևաց», բայց šiubi «փոխադրեցին», naḫadi «նա նստեց, բազմեցին», բայց naḫabi «ուղարկեցին», ինչպես հայոց երթ «գներեց», բայց բերաւ «գերվեց», նաև «տեսավ», увидел, բայց տեսաւ «տեսնվեց» և այլն: Այդպես բազմեցաւ, մնծա-

ցաւ և այլն Ալժմյան հայերենը սիրում է չեզոք և բնաձայն բայերը տալ „a" բնով („a" խոնարհումով), ինչպես— ապրել, խշխշալ, թռչալ, ծլվլալ և այլն։ Համեմատել ծխել „курить", բայց ծխալ „дымиться", թվել „считать", բայց թվալ „казаться" և այլն։

Ուրարտերենում ոչ միայն „-a" բնով առնծվում են չեզոք-կրավորական բայարմներ, այլև վերջավորութիւններն էլ են տարբերվում։ Երբ ներգործական բայն ունի անցյալ կատարյալում -bi (1 դէմք նշ.), -ni (3-րդ դ. նշ.), ինչպես ḫaubi «գրվեցի», atubi «կերա», karubi «հաղթահարեցի», ...ḫauni «գրավեց», karuni «հաղթահարեց», հարմանկց և այլն, չեզոքը տալիս է uštadi «արշավեցի», nunadi «եկա», šiadi «առաջացա»..., uštabi «արշավեցինք», nunabi «եկանք», šiabi «առաջացանք և այլն։ Վերջին դեպքում, չեզոքի երրորդ դէմքը (նախիտմ) առանում է „a" բնանշից հետո b վերջավորութիւնը, որը գարձել է հայերենում ւ (w), այսինքն՝ -abi (-abe) = հայոց -աւ (-aw)։

Գիտի նշել հրամայականի -ri (turi «ջարդիր») վերջավորութիւնը, որ կա և հայերենում, ինչպես՝ տուր, դիր և այլն։ Ուրարտերենում այդ turi դարձ է ածվում առնածքի փոխաւարում uli turi «գնա ջարդիր», որի թարգմանութիւնը տասերեն լինում է alik ḫipi «գնացեք երկրագործության մեջ», իսկ ասորա. turi բառարտասը այլ ձևերով էլ է հանդես գալիս (aluše tu-li-e «դու ջարդա»)։ Բայց, ինչպես տեսնում ենք չեզոք բայերի հրամայականը այդ „ri"-ն չունի, ինչպես uli «գնա» (բայց tu-ri «ջարդիր»)։

Վերջապես, դոյականների սեռականը ունի i վերջավորութիւնը, ինչպես Menuai pili «Մինուայի ջրանցք», Rusai URU «Ռուսայի քաղաք», Argištiei Sarduriei tini «Արգիշտու (ի) Սարդուրի անվամբ և այլն, և այստեղ ևս -i վերջավորութիւնը կա և հայերենում՝ սիմ, քաղաքի..., գետոյ, մարմնոյ և այլն, թեպետ i թեքութիւնը հասուն է և մի շարք հնդեվրոպական լեզուներու։ Գիտի ընդգծել, որ խառնիներենը չունի այդ ձևը, այլ սեռականի համար տալիս է -we վերջավորութիւնը։

Բառաստեղծական ձևերից նշելի է ասորա. -uni վերջածանցը, ինչպես Etiuni, Welikuni և այլն (Etiuḫi, Nelikuḫi ձևերի հետ)։ Հայերենը լուրացրել է այդ -uni (և ոչ -uhi) ածանցը, ինչպես պահունի, արևգունի, գոգունի..., Բագրատունի, Մահատունի և այլն։ Ուրարտերենը ունի և -gi հավաքական հոգնակիի ձևը, ինչպես ḫubigi «գաշտեր, Դաշտարայ» (Հմայիքնոցի արձ., տող 17, „ḫubigi aše pilinikiduli), Welikunigi, Išteiuanigi երկրանուններ (սե-

tadi... KUR Welikunigidi «Մարդ. վանի Նիշալի V արձ., 17, uš-tadi KUR Išteluanigi-di, նույն արձ., 14)։ Հայերենում այս ուրարտ. -gi համար ունենք հայց -ի մասնիկը մարդի (люди) բառի մեջ։ Ուրարտերենում շատ տարածված է եղել -ini (=in) մասնիկը, որով առնվել են գոյականներից նոր հատկացական ածականներ. ինչպես Sardurini «Սարդուրյան» (Sardurini-li kurili Šatuali «Սարդուրյան ոտքերը բռնեց»), Argištini «Արգիշտյան» և այլն, նման ռուսաց сестра-сестрин, дядя-дядин և այլն, որը կա և մյուս հնդեվրոպական լեզուներում (հուն. -inos, լատ. -inus և այլն)։ Ինձ թվում է, որ ուրարտ. a-ով վերջացած գոյականներից առնվածի հատկացական ածականներից (Menua-Menuaini, Teišeba-Teišebaini, Rusa-Rusaini....) առաջացել է հայց -այինի նման ածանցը, որ „a"-ն սկզբում եղել է գոյականների վերջին արմատական հնչյունը, ինչպես ռուսերենում -ик նվազական-փաղաքշական ածանցը (садик, домик...) սրվելով -ец վերջացող մի շարք գոյականներին (палец, конец...) և դառնալով -чик(>ц-ик), ամեհետև դիտակցվել է որպես առանձին նվազական-փաղաքշական ածանց, և մենք անալոգիայով ասում ենք мальчик, аэропланчик, гургенчик և այլն։ Այդպես էլ Menuaini, Rusaini և նմանների -aini ձևը առանձնացել և ընացել է հայց -այինի ածանցի ձևով։ Զգիտեմ շինծնել ուրարտական գոյականներից ածականացված ini (=-in) մասնիկը հայց -ի մասնիկի հետ, որով ածականից ածական է առնվում, ինչպես -վեր և վերին, խոր և խորին, առաջ և առաջին, մութ և մթին և այլն, կամ շատ հնում գոյականից նոր գոյական էինք առնում նույն -ի մասնիկով, ինչպես լույս և լուսին, աղի և աղտին, դարբին, ամուսին, և նմանների մեջ։ Բայց ունենք գոյականներից առնվածի ածականներ մյուս ժխտական ան- մասնիկի հավելմամբ, ինչպես— անհոգին, անհնարին և նման ածականները։

Ի վերջո պիտի մատնանշել շարահյուսական-կոնստրուկտիվ մի երևույթ, որ կապում է մեր հին հայերենը (գրաբարը) ուրարտերենի հետ։ Այդ գրեթե միայն հատկացուցչի և հատկացյալի փոխհարաբերության ժամանակ, երբ հատկացուցիչը փոխանակ անանական հոլովի վերջավորություն պահելու, վերջինը փոխարինում է հատկացյալի թիք հոլովիներից մեկով (հայերենում, գրծիական կամ բացառական հոլովով)։ Օրինակ, հայերենում ունենք՝ յերկրէ Հայաստանէ (փոխանակ՝ Հայաստանն) արտաքս բարկութիւմբ (փոխ. բարկութիւն) և այլն։ Համեմատել ուրարտերենում՝ DINGIR^{me}-aš-

te KUR Biainaše «աստվածներին Բիայնային» (փոխանակ՝ Բիայնալի)։ Այս երևույթը, որ J. Fridrich-ը կոչում է հանգավորված sxema kath, olön kai meros, կա և խեթերենում հայցական հոլովի ժամանակ, օրինակ, Gilgamešan ALAM-an šamnēr «Գիլգամիշի արձանը շինեցին», ուր Gilgamešan հատկացուցիչը դրված է խնդիր-հատկացյալի հոլովով։

Վրացերենում և խուռիտերենում նման դեպքում պահվում է թե հատկացուցչի սեռական հոլովաձևը և թե դրան ավելացրած հատկացյալի ձևը։ Օրինակ հին ნებაი მამისა ჩემისა ზეცათაისაი nebaj mamisa čemisa zeçat'ai sai «կամքը հոր իմ երկնքի» հատկացյալ neba-j ուղղականից կախված է mam-isa čem-isa հատկացուցիչը -isa սեռականի վերջավորությամբ, որից իր հերթին կապված է zeça-t'a-isa-j հատկացուցիչը սեռական հոգնակի -t'a վերջավորությամբ, հավելացած թե նախորդ իր համար հատկացյալ mamisa čemisa բառերի սեռականաձևը և դրա հատկացյալ -j ուղղականի ձևը, և ստացվում է բարդ համաձայնության կոնստրուկտիվ zeça-t'a-isa-j։ Նույն խուռիտերենում, ինչպես DINGIR^{meš}-na]=enna] (artiniwena «աստվածները քաղաքի», ուր հատկացուցիչ artiniwe «քաղաքի» ունի իր սեռականի -we վերջավորության վրա նաև հատկացյալի (enna «աստվածները») հոգնակի -na վերջավորությունը, ինչպես վրացերենով ասելինք ღმერთნი ქალა-ქისანი imert'ni k'alak'isani։

Բոլոր դիտականներն ընդունում են, որ հայերենը, մանավանդ բարբառները, մեծ ժառանգություն է ստացել ուրարտերենից կամ ավելի ճիշտ ուրարտուի լեզուներից. թեպետ, ինչպես վերևում ասացինք, մի քանի-քանի հիմնական բառերը միայն մոտ հինգ տոկոսն են կազմում ուրարտերենից մեզ հասած չորս հարյուրից քիչ ավելի բառերից կամ արմատներից, թողած դեռ այն հանգամանքը, որ դրանցից որոշ քանակ կարող էր մտնել Ադամիքի-Տաուրուբերանի միջով արմինեներեն-շուպրիտերեն խուռիտական բարբառից, ինչպես, օրինակ ar- «տալ», որը ըստ իս միացել է հայոց յարիմ „придаюсь, просоединяюсь, примыкаю" (ար յ նախածանց է, ինչպես և յառնիմ «վեր կենալ» բայի մեջ)։

Բայց ամենաուշագրավը այն է, որ մարդկանց հատուկ անունները հայոց մեջ գերազանցորեն խուռիտերենից են կամ Արմինաշուպրիայի վրայով՝ ասատուրաբաբելականից։ Ուրարտական պանթեոնի շուրջ վաթսուն աստվածանուններից, որ Մհերյան դռան արձանագրությունն է տալիս, հայերենում ոչ մեկը չի միացել, եթե

չհաշվենք Ar'ā (Arha) և մեր Արա անունը։ Բոլոր բնիկ մեր աստվածանունները՝ կամ որպես էութիւններ և կամ որպես նրանց հատկութիւնները, փոխարերութիւնները, ունեն փոքրասիական և խուռիտական ծագում։ Այդպիսիներն են —Արա, Տորք (Տուրք=Տարք), Հեպիտ կամ Հապիտ, Նաՙր (որից՝ շանթ), Շուշիկ կամ Շոշկ (շուշանիկ, շոշանիկ «նռան անուշ բալի մէջ», աև աստվածն (Տովիտաև և թևերս Աՙրեղդ բառերի մէջ), Թեպդա (Թպդի) չորս աստվածները (=խեթ. telipi աստվածները), ցիւաղ (=zawalli— «հրեղ աստվածները»), Նար «ջրահարս, нимфа» (Տովիճար, Ոսկիճար, Հնդճար, Նուրին>Նարին, հիմ նար «մեծ ջրահարս», կամ Նարս հոլ>Նարոլ.... բաբելական nār գետի ջրի աստվածանունից), Մաժուն քրմի անունը, որ աստվածացվում է և գերեզմանի պաշտամունքը հաչակվում է համահարկական տոն (ըստ Մորենացու), համընկնում է փռւդիական Masanes աստվածանվան Ատաին, որի «խորհրդատուն կատարէին» Պոնտոսում մինչև դարերում անգամ (ըստ Հովհ. Սարկավագի), և որի անունից եմ ես հանում ատինել «իմպռատոնա դառնալ» (այդ բառը բերում է Դր. Մագիստրոսը իր § 67 թղթում) այդ աստծո ինքնամոռնամոռնամոռ

Տիրաննալից հատուկ ալբանուներ։ Ըստ իս այդ tiran- «Տիրանա» բառը հնչառությամբ կարող էր դառնալ հայերենում «Տիրան» տ>ծ փոխանցմամբ, ինչպես՝ տատանիմ (տանիմ բայից) և ծածանիմ, պիղծ>պղտոր, պարտ (հպարտ, ամպարտաւան)>պարծիմ, աղտեղութիւն ‖ աղծութիւն, կեղտ>կեղծ..., բարբառներում՝ տո ‖ ծո, Տրդատ>Մրդատ և այլն և այլն։ Իսկ հայոց Տիրան-ի բառը հնում նշանակել է «գեղեցիկ կարմիր խառն դեղնի հետ, վարդագույն, ոսկեգույն, մանուշակագույն, ծովագույն, երկնագույն» (ըստ Առձ. բառարանի) և ոչ մի կապ չունի Տիրան պտղի հետ։ Մեր ժողովուրդը Տիրածանին ասում է «կանաչ ու կարմիր» և բնական է որ հայոց Տիրանի բառը նախկին tiran- «Տիրածանից» ժառանգած ունենար այդ «կարմիր-դեղին» կամ ժողովրդական «կանաչ ու կարմիր» գույները։ Մյուս ուժեղ հատկանիշը այդ Տիրածանի աղեղնաձև լինելն է և այդ հատկանիշը պահել են վրացիք Ցირანო čirano (ճիրանո) «լուսնի բարկը», орбита луны (Чубинов-ի բառարան, 1887 թ., էջ 1708)։ Ի դեպ վրացերենում Տիրան պտուղը կոչվում է ჭერამი čerami, որ ինչպես տեսնում ենք տարբերվում է čirano «աղեղ, բակ» բառից թե իմաստով և թե հնչմամբ։ Ուռիտևերենում tiranna «Տիրածանո» բառը համարվում է փոխառյալ սումերերենից (տես Nuzi personal names, էջ 267)։ Իսկ որ «Տիրածանը» կարող է և ատլվածացվել, այդ ցույց է տալիս և հուն. iris «Տիրածանո» և Irida դիցուհու անունը, որպես ատլվածների համբավաբերի. ինչպես տեսնում ենք նաև. Tiran- ատլվածանունը ավելի մոտ է հայոց Տիրան-ի և վրաց čirano բառերին իր ձևով, քան ուրարտ. Turan ատլվածանվան ձևը։ Սա ևս գալիս է ասելու, որ հայոց շատ բառեր, թե հատուկ և թե հասարակ, ավելի շուտ հարավից են, նուռիտական Արիմե-Շուպրիայից, քան Ուրարտուից, որը ինչպես դիտենք ուշ հայացավ (V դարի վերջից), մանավանդ Վանա լճի արևելյան մասը։

Հուսա պիտի ունենանք, որ նորանոր լեզվանյութերի հայտնաբերումը այդ նուռի-ուրարտական լեզուների բնագավառում, ինչպես և հազած նյութի համեմատական լրացուցիչ ուսումնասիրությունը, ավելի ևս կուժան կհանդիսանան հայ բովանդակ լեզվախմբի դերիշխող կոմպոնենտի տեղական այդ շերտը ճշտորոշելու թե քանակապես և թե որակապես, մանավանդ այն մասնահատուկ կողմերը, որ վերաբերում են հին բնիկ ժողովուրդների նյութական և հոգևոր կուլտուրաների որոշ բնագավառներին։ Իսկ լեզուն հենց դրանց արտացոլող հայելին է։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱՏԱՐՐԵՐ ԽԵԹԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՑՈՑ ԼԵԶՎԻ ՄԵՋ

Նոր խեթական պետությունը իր շուրջ երկու հարյուր տարվա (1400—1200) ընթացքում տիրել կամ վասալական կապերով ենթարկել է իր հյուսիս-արևելյան սահմանակից Գալա, Կաշկա և Հայասա-Ազդի ցեղամիությունները։ Եվ բնական է, որ այդ ժամանակ, ինչպես թերևս և առաջ, այդ մանր ցեղերը պիտի կրեին նաև խեթական (և պրոտոխեթական) կուլտուրայի ու լեզվի ազդեցությունը։ Այդ շրջաններին մոտ էին նաև վրացական կամ նախավրացական ցեղերը, որ հետո մտան վրաց ժողովրդի մեջ։ Խեթերը, կորցնելով իրենց քաղաքական կոնֆեդերատիվ պետությունը (շուրջ 1200 թ. մեր էրայից առաջ) շնորհիվ «անդրծովյան» ցեղերի (վալուզիացիներին, լուդիացիներին և այլն) և սահմանակից ու վասալ ցեղերի (լուվիացիներին, կաշկաներին, հալաացիներին և այլն) հարվածի, ինչպես և մի շարք ներքին հակասությունների, աստիճանաբար շարունակեցին մնալ մինչև չորրորդ դարը (մեր էրայից առաջ), երբ արդեն ապազգայնացել էին, մինչ այդ ունենալով VIII—VII դարերում փոքրիկ պետություններ Մելիտենեում, հյուսիսային Սիրիայում (Սամալ, Մարաշ)։

Գնաք է ենթադրել, որ խեթա-հալաական ընդհանուր լեզվատարրերը գոյացել են վաղ շրջանում, երբ խեթերը դեռ ազդեցիկ էին, այսինքն՝ 1200 թվականներից առաջ, թեպետ չի բացառվում որոշ բառերի մուտքը և մինչև VIII—VII դարերը մեր էրայից առաջ։ Բանի որ խեթերը գերիշխում էին նաև Մելիտենեում և Թեգարամայում, որ հետո հալացան, ապա այդ վերջին ենթադրու-

թյունը նույնպես հնարավոր է: Հիշենք հենց «Ծոփք Շաուշի կամ Շաշեի», որ Փավստոս Բուզանդի մոտ է բերված, երբ դեռ ութերորդ դարի կեսին Մելիտենեին ենթակա մի շրջան ենթարկվել է Շաուշ դինաստիայի թագավորներին, ինչպես կարդում ենք Սարդուր II Իշդզլուի մոտ թողած արձանագրության մեջ, իսկ այդ շրջանները կազմեցին հետագայում Ծոփքի Հայաստանը իր Արիաթիսկերտ մայրաքաղաքով, և ուրեմն պետք է ենթադրել, որ այդտեղի խեթերը, ինչպես և Կատաոնիայի արևելյան մասում (Մելիտենեից արևմուտք) եղածները հայացել են (տե՛ս նաև Ռոմաշկի հոդվածը „Euphrat und Ost-Kappadokien" տպված „Festschrift für Kiepert"-ում, էջեր 145 և շարուն.):

ՀԱՑ-ԽԵԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՌԱՄԹԵՐԸ

Խեթական բառերը, որ առկա են հայոց լեզվում, կարող են երեք տեսակի լինել. մեկ որ խեթերենից անցած լինեն, այսինքն՝ լինեն փոխառություններ, երկրորդ, որ Հայաստանի և նման ցեղերից մոտ լինի խեթերենի մեջ, որ արձանագրված է մինչև իսկ խեթական բևեռագրում (բառասկզբում դրվում են երկու հորիզոնական բևեռիկներ), և երրորդ՝ այդ բառերը կարող են եղած լինել թե՛ խեթական նախկին ցեղերի լեզուներում կամ բարբառներում, և թե՛ նրանց սահմանակից կամ շրջող պալալյինների, հայասցիների, մոսխերի և մյուսների լեզուներում:

Ա

Վերցնենք այն անուններն ու հասարակ բառերը, որ ակընհայտորեն խեթական արմատներից ու ածանցներից են կազմված, և հետևենք Հայաստանի և մյուս ցեղակից լեզուներում պետք է դիտվեն որպես փոխառություններ:

Հատուկ անուններից ևս կմատնանշենք խեթական երկու թագավորների՝ Մուրշիլ (Muršil-iš) այրանունը, որը դեռ Հ. Աճառյանը ճիշտ կերպով կապակցեց մեր հայոց Մուշեղ անվան հետ: Այս բառը այնպիսի կազմություն ունի, ինչպես Հաթթուշիլ (Ḫattušil-iš), Բիաշիլ Bianšil-iš) թագավորանունները, որոնց հետ ևս կհամեմատենք խուռիտական (միտաննյան) Արուճաշիլ, Միթրաշիլ աստվածանունները և Մեծ Ծոփքի Մամուշեղ դյուցանունը, որը պահել է Փավստոս Բուզանդացին (խեթական Շահ)ու (— թագա-

վորութիւնը Փոքր Ծովից նուիրական պահվել է այդ պատմագրի մոտ)։ Հետո մեզ հայտնի է Ziti-ն այրանունը, որ գործ է ածվել խեթերի մոտ թէ՛ առանձին և թէ՛ բարդանուններին մէջ՝ որպես երկրորդ բաղադրիչ մաս, ինչպես Tarḫundaziti, Kalmaḫaziti, Kulaziti, Ḫalpaziti, Ḫuḫḫaziti-, Santaziti և այլն (տե՛ս A. Götze, Die Annalen des Muršiles, Leipzig, 1933, էջեր 210—211), իսկ այլուր այդ ziti բառը տրվում է դաղափարագիր LÚ «այրը» նշանով, նուին բարդութիւններում, որից ակնհայտնի է դառնում ziti կամ zidi բառի «այրը» նշանակութիւնը։ Այդ հատարակ անվան վերածվելը հատուկ անվան հայտնի է և հայերի մոտ «Այրուկ» ձևով։ Իսկ խեթերի այդ Ziti կամ Zidi հատուկ անունը ևս տեղնում եմ «հայ Տչուտա» անվան մէջ, որ բերում է Մարկվարտը իր մի հոդվածի մէջ, տրված Caucasica ամսագրում[1]։ Վերջապես Կարգեմիշ քաղաքի մի հիերոգլիֆ խեթական արձանագրութիւնն մէջ բերված է Katisi ուղղական հոլովով (-si) մի այրանուն (տես J. Gelb, Hittite hieroglyphs, I, Chicago, 1931, էջ 66), որ շատ նման է Փոքր Հայքի հայոց Կոտիս (Կոտյուա) թագավորի անվանը։

Հատարակ անուններըը բնականաբար ավելի շատ պիտի մտած լինեն հայոց (reps. հայոց) լեզվի մէջ։ Այդպիսիներն են.

1. Աղաւնիք կամ աղբնիք «վերակրից հետո քաղցր ուտելիք, մրգեղեն, դեսերտ» (Արմ. բառ., I, 121), «վերակրէն հետ թեթև ուտելիքներ, չորագ» (Առձ. բառ., 15)։ Այս ałander (<alander) բառը հետս եղել է alandar և ըստ իս նշանակել է «աղանձված հացահատիկներ» կամ «աղանձ», որ, ինչպես դիտենք, մեզ մոտ մինչև վերջերս մատուցվում էր ճաշից հետո կանեփով, չամիչով խառն։ Alandar-ը վերցված է խեթերենից, ուր aladdari և կրճատ laddari, ինչպես կարդում ենք, օրինակ, Պապանիկրի քրմի հայտնի ծիսապանում (էջ 81, NIN DA aladdari «հայց al.»)։ Այդ «հայց» գաղափարագրով տրված aladdar-ը ածվում էր բուի մէջ («1/2 բուը aladdari»), կարող էր նաև բաժանվել (անդ)։ Ես չեմ տարակուսում, որ դա եղել է սովորական հացահատիկը և գործ է ածվել նաև հատուկ տեղանուններին մէջ, ինչպես Aladar-ariza կամ հայոց Լիբարիճ<*Լաբարարիճ ձևից, որոնք գտնվել են Փոքր Հայքում (տե՛ս իմ Хайса—колыбель армян, էջ 44)։ Տատացի այդ ա-

---

[1] Դժբախտաբար ինձ մոտ համարը և էջը չի մատնանշված, միայն հունական գրութիւնը վկայում է հունական մատենադրներից վերցրած լինելը։ Հ. Աճառյանի անձնանուններին բառարանում այս հատուկ անունը չկա։

նունը, իրրև բարդ բառ, նշանակում է «հացահատիկի տեղ» (<հացատեղ»)։ Խեթերեն aladdar կամ laddar ձևերը կորցրել են n (ն) բաղաձայնը d (դ)-իյ առաջ, ինչպես այդ հաճախ է տեղի ունենում այդ լեզվում (օրինակ ḫanzassa և ḫassas «թոռն», kuen- «սպանել» և kuašk-<kuan-šk- նույն իմաստով)։ Հետևապես կարելի է ենթադրել, որ հայոց alander-ը պահել է ավելի հին ձևը aland- բայարմատից, որ կա և մի քանի հնդեվրոպական լեզուներում «հաց» իմաստով։ Բայց կարող է և հակառակը լինել, այսինքն խեթական aladdar-ը իր հին aladd- արմատով վեր ածվել հայոց մեջ aland-ar ձևի, ինչպես օրինակ անսիզ «օրենք» առացվել է ֆրանսերեն assise բառից։ Խեթերենում, ի միջի այլոց, եղել են գանազան տեսակի հացկեղևներ NINDA ('bread, loaf') դաղափարանշով, օրինակ NINDA ampuri, NINDA ituri NINDA paurandeš իսկ միայն դաղափարագրերով —N. GIRiL 'fresh bread' (համեմատել մեր «թաղա հաց»), N. KUR. RA' ordinary bread' (=harši) NINDA ḫarzazu'-tallow-cak' (=մեր «խորիզով գաթան»?), որը տրվում է սոսկ դաղափարագրով NINDA IA'. E. D. E'. A. կամ և N. SIS 'thin bread, flat bread', որ մեզ հիշեցնում է «լավաշ» հացը (տե՛ս մասամբ E. Sturtevant, Hitt. Glossary, էջ 110 և դրա լրացումը, էջ 33)։

2. Մանավանդ մակրայը ինձ թվում է վերցված խեթերեն mānapa «երբ» (als, wenn) բառից, ինչպես մատավորապես քարդմանում է Հրոզնին (Sprache der Hethiter, էջեր 185 և 231)։ Ինչպես որ խեթերենում սովորական է -anda մասնիկի կցումը նման մակրայներին, օրինակ, katta «ցած» և kattanda, appa «հետ, դևպի հետ» և appanda, araḫza «շուրջ» և araḫzanda, para «առաջ» և par(r)anda, այդպես էլ սպասելի էր mānapa և mānapanda, որը կտար հայոց մանաւանդ ձևը p>w անցումով։

3. Ռրրմնջել «տրտնջալ» ((ропгать) առացվել է ըրբմընջ-<*քարթմիաճ նախնական ձևից, որը խեթերեն kartim(m)iaz բառն է և նշանակում է «ցասում, բարկութիւն, տրտունջ» (առավածներին), կազմված kartimmia- «բարկանալ» բայից։ Սա էլ իր հերթին առացվել է kardi- «սիրտ» բառից (տես. kardiaš, տրակ. kardi), ինչպես դրաբարում ունենք սրտմտիմ «բարկանում եմ», բարբառներում սրտողել «բարկանալ» սիրտ բառից կամ ռուսերենում сердиться «բարկանալ» серд-це «սիրտ» բառից։

4. Բարգաւաճ «պանծալի, փառավոր, ծաղկյալ» ըստ իս խեթական բառ է pargu- (հոդն. հայց. pargav-eš) «բարձր» ածակա-

նից, որից ունենք նաև pargamuš (հոգն. հայց.), pargatar «բարձրություն և այլն: Ինչպես ցույց է տալիս pargav- խեթական բանը, մեր բառը միայն տարբերվում է վերջին -աճ մասնիկով, որ նույնպես խեթական է -az ձևով, ինչպես օրինակ šurā «ի վեր, вверх, наверх» և šaraz(z)i «վերին, վերադույն վնտ»: Այնպես որ հայոց bargaw-ač բառը տառացի պիտի նշանակի «բարձրյալ, բարձունքում գտնվող», փոխաբերաբար «փառավոր, ուռճացած, անվանի» և այլն: Հայոց ձևը կարող է վկայել հօգուտ խեթական bargu- հնչման, այսինքն՝ սկզբնական „b" բաղաձայնի և ոչ „p", ինչպես շարլոն կերպով դրվում է, թեպետ Հրոզնին իր Spr. d. Hethiter գրքում գրել է barku-bargaves „hoch" (էջեր 189—190, 217): Անշուշտ խեթական փոխառություն է նաև հայոց ամբարձաւաճ «համբարտավան, հպարտ, բարձրամիտ» բառը, որ նման կազմություն ունի իր աճ մասնիկով: Բունն է թեև barhu- իսկ am- ոչ թե բացատական մասնիկն է (-ան), այլ այն ամ- (համ-) մասնիկը («միասին, co-»), որ կա ամփոփել (կա և սփոփել<*դիւփել), ամբառնալ (համբառնալ) բարակազմություններուն մեջ: Խեթերենում կար warḫuwwan «անմատչելի, անառարկելի» (inaccessible, impassible; dammed up), ըստ Götze-ի (տես Hitt. Gl., լրացումը էջ 46), warhui- „косматый, непостриженный; грубый; недоступный" (H. Gl., 177), warḫu-nu- „сделать грубым, недоступным" (ib.): Այնպես որ am-warḫu-ač դարձել է «համբարհաւաճ». w սկզբնական հնչյունը (=v) հայոց „m" (am-) սոնանտի ազդեցությամբ դարձել է b, թեպետ ըստ իս դեպքեր կան, որ w կամ v փոխարինում են b կամ p բաղաձայները, մանավանդ խուռիտերենում:

5. Ուրդ «պարտեզները ջրելու համար փոքրիկ առուն» (տես Աբմ. բառ., V, 700): Դևրիշլյանը այս բառը հնում համարելով շրջված *urd ձևից, կապակցում է սանսկր. udra, հուն. ὕδωρ, սլավ. вода, գոթ. vato, գերմ. wasser «ջուր» բառերի հետ (անդ, էջ 701): Ես ևս դնելով այդ ուրդ բառի համար, որ ի միջի այլոց գործածական է և բարբառներում, հնադույն *ուդր (*udr) ձևը, հանում եմ այդ wedar կամ wadar խեթական ձևերից «ջուր» իմաստով: E. Sturtevant-ը իր բառարանում բերում է wātar, wetar, տես. հ. weitenas կամ wetenas, սրակ. witeni ‖ weteni, գոթ. wetenit, հոգն. ուղղ. widār, (տես նրա Hitt. Gloss., 1936 թ., էջ 179): Խեթական wātar-ը հայերենում պիտի տար անմիջապես *vard* ձևը, իսկ wetar-ից կսպասեինք *verd* ձևը: Հետագայում այդ verd-ը կդառնար urd, ինչպես «վերջ»-ը դարձել է «ուրջ» (այս բա-

որ տալիս է Առձ. բառարանը). համեմատել նաև Վիշապ և Ուշապ, որ մատնանշել է Ն. Մառը. վրո(ն) «մուրճ» և տուռն նույն նշանակութեամբ, վարկան (բարբառային) և տուրկան» գրաբարի նուրնանիշ բառաձևերը, հայոց ունայն և լատ. vanus, գոթ. wans և այլն բառերը (Արմ. բ., V, էջ 646) կամ թև օտար լեզուներում խեթ. waštul և uštul «հանցանք», խուռի Vašuganni և Ušuganni (քաղաքի անուն է), ակկադերեն ward-u և urd-u «ստրուկ» և այլն: Ինթերեն wātar>հայոց vard (<վարդ) «ջուր» ևս տեսնում եմ վարդ-աւ-առ բառի մեջ, որ առաջի նշանակում է «ջրալուսա», այսինքն ջրով լվանալը, ցնցղելը (համմտ. խեթ. vetenit arr- «ջրով լվանալ»), որտեղ -aw- հոդակապը կամ ձևույթը ինձ անհասկանալի է: Այդ վարդ «ջուր» իմաստն են կրում մեր մի քանի տեղանունները—Եղիվարդ, որ առաջի նշանակում է «վերին ջուր» (համմտ. Եղիպատրուշ «վերին քաղաքին» Եղիվանք, «վերին վանք», ի հակադրութիւն Թաղավարդ անվան, որ նշանակում է «ներքին ջուր»: Բայց կա և վերդ «ջուր» (<wetar-ից) բառը— Նաշվերդ «մեծ ջուր» (Օշականի և Ոսկեվազի միջև գետակ է), Օլավերդ[1] (=?) Լաստիվերդ (=?) և այլն: Տարակուսս չկա, որ հայոց vard, verd և ard բառերը Փոքր Ասիայից են մտել մեր լեզվի մեջ:

6. Ուռաև «աշտանակ, վառարան, հրարան», թևպետ մեր հին դրականութեան մեջ միայն մեկ անգամ է գործածված (տես Արմ. բառ., V, 672), բայց ստույգ և կարևոր բառ է: Ըստ իս, դա փոխ է առնված խեթերենից, ուր թևպետ այդպիսի գոյական անուն չի արձանագրված, բայց արմատի (war- ‖ ur-) և կազմութեան տեսակետից (-an վերին մասնիկով) միանգամայն սպասելի է: Խեթերենում war(r)- արմատը նշանակում է «վառվել, այրվել» (ըստ E. Sturtevant-ի „burn“, որպես անցողական բայ, H. Gl., էջ 177 warā- ձևով), որից պատճառականը՝ war-nu- «վառել» („cause to burn, burn“, հմմտ. ver brennen): Կան հետևյալ ձևերը—wārani և urani «վառվում է», warandari «վառվում են», warānu և urānu «բիոդ վառվի», waranza «վառված, վառվող», urr-ir «վառվելիս» և այլն: Խեթերեն war- և հայոց վառ-ում արմատների նույնանիշ և նույնահունչ լինելու մասին դրել են Մարտիրոսյան (Հանդէս ամսօրեայ», 1924 թ. էջ 458) և Հ. Աճառյան («Նորք», 1925 թ., № 5, էջ 393):

---

[1] Տես. խմբ. գյուղի անուն, որ գտնվում է Վրացական ՍՍՌ Ախալքալաքի շրջանում:

խեթերենում արմատը մեծ մասամբ գրվում է մի ՀՐ-ով, բացառությամբ ūrr-iz «վառվեցինս»։ Կա և արմատի կրկնությունն -wariwaran և uriwaran «որպես դերբայական ձև (=*wariwaranza || *wariwarant-), որ ամբան համընկնում է հայոց վառվոռն կամ վրաց (փոխառյալ ?) varvari „пылать" (varvarebs „пылает", տես Чубинов, Груз.-Рус. словарь, 1887, էջ 502)։ Հայոց ՀՈՒԱՆ բառի ոչ միայն արմատն է խեթական, այլև -ան մասնիկը, ինչպես ունենք խեթ. naḫḫan «երկրաղածություն» (naḫ-mi «քաշվում եմ, պատկառում եմ»), kuššan «վարձագին» (kušḫaḫat «վճարեցի»), šaḫḫan «պարտադիր աշխատանք», ḫaršan «գլուխ», parkan «քավում, ապաշխարում» (parku- «մաքուր բառից») և այլն։ Իսկ wa-հնչյունակոմպլեքսի վերածումը „u"-ի (wa>u) մենք արդեն տեսանք wad(a)r կամ wedar «ջուր» բառի նկատմամբ, որ դարձել է հայոց ուրդ «առու» վերջ>ուրջ, վիշապ>ուշապ..., խեթերեն war->ur- «վառել», wāši «վճարում է» և ušneškatta «վճարում էր» walkiššarah- (√walk-) և ulkiššarah- «տեղյակ դարձնել», waštul և uštul «հանցանք» և այլն։ Ալպիսով, ուրեմն հայոց ուռուց «աշտանակ, վառարան» բառը, որ և կուլտուրական նշանակություն ունի, գալիս է խեթական աշխարհից, որպես փոխառություն հայացիների (resp. հայերի) կողմից։

7. Շաղ բառը, որ գրաբարում առանձին չի պահվել և նշանակել է «մեծ», ապացել է սակայն մի քանի բարդություններում, թե՛ որպես հասարակ անուններ և թե՛ որպես հատուկ։ Ալդպիսիներն են՝ շաղակրատել «մեծաբանել, մեծ մեծ խոսել» (-կրատ մասը անգործածելի է առանձին), շաղաւաշուրթն «փչախոս, ցոփախոս, խաբեախոս» (ալդպես ըստ բառարանների), որ տառացի նշանակում է «մեծաշուրթն», ալսինքն «մեծախոս, շատախոս» մեջի -աւ մասը ավելորդ է. շաղաշոյտ «անմիտ, խենթուկ» (Արմ. բառ., V, 249, գրված է շաղաշուտ), որից շաղաշուտութիւն «անհասկությունն» (ibid.)։ Ալս բառը կազմված է «շաղ, «մեծ» և շուալտ «ցոփ, զեղծ, վատաշուտ», որը կրճատվել է շոյտ ձևի, ինչպես գրաբարի շուք (-ատվեր) բառի փոխարեն ասում ենք բարբառներում շատ։ Ալնպես որ շաղաշոյտ պիտի նշանակե «մեծ, ցոփ, անհասկ»։ Ունենք նաև հատուկ անուններին մեջ Շաշվերդ (< Շաղվերդ) «Մեծ ջուր», «Մեծ առու» (ալս գետակը Օշականի և Ոսկեվազի միջև, կազմվելով Արագածից հոսող ջրերից, թափվում է Քասաղ գետը), Շաղագոմ «մեծ գոմ», որը գրվում է նաև (սխալմամբ) Շատգոմ, ինչպես երևի Շատբերդը եղել է Շաղբերդ «Մեծ բերդ»։ Ալս մեջ

շաղ- բառը (šał) խեթերենում, թե բևեռագիր և թե հիերոգլիֆ, ամենաառաջադրական բառն է šall-iš (հիերոգլիֆ խեթերենում՝ sali- „great", տես J. Gelb, Hitt. hiero glyphs, II, 7. էջ 30)։

ք

Եթե վերոհիշյալ բառերը խեթերենից անցել են հայերին, որ իհարկե շատ են եղել, ապա հետաքրքիր կլինի այստեղ քննել նաև այն բառերը, որոնք խեթերն են վերցրել իրենց հարևան լեզուներից։ Բարեբախտաբար այդպիսի բառերն ունեն սկզբում երկու հոբիզոնական բևեռիկներ (=), որ ուրիշ բևեռագիր լեզուները չեն կիրառում։ Այդ բառափոխությունները կատարված են լուվի լեզվից՝ թևպետ կան և խուռիտերենից։ Հնարավոր է, որ լինեն և Պալա և Հալաասալի լեզվից։ Այդ իսկ տեսակետից հայոց լեզուն մեծապես շահագրգռված է։ E. Sturtevant-ի բառարանում (2-րդ հրատ., 1936 թ. և 1939 թ. հավելումը՝ Sapplement-ը) բերված են մոտ 45 այդպիսի փոխառություններ (որոնց խմբասրը քիչ թե շատ հաստակացում է)։ Ավելորդ չեմ համարում բերել այդ բոլորը և նշել դրանց որոշ քանակի համընկնումը հայ բառերի հետ։ Իհարկե կան և չնկնվածներ, որոնք չեն բերվում։

1. aggatiu-š «ցանց» (որսի համար)։

2. akkuša «փոս»? Սրա հետ կարելի է համեմատել հայոց ակօս (борозда) բառը։

3. allallā «կռիվ»?? Թերևս բնաձայնական բնույթի բառ է, նման հայոց աղաղակ բառին։

4. antari-š «առաւոտ, թագավոր»?? Այս բառի հետ ևս կապակցնի Շուպրիայի (Տիգրանակերտի—Սուֆարիկինի շրջան) իշխան Antaria-ի անունը, որը ապստամբել է Ասսուրբանիպալի դեմ։

5. arkām(m)a-š «հարկ», համարվում է լուվիական բառ. կա նաև բալաձև arkammnallāwi «ես հարկ տվի»։

6. arunnuha «մեկժանգի կամ դիջնցի»??

7. hanhanlai «դիտում է, ուշադիր է»։ Ուշադրավ է երրորդ դեմքի „i" ձևը՝ ֆորմատիվը, որ այնքան համընկնում է հայոց «յ» ձևի հետ (կարդայ «կարդում է», գոյ «գոյություն ունի», գրէ <*գրէյ «գրում է»)։ Այդ „i" երրորդ դեմքի համար կա նաև խեթերենում, օրինակ, pai «տալիս է», dai «դնում է»...։

8. haš(a)- «քանդել, քայքայել» (hašpaha անց. 1-ին դեմք, hašpir անց. 3-րդ դեմք հոդն.) destroy։

9. ḫumma «խողերի գոմ», որը երևի հնչվել է ḫomma (խոմմամա) և նման է հայոց «գոմ», վրաց. gomi կամ gomuri «գոմ», թուշերեն gomuri(id), քրդերեն gom, guw, gaua «ոչխարի փարախ», ատրպատ., թուրքերեն kom, պարսկ. gumārā «գոմ խաշանց և եզանց», բայց նաև՝ շիկերեն gamma «կովի մսուր», դաներեն gamme «գոմ, ախոռ, ոչխարի փարախ», նորվեգ. gamme «խրճիթ», և այլն։ Այս բոլորը (բացի «հեթականից», որ հայտնի չէր) համարվում է հնդեվրոպական մի նախաձևից *ghomo-, որ իմաստին սխալ է։ Հավանորեն այդ ḫomma, հայոց և վրաց gom և այլն արևելքից անցել են արևմուտք, թեպետ սկանդինավյան ձևերը gam- արմատով, կարող են և պատահական նմանութիւն ունենալ։

10. ḫup(p)ala «որսի ցանց» (net), որը, ինչպես տեսանք նուխանիշ է վերևում բերված aggatiu-ś բառի հետ։ Այս բառը ըստ իս սեմական աշխարհից է դալիս և համընկնում է ասոր. կամ արամ. xawlā «չվան, լար», արաբ. ḫabl «չվան, կապել», ḫibāla «թակարդ», էթիոպ. ḫall «չվան» և ḫabel «թակարդի չվան», եբր. xebel «չվան, թակարդ», ակկադ. ḫābilu «բռնող», naḫḫalu «թակարդի չվան»։ Այս սեմական (ասորական) ակունքից է նաև հայոց փոխառյալ խաղր-ք «որոգալթ, թակարդ, չվան» բառը, որը նաև գրված է ճաղր-ք (տես Hübschmann, Arm. Gram., էջ 308 և Աճառյան, Արմ. բառ., IV, 39)։ Հայոց xałb<ḫabl- ձևից, մետաթեզիսով։

11. ḫāta-š «ջանասիրութիւն կամ եռանդ կովի մեջ»։

12. ḫuwalli-š կամ ḫulli-š «շիկացած կրակ», wa>u հընչյունափոխութիւն։

13. ḫurpanalla «թշնամականա??»։ Այս բառը կապվում է խեթական ḫarpu-š «թշնամականա» բառի հետ, թեպետ վերջինիս սկզբում փոխառութեան երկու բևեռիկներ չեն գրված։ Բայց խեթական գրողները ըստ իս ճիշտ են վարվել, որ ածանցական ḫarpanalla բառը նշել են որպես օտար, որովհետև նախ կա հայոց խարդ «ագահ և անյագ՝ ուտել-խմելու մեջ, լիրբ, անառակ, խառնակեցիկ», որը Հ. Աճառյանը փոխառյալ է համարում վրաց xarbi «ագահ, անկուշտ» բառից (Արմ. բառ., III, 410—411), թեպետ նշում է և «պատահական նմանութիւնը» արաբ. xarba «կրոնի և ազգութեան դեմ խռովութիւն հանող, թերութիւն, պակասութիւն», ասոր. xirbā «դևը, հոգի, անպիտանա»։ Քանի որ հայոց խարդ «ագահ, լիրբ, անառակ» ուշ ժամանակի գործածված բառ է (Մաղաքիա արեղալի

մոտ, էջ 24), դրա համար էլ Հ. Ամատյանը համարում է փոխառյալ վրացերենից։ Ըստ իս, այդ բառը լինելով և խեթերենում, հայոց և վրաց բառերի հետ պիտի համարել սեմական փոխառություն շատ հին ժամանակից, ինչպես և խեթ. huppala, հայոց խաղալ բառերի նկատմամբ։

14. ḫaḫreške/a, որը գրվում է առանց և փոխառության սեպագիրների (ḫaḫḫarške/a կամ ḫaḫḫarš-) նշանակում է «բարձր ձիաձաղել», իսկ parā նախդիրով՝ «ծաղրել»։

15. ḫuwaiš «խուսափենց», որը սովորական ḫuwai- «խուսափել» բայի անցյալ 3-րդ դեմքն է (տես „Supplement to a Hitt. Gl.", էջ 21)։ Փոխառության նշանը գրված է նաև ḫuwiami «խուսափում. եմ» ձևի վրա (Hitt. Gl., 54), իսկ մյուս բազմաթիվ ձևերը անհիշ են (ḫuwai կամ huwwai և huwwaizzi «փախչում է», ḫuwanzi «փախչում են, խուսափում են»), ḫuwenu- «ստիպել որ խուսափի, թոցնել, փախցնել» և այլն։ Ըստ իս, մաքուր արմատն է ḫuw(w)-, որ հնչվել է how- «խուսափել, վազել, փախչել» (run, flee, escape)։ Հայերը փոխ են առել խեթերից ապաճովել բայը, որ բաղկացած է apa (= խեթ. appa) «ետ, назад» և hov- «փախչել» բայից, այսինքն՝ ետ փախչել, ետ գնալ, որով մարդ վտանգից (նետից) ապահով է դառնում, ինչպես հունարենում կա apostrophē „отвращение, отклонение" բայց և „убежище, защита" (apo «ետ» strephō «դարձնում եմ») նման մեր «ապաստան, ապաւէն, ապահով» իմաստներին, որոնք բոլորն էլ խեթերենից են անցել Հայաստանի վրայով հետագա հայերենին։ Խեթական այդ օտար ḫuw(w)- «խուսափել, փախչել» արմատի հնչման տեսակից, իբրև hov-, համեմատել նաև «մաքուր» խեթական huwarմատը, որ մտնում է huwandas (սեռ. հ.), huwwanteš (հոգն.), huwwaduš (հոգն. հայց) «քամի» (wind) նշանակությամբ։ Ոչ մի տարակույս, որ այս huw(w)- բառը (-and սովորական մասնիկով) հայոց hov «թեթև քամի» բառն է, որից՝ զով ι<զհով)։ Հայոց բառի «զովություն» (прохлада) նոր պիտի համարել, ինչպես որ հին «քամի» իմաստը պահել են խեթերի երկրին մոտ Ակնա, Եարբերդի, Սեբաստիայի, Տիգրանակերտի բարբառները (տե՛ս Արմ. բառ., IV, էջ 375)։ Հիմա էլ Արարատյան բարբառում և գրականում երբ ասում ենք «հով է գալիս», մենք դղում ենք առնության հետ և օդի փչելը։

16. ḫuḫḫupaš «չեզոք» (neutral)։

17. gaši-n (հայց. հ.) «երկրպագություն, поклон» (obeisance??)։

18. kappilazza- «բարկանալ» (grow angry??)։

19. kargaranti «հոժարությամբ» (gladly, willingly??)։

20. kukupalatar «վիրավորանք» (offense?)։

21. kugurniyaman anda „под печатью скрытности"???

22. kunistayalli-š «կոնֆիդենցիալ»??

23. kupiyati-š «պլանավորում, խորամանկություն, հնարին նպատակ»? Կա և ոչ փոխառություն նրանով գրված kur- (անգլ. kurta) «պլանավորել, խորամանկել»։

24. guršawanza «ավելված»? Կա և guršawara նույն նշանակությամբ։

25. kuwayami (տրակ. հ.) «երկրաղալիս»?

26. lawarr- «չարդվել, քանդվել»։

27. lulu «բարգավաճում, процветание»։

28. lumpašši-n (հայց. հ.) «բավարարում, բավարարություն»։

29. marḫ- «հաջորդել»։

30. maršа- (հայց. հ. maršan) «վատ, փչացած» (bag, corrupt)։

31. maruwait «սրոշից (վճռից) երկու հակառակորդների միջև (վճռը)»։

32. niwalli-š «անմեղ»? Այս բառը պատահում է Գիլգամեշի էպոսի խեթական թարգմանության ֆրագմենտներում, որ հրատարակել է Johannes Fridrich-ը։ Ես առուգեցի այս բառի համապատասխան տեղը աստուրաբաբելական բնագրում, որտեղ կա «թուլլ» իմաստը („немощный, упавший духом", տե՛ս իմ Chetto-armenica, 73—74)։ Այս հատատառում է նաև հայոց նուաղ «թուլլ» բառը, որը nivał ձևից է և համապատասխանում է խեթերենի «օտար» niwalliš բառին։ Դուցե խեթերը այդ «օտարությանն երկու նախադիր բևեռիկներով ուզում էին ասել, որ տվյալ բառը գրած են ածում և օտար լեզուները, մանավանդ միևնույն բառի այլ ձևերը հաճախ այդ բևեռիկները չունեն։

33. pašiḫā- «տորթել, փոշի դարձնել, մանրացնել»? Բայց կան և առանց փոխառության սեպիկների գրություններ pašiḫaizzi «փոշիացնում է»։ Արդյոք կապ չունի՞ այդ արմատը (-ḫa օտար ֆորմատիվով) հայոց «փոշի» բառի հետ։

34. pintanza «թիակ, թիակներ» (rudders?), որ վերաբերում է նավին (մակույկին)։ Ձևը, ինչպես տեսանում ենք՝ հոգնակի է (-anza), այն էլ լուվիական լեզվով տրված։

35. pulpulī- ծառի կամ նրա մի մասին վերաբերող մի բառ

է և հայտնի է դարձել մեզ Գիլգամեշի էպոսի խեթական թարգմանությունից, որ հրատարակել է Քրիդրիխը (ZA, NF, V, 47)։ Խոսքը վերաբերում է ծառերի կոտրելուն (šummitanta «կոտրում»)։ A. Götze-ն առաջարկում է թարգմանել «կոճղեր», „брусья, бревна" (Stämme, Balken)։ Ըստ իս այդ pulpuli բառը, որ կարելի է գրել և bulbuli, քանի որ p ‖ b սովորական է խեթական գրության մեջ, նշանակել է «ճյուղեր» և ակզբում ծագել է «ընձյուղ, отпрыск» իմաստից։ Դրա համար ինձ հիմք է տալիս նույնանությ և նույնիմաստ հայոց բողբոջ բառը, որը առացվել է bołboł հին ձևից, ինչպես ունենք դողդոջալ և դողդողալ (արմատն է դող-ալ), մ(ը)րմունջ „шопот" և «ներքին ցավ» (արարատյան բարբառում) և մըրմուռ (արմատն է մուռ- «մրթմրթալու ձայնը» և «վրնջ», մուռը հանել «վրնջը» հանել), տրտունջ < turtur-ից, պազպաջել, «փայլլել» ‖ պլպլալ, փողփողել և այլն։ Բայց խեթերենում կա նաև warwala- «սերունդ» իմաստով նույնպես որևէ օտար բառ, որը ազգակից է այս pulpuli ‖ bulbuli «ճյուղ, բողբոջ» բառին։

36. šappatta «նա մշակեց ձողեր», he trimmed (poles)?

37. šinaḫila «հրամանատար» (commander-in-chief)? Այս բառը կազմված է šinahha- «դարան» (ambush, ambuscade) պարզից, -ila մասնիկով, որը չունի փոխառության անպիևներ։ Համանորևն այդ օտար šinaha բառը, ինչպես և kupaḫi- «գլխարկ», šadupšaḫi «գահի վրա», zizzaḫi «ծխական խմիչք» բառերը, նախախեթյան կամ բալահայասական լինեևն, որոնց հարում է այդ -aḫi մասնիկով հայոց դիպաճ բառը, որ նշանակում է ժամանակավոր «բանակ» (ի դիպաճոջ ‖ ի դիպաճուջ «բանակում»)։

38. tapar— «կառավարիչ»։

39. tapašša— «ծնունդ» (fever?), որը թվում է թե արխական ծագում պիտի ունենա (= սանսկր. tāpas «տենդ») անցնելով Փոքր Ասիա, կամ ավելի ճիշտ Հուռի Միտաննիում եղած հնդկական ցեղերի լեզուներից, ինչպես տեսանում ենք նաև խեթական մի գրվածքում, որ վերաբերում է ձիու մարզմանը (трепировка-ին) իրևն մի քանի հնդկական տերմիններով (aikawartana «մի անգամ», pančawartana «հնգապատիկ», šattarwatana «յոթնապատիկ»), համեմատել խուռիտների արխական աստվածանուններից (Yndra, Našatia երկվորյակները, varuna), marianni պղնձական դունդը և այլն։

40. tarpanallaššata «խռովություն առաջ բերեց»??

41. dūr «մեզ, моча» (urine)։

42. upati— «արևելք»?

43. ušaliḫa «խանդաբեցի, արդելեցիք»

44. warku-š— մի անբարենպաստ երևույթ, որ առածու կողմից ձևնարկված է լինում ծխամաստարական միջոցներով։

45. warwalan- (warwalani, warwalanteš, warruwalanaš) «սերմն, սերունդ»։ Հավանորեն փոխ է առնված հնդկերենից, ինչպես վերոհիշյալ tapaššа «աննդ, մալարիա», և թերևս mataššu «քաղցու» համեմատել հուն. methu, ռուս. мед, գերմ. met, հայ դավառ. մադ «դոշարթ և այլն։ Սրա համար կա պարզ wal- «սերմ» հայ և ողմանական մի քանի հատուկ անուններում մեջ, ինչպես ավղ. Varaz Vałan (Վարազ Վաղան) «վարազի սերմն, Վարազի սերունդ», Arsvał (Արսվաղ) «արջի սերունդ, արջուկ», հայոց Վաղարշ «սերունդ արջի»։ Ենթադրել փոխառյալ warwal- բառը ևս համարում եմ կրկնված, ինչպես նմանը մենք տեսանք pulpuli (bulbuli) «ճյուղ» բառի մեջ։

46. waššа- (հոդն. waššanti «չեզոք» wassari, հրամ. wassaru) նշանակում է «շոր հագնել» (put on clothes), հագնել (clothe) թեպետ կա և առանց փոխառության ակզիկների waššе ‖ waššа- (waššezzi 1 դ., waššaši 2-րդ դ., waššanzi 3 րդ դ., waššanza «հագած»), waššeškiši «հագնում ես», waššiazzi «հագնում է» և այլն։ Արմատը մաքուր հնդեվրոպական է, որ կա օրինակ լատիներենում vestis «զգեստ», հայոց զգենում (զգեցյալ) «հագնել», «զգեստ, հագուստ», գոթ. vasti «զգեստ» wasjan «հագնել», սանսկր. vas- «շոր հագնել» և այլն։ Բայց ինչո՞ւ է համարվել նաև փոխառությունն ի միջի այլոց կա և waššuttal «շոր, զգեստ» հարցականի տակ դրված բառը (garment?), որը, սակայն, կարելի է պաշտպանել հայոց ուսաիկ մի անգամ գործածված (Ոսկեփորիկում) բառով— «Մեհատքս ոսկեզօծ, սպիտակ բնհեղ, ուսաիկ ծանրագին էած ի վերայ նորա» (Արմ. բառ., V, էջ 684)։ Հայոց այդ բառը կարող է փոխառյալ լինել խեթ. waššut- կամ waššt- ձևից wa>u փոխանցումով, ինչպես տեսանք ուրդ, ուռան և նման բառերի քննության ժամանակ։

47. winat «ննջուկներ» (stakes?)։

48. wiwidai «բերում է» (brings?)։

49. zam(m)ura- (zammyraizzi, zammuranzi, zamuranun) «վիրավորել, հարձակվել» (injure, attach)։ Հավանորեն այս բայը վերցված է Հալաուալի կամ նրան մոտ լեզուներից։ Թերևս համեմատե-

լի է համար-առակ-ել «ամեծարանել, առաջ նետվել» բայի առաջին մասը և ակկադ. zammura *կոչվող քրմական գործ։*

50. zaršla- *«բարեկամություն, երկրի ազատություն»* (guest-friend= ship, freedom of the country??) *ապահովության նրաշխիք* (guaranty of safety?)։

51. ziladua *«ապագայում»* (tur the future). *կա և առանց փոխառության սեպիկների* zilatia(id), zilati *(տրակ. հոլ.?) «ապագա»։*

52. zūwan *«անուշդ, միս»* (food, morsel, meat?)։

53. miu- *(հայց.* miun) *«մեղմ, դյուրնկան»* (soft, smooth, pleasant)։

54. galpariwat- =? *(տե՛ս* Die heth. Bruchstücke des Gilgames-Epos, ZA, NF, V, *էջ 8)։*

Իհարկե փոխառյալ բառերը ավելի շատ են և առայժմ չեն հաշվագրվում և մեկնվում. նրանք կարող էին և նշված չլինել երկու հորիզոնական սեպիկներով, ինչպես վերևում հաճախ այդ տառանք, երբ բառի մի ձևի հետ այդ նշված է, իսկ մյուսների մոտ չի դրված։ Վերջապես կան բառեր, որ ըստ խեթագետների հավանորեն օտար են, ինչպես, օրինակ, šadupšāḫi *«գահի վրա», որը մեզ հետաքրքրում է իր -aḫi վերջամասնիկով նման մեր դիպահ կամ դիպահի «ժամանակավոր բառը» (տե՛ս վերը) բառի, կամ թե* šeḫelliški- *«առաջ» և* šehe(l)lia- ‖ šeḫilla *«ջրհոր, աղբյուր» բառերը, որոնք հավանորեն խուռիտական են համարվում (*Hitt. Glos., *էջ 136)։*

Այժմ վերցնենք այն խեթական-հայկական բառամթերքի քննությունը, որոնց ընդհանրությունը չի կարելի անմիջապես բխեցնել փոխառությունից։ Խեթական փոխառությունները, ինչպես որ այդ դեռևս էին իրենք՝ խեթ դրագրողները, վերևում բնորոշին և մասամբ համեմատվեցին, թեպետ իհարկե այդպիսի փոխառությունները կարող են լինել և վաղեմի ժամանակից, որ չդիտակցվեին հետագայում, երբ գրվում էին բնագրերը։ Այդ տեսակետից որոշ վերապահություն պետք է լինի իհարկե այդ բոլոր խեթական արմատների ծագման հանդեպ, երբ ակնհայտանի է դրանց որոշ մասի հարաբերությունը հնդեվրոպական լեզուներին, իսկ մյուս մասի կապը բնիկ փոքրասիական (ասխանիկ) լեզուների հետ, թողած դեռ անհայտը։ Այս կոնկրետ պատմական, բայց և բազմազեր տեսանկյունով պետք է մոտենալ և ստորև բերվելիք հայ-խեթական բառամատնների ընդհանրությանը։

Քանի որ խեթական բևեռադրութիւնը չունի տարբեր նշաններ š(z) և s(u) հնչյունների համար և մեկ š գրութեամբ նա արտահայտում է, ինչպես կտեսնենք, ընդհանրապես s(u) հնչյունը, թե՛ հայոց լեզվի համեմատութեամբ և թե՛ հնդեվրոպական, ուստի հետևելով E. Sturtevant-ին, որ իր բառարանում միայն գործ է ածում s, ևս ևս այստեղ կտառադարձեմ այդ տառով։ Իսկ ḫ գրութեանը պահում եմ անփոփոխ, հակառակ E. Sturtevant-ի, որ գրում է h։

1. Աղմուկ «շփոթութեան, իրարանցում», որից աղմկել, աղմկութիւն, աղմկարար և այլն։ Հ. Աճառյանը *alm-(-uk մասնիկ է)* արմատը համեմատում է հուն. po'lemos «իրարանցում, կռիվ, պատերազմ» (Արմ. բ., I, 115), որը ինչպես ինքն է ասում, «մեծ հրճվանքով ընդունեց Meillet»։ Բայց այդ բառի հետ ավելի հարմար է կապակցել խեթական *alalimas* (amas alalimas) =akkad. ḫetidu «խրտնում, վախ» (Erschrocken heit, տե՛ս Kleinas. Forsch, I, 186; Hit. Gl. „fear"? 19, ZA, NF, V, 75)։ Խեթ. alalima- բառի երկու հաջորդ al- հնչյունակոմպլեքսը ենթարկվել է միացման և հապլոլոգիայով և ստացվել է alima, որը հայերի մոտ պիտի տար աղմ-ուկ։ Իմաստի տեսակետից էլ հայոց աղմուկը իրրև «շփոթ վիճակ, իրարանցում» հետու չէ խեթական alalima «վախ, երկյուղ, խրտնում»։ Հայոց բառը կապ չունի հունարենի po'lemos բառի հետ։

2. Անարի «չարափառանց մեծ, անհեթեթ, անճոռնի, վիթխարի» (Արմ. բ., I, 290—1)։ Հ. Աճառյանը այս բառը բաժանում է ան-, որպես բացասական մասնիկ և արի «արիացի ариец» և համարում է փոխառութիւն ամիատ. anairya-, սանսկր. anārya-, պահլ. aner «ոչ արիական, օտար»։ Ըստ նրա «ազգերը սովորութիւն ունին իրենցից դուրս գտնված ազգերին «վայրենի, բարբարոս, այլանգակ» համարելու և նրանց անունը այս նշանակութեամբ ուրիշ վատ իմաստով իրր ածական գործածելու»։ Նա օրինակ է բերում խուժիկ, խուժան..., խաղտալուր, խաղտալեզու xuž «էլամիտ» և xald ցեղանուններից, ինչպես նաև այժմյան գավառական մեր բարբառներում քուրդ, թուրք, գաղտ, լազ, բոշա և նման անունների փոխաբերական հոլջորջումները։ Այդ այդպես է, բայց կան իհարկե և լավ մտածումներ, օրինակ հայոց պարթև «պարթևացի», սկա «սակ, սկյութացի», վրաց kerketi «վայելչակազմ, стройный «kerket չիբքեղ» անունից, վրաց gmiri «հներոս» կիմմերների ցեղանունից և այլն։

Վերջապես «ոչ արիականն» հայերենում չկար և հայտնի չէ, որ իրանյանները նա այդ anaria- անվան տակ հասկանային «վիթխարի, չափազանց մեծ» կամ թևկուզ «անճոռնի, անհնթնթ», թևպես և հակադրում էին քաղաքականորեն Êran և Taran կամ Anêran: Ըստ էս, հայոց անարի բառը ածանցված է anar բառից և վերջածանցով, ինչպես աղի, երկաթի, ջրի, հայոզդի և այլն: Իսկ anar-ը փոքրասիական մի բառ է «հզորություն» իմաստով, որի համար կա խեթ. innara ('Strength', Hitt. Gl. 59) կամ „Kraft, Macht, Gewalt" (ըստ Ֆորերի, ան՛ս Կրիչմերի հոդվածը Klein. Forsch. էջ 301), որից կան բազմաթիվ ածանցյալներ, ինչպես inarahh- «հզորացնել», innarawes «հզորանալ» և այլն: Ի նկատի ունենալով, որ փոքրասիական որոշ հին լեզուներում, ինչպես, օրինակ, լուվիներենում, խեթական innarawwentaš աստվածներին համապատասխանում է լուվիերեն Annarumenzi ձևը. խեթ. idalu «չար» = լուվ. adalua, խեթ. išha= հին կապադովկիացիների aḫš (բարդ անուններում), ուստի կարելի է ենթադրել, որ հայաբնիները (այլ խոսքով հայերը) իրենց անար «հզորություն» բառը վերցրել կամ ունեցել են հենց այդ ձևով, այսինքն բառասկզբի „a" ձայնով, փոխանակ խեթական „i" ձայնավորի (համմ. մեր awri- «տեր» և ուրարտախուռիտական ewri- «տեր»): Իսկ «հզոր» իմաստը հեշտությամբ կարող է հասկացվել և իբրև «չափազանց մեծ»: Այդ անարի ածականով Եզնիկը հորջորջում է ծովի ձկներին (կետին?), կամ Խորենացին «նիզակ անարի ի ձեռին իւրում» (1-ին գիրք, § 11), ուր խոսվում է Հարկի „հզոր նիզակի մասին:

3. Անգոսնել, որ գրվում է նաև՝ անկոսնել, անկուսնել, անգուշնել, անկուշնել, անկոշնել, նշանակում է «արհամարհել, անարգել»: Այս բայերը ոչ մի կապ չունեն անկուշել կամ անկուշանալ բայերի հետ, որոնք մտավորապես նշանակում են «վարանմանալ» («օրացան և անկոշնաց սիրելին») կամ «ծուլժամ գիրացաք, սառացաք, լայնացաք և անկուշնացաք», ըստ այլ ձեռագրի՝ անկուշացաք (տե՛ս Արմ. բառ., I, 298—299): Նմանապես մեր բայերը կապ չունեն անգոլանք «կիրք, աքացի, քացի» բառի հետ, որ ուզում է տեսնել Հ. Աճառյանը (անգ. էջ 298): Մեր բայերը, նշանակելով «արհամարհել, անարգել, կազմված են ան- բացասական մասնիկից և գոսն- || կոսն || kusn- արմատից, որոնց „s" բաղաձայնը փոխանակվում է նաև „š"-ի հետ: Դրանց սկզբնական ձևն է kosn (košn) կամ kusn (kušn), որ նշանակում է «վարձատիր, վարձ», և կա խեթերեն լեզվում: Մանավանդ շատ է գործածվում

խեթական օրինադրքում, ուր կարդում ենք kušnezzi *«վարձում է»* (*'hire', Hitt. Gl., 85*), kuš(š)an *(տրակ.* kuššani, kušni, *բացատ.* kušnaz*) «վարձագին, աշխատավարձ, գին»* (*'pay, fee, wages, price'*), kuššanattallaš *«վարձկան» (գինվոր) և այլն։ Հետևապես հայ բառերը անկոանել (անկուանել) կամ անկոշնել (անկուշնել) տատասպի նշանակում են «անարդել», այսինքն «արժեք չտալ, չհարգել» (arg- պարսկերեն նույնն է նշանակում՝ գին, արժեք)։ Գարգ առանց բացառական անմանիկի արմատը ևս տեսնում եմ Երեմիա Միդրնցու բառարանում բերած կոշնել «ձօնել, ընծայել» և կոշնող «ձօնող, ընծայող» բառերի* košn- *արմատի մեջ (տե՛ս Արմ. բառ., III, 1492)։ Հետաքրքրական է, որ հայերը պահել են թե՛* kosn (kusn) *և թե՛* košn (kušn)*, այսինքն թե՛ „s“ և թե՛ „š“ հնչմամբ արտասանությունները։ Դժվար է իմարկե գնել փոխառության խնդիրը։ Ներկայումս կար և* kušata *«հինոջ համար տրվող վարձագինը» և* kuš- *բայը (*kušhahat *«վճարեցին», տե՛ս* Hitt. Gl. *էջ 85 (*kušata „brideprice; marriage“, kuš- „pay, repay“*)։ Ըստ ես խեթական* kušan *այնպես է հարաբերում* kušata *(<*kušanta*) բառին, ինչպես հայոց հաւատ բառը «հաւատա»-ին, թողած դեռ հաւատի բառի կազմությունը։*

4. Անք և հազվագյուտ անուք *«թևի տակը,* подмышка*»։ Արդի բարբառներում մի քիչ ընդարձակ և գուցե ավելի հին իմաստով է գործածվում. «դիրկ» (Ախալցխա, Զեյթուն, Համքեն), «կրպոց, տրցակ» (Հաճին), «թռուտակ» կամ «երկու բազուկների կամ մեկ թևի ու իրանի միջև առնված մի բանի քանակություն» (Մոկս, Զարսանջակ, Տրապ.), «մի կուրծք բեռ, լանջի վրա առած բեռան քանակություն» (Այն), «ուս, կռնակ» (Մարաշ)։ Ամեն տեղ հնչվել է «անթ» և ոչ թե «անուք» և ինչպես տեսնում ենք Հ. Աճառյանի բերած այս բարբառային օրինակներից (Արմ. բառ., I, 367), այդ բառը հատուկ է եղել արևմտյան և մասամբ հարավային հայ բարբառներին։ Այդ «անթ»-ը ևս կապակցում եմ խեթ.* antak-išši *կամ* antak-itti *բառաձևերի* antak- *բուն հետ, որ նշանակում է «մեջք, փոր, գոտկատեղ» (*Hitt. Gl. 22; midde, abdomen, waist*)։ Դրաբարում կար և* անուրքս *«թևի կամ վրի տակ ուռկքա», որը գուցե հին* antak- *ձևից է։*

5. Անթեղ *«առաք մոխիր, մոխրած կրակ»,* անթեղ հարկանել *«կրակը մոխրի տակ թաղելը»։ Այս բառը Հ. Աճառյանը համարում է կովկասյան լեզուներից փոխառյալ, ի նկատի ունենալով վրաց* anth-eba *«կրակ վառել, հրահրել, բորբոքում», տե՛ս* anth-ebuli *«վա-*

ած» (Աբմ. բ., I, 326)։ Կա նաև մեր մի շարք բարբառներում (Ալաշկ., Ախալքալաք, Հաճին, Զեյթուն, Մուշ, Խարբ., Տիգր., Ակն, Ղարաբ., Երևան), և ինձ թվում է, որ հալ և վրաց anth- բնից սերված ձևերը կապ ունեն Փոքր Ասիայի լեռնների հետ, որոնցից ևս հնամեամատնի խեթ. ānt-(ānza) „горячий" heiss, «տաքուց» բառի հետ։ Թերևս փոքրասիական ծագումով է նաև հունական anthraks «ածուխ», anthrakia «անթեղ»։

6. Աշխար «ողր, լաց, կոծ», աշխարել կամ աշխար դնել «վրան լաց լինել, կոծել»։ Այս բառից եմ ես հանում ապաշխարել, որ տառացի նշանակել է «հանցանքը լացով (ողբով) քավել», «ետ լացել»։ Համեմատել խեթ. ešḫahru (išḫahru) «արտասուք, լաց» ('tears, weeping'— H. G., 37)։ Անթերևնում, խուռիտերևնում և հալերևնում արմատի սկզբնական e ձայնավորը հաճախ փոխանակվում է «a» ձայնավորով կամ ընդհակառակը, ուստի ešhahru-ի տեղ սպասելի է նաև ašḫaḫru, որը կորցնելով վերջին «ḫ», որ հալանորեն «h» հագագն է եղել, տվել է հայոց ašxar «լաց, կոծ» բառը։

7. -ապ կամ -ափ վերջամասնիկը, որը իմ կարծիքով ցույց է տալիս մի որևէ գործողությամբ բռնված լինելը։ Այդպես են կազմված a) տազնապիմ «նեղվել, չարչարվել» (տազնապաւ «փութով, հապճեպով»), որը թերևս խեթ. dagan ‖ tekan «գետին» բառի takn(a)- բնից է, այսինքն՝ բուն նշանակությունն է «գետի գետինը տարվել (բռնվել), տապալվել». b) տաղտ «ձանձրություն» բառից ունենք տաղտուկ, որից տաղտկ-ապիմ «նեղվել, ձանձրությով բռնվել», ինչպես և տաղտ-ապել «չարչարել, նեղել», տաղտապիմ «նեղվել, տառապել, դժկամել» (տաղտ արմատի հետ համեմատել սաորական talet «ծուլանալ, դանդաղել»), c) խուճապ(ք) «ճիվաղ, ուրվական, տեսիլ, խուճապ տադնապ», խուճապիմ և այլն, տացված խուճ (կամ խուճիճ) ‖ խունճ «խրտվիլակ», ինչպես պանինա և պան տատմածանունը. d) կտապիլ «օձի դալարվել, նռռելը», Աբարատյան բարբառի «կուտապ գալ, կուտապ կուտապ գալ», համեմատել և միջնադարյան կաուսել նույն իմաստով, որոնք բոլորն էլ կուտ < կոյտ «կուտակվել» բառից։ Իսկ -ափ մասնիկի համար համեմատել—խուսափիլ (բայց խուլս տալ). սարսափիլ (բայց սարսել, սարսուռ)։ Շուքափիլ (շուքի բառից), խարշափիլ «տերևների խշրտալը», բարբառային՝ մռափ = քնափ «քնով բռնված», թրլրփ-ել (Աշտարակում) «թուլանալ, իրեն կորցնել» (<*թիլափիլ) և այլն։ Այս -ap (-ապ) կամ հետադա -aph (-ափ)

մասնիկը եղել է մի ժամանակ ուրույն բայ, նշանակելով «բռն(վ)-ել», որի հետ համեմատել խեթ. ap- կամ ep- «բռնել», վերցնել („fassen, ergreifen, einnehinen" ըստ Götze-ի, Ann d. Murs., 283, տե՛ս նաև H. Gl., 39)։ Մեզրեկ. xakaphi „стук" (v-xaki „я стукнул"), çvitaphi „чирикание" čkiaphi „крик, писк" և այլն, որոնք բնաձայն, ունեն այլ ծագման -aph։

8. Ապա «հետո, после», որից յապաղիմ «ուշանալ», անյապաղ և այլն։ Հնդեվրոպական լեզուներում թեպետ կան նման հնչմամբ ձևական բառեր (նախադրություններ), ինչպես ավեստ. apa, լատին. ab, գոթ. af և այլն, բայց իմաստով չեն համընկնում հայոց ապա բառին։ Այդ կողմից ճիշտ վարվել Հ. Աճառյանը, որ «Նորք» ամսագրում (1925 թ., № 5, էջ 393) առաջարկել այդ հայերեն բառը կապակցել խեթ. նուլնիմաա և նուլնահունչ appa-ի հետ ('afterwards, again), որը կարող է լինել և նախաբայ (praewerbium)։ Այդ ճշտակցությից են հայոց փոխառյալ ապաճովել («հետ վազել» =խեթ. *appa huwa-*) ապաշաւել «զղջալ» հանցանքի համար» (=խեթ. appa šaw-? šaw(w)ar «ցասում»), ապաքինել «լավանալ, առողջանալ» (= խեթ. appa + kinu- «բացել» =նո բացել, նո բացվել) և այլն։

9. Ատաղձ «շինանյութ, փայտեղեն», որից ատաղձագործ և ատաղձարար «հյուսն»։ Այս բառի atal- մասը ևս կապակցում եմ atalluš (հայց. հոգն.?) «փայտ, անտառ», ինչպես որ այդ բառը կարդում են էհելոլֆը և Ֆրիդրիխը (տե՛ս „Die heth. Bruchstücke des Gilgameš— Epos, ZA, NF, V, էջ 81)։ Խեթական այդ բառը ունի սկզբում գրած «ծառ, փայտ» (GIŠ) գաղափարանիշը, որ ընդհանրապես վերաբերում է փայտեղենին։ Այդ տեղում միասին գործածված են ^{GIŠ}TIR «անտառ» և ^{GIŠ}atalluš (էջեր 81, 68)։ Հավանորեն ասում է անտառից կտրվող փայտանյութի մասին, որով պետք է տուն շինվի։ Խեթերեն բառի առաջին նիշն է կասկածելի —կարդալ kal?-tal-lu-uš թե u?-tal-lu-uš թե ^{GIŠ}a-tal-lu-uš։ Վերջինը, ինչպես Հ. Էհելոլֆն էլ է շեշտում, ավելի է հավանական, որովհետև նախորդում է ^{GIŠ}TIR համանիշ «անտառ» գաղափարը (էջ 81)[1]։ Վերջապես հայոց ատաղ-ձ բառը կարող է այդ ճիշտ ընթերցվածքը պաշտպանել։ Հայոց բառի վերջին «ձ» բաղա-

[1] Բնագրի $^{\text{ՀՐՐ}}$kal նիշը կարելի է դասել $^{\text{ՀՐ}}$gíš, որը և «ծառ, փայտ» գաղափարանիշն է, և $^{\text{ՀՐ}}$a ձայնավորը՝ իսկ ú ձայնավորի համար գրվում է $^{\text{ՀՐՐ}}$։

ձայնը հավելվածք է (տալս ինչ-ին վերաբերող մի բան է?), ինչպես ունենք դեղձ, որը կազմված է դեղ «գեղին» բառից. նման պարսկ. šaṙṙang «գեղձ» (բառացի՝ գեղնադույն), իղ-ձ «ցանկություն, հրամայք» կազմված ił- «ցանկալ» արմատից (համեմատել թևրևս խեթ. ilalia «ցանկալ, ուզել», ileššar «ցանկալ» (desire?), (տե՛ս Hitt. Gl., 57 և Suppl., 92): Մաղ-ձ „желчь", որի հետ ազգակից է թևրևս մաղ-աս «բալղամ, մարմնական հյութ» բառի մաղ- արմատը: Այդ «ձ» հավելվածքը նման է «ջ» ածական բաղադրիչին գաղջ բառի մեջ (գոյ բառի արմատն է), ինչպես ունենք նաև ստերջ (լատ. ster-ilis), շուրջ (շուռ բառի արմատն է), կամբրջ, որը կապ ունի «կամար» (=свод) բառի հետ (համեմատել խուռիտներեն kamari կամ gamari, որը մի տեղ է Ḫušri քաղաքի մոտ, նաղիին մոտ, կամ «Տնեշուպ տեր gamari-ի Իրրիտա քաղաքի, որ սխալմամբ թարգմանում են «ամրոց, բերդ» NPN, 292):

10. Ար (սեռ. հ. ատու) «բուրդ», թեպետ հոլովվում է նաև «ր» և «ռ» հոլովմամբ (ասրոյ ‖ ասրու, ասրով, ասրոց, ասերբ): Համեմատվում են հուն. po'kos «կտրված բուրդ», pe'kos «գեղմ», լատ. pexus «բրդոտ», pecus «արջառ, պաճառ», սանս. paçu «ոչխար», ավեստ. pasu «հոտ, ոչխար, արջառ», պարսկ. pašm «բուրդ», հին բարձր գերմ. fahs «մազ», գերմ. Vieh «արջառ» և այլն (տե՛ս Arm. Gr., 421, Արմ. բառ., I, 583—584): Բայց ըստ իս, այդ հնդեվրոպական մարգանքը կնքահարվում է ձախողության, որովհետև կա խեթ. aṣara š «բուրդ» (wool, տե՛ս Sturt. Chrest, 119, իսկ ըստ Götze-ի, Tunn. 85 fn. 325 «բրդեղեն?»), E. Sturtevant-ը գրում է asaras (տե՛ս „Supplement to a Hitt. Gl., էջ 14): կա նաև asareske- կամ asareska- կապել բրդով» ('bind with wool'? ըստ A. Götze-ի ibid):

11. Արգատ «որթատունկի լաո, կտրտած ավելորդ ճյուղերը» (Արմ. բառ., I, էջ 643): Միջին հայերեն բառ է, ունի նաև երևմիա Մեղրեցին, ինչպես՝ և այժմյան Արարատյան բարբառը («արքատա»): Համեմատել խեթական ārg- արմատը (ārgi 3-րդ դ. ներկա), որ նշանակում է «կարել (отрезать), պլանդակել, կարատել, надрезать» (Hitt. Gl., 27, „cutoff, mutilate, cutup"): Հայոց բառի մեջ վերջին -at մասը վերջածանց է, նման արմատ, ճաղատ, աղքատ և նման բառերի:

12. Արուեստ «ճարտարություն, մտավոր կամ ձեռական արհեստ», կամ «խրթնական հնարք, հրաշք», արուեստական «ճարտար արուեստագետ», «աստրինի, բարեպաշտ», «երաժշտական» և այլն:

Հետագայում ասվում է՝ նաև արհեստ, որ իմաստի տեսակետից բնականաբար պիտի տարբերակվեր, առանձնով այժմյան իմաստը (ремесло)։ Ըստ իս, արտեստ բառը հնագույն ժամանակ ունեցել է կրոնական ծագում, նշանակելով «պաշտամունք, культ» իմաստը, այսինքն՝ այս ծիսական ստեղծագործությունը իր բոլոր գործնական և դիցաբանական (դիտական», «ստեղծագործական») կողմերով, որ պահանջվում էր կրոնը դարձնելու կատարյալ և ազդու։ Համեմատել հայոց բառի «հարտարություն, բարեպաշտություն և երաժշտություն» հատկանշերը։ Եվ այդ կողմից ևս կկապակցեի խեթ. arwe- արմատի հետ, որ նշանակում է «երկրպագել, պաշտել» (Hitt. Gl., 23, 'bow before, worship')։ Հայերենում վերջամասն -„est"-ը առլորական ածանց է, նման գոլեստ, ուտեստ, պահեստ և այլ կազմություններին։ Խեթերենում կար aruw(w)aizzi «պաշտում է», aruwānzi կամ arwanzi «պաշտում են» և arwānun «պաշտեցի»։ Իմաստը ճիշտ կերպով որոշել են Ehelolf-ը և E. Sturtevant-ը (H. Gl., ibid)։

13. Արծարծ-ել «հրահրել, բորբոքել»։ Տերվիշյանը («Նախալեզու», 48, 61, 102) այս կրկնավոր բայը կապելով «արծնել» (= տաք երկաթով կամ գունավոր մոմով փալտի վրա նկարել) բայի հետ հանում է հնդեվրոպական նախարմատ arg-ից, որ պիտի նշանակեր «փայլ, ցոլք, լոյս» (Ամր. բառ., I, 690) և ենացել է հուն. argo's «փայլուն, սպիտակափայլ, սպիտակ», առնակր. arjuna «սպիտակ», arǰ- «խորովել», լատ. arguo «լուսաբանել», argutus «իմաստուն, լուսամիտ» և այլ բառերի մեջ։ Թողնելով արծնել բայը, որը, որպես կոնկրետ տեխնիկական և կուլտուրական բայ, հավանորեն տեղական (կամ սեմական) բառ լինի, ես առաջարկում եմ արծ-արծ-ել բայն ևս համարել ոչ հնդեվրոպական և կապել խեթ. arš- (araśzi, aršizzi) «հոսել», āršarš-ur «հոսանք» ('flowing, current of a river', см. Hit. Gl., 28, 28 և Suppl. էջ 14) բառի հետ։ Խեթերենում arsarsur ածանցյալ է -ur մասնիկով, որ ցույց է տալիս գործողության արդյունքը։ Հայերենում այդ արծարծ-ել բայը, եթե փոխառություն լիներ, պետք է հնչեր «արսարսուր»։ Բուն իմաստն է «տարած(վ)ել և որպես ջրի հոսանք, «распространять(ся), разливать(ся)»։ Խեթ. s (š) = հայ. ծ կա նաև ին, kars- «կտրել» և հ. գեղծուլ կամ քեղծուլ «սափրել, մազերը կլորել», որին մոտ է նաև մեգրելական քերցուպ (ჭერცუა) «կտրել, резать, отсекать» (տե՛ս И. Кипшидзе, Грам. Мингр. языка,

էջ 342)։ Այդ հնչյունարանական խնթ. s (š)= հայոց ծ հարաբերության համար համեմատել նաև հետևյալ օրինակը։

14. Արծի «բույս». առանձին չի գործածվում, այլ մանում է մի քանի բարդ բայանունների մեջ, որպես այդ բարդությունների երկրորդ մասը։ Այդպիսիներն են -խաւարծի «որթի փափուկ, կակուղ և մատղաշ ծիլ», -բաւարծի (ըստ Առձ. բ. «բրդյախ»), որի սկզբի բաւ- մասը Հ. Աճառյանը կապում է «թաւ» (-թանձր, խիտ, մաղում, բրդում) բառի հետ. կա և աղրծրի (աղարծի) բույսանունը (Արմ. բ., II, 1160, III, 441)։ Այս արծի հին բառը ևս կապում եմ խնթ. arsi-s «տունկ», «տնկաստան» ('a planting, planted field'. Hit. Gl., 29), որ գործ է ածվում օրինակ խնթական օրինագրքում (տես Code hittite. 102, takku aršin kuiški taiazi „siune plantation quelqu'un vole" 11, կամ aršin appa aršaizzi „la plantation il replante" 20)։ Կա և āršakizzi «տնկում է», անց. aršikkit «տնկեց» և այլն (Hit. Gl., ibid)։ Բայց իր այդ բառարանի հավելվածքում Sturtevant-ը խնթական այդ arša- կամ arše- արմատները թարգմանում է «մշակել» ('cultivate', Supp., 14), որը հարմար չէ aršի- գոլականի համար։

15. Բով «հայոց, հնոց, горнило», որից բովել և բովիրել «խարխլել, աղանձել» (բարբառներում)։ Համեմատել խնթ. bauwant դերբայը (կրաւորական), որի սկզբում գրված գաղափարագիրը NINDA «հաց, հացահատիկ» (օրինակը բերվում է Զոմմեր-Ֆելդֆինանականների կողմից Պապանիկրիի ծիսարանում)։ Sturtevant-ի բառարանում թարգմանվում է «թխված տաք մոխիրների տակ» կամ «լավ թխված» (Hit. Gl.)?? Թերևս այդ NINDA pauwant- (կամ pawwant-) նշանակել է «ցորեն ապանձած»։ Հայոց «բ»=խնթ. «պ» (p) գոնում ենք նաև հայոց բարգաւաճ և խնթ. pargaw-az. հայոց բողբոջ և խնթ. pulpuli. թերևս նաև հայոց բղուղ (մեծ կճուճ է) = խնթ, pulluria, որը մեղրի համար կճուճ է (բերանը թզենու տերևներով էր գոցվում, տե՛ս Պապանիկրի քրմի ծիսարանը, Bogh. — St. X, 8*, 38, 56) և այլն։ Հայոց բով (և բովել) բառարմատը Հ. Աճառյանը (Արմ. բ., VII, 108) ուղում է կապել գերմանական լեզուներում գոնվող be- արմատի հետ (<*bhē-), ինչպես—հին բարձր գերմ. bāen, նոր բ. գ. bähen «հացը խորովել», հին իռլ. baṫ «շոգիով բաղանիք», հին սաքս. bath, անգլոսաք. boeth, գերմ. bod «բաղանիք», նորվ. bara «տաք ջրով մաքրել» և այլն։ Հայոց բով արմատի մեջ վերջին w հնչյունը համապրսում է ուրևէ «աճականն»։ Այդպիսի կամայական և արհեստական ձևով, որ այդչափ

հատուկ է որոշ հնդեվրոպաբաններին, ամեն ինչ կարելի է անել։ Հալոց bow, խեթ. pauw- (կամ baww- ‖ bauw) արմատները թերևս կարելի է կապակցել միմյն լատ. foveo «տաքացնում ենք բալի հետ, այն էլ նեթե ապացուցվի, որ լատ. սկզբնական f բաղաձայնը (ինչպես fero և նմանների մեջ) առաջացել է bh ձայնեղ ասպիրատից։ Ի միջի այլոց բացի հալոց b = խեթ. p հարաբերակցությունից ունենք նաև հալոց g = խեթ. k, թեպետ պետք է ասել, որ ընդհանրապես խեթական բևեռագիր դրությունը շփոթում է ձայնեղներն և խուլերը։

16. Գժդմիլ կամ գժդմիլ «հնեղանալ, բարկանալ, զայրանալ» կամ «մեկի հետ խռովել, քին ընել, արդողիլ» (Արմ. բ., II, 185), որից գժդմադոլն (ձեռագրում՝ դշդմադոլն), գժդմե/ութիւն։ Թեպետ կա և գժդմիլ և այլն։ Բայց դրանք, ինչպես ճիշտ դիտում է Հ. Աճառյանը, հին ձևեր չեն և ժողովրդական առասպաբանությանն են ենթարկվել «գժ» բացասական մասնիկի կապակցությամբ։ Ես թողնում եմ դեռ գժտել բայը «բարկացնել, նեղացնել, սիրտը ցավացնել»։ Բայց ամենից ցայտուն այդ gəždəm(n)- <*guždum- արմատը հատատում է խեթական kušduwa(e)— լինել «անբարեացական, թշնամական» ('be malvolent, be hostile'?), որից kušduwātar (ուղղ. հ. kušduwāta) «անբարյացակամություն, թշնամություն», kuštuēške- կամ kuštuēška— «անբարյացակամ կամ թշնամի լինել» (տե՛ս Sturt., Suppl., 28)։ Այս ձևերը բերում է Ֆերդինանտ Զոմմերը, հիմնվելով խեթ-ակկադական երկլեզվյան մի արձանագրության վրա, որը վերաբերում է Խաթթուշիլ 1-ինին։ Այնպես որ խեթական բայի նշանակությունը արվում է ըստ ակկադական համապատասխան բառի և, ինչպես ցույց է տալիս հալոց գըժդըմ- ձևը, խմաստը մոտավորապես ճիշտ է արված։ Խեթերենում խմաստն է «անբարյացակամ, թշնամի», իսկ հալերենում «քինոտ, բարկացկոտ, խռովկան»։ Թվում է թե հալոց բայը (գժդմ-իմ) փոխառյալ է խեթերենից, թեպետ գժտ-ում ձևը միտում է անբացատրելի։ Պիտի ընդգծել նաև, որ խեթ. „u“ (կամ „w“) հնչյունին հալերենում համապատասխանում է „m“ բաղաձայնը։ Այս կապակցությամբ հիշենք, որ հնդեվրոպերենում ունենանք m ‖ w հնչյունների փոխանցում՝ ալոտերնացիա, որ հաճախ է լինում բայական անուններին մեջ =umar ‖ -uwar ածանցով, որը թեև հոլովներում դառնում է -nmn-aš (սեռ.), -umn-i (տրակ.) և այլն։ Վերջապես ընդգծելի է, որ խեթ. š (kušduwa-) հալերենում անդրադարձած է նույնպես շչականով (գշդմադոլն, գժդմիմ) և ոչ թե սուլականով, ինչպես սովորաբար լինում է։

17. Գնամ *գնում եմ*, ухожу», *որից գնալուն, խելագնալ, գնացկան և այլն։ Բոլոն է gna- որ ևս կապակցում եմ խեթական* kina- (kinaizzi) «շարժվել, գնալ, գալ» (move, go, come? *տե՛ս* Suppl. to Hit. Gl., 26)։ *Խեթերենում ձայնեղ և խուլ բաղաձայնների գրությունը հաճախակի միօրինակ է և շփոթվում է.* p, t, k *գրությունները, ինչպես տեսնում ենք և գնո կապատանենք, արտացոլվում են հայ համապատասխան բառերում հաճախ կամ* b, d, g *և կամ* ph, th, kh *բաղաձայններով։*

18. Գորգ «*խալի,* ковер», *որը թեպետ միջին հայերենում է մի անգամ գործածվել (Երզնկացու քերականության մեջ, տե՛ս Աբմ. բ., I, 281), բայց իհարկե կարող է լինել շատ հին բառ, մանավանդ որ հարևան նոր լեզուներում մենք չենք տեսնում նման բառ։ Համեմատել խեթ.* kurka-š *(հայց. հոգն.* kurku-š) «ծածկոց (попона) *ջորիների համար» (*cover for a mule??, *որը թարգմանում է* F. Sommer-*ը տե՛ս* Suppl., 27), *որի հետ կապակցվում է, իբրև փոխաբերական իմաստ, խեթ.* *kurkessar *(տրակ.* kurkēsni) «գետի մակերեսը» (*surface of a river?, ibid.)։ *Այս դեպքում ևս խեթ.* „k" *բաղաձայնը համաձայն է հայոց «գ»-ին։*

19. Երես *(մանավանդ երես-ք, երեսաց և այլն) «գլուխ, կերպարանք», որ ոմանք կապակցում են երե-իմ բայի արմատի հետ, իբր առաջացած* *erews-*ից, իսկ erew, բալարմատը* A. Meillet-*ը համարում է հնդեվրոպական՝ ազգակից հուն.* prérō «երևալ, աչքի ընկնել, նշանավոր հանդիսանալ, թվալ, կարծվել, կերպարանք կամ երևույթ ունենալ», *թողած դեռ հին բ. գերմ.* furben «մաքրել, ավլել», *միջին բ. գ.* vūrbe «մաքրելը, թռիչ աստղ», *կիմր.* rhith «ոգանակ, կերպ» *և այլն (Աբմ. բ., II, 796)։ Դերմանական բառերը իմաստով, թեկուզ և հնչյունաբանորեն, չեն կապվում մեր բառի հետ, իսկ հունարենի (*prepō*) և հայոց* erew-(im) *բառաձևերը կարող են կապակցվել միայն նախալեզվի գոյությունից ելած, թեպետ ըստ հնդեվրոպագետների երկու լեզուների վկայությունը (հուն և հայ) միշտ կասկածի տակ պետք է առնել։ Ավելի պատմական և իրական (ուսալ) կլինի իմ առաջարկությունը՝ կապակցել հայոց* eres-*ը խեթ.* esri-*ի հետ, որ նշանակում է «կերպարանք, արտաքին» (*Bild, Gestalt*), *ինչպես մեկնում է* J. Fridrich-*ը (տե՛ս* Kl. Forsch, I, 240, ZA, NF, V, 33—34)։ *Ըստ սումերա-ակկ.-խեթ. բառարանի խեթերեն* esri = *սումեր.* AL.AM = *ակկ.* salmu «պատկեր, արձան, արտաքին»։ *Խեթերենը գրվում է* e-eš-ri *կամ* e-eš-ša-ri, *որը ըստ* E. Sturtevant-*ի արտացոլում է* ēsri, *իսկ հայոց*

eres-ը առաջ եղել է es(e)r-, բաղաձայն „r" հնչյունի սովորական միտաթիզայով (բաղաձայն +r դառնում է r+ բաղաձայն)։

20. Թե, որ հետո գրվից pē *«եթէ, որ, թե, մինչև, որպեսզի» կապակցվում է որպես հնդեվրոպական բառ. հաաքս.* the, *անգլոս.* þē *(շեշտված) և* þe *(անշեշտ), լիտով.* te- *և* -t *(*be-t, uź-to-t*) ձևերի հետ։ Բայց ինձ թվում է, որ այդ* þē *բառը բնիկ փոքրասիական-կովկասյան է, որովհետև մենք խեթ.* ta *«այն ժամանակ (тогда)», և, այնուամենայնիվ, բալց», ինչպես և* -kku *մասնիկի հավելմամբ՝* takku *«եթե, если» (H. Gl. 146, 148, Supll, էջ 40) և վրաց.* თუ thu *(«թու») «եթե»։*

21. Թող-ում «թողնում եմ», որ կա նաև մեր գրեթե բոլոր բարբառներում, համընկնում է խեթ. tal- *կամ* dal- *նույնիմաստ արմատին,* talai *«թողնում է»,* dalaḫḫun *«թողի»։ Կան և ածանցյալ* dales *և* dalia- *բայաբնները նույն իմաստով՝* оставлять, покидать *('leave, let alone, let go', H. Gl., էջ 148, կամ գերմ. „lassen", տե՛ս* Ann. d. M., *էջ 312)։ Ուշադրավ է, որ խեթերենում այս արմատը մեծ մասամբ բաղաձայնով է գրվում։ Արդյոք նույն արմատի՞ց չէ բարբառալին «թալ-ելը» բալը։*

22. Թոռոպ «գրահ, վատ զգեստ», որից ապնաթոռոպ *«քուրթ, խորպ» (Աբմ. բ., II, 1280), իսկ ըստ Առձեռն. բառարանի «թոռոպ— կարկատան զգեստ, ցանցի պես հյուսված հագուստ՝ զրահ»։ Գրվում է նաև* թոռապ։ *Այս բառի նախնական իսկական իմաստի վրա լույս է սփռում խեթական* tarup(p)- *բայարմատը իր բազմապիսի բնաձևերով, ինչպես* taruppun *(անց. 1 դ. եզ.),* taruppir *(անց. 3 դ. հոգն.),* tarup *(հրամ. 2 դ. եզ.),* taruptari *(3 դ. եզ. չեզոք. կրավ. սեռի), իսկ* tarup(p)al- *բնից* taruppaizzi *կամ* darupaizzi *(ներկ. 3 դ. եզ.),* taruppeske- *կամ* taruppeska- *բազմապատկական բունը իր ձևերով,* taruppessar *գոլականը և այլն, և այլն։* Tarup(p)- *արմատի բուն նշանակությունն է «գոլորել, հյուսել (օրինակ՝ բուրդը, պարանը, թևլը և այլն), կցել միասին, հավաքել միասին, դարձնել ներդաշնակ» ('twist; fasten together; assemble, herd together; harmonize', տե՛ս* H. G., *155)։ Հայոց* թոռոպ *բառը ընդհանրապես նշանակել է կցկցված կամ ներհյուսված մի բան (զրահ, զգեստ, կողով...)։ Սրան ապացուցը է նաև միջին դարերում գործածված և դեռ այժմ էլ մեր գյուղերում (օր. Աշտարակում, Ախալքալաքում և այլուր) գոլությունն ունեցող հայտնի թարփի բառը, որ նշանակում է ծառի ճյուղերից հյուսված սապատաձև մի քթոց-գործիք՝ դեռևրում ձուկ որսալու համար։ Համեմատել վրաց* tharphi „пле-

тенка, кошница" (ըստ Чубинов-ի Рус. Гр. сл.)։ Այս թարմ բառը կա Անանիա Շիրակացու մոտ, վիմական արձանագրութիւններում, հիշում է Երեմիայի բառարանը, որը տալիս է նաև թարփափել «կցորդել» հնաոքրքիր բառը, որի իմաստը խնամակս եղել է «կցկցել, ներհյուսել» (сочетать, увязать)։ Անշուշտ Փոքր Ասիայից է վերցված հունարէն tárpē, tarpánē, tarpós «կողով, մեծ կողով (2 մնկով)»։ Այսպիսով ունենք երկու հին տարբերակներ— բոռոպ և թարփ։ Այստեղ ևս կհիշենի և խուռիտերէն turupi (durupi) բառը, որ կարդում ենք Մուրի-Միտաննու թագավոր Տուշրատտայի նամակում, գրած եգիպտոսի Ամենխոտեպ III թագավորին (XIV դար մեր էրայից առաջ)։ Ֆ. Բորկը այդ բառը թարգմանել է «գաշնագիր», որ ըստ իս վերոհիշյալ բառարմատները արդարացնում են (համմտ. „make harmonious" կամ „harmonize" առումը խեթ. tarupp. կամ tarup(p)a(e)- բայաձևերի համար)։

23. Իրեար (ուռ. ն. իրևրաց) «իրար, մեկմեկու»։ Եթե ի նախ ունենանք «ա» հոլովումը (իրևրաց, իրևրաւք), բունը պետք է վերականգնել ireara-, որը անշուշտ եղել է *iriara-։ Այս բառը ինձ թվում է կրկնավոր, ինչպես նման դեպքում ունենք „друг друга", մեկմեկու, վրաց ურთი-ერთმას urthi erthas կամ erthinan erthsa, լատ. alter alterum և այլն։ Այդպես էլ ունենք խեթ. aras aran «իրար» պարզ ara- բնից, որ նշանակում է «բնտիր, բարեկամ» (Freund, Genosse, տե՛ս Fridrich, ZA, NF, II, էջ 52, Ann. d. Murš., 280; Hit. Gl., „companion friend", էջ 26)։ Այդ ara «ընկեր, դրուգ» բառը հաճախ գրվում է «մարդ» (LÚ) որոշիչով։ Հայ iriara- բառը կազմված է iri-ara «ընկեր, ընկերոջ», „друг друга", բայց iri- ձևը խեթական չէ, այլ մի այնպիսի տեղից է, որտեղ ավելի շուտ խուռիտերէն էին հնչում, համեմատել Տուշրատտայի նամակում iri-n, որի բունն է iri-, որը ըստ E. Speiser-ի նշանակում է aid = «օգնական» (տե՛ս NPN, էջ 220), բայց ավելի շուտ պիտի նշանակեր «ընկեր», կա նաև Ir-Tešup, որը փոխարինվում է DU (= LÚ) Tešup «մարդ Տիշուպ» առածու (Bogh,-St, III, 135)։

24. նար-ել xat'-el «նվաղել, թուլանալ» (ըստ Երեմիա Մեղրեցու բառարանի, տե՛ս Արմ. բ., III, էջ 312), համեմատել խեթ. hat- (անց. 3 դ. ևզ. ḫazzašta 3 դ. հոգն. ḫater) «չորանալ, թառամել», որից պատճառական ḫatnu — «թառամեցնել, չորացնել» (Hit. Gl., 47)։ Իմարկե այս առուգաբանութիւնը վերապահութեամբ պիտի ընդունել, քանի որ Երեմիայի բառարանի բառերը մեծ մասամբ

աղավաղված են թե՛ արտաքին հնչյունական տեսակետից և թե՛ իմաստի:

25. Խախուրթ *«կոկորդի ծածկոցը, կոկորդը»: Այս գավառական բառը լսել եմ մի վաղարշապատցի պառավ կնոջից, երբ երեխայի ոտքերով վերև բռնած ժամանակ նա ասաց՝ «խախուրթը շուռ կանցնի»: Խեթերենում կա հայկական հոլովով* ḫuḫḫartin *(ուղղ. հոլ. պիտի լիներ* ḫuḫḫartiš*), որի սկզբում կա* UZU *«միս, միս ու արյուն, մսեղեն» դաղափարագիրը: Սկյոը (*A. Sayce, Revue d'Assyriologie et d'Archéologie Oriental, Paris 24, *124) առաջարկում է այդ խեթերեն* ḫuḫḫarti- *բառը, որը ըստ իս կարելի է կարդալ և* ḫuḫḫurti- *(երեք միջի* ḫar ‖ ḫur *հնչական մասը մի նշանով է գրված), թարգմանել «կոկորդ» (*throad??, *տե՛ս* Hit. Gl., *50), որը կարելի է պաշտպանել ոչ միայն գավառական խախուրթ բառով, այլև կոկորդ ձևով: Ինչպես տեսնում ենք, այդ հին ցեղակից և հարևան լեզուները ավելի մոտ բառակազմություն ունեն (խախուրթ < խախուրդ, կոկորդ և խեթ.* ḫuḫḫart- ‖ ḫuḫḫurt-*), քան մյուս լեզուներում (*zopт-ань, *լատին.* cartilago, *թուրք.* kərtlauk *և այլն), արտեղ ամենուրեք այդ բառերը բնաձայնական ծագումով են (համեմատել նաև՝ կրճիկ ‖ խրճիկ, *ռուս.* хрящ *և նմանները):*

26. Խանդ *«սրտի վառվելը գթով (կարոտով) կամ նախանձով», որից* խանդալ *«նախանձել», խանդանք «նախանձ», խանդել «նեղել, խռովել, չարչրկել», խանդեղութիւն «չափազանց գրգռվածություն», խանդաղակաթ «խանդակաթ», խանդաղանք «գորով», խանդաղատ «գորովալից», խանձ (խանծ) «ալրված բանի հոտ», «հրդեհ», «բռնկեցնելու նյութ», խանձել «սաստիկ փափագել, մոլիլ», «տանջել», խանձել «ալրել, դաղել, խարանել», խանձառ «կրակի կալծ, ածխի կտոր», խանձառատ «ալրած», խանձառել «ալրել, տանջրել», խանձող «կիսաալրված փայտ» (головня), «հրաբուխի լավա», խանձիր «խանձի հոտ», *մուխ, մուր և այլն (տե՛ս Արմ. բառ., III, 367—369): Շատ հետաքրքիր ձև է Ալաշկերտի բարբառով խանձուր «ալրած շոր, որ վերքի վրա են դնում իբրև ըսպեզանիե», որ այլուր արտասանում են խանձիր (կամ խանձել), իսկ դրանից նաև՝ խանձրութ (արտասանվում է խանձրուտ) «ալրած շոր»: Հայոց խանդ ‖ խանձ արմատը Տերվիշյանը և Աճառյանը կապում են, որպես հնդեվրոպական բառ, սանսկր.* çand- *կամ* çčand- *«լուսավորել», հուն.* kándaros *«ածուխ», լատ.* candeo *«փայլել, ալրվել»,* candela *«կանթեղ»,* incendo *«ալրել» և այլ բառերի հետ: Բայց ինարկե ըստ իս ավելի է մոտ հայերենին խեթերեն* ḫan-

da-iš «տաքություն, տոչորանք, վառվելը» ('heat' Hit. Gl., 41)։ Հայոց խանդ և խանձ- արմատներից կան կազմած մի քանի հին ածանցումներ, հազվագյուտ մասնիկներով, ինչպես խանդաղ-խանդատ կամ միասին՝ խանդաղատ, որ կարծես ի վերարտադրում է խեթական xarnalanza > xarnala(n)t-, հետո ող ածանցով՝ խանձող, շատ նման է խեթական -ul ածանցին (օրինակ՝ paḫḫarue «խանձող, головня», šešarul՝ «քամիչ, фильтр», išḫiul «պայմանագիր» և այլն), -ուր ածանցով, որ կա նաև խեթերենում (համմ. NINDA itur ampur հացի տեսակներ են), -ուզ ‖ -ուճ ածանցով՝ գործառական խանդուզակ ‖ *խանդուճակ, «իրերի կամ փոխ կրակը խառնելու միջոց», որ ամենատարածականն է խեթերենում, մանավանդ գործիքների և ամանեղենի կազմությանը մեջ և այլն[1]։ Հայոց խանդ- (խանձ-) արմատի շատ հին և բազմաձև ու բազմաբովանդակ լինելու կապակցությամբ ևս կատաջարկենք նմանը տեսնել և խեթերենում, ուր այդ արմատով կան շատ բառեր, իրարից տարբեր նշանակությամբ, ինչպես, օրինակ, ḫantezzi «առաջին», (ḫanti «առաջնում»), ḫand- «հատատանել», handatar կամ ḫandandatar «առատաձեռնություն», handallia «համաձայնվել» և այլն։

Իմ կարծիքով վերջին երկուսը կարելի է աղերսել մեր xand- «բորբոքվել, վառվել սիրով, նախանձով» արմատի հետ։ Երբ պատերազմի ժամանակ, դժվար մոմենտին խեթական զորավարը ցուցաբերում է parā handatar կամ parā ḫandant-atar (կրկնավոր է), այդ կարելի է ավելի շուտ հասկանալ «նախանձառություն, рвение, ревность», քան ḫandallia-, որ այնքան հիշեցնում է կազմությամբ մեր խանդաղ ձևը, գործ է ածվել Մուրշիլ II թագավորի մի արձանագրության մեջ, երբ հայացիները (ազդիցիները) կռվի ժամանակ գերադասել են դիշները հարձակվել, ցեղակը zaḫḫiawanzi Ù-UL ḫanda llier «կռվելու ոչ տենչացին» (A. Götze-ն թարգմանում է wagen «համարձակվել» բայով, Ann. d. Murš., էջեր 133, 249)։

27. խառն (ի, ից) «ոչ պարզ՝ բաղադրված, կցած, շաղած», որից խառնել, խառնուրդ, խառնակ, խառնարան «ամանեղեն գինի լցնելու կամ խառնելու» (խառնարան Հեփեստոսի, ըստ քերթողաց,

---

[1] Տե՛ս Հ. Աճառյան, Գավառական բառարան, էջ 98, խանդուզակ (Սիվրի-հիսարում), խանդրուշակ (Սեբաստիայում) «երկար փայտ կամ ձող, որով թաղրին կամ փուռին կրակը կխառնեն»։ Այլ բարբառներում դա կոչվում է անթզոց > անթրոց > աթաթոց։

«Ես նա լերան կրակարանը», խառնելիք «թակոյի, հրաբուխի բերան» (խառնելիք թոց «դևկի երկու կողմը կապած չվաններըը», խառնաղանձ կամ խառնիճաղանջ «խառնիխուռն (ամբոխ)», և այլն։ Հատկապես մեզ հետաքրքրում են վերջին բառերը իրենց -ադանձ (-ադանջ) և -իճադանձ (-ի ճադանջ) մասերով, որ հարում են խեթական լեզվի բառակազմության ձևերին (-izzi = իճ, al կամ all= =աղ, -anza = -անձ կամ -անջ)։ Բայց խեթերենում նույն նշանակության համար բառ չունենք, կա միայն ḫarna- բայը, որից ներկա դերբայ ḫarnan (= ḫarnant, ḫarnanza «խառնանձ») «խմորվել կամ խմորել» ('ferment' ըստ J. Fridrich-ի, ZA, NF. I, 176, տե՛ս Hit. Gl., 44)։ Ունենք նաև բայական գոյական ḫarnammar (սեռ. h. *ḫarnamnas) «խմորվածություն», որից ḫarnamnia «խմորել, դրդել» ('ferment, instigate'? էջ 44)։ Հատկանշելի են մեր բարբառային մի քանի շատ հին կազմություններըը, ինչպես խառնըշտ-ել, որը կազմված է խառնանձ (կամ խառնանջ) խեթական դերբայական ձևից (ḫarnanza) և հաճախակիության ցույց տվող տ մասնիկից (խառնանջ-տ-ել>խառն-ընջ-տ-ել>խառնըշտել, ինչպես լօրանջ-ում ձևից նույն բազմապատկական «տ»-ով ունենք բարբառային արըշտատ-ալ, օրըշտալ և այլն), որին ավելանում է «կ», «տտ», «որ» (խառնըշտկել, խառնըշտատել, խառնըշտորել)։ Աշտարակում լսել եմ նաև խառնաղըշտորել, որը առաջացել է *խառնադանճ-ա-որ-ել ձևից և համապատասխան է գրաբարի «խառնադանճ»-ին, ալ (= խեթ. -al ‖ -all) և -անճ (= խեթ. -anza) մասնիկներով։ Կա և խառնուխառնիճ (Արար. բարբառ) և խառնախռնդոր» իմաստով, որոնք կազմված են «խառնադատաճ»-ից և ունեն խառն + աղ + ատ + իճ, ինչպես կա խանդ-աղ-ատ և նման «խեթերենում»։ Գրաբարի խառն-իճ-աղ-անջ ունի բազադրությունը, միայն -իճ մասնիկը ընկած է արմատից հետո, հակառակ գավառական խառն-աղ-ատ-իճ կազմության։ Ալաշկերտ գավառական -ատ մասնիկը համեմատ է գրաբարի -անճ (-անջ) մասնիկին, թեպետ գրաբարում ևս կա -ատ (-վոր, -ունա), -կրող իմաստով, ինչպես խանդաղատ, խռնճատ, աղքատ, կնատ („баба-ник“) և այլն (= վրաց -adi, bel-adi «առաջնորդ», mçvadi «խրոխտ» և այլն, ռուսաց -ат-։ Крылатый, усатый, богатый և այլն)։ Չպիտի շփոթել այդ -ատ մասնիկը բացատական -ատ մասնիկի հետ (գլխատ, կռնատ, պռատ և այլն), որը √հատ -ից է։

28. Խել-ք «գլխի ուղեղը, միտք, բանականություն, հանճար,

հնարք, համարյչի գլուխը, նավի զնկի կողմը, նավի նստարանները, տան կտուրը» (Արմ. բ., III, 453)։ Հավանորեն նախնական գաղափարն է եղել «գլուխ» (համեմատել՝ կամարյչի գլուխ, տան կտուրը—գլուխը, նավի զնկը—գլուխը) և պիտի ազգակից համարել խեթ. ḫal-anta «գլուխ» բառի հետ, որը Հրոզնին առաջարկում է կապակցել հայոց խալ-ամ «կենդանու չոր գլուխ» բառի հետ։ Երեմիա Մեղրեցու բառարանում (էջ 140) բերած խեղակաճ «հատատուն կամ գլխավոր» բառը նույնպես պիտի համարել xel- գլուխ բառից ածանցված։ Խեթերենի ḫal-(anta) արմատի դիմաց սպասելի էր հայոց խալ- կամ խաղ- («ա» ձայնավորով), եթե իհարկե հայերը անմիջապես փոխ առած լինեին։ Հայատառում xela- «գլուխ» բնիկ բառ էր։ Բայց այս չի նշանակում, որ հայերը այլ բառեր չունեին, ինչպես «գլուխ», որը համընդհանուր է բոլոր հայերի մեջ, չհասկանալով դեռ այլ առումներով գործածվող «խոխ» (Մատենում), «կոտ» (Արաբ. բարբ.) և այլ բառերի մասին, որոնք արհամարհական իմաստ ունեն։ Խեթերենում կար նաև մի երկրորդ բառ «գլուխ» իմաստով, որ հնչվում է harš(š)an (Hr. G., 45, 129 „head; person, self, chief")։

29. Խիղճ «խղճմտանք, խղճի ցավ», որ գրվում է նաև խեղճ և խիղծ։ Առանձին նշելի է խիղճ մտաց = խղճմտանք, խղճել «տարակուսալով ետ քաշվել, կարեկցել», խղճամիտ, խեղճ «խղճմտրտանք, սրտի ցավ, թշվառ, ողորմելի, խղճալի», որից խեղճմիտք, խեղճմտութիւն և այլն (տե՛ս Արմ. բ., III, 486)։ Այս խեղճ ձևից են եմ հանում Երեմիայի բառարանում բերված (էջ 140) խեղդ «տրտում», խեղդուն «տրտմություն», որ իրոք պետք է դրվեր խեղդ, խեղդուն «ճ» (š) պալաթալիական վերածումով (դասախրիլացիայով) «տ» պարզականի։ Եթե խեղճ ‖ խիղճ ‖ խիղճ արմատի հին իմաստը ընդունենք «ներքին ձայն» կամ «մտքի ձայն» (խիղճ մտած) կամ առումներում ունենք „голос совести" «խղճի ձայն», այն ժամանակ այդ հայոց xelč (xiłč) ‖ *xelç~xiłç արմատաձևերը կարելի է կապակցել խեթ. ḫalz- բարբառման հետ, որ նշանակում է «գոռալ, ոռնալ, կարդալ, կոչել» ('cry, recit, read, call, summon, invoke', տե՛ս Supll. to a Hitt. Gl., էջ 17, կամ ըստ A. Götze-ի rufen, schreien", Ann. d. Murš., էջ 285)։ Ինչպես տեսնում ենք Գյոտցեի թարգմանություններից այդ խեթ. արմատը կարող է ունենալ և «պարսավել, պախարակել» (schimpfen) իմաստը, որը թերևս ավելի մոտ է՝հայոց խիղճ «խղճի ցավ» գաղափարին։ Ինչ վերաբերում է խեթ. „z" = հայոց «ճ» կամ «ծ» հնչյունահարաբերությանը, ապա

պետք է ընդգծել, որ դա ամենանորմալ փոխհարաբերություն է ոչ միայն խեթա-հայկական, այլ նաև սեմական-հայկական բառահարաբերության մեջ: Իսկ ձայնավորների (խեթ. a = h. e/i) փոխհարաբերության համար համեմատել նաև խեթ. ḫal-anta = հ. խոր: Հայ բարբառների խնդճ «թշվառ» և խժմտանք «խիղճ» բառերը ոչ միայն իմաստական նոր տարբերացում են առացել, այլ-ինքն՝ խղճմտանք բարդ բառը գոնել է նախկին խիղճ (совесть) բառի տեղը, այլև իրենց սկզբնական խ ‖ հ հնչյունների տարբերացում, որը մի կողմից բացատրվում է խնդճ բառի խ և ղ հնչյունների տարանմանությամբ (դիսիմիլյացիայով), ինչպես ունենք խաղ>հաղ, խաղող>հաղող (>հավող), խարբուխ>հարբուխ, խեղդել>հեղդել և այլն, այլև խղճմտանք բառի այդ տարանմանությանը չենթարկվելով, երբ նրա «ղ» հնչյունը արդեն դուրս էր ընկել, ապա թե ոչ կունենայինք հղճմտանք: Դրաբարի խիղծ («խիղճ») բառը դեռ հնում ունեցել է խիծ ձևը, «ղ» բաղաձայնի անկումով:

30. Խնայ-ում «պահել, մեհեքանալ, պատիժը ներել, զգուշանալ, խնամքով պահելը», խնալ առնում «խնայելը», խնալեում (մի խընալեար), խնալվուտ «ժլատ», խնալուքիւն, անխնալ և այլն: Այս xna- արմատից է և խնա-մ «խնամք» (попечение), ինչպես զգա-մ (ան-զգամ) գոյականը զգա-լ բայից (այս դիտել էր դեռ Ջ. Գատկանլանը): Բայց ավելի հին բայ է անխալ-եմ կամ անխալեամ նույն նշանակությամբ: Այս բոլորը եզրակացնել է տալիս, որ նախնական ձևը նոել է anxa(i)- «պահել, խնամք տանել», հետո նաև՝ խնայել (беречь), ներել (щадить) և նման իմաստներով: Նախնական «պահել, հոգ տանել» նշանակությունը ավելի առաջ թագել է «երկյուղածել, պատկառել» իմքոնումից, ինչպես տեսնում ենք հայոց խեթալ «հոգ տանել, վախենալ, մտատանջվել» (մի խեթար եմ՝ վախենար, հոգ մի տանիր», որից մըխեթալ — մխեթարել) և մանավանդ ազգակից խեթերեն naḫ(ḫ)- բայի մեջ, որ նշանակում է «վախենալ, երկյուղածել, պաշտել» ('fear, respect, revere', Hit. Gl., 105): Խեթերեն բայի այս իմաստը առաջ է. հաստատված է Ֆրիդրիխի, Գյոտցեի, Զոմմերի և այլոց կողմից. կա naḫmi (ներկա 1 դ. եզ.) naḫta (անց. 3 դ. եզ.), nāḫun կամ naḫḫun (անց. 1 դ. եզ.) naḫḫan „fear, reverence" «գոյականը, ածանցյալ բայարներ» naḫḫe-šk-, naḫšarta- և այլն: Այս խեթա-հայկական ǥah- ‖ anxa- «երկյուղ տածել (մեկի համար), խնամել» բայերին պետք է միացնել և վրացական ნახვა nax-va «տեսնել, այցելել» կամ «պահպանել» (хранить, беречь, տե՛ս

Чуб. Рус.-Груз. сл. *1887, էջեր 974—975)։ Հայոց* anxa(i) *ձևը իր բաղաձայնների (*nx*) հաջորդականությամբ հնագույնն է քան* xna(i) *ձևը, բայց անհասկանալի է իր սկզբնական ձայնավորով որը կամ բառարդի* „a"-*ն է (*naxa(i)-*), առաջ ընկած, կամ առանձին նոր նախադիր ձայնավոր է։ Ներքա-հայկական-վրացական* nax- *արմատի իմաստական շրջումներն են → վախենալ → երկյուղածել → պաշտել (խնկերկնում) → հոգ (խնամք) տածել → պահպանել, խնայել, այցելել, տեսնել (վրացերենում), և կամ հոգ (խնամք) տածել > խնայել, խնայողություն անել (экономить) հայերենում։*

31. Խողխողել *«մորթել, փղոտել, չարաչար սպանել» կըրկնավոր բայը միանգամայն համապատասխանում է իր* хоł- *արմատով խեթ.* ḫullanzatar *«ջախջախում»* ('battle' or 'defeat' Sommer, Die.heth. akkad Bilingue, 65 fn. 5), ḫ*ullanzaiš կամ hullanzan (հայց. հ.) նույն իմաստով,* hullā- *(որից* ḫullai *3 դ. եզ. ներկա,* ḫulliš *անց. 3 դ. եզ.* ḫullumen *1 դ. հոգն. ներկ.) «հարվածել, ոչնչացնել»* ('smite, destroy, annul', Hit. Gl., 51), ḫulle- ‖ hulla- (hūllazzi, hullit, hullir.)-id., ḫ*alliške/a-* (id.), ḫ*allia-* (id.), ḫulḫulia- *կամ* ḫ*alḫalie- «կռվել»* ('fight'), *որը ավելի ճիշտ պիտի նշանակեր «խողխողել»։ Հայերենում կա և հազվագյուտ հոդհողել գրությունը, որը հարկավ նոր հնչյունափոխությամբ (տարանմանությամբ) է ձևացել միջին դարերում (XI դարից հետո, երբ հին ł դարձել է γ)։*

32. Խոռ *«ծակ, փոս, ծերպ, պարապի վրա բացված խորամ «պակասավոր, թերի» (առաջնաշարքում մի կամ մի քանի առած ընկած), «ծորակ, փոս» (ըստ Հ. Տաշչյանի ՀԱ 1926, 73 «կիրճ, կապան»), որ տեսնում ենք Առ. Օրբելյանի մոտ՝ Խոռել «պատի վրա ծակ բանալ՝ խորամ բանալ», «մարմնի վրա վերք, փոս բանալ», «հանցավորին ի պատիժ՝ մարմինը խեղել»։ Խոռոչ (խոռոջ) «փոս, ծակ» (дупло)։ Անխոռ «անեղծ, ամբողջական»։ Խոռնոբիլ «մարմինը որևէ հարվածով մնասել, խեղել» կամ ըստ Հին Հայկազյան բառարանի «սպանել, կտրատել, խողխողել» (տե՛ս Աբեմ. բառ., III, 586—588)։ Բայց շատ ճիշտ նշանակություններ են պահել մեր բարբառները, ինչպես «խոռ «ամբողջությունից մի կտոր կտրած հանած» (Մուշ), «պատի մեջ քանդված, անցնելու համար շինված բացվածք» (Երևան, Աբար. բարբ.), «ձեռ, ձևական եղած» (Գոլիս, Անթաստիա)» և այլն։ Խոռատ «կիսատ կամ մեկ կողմը կտրած» (Խոտրջուր, Մուշ), խոռել «պատի մեկ մասը քանդել, փլցնել» (Ախալք., Երև.), ամբողջից մի մասը կտրել հանելով՝ եղծել, ձևա-*

հան անել» (Ալ., Աբբ., Ալաշկ., Նոր-Նախ. Պոլ., Սեբ.), Խոռվել (Երև.) «փչանալ, վնասվել» խոռուկ (Բուլանըխ) «բերանը կոտրած (աման)» և այլն։ Հ. Աճառյանը բերելով իր Արմ. բ.-ում այս հարցաստ նկութը, հակված էր դրանց բոլորի մեջ ընդունել նախնական «ծակ, փոս» նշանակությունը և համարել հայոց խոռ բառը սեմական, նկատի ունենալով արմ. xōrā «ծակ», ասոր. xurā «ծակ», ասասեր. ḫurru «ծակ, խոռոչ», եբր. xōr, xūr «ծակ» և այլն։ Ես էլ իմ «Ասասեր-բաբելական բառեր հայերենում» դրքույկի մեջ հայոց խոռ բառը իր «ոչ բ) բաղաձայնի կապակցությամբ համարել եմ փոխառյալ ասասեր-բաբելական (ակկադական) լեզվից։ Բայց անշուշտ այս բոլորը սխալ ենթադրություններ են։ Նախ խոռ-խռոռել բառը, թողած ածանցյալ հարաստ ձևերը, չափազանց տարածված է եղել հնում, կարելի է ասել համահավասարական է։ Երկրորդ, բուն իմաստն էր ոչ թե «ծակ, փոս» այլ «քանդված-բացված» (պատի մեջ, ժայռի վրա, լեռան վրա, առաջապարքում, ամանի մեջ և այլն), այն որ առանները ասում են „брешь", իսկ մարդու վերաբերմամբ «խեղված» (травма)։ Եվ, վերջապես երրորդ առարկությունը իմ և Աճառյանի առաջարանության դեմ, որպես սեմական փոխառություն («ծակ. փոս» նշանակությամբ), այդ այն է, որ խեթերենում կա ավելի մոտ բառ հայերենին թե հնչմամբ և թե՛ նշանակությամբ։ E. Sturtevant-ի բառարանում կարդում ենք խեթ. ḫarra- (ներկա. 3 դ., սգ. ḫarrai, 3 դ., հոգն. ḫarranzi դերբ. ḫarranza) «ջարդել, կոտրել, փոշիացնել. քանդել, վնասել» ('break, pulverise, ruin, make harmful', էջ 45). դերբայական կարճ ḫarran (ḫar-ra-an) ձևը հաճախ կարդում ենք այն բնագրերի մեջում, երբ դրանց պատճենահանման (արտագրման) ժամանակ ցույց է տրվում, որ բնագիրը նգծված է (ibid)։ Հայոց խոռ (խոռել) բառի «ոչ ձայնավորը վկայում է, որ խեթերենում ḫar-(ra) բևեռանշանը այս դեպքում ևս պետք է կարդալ ḫuz, ḫar-ri այժմ կարդացվում է ḫur-ri, paḫ-ḫar այժմ paḫ-ḫur «վրակ», ḫar-da – այժմ ḫurda – «տնեցված» և այլն։ Դեռ որոշ չէ թե ինչպես կարդալ ḫar-nau—թե ḫurnau «ծննդյան սթոռ»[1], ḫarpaštan—թե ḫurpaštan «տերևած» և այլն. իսկ ḫurra-, որ առաջարկում եմ կարդալ ḫarra-ի փոխարեն,

---

[1] Թե ընդունենք, որ խեթ. ḫurnāu- (ըստ Զիմմերի և Էհելոլֆի „Gebärgestell?) իրոք ասեն անկյունում սարքած մի առանձին վրան (палатка) էր, այն ժամանակ ևս կկապակցեի հայոց խորան «վրան, առաջավոր բառի հետ»

հնչվել է ḫorra-.. (ինչպես ḫur-ri = ḫor-ri «խոռխոռ» = աստվածաշնչի khōr «քորացիք», ասինքն՝ խորրիտ, տուրարացի)։ Իմ այս ստուգաբանությամբ հայոց խոռ բառը ոչ թե մի բնական փոսի, ծակի կամ խոռոչի անուն է, գոյական է, այլ բայի (քանդել-բացել, եղծել...) գործողության հետևանք և փոխաստիճան չէ խիթերենից, այլ բնիկ անդրկան (միջբրասիական) բառ։

33. ḫnpp «անհարազատ» կամ ապօրինի (որդի) «խարդախ, կեղծ», «կոշտ, անհարթ», որից խառնախորթ, տարախորթ, խորթանալ։ Որթուբորթ (կամ խորդուբորդ «առատաբար, անհարթ վայրեր») և այլն։ Համեմատել խեթ. ḫurtāiš (հայց. հ. ḫurtain) «անեծք» ('curse', Hit. Gl., 56), բայց KBo II Vs Kol. II կարդում ենք «այս գոհատեղիները idalawēš ḫurdāēš... lē uwanzi «չար (և) խարդախ (?)... չեն գալու», որից երևում է որ ḫurda- ածական է („diese bösen, schlechten(?) Opfernden., mögen nicht kommen" ըստ Hrozny-ի, տե՛ս Bogh.-St., III, էջ 72)։

34. ḫորխ. «օձի շապիկ, խոզի մորթ, կճեպ (պոպի, սերմի)», որոնցից խորխանալ «կաշի դառնալ», խորխաւոր «փետնկավոր» (պատուղ, սերմ)։ Բարբառներում նույնպես գոյություն ունի այս բառը -խօրխ (Դարաբաղ) «ծառի կեղև, ծաղկախոի թևիանք, հարբուխից հետո քթի վրա ձևացած թևիը, շերամի բոժոժի անպետք մասմզուքը», խուրխ (Ագուլիս) «օձի շապիկ, խնրխ (Անբատլիս) «օձի շապիկ», խրխի (Երևան) «օձի շապիկ»։ Բայց այս բառը կա և չհնչեներեններում՝ խորխո «թաղիշ», կյուրինեներենում՝ xūr «կաշի, մորթ», քրդերենում՝ xūr «մորթ, կաշի», որոնք հայերենի հետ միասին Հ. Աճառյանին ենթադրել են տալիս, որ դրանց բոլորի ազբյուրը խալդերեն (ուրարտերեն) կամ մի ուրիշ հին լեզու է (Արմ. բ., III, 621–622)։ Եթե ծողնենք քրդերեն, կյուրինեներեն xur կամ xūr ձևերը, որոնց վերջում չկա «հ» (թևերս ընկել է?), ապա xorx հայկական (և չհնչեական?) բառը «մորթի» իմաստով ևս կհամեմատվի խեթ. ḫaḫḫri բառի հետ, որ մարմնի որոշ մասն է նշանակում և ունի սկզբում UZU որոշիչը՝ մարմնի մասերի վերաբերյալ (միս, արյուն, անդամը, ձևորը և այլն)։ Կաշվի կամ կաշվեղենի համար կար այլ որոշիչ kuš։ Ներթագիտ Ferd. Sommer ը Աթթուշիլ I-ինի խեթ-ակկադական երկլեզվյան սրձանագրության հրատարակության մեջ առաջարկում է ḫaḫḫri բառը թարգմանել «թոքերը» ('lungs'??, տե՛ս Suppl. to H. Gl., էջ 17)։

35. ḫուղ «հյուղ, խրճիթ, խեղճ անակ», որ մնացել է նաև մեր բարբառներում, ինչպես -խուղ (խարը) «խրճիթ» (Մատրջար)

«քարաշեն փոքր շինք, որի մեջ մածուն և այլ տնական կաթնեղեններ են պատրաստում» (Սասուն) խոտուն —նույն իմաստով, (Բաղեշ) «գոմանոցում շինված խրճիթ» (որից խուղովոր), (Հաճին) «այլինևրում շինված տնակ»։ Թրքախոս հայերը Աղանալում նույնպես պահել են այդ խուղ «հյուղ» բառը (տե՛ս Աբմ. բառ., III, 646—648)։ Ըստ Հ. Աճառյանի հայկաբանից են վերցված վրաց xula, xuxula *«հյուղ, խրճիթ, փոքրիկ խանութ», Աղանալի թուրքերի և թրքախոս հույների* xuɣ *«հյուղ», իսկ Մատրշուրի խուլազ և Ախալքալաքի խիւլակ «հյուղակ, տնակ, հովվի խրճիթ» ձևերը նոր փոխառություններ են։*

Հայոց խուղ և նրա երկվորյակ հիւղ բառը, վերցված նաև ցիւ «տան ծածկը» և քիւ «տան կամ քարանձավի վերի դուրս ցցված մասը, կորնիզ», որոշ մոլի հնդեվրոպաբաններ հանում են «նախալեզվից squ- *կամ* qu- *«ծածկել» արմատից, որի վրա ավելացնում են «ժառանգ լեզուներից մեջ այլևայլ աճականներ՝ „n“, „l“, „t“, „r“, „m“ և առաջ են գալիս, օրինակ, տանս.* skunāti, skāuti *«ծածկում է», հուն.* κεύθω *«ծածկում եմ, պահում եմ», ιστίς «արկղիկ», κύτος «պատյան, մորթ, կաշի», σκῦλος «մորթ, կեղև, կճեպ», σκῦρος «քարի գլխից», լատ.* cutis *«մորթ», լիտ.* skurá *«կաշի», հին բարձր գերմ.* skora *«մորթ», հūt «կաշի», scūr «քուն», hūs «տուն», hutta «հյուղակ», անգլոսաքս.* scūa *«ստվեր, մութ», hyð «կաշի, մորթ», sky «երկինք» և այլն (տե՛ս Աբմ. բառ., էջեր 646—647)։*

Հիւղ «պարսիկ-պահլավական խրճիթ, խուղ գործ է ածվել նաև հիդ. հուղ և հեղ ձևերով։ Դավառականներից ունենք միայն Զեյթունում հուղ «հողաշեն խրճիթ», իսկ ըստ Հ. Աճառյանի հայկաբանից է վերցված քրդերեն holik *«հյուղակ, խրճիթ», ինչպես և քրդ. և թուրքմեն* huɣ *«ճիլիրով շինված վրան կամ եղեգով ու խոխլներով տնակ» (Աբմ. բ., IV, 319)։ Ըստ իս հնագույն ժամանակ եղել են երկու ձևով, մեկը* xula-, *որից խուղ և բաղեշցոց, խարբերդցոց, Կիլիկիայի և Մատրշուր-Կարինի (Ախալքալաք) խուղ-ը, որը անցել է և վրաց, ունենալով տարմանումբյամբ և հիւղ տեսակը, իսկ մյուս ձևն է հիդ կամ հեղ։ Համեմատել խեթ.* ḫēla *կամ* ḫēla-, *որն ունի սկզբում դրված «տուն» որոշիչը (դետերմինատիվը) և նշանակում է «տաճարի դավիթը կամ նախատանը», (ըստ Ֆրիդրիխի և Զոմմերի, տե՛ս* Hit. Gl. 49 'forecourt' or 'antechamber') *կա «տուն» որոշիչով նաև ածանցված* ḫilammar *(տրակ. հոլ.* hilamni, hilamna) *«դավիթ կամ նախատանյակ տա-*

ճարի արտաքին (հլքի) գոտի մոտ», hilamnanza «բոլոր գավիթները (հավաքական հոգնակի է)։ Անշուշտ հայոց հեղինակ, հեղեցիկ, հեղեւեցիկ, հիւղանակ, հիւղնճակ տարբեր գրութեամբ ձևերը, առաջացած հեղ- կամ հիւղ- արմատից և տառաջնորդ, գլխավոր, վարիչ» նշանակութեամբ, սկզբում նշանակել են. «տաճարի գավիթում գտնվողը», այսինքն՝ ուխտավորների առաջինը, առաջնորդը կամ գլխավորը։ Ակնհայտ է հեղինական տառաջնորդական և հեղինաւորական ընտանեանունների, կանխամ որոշված, երկուսն էլ հեղին- ձևից, առացված -ին մասնիկով հեղ- (խեթ. hel- ‖ ḫil-) արմատից, ինչպես ունենք ագի արմատից ագախին, լոյս արմատից լուսին և այլն։ Բնական հեղին ա-ւոր կամ հեղին ակ ավելի շուտ տար հեղընաւոր և հեղընակ? Խուղ (>հիւղ) և հիղ ‖ հեղ բառաձևերի տարբերութիւնը հավանորեն բարբառային է։ Ենթադրել կարելի է, որ խուղ (xul) ձևը բալասներեն է, որովհետև գործածվում է այդ ցեղերի տարածման վայրերում — Մարբերդ (բալահովիտ), Բալու (տե՛ս «Բալու» Հ. Սարգսյան, Կահիրե, 1932, էջ 432)։ Բաղեշ և այս տեղերից գաղթած Կիլիկիայի հայերի մոտ (Զևիթ. Հաճին)։ Մտարբերի բարբառը, ինչպես և Ախալքալաքը և վրացիք փոխ են առել այն բալայիններից, որոնք մասամբ գնացել են Քութ և Արաքսի հովիտներում։ Հիղ կամ հեղ (hil- ‖ hel-) ձևը անցել է հայացիների միջոցով. և շատ հնատարբրբական լեզվաբանարհագրական արժեք է, որ Ծարոնում, Բաղրեանդում, Վասպուրականում և Այրարատում այդ բառերը բացակայում են։

36. Խումբ «հավաքված բազմութիւն» (մարդոց, մանավանդ զինվորների), խմբել «ժողովել հավաքել», «առնախմբութիւն առնել», խումբ գործել «զորք հավաքել», աշխարհախումբ, միախումբ, մենախումբ և այլն։ Ազգակից են համարում խեթ. ḫūm-anza (կամ ḫum-an) բառի հետ, որ նշանակում է «ամբողջ, ողջ, ամենայն» ('whole, all, every') ḫūm-andaz «ամբողջովին» ('completely', Hit. Gl., էջ 52)։ Վերջին -anza (-anda) մասնիկը թերևս հավաքական հոգնակի է, ինչպես hilamnanza տե՛ս վերը, parnanza «բոլոր տները» (parna «տուն»), nepišanza «երկինքները» (nepiš- «երկինք») և այլն, որը համարվում է լուվիականն ծագումով էլ չեմ ասում, որ խեթերենում կա և զուտ ետդական -anza (-anda), ինչպես ḫalanta «գլուխ», wittanza «տարի», udneanza «երկիր», gimmanda «ձմեռ», ḫameššanza «գարուն» և այլն։ Հայոց mb հնչյունակոմպլեքսը խումբ բառի մեջ ծագել է պարզ m-ից, որ հատկապես բառասկզբում ժխեղանալով (mm), երկիմեղվում է և դառ-

նում mb։ Այդպես է դամբ «գանգ», «ուխտանդ» = պարս. dām «որոշելի, ականատես, շամբ «անուանդ» = վրաց. ჭama «ուսուց», դամբան և դամբարան („могила") բառի *damb-* մասը =ասոր. tamma «ոսկոր» (բստ Մառի), դամբարան բառացի նշանակում է «ոսկրատեղ», «ոսկրարան», որի իմաստական համարժեքը ևս տեսնում եմ խեթական ḫaštiaš per «ոսկրատուն, mausoleum" (Hit. Gl., 47)։ Այդպես են նաև կաղամբ = պարսկ. kalam, կաղամբի «ճնճղի տեսակ» = ֆրանս. calamite (Արմ. բ., 891), բամբ = ժողովրդական *bamb-ը*, բումբ, = լատ. tumulus, բայց հուն. τυμβος «գերեզմանաթումբ», սալամբ („серая куропатка, «չիլ կաքավ) = ժողովրդական սալամ. ծծումբ» = վրաց. cumcuma, cumcuba, ճամաթիմ = ժողովրդական համբարիլ, համբըրիլ թեպետ մասամբ գործում է m-r (-մար-) բաղաձայնների ազդեցությունը, ինչպես՝ *թմրիլ > թմբրիլ, ումր > ումբր* և այլն։

37. Մուխ «մուխ, գոլորշի, շոգի», որից ծխել, ծխախառն, ծխան, ծխոտել, ծխանիչիք «խոհանոց, կնդրուկ» և այլն։ Գործ է ածվում նաև մեր բոլոր բարբառներում (Արմ. բ., III, *816—818*)։ Հ. Աճառյանը այս ծուխ բառը համարում է կովկասյան լեզուներից փոխառյալ, ի նկատի ունենալով վրաց Მუხვა (ծուխվա) «ցաւ, արտաքինություն», მწუხრი (մծուխրի) «աղջամուղջ, երեկո», მწუხრება «երեկոյան մութը», Გუხელის вчера «երէկ», նման հայոց երեկ և երէկ, ռուսաց вечер և вчера, և բուն հայերենն է համարում մուխ, որպես հնդեվրոպական բառ, ազգակից հուն. σμύχω «քիչ և անրոց կրակով եփել կամ պլշել», հին իռլան. múch «ծուխ», կիմր. mwg «ծուխ», կորն. mok «ծուխ», անգլոս. smoca և անգլ. smoko «ծուխ», գերմաներ. schmauch «թանձր ծուխ», թերևս ռուսաց смуглый և այլն (Արմ. բ., IV, *1140*)։ Իմ կարծիքով՝ տեղի է ունեցել միանգամայն այլ պատմական երևույթ։ Նախ, հայոց ծուխ «մուխ, գոլորշի» բուն իմաստի հետևում է վրաց նման բառից, «մութ, երեկո» իմաստով և ուրիշ փոխառություն չէ կովկասյան լեզուներից։ Մեր «ծուխ»-ը ավելի շուտ կապվում է փոքրասիական լեզուների հետ, մասնավորապես խեթ. tuḫḫuiš, որ A. Götze-ն թարգմանում է «ծուխ, գոլորշի» ('smoke, vapor'? Hit. Gl., 163), որից tuḫḫuiššar «բուրվառ» ('censer'?), որը ծառայել է կրոնական ծեսերում։ Խեթական tuḫ ḫ)- արմատի դիմաց հայերենում սպասելի էր «ծուխ» կամ առնվազն «տուխ», բայց տեղի է ունեցել դրանց թ (տ) բաղաձայնի փոխանցումը «ծ»-ի, ինչպես հենց հայերենում կա *թևքիլ > ծևքիլ, թորել > ծորել, խալթել > խալծել...*, կամ տատա-

նիմ (տան-ել արմատից) > ծածանիմ, Տրդատ > Տրդատ (ժողովրդական լեզվում), տո > ծո և այլն, թեպետ լինում է և հակառակը: Ինչ վերաբերում մեր մուխ բառին «ծուխ» (дым) նշանակությամբ, ապա այդ ևս համաբում եմ ասպես ասած բառային տարամանություն (лексическая диссимиляция) հնարանք, երբ առնդհում է կրկնությամբ ծուխ-ծուխ, հետո՝ ծուխ-մուխ և վերջապես նոր ձևափոխված կոմպոնենտը անջատվում է այդ զուգորդությունից և դառնում է առանձին բառ: Իհարկե երկու բառերը, ծուխ և մուխ, միևնույն նշանակությամբ չեն կարող ևնալ միևնույն լեզվում (բարբառում), կամ դրանք պիտի երկու տարբեր առումներ առանան կամ մեկը պիտի դադարի գործածվելուց: Համեմատել -մանձրիլ «ալրել, մրկել», առնդհված «խանձրել» հին ձևի տարբերակումից. մեսո «պինդ, ամուր, հաստատուն», մեսիմ «պինդ հաստատվել. ամրանալ», գոյացած հաստատնատ «հաստատ» կրկնակիից հետո «հաստատ» բառից, ինչպես որ կա մատո, մազդ «հաստատ» նույն «հաստատ» ձևից, ՄԽԶ «ճմռել, թրել, շաղխել, տրորել», ստացված նույն ձևով ճնշել բայից, որ հնում նշանակել է «ճմռել, տրորել» (=ակկադ. sanaku, վրաց спеха „давить"), մշնիլ (14-րդ դարի բառ) «աչքը անկած նայել», ստացված պշնալ բայից և այլն: Թողնում եմ բառային տարամանությամբ նոր բառերի առաջացման մյուս ձևերը, որոնք մանավանդ շատ հարուստ են մեր բարբառներում:

38. կանգ-ուն «ոտքի վրա կանգնած», քայլելուց կանգ առած», որը իր կանգ- արմատով գոյություն ունի մեր բոլոր բարբառներում: Աբոտաքինով և մասամբ իմաստով համընկնում է խեթ. kank- կամ gank- արմատին, որը նշանակում է «կախ ընկնել, կախվել» ('hang' ըստ F. Sommer-ի տե՛ս Hit. Gl., 69), ունենալով gankt, gangal «կախված է», kankandu «մեղ կախվեն», kanganu- «կախել» ('cause to hang'): Ենթադրյան այդ gank- ‖ kank- արմատը ամբողջովին մտանում է հին բարձր գերմ. hangen, գերմ. hängen, անգլ. hang ձևերին: Նույն իմաստով, բայց միջնադարյան լեզուներում այդ վիճակությունը չկա, իսկ «նախալեզվից» հանելն էլ (k'ang-) անիմաստ է: Հայոց կանգ- արմատի բուն նշանակությունն է «ընդունել ուղղահայաց դրություն գետնից», իսկ խեթերենի gank- կամ kank- արմատի իմաստն է «ընդունել ուղղահայաց դրություն վերևից (մի օրևէ կետից)»: Թերևս հայոց կախ- արմատը, որ իմաստով ամբողջովին նույնն է խեթերենի բայի հետ, անցել է հայոց լեզվին մի այլ ադբյուրից, գուցե ասիական մի այլ լեզվից, ունենալով սկզբում *kanx- ձևը, որպես զու-

գահնա kank-ին, ինչպես կա Tarku- և Tarḫu- աստվածանունը (հիերոգլիֆ խեթ. Tarḫun-), Kadaḫḫaš (Gadaḫḫaš) և Ḫadaḫḫaš, Ḫataggaš աստվածանունը և այլն (տե՛ս Klein. Forsch., I, 93)։ Այս դեպքում պետք է ընդունել, որ „n" բաղաձայնը ընկել է հայոց kax- „весить, висеть" արմատի մեջ, այնպես ինչպես ունենք խեթ. ḫunḫ(u)- «հեղեղ, ալիք» -ḫunḫuwanaš (սեռ. հոլ.) և ḫuwanhueššar, ḫuwwanḫuešar (սեռ. հ. hunhuešnaš) բառաձևերում, որի հետ կարելի է կապակցել հայոց խոխ- արմատը խոխոմ «թփուտ ձոր, նեղ ծործոր և առուամեջ, հոսանքի անցած տեղը» բառի մեջ, որի -ոմ մասնիկը կա նույնպես խորշոմ բառի մեջ խորշ արմատից (Հ. Աճառյանը «խոխոմ»-ի մեջ ուզում է տեսնել կրկնության խոմ-խոմ և «խոմ»-ը դարձնելով խում, որտեղից և խնում, համարում է «կովկասյան լեզուներից փոխառություն»)։

39. Կանդաղեալ «հաստատյալ», որը գործ է ածվել մեկ անգամ (Իմաստութիւն Սողոմոնի IV, 4). բառարաններըը բերում են նաև կանդաղուն «հաստատուն» ձևը (Արմ. բ., III, 949)։ Ինչպես տեսանում ենք, բայարմատն է կանդ-, որի վրա ավելացել է -աղ ածանցը, ինչպես պատաղիմ, յաղաղիմ, խանդաղատ, կախաղան, կենցաղ և այլն։ Համեմատել խեթ. ḫanda- «հաստատել, որոշել, պատրաստել, ամուսնանալ («կարգվել»), չեզոք «հաստատուն, որոշ լինել» Hit. Gl., 41. տե՛ս նաև Ann. d. Murš., էջ 285» festgestellt werden), ḫantešk- «հաստատել» ('establlish' H. G. 42 ըստ Götze-ի)։ Հալիբենում ավելի շուտ սպասելի էր խանդաղ- «հաստատա(վ)ել», որը և դուցե եղել է, եթե ի նատի առնենք Մանիխալի հալ դավառական խանք (<խանդ) բառը, որ նշանակում է «դիմացկուն» (տե՛ս Հ. Աճառյան, Գավառական բառ., 450)։ Ակկադական փոխառությունների երկու դեպք ունենք, երբ բնիկ հնչյունը անդրադարձել է հալիբենում (կ) բաղաձայնով, ինչպիսիք են ակկ. ḫabtu «դրավում, հափշտակում» և հայոց կապուտ «ավարառություն», ակկ. (և ասորական) ḫassin-u «կացին» =հայոց կացին։ Եթե ելնենք այս ḫanda- =հայոց կանդ- (աղ) համապատասխանությունը տալիս է նման երրորդ օրինակը։

40. Կարի-ք «ցավ, վիշտ» (կա և կարե «պետք, պիտույք»), կարեկից «ցավակից, մխիթարիչ», կարեկցութիւն, կարի առնել «ցավիլ, տրտմիլ» և այլն (Արմ. բ., III, 1049)։ Համեմատել խեթ. kāri tia- «բավարարել ընդառաջել» ('comply, yield', H. Gl., 7), karta- (kartaḫḫat, անց., 1 դ., եզ.) նույն իմաստով ('yield, gratify')։ A. Götze-ն թարգմանում է kāri tia- „willfahren" снисхо-

дить, угождать" (Ann. d. M., 292)։ Նիատի ունենալով և նախապես J. Fridrich-ի տված թարգմանությունը (ZA. NF. I, 42)։ Այս խեթական ոճը դործ էր ածվում պատերազմի ժամանակ, երբ թագավորի մոտ էին ուղարկվում որևէ քաղաքի ծեր կանայք կամ անդի իշխանի պատավ մայրը և ընկնելով արշավողի ոտները աղաչում էին քաղաքը չքանդել և չթալանել, օրինակ. Մուրշիլը ասում է. «Եվ որովհետև կանայք իմ ոտքերը ընկան, կարնկցնցի (ka-a-ri ti-ja-nu-un)» և այլն։ Kārī բառը համարվում է տրական հոլովածև, իսկ tila- բայը թարգմանվում է „ступать, заступать, стать" (treten), թնպես նման բայ կա նաև «դնել» իմաստով։

41. Կարիճ «քաջ, արի» դործ է ածվում մեր ալիմյան բարբառներում (Արաբկ., Զեյթ., Մոթս., Մուշ., Բուլանըխ, Վան...), «երիտասարդ» (Ախն., Ամբր., Համշ., Նորնախ., Գոլիս, Ռոմ., Սալչ.) -ում՝ Հ. Աճ. Դավ. բառ., էջ 621 և Ս. Ամատ., Հայոց բառ ու բան (377), ուր բերվում է նաև օրինակ Վարդանի առակներից (ձեռք. 137, ձի. 142) «ոչ ունէր ժառանգ աթոռոյն իւրոյ՝ ոչ կըտրիճ և ոչ աղջիկ»։ Այդ բառը դործ է ածվել նաև Անդիդը Անտիքալ (Թարգ. Սմբատ Դունդասաբլ ֆրանսերենից՝ մինչ 1265 թ.) «երիտասարդ» իմաստով (էջ 51), ինչպես և այդ Սմբատ սպարապետի ձեռքով դրված պատմության մեջ (տե՛ս Շահնազարյան, Տարեգիրք Սմբատյ Սպարապետի, Փարիզ, 1859, էջ 198)։ Այս վկայությունները ևս քաղում եմ Հ. Աճառյանի «Արմ. բառ.»-ից (III, էջ 1356)։ Շատ ուշագրավ է, որ այս կարիճ բառը գրաբարի հին բնագրերում չի գործածվել, այլ միայն XIII դարից սկսած և այժմյան բարբառներում։ Բայց և այնպես այս բառը ինձ թվում է շատ հին և «քաջ, արի» սկզբնական նշանակությամբ կարելի է կապակցել խեթ. kutruš (հոգն. kutrueš, հայց. kutrūš) «վկա» բառի հետ։ Կան և բայեր kutruwē- «վկայներ բերել» և kutruwahh- «մեկին վկա դարձնել», kutruwatar (սր. հ. kutruwanni) «վկայություն» (տե՛ս Hit. Gl., 85—86)։ Խեթական այս բառերը դործ են ածվել, օրինակ, օրենսդրքում, երբ դողության և այլ դեպքերում պատասխանում պետք էր վկա ցույց տալ, և ինչպես հայոց բառն է իր իմաստով մեզ ասում, այդ վկայությունը կապված էր սիսկի և անվախության հետ, ինչպես հետագայում այլ սոցիալական-կրոնական պայմաններում դավանանքի հավատամուքը՝ վկայումը՝ սիրող Քրիստոսի մեռնելության և այդ պատճառով տուժելը (չարչարվելը, դատապարտվելը) ստեղծեց վկա > ատապյալ, իմաստաշրջումը. համեմատել հայոց վկայ > նահատակ, հունարեն μάρτυς, ասոր.

sahdā, լատ. testis, վրաց. moçame (մոծամե), արաբ. šahīd — *թոլորն էլ նրիու իմաստով «վկա», բայց նաև «նահատակ», мученик» (տե՛ս Աբմ. բ., VI, 689)։ Հայոց կարիճ բառը առացվել է kutr-iç ձևից, որի -իճ (-iç) մասնիկը և փոքրասիական (խեթական) լեզուներում, իսկ հայերենում համեմատել նաև դահիճ, կաթիճ, բռիճ, (բռէճ), լուիճ, ուռիճ, կաւիճ և այլն։ Իսկ այն որ «կարիճ» և «երիտասարդ» հասկացութիւնները միախառնուում են շատ հասկանալի պատճառով, ապա այդ նուէրը տեսնում ենք էլի նաթալային հայ բարբառներում (Մնուս, Մուշ, Սասուն) խորթ բառի նկատմամբ, որ նշանակում է «երիտասարդ» (Մնուս, Մուշ) և «կարիճ, քաշ» (Սասունում), ինչպես կարդում ենք Հ. Աճառյանի «Դիալ. բառ.»-ում (էջ 486), ինչիսա պետք է ավելացնեմ, որ այդ բառը կա և քրդերենում «երիտասարդ»-ի իմաստով։ Թերևս դրա աղբյուրն է արաբ. ḫuradī և խուռիտական ḫurati «դինվոր, մարտիկ»։

42. Հաճ-ել «հանել, հաւիշտակել, խլել, բաժին հանել» հայտնի բայը, որ ունի բաղմաթիվ ածանցումներ ու բարդութիւններ և բաղմազան առումներ (հանելուկ «արձակված կինա, հանելուկ, հանք, հանելի «ծծակ», բայց իսկապես «հանողա, հանածոյք, խաչահանուս, կնահան, պատկերահան և այլն), փորձում էին բացատրել հնդեվրոպական ծագումով, ինչպես Meillet, Brugmann և ուրիշները (Աբմ. բ., IV, 105, կապելով սանս. sanōti «շահել, ձեռք բերել, օգտվել, առանալ», հուն. ἄνομαι, ἀνάω «կատարել, լրացնել, ի դլուխ հանել», իբրև նախալեզվային sen կամ sn ձևից։ Բայց, ինչպես տեսնում ենք հայոց հաճ-ել բայը այլ իմաստ ունի (вынуть, ֆր. tirer) և կապ չունի սանսկրիտական կամ հունական բառերի հետ։ Հայոց բառերի դինամիկական ակունքը փոքրասիական լեզուներն են եղած, ի նկատի ունենալով խեթերեն ḫān (ներկա 3-րդ դ., եզ., hāni, անց. դ., եզ. hānun «հանել, թաթավել», (’draw, dip’ H. Gl., 41), ինչպես թարգմանել է A. Götze-ն „Kleinas. Forsch. I, 201 (և ծան.) ḫa-a-ni „schöpft“, դինի հանելու մասին է փոքր ամանով մեծ ամանից. հետո ունենք ջուր հանելու մասին չրհորից, մի քանի անգամ, կա նաև memian ḫa-a-nu-un (KUB VIII 79, Rs. 5) = խոսք հանելի, հետո ḫanišša, որը ամանեղեն է և այլն, և այլն։ E. Sturtevant-ի „dip“ բացատրությունը ավելորդ է, քանի որ կա ոչ միայն դինի, ջուր հանել մի բանով, այլպես ասած «թաթախելով» հանելը, այլև «խոսք հանելը, այնպես որ միանգամայն այդ խո-

բական բառը համընկնում է թե՛ իմաստով և թե՛ ձևով հայոց «հանել» բային:

43. Հաճի կամ հաճ- «տատա» հոր և մոր կողմից: Համարվում է հնդեվրոպական չնդունների ազգակից և կապվում է լատ. anus «պառավ կին», հուն. annis «տատա», հին բարձր գերմ. ana «տատա», ano «պապ», միջին բարձր գերմ. ane, գերմ. Ahn, Ahne, հին պրուս. ane, լիտ. any'ta «հնաոար, տալ», աֆղան. anā «մեծ մայր» (= տատա) բառերի հետ (Արմ. բառ., IV, 101): Ձժխակով նման բառերը նմանութիւնը, որ գոյն շատ դեպքերում և Բոթիսական (Lalwörter) բառեր լինեն, ինչպես n, t, m և այլ բաղաձայնների շուրջը ստեղծված երեխայական բառահորդորումներ (ana, nana..., ata, tata..., ama, mama...), մենք այնուամենայնիվ անմիջական պատմական կապ ենք ուզում տեսնել հայոց han(i) «տատա» և խեթական ḫannaš «նուիրական» և նուիրական բառի հետ ('grandmother', H. Gl., 41): Հայոց բառաձևը, ինչպես և վերևի «հանել» բայի ձևը, ցույց է տալիս, որ խեթ. ḫ սովորաբար հնչվել է h և ոչ x (խ): Այդ են հաստատում նաև ստորև բերված օրինակները:

44. Հասկ «հատած ցորենի ցողունի գլուխը», որ ոմանք ուզում են կապել հայոց հաս-աճիմ բայի հետ (Տերվիշյան, Patrubany) կամ նորվեգիական åksa «հասկ» բառի հետ (Աճառյան), որ սակայն չի ընդունում A. Meillet (Արմ. բառ., IV, 149—150): Խեթերենում կար ḫaššika- անունով բուսակերն SIŠ որոշիչով, որը այլուր բնորոշում է «ծառ, թուփ», բայց H. Ehelolf-ը սովոր ḫaššika- բառի նկատմամբ ընդունում է որպես բույս (die pflanze GIŠ ḫaššika-, Kl. Forsch. I, 141). = կասկածելով նրա կապը ḫašk- «հշտանալ» (խմելով, ուտելով) բայի հետ: Հավանորեն այդ խեթական բառը հնչվելով ḫaška- (ḫašška-) նշանակել է «հասկ». լինելով հալ բառի հետ ազգակից: Ի միջի այլոց մեր բարբառները պահել են ոչ միայն «հասկ» հնչումը, այլ նաև խաշկ (Վան, Մոկս) «հասկ», հաշկ (Սասուն), թևեհատ կա և խաշիկ (Խնուս, Մուշ) կրնկի մի տեսակ է, որը կարող էր կապվել խեթերենի հետ, եթե վերջինիս ḫaššika- իրոք այդպես էլ հնչվել է: Նկատելի է նաև, որ խեթ. š = հայոց s (ս), բայց և š (շ):

45. Հաստ (ֆիզ հոլովում) «ամուր, հաստատուն, ուժով» կամ գոյական հաստ, հաստ-ք «հաստատութիւն, ամրութիւն, անշարժութիւն», որից հաստանալ «ուռճանալ, մեծանալ», հաստել «պընդացնել, ամրացնել, հաստատել, ստեղծել», հաստիչ «ստեղծող», հաս-

տալ «անշրջելուց հաստատուն, հաստատուած, հաստատեալ ‖ *հաստատեալ, հաստատհարատեալ, հաստատ կանգնելի, «հաստատուն կանգնելի», հաստատուր «հաստատիկ, ուժգին» (մանրիկի համար համեմատել զարհուրը, կազդուրը) և այլն։ Հայոց այս hast- արմատը Հնդեւրոպական լեզուներում դտնվող past- «հաստատուն, ամուր» արմատի հետ (հդգ. festi, մդգ. veste, նդգ. fest, հոլա. fast, անգլ. foest, անգլ. fast, որոնք ենթադրում են գոթ. *fastu, տե՛ս Ակմ. բ., IV, 152)։ Ցերվիշյանը հաստ (և հաստատուն) բառը ազգակցում էր սանս. sthā-, ավեստ. stā-, հուն. ἵστημι, լատ. sto, սլավ. стать, հդգ. stam բառերի հետ, բայց այս *sta- «կենալ» արմատին ավելի շուտ հարում է մեր աստանալ բայը, իսկ Հնդեւրոպական աստղաբանութիւնը գերմանական բառերի հետ չունի միջնորդ օղակ ավորող լեզվակիցություններ, ոչ էլ պատմական չէ և կրում է զուտ տեսական բնույթ, այն էլ կապված պրեանհնդեւրոպական նախալեզվական կացութեան հետ։ Ըստ իս հայ hast բառի մասին պատմական ուժեղ վկայութեան կարող է հանդիսանալ միայն խեթական haštai- (սեռ. ḫaštijaš, տրակ. ḫaštai, գործ. ḫaštiit, հոգն. ḫaštae, բառը, որ նշանակում է «ուժ, ամրութեւն», ('strength, force, Hit. Gl. 47), թեպետ նշանակել է նաև «ոսկոր» ('bone'), որից E՛ ḫaštijaš (Ḫatt. IV, 75) = ḫaštijas per «դամբանան» (բառացի «ուն ոսկորի»)։ Արդյոք ḫašta- ‖ hašti- սկզբում մի իմաստ ուներ «ոսկոր», իսկ հետո նաև «ուժ, ամրութեւն», թե երկու տարբեր նույնանուն բառեր են եղել։ Հայոց հաստ բառը իր «ամուր, հաստատուն, ուժգուլ» (կամ «ամրութեւն, ուժ») նշանակութեամբ պատկանում է այդ երկրորդ առումին։ Խեթ. hastai- (այդպես է գրում E. Sturtevant-ը) բառը կապվում է սանսկ. asthi- և ավեստ. asti- «ոսկոր» բառերի հետ[1], որոնց հետ իրրև թե ազգակից է հայոց ոսկր «ոսկոր» բառը։ Եթե իրոք հայոց հաստ (հաստատ) բառը ինդոեւրոպական է և առնչվում է խեթ. hastai- «ոսկր, ուժ, ամրութեւն» բառի հետ, ապա իր սկզբնական «հ» բաղաձայնով (համեմատել նաև հ. հան, հանի և խ. hanna-) կարող է վկայել և հօդուտ հնագույն փոխառութեան, ինչպես որ սովորաբար հորջորջվում է։

---

[1] *Տե՛ս* A. Götze, Die Annalen des Muršilis, Leipzig, 1933, *էջ 241, ծան. 2. Առաջին անգամ* ḫaštai- *բառը «ուժ» (Kraft) իմաստով բացատրել է* J. Fridrich-ը (ZA. NF. I, 175), ibid., *էջ 241։*

46. Հատ *«կտրելը, հատված, կտոր, մեկ հատիկ սերմ, ունգ (ցորենի և այլն)», հատանել «կտրել, կրճատել, վերջացնել, դրամ կտրել», հատու «սուր, կտրուկ», հատիկ «սերմ», հատիճ «կուտ (Ջուղայում խատիճ «ճմերուկի կուտ»), հատոր և այլն*: Կա և դատ *«առանձին, զատված», որը առացվել է գ-հատ միացումից, ինչպես ունենք և յատ (յատանել, յատոց, յատուկ)*: *Այս հատ— արմատը Հյուբշմանը համեմատում էր օսերեն* fadun *«ճնդրել» և բնյուջերեն* pataŋ *«կտրել, ծայրատել, կրճատել» բալտոսլավոների հետ, որոնց սկզբնական ձևն է* pat-, *իսկ հայոց բալը ենթադրում է նախնական* pad-, *և դժվարանում էր նախալեզվական մի ձևի վերածել. թեպետ ըստ Հ. Աճառյանի հնարավոր էր այդ «նախալեզվում» pat- և pad- արմատների փոխհանակումը (տե՛ս Արմ. բառ., IV, 160)*: *Բալց և այնպես և նա «Նորք» (1925, № 5, էջ 393) ամառդրում մատնանշել է «կամխոներեն (= բնևոպիր. խեթերեն)* hatt- *հոմանիշը հայոց հատանիմ բալի համար, որը իհարկե ավելի ևնաչ պատմական է հայոց լեզվի դոյացման համար և որը ևս անկախաբար ավել եմ իմ „Chetto-armeniaca“ (Երևան, 1931—1933 թթ., էջ 38)*: *Խեթերեն* hatta- *(*haddāi, հոգն. hattanzi, *չեզոք՝* hatta *և* hattanta*) արժի «հարվածել, կտրել,* вырезывать, зарезать *ծակել, սպանել»* ('strike, hew, carve; makea hole; slaughter, *տե՛ս* Supplement to a Hit. Gl., *1930, էջ 20)*:

47. *Հենգն կամ հնգն (հնդր. ի հնգնի, ի հնգնոջ) «ծադրը, ճճեճուկ, հակառակություն», հնգնել «ծաղրել», որից հնգնուն, հնգնիչ, հնգնական, հնգնաւոր, իսկ «նա-ի անկումով նան՝ հնդնել, հեգնություն, հեգնական, որոնք ընդունված են գրական նոր լեզվում (Արմ. բ., IV, 251)*: *Համեմատել խեթ.* hinganij-war *«պարս. ուրախ տոնախմբություն»* ('dance, merry-making' (H. Gl., 50), *որ բերում է F. Sommer-ը Պապանիկրի քրմի ծիսարանի հրատարակության մեջ* (Bost. X, *28)*: *Ալիպռևերենում այդ խեթական բառին համապատասխանում է* meluit-u *„танец увеселение“*: *Հայոց «ծաղրել» խմաստն հնում կարող էր առաջանալ «ծիծաղել» գաղափարից, ինչպես* смеяться > осмеять, *տանկահայոց խնդալ «ծաղրել» և խնդալ (դրար.) «բարկանալ» և այլն*:

48. *Հիմակ կամ հիմիկ «այժմ, ինչպես և հիմա և հիմի մեր բարբառային ձևերը, որ չեն արձանագրված մեր հին մատենագրության մեջ և ոչ էլ փոխառյալ, իմ կարծիքով մեծ հնություն ունեն և կարող են կապակցվել խեթ.* imma *ժամանակ ցույց ու-*

վող դերբայի հետ, որ նշանակում է «իրապես, իրոք, այժմ, բացի այդ, այդ բոլորից հետո, ավելի շուտ» (really, actually; besides, after all; rather), *որը ընդունված է խեթագիտների կողմից որպես առում* (Götze, ZA. NF. II *266—298*; J. Fridrich, Vertr. II, 157—160; Sommer, Die Ahhijawā-Urkunden VI, 87 f.; Götze- Pedersen, Muršiliš Sprachlāmung 51, 77—79 *տե՛ս* H. Gl., 57)։ *Խեթերենում կար և* -k(k)u *մասնիկով ածանցված ձևը* immak(k)u, *որը մոտագույն նշանակությունը պիտի ունենար հիշված* imma *դերբայինը, ինչպես ընդգծում է* E. Sturtevant-*ը* (ibid., *58*)։ *Արդյոք այդ* -k(k)u *վերջածանցը չի համարժեքավորվում մեր բարբառային* -կ *մասնիկով (հիմա-կ, հիմիկ), որը մտնում է և* -իկ *կամ իկա ձևով և դերանուններին մեջ (ասիկա. էսիկ... գրաբ. -իկ՝ այսորիկ, այսմիկ..., այսոքիկ և այլն)։ Խեթական* imma *և* immak(k)u *և հիմնական կերպով նշանակել են՝ արդ, արդեն, իրոք*

49. Հուդկաճար *«ավազակ», որից* հուդկաճարու, հուդկաճարություն *(Արմ. բ., IV, 391)։ Հայագետ Հ. Տաշյանը առաջարկում է հուդկ- մասը համարել խեթ.* ḫaluga *«դեսպան, դեսպանություն» բառը, ուրեմն հուդկահար = դեսպանություն զարնող։ Բայց այդ դեպքում կունենայինք հայոց «հադկահար»։ Իմ կարծիքով հայոց այդ* հուդկաճար *բառը իր բարդության այդ հուդկ մասով պետք է կապակցել խեթական* ḫuluganniš *(հայց.* ḫulgannin, *բաց.* ḫuluganaz) *«պատգարակ, носилки» բառի հետ (տե՛ս* H. Gl., 52. 'litter'??), *ուր* -anni *մասնիկ է։ Հայտնի է, որ հին ժամանակ ազնվական կանայք, դուքն և հարուստները, ձիերով լծած պատգարակների վրա էին նստում երկար ճանապարհորդության ժամանակ։ Բայց այժմ* B. Landsberger-*ը այդ խեթական բառին, որը կարող է լինել և նախախեթական, տալիս է ավելի կոնկրետ նշանակություն «ճանապարհասայլ»* (Reisewagen), *թեպետ այդ մասին մանրամասնությունը դեռ չի հրապարակված (տե՛ս նրա հոդվածը՝* „Kommt Ḫattum" „Hettiterland" in den Kültepe-Tafeln vor?", *տպված* Archiv Orientální *ժուռնալում* vol. XVIII, № 1—2, 1950, *էջ 312)։ Խեթական բառը նա գրում է* ḫu-lu-kà-ni, *որ ցույց է տալիս* ḫuluk- *արմատը։ Հայերեն հուդկ— հնչումը առաջացել է հին* húluk- (‖ húlug-) *ձևից, ուր շեշտը առաջին վանկի վրա է եղել, որի հետևանքով երկրորդ վանկի* u *(ու) ձայնավորը ընկել է։ Թերևս բառի այդ հնչումը* (húluk) *եղել է բուն խեթերենում։*

50. Հպիտ *«ծաղրածու, միմոս»* (ըստ Գ. Փեշտմալճյանի, *Բառգիրք հայկազյան լեզվի, Պոլիս, 1841), որ և հոպիտ «միմոս,*

խնդկատակ, խննջ, մեղկ», որոնցից հատիլ «պաճուճվիլ, զարդարվիլ, միմոսություններ անել» (ըստ Առձ. բ.-ի հատիմ «հագվիլ, զբաղվիլ, շփանալ, խնդնինալ), հատանք «պաճուճանք, միմոսություն» (ըստ Ա. բ. հատանք «ավելորդ զարդ»), հատատանք (կամ հատպատանք) «պչրանք, պճնանք, կեղծիք, միմոսություն» (ըստ ԱՔ հատպատանք — հատանք), հոռատանալ — «կեղծված, ծածկված»: Նոր Հալիկազյան բառարանը սրանց արմատը դնում է հպիտ, որ ինչպես տեսնում ենք ունի և Փնշամալճյանի բառարանը, իսկ ամենակարևորն է ինձ համար Երեմիա Մեղրեցու բառարանում բերված «Հապտել—պատճառել կամ խաբել» (էջ 117) և «հպտել—մերձիլ, պատրաստել, պատճառել, ալլալիլ», համեմատել նաև «Հին Հայկ. բառ-ի յապտիլ «ծպտիլ, ալլակերպիլ, մտանել յայլ կերպարանս, ձևանալ» (Արմ. բ., IV, 1245): Այս բոլորը հաստատ եղրակացության է մեզ բերում, որ նախնական արմատը եղել է հըպիտ (həpit) կամ թևրևս հապիտ (hapit), թողած «խ»-ով գրություններ: Հնչյունաբանորեն həpit դարձել է արտասանության ժամանակ həppit, իսկ հետո՝ həpit: Նշանակությունը բազմազան է և կարծես թե սրամտաբանորեն անբացատրելի— «միմոս, խնդկատակ (проказница)», «խննջ, մեղկ» (развратный, слабонравный), «պաճուճվող, զարդարվող» (наряжающаяся), «կեղծվող, ծածկվող», «ալլալլող», «խարող» (ըստ Հալիկ. բառ.-ի՝ խոպատանք = նաև պատրանք) և այլն: Այս բոլոր և հարատառ տեսակները մեզ նայորդ են Փոքր-Ասիայի Hepit աստվածուհու հատկանշերին: Այդ աստվածուհին, որ թևրևս նաև Հայաստանի գլխավոր աստծո կինն էր «իշտարի» դաղափարագրով գրված (տե՛ս իմ „Хайаса—колыбель армян" գիրքը) ամենատարածված, ժողովրդական և գեղեցիկ դիցուհին էր, Փոքր Ասիայի Իշտար կամ Աֆրոդիտեն էր երկրորդ հազարամյակում (մեր էրայից առաջ) նման խառխոնների Šauška դիցուհուն: Տարածվեց մասամբ և Միջագետքի խառխոնների մոտ: Կրճատ ձևով հանդես է գալիս Hepa անունով: Հունական փոքրասիական արձանագրություններում (Մեոնիայից) հատկանի է Hipta ձևով, որպես կին Sabaztos-ի: Ինչևէ մոտ նա Աբինոնա քաղաքի արև աստվածուհին էր և գրավում էր առաջին տեղը խեթական պանթեոնում, կոչվում էր «տեր»: Բնական է, որ այդ Hepat, Hepit, Hipta և այլ ձևափոխություններ երևան եկող աստվածուհին չէր կարող միայն քրիստոնեական դարերում և պահվել կարող էր միայն իրեն հատկանշերով, որպես զարդարվող, կերպարանափոխվող, գեղեցիկ, գայթակղող (խարող) և ծամածռություններ անող խննջ աստվածուհի: Ուսուհանները ունեին կանանց անուններ,

որ նշանակում էին Tatu-Hepa «սերը Հեպաի», Gilu-Hepa «Գեղեցկությունը Հեպաի» կա և Hepit mušni «Հեպիտ աքանչելի» (նման «Իշտար աքանչելի»-ի ակկադացիների մոտ)։

51. Ճիւաղ կամ ճուաղ «հրեշ, առասպելական գազան», որից ճիւաղաբարոյ, կամ ճուաղաբարոյ, ճիւաղական կամ ճուաղական և այլն։ Կա և ճևևդիկ «թիթեռնիկ», որ Հ. Աճառյանը կապակցում է այդ ճիւաղ բառի հետ։ Այսպես կա այնպիսի հարաբերություն, ինչպես ունենք —խիպիլիկ «մի տեսակ գիշերային երևակայական ոգի, մղձավանջ, кошмар“ և մյուս կողմից մեր գավառական խըպըլիկ, խիպիլակ, խիպիլիկ և այլն ձևով բառը, որը որոշ տեղում նշանակում է մի կողմից «թիթեռնիկ» (Ախց. ԼՀ. Եր. Կղզ. Հնգ. Ննխ. Տր.), իսկ մյուս կողմից «մղձավանջ, մղձավանջի ոգի» (Ակն. Առ. Բլ. Մուշ. Մլթ. Մն. Մղ. Նր. Սվ. Վն.), «պատռվող քամի, սաստկի քամի, փոթորիկ» (Զեյթուն), «ճարպիկ, կարճահասակ և սատանա մարդ» (Բուլանըխ) «մանր ու վախտ մարդ» (Վան), մի տեսակ հիվանդություն (Սեբ.), «փոփոխամիտ, անհանդարտ (Եարբ.), «չարաճճի» (Զեյթ.), «փոքրիկ ու սիրուն» (Կարին, Ջուդա), «սիրուն աղջիկ» (Նոր Նախ.), «երևքնուկ խոտը (Համշեն) և այլն (տե՛ս Աբմ. բ., III, 495—498)։ Եվ ունենալով միևնույն թաթարական լեզուների kābālāk, թուրք. kebelek, kelebek, kebenek «թիթեռնիկ» բառի նմանությունը, Հ. Աճառյանը չի վարանում այնքան տարածված հայկական «խիպիլիկ»-ը համարել փոխառություն այդ թուրք-թաթարական լեզուներից, այնինչ, ինչպես նշել է Ն. Մառը, կա նաև սուրիական xabala «բռնաբարել, սատանա», որից xibli «կախարդանք»։ Իսկ քանի որ մեր ճիւաղ ‖ ճուաղ բառին նման է ճանկիկ «թիթեռնիկ»— բառը, ուստի արաբ. ǰa'falīq կամ ǰafīlak (ǰanfalīq) «խոշոր մարմնով կին» նույնպես համարում է փոխառյալ այդ հայոց ճևվեղիկ և ճիւաղ ձևերից, մանավանդ որ Կամուս, թուրք, թարգմ. Բ (878—879) ասում է, որ այդ բառերինը օտար փոխառություն է (Աբմ. բ., IV, 665)։ Բայց իրոք դժուարություն է ունեցել փոքրասիական (խեթ-հայկական) և հին սեմական այդպիսի բառ ներթևելենում կար zawalliš սատվածանունը, բավական էր այդ բազմաթիվ zawall-ներից մեկի ցոտումը, որ դուշակումները այս կամ այն երևույթի կամ նպատակի համար ձախողվեն (տե՛ս E. Forrer-ի հոդվածը, որ տպվել է Kl. Forsch, I, էջ 277)։ Ներթական այդ հրեշները, որոնք ուրիմն չար էին, հավանորեն այն թևատարած հրեշային էակները լինեին, որ քանդակված են «Ցաղլի կալա» կոչված ժայռի վրա։ Ներթական zawall-ը պիտի տար ըստ հնչյու-

նաբաթական օրինաչափությանը հայոց *ճաւաղ (ճաւաղ), բայց այստեղ տեղի չի ունեցել անմիջական փոխառություն: Վերջապես եւ կմատնանշենք և հին հեբրայական zebul «նուիրմատաս բառը, որ նշանակել է «շար ոգի, սատանա», այստեղից՝ Be'el-zebul «Բէելզեբուղ» (Веелзевул): Արաբական Ja'faliq («ջիվիլիկ»), որ նշանակել է «խոշոր մարմնով կին», թեպետ ցույց է տալիս իգական սեռի հրեշ, բայց հարկով պատկանում է խեթ-հար-հրեական մեր բառին:

32. Մաղթ-եմ «աղօթել, պաղատել, բարեխոսել» պատկանում է, ինչպես վաղուց հայտնի է, հնդեվրոպական որոշ խումբ լեզուների, այն է՝ բալթիկ-սլավոնական ճյուղին, ինչպես -լիթ. maldyti «շարունակ աղաչել, թախանձել», maldà «աղօթք, աղաչանք», ռուս. молю, молить, հին սլավ. moliti, լեհ. modfa «աղօթք», modlić «աղօթել», չեխ. modla «կուռք, սատար» (Արմ. բ., 769): Սակայն նորահայտ խեթ. *malt-* (malti, maldi, բայանուն malduwar), *malta-* (maltai, անց., 3 դ., եզ. maltaš, 1 դ., եզ. maldahhun) և *maldia-* բայարմները «աղօթել, աղաչել» ('pray', H. Gl. 86 որոշ ձևով), դալիս է ասելու, որ հայոց malth- արմատը ավելի շատ պետք է կապակցել անմիջականորեն խեթերենի հետ, քան թե բալթիկ-սլավոնական լեզուներին: Այդպես պետք է մոտենալ և հայոց մալել «մանրել, փշրել» արմատի ծագման, որը միացվում էր մինչև հիմա լատ. molo, գոթ. mala, հուն. μύλη «երկան», սլավ. melja (мелью), լիտ. malú, հիտ. melim «աղում եմ» (Hübschmann, Arm. Gr., էջ 471), բայց խեթ. malla- «աղալ, մանրացնել» (zermahlen) արմատին հայոց ձևը ավելի է մոտենում: Իհարկե միշտ այդպես չէ, ուրեմն հայոց մի բառաձև ավելի է մոտ հունարենին կամ սլավոնականին, քան խեթերենին:

33. Մորմոք «կսկիծ, ցավ, եռք», որից մորմոքիմ, մորմոքանք, սրտամորմոք և այլն: Եթե այդ արմատը հասկանանք որպես «մոք» պարզ արմատի կրկնություն, ինչպես որ առաջարկել եմ դեռ 1916 թ. (տե՛ս իմ „О происхождении др. арм. слова amehi", ЗВО, XXIII, 357) կապակցելով պարսկ. مۇ mūž, °مۇزە mūža «ցավ, վիշտ» արմատի հետ, ապա այժմ այդ առաջարկը ավելի վստահելի կերպով կարելի է պաշտպանել, ի նկատի ունենալով խեթ. muga(e)- (mugāi, անց. mūgait 3 դ. հոգ. mukaēten) «լաց լինել, սրտնեղել, թախանձել» ('lament, cry, iplore' H. G. 104), mukeške-(id.), mukeššar 'lamentation': Խեթերենին այդ արմատը հնչվել է *mog-* (*mōk-*) «սրտունջ, «սրտնեղել», «մորմոքել»:

54. Մոր «մոշ, մորենու պտուղը», որից սորվեն կամ մորի թուփը= լատ. rubus nemorosus Hayne, այս անունը տարածվեց եվրոպալում «թութ, թթենի» նշանակությամբ —հուն. μόρον μῶρον «թութ», μορέα, «թթենի», միջին հել. merenn, կիմր. merwudden «թութ», լատ. morum «մոր, մոշ», morus «մորենի», ավելի ուշ հուն. μόρος, «թութ» բառի աղճատությամբ լատ. morum-ը առացավ «թութ» նշանակությունը և տարածվեց դերմ. լեզուներում (հբգ. mōr-, mūr-, mūl- beri մբգ. mūl-boum, mūl-ber, դերմ. Maul-becre, անգլս. mórberie, անգլ. mulberry, լիտ. mõras, լեհ. morva «թութ»), (տե՛ս Աբմ. բ., IV, 1120—1121)։ Նույն բառը համարվում է փոխառություն Փոքր Ասիայից, իսկ մյուսները՝ տեղական։ Այդ տեսակետից համեմատել թերևս խեթ. *muris (հոգն. mures, հայց. murius) «խաղողի ողկույզ» ('cluster of grapes', H. G. 105), որ առաջարկում է թարգմանել H. Eheloff-ը։ Արդյոք այս թարգմանությունը ճի՞շտ է։ Նույն տեղում (OLZ 36. 5 f.) էհելոլֆը GIŠmaḫla- թարգմանում է «վազ» ('vine branch'), թեպետ առաջ ընդունվում էր «խնձորենի» (=հուն. μᾶλον; լատ. malum, թերևս թուրք. alma և վրաց vaši<*mahli), որ չգիտեմ ինչու չի հիշում E. Sturtevant-ը։

55. Պատ «բոլորտիքը, չորս կողմը, շրջան, պտույտ, պատ», պատել «փաթաթել, շրջապատել, ման ածել», պատեան „шелуха, кожны, латы“, պատիճ «ցորենի կճեպ, պատյան, ամանպան, փղի կնճիթ», պատատ «փայտոց, բեռ», պատատել «փաթաթել, պատատուկ «բաղեղ», պատաղիլ «գրաղվել, պարապել», «խափանվել, արգելվել» (опутаться, запутаться) «պատաղիճ», «բաղեղ» և այլն։ Վերջին պատաղ- ձևի հետ ևս համեմատում եմ խեթ. patallia- հրամ. 3 դ. հոգն. patalliandu), որ Sturtevant-ը առաջարկում է թարգմանել «պատատղեցնել, опутывать“ ('fetter'? H. Gl., 120), իսկ J. Friedrich-ը սխալմամբ թարգմանում էր «խեղել, հաշմել (make lame???)։

56. Ջախել «ամուր զարնել, խորտակել, փշրել», ջախջախել «խորտակել, փշրել», Արարատյան ջախուփուրք անել և այլն, որը Ն. Մառը (UAH 1919, էջ 408), Հ. Աճառյանը (Աբմ. բ., V, 1187—1188) կապակցում են վրաց ჯახება ǰaxeba «բաշխել, զարնել» ჯახჯუხი ǰaxaǰuxi «աղմուկ, շռինդ», լազ. ǰax «մուրճով զարնել, ուսերին ծախ-փնտուն «ծեծել, փշրել, կոխոտել», ցախ-փնտուն «քամել, ճմլել, ճզմել» և նման բառերի հետ։ Համանորեն այս հալ-վրացական-ուտիական ընդհանուր ǰax- (çax)- արմատը «զարնել, ударять“ իմաստով

կապ ունի նաև խեթ. zaḫḫaiš (հայց. zaḫḫain, zaḫḫin, տրակ. zaḫḫia) «մարտ, կռիվ» ('fight, battle', H. G., 185) բառի հետ, որը առաջը է ընդունված բոլոր խեթագիտների կողմից: Կա և zah(h)- ներկ. 3 դ. zaḫzi, հոգն. zaḫanzi, I դ. հոգն. zaḫḫuweni, «չեզոք zaḫtari, հոգն. zaḫḫanda, հրամ. հոգն. III դ. zaḫandaru) «վիրավորել, կռվել» ('injuze, fight'), zaḫḫiške- (id.), zaḫḫia- (ներգ. և չեզոք) id., zaḫḫianu «կռվեցնել» (անց. I դ. եզ. Mšianun = zaḫḫianun): Իմաստաբանական տեսակետից «զարնել, խրփել» > «կռվել, «ճակատամարտ տալ» համեմատել գերմ. schlagen «խփել» և schlacht «մարտ», ռուս. бить «խփել» և бой «մարտ» և այլն: Խեթ. z բաղաձայնի հանդիպել հայերենում սպասելի էր «ճ» (*ճախել, *ճախճախել, ինչպես Արարատյան բարբառում ունենք «արինճնճնիս», «ճիրճնիել», բայց և «ջընջխել» ջախջախել), սակայն այս ձևական հանգամանքը չի կարող արգելել այս հայ-վրացական-ուտիական ընդհանուր jax- (cax-, çax-) արմատի և խեթական (resp. փոքրասիական) zaḫ- արմատի միջև պատմականորեն առկայող ընդհանրությունը թե՛ իմաստի և թե՛ ձևի տեսակետից, մանավանդ որ մեզ անհայտ շատ անցումնային և միջնորդական հանգամանքներ են եղել:

57. Սակ «պատման, սահմանված չափ, կոպար, կարգ, դաշն, օրենք» (Արմ. բառ., 28), ըստ Առձ. բառ.-ի սակ «որոշած կտրած՝ դրած՝ կարգ՝ պատման, չափ, թիվ, օրենք, դաշն, կերպ»: Ապառնիից են սակնալ «պատման դրած», սակ արկանել «պին կտրել» անսակ «անպատման, անճառ» ի սակս «վասն, պատճառաւ», լո՞ր սակս «ինչի համար»..., սակաւ (չափավորյալ, թվի ենթարկված, քիչ) և այլն: Հիմնական նշակնատային իմաստն է եղել «նշանակված, որոշված» և ինչպես շատ լեզուներից է այդ հայտնի, այդ բխել է հին կրոնական ըմբռնումներից, որ իբր աստված է սահմանում իր նշանակությամբ կամ ասելով մարդկանց վիճակը, բախտը (destinée), թաժին է հանում և այլն: Հայոց սակ արմատը այդ հին ընացորդներից է և բառական իմաստով է «նշանակվածություն» > նորմա, կացություն, վիճակ, չափ, թիվ, օրենք և այլն: Այդ տեսակետով համեմատել մեր այդ sak-ը խեթերեն šagaiš (ուղղ. հ.) բառի հետ, որ նշանակել է «նշան» ('sign, omen'), որից ունենք šakia- «նշանակել, հայտարարել», šakiaḫḫ- «նշան տալ, նշանակել» šakiške-(id.) և այլն: E. Forrer-ը մի ժամանակ պաշտպանում էր այդ արմատի šakiaḫḫ-ինի, որ գրվում է գաղափարագրերեն IZKIM-aḫḫ) «խոստում» իմաստը, օրինակ ^{d}UTU-uš šakiiaḫḫia «արևը

խավարեց», ^{d}SIN-aš IZKIM-aḫta «լուսինը խավարեց» և այլն, բայց այստեղ ևս հիմնական դաղափարն է «նշան տվեց» (խավարումով)։ Որ խնթերևնում ևս sag(a)- արմատը նշանաւորութիւն է ցույց տվել ամէն առածո կողմից այս կամ այն կարգի վերաբերյալ, այդ վկայում է նաև šaklaiš (արաք. հոլ. šaklia, šaklāi բառը, որը թարգմանվում է «ծես, սովորութիւն, տուրք, օրինք» հար և նման մեր սակ բառին նույն նշանակութիւններով ('rite; custom, law', H. Gl., 129)։ Այդ կապակցութիւնով ծագումով անհայտ պարսկերեն sav, պհլ. sāk, որ գործ է ածվում sāk և baž «տուրք և մաքս» արտահայտութիւն մեջ և իբր անցել է հայոց սակ «տուրք, հարկ» (գուցե «նշանակված, սահմանված տուրք» առանց խարութիւն «գլխահարկ»), պետք է համարել փոքրասիական և ոչ իրանյան, թեև ուրարտացիների միջոցով անցած պարսիկներին, ինչպես որ Դարեհոսի բեհստագիր արձանագրութիւնների ոճը «Դարեհոսը ասում է», որ այնքան հաճախակի է, յուրացրած է ըստ Սեյսի ուրարտական արձանագրութիւնների նման ոճից, որ հատուկ չէ աստուրական գրութիւն ձևին։ Խնթերևնի šagaiš, šaklaiš, šakia-, şakiaḫḫ- և այլ ձևերը վկայում են šag- ‖ šak- արմատի մասին, որ հնչվել է, ինչպես հայ բառն է ցույց տալիս sag կամ sak (այդպես էլ գրում է E. Sturtevant-ը իր բառարանում), և հարց կարելի է դնել միևնույն իսկ փոխառութիւնն։

58. Սար «լեռան գլուխ, բարձունք», մարդակ «բլրակ», սարանալ «բարձրանալ, հպարտութիւնով չկամենալ», սարահարթ, սարոստանիք «լեռնարնակք», սարաւանդ, սարաւոյթ «բարձր պատառ» (Աբմ. բ., VI, 118—122)։ Այս արմատը համարում են հնդեվրոպական k > r-, k,er- «գլուխ, գագաթ, հղկություն», որին պատկանում են սանս. çira-, çiras- «գլուխ, ծայրը», ավեստ. sarō «գլուխ», պհլ. և պարս. sar «գլուխ», հուն. kāp, kapa «գլուխ», լատ. cerebrum «ուղեղ», հնխ. բ. դերմ. hirni, դերմ. Hirn «ուղեղ» և այլն (Hübschmann, Arm. Gr., 489, Աբմ. բ., VI, 118—119)։ Այս հնդեվրոպական լեզուների ker- ‖ ser- արմատի շուրջը խմբվող բառերը նշանակում են «գլուխ», հայոց բառերը սար, սարակ, սարաւանդ, սարահարթ և այլն տալիս են հիմնականում «լեռ, բարձրութիւն» իմաստը, որը բնավ էլ փոխաբերական առումը չէ այդ հնդեվրոպական k,er- ‖ ser- «գլուխ» բառի։ Հայոց բառը փոքրասիական-խուռո-ուրարտական է և նշանակել է սկզբում «իվեր, наверх, вверх", հնաո և դոլական «բլուր, սար, верцина"։ Համեմատել խեթ. šarā (հնչվել է sarā) «ի վեր, վրա» ('up, abov',

H. Gl., 131), որից šara(z)zi- «վերին, բարձր, վեհ» ('upper, highest, superior, best'), šarba- «բառաչացնել» և այլն։ Կային վերին աստվածներ (dŠarazzeš) և ստորին (katteres)։ Ուրարտերենում կար se-e-ri «ավելցուկ, հավելված, сверх», որը դրած է ամենամեծ ազգական բնույթի արձանագրություններում, երբ մի երկիր կամ քաղաք պաշտոնապես վերցնելուց հետո ասված է, որ դիմավորներն էլ իրենց հերթին šepi partu «ավելի ստրան» (= թալանին) կամ թե šeeri'aše SALlutu LÚasi meš-ue arubi (Արգուրի V արձ. Վանի նիշերից, տող 28) «ավելի մարդ ու կանանց զորքին ավել, ստրկեր՝ ավելի մեացած, сверх того», խոսում է միևչ այդ գերիների կոտորելու և վառելու մասին։

39. Սեղեխ «շնացող մարդ, կնոջ ստրկության սիրեկանը», դրված է նաև սիղեխ, սիղիխ, սիղեղ, սիղիղ։ Վերջին երկու ձևերը նոր ձևեր են, 9—11 դարերից հետո, երբ ոչ ոքին հետևալեզվային շփման (ֆրիկատիվ) բաղաձայն էր։ Այս սեղեխ selex արմատը նույն նշանակությամբ կա և խեթերենում, ուր դրված է šalik- (ներկ. III դ. եզ. šalikzi, հոգն. III դ. šalikanzi, չեզոք՝ šaliga, šalika, անց. I դ. հոգ. šaliku-waštati, հրամ. salikazu) «պատկել միասին, բռնաբարվել» ('join together, be contaminated' H. G., 130), šalikeške «լինել պիղծ, բռնաբարվել» ('be impure, defile')։ Հայոց selex (=selex ‖ silex) «շնացող» բառը թե՛ իր բովանդակությամբ և թե՛ հնչյունների համրնկնում է խեթ. salik- ‖ saligբային, միայն իր շփական „x" բաղաձայնով համապատասխանելով խեթ. k կամ g բաղաձայն պալեթականին։

60. Սկ-ել «տքնել, արթուն մնալ և ուշադիր լինել», որից հսկել (նույնը), հսկումն, հսկուն, հսկիչ և այլն։ Համեմատել խեթ. uške- (uška-) «տեսնել, նայել, հսկել» ('see, observe', H. Gl.; 171), «տեսադել, ճանաչել» ('recognize' Suppl. 45), uškiške- «տեսնել, հսկել», LÚuškiška(t)talaš «հսկիչ, պահակ» ('observer, watchman') և այլն։ Խեթերեն արմատն է usk-, սակայն ամենը դրա -sk- մասը ցանկանում են համարել հաճախականի ածանց, թեպետ uskisk- կազմության մեջ այդ արդեն կա։ Հայոց sk-el հնչվել է əsk-el, իսկ հետագայում hask-el, ծագելով *usk- նախնական արմատից։ Թերևս ուրարտ. Haldini ušginu նշանակել է խալդյան հսկողությամբ, որտեղ ušgi = հսկողություն, տեսչություն (?)։

61. Սկալ-ի «չորանալուց կամ պես ճաքճքիլ»։ Համեմատել խեթ. iškalla- (iškallai չեզ. iškallā i) «կտրատել, расщепать, разрезать ('split', H. Gl., 61)։ Խեթերենի արմատն է skall- <

skal- (չեզոք և ներգ.), որի հանդեպ հայերենը ունի սկալ-իմ (չեզոք), բայց և ցել-ում (ցել-եմ) «պատռել, ճեղքել», որոնցից առաջինը (սկալ-) գալիս է Փոքր Ասիայից, խեթերենին հետ միասին կամ դուրս հենց խեթերենից, իսկ երկրորդը (ցել- < skel ձևից) մի ուրիշ էթնիկ աղբյուրից: Այդ արմատները կան և հնդեվրոպական լեզուներում, ինչպես օրինակ, լիտ. skellù, skélti «ճեղքել», հին իսլ. skilja «մասնատել», հրդ. skellen, անգլոսաքս. scellan «բաժանել, հեռացնել», ռուս. щепь «ճեղք», հուն. spàlio «ոչնչել, քանդել» և այլն:

62. Սկս-ան-իմ (անց. կատ. սկս-ալ) «սկսել», որից սկիզբն կամ սկիսմն, սկիզմն, սկսնակ և այլն: Արմատն է սկիս—, որը իմ կարծիքով առացվել է դ-կիս- ձևից «դ նախածանցով, ինչպես դգնանել, դկծել..., դգնստ աքցնել դ-քցդ-ել և այլն: Իսկ kis- արմատի հետ համեմատել խեթերեն kiš- «պատահել, լինել случиться, стать" ('happen, become' 79) անկանոն ձևեր kišari, II դ. եզ. kištati, անց. kišat, I դ. kišḫat, kišhaḫat), ուշադրական բայ kikkiš(s), (III դ. եզ. kikiššari): A. Götze-ն թարգմանում է kiš- „geschehen, werden, entstehen, eintreten" (Ann. d. M. 294), համեմատելո հաճախ է գործածվում «երբ գրաւնը նոյն (kišat)» նախադասութեան մէջ կամ «երբ հայրս աստված դարձաւ (kišat)»= մեռաւ:

63. Սպանդ «զոհ, մատաղ, զոհելը, սպանութիւն», որից ըսպանդանոց «մսի մորթելու տեղ», սպանդարան «զոհարան»: Հ. Աճառյանը (Արմ. բ. VI, 388) կապում է սպան-անել բայի span- արմատի հետ, ավելացած -դ, ժխտանակ -անդ, ինչպես նոյնպես բայի bn- արմատին ավելացել է -անդ և առացվել է նոանդ: Բայց ինձ թվում է, որ հայոց spand իր հիմնական «զոհ» իմաստով պիտի կապել ոչ թե span- «սպանել» բայի հետ, որից թերևս ազդվել է «սպանել կամ սպանվել» նոր իմաստով, մանավանդ, որ զոհը բնականաբար սպանվում է, այլ խեթ. sipant- (sippant-) =spant- || spand- (հնդկ. III դ. եզ. sipanti, sippanti, հոդն. sipandanzi, sippandanzi), «զոհել, возлиять զոհել (կննդանի). նվիրել — զոհարերել» ('pour a libation fo, sacrifice (an animal) to, dedicate (a place) to', H. G. 140): A. Götze-ն արմատը դրում է šipand- („libieren"), անց. I դ. եզ. šipandaḫḫun, դերբ. šipandant- ազդ. հ. šipandaza, անորոշ šipanduwanzi (Ann. d. M., 310): UDU šipanduwaš «զոհարերելու ոչխար» (Sommer, Hifh. II, 41—42):

Զոմմերը և էհելոլֆը šipant- թարգմանում են „giessen, ein Gussopfer oder Tieropfer darbringen“ (Pāpanikri, էջ 90)։ Դեռ Ֆր. Հրոզնին իր Sprache der Hethiter գրքում (էջ 4, ծան. 1) այդ խեթ. spand- արմատի հետ կապակցում էր գերմ. spanden, լատ. spondeo „свято обещаю. даю обет“ (gelobe), հուն. spéndo- «զոհել (գինի, կաթ և այլն) աստվածներին»։ Հայերենն spand- արմատը մոտ է խեթերեն spand- կամ spant-ին ոչ միայն իր իմաստով «զոհել կենդանի» (բացի возлиять «զոհել» գաղափարից, որ հայերենը չունի), այլև արմատի „a“ ձայնավորով ի տարբերություն հունարենի և գերմաներենի (spend-) և լատիներենի (spond-)։

64. Սպրդել «ծածուկ ներս մտնել, սողոսկել», սպրդիլ (այժմ) «վրիպել, ձեռքից սահել «փախչել», սըփըրդըլ (Զեյթուն) «սահիլ-սալթաքիլ», սարարդել «սահելով մի տեղից ցած իջնել» (Հաճին), սըփըրտիլ (Նոր. Նախ.) «սահել, ազատիլ, ձեռքից սպրդիլ, աչքից վրիպել» (Արմ. բ. VI, 412—513)։ Արմատն է spird- ‖ spurd- կամ թերևս spard- «սահել, սողոսկել» (ներս, ցած), որի հետ համեմատում եմ խեթ. išpard- ‖ išparz- (հնչվել է spard-) «դուրս փախչել, улизнуть, утекать“ („entkommen, entfliehen“, տես A. Götze, Ann. d. M., էջ 289)։ Հայերենում գործողությունը դեպի ցած կամ ներսն է լինում, թեպետ հիմա ասում են «դուրս սպրդել», իսկ խեթերենում՝ դեպի դուրս կամ վերև šarā ispart-)։

65. Տագնապ «սրտատրոփ, անձկություն, մեծ նեղություն, հոգս», որից տագնապաւ, տագնապել, տագնապիլ և այլն։ Այս բառը թերևս խեթերենից է վերցված և կազմված խեթ. dagan- ‖ takna- «հատակ, գետին» և ap- ‖ ep- «բռնել», այսինքն՝ tagnap- «գետինը բռնել», վախից, սարսափից և այլն, հետո՝ «տակնուվրա, сумятоха», իսկ վերջում «սրտատրոփ, «հոգեվնասություն» և այլն։ Այդ -ap կամ -ap՝ (-aph) մասնիկը հայերենում շատ հաճախ է հանդիպում։

66. Տող «ուղիղ շարք» (մարգարիտների, շղթայի, բազմականների, խոսքի, կամ բառերի), տողել «ուղիղ շարել, դասավորել», տողան «շարք, դաս», շղթայատող, մարգարտատող, քարատող «քարով շարված» և այլն (Արմ. բ. VI, 941—942)։ Հ. Աճառյանը մեր տող «ուղիղ շարք» բառի հետ աղգակցում է նաև վրաց. ტოლო toło կամ ტოლი toli «հավասար, նման, հասակակից», որից ტოლობა toloba «հասակակցություն» և այլն, ենթադրելով, որ այդ երկու լեզուների նման բառերը գալիս են խալդերեն (ուրարտերեն) լեզվից։ Անկախ այդ վերջինից հայոց և վրաց բառերը «ուղիղ հավասար (հասակակից) շարք» հիմնական իմաստով պետք է կցել

խեթ. tulia- բառին (հալց. tulian, սեռ. tuliaš, տրակ. tulia), որ նշանակում է «խորհրդակցություն, ժողով» counsil, assembly', H. Gl. *164)։ Արդյոք խեթերում ժողով — խորհրդակցությունը, որ հրավիրում էր (tulian ḫalz- «ժողով կանչել») թագավորը, ուղիղ կամ որոշ շարքով էր լինում թե ոչ։ Մեր այս ուսումնասիրությունը խոսում է հօդուտ ուղիղ կամ կանոնավոր շարքի, նման մասամբ հալց թագավորների շարքը բազմող իշխանների շարքով բազմելուն, նայած նրանց դիրքին։*

67. Տուն *(տոհին, տոհունք) «չվան, կապանք» (Արմ. բառ.* VI, *953 - 954)։ Սրա հետ համեմատել խեթ.* turammit *«իմ լծասարքը»* („my team" *ըստ* Hrozny-*ի,* Aor, I. 284) = turan-mit? *խեթերենում կա և բայ* tur- (turizzi, *անց.* tūrit) *«թամբել»,* turia- (turiazi, turianzi) *«թամբել»* ('harness' H. Gl., *115)։ Հրոզնին թարգմանում էր «լծել, կապել»,* ANŠU. KUR. RA tu-u-ri-ia-wa-aš „un cheval d'attelage" *(«օրինագրքում»* Code hittite, *56), ուրարտերենում ևս կար* tur- *բայարմատ (*VI *արձան., Սարդուրի Նիշալում պատի վրա), որը ևս թարգմանում եմ «պարտադրել»,* obliger, „обязать" (turubi *անց.* I *դ. եզ.), որը նույն «կապել» նախնական իմաստից է զարգացել։*

68. Փարուլ *(Տրապիզոնում) «թափվող ձյունի քուլա, хлопья», որը Արարատյան բարբառում, Լոռիում և Ղարաբաղում հնչվում է «փաթիլ» (փաթիլ փաթիլ ձյուն է գալիս), բայց այդ բառը նշանակում է (Լոռի, Ղարաբաղ, Ղազախ, Ղարս) նաև «բրդից վերցրած մի փոքր մաս՝ փաթոյթ, որ պիտի գզվի սանձերքի վրա»։ Այդ գզվածը փաթաթում են մատների վրա, ուստի կոչվում է «փաթույթ», որը մեծացնելով կծիկ են շինում։ Փաթույլ կամ փաթիլ բառերի հետ ևս համեմատում եմ խեթ.* pittula, *որը կարելի է կարդալ և* pattula (pat- ‖ pit *բևեռանշանով) «բրդե փաթիլ, օղակ», ինչպես առաջին անգամ թարգմանեց* A. Götze-*ն („Schlinge"): Այդ բառը սկզբում ունի «բուրդ» (SIG) որոշիչը՝ դեհերմինատիվը։ Հետաքրքրական են և բնագրերի այդ տեղերը— «Թագավորը և Թագուհին վերցնում են սպիտակ (և) կարմիր բուրդ* karzana-*ից («կոսորակ, корзина?), կցկցում են իրար* [taruppanzi] *և շինում են փաթույլներ», կամ թե «փաթույլները ուղում եմ... Թագուհու համար բացել», անշուշտ մանելու համար, կամ թե «և այն մարդու, որ հիվանդ է, կապում են սեղանի (?) առաջ փաթույլներով ձեռքերը»* (*տես* Klein Forsch, I, *էջ 189)։ Արդյոք հալց այդ փաթույլ ‖ փաթիլ բառերը փար- «փաթաթել» արմատից չէ՞, ինչպես և

խեթ. pit(t)- *կամ թևրևս* pat(t)-, *որից* patallia- «պատեռ, պատառանդ» (*տես վերը* պատաղիմ)։

69. Փետուր «փետուր, թևպուր», *որից փետրալից, փետրամօրուս, փետրիկ..., շրշված՝ թևպուր, թևպրիկ, թևպրել «ճնպռել», որոնք ժողովրդական ձևեր են (Արմ. բ. VI, 1209—1212)։ Աւժմյան բարբառներըը մեծ մասամբ անոնք թևպուր հիմնական ձևը, որից թևպրել («թևերով»), բացառութիւամբ մի քանիսի, որոնք դեռ հին ձևն են պահում (վան. Ախլք. «փետուր», Սալմ. «փիտուռ», Սվեդ. «փիդէօր», Մարաղա «փուքուր» և այլն)։ Այս փետուր („nepo. Feder" բառը դեռ Մարտիրոսյանը (Հանդես Ամս., 19-4. էջ 458) և Աճառյանը (Նորք. 1925 թ. 5, էջ 393) համեմատել են խեթ.* pittar *նուլնիմաստ բառի հետ։ Բայց ինչպես տեսնում ենք.* pittar = *հայոց* փետուր *phetur տարբերվում են վերջին ձայնափոխութեամբ, ուստի անմիջական փոխառութեան խնդիր խեթերենից չի կարելի դնել հայոց բառի համար։*

70. Փերր «կատր», *փերթել «պատառատել» (մարմինը), միափերթ «միախուռը, միաձայն», անկափերթ «կաշվի կատր», փերթկար «հնաոճարկատ», Ախնամ և Ալաշկերտում փերթ «կարկատան անելու կտոր» (կաշվի կամ շոր)։ Գործ է ածվում և այլ բարբառներում (Մուշ, Երզնկ., Սերաստիա, Զեյթուն, Հաճին, Մարաշ և այլն տե՛ս Արմ. բ. VI, 1214—5), այսինքն՝ Հայաստանի հարավ-արևմտյան և արևմտյան բարբառներում, որոնք մոտ են եղել խեթական նախկին պետութեանը, և այդ տեսակետից համեմատել խեթ.* pärtaizi «պոկում է, գզգզում է (բուրդը)» *(տե՛ս* ZA. NF. V, 52. partämöglicherweise „(Wol'e) zezzupfen?" *ինչպես թարգմանում է* J. Fridrich-ը *մատնանշելով նաև* partiparfiskizzi *անհայտ իմաստով կրկնակ բայածևը։ Հայոց փերր արմատին կից է ժողովրդական փուրր (ջախտփուրթ անել, փրթել ‖ բրդել, փրթոք ‖ բրդուճ...)։*

71. Քերել «քերել, քորել, սկրդել», *մարմինը՝ մորթը քերթել», «վրայից հանել, սրբել, ջնջել, մաքրել», «շփվելով անցնել», «փորագրել, քանդակել, գրել», քորել «շփել մարմինը, քերել՝ մարմաջը հանգստացնելու համար» (Արմ. բ. VI, 1448—1449)։ Այս քեր- ‖ քոր- արմատը համարում են հնդեվրոպական «նախալեզվային»* sqer- *կամ* qer- «կտրել, ճեղքել» *արմատից ածված, ինչպես անոնք նաև հուն.* keirō «կտրել, մկրատել, խուզել», *լիտ.* skirtiù, skirti «բաժանել, անջատել», *սլավ.* скоро (= шкура «մորթի») *և* кора «կեղև», *հրգ.* sceran «կտրել», *գերմ.* schere «մկրատ»

և այլն։ A. Meillet-ի այս ստուգաբանական առաջարկը հայոց kher- ‖ khor- արմատների նկատմամբ հայոնի հայագետ Հյուբշմանը չէր ընդունում (տե՛ս նրա Armen. Gram., էջ 503)։ Իմ կարծիքով հայոց այդ արմատները նախ և առաջ պետք է կապակցել խեթ. kuer- կամ kur- (kuiz-zi. kur-anzi) «կտրել» ('cut off', H. G., 87) արմատի հետ, we ‖ u ձևորակաև հնչյունափոխությամբ։

72. Բուդ «ոլորած դերձան, վուշե թել», որից քրանցք «զգեստի ծալք», բայց իրոք նշանակել է «զգեստի ծալքի այն մասը, որ ծծիկի միջոցով թելն էր անցնում և կամ ծալքի ծուփաթելերն էին կախված, իբր քուղերի անցք» (Աբմ. բ. VI. 1518)։ Դարձ է ածվում նաև մեր բարբառներում, ինչպես՝ քուղ «գալթան» (Ղազախ), «չվան» (Ագուլիս), «թել» (Շամախա). «զգեստի եզերքի կար կամ երիզ» (Դարիս, Ղարաբաղ, «քող» ձևով), քղել «զգեստի եզերքը երիզ (тесьма) կարել» (ibid)։ Կա և գավառական կուղ «սամիի մոկր», (Ա՛ճ., Գավ. բ., 603), կղան (Ղարաբ.) «կաշվե հատ փոկ դուքանը կամ սալլը լծին կապելու համար» ibid; 578), կղել (Աբար., Բուլան., Ապարան) «պարանը ձուաձև ծալել» (Ամատունի, Հայոց բառ ու բան, 348)։ Հայոց այս քուղ- կամ կուղ- արմատի հետ աղերսակից պիտի համարել խեթ. ḫū'ali «փաթույթ, փաթթ», ինչպես թարգմանում են Զիմմերը և Ինելոլթը (wohe „wickel (Bind)", տե՛ս Pāpanikri, էջ 83), կար և GIŠḫulali «փաշի» („Spinnrocken") ինչպես նաև ḫulalia- «փաթաթել, мотать" („wickeln")։ Եվթական այդ բառի վերջին -al-ը մասնիկ պիտի համարել, ինչպես ունենք, օրինակ, paḫḫunalli «օճախ» (paḫḫur «կրակ» բառից), kuttanalli «մանյակ, վզնոց» (kuttar «ուս, վիզ» բառից), որից թերևս հայոց «քոթանակ» փաթաթելու շոր, ծածկոց), ḫuḫupal- նրաժշտական գործիք է, թերևս «պարկապզուկ, волынка» (որը նախագում են խխկելով և այնպես է կազմված, որ գրանից կարելի է հնչուկ խմել, տե՛ս E. Sturtevant, Comp. Gram. of the hit. Language. 1933, էջ 146), հավանորեն բնաձայն բառ է, կազմված a'- մասնիկով և ḫop-ḫop կրկնավորից (=հայոց խոպամ «ցարքել, խոզալ („резвиться")» և այլն։ Ինչ վերաբերում է խեթ. ḫ =հայոց «ք» կամ «խ» հնչյունահարաբերությանն, ապա այդ մենք տեսանք նաև խեթ. ḫand- հաստատել և հայոց կանդաղնել «հաստատել» համեմատությանն դեպքում, ինչպես նման համապատասխանությունը ակկադական և հայոց փոխառու-

բլուններրի մեջ (ḫassinu = կացին, ḫabtu = կապտա «թալան, ավարառություն»)։ Բայց ընդհանրապես պետք է ընդգծել նաև, որ հնում կարող էին սկզբնապես «խ» բաղաձայնով հնչված լինել, իսկ հետո փոխանակվել «կ» (կամ «ք») բաղաձայնով դերխմաների կամ փոփոխականների, ինչպես ունենք խալտալ և կալթել резаться «թափառալ» խառան և կառան «չվան». խ(ր)ճակ, և կճակ скорлупа «երճիկ և կռճիկ» хрящ «խորովու և գորովու (Արար. բարբ.) «թոնրում ամրողջապես խորովելի գառ (ոչխար) կամ այծ» և այլն։ Ակնպես որ ոչ մի երաշխիք չկա, որ հնում չէր կարող լինել բնդրնական խանդաղանալ, խաղ և այլն կանդաղանալ և կաղ (քաղ) և նման բառերի փոխարեն։ Համմ. նաև խեթ. saliga և հայ. selex «շնացող»։

* * *

Հայ-խեթական բառային հանդիպումներ, որպես կամ փոխառյալ և կամ ընդհանուր փոքրասիական՝ ցեղային կամ կուլտուրական շրջման հողի վրա առաջացած, մենք ունեցել ենք իհարկե շատ և ավելի շատ, քան իմ մատնանշած լոթ տասնյակ դեպքերը։ Բայց դժվարություններ կարող են լինել դրանց ճիշտ պատմալեզվական բնույթը, ծագումը և տարածման ընթացքը նշելու տեսակետից։ Բայց վերոհիշյալ լոթանասուններիս ընդհանուր բառերից, որոնցից որոշ օրինակներ կարող են մտնել և փոխառությունների շարքը, որովհետև այդ դժվար է որոշել, կան դեպքեր ևս, երբ այլևայլ պատճառներով այդ ընդհանրությունները կամ զուտ փոխառությունները մնում են կամ առկախ, կամ սխալ և պատահական։ Էլ չեմ ասում այն բառերի մասին, որոնց նշանակությունը լավ չի ճշտված։ Բերենք օրինակներ.

1. Իշխել և իշխան բառերի արմատը իր ձևով շատ նման է խեթ. išḫa «տեր», хозяин բառարմատին, ինչպես այդ դիտել են Ն. Մառ-Իլրոսլանը, Հ. Աճառյանը և ևս, իրարից անկախ։ Բայց այդ նմանությունը առերևույթ է։ Նախ խեթերենում այդ բառը կարելի է կարդալ և ešḫā-, իսկ E. Sturtevant-ը այդ էլ տառադարձում է esḫa- (տրակ. eshe)։ Երկրորդ, եթե անգամ išḫa- կարդանք (կամ ešḫa-, այսինքն š-ով), ապա այդ բառը ըստ իս չպիտի անջատել կապադովկիական aš-u, «պետ, տեր» բառից, որ ևս առաջարկում եմ տեսնել մի շարք հատուկ անունների մեջ, որոնք մեզ հասցել են կապադովկիական տաբլետներում, գրված աստ-

յատկան լեզվով, ինչպես Arzanaḫšu, Barvaḫšu, Hištaḫšu, Kiniaḫšu և այլն (տե՛ս իմ Хайаса-колыбель армян, էջ 116—117)։ Ոչ մի կասկած, որ այդ ahš-u բառը իր նախածանցն „a"-ով, ինչպես տեսանք ենք, լուվիական արտաքին ունի, իսկ հայերենը այլ դեպքերում հակվում է լուվիական ձևին։ Համեմատել -խեթ. Jnnr «տղամարդ, հսկա» և հատուկ անվամբ աստվածը = լուվ. Anar- (և հայոց անարի «հսկա»), խեթ. išḫaḫru, ešḫaḫru «ոդր, լաց» և հայոց աշխարել, խեթ. Jštanu- նախախեթ. eštan «օր» (հոգն. leštan «օրեր») = լուվ. aštanua խառ. և ուրարտական ewri «տեր» = հայոց awri (աւրի-որդ), խեթական irḫi ‖ erḫi «սահման՝ բառի դիմաց կա Arḫita (սահմանալինն») քաղաքը Ծոփքում և Արխաշեն ձորանունը մեզ մոտ։

Վերջապես հայոց իշխ- արմատի ծագման խնդրում էլ մենք չենք կարող անտեսել և նրա փոխառության հնարավորությունը իրաներենից, ուր կա xšayami (= իշխամ) և axšāyan սոգդերեն ձևը, մանավանդ որ հյուսիսային պահլավերենում արմատի š կամ s մոտ ավելանում է „i", ինչպես է հայերենում ևս (տե՛ս Արմ. բ. VII, 137)։

2. Հուռն «քղանցք» (ըստ Առձ. բառ.-ի), որից ոսկեհուռն, մարդարտահուռն կա խեթ. ḫurn- (III դ. հոգ. hurnanzi, անոր. hurnuwanzi) «շշթթել, ցնցղել» ('sprinkl' H. G. 52, Suppl. 21, ըստ H. Eheloff-ի, տես Klein, Forsch. I, 146—150)։ Բայց իմաստով տարբեր են, որովհետև հայերենում արմատը վերաբերում է քղանցքի մեջ ոսկի կամ մարգարիտներ հյուսվելուն, իսկ խեթերենում հեղուկ ցնցղելուն (ռուս. кропить)։

3. Մէտ «հակվելը», որից միտիմ, միտում և այլն։ Խեթերենում կա mita- (հներ. III դ. եզ. mitaizzi; անց. I դ. եզ. mitānun), «հաստատել, որոշել» (fix, determine' or the like, H. G. 103)։ Նմանապես դեռ առայդ չի կարելի համարել դրանց կապը։

4. Ոգորիմ «կռվել զենքով, ձեռքով, կռտոշով», որը եթե հնչվել է wogor-, թեև դրությամբ սպասելի էր վոգորիմ, ինչպես ունենք վոհական, այդ դեպքում շատ մոտենում է խեթ. waggaria- արմատին, որ նշանակում է «ընդվզել, ապստամբել» ('revolt, rebel')։ Ինչպես տեսանում ենք առարկությունն կարող է լինել թե հայոց բառի հնչածևի և թե դրա և խեթական բայի իմաստների հանդեպ։

5. Ոփ «խառոյ, ծակ», որը նման է ոչ միայն վրաց ube „яма, пазуха, кузов (экипажа)", հուն. ορέ «ծակ» (отверстие,

դեպ), այլև խեթական wappu- (անս. wappu(w)as, տրակ. wappu(w)i), որ թարգմանում են «գեղեցկանձ» կամ «խրատատու» (ըստ J. Friedrich-ի), կամ թե «բարեհնձաւ» nemepa» (ըստ Forrer-ի) և կամ «գնահին» (տե՛ս H. Gl. 176)։ Կարելի է ենթականոթեն առաջարկել թեթ. wappu- բառի համար և հայոց փայլ (որից փայլատ), ինչպես խ. wewak- «ցանկալ» բայի հանդեպ հայոց փափագիմ։ Առաջին դեպքում ունենք խեթ. waggar-= հ. ogor-ին, խեթ. wappu-= հ. օրհ, այսինքն՝ խեթ. -wa- հնչյունափոխվելը = հայոց o, թեպետ կա նաև խեթ. wa = հ. u (տե՛ս վերը՝ հայ փոխառութիւններն խեթերենից)։ Այնուամենայնիվ այս բոլորը վերջնական ստուգման կարոտ է և առայժմ «առնահան» ու «ճորմայ» բնաբիլ է կրում։

6. Իմովսանն *«կրցածիս չափ, իմ կողմանէ»* (Առձ. բառ.)։ *Այս բարդ կազմութիւնն ունի իմով (դրբ. հոլ. իմ դերանունից) և սանն անորոշ ձևով անորոշ բառից, որովհետև համաձայնութիւնն չկա հոլովման մէջ։ Կա և իւրեանցսան «կախնակալ իջուցին զանդամալոյծն առ Յիսուս իւրեանցսանն հաւատովք»), որը պիտի ուղղել իւրեանցսանն։ Նոր գրականում, ինչպես Հ. Աճառյանն է ընդգծում, այդ նմանութեամբ ստեղծվել են մերովսանն, ձերովսանն, իւրովսանն։ Թևրևս իմովսանն նշանակել է «իմ (իմացածի, կարողութեան) պես», «իմինի պես», ինչպես ասում են մեր բարբառներում, և իմովսանն թևրևս ուղղելի լինի «իմովսանն», ինչպես է «իւրեանցսանն» (ձեռագրում՝ իւրեանցսանն)։ Ներեներն լեզվում կան դերանվանական մակրայներ -san վերջավորութեամբ, ինչպես ki(s)san «այսպես» ('in fhisway, thus' H. G., „so folgenderwassen" Ann. d. M., 294) ki- «այս» ցուցականից, apenissan «այսպես» (ihus), annisan «առաջվա պես» ('previously' H. G., 22) և enissan «այդպես. ստույգ սահմանված»* ('ita, as just stated', H. G. 35)։

7. Ֆաղց *«անօթութիւն», քաղցնում (անց. կատ. քաղցեալ) «անօթենալ», գործ է ածվում և բարբառներում (Նոր Նախ., Տփղ., Երև., Մարագա, Սալմ., Սուչուվա, Մոքս, Տիգր., Սվեդիա), տե՛ս Արմ. բ. VI, 1366—1367։ Արմատը համարվում է հնդեվրոպական և կապակցվում է սանդինավյան լեզուներում գտնվող* swelt- *բառաձևի հետ, որպիսիներն են՝ հին սկանդ.* svelta «քաղցել», *շվեդ.* svälta *և դանիական* sulte *(նաև՝ նշանակութեամբ), որոնք իրր թե կապվում են հին սկանդ.* svelta «մեռնել» *անգոս.* sweltan *և գոթ.* swiltan «մեռնել», *հրդ.* swelzan «սպրել» *և այլն* (ibid.)։ *Հայոց քաղց- ձևը հանվում է «նախաիեղվյան» sweld-sk'-ից, որի ներ-*

*կալացուցիչները միայն սկանդինավյան լեզուներում են, թողած այդ լեզուների և դերմանականի «մեռնել» կամ «սպրել» նշանակող բառերը։ Ավելի պատմական կլինի հայոց բառը կապակցել խեթ. kast- «քաղց, սով», արմատի հետ (ուղղ. kasza, հայց. kastan, gastan), եթե միայն խեթերինը ունենար է, նման ակկադերին լեզվին, lt>st փոխանցումը։ Հետևապես խեթ. kast<*kalt- (կա և kest-, kist փոփոխակը) և սլավ. гладъ „голод" (<gald-ից) բառերը ազգակից են դառնում հայոց «քաղց»-ին, որի վերջին «ց» բաղաձայնը կարող էր «թ»-ից առացվել (համմտ. մեր «ցեխ» և վրաց «թխլամա», հայոց հոդն. սեռ.- տրակ.- բաց. «ց» և վրաց th)։*

8. Ւրրրիել «քրքրել, փխրել, քայքայել և դրգռել, պրպտել», որը առացվել է կրկնավոր քիրքիր ձևից (համեմատել հետաքրքիր), պարզ գոլութիւն չունեցող «քիր» (khir) արմատից։ Խեթերենում կա kurkurais «չլլանդակումն» ('mutilation'?), kurkuria- «չլլանդակել» (suppl. 28), որը հանգում է պարզ kuer- ‖ kur- «կտրել, կարատել» բայից իբրև կրկնութիւն։ Գնաք է ենթադրել ուրեմն, որ փոքրասիական լեզուներում կար և khir- (kir-) տարբերակը հանդես khur (=khor) տարբերակի, այլ կերպ ասած՝ խեթ. kurkur- „изуродовать, изорвать" ձևի դիմաց կար khirkhir- հայոց ներկալացուցիչը՝ համարժեքը։

ՀԱՑ-ԽԵԹԱԿԱՆ ՓԻԼԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԸՆԿՆՈՒՄՆԵՐԸ

Խեթերի քաղաքական, կուլտուրական և ազգագրական ուժեղ ազդեցութեան հետևանքով, խեթական լեզուն ևս, ինչպես գրքիս սկզբում շեշտվել է, բնականաբար պիտի ներթափանցեր և ընդգրկեր Մերձևփրատյան (Հալաստա, Դերսիմ-Զարսանջակ, Ծոփք) և մասամբ Մերձճորոխյան շրջաններըը։ Եվ ուրեմն այդ տարածութեան մեջ ընկած նախկին լեզուների ու բարբառների մեջ, որոնցից մասամբ գոլացել է և հայերենը, պետք է ենթալին ոչ միայն բառային ընդհանրութիւններ և փոխառութիւններ, այլև մինչև իսկ քերականական ձևեր, նայած այդ ներթափանցման ուժին, աստիճանին։

Ե.

Եթե վերցնենք հալ-խեթական հնարավոր հնչյունական և հնչյունաբանական պլերը, ապա կարելի է մատնանշել հետևյալը։

Հայոց լեզուն չի սկսում բառեր r(ռ) բաղաձայնով, ինչպես և խեթերենը, բայց նույն հատկությունը ունեցել են նաև սրարատերենն ու խուռիտերենը, մասամբ և վրացերենը, այնպես որ նրման բացառական հողը r(ռ) հնչյունի համար բառակզբում կար Հայաստանի տերիտորիայի և նրան շրջապատող լեզուների մեջ, էլ չեմ խոսում այն մասին, որ նման երևույթ կա և փոքրասիական մյուս լեզուների մեջ (լյուդիերենում և լյուկիերենում), չհաշված դևռ էտրուսկերենն ու բասկերենը: Հետո, մենք գիտենք, որ հայոց լեզուն հնդեվրոպական լեզուների b, d, g ձայնեղ բաղաձայնների դիմաց ազգակից բառարմատներում տալիս է խուլ պալեթականներ, իսկ նմանը մենք տեսնում ենք նաև խեթերենում: Մինչև իսկ վերջինիս մեջ նաև ձայնեղները փոխանցվում են խուլերով, մանավանդ երբ դրանցից հետո գալիս են e կամ i ձայնավորները: Օրինակ, išpanda «գիշեր», բայց ispanti «գիշերը», ночью (տրակ. հ.), dāi «գնում է, վերցնում է», բայց tianzi «գնում են, վերցնում են», dagan «գետին», բայց և tekan(id) նման մասամբ գրաբարի „d" բաղաձայնի վերածման „t"-ի, ինչպես աճդ «там, այնտեղ», բայց աճոի «оттуда, այնտեղից» («ի» ձայնավորի այդ բացառական հոլովի ֆունկցիան ունենք և ասա «այստեղ» և ասաի «այստեղից», ուստ և ուստի):

Հայերենում հաճախ է լինում դ ‖ ձ հնչյունափոխումը, ինչպես յորդ և յորձանք, խնդանմ և հնձենում, խանդ և նախանձ (նաժանց է), փոխինդ և փոխինձ, գավառական բնդորել, «մի կերպ կարել, կարկատել» և բնձորել..., խեթ. ḫatr- «գրել», վրաց. xvedri «բաժին» (< xedri, ինչպես čvartali < ճարտար բառից). հայոց հերդ „очередь" գրար. հերթաճիմ (հերձեմ, հերձում) և այլն, ուր հիմնական իմաստն է „разрезать, высекать, разить", որից «գրել բևեռագիր տառերը», հետո «բաժին, մաս» և «հերձել, разить» (> հերդ> հերթ „черед"): Խեթերենում ևս սովորական է d(t) ‖ z փոխանցումը, մանավանդ դերբայական -anda (anta) և -anza, համեմատել նաև ispanda ‖ ispanza «գիշեր», ispard- ‖ isparz- «գորբս պրծնել», ad- ‖ az- կամ թե ed- ‖ ez- «ուտել», tesḫa «երազ» և zasḫa- (<*dasḫa) -id և այլն: Մինչև իսկ հետագայում, հունա-հռոմեական շրջանում ունենք փոքրասիական անդանունների Nazianzos և Nadiandos, Zizimēnē և Dindumēnē: Փոքրասիական z-ի դիմաց, որ պալեթաշփական dz (ts) կամ dž (tš) մի հնչյուն էր, հայերեն ազգակցական բառերում, ինչպես և փոխառություններում, ունենք ծ, -nz տալիս է հայոց նջ: Այդպես է ընդհանրապես հարաբերությու-

նը և մյուս հին լեզուների (ութարտերենի, խաուխտերենի, ակկադերենի) հետ։

Հայտնի է, որ հայերենում «ու» ձայնավորից հետո հոլովման և խոնարհման ժամանակ չի ավելանում «յ» (և «վ», «ւ»), որը ըստ նորմալի պետք է լիներ։ Օրինակ, «ու» հոլովման ժամանակ դգնստ (ուղ., հ.), դգնստու (ս.—տր.), այնինչ սպասելի էր դգնստոյ։ Այդպես և խոնարհման մեջ — թողում, թողուս, թողու (փոխանակ թողո-լ), թողումք, թողուք (փոխանակ թողո-լք, թողոլք) թողուն։ Նման երևույթ կա և խեթերենում, օրինակ Telipinus անունից տրակ. հոլովը պիտի լիներ „i" ձայնավորի հավելմամբ Telipinui, բայց իրոք կա միայն Telipinu, և կամ թե այլ հոլովման սխեմայով է գնում և տրական հոլովը լինում է Telipini, ինչպես այդ տեղի է ունենում նաև գրաբարում (օրինակ «մարմին» բառը ենթարկվում է «ո» հոլովման, բայց տրականը որպես ներդրական չի լինում ի մարմնոյ որ բացառական է դառնում, ուստի այդ ներդրականը կազմվում է «ի» հոլովման ձևով՝ ի մարմնի)։

Մենք դիտենք նաև, որ գրաբարում «ի» ձայնավորով վերջացող բառերի մեծ մասը հոլովման բունը («թեմա») է ստանում «եա» կամ «եւ» (ea ‖ wo), օրինակ, բարի — բարւոյ, բարւով, բարւոց, բայց և բարեաւ, բարեաց, բարեաւք։ Ենթերենում կա *ia ‖ ua* ալտերնացիա, օրինակ, հետևյալ դեպքերում -ziladia և zziladua «ապագայում», *ḫuia-* *ḫuwa-* «վազել՝ убегать», Assua (Aššuwa) և կլասիկ Asia *Ասիա* (ըստ E. Forrer-ի) և այլն։

Վերջապես մեր գրաբարում որոշ դեպքերում դեռ զգացվում է «հին հնդեվրոպական» լեզվատիպերի օրինակով բալտյմատներին e ‖ a (<o?) ալտերնացիան (чередование), ինչպես —կին (<gena-ից) և կանայք (gana-), վից և վաթսուն (>վաց-սուն ձևից տարբեռնոթյամբ), ճճնում, որ դառնում է և ճիճնում «հյուսում եմ», բայց կա նաև հաճում նույն նշանակությամբ։ Ենթերենում այդ e ‖ a փոխանցումը սովորական է օրինակ et- ‖ -at «ուտել» ep- ‖ ap- «բռնել, պահել» es- ‖ as- «նստել» es- ‖ as- «լինել» kest- ‖ kast- «քաղց», vek- ‖ vak- «խնդրել» tekan ‖ dagan «գետին» և այլն և այլն, թողած դեռ բառակզբի e ‖ a ձայնավորների սովորական փոխանցումը, որ շատ ուժեղ էր նաև խուռիտերենում և տակա է նաև հայոց լեզվում մանավանդ «ղ» (ɣ) և «ո» բաղաձայններից առաջ։

Եթե վերցնենք դրաբարի բառակապակցական շարահարութիւնը, ապա ակառեղ ակներև է դառնում այդ լեզվի աղերսը ոչ միայն խեթերենի նման տիպոլոգիայի հետ, այլ նաև ուրարտերենի և խաւտերենի հետ։ Մի խոսքով այդ լեզվական երեւոյթի համար հայ լեզվի ձևավորման ընթացքում նպաստավոր տիպոլոգիական հող կար։ Մեր լեզուն, ի տարբերութիւն հնդեվրոպական լեզուների, իր ինքնուրոյն բառերին կցում է վերջից դերանվանական էնկլիտիկաներ, այսինքն՝ դերանուններ, որոնք մասնիկի դերում են հանդես գալիս, թեև կան նաև իմաստի նաև ինքնուրոյն դերանուններ։ Այդպիսիները մեր լեզվում u, դ, ն հոդերն են, որոնք երեք նշանակութիւն ունեն — ցուցական, անձնական և առոգական, այն տարբերութեամբ, որ u վերաբերում է առաջին դեմքին դ՝ երկրորդ և ն՝ երրորդ, և ուրեմն հայրս ձևը գրաբարում կնշանակի թե «այս հայրը» (խուռրին մոտ), թե «ես (որպես) հայր» և թե «իմ հայրը»։ Աքմէնյան բարբառներում և գրական լեզվում իշխում է այդ վերջին նշանակութիւնը։ Բայց այդ s, d, n հոդերը, ի տարբերութիւն աքմէնյան բարբառների և գրական լեզվի, գրվում են ոչ միայն անունների վրա, այլ նաև բայաձևերի վրա, ինչպես օրինակ՝ «որ շարժին և փոփոխի չէ էական» (Եղնիկ), այսինքն՝ այն (-ն) որ շարժվում է և փոփոխվում, էական չէ, «որ չարագոյն ևս է քան զոր գրեցաքդ (Եղիշէ)— որ ավելի վատ է, քան այն, որ ահա (ձեզ համար) գրեցինք, և այլն և այլն։ Խեթերենում, ինչպես և խաւտերենում ու ուրարտերենում ոչ միայն դերանվանական մասնիկներ («հոդեր») են կցվում, այլ նաև շաղկապներ և այլ ձևական բառ-մասնիկներ, այն էլ թվով ոչ միայն մեկ հատ, այլ մի քանի, երբեմն մինչև հինգը, նման կցական տիպի լեզուներին (համեմատել թուրքերեն ev-ler-imiz-da-ki «այն որ մեր տներումն է» նման մեր Արարատյան բարբառի՝ տըն-ներ-ում-ս). Համեմատել խեթերենում kisri-mi «անուրջում», n-aš-ma-mu „и-он-же-мне", uppi-warat-mu «տղարկիր— այն ինձ», išt:ma-šin-ta-at «լսեիք-և-այն (նրանց)» kuenzi-uš LUGAL-us ḫuiš-nuzi-ta-aš LUGAL-uš „убивает-их царь, освобождает-ли-их царь" (այսինքն՝ թագավորին է իրավունք վերապահված ապահովել հանցավորին, թե ազատել, Code hittite, § 198, էջ 148, Հրոզնու հրատ.), maḫḫan-ma-wa-mu-kan „когда-же-мол (дескать)-мне-кап (?)", որը նախադասության սկզբում է լինում։ Գրաբա-

բում, ինչպես դիտենք, ալդպիսի շաղկապներ և այլն, որպես մասնիկներ, չեն կցվում, բայց ձևականորեն անկախ բառերով կարող է նմանը արտահայտվել, ինչպես կարդում ենք նիշևի մոտ «բայց սակայն թէպէտ և ամենայն դործս այս դժնեալ էին...»:

Այս կցականության կապակցությամբ կուզեի մատնանշել և մի ձև, որ այժմ չի պահվել, բայց կա դրաբարում և խեթերենում: Այդ չնր միացումն է, որ նշանակում է «դնե, չ-», օրինակ «չնե էր ուրուք ձևոն արկեալ յալանի լինկոգինա (ոչ որ դնե չէր ձևոք մեկնել հալանատես եկեղցու վրա), «չնե իցէ հաւտ խօսեալ մինչ դու երիցս ուրացիս լիս» (դնե աքաղաղը կանչած չի լինի, երբ դու երեք անդամ ինձ կուրանաս) և այլն: Խեթերենում այդ «չնե» կապակցության դիմաց կա nā-wi, օրինակ kuitmanza-as-kan LUGAL-iznanni nāwi ešari «երբ նա (-as) դնե չէր նստել (գահի վրա) թագավորելուց և այլն: E. Sturtevant-ը (H. Gl. 108) թարգմանում է nawi (nawwi) „notyet", այսինքն «չէ դնե»: Այստեղ խեթ. na= հայց չ, իսկ -wi= հայց եւ:

Հայերենում (դրաբարում) մի շարահյուսական — համաձայնական հարվածություն դիպք կա, երբ հատկացուցիչը փոխանակ սեռական հոլովով դրվելու, փոխում է այդ սովորական հոլովածևը հատկացյալի հոլովածևի, մի երևույթ, որ կա խեթերենում և ուրարտերենում, իսկ խուռիերենում և վրացերենում հատկացուցիչը իր հոլովածևի վրա (սեռ. հոլ.) ավելացնում է նաև հատկացյալի հոլովածևը: Այս մասին մանրամասն կխոսվի ուրարտական լեզվի և հայերենի միջև եղած աղերսի հատվածում:

Քննենք նաև հոլ-խեթական բառակազմության ձևերը, որոնց համընկնումները կարող են և դիտելիկ նշանակություն ունենալ: Այստեղ մեզ պիտի հետաքրքրեն երեք ձևաբանական միջոցներ — բառաբարդության, բառակրկնության և ածանցավորումը:

Բառաբարդման մեջ նշանակալից է այն տարբերությունը, որ երբ հայց «որոշիչ բարդության» մեջ (compositum determinativum) առաջին անդամը՝ կոմպոնենտը լրացնում և որոշում է երկրորդի իմաստը, խեթերենում մեծ մասամբ հակառակն է տեղի ունենում: Օրինակ, մենք կասենք «լալնաթիա» (=չղջիկ), կարճաթև և այլն, բայց խեթերենը տալիս է pittarpalḫis, որը ինչոր թռչուն է և տառացի նշանակում է «թևալայնը», նման հունաց և վրաց բառակազմության դասակարգության (համեմատել վրաց ფეხმრავალი phexmravali „многоножка", տառացի «ոտաբազումը» — հինդանի է ბირუთყვი pirutḳvi «եղնատուն», տառացի

քերանը չխոսող = անասուն և այլն, հուն. metropolis «մայրաքաղաք», որ հայերենի ճիշտ բառակազմությամբ պիտի ունենանք՝ քաղաքամայր, այսինքն՝ քաղաքների մայր, ուր այդ մայր բառը առաջին կոմպոնենտով կոնկրետացվում և որոշվում է թե ինչի՞ մայր)։ Հունարենում կարող է երկու ձևով էլ կազմվել Dorotheus «տուրք աստծո» և Theodoros «աստվածատուր» և այլն։ Համեմատել և խեթ. siwanz-annis «աստվածամայր» (annis «մայր»), gamar-suwanza «համփուշտը լիքը», с наполненным пузырем (?), hurpastanus «տերևներ», բայց ըստ իս, ավելի շուտ «տերև» կամ «ծաղիկ» (hurp-) «արևի» (dIstanus, հայց. dIstanun), այսինքն՝ «արևածաղիկ» (խեթ. «ծաղկարև»)։ Կա խեթերենում և բարդությունն կոմպոնենտների հավասարությամբ (dvan-dva), ինչպես huhhahannis «պապը-տատը» (huhha «պապ», hannis «տատ»)։

Մեր բառարարդությունները արմատի կրկնությամբ, որ մի տառնյակից ավելի փոփոխականներ են, ավելի են համընկնում խեթական նմանների հետ։ Օրինակ, մեր փորփորել, խարխարել և նմանների դիմաց ունենք խեթ. partipartiskizzi „щиплет, дерет (?), paripparāi- «փչել երաժշտական փող» (պարզ parai- «փչել» և բորբել կրակը, վառել»), suksukkia- «կաղալ, хромать» (կենդանու մասին), kurkuria «քրքրել» և kuskuss- (kuskuszi, kuskussanzi) «խառնշտորել» (mix) և այլն։ Հայկական փափագիմ, տատանիմ և նմանների դիմաց ունենք խեթ. ku-kkurske «կտրել», ha-harsananza «փչացրած», hal-halt-umari «վնիմ անկյան», hu-hur-al- երաժշտական գործիք է, pa-ppars- «ցնցղել» և այլն, և այլն։

Հայոց կրկնությանն այն տեսակը, երբ երկրորդ կոմպոնենտն է ձևափոխվում, կորցնելով արմատի առաջին բաղաձայնը, ինչպես շաղփաղփիմ, հալթալթիմ, լորջորջիմ և այլն, խեթերենում նույնպես գոյություն ուներ, ինչպես ցույց է տալիս hand-and-ātar գոյականը, որ ևս թարգմանում եմ «նախանձ, рвение, ревность»։ Վերջապես մի կրկնություն էլ կա, որ հայերենում քիչ է պատահում, ինչպես ծիծաղ, բայց խեթերենում հաճախ է տեղի ունենում, ինչպես memal «ալյուր», mal- „молоть"- sesar-ul «քամոց (фильтр), vevakk- «խնդրել» (պարզ vek- արմատից). թերևս zi-zzahi- ծիսական մի խմիչք է։ Այս բարդության ձևը ըստ A. Meillet-ի համարվում է «իսկական» հնդեվրոպական։

Բառակազմությունը հայերենում, ինչպես և խեթերենում մեծ մասամբ տեղի է ունենում վերջամասնիկների (suffix) ձևով, որոնցով իսկապես ստեղծվում են բառաբները (основы)։ Այդ երկու լե-

դուներում ևս տեսնում եմ առնվազն վեց վերջամասնիկ (վերջածանց), որոնք կարող են վիպել և դրանց աղբակցութիլան մասին։ Առաջին ածանցն է մեր -աւղ (ծնաւղ, դրաւղ...), որ հետո դրվում էր -ող, և խեթ. -atalla։ Սլավոնական լեզվում սրանց համապատասխանում է -тель (создатель, творитель, свидетель և այլն)։ Խեթերենում շատ են այդ կազմութիլունները, ինչպես -wisuri-skatallas «ճգմող, մղող», weskatallas «վերգտացող». weḫesgatallas «պահակ», uskiskatallas «հսկիչ», unattallas «վառճառակառն», mania-ḫḫatallas «կառավարիչ» (governor), ḫalugatallas «դեսպան» և այլն։ Այդ ածանցով առնդվում են nomia agentis, գործող անուններ։ Մեր ածանցը -աւղ awł առաջացել է -atl-ից և, ինչպես տեսնում ենք իր „a" սկզբնական ձայնավորով ավելի մոտ է խեթականին, քան սլավոնական -тель-ին։ Հայերենում -ātl այսպես է դառնում -աւղ -awł, ինչպես -atr> -աւր -awr (mātro-s> մաւր mavr, arātron> արաւր arawr և այլն)։

Երկրորդ՝ հայ-խեթական վերջածանցը պետք է համարել -uman, որով հայերենում արտահայտվում է բայի գործողութիլունը— ուսումն (учение), շարժումն (движение), սայթաքումն (скольжение) և այլն, որոնց բունը խոպատես լինում է usuman-, šaržuman- և այլն։ Այդ -ում(ա)ն մասնիկի խմաստը շատ ճիշտ է տալիս ռուսաց -ение. -ание մասնիկը։ Խեթերենում այդ բայանուններր ուղղ. (հայց.) հոլովում ունեն -ummar (-umar), իսկ մյուս հոլովներում դառնում են -umn (-<uman), որի հետ պետք է կապել և հայոց -ումն (-ուման) ածանցը։ Այդ -um(m)ar ածանցի հին ձևի փոխարեն հետագայում լինում է նաև -uwar, ընդ որում „u" ձայնավորը կարող է լինել կարճ (u) և երկար (ū)։ Օրինակներ -tarnumar կամ tarnuwar «թողնելը, „пускание", annanuwar «հրահանգումն», arkun'(w)ar «աղոթելը, խնդրելը», duškudumar «ուրախանալը» (sich freuen), laḫuwar «հեղումն, излияние» wassuwar «հագցնելը», wasdumar «հանցանք, ոճիր», waḫnumar «դառնալը, դարձը», tepnumar «ցածացում» և այլն, և այլն։ Խեթերենում „r" հնչյունը վերջում շատ դեպքերում է փոխվում թևք հոլովներում „n"-ի, ինչպես harnammar «խմորում, դրդում», բայց այսահղից նոր բայ է կազմվում ḫarnamnia- «դրդել», ḫilammar «նախասգավիթ» (паперть у храма), բայց սրակ. հոլովն է hilamni կամ hilamna, համանապես ḫilatar «դուռը, բակը», որից սեռ. հոլ. (<*hilannas), (<*hilatnas) paḫḫur «կրակ», բայց սեռ. հ. paḫḫwenas, սրակ. paḫḫuni, որպիսի բնից paḫḫunali «օճախ» (իսկապես կրականց) և այլն, և այլն։ Գրաբա-

բում ևս կար այս r ‖ n փոխանցումը— մանր (<*մանուր), գործ. մանումբ (<manun-b), մանունք, մանունց և այլն, այդպես նաև փոքր, թանձր, քաղցր և այլն:

Երրորդ՝ հայ-խեթական ընդհանուր վերջածանցն է -asti, մի հատկություն, որ գոյականացում է նման ուսանելենի նուրն -ocmь ածանցին (мудрость, ловкость, мягкость...): Հայերենում այդ ածանցը լինում է -ust (փախուստ, թաքուստ, գայուստ, ապրուստ..., հարուստ).— -est (ուտեստ, պահեստ, բոյց և պահուստ), -ist (հանգիստ): Համեմատել խեթ. palhasti «լայնք», dalugasti- «երկարություն» (долгость) և այլն: Հայոց այդ բառերի հոլովմամբ „I" հոլովմամբ (փախստի, փախստիս) ցույց է տալիս, որ հնում դրանք հնչվել են խեթերենի և ուսանելենի նման -sti (-osti, -esti, -asti):

Չորրորդ՝ հայ-խեթական ընդհանուր ածանց է թևրևս -ul, ինչպես խեթ. wastul «հանցանք» (wast- «հանցանք գործել»), taksul «համաձայնություն» (taks- «կապել»), sesarul «փառատ քաջոց», ishiul «դաշնագրություն» (ishia- «կապել») և այլն: Հայերենում թևրևս դրան համապատասխանում է իւղ iwł ածանցը երկիւղ և քնդիւղ բառերի մեջ:

Հինգերորդ՝ հայ-խեթական ընդհանուր ածանց է -ուճ (-uč) և խեթ. -uzzi, ինչպես հայերենում ունենք— պարկուճ «դրսի կեղև պարկի պես» (гильза), ախուճ «խաղաղնդակ» (ափ „ладонь" բառից), ճաւուճ— Ղարաբաղում այն հատն է, որի մեջ դնում են միս, սոխ և այլն ամրողջապես եփելիս, դառնուճ— Աշտարակում մի անասի դառն բույս՝ դաշտերում աճած, թաղիուճ (Արաբ., Ղարաբ.)— այն մազերը, որ ստացվում են սանրելիս, բրդուճ «հացի բրդուճ, փրթոշ, кроха» և այլն, և այլն: Համեմատել խեթ. -uzzi մասնիկը, որով նման բառեր են կազմվում („instrument nouns", „Gera" tenamen), ինչպես apuzzi «կավ, ճարպ» (clay, tallow), kunkunuzzi «գիտորիա» (քար է), laḫurnuzzi կամ laḫurnuzi «գոհասեղան», ishuzzi «կծիկ», ispantuzzi «հնդուկ վերցնելու մի գործիք» (դգալ, черпало), warpuzzi- բրոնզի մի տեսակ է (warp- «լվացք անել»), dupuzzi «տախտակ (դրելու)» և այլն, և այլն: Հայոց այդ -ուճ ածանցը երկվորյակն է -ին նմանանպատակ ածանցի, ինչպես -կաւին, -լուին, կարին, կտրին, դաճին, պատաղին և այլն: Ի դեր է E. Sturtevant-ը ճգնում իր A comparative grammar of the hittite language. գրքում (էջ 155) այս փորրասիական ածանցը հանել «հընդեվրոպա-հնդիկական» tis մասնիկից ավելացած "u" աճականով, որը իբր

թե բառաքնի վերջին ձայնավորը կարող էր լինել: Այդ -uz ածանցը կարելի է անանել և ուրարտական armuzi բառի մեջ (անունդ ?), թողած դնե pulusi «քարահոթող» (pul «մեծ քար», որ կա և հայերենում պաղ ձևով, ինչպես պաղանձաւ և այլն), որը փոխառություն է ակկադերենից (pulu, palu «քար»):

Վերջերում՝ հալ-խեթական փոքրասիական ածանց է -and(a ‖ -anz(a), որ դրվում է բայարմների վրա չեզոք (կրավորական) անուն ներկա դերբայ ստանալու համար: Ինարկե հայերենում այս երևույթը վաղուց մեռած է, միայն հնագույն հետքեր են մնացել: Բայց խեթերենում այդ -anda ‖ -anza ածանցը դրվել է նաև գոյականների վրա, հատկապես ժամանակ ցույց տվող անունների վրա, որ հայերենում նույնպես վերապրուկներով է մնացել, որպես անհասկանալի մնացորդ: Հայերենում, օրինակ ունենք եղել մակայ դրծածված աւ-իմ «մոլեգնել» բայը, որից աւող (նաև աւողական), աւելոց, աւեալ, աւիւն, բայց նաև դերբ. աւանդիմ բայը նույն նշանակությամբ, որը կազմված է aw-and «մոլեգնող» դերբայական ձևից: Այդպես նաև ահ(<արհ) «վախ» բառից ղ-ահ-անդ-իմ «վախենալ, խրտնել», ուր ah-and իսկապես նշանակել է «վախեցող, վախկոտ»: Այդ -and ածանցի իմաստը դեռ ղգացվում է հիւանդ և պա(ն)տանդ բառերի մեջ, բայց, օրինակ, կենդանի բառի մեջ արդեն մեռած է (եղել է ki-and «ապրող» կամ «կենդանի, живой», հետո ավելացել է -ani մասնիկը): Երբեմն թվում է, որ այդ -and ածանցը, նման -und ածանցին, որպես վերջինիս փոխոխակը, գոյականներ է ստեղծել բայերից, ինչպես ունենք հառնդն հառ բայից, էլ չեմ ասում շուանդ (շրուանդ) «ողկուզի չանչը» և աւանդ „легенда, залог“ բառերի մասին, որտեղ այդ -and-ի գոյությունը պետք է դեռ ապացուցել (շրուանդ-ի համար համմ. խեթ. šuwa- «ճգմել, թափել», դուրս մղել» որից šuwanza= շուանդ ?): Համեմատել նաև խառն-ադ-անջ (էջ):

Բայց և մենք ունենք և այդ -and մասնիկի ալտերնատիվ -anz ձևը, որը, ինչպես ասվել է, հնչվել է խեթերենում -anč (ըստ Վինչների), ինչպես ցույց է տալիս նաև հնդկերենից փոխառյալ panzawartana «հնդապատիկ» (արխայան panča «հինգ») բառի գրությունը: Հայոց նահանջ, զօրանջ, լօրանջ բառերը կազմված են nah- (համմ. ուրարտ. naḫubi ?), ław- և jawz- բայարմատներից, թևերս վտարանջիմ «ապստամբել, գլուխ քաշել» բայը նախկինում նույնպես եղել է vtaranǰ- կազմած vtar- բայից: Բայց

հայերենը խեթերենի նման ունի -(and) ‖ -anz (=-անջ) մասնիկը նաև ժամանակ ցույց տվող անուններին մեջ, որոնք անուններից են ածանցվել։ Այդպես տիւ «օր» բառից ունենք սեռ. տր. տուրնջան (tæw-ənj-ean), միշտ, բառից՝ մշանջեան և վաղ բառից՝ վաղնջուց, ի վաղնջնճ հետէ և այլն։ Համեմատել խեթ. ḫameshanza և ḫameššanda «գարուն», gimmanza և gimmanda «ձմեռ» (gimma<gima «ձմեռ» կամ «ձիւն» հնդեվր. արմատից). zēnanza «աշուն» և պարզ zena-(id). ispanda (տրակ. ispanti) և ispanza «գիշեր», siwaz (UD-az, տրակ. siwatti) «օր», որը թևրևս եղած լինի *si-wanza, բայց այս ձևով կա sivanza «առաւօտ» (?), որը կարելի է պաշտպանել հայոց tiw «ցնծութիւն» և слав, дньо, լատ. deus, իրան. dew և այլ աղգակից բառերով, որ «ցնծութիւն, օր և առաւօտ» կարող են մի բառաձև ունենալ։ Հայտնի չէ միայն խեթ. tesi բառի ճիշտ իմաստը, որը թևրևս «առաւօտ» է նշանակում (հայտնի է միայն, որ այդ ժամանակ ամպրոպ է լինում)։ Ունենք նաև wettanza «տարի» (տրակ. wetti)։ Հրոզնին մի ժամանակ այս ժամանակի բառերի -anza մասնիկը ևս ուզում էր ներկա դերբայի anza ‖ anda մասնիկի հետ նույնացնել ասելով „Das Wort [ḫameshanza] ist ein Partizipium, wieja die hethitischen Zeitausdrücke uberhaupt gerne die Partizipi-albildung auf -anza annehmen“ (Bogh. -St., IV, 90, прил. 4. Die spr. d. H., 88, прим. 2)։ Այս տեսակետից շատ ուշագրավ է ընդհանուր լեզվաբանության տեսակետից ևս, որ այժմյան նոր հայերենը նույնպես մտածողության մեջ ստեղծել է այսպես ասած «ժամանակի կատեգորիա», ևնթարկելով ժամանակի ամեն տեսակ բառ. ինչով էլ որ վերջանա, տեսական-տրականում -ա և այստեղից բաց. հոլովում -ան ունենք ձմեռ — ձմեռան, օր — օրվա, տարի — տարվա և այլն)։

Դ

Գրաբարի թևքումը՝ հոլովում — խոնարհումը, ինչպես և թևքուլթևները, որոշ, թևկուզ և քիչ, նմանություններ ունեին։ Նախ, հայոց լեզուն վաղուց կորցրել է սեռերի դասությունը, թեպետ ամենք -ա սխտեմի հոլովման մեջ ցանկանում են տեսնել արական սեռի վերապրում (բարի, բարւոյ, բարւով, բարւոց, բարւովք), իսկ -ea (<ia) սխտեմի մեջ՝ էգական սեռի վերապրում (բարի*, բարեալ) (Տիգրանուհեայ, բարեաւ, բարեաց, բարեաւք)։ Ընդհան-

բառիս ասած, հալ լեզվի շրջապատում, ինչպես խեթական լեզվում՝ թե՛ բևեռադիր, և թե՛ հիերոգլիֆ, ուրարտերենում, խուռիտերենում և վրացերենում այդ սեռերի տեսակետից նպաստավոր հող չի եղել։ Խեթերենում միայն տարբերվում է արական — իգականը միասին և չեզոքը, ալն էլ շատ թույլ, իսկ մյուսներում (վրացերենում և խուռիտականում — ուրարտականում) այդ հնչին տարբերակումն էլ չկա։ Եվ խեթերենը, որ չդիտեմ ինչու անվերապահորեն կոչվում է հնդեվրոպական կամ մի առանձին ներկայացուցիչ այդ լեզվա-ընտանիքի կողքին[1], ունի բազմաթիվ ոչ հնդեվրոպական տարրեր, թերևս ավելի քիչ, քան հալերենը։ Բառամթերքի տեսակետից տեղական, միջբրասիական մասը գերիշխում է թե՛ հալերենում և թե՛ խեթերենում։

Հոլովումը հալոց լեզվում, մանավանդ եզակիում, տարբերում է ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական հոլովաձևերը, եթե նկատի ունենանք և դերանունները, ինչպես եզակիում, այնպես էլ հոգնակիում։ Այս ձևերի շատութլունը նպաստավոր հող է ունեցել հալերենի շրջապատ լեզուներում, այսինքն հալերենը իր գոյացման ընթացքում ունեցել է բազմահոլովաձև լեզվաակունքներ։ Օրինակ, վրացերենը ուներ ուղղական (-i), սեռական (-is), տրական (-s), ակտիվ — սուբյեկտական (-man), ուղևորական -allativus (-ad) և գործիական (-ith), որը և բացառական է։ Ալդչափ հոլովաձևեր ուներ և խեթերենը՝ ուղղական, սեռ., տր., հայց., (-n), բաց. (-az), և գործ. (-it, -i), նմանապես ուրարտերենում՝ ուղղ.— ակտիվ (-s, se), սեռ. (-i), տրակ. (-e), հայց. անձ (-n), ուղևորական (-d) և գործ. (-ini)։

Խեթերենում դերանուններն ունեն հոգնակի սեռական և բացառական հոլովներում -ēnzan (<-e(n)dan), որի դիմաց դրաբարում ունենք բացառական -ēnǰ, ինչպես մեզնէ և ձեզնէ (համեմատել խեթ. šumenzan «ձեր, ձեղնից», apēnzan «նրանց, նրանցից», kēnzan «սրանցից»), թերևս եզակի բացառականի -az ձևին հալերենում համապատասխանում է գրաբարի -ոջ (-oǰ) ձևը, որ հնում ունենք «նմոջ», բայց և -չ (ǰ) ձևով «դեղջ» սեռականներում,

---

[1] Տես. խմբ. Խեթերեն լեզվի հնդեվրոպական բնույթը նորագույն հետազոտություններով կարելի է հաստատված համարել, հետևապես պրոֆ. Գ. Ա. Ղափանցյանի թերահավատությունն այս հարցում հնացած պետք է համարել։ Այս մասին տե՛ս *В. Георгиев*, Исследования по сравнительно-историческому языкознанию, Москва, 1958.

ալնպիսի իմաստական անցումով սեռականից բացառական. ինչպես այդ անհնում ենք, օրինակ, այժմյան ֆրանսերենում, ուր սեռականը նաև բացառականի ֆունկցիա է կատարում:

Հայերեն դերանունների հոլովման ժամանակ երբեմն վերջում ածելադիր կերպով կցվում է -իկ (ik) մասնիկը, օրինակ, այս, այսր, այամ, այսու, այսք, այաց, այս, այսուք և մյուս կողմից՝ այս. այսորիկ, այսմիկ, այսուիկ, այսոքիկ, այսոցիկ, այսոսիկ, այսքիւք (<*այսովքիկ): Այս -ik կամ -k մասնիկը ունի նաև խնթական դերանունը, ինչպես tu-k «քեզ» (գրում է և tu-g), zig (zik) «դուն» ammug (ammuk) «ինձ, ես», երբ կա և uga «ես» ուղղականը: Համեմատել լատ. hi-c «այս» haec, hoc. սրակ. hu-ĭc, դոթ. —բաց hō-c:

Թևրևա խեթ. գործիական -it, -i (հիերոգլիֆ. խեթ. -ta) և վրաց -ith նույն գործիական հոլովաձևի կապակցությամբ է առնվել նոր հայերենի և մի շարք բարբառների (հյուսիսային -g (-ç) վերջավորությունը, ինչպես՝ քաղաքից, դյուղից.... բայց ոսկուց, ասեղուց և այլն, th (թ) բաղաձայնի անցումով ç (g) բաղաձայնի: Համեմատել բարբառային մանկուր «մանկուց», ճիճուր կամ ճըճուր «ճիճուց և նման -ուր վերջավորությամբ բառերը, որը բացառականի ֆունկցիա ունի, ինչպես և հին վրացերենում ჭალაჭი-თა ჭალაჭად (քալաքիթա քալաքադ էի քաղաքէ ի քաղաք» Ափոտարանում): Համեմատել լատ. ablativus (բացառական) հոլովը, որը և գործիական է (instrumentalis):

Հայոց լեզվի բայի թեքություններն ունեն խառն դասայնություն՝ հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական: Անթերևնի կապակցությամբ այստեղ ևս կանգ կառնենք ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքի «է» (j) ձևի վրա, որ հանդում են հնդեվր. -ti վերջավորությունից երկու ձայնավորների միջև, իբր հին bhereti > բերեթի > բերել > բերէ «բերում է»: Այդ «է»-ն մաքուր կերպով երևում է «ա» և «ո» խոնարհման մեջ (կարդամ, կարդաս, կարդալ, դամ, դոս, դոլ): Անթերևնի բայերը ներկա ժամանակում երկու տեսակ են խոնարհվում, օրինակ, ep- «բռնել» արմատից՝ epmi, epsi, epzi, epweni, epteni, apanzi այս այսպես կոչված „mi" խոնարհումով է, իսկ կա և chi խոնարհումն, ինչպես sak- «իմանալ» արմատից՝ sakhi (I դ.), sakti (II դ.), saki (III դ.), sakweni, sakteni, sakanzi կամ dā- «վերցնել» բայից՝ daḫḫi, datti, dāi և այլն: Ինչպես տեսնում ենք խեթերեն այդ երկրորդ խոնարհման (-hi խոնարհում) ժամանակ ներկայի եզակի երեք դեմքերը ունեն միան-

գամալն այլ ձևեր. սրամադծորեն տարբերվող մյուս „mi" կոչվող խոնարհումից՝ եվ որքան տեսնում եմ, այդ -hi, -ti, -i ձևույթների ծագումը հնդեվրոպական լեզուների սովյալներով չի բացատրվում և կամ համոզում: Ըստ իս խեթ. այդ „i" (i) III դեմքի թեքույթը պիտի կապել հայոց նույն մասնիկի հետ, և գուցե կապակցել նաև խառ. tatia «սիրում է» (<tatiai ?) խեթ. վերապրուկային paršia (<parsiai ?) «փշրում է», ուրարտ. a-li-e «տալիս է», (=alē)՝ Անթիերենի այդ խառն լեզվական բնույթը, թե՛ մասամբ քերականության թեքման տեսակետից և թե՛ մանավանդ բառապաշարների, շատ լավ տալիս է Johannes Fridrich-*ը իր* „Hithitisch und „Kleinasiatische" Sprachen (1931, Berlin-Leipzig) *գրքում ասելով,* „Dass das Hethitische keine idg. Sprache im land laũ figen Sinne, sondern eine Mischsprache von der Art des Albanischen ist, steht fest. Der fremde Einfluss macht sich besonders im Wortschatz geltend. Noch ungelõst ist die Frage, aus welcher Sprache oder Sprachen die indo-germanischen Bestandteile des Wortschatzes entlehnt sind"՝ *Հալիբոնի դիրքը այդ լեզվածագման և կազմավորման տեսակետից ավելի խառն և բարդ է, քան այն նշել է Թրիդրիխը խեթերենի մասին՝*

II ՄԱՍ

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՅ ԼԵԶՎԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՆՍՏՎԱԾՔԸ (ԲԱՂԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ)

Երբ XIX դարի հենց առաջին քառորդից սկսվեց հետզհետե ձևակերպվել հնդեվրոպական լեզուների («հնդկաեվրոպական», «արիական») ընտանիքը, որի մեջ մտնում էին հնդիրանական, բալթիկ-սլավոնական, գերմանական (չորս ճյուղերով), իտալո-կելտական, հունական և այլ լեզուները կամ ճյուղերը, ապա սրանց մեջ մտցվեց նաև հայոց լեզուն։ Ալպիսի լեզվաընտանիքների թիվը հասցնում են երբեմն տասնյոթի, թեպետ դրանց ազգակցությունը յուրաքանչյուր ընտանիքի մեջ կարող է լինել մոտավոր և հեռավոր, զգալի իրենց սիստեմով և ֆակտուրայով, և թույլ՝ հազիվ նշմարելի։ Այդ ընդհանուր լեզուները սկզբում մտած են եղել մի լեզվի մեջ, որը կոչվում է «նախալեզու», «մայր լեզու», «հիմք լեզու», որից անջատվել են դուստր լեզուները։ Հնդեվրոպական «նախալեզվի» սկզբնական կրողների «նախահայրենիքը» իբր եղել է Ռուսաստանի հարավում (Սև և Ազովյան ծովերից հյուսիս) կամ Կարպատյան լեռների և Վիստվալի միջև ընկած տարածության վրա։ Նրանց գաղթը այդ նախահայրենիքից սկսվել է մոտ 2500—3000 տարի մեր էրայից առաջ, և շատ տարօրինակ է, որ «նախալեզվի» բարբառները (դիալեկտները) ունեցել են իրենց բնօրրանում նույն տեղադրումը իրար նկատմամբ, ինչ որ հետագայում դոյություն ուներ միգրացիայից հետո իրենց հեռավոր նոր վայրերում։ Ըստ արիհատարանոց Wolde-Pakorny կողմից կազմած հնդեվրոպական «նա-

Խալդիի» բառարանի այդ մասը լեզուն ունեցել է 2223 բառ-արմատ, որ թվում է արհեստականորեն չափազանցրած։ Holger Pedersen-*ը, որ նշանավոր լեզվաբան է և հայագետ, իր մի հոդվածում այդ բառարանի շինծու արմատների մասին գրում է. «Բալց վերջացական բարմատներից վերակազմումը* (construction), *որը թերևս անհրաժեշտ է* Walde-Pokorny-*ի տիպի մի բառարանում բաց տեղերից* (lacune) *խուսափելու համար, չունի այնուամենայնիվ ոչ մի ընդհանուր բան արդարացի լեզվաբանության հետ»*[1]*։ Բալց այդ հնդեվրոպական լեզուների նախալեզվական կացութլան ըմբռնումը ոչ միայն բառարմատների ճիշտ կազմի տեսակետից, այլև հնչյունաբանութլան-ձևաբանութլան շատ խնդիրներում, առարկութլուն է առաջացնում նաև ուրիշ լեզվաբանների կողմից (Մեյե, Վանդրիես, Շուխարդտ և այլն)։ Օրինակ, Վանդրիեսը խիստ է համարում հնդեվրոպական «նախալեզվից» վերականգնումը, որին քննաբար է վերաբերվում և «Մեյեն»։ Հալբերնի կազմավորման տեսակետից Մեյեն շատ մեծ նշանակութլուն է տալիս տեղական ոչ հընդեվրոպական լեզուների ազդեցութլանը, որոնք առաջ են եղել։ Նա ասում է. «Դժբախտաբար չհաջողվեց մինչև հիմա որոշել, թե որոնք են չստուգաբանված հայ բառերը, որոնք գալիս են բնիկների լեզուներից» („Esquisse", II հրատ., էջ 12)։ Նույնը նա տեսնում է բնիկների լեզվից եկող տեղդեցների և հատկապես հնչյունական սիստեմի մեջ, որ նման է հարավային կովկասյան լեզուներին, հալբերնի հոլոմների քանակի, անվանական սեռերի բացակայութլան մեջ, ինչպես պարսկերենը այդ սեռերը կորցրել է էլամերենի ազդեցութլան հետևանքով և այլն։ Հարկ է նշել մանավանդ նրա հետևյալ խոսքերը. «Հավանական է, որ երկրի հին բնակիչների լեզվական միտումները* (tendances) *լայն չափով սահմանել են հալերենի բախտը» (նույն տեղում)։ Հալանի լեզվաբան Հուգո Շուխարդտը կողմնակից էր նույն իսկ «խառնո» կոչված լեզուների տեսութլանը։

Հալանի, սովորական երևույթ էր, որ ցեղերը կամ ցեղախմբերը բաժան-բաժան էին լինում, դիֆերենցիացիայի էին ենթարկվում և գաղթում շատ հեռուները, ինչպես տեսնում ենք Ամերիկայի բնիկների մոտ։ Բալց և հասկանալի է, որ այդ ցեղերը կարող էին նոր և այլալեզու ցեղերին միանալ կամ նրանց հետ շփվել և խառնվել. այսինքն՝ տալել էթնոլեզվական նոր պրոցես՝ ինտեգրացիա։

[1] *Տե՛ս* Lingua Posnaniensis, Poznan, *1949, էջ 2։*

Եվ սրանից լեզուների ազգակցությունը միայն ու միայն բաժանումով չէր լինում, այլև միացմամբ. Եթե ցեղերի մեջ ուժեղին և բազմաքանակին միանում էր թուլը, ապա նրանք բնական է, որ կհազթեր ուժեղի լեզուն, ինչպես այդ լինում էր սովորաբար դասակարգային հասարակարգում: Ալդպիսի մի դեպք նշում է Մ. Խորենացին Վարդենի տունից ցեղի մի հատվածի և հայկական երվանդի ցեղի կամ ցեղերի միջև, երբ «Հատուած գնացեալ Վարդենս մանուկն ի Տուհաց գաւառէն զԲասող գնտով նկնալ նատեալ զՇրէշ բլրով... կռիլ կռիլ դդուեն Երուանդայ արքային, ապին միանալու երվանդին, խնամիանալու նրա հետ: Վրացական մի փոքրիկ ցեղային հատված գալիս և միանում է հայ մեծ ցեղախմբին և բնական է, որ լեզուները չէին խառնվելու, այլ Եկալու էր հայկականը: Բայց իհարկե կարող էր լինել և խառնվելու պրոցես այլ ցեղախառըութեան պայմաններում և հետևապես կստացվեր լեզուների իսկական խաչավորում և խառնում, կղոյանար մի նոր որակի լեզու, խառն լեզու (Mitschsprache) իր ժագումնական կոմպոնենտներով:

Մենք գիտենք, որ ժողովուրդների պատմությունը իր դրոշմն է գնում լեզուների զարգացման ընթացքի և որակի վրա: Ինչպես նշվել է մեր կողմից, Հայասայի ցեղախումբը ուժեղ շփման մեջ էր խեթական էթնիկալի և կուլտուրալի հետ, ինչպես և մասամբ ճանամագրևների հետ, իսկ հայ հետագայի լեզուն, որը մեզ հասել է գրավոր մոտ 1500—1600 տարի անց այդ նախնական շրջանից, լեզվական հարուստ նյութ է թողել այդ հին ժամանակից, որի մասին մանրամասն խոսվել է: Հայասայի լեզվի մոտ 15 հատուկ անուններից, որոնք մեծ մասամբ տեսանելի են, երկուսի մեջ (Terittitun-Unagast-) ևս տեսնում եմ հնդեվրոպական լեզվամեջ և արմատներ, որոնք կարծես թե նմանվում են հուռհական լեզվի նման ձևերին և արմատներին: Գիտի ենթադրել, որ փռյուգիացիների Փոքր Ասիա գաղթելուց առաջ եղել է „k" արեմտյան հնդեվրոպական լեզուների (խեթական-պալեվիական-պալայական) ազդեցությունը այդ Հայասայի լեզվի վրա: Գնաք է իհարկե հանել հնդեվրոպական այն բառերը, որոնք անցել են խեթերից և արիշներից, ինչպես օրինակ kardmiaz «ցասում», որ հայերենում կա քրթմնջ-ել (=ропгать) բայի մեջ: Բայց երբ հայասցիները գաղթում են Ուրարտուի լայնածավալ անբիատրիան, ուր հիսունի չափ ցեղեր կային, մեծ մասամբ այլևայլ լեզուներով, ապա այստեղ բնական է, որ Հայասայի լեզուն ենթարկվում է այդ նոր լե-

դուներից որոշ ուժեղ լեզուների ազդեցության, խաչավորման։ Բայց ավելի ուժեղ լեզվապրոցեսը լինում է այն ժամանակ, երբ հայասցիները ենթարկվում են կիմմերների և մանավանդ սկյութացիների (սակերի) քաղաքական և լեզվական ներգործության։ Այս դեպքում տեղի է ունենում մեր լեզվի կառուցքայ տրանսֆորմացիա։

Ես գտնում եմ, որ հայերենի հնդեվրոպացումը լինում է հենց այն ժամանակ, երբ տեղի է ունենում այս սակերի և սկյութների մուտքը Ուրարտուի այս նախկին գավառները։ Հիշենք, թե ինչպես են ցրված հայասցիները ենթարկվել մեդական պետության, որի Վարդակ (—Կիաքսար?) թագավորը իրեն է ենթարկում սկսորդի (սակյան) Պարուլրին «թագաւորութեան ձև և շուք տալով», այն Պարուլրին, որը սկյութացի լինելով արդեն միացրել և ենթարկել էր Հալտասալից ևկող ցեղերին և Վարդակի հետ գնացել էր Ասուրբանիպալի (Սարդանապալի) մայրաքաղաք Նինևվիայի վրա։ Իմ կարծիքով Պարուլրի ոչ հայկյան (=հայասական) լինելը ճիշտ է արձանագրված Հովհաննես Կաթողիկոսի պատմության մեջ, ինչպես և ակնարկ կա այդ մասին նաև Մ. Խորենացու մոտ։ Իսկ առաջին «պատակավոր թագավորը» տիտղոսը թերևս վկայում է նաև նոր էթնիկական կազմավորման մասին, երբ ցեղերը միանում են և սկսում է ֆեոդալական տիպի պետության կազմավորումը, որը վերջանում է չորրորդ դարում (VII—IV) մեր էրայից առաջ։ Իրանի հետագա քաղաքական, կուլտուրական և լեզվական ազդեցությունները պիտի համարել օտար, ոչ հարազատ ու անփոփոխ։ Մեր լեզվի իրանական բառերը բոլորն էլ փոխառյալ են։

Հնդեվրոպական այն լեզվանստվածքը, որ կա հայոց լեզվում, գալիս է այդ լեզուների արևելյան կամ «ծ» խմբից, որին պատկանում են բալթիկ-սլավոնական և հնդիկ-իրանական լեզվաճյուղերը։ Հայերենի այդ մասին ինքնուրույնը, որ ճիշտ ձևակերպից հյութշմանը, շատ որոշ և ակնթարթ է, ունի մոտ չորս հարյուր արմատներ և բառահարթարնական (քերականական) դպրի վկայություններ։ Ակնառամենայնիվ բառարմատների ճնշող մասը, ինչպես և բառակազմական ձևերի մեծամասնությունը հնդեվրոպական չեն[1], թողած դեռ այն նախատառումները, որ տվել է Մեյեն (տե՛ս վերը)։ Իմ կարծիքով հայերենի նախամատը ծագումնաբանական (դեներատիկա-

[1] Ուշ. խմբ. Հեղինակի առաջադրած այս թեզն ընդունելի չի կարելի համարել, քանի որ անհերքելի փաստերով ապացուցված է հայերենի հնդեվրոպական բնույթը։

կան) հետաքրքրություն առնելը հոգուտ հնդեվրոպականի (par excellence) թերևս միակողմանի է։ Երևան եկած նոր լեզվափաստերը և ապագայում հայտնաբերվելիքը կարող են շատ բան փոխել և գենեզիսի հարցը այլ կերպ դնել։ Լեզվական տեղային (տոհմանիշ) փաստերը, ինչպես նաև հայ էթնիկայի, կուլտուրայի, կրոնի (աստվածների) և նյութական կուլտուրայի տվյալները խոսում են հոգուտ հայերի փոքրասիական կուլտուրական ծագման, հոգուտ այդ տոհմանիշ բնօրրանի։

Այժմ ծանոթանանք հայերենի այն ստվար նյութին, որ հնդեվրոպական է և հաստատված պատմա-համեմատական ուսումնասիրությամբ։ Իհարկե կան և թվական աստղաբանություններ, որոնց մնաին նույնպես կխոսվի և կքննադատվի։ Մեր այս նկարագրությունը գլխավորապես հիմնվելու է Ա. Մեյեի Esquisse-ի (1936) վրա և օգտագործելու նաև Հյուբշմանի „Armenische Grammatik“ հոյակապ աշխատության 3-րդ՝ «բուն հայկական բառեր» կոչված մասը։ Այդ բառարմատների ուսումնասիրության տեսակետից մեծ նշանակություն տալիս նաև Հ. Աճառյանի «Արմատական բառարան»ը։ Իրեն յոթ հատորով կարևոր է Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» (հ. I, 1940, Երևան), որտեղ ընդհանուր մի հաշվեհարդար է տրված։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Ցույց տանք կառուցվածքի և ֆակտուրայի արդեն սահմանված այն հնչյունաբանական և ձևաբանական առանձնահատկությունները, որոնք բնութագրում են հայերենի որոշ կապվածները կամ հարաբերակցությունը այս կամ այն հնդեվրոպական լեզվի կամ լեզվախմբի հետ։ Այդ կապակցության մեջ հայերենը ավելի շատ հարում է հունարենին, հնդիրանականին և բալթիկ սլավոնականին։ Նշենք ամենաբնութագրելի լեզվահամեմատական յուցանիշները կամ իզոգլոսաները։

1. Հայերենը տարբեր կերպով է անդրադարձնում հնդեվր. k′ և k, kʷ բաղաձայնները նման հնդիրանականին, բալթոսլավոնականին, արտանարենին և թրակա-փռյուգիականին։ Առաջին բաղաձայնը (k′) հայերենում արտահայտվում է s (հայոց ս) շփականով, իսկ վերջինը (k, kʷ) հետնալեզվային kh (ք) պայթականով, այնինչ հունարենը, կելտերենը, լատիներենը, գերմաներենը, իռներենը և թոխարերենը այդ տարբերությունը չեն տալիս։ Օրինակ սիրտ բառը (=հնդեվր. *k′ērdi) ներկայացված է (իռ. šɨrdis, լատիշ.

sirds, *ռուս.* серд-це, *հայոց* sirt..., *բայց խեթերեն* kardis, *հուն.* kardia, *լատ.* cor-cordis, *անգլ.* heart, *գերմ.* herr, *հին իռլ.* cride. *Կամ թե օրինակ տասն (=հնդեվր. *dek'm) բառը ունեն սանս.* daçan, *լատիշ.* desmit, *ռուս.* десять, *հայոց* tasn, *իսկ մյուս կողմից՝ հուն.* déka, *լատ.* decem, *գոթ.* taihan, *գերմ.* zehn *և այլն։ Հայոց լեզուն այդ* k' *հնչյունի արտահայտման տեսակետից միանում է հնդեվրոպական արևելյան բարբառներին։*

2. Հայերենը հնդեվրոպական բառասկզբի s *շփականը փոխում է* h *շնչականի կամ բնավ չի պահում, որով նա մոտ է հունարենին և իրաններենին։ Օրինակ* hin *բառի (հնդեվր. *senos) մի բառաձև ունեն սանսկր.* sana, *լիտ.* senas, *գոթ.* sinista, *հին իռլ.* sen, *լատին.* senex, *իսկ մյուս կողմից՝ ավեստ.* hanō, *հուն.* hénē, *հայոց* hin, *կամ թե լատ.* sal *«աղ», սլավ.* соль, *գոթ.* salt, *գերմ.* salz.., *մյուս կողմից՝ հուն.* hal-s, *հայոց* ał *և այլն։*

3. Հայերենը հունարենի և հնդիրանական լեզուների նման առրիատի եզակի երրորդ դեմքում ունենում է e *աճականը* (ayr-menm). *ինչպես* bher—«բերել» *արմատից ունենք հուն.* éphere, *սանս.* ábharat, *հին պարս.* abara, *հայոց* berē *«բերեց»։*

4. Հայերենը գործիական հոլովի իր b *վերջավորութեամբ հարում է արիական, հունական, ինչպես նաև իտալա-կելտական լեզուներին, ինչպես՝ սանս.* -bhyas, *ավեստ.* -byō, *լատին.* -bus, *հին իռլ.* -bo, *հուն.* -phin.

5. Հայերենը հոդնակի ներգոյական հոլովում ունի s, *որը եթե ծագումնաբանորեն չի առաջացել հոդնակի հայցականի* s *վերջավորութիւնից (<*ns-ից), ապա կապվում է արիական, բալթասլավոնական և հունական լեզուների ներգոյական ձևերի հետ։ Համեմատել՝ սանս.* vṛkeṣu *«գայլերի մեջ», լիտ.* vilkùsu, *սլավ.* вльцѣху, *հունարեն* ly'koisi, *հայոց* igajls*։*

6. Հայերենը արդելական հրամայականի ժամանակ գործածում է mi *բացառական ձևական բառը նման սանսկրիտերենին* (mā), *հունարենին* (mē) *և թոխարերենին* (mā), *այնինչ մյուսները ունեն* ne*։ Լեզվաբանները այդ վերջինի հետ են դնում և խեթերեն* le *ձևական բառը, բայց դա արդյո՞ք ձևափոխութիւն չէ ակկադական (ասսուրա-բաբելական)* la *նույն ֆունկցիան արտահայտող բառի, որ կա և մյուս սեմական լեզուներում (օրինակ արաբերենում)։*

7. Հայերենը կազմում է անցյալ ժամանակի դերբայ (վաղակատար) -eal(o) *ձևով, որով և անցյալ բարդ ժամանակները եմ «есмь», էի «я был» օժանդակ բայերի հետ։ Այդ նույնը տես-*

նում ենք նաև սլավոնական լեզուներում (համմտ. մեռեալ եմ meŧeal em և հին ռուս. мерл(а) есмь)։

8. Հայերենը ունի -աւղ -awł վերջավորվող ներկա կամ ենթակայական դերբայը (ծնող, գրող...), որը համեմատում են սլավ. -тель ածանցի հետ (родитель, писатель...), բայց քանի որ սլավոնական լեզուները ունեն ոչ միայն -атель, որին մոտ պիտի լինի հայց. -աւղ (<-a-te), այլև -итель (творитель), -етель (свидетель), իսկ խեթերենում կա միայն -atal(l) մասնիկը նույն նշանակությամբ, ապա բարվոք պիտի համարել հայց ձևը կցել խեթերեն այդ -atal(l) ձևին, մանավանդ որ այդ լեզուները ունեն և ուրիշ շատ ընդհանրություններ։ Խեթերենում, օրինակ, ունենք kuššanattallaš «վարձկան» (դինվոր), išḫamatallaš «երգիչ», ḫalugattallaš «լրտեսը, вестовой, гонец", unattallas «վաճառական» և այլն։

Իհարկե, լինում են այլ բնութագրական դեպքեր այդ ընդհանուրի մեջ, ինչպես, օրինակ, perfectum-ի կազմելու ժամանակ, երբ բայարմատը կրկնվում է հնդ-իրանական և հունա-լատինական լեզուներում (հուն. pepaideka «կրթեցի», paideo «կրթում եմ», լատ. momordi «կծեցի», mordeo «կծում եմ» և այլն)։ Բայց հայերենում ունենք միայն մի դեպք. այդ առնել «անել» բայն է, որի ar- արմատը անցյալ կատարյալում դառնում է արար, այսինքն՝ կրկնվում է։

Հատկանշական է մանավանդ այն հունա-հայկական ընդհանուր հնչյունարանական երևույթը, երբ հնդեվրոպական որոշ արմատների վրա այդ երկու լեզուները ավելացնում են սկզբում a (հունարենում, նաև o)։ Այդպիսի նախադիր ձայնավորով են հայց ասող, ատամն, անուն, ամիս..., հունարեն՝ astēr, odys, onoma և այլնի համեմատ, այնինչ մյուս հնդեվրոպական լեզուները այդ հավելումը չունեն։ Զպիտի սրա հետ միակցել այն հնչյունական երևույթը, երբ հայերենում և հունարենում մյուս հնդեվրոպական լեզուների դիմաց r սոնանտով սկսվող բառերից առաջ նույնպես դրվում է որևէ բառաձայն, մասնավորապես e ձայնավորը, ինչպես հնդեվր. *rḗgʷos «մթություն» արմատը ունեն սանս. rajas, գոթակ. riqis, հին իսլանդ. rökkr..., բայց հայց erek «երեկո, մթություն» և հուն. érebos (id.)։ Ոչ միայն հայերենն ու հունարենը չեն սկսում r սոնանտով բառեր, այլև մի շարք լեզուներ, որոնց թվում փորքրասիական լեզուները և ուրարտերենն ու խուռիտերենը։ Մինչև իսկ հետագա պարսից փոխառությունների սկզբում հայերը ավելաց-

նում են ձայնավորներ, ինչպես երանդ, երամակ..., առաստան, առատ, արոյր և նմանների մեջ։

Հայերենի համեմատական ուսումնասիրության մեջ բերում են նաև մի քանի հանդիպումներ, մանավանդ հնչյունաբանական, որոնք ըստ իս սրատաքին և պատահական են համեմատվող այդ լեզուների մեջ, ինչպես, օրինակ, հնդեվրոպական p, t, k պայթականների վերածվելը հայերենում խուլ շնչավորների (ասպիրատների)—*ph(> հ), th (թ), kh (ք), ինչպես գերմաներենում այդ p, t, k պարզ պայթականները վեր են ածվել խուլ շփականների f, θ, x։ Կամ ինչ պատմական եղրակացություն պիտի հանել հօգուտ հնդեվրոպական բարբառագիտության այն բանից, որ հնդեվր. bh, dh, g'h, g^wh ձայնեղ ասպիրատները լատիներենում և հունարենում դարձել են խուլ, իսկ մյուս բարբառներում հանդես են գալիս ձայնեղ պայթականներով։

Մանավորապես նշվում է հայերենում ածականի համեմատական -tero կամ -jes ածանցների բացակայությունը, որոնցից առաջինը կա հնդիրանական և հունարեն լեզուներում, իսկ երկրորդը լատիներենում, կելտերենում, գերմաներենում և բալթիկ-սլավոնական լեզուներում։ Բայց այդ ժամանակ չգիտեին, որ այդ ձևերը չկան և խեթերենում,— մի հանգամանք, որ թերևս պատմական բացատրություն ունենա հայերենի և խեթերենի փոքրաթիվ բնօրրանի աղղեցությունից, կազմավորման ակունքների համանմանությամբ։

Լեզվաբանները, հետամուտ լինելով բերելու և այլ բնորոշ գծեր հայերենի և այլ հնդեվրոպական լեզուների միջև, երբեմն ընկնում են սխալմունքի մեջ այն տեսակետից, որ քննվող երևույթը վերցնում են հայ լեզվի ներքին զարգացման օրինաչափությունից դուրս, կտրելով այդ հողից՝ հանուն կանխակալ տենդենցի և ցանկության։ Կարծես թե դրժ ունենք մեխանիկական-մաթեմատիկական համեմատությունների հետ և ոչ թե պատմա-հասարակական՝ իր սպեցիֆիկ դրսևորմամբ։ Օրինակ, բերում են գոլականների օձ թեմայով վերջացող հիմքեր, որոնք սովորական արական սեռի հետ շատ քիչ զուգքերում ցույց են տալիս և իգական սեռ, մանավանդ որ կանանց են վերաբերում։ Բերում են (Մեյե) մանավորապես հուն. nuós և լատ. nurus բառերի հետ նաև հայոց նաւնաբուն նու-նուռ-նուռով «հարս» (choxa) բառը։ Բայց ալստեղ ըստ իս, հայ բառը ավելորդ արխայիզացիայի է ենթարկվում, որովհետև այդ բառի nuo- բունը իրեն օձ իբր իգական ցուցանիշով գալիս է ոչ

թե հնդեվրոպական «նախալեզվից», այլ կազմվել է հայկական հողի վրա, ուր բոլոր միավանկ բառերը «ի» կամ «ու» ձայնավորով հոլովվում են այդ «ո» հոլովմամբ, ինչպես ձու-ձուոյ, ձուով, լու-լուոյ-լուով, բու-բուոյ-բուով..., կամ մի-միոյ-միով, թի-թիոյ-թիով, ձի-ձիոյ-ձիով և այլն: Հետևապես և ևս բառի հիմքը իր «ո» թեմայով հանդիսանում է զուտ հայկական առանձնահատկություն, այսինքն բառը լինելով մաքուր հնդեվրոպական իր «ո» հոլովակերպը չի ժառանգել մայր-լեզվից, այլ արդյունք է հայոց լեզվի հետագա զարգացման:

Հալևրենի համեմատական ուսումնասիրությունը հնդեվրոպական լեզուների հետ ուրվագծորեն տվել է Մեյեն իր „Esquisse"-ում, և մենք բավական ենք համարում վերցնել մեզ համար կարևոր դրույթները այդ համեմատական քերականության մեջ, ենթարկելով իհարկե քննադատական նկարագրության, նկատի ունենալով նորագույն հայտնաբերությունները ասիական լեզուների բնագավառում:

Պահելով հեղինակի նկարագրության ընթացքը, մենք ևս կրկնենք հնչյունաբանությունից, հետո կտանք ձևաբանական (հոլովում-խոնարհում) մասը, ավելացնելով հարկ եղած ձևաբանական-շարահյուսական որոշ կապակցություններ, և վերջապես մեջ պետք է բերենք նշած այն բառամթերքը (լեքսիկան), որը հայոց լեզվի մեջ համարվում է հնդեվրոպական ծագումով («իսկական» հայ բառեր), որոնք ըստ նույն հեղինակի (Մեյեի) չորս հարյուրի չեն հասնում:

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նշատադրություն: Հնդեվրոպական շարժուն շեշտը, որ եղել է երաժշտական, հալևրենի բառերի մեջ կայուն դիրք է ընդունել նախավերջին վանկի վրա, որը պետք է վերագրել տեղական լեզուների ազդեցության, ինչպես այդ ընդգծում է և Մեյեն (Esquisse, էջ 23): Այդ ազդեցությամբ է նաև, որ այդ հնագույն շեշտը որակով փոխվել է, դառնալով արդեն արտաշնչական (կամ ուժական), չհանդուրժելով «ոչ մի հետք հնդեվրոպական տոնից», վրացիք նույնպես շեշտում են նախավերջին վանկը, իսկ դարբասցիք և գոկերը այժմյան շեշտը, որ վերջին վանկումն է, նույնպես փոխադրում են նախավերջին վանկը:

Իսկ որ հալևրենի հնդեվրոպական բառերում շեշտվել է նախավերջին վանկը, այդ պարզ կերպով երևում է օրինակներից: Երբ աոանսկրիտերենը տալիս է ábharat հավասար հունարեն éphere

(վերջին „t°-ի անկումով) հայերենը ունի միայն երե՛ք «բերից» այդպես նաև սանս. ádhāt «դրեց» = հայոց եդ (<*édhēt)։ Բոլորը մեր հոլովական ձայնավոր թեմաներըը, որ հանդես են գալիս միայն թեք հոլովներում, մի ժամանակ արմատի մեջ էին։ Այդ երևույթ է նաև իրանական փոխառությունների մեջ, երբ օրինակ, daiva «դև» ձևը հոլովվում է (դիւաց) „a° հոլովմամբ, կամ խրատ հոլովվում է „u° հոլովմամբ (իրանական xratu «ուշք, միտք») և այլն։

Հայոց լեզվի շեշտի դոլութիւնը բառի նախավերջին վանկում գալիս է, ըստ իս, դեռ հնագույն շրջանից, մեր էրայից 1000—1500 տարի առաջ, դառնալով Հայասայի և Ուրարտուի ժամանակից մնացած բառաձևերից։ Եթե նկատի առնենք, որ «իւ», «ուս» և «էջ» հնչյունները շեշտի տեղափոխութեան պատճառով հնչյունափոխվում են միայն Արշակունյաց շրջանից, ինչպես ցույց են տալիս իրաներենից փոխառյալ բառերը, ապա պիտի եզրակացնել, որ հնագույն ժամանակ այդ ռեդուկցիան տեղի չի ունեցել, իսկ եթե ունենք նման հնչյունափոխված բառեր, ապա դրանք առացվել են քրիստոնեական դարաշրջանից։ Օրինակ, ունենք հայոց Ղուիմար քաղաք անունը (Տիգրանակերտի մոտ), որի հին աստուրական առաւդարձութիւնն էր Kullimeri. ուրիմն պիտի եզրակացնել, որ հայերը այդ հին անունը սկզբում հնչել են սեմիտների պես Kulimer ‖ Kulimar, իսկ հետո Khəlimar, շեշտ դնելով երկրորդ վանկի վրա (դժվար թե վերջինի վրա)։ Այդպես նաև եղել է Pattiariga կամ Patarič դյուղանունը, որ թերևս նշանակել է «փոքր քաղաք» (համմ. ուրարտական patari «քաղաք»)։ Հայերը մեր էրայի սկզբից այդ անունը հնչել են Բըթաուիճ (երզնկայի մոտ է) կամ Բաթաուիճ (Արագածի հարավային լանջի վրա). երկու դեպքումն էլ շեշտը վերջընթեր է ընկնում։ Շատ հետաքրքրական է խեթական ulug- «սայլ, ճանապարհասայլ» (Reisewagen), ինչպես հիմա ճիշտ թարգմանում են։ Այդ արմատը (ուղղ. հոլ. uluganiš) հայերենում միացել է ուղղ ձևով հուդկահար «սայլագործ» (ճիշտը՝ սայլեր թալանող) բարդ բառի մեջ։ Անշուշտ շեշտը հայերը դրել են վերջընթեր, այսինքն húlug-, որը դարձել է hulg, ապա թե ոչ կունենայինք həlug (hlug)։ Այնպես որ վերջընթեր շեշտը, որ հաճախ է լինում լեզուներում, եղել է նաև հայերենում, ապացուցվում է նաև տեղական ծագում ունեցող անուններով և բառերով, իսկ այդ ուժական շեշտի հետագա տեղը վերջավանկում է, ինչպիսին է նաև հիմա, հետևանք է վերջին վանկի (ձայնավորի) և բառի սղման։

Մինչև հայ գրի ներսեան գալը (V դար), այդ հնչյունական նոր կացութեան հետևանքով գոյացել էր արդեն (մեր էրալի I–V դարերում) նոր հնչյունահարաբերական դրութիւն՝ ուժական շեշտի վերջնավանկային փակ դրութեամբ. նրա տնդի փոփոխութեան հետևվանքով, որպես հետևանք բառակազմութեան և թեքման, նախկին շեշտառնակ ու, ի, է, ոյ, եա, եայ ձայնավորները և դիֆտոնգ-արիֆտոնգները կրում են նոր փոփոխութիւններ, այն է՝ ու և ի ձայնավորները կամ դուրս են ընկնում կամ դառնում ը. է>ի, ոյ>ու, եա>ե, եայ>է: Այժմ մեր բարբառներում և գրական լեզվում այդ նշած կանոնավորութիւնը մասամբ խախտվում է հօգուտ այդ հնչյունների պահպանութեան. չփոփոխվելուն, որ նկատվում է մասամբ և գրաբարում միավանկ բառերի սկզբում, ինչպես՝ իժ-իժի, ուս-ուսոյ, ուղտ-ուղտու, ունկն-ունկան և այլն:

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐԸ (ՀՊԱԿԱՆՆԵՐԸ) ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

1. ՊԱՐՋ ՁԱՅՆԵՂՆԵՐ—b, d, g', g (g^{w})

*Սրանք հայերենում վեր են ածվել ամենաուրեք պարզ խուլերի—պ, տ, ծ, կ: Շրթնային պայթական *b>հայոց պ փոխանցումը ունենք մեր առեպ, ատիպել բայարմատի մեջ, որի դիմաց կա հուն. steibō «դոխում եմ, կոխրճում եմ», stibarós «ճմլած, սղմած»: Շատ օրինակներ կան d>տ փոխանցման համար, ինչպիսիք են սանս. dā- (dádami), հուն. (dō- (didōmi), լատ. do, սլավ. даю... =հայոց տամ, հուն. kardia, լատ. cor, cordis, գոթ. hairto...=հայոց սիրտ, լատ. odī=հայոց ատեամ և այլն: Գալատալ (միջնալեզվային) G'=հայոց Ծ համապատասխանութեան համար նույնպես շատ օրինակներ կան—հայոց ծին, սանս. jánaḥ (j=dž, ջ) «ազգ», հուն. génos, լատ. genus..., հայոց այծ=հուն, aix, aigós..., հայ ճանաչեմ (<*ծանաչեմ—ծանանալ, ծանօթ)=սանս. jānāti «ճանաչում է», սլավ. знать, հուն. gignóskō և այլն: Աճ-եմ բայի ճ բաղաձայնը առացվել է հնդևր. gy-(=gj) ձևից: Ընդհանրապես առած նախահնդևրոպական բևեռադիր լեզուների z բաղաձայնը հայոց փոխառութիւնների մեջ տրվում է ծ կամ՝ ճ բաղաձայնով: Նմանապես պետք է շեշտել այդ նույն բևեռադիր լեզուների ձայնեղ պայթականների անցումը հայերենի մեջ որպես խուլ պայթականներ, ինչպես աստղաբական d բաղաձայնի վերածվելը հայոց t բաղաձայնի Adad աստվածանվան մեջ, որը դարձել է հայոց Աստատ (Atat) անունը, որ կրում էին հայ նախարարները:*

Ձայնեղ ասպիրատները հայերենում դարձած են պարզ ձայնեղներ և նայած նրանց դիրքին բառամիջում և մասամբ հպակատխփյան թռուցիկ տեղի են ունենում տարբեր հնչյունադարձներ։

Հնդեվրոպական շրթնալին bh *բառասկզբում դառնում է* p (b), *ինչպես, օրինակ,* բերիմ=*սանս.* bhárāmi, *հուն,* phérō, *լատ.* ferō, *գոթ.* bairа։ *Բառի մեջ նա վիր է ածվում* u̯-(w) *կամ* u̯ (v), *երկու ձայնավորների միջև, ինչպես՝ բանիւ, ամաւ, քնաւ..., բայց* n, r *աննանանեներից հետո միտմ է* p, *ինչպես բառասկզբում, օրինակ՝ հարբ. գառամբ, ուր այդ «բ»-ն գոյութիւն ունի գործնական հոլովի համար նաև սանսկրիտներենում* -bhiḥ *(հոգնակիում), հունարենում* -phi *(եզակի և հոգնակի), վրացներենում կան մակբայական իմաստով գոյականներից ստացված գործնական հոլովաձևեր, ինչպես* igurdiv *«կողքի վրա»* (gwerdi *«կողք»),* dziv *«ուժով»* (dzali *«ուժ»)* և այլ նման հայոց հազիւ և նմաններին կազմութիւն, որ պիտի ենթադրել որպես պատահական նմանութիւն։

Հնդեվրոպական աստիճանային dh-*ն բառասկզբում ներկայացված է հայոց* դ *ձայնեղ պայթականով, ինչպես՝ դնիմ (եզի «դրիս», դիր)=սանս.* dhā- *արմատին (ներկա* dá dhāmi*), հուն.* thē- (tithēmi), *սլավ.* дкь-ть *և այլն։ Դուռն=սանս.* dvár, *իրան.* dvar, *հուն.* thýra, *սլավ.* двьрь, *գերմ.* doûr.., *դուստր=սանս.* duhitár, *հուն.* thygátēr, *սլավ.* dŭšti, *գերմ.* daûhtar *և այլն։ Բառամիջում* *dhj *հայերենում դառնում է* ջ *(համմտ. մէջ և սանս.* mádhyaḥ, *լատ.* medius)։ *Այդ դրութիւնից ունենք նաև դեղեւիմ «դնես ու դնեն եմ շարժվում», որը կրկնութիւն է* -դեւ- *պարզից, ինչպես սանս. ունի* dhu- (dhunoti *«երերում է»*) *և կրկնակի* dōdha-vīti *«առնել ճոճվում է»։ Բայց ինչպես ճիշտ կերպով նշում է Մեյեն, հայոց դեղեւիմ բայի միջին* d *բաղաձայնը կարող էր պահվել սկզբնական* d-*ի ազդեցութեան տակ և ոչ թէ արտացոլել հնդեվրոպական հնագոյն դրութիւնը, ինչպես սանսկրիտներենում։*

Հնդեվրոպական g'h *քամային (պալատալ) ձայնեղ ասպիրատը բառասկզբում անդրադարձել է հայոց* ձ (dz) *բաղաձայնով, համապատասխանելով սանս.* h, *ավեստ.* z, *հին սլավ.* z, *լտ.* ž, *հուն.* χ, *պատ.* h, *գոթ.* g։ *Օրինակ հայոց* ձիւն=*հուն.* chiōn, *հայոց* ձմեռն= *սանս.* hēman, *հուն.* cheimōn, cheimeria, *լատ.* hiems, *իրան.* zima, *հին սլավ.* zima, *լիտ.* žēmá, *խեթ.* gimanda *և այլն։ Բայց*

ձայնավորների միջում այդ հնդեվր. g'h-ն տալիս է հայոց z (ղ)։ Ինչպես գեզ. դիզաճիմ=սանսկ. dehi (=kyra, груда), ավեստ. (uz-)daēzō «կուլա, կուտակումն», հուն. toîchos, գոթ. daigs «խմոր»։ Ինգալին (n. m) նայ սոնանտներից հետո հայերենում նույնպես ունենք *g'h=dz (ձ), ինչպես՝ բարձր=սանսկր. bṛhánt-, ավեստ. bərəzant—«բարձր», հին վերին գերմ. berg «լեռ, սար», կամ թե հայոց իճձ (=мне)=սանս. māhyam, լատ. mihi, բայց բեզ ձեր մեջ ձայնավորների մեջտեղում ունենք ոչ թե ձ, այլ զ։ Համեմատել նաև հայոց իճձ „леопард" բառը սանսկրիտերեն simʻhá «առյուծ» բառի հետ, որոնք առացվել են հին *singʻho- ձևից։ Ի միջի այլոց ինգալին (n. m) և նայ (ր, ղ) ձայնորդներից հետո սպասվող շփական զ (z) բաղաձայնի վերածվելը պալիաշփական (աֆրիկատ) ձ (dz) բաղաձայնի շարունակել է իր այդ միասով նաև հետագա պարսկական փոխառությունների մեջ, որը. օրինակ. հին varza, ganza և նման բառերը հայերենում դառնում են վարձ, գանձ և այլն, այսինքն՝ զ (z) դառնում է ձ (dz)։

Հնդեվրոպական հետնալեզվային ձայնեղ gh (g"h) ասպիրատը հայերենում երկու կերպ է արտահայտվում։ Երբ դրանից հետո առաջնաշարքային կամ քմային (պալատալ) ձայնավոր չի գալիս, այդ դեպքում հայերենում ունենք գ, օրինակ՝ գանձ=սանս. ghanáḥ «բիր, կոպալ» (ghāta «զարկ, հարված»), ghnánti «զարկում են», հուն. phónos «սպանություն», սլավ. гокить..., կամ մեզ=սանս. megáḥ «մեզ», հին սլավ. mīgla („мгла"), լիտ. miglà, հուն. omichlē։ Իսկ երբ այդ gh-ից հետո գալիս է քմային (առաջնալեզվային) e կամ i ձայնավոր, այդ ժամանակ հայերենում ունենք ջ (dž), ինչպես՝ ջեր=սանս. háraḥ, հուն. théros, «ամառվա տաքությունը», ռուսաց жар և այլն, կամ՝ ջիղ=լիտ. gýsla, հին սլավ. žila „жила"։ Ձայնավորների միջև այս ջ աֆրիկատը կորցնում է իր հպականությունը և դառնում շփական ժ (ž) ինչպես՝ իժ=սանս. áhiḥ, ավեստ. ážiš, համեմատել զ (z) շփականը առաջացած ձ (dz) աֆրիկատից, երբ վերջինը (=հնդեվր. g'h) դրվում է ձայնավորների մեջ։

Ինչպես այս կապակցությամբ ճիշտ դիտում է Մեյեն, հնդեվր. հետնալեզվային բաղաձայն պալիականները e և i ձայնավորներից առաջ, որ լինում է այդ լեզուների արևելյան խմբի մեծ մասի մեջ, առաջացնում է այդ քմայնացած հետնալեզվայինների վերածումը ց (c) կամ չ (č) կիսապալիականների (աֆրիկատների)։ Հայերենում այս տեղի է ունենում միայն հնդեվրոպական ձայնեղ ա-

պիրատի (gh) նկատմամբ, որը քմայնանալով դառնում է ջ և ժ, նայած դրանց պայմաններին՝ իսկ հնդեվրոպական g (gʷ) և k (kʷ) պալեթական հետնալեզվայիններըը հավերնում մնում են նույնպես պալեթական։

3. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՐԶ ԼՈՒԼ ՊԱՑԹԱԿԱՆՆԵՐ—p, t, k', k (kʷ)

Սրանց զարգացումը հայկական հողի վրա տանում է դեպի այդ պարզ պալեթականների ասպիրացիա, եթե չհաշվենք, որ k' հավերնում, որպես հնդեվրոպական արևելյան լեզվախմբում, տալիս է u (s), ինչպես՝ սիրտ=հնդեվր. k'erdi *(սլավ.* серд-це, *լիտ.* szirdis, *հուն.* kardia...), տասն=հնդեվր. dek'mi *(սլավ.* десять. *հուն.* deka, *լատ.* decem..)։ *Իսկ հնդեվր.* p, t, k (kʷ) *պետք է դառնային* *ph, th, kh, որոնցից վերջին երկուսը մնում են իրենց զարգացման այդ աստիճանին (իսկ գերմաններենում դրանք դառնում են հետադալում և շփականներ), իսկ* *ph *խուլ ասպիրատը ապրում է հաջորդ զարգացումը, դառնալով* h *և միտում ունենալով դրանից էլ զրկվել, իբրև հետևանք հայոց ասպիրատների թուլ հայականության։*

Այսպիսով, մենք ունենք՝ լքանեմ *(արմատն է* լիք-*) =սանս.* riṇákti, *լատ.* linquit *«թողնում է», հին պրուս.* -līnka *«մնում է» (հայոց* ելիք *«թողնեց»=հուն.* elipe*) կամ հայոց* բh=անգլոս. the, *հին սաքս.* the *«որ» լիտ.* te *և այլն, թեպետ վերջին օրինակի (*bh, gh*) կա և վրաց* thu *«եթե» (համմտ. նաև հայոց* թե-թու-ք*) և խեթերեն* ta *նույն իմաստով։ Իսկ հնդեվր.* p>phˇ>h *(>գերո) ունենք հայոց* ֆուբ=հուն. pūr, *ումբր.* pir, *հին վերին գերմ.* fiur, *խեթ.* pahhur *(անո.* pahvenas*), հայոց* ոտն=հուն. póda *(ուղղ. հ.* poús*), այնինչ նույնարմատ* ֆեռ=լատ. pes *(*pedis*) «ոտ», սանս.* padám *«հետք», հուն.* pedon *«գետին, հող» նման հնչյունափոխությամբ, այնինքն «հ» հնչյունի անկմամբ, ինչպես ենթադրվում է հայոց* ֆիղում=լիտ. pilu *«հնղում եմ, թափում եմ» և հայոց կրկնակ* ողող-եմ*, որի արմատը եղել է* *հող- *«թափվել»։ Նման հընչյունափոխական միտում կա և հայոց* ֆինգ *և* յիսուն *բառարմատի (հինգ- ||* *լինգ*) մեջ, որն ազգակից է սանս.* panca, *հուն.* pente *և նմանների հետ։*

Ինչպես տեսնում ենք ֆինգ>*հնդեվր.* *penke *ձևից (լիտ.* penki*) հավերնում «ն» (*n*) ռնդալինից հետո ունենք* գ *(*g*), այնինչ սպասվում էր* ք *(*kh*), ըստ օրենքի։ Դիտվում է, որ ռնդա-*

լինելիս (n, r) և նաև (r, l) առնառնականից հետո հնդևր. k-ն դառնում է հայերենում g, իսկ t-ն դառնում է d. ինչպես՝ ինգ<հնդևր. *penke (լիտ. penki), արգելում=հուն. arkéo, լատ. arceo, մարդ=հուն. brotos (<mrotos<mort-os), ռուս. с-мерт-ный, արդ «ձև»=հուն. artus, «հյուսվածք», լատ. artus, սանս. ṛtúḥ և այլն։

Բմայնացում e կամ i ձայնավորների առաջ հայոց ք (kh) բաղաձայնը չի առանում (այդ բանը լինում է միայն gh-ից հետո), ինչպես՝ քերիմ=հուն. keirō, հին բարձր գերմ. sceran «խուզել», խնթ. kwer- «կտրել, խուզել»։

Հնդևր. p բառամիջում, ձայնավորների միջև, դառնում է հայերենում ւ (w) կամ վ (v), ինչպես՝ եւ (ew)=սանս.—ápi «նույնպես, հետո», հուն. epi հետո, բարաւիմ (=погрузить, окунуть) կրկնավոր բայը իրեն բաւ արմատով=հին սլավ. топить. ճովիւ <*owi-pā (համմտ. սանս. avi-palā-, gopā և այլն)։ Մենք արդեն գիտենք, որ հնդևր. -bhi թևքուլթը գործիական հոլովում ձայնավորներից հետո դառնում է ւ (w), ինչպես ամաւ, արտիւ, գետով։ Այստեղ նմանութեամբ ևս կմատնանշնի ուրարտական լեզվի b բաղաձայնի նման վերածվելը հետագա հայ բառերի և թևրևս ձևերի մեջ v (w) հնչյունի, ինչպես Biaina>վան, abilidubi>ավել արի (ավելացրի), ebani «երկիր»>աւան (վրաց. ubani «բաղամասն, մեզր.՝ abani «տեղ»), անցյալ կատարյալ կրավորական և չեզոք բայերի 3-րդ դեմքի -abi>հայոց-աւ (uštabi=ընթացաւ, nunabi=եկավ և այլն)։ Փ պալեթականը դուռ հայոց բառափոխության ժամանակ, օրինակ կրկնելու ժամանակ, դառնում է w (v), ինչպես՝ թաւթափել (=թօթափել), շաւշափել (շօշափել), սաւսափել (սօսափել)։

Հնդևր. p-ն դարձել է w նույնպես եւրթ բառի մեջ, ստացված լինելով septn ձևից (=лат. septem, սանս. saptá, հուն. hepta), քուն<*swapnos (=սանս. swápnaḥ, հին իսլ. suefn, հուն. hýpnos) և ուր (<*opto<octo) բառերի մեջ, ուր քուն և ուր բառերի ու (u) ձայնավորը գոյացել է *op>*ow>u փոխոխմամբ։ Նման հնչյունափոխություն ունենք և հաւր, մաւր, եղբաւր, արաւր, ծնաւղ բառերի մեջ, ուր հին -awr (-awl) ձևացել է նախկին -a-ϑr կամ ā-ϑl կոմպլեքսից, ուր ϑ (θ) դարձել է ph (f), նման հունական θ հնչյունի վերածվելուն ռուսաց f շփականին (Федор, Фома անուններում)։ Այդպես է եղել, օրինակ, լատ. frigus բառը, ստացված *ϑrīgus ձևից։

Հնդևր. p *բառասկզբում* r *ձոնանտից առաջ, ալբինքն՝* pr *խումբը դառնում է* *hr *(hr)*>r>er *քանի որ «բ» ձոնանտով հալերինը բառ չի սկսում և դրան սկզբից ավելացնում է մի ձայնավոր* (e), *ինչպես՝* երկ *«սլաք»,* старший" =*լատ.* priscus, *կամ* երեվիմ=*հուն.* prérō *(նուլնիմաստ), ուր միջի «r" օրինաչափորեն դառնում է* u (w)։ *Համմտ. բառասկզբի* tr- *կոմպլեքսի նման էվոլյուցիան* երկ *բառի մեջ, առաջացած հնդևր.* *trē- =*սանս.* tra'gaḥ, *սլավ.* trije, *հուն.* treīs, *լատ.* trēs *ձևերից։*

Հնդևր. t *վերջին վանկի ընկնող ձայնավորի և նախորդ վանկի ձայնավորների միջև դառնում է հալերենում* j, *նման r-ին երկու ձայնավորների մեջ, որ դառնում է* w։ *Այդպես ունենք՝* աղա-լ *«նա աղում էր», բևրէ* (<bere-j) *«բերում է» =սանս.* bhàrati, *ուր* -ti *վերջավորությունը դառնում է հալոց* -j։ *Այդպես նաև հոգնակի 2-րդ դեմքում* -te *դառնում է հալոց* -j, *ինչպես՝* աղալք *«աղում եք», բևրէք «բերում եք» =հուն.* phérete, *հին.* *սլավ.* berete, *նմանապես* հայր=*հուն.* patēr, մայր=*դորիական* mater, *կամ* բայ=*հուն.* phátis։ *Հնդևր.* -nti *բայական վերջավորությունը հալերենում, ինչպես և գերմաններենում, կորցրել է վերջին* -ti *մասը, ինչպես* bū=*սանս.* sánti, *դորիական* enti..., *կամ հուն.* „брод" *բառի մեջ, որ եղել է* ponti=*ռուս.* путь, *լատ.* pons, pontis *«կամուրջ» (արմատն է* pont-), *կամ* քսան *(<*գիսան) =*բևստիական հունարենում* vikati, *լատ.* viginti *և այլն, ուր* wi- *կրճատ ձևն է* dwi- *«երկու» (>հալերենում գի-<*wi*), իսկ* -սան *«տասն» (<*tsan *ձևից)։*

Հնդևր. p, t, k խուլ և պարզ պալաթականները v *բաղաձայնից հետո, ալբինքն՝* sp, st, sk *կապակցության մեջ, հալերենում մեծ մասամբ (բացի* sk-*ից) պահվում են, չեն ենթարկվում պապիրացման (շնչեղացման)։ Այդպես են* սպառնամ, *որի հանդեպ ունենք լատ.* sperno *«մերժում եմ, արհամարհում եմ».* զգեստ= *լատ.* vestis, *և ընդհանրապես* -ստ *(պահեստ, փախուստ) ածանցի մեջ, որ կա և ռուսերենում* -ость *ձևով* (бедность...), *խեթ.* -asti (dalugasti *«երկարություն»),* ստերջ=*լատ.* sterilis, *հուն.* steīra *և այլն։*

Իսկ sk *հնչյունակոմպլեքսը հալերենում փոխվում է և դառնում* g (c), *ինչպես՝* գուլ=*հուն.* skýlaks, *ցկլում=լիտ.* skelìù, *հին իսլ.* skilja *«ճղել, կտրել եմ», խեթ.* iskallai „расщеплет, разрезает" *(արմատն է* skal-), հպարձիմ=*սանս.* pṛcháti *«հարցնում է», լատ.* poskō *(1-ին դեմք ներկա), հին վ. գերմ.* forscōn

(անոր. դերբալ) և այլն։ Ըստ այսմ նիզակ «հնդևվր. sk կոմպլեքսը ձայնեղանա և դառնա *zgh, ապա դրա հայերեն անդրադարձումը կլինի ոչ թե «ց», այլ դրա ձայնեղ տեսակը «ձ» և ենթադրվում է, որ հայոց մոզի=μοσχιον (moschion) ճիշտ ստուգաբանությունը պիտի տար հայերենում նախ *մոձի, որ դառնում է մզի, որովհետև «ձ» աֆրիկատը ձայնավորներից առաջ (կամ միջև) վեր է ածվում «զ» պարզ շփականի։

Հայոց nակը բառը իր սկ (sk) մասով համապատասխան է նախկին (հնդևվր.) -st(h)- կոմպլեքսին, նկատի ունենալով սանս. âsthi «ոսկր» և հուն. նուշնիմաստ ostéon բառերը։ A. Meillet-ի մեկնաբանությունը բառամիջի t-ի մասին, որ հայերենում վեր չ ածվել «թ» բաղաձայնի, օրինակ, երկոյք, ծանօթ և նման բառերի մեջ, սխալ է։ Նախ հայոց -ոյթ բառակազմական մասնիկը ըստ իս կարող է և հնդևվրոպական ծագում չունենալ, թեևս դա փոխառություն լինի սեմական (ակկադական) -uth ածանցից (օրինակ šarr-u «թագավոր», šarr-uth-u «թագավորկը, թագավորություն»), իսկ «ծանուցթ» բառի «թ» բաղաձայնը ոչ մի կապ չունի հունարեն „t"-ի հետ agnōs, agnōtos բառի մեջ, այլ առաջացել է «չ» բաղաձայնից ճանաչ իմ <*ծանուչեմ բառի մեջ, երբ այդ աչմասը դեզասիբիլացիայի է ենթարկվում (չ>թ և հավելացնելով w տալիս է երկբարբառ (дифтонг) -aw (-աւ), որով առնվում են բալարմատներից կամ բալաբներից գոյականներ, ինչպես՝ ամաչեմ—ամաւթ, աղաչեմ—աղաւթ, արածեմ—արաւ (ծ>ա), զգածիմ «հագնել» (արմատն է (զած-) -զաւտի, դառնում («արմատն է զիա-) -դիւա, մատ-չ-իմ-մաւտ և այլն (տե՛ս իմ „О внутренних закономерностях развития армянского языка, Ереван, 1952 г., էջեր 17—18)[1]։ Նմանապես սխալ պիտի համարել հնդևվրոպաբաններին այն պնդումը, որ բառասկզբում հնդևվրոպական k^w վեր է ածվում հայերենում «հ» (հ-իմ, հի-ման) կամ իսպառ վերանում, ինչպես ո «ով» և *թ (դ-ի) «ինչ» բառերի մեջ, առաջացած k^wo- և k^wi- ձևերից (տե՛ս Մեյե, Esquisse-ը, էջեր 33—34)։ Այդ վերջին արտառոց ձևափոխությանն մասին կարդում ենք դեռ Brugmann-ի մոտ (Grundriss, II, էջ 772), որը Հյուբշմանը հարցականի տակ է դնում (Arm. Gr., էջ 481)։

[1] Հնդևվրոպական t բաղաձայնի այս և նման սխալ տեսաբանումը հայոց բառերի մէջում տեսել է Ա. Մեյեին ի վերջս ափսոսանք.— „Cette question du traitement de i,-l, *t* à l'intérieur du mot arménien est encore obscur" (Esquisse, էջ 33)։

Հայերենը հնդիրանական լեզուների պես իր նյութով բավական հավաստում է ալդ-խուլ շնչեղների գոյությունը, մանավանդ ph *և* kh, *որոնք հայերենում ներկայացված են փ և խ բաղաձայններով՝ իմիջի այլոց հնդեվր.* kh *ալդ ասպիրատը չի ունեցել այն* w *«լաբիո-վիլար» հավելումը, որ հատուկ է մյուս հետնալեզվային բաղաձայններին* (k—k^{w}, g—g^{w}. gh—g^{w}h)։ *Թողնելով խուլ* th *ասպիրատի խնդիրը, որ, ինչպես Ա. Մեյեն է ասում, դեռ պրոբլեմատիկ բնույթի է, մենք այստեղ նշենք միայն շրթնային և հետնալեզվային խուլ ասպիրատների* (ph, kh) *փոխհարաբերությունը ասնակրխաևրենում* (=ph, kh), *իրանևրենում* (=f, x), *հայերենում (փ, խ) և հունաբևրենում* (=φ, χ)։ *Ալդ ասպիրատները նույնությամբ հանդես են գալիս բառի մեջ թե՛ սկզբում, թե՛ միջում և թե՛ վերջում։ Կարևոր ենք համարում բերել հետևյալ հավաստումները—*փայլ, փայեմ, փաղփաղիմ, փողփողիմ *և մյուս կողմից ասնս.* phalguḥ *«փայլ», հուն.* φαλόνει *«փայլեցնում է», փրփուր= հուն.* a-phrós (id.), լափ-*եմ=հուն.* laphýssō, *հին ե. գերմ.* laffan (id.), փուք, փչեմ=*հուն.* phȳsa (φῦσα) *«փուք», ասնս.* phut-karaḥ *«փչելը, սուլելը», լիտ.* pusiú (p ‖ ph *փոխանցումով),* փուլ, փլանիմ=*հուն.* spállō, *լատ.* fallo (?), *լիտ.* pûlù, pulti, *գերմ.* fallan (*sph ‖ *ph ‖ *p *փոխանցումով)։*

Բերենք հնդեվր. kh=*հայոց* խ *համապատասխանության հավաստումները, խախանք «քահքահ ծիծաղ»=ասնս.* kakhati *«ծիծաղում է» (<*khakhati), հուն.* kacházo (<*chacházō) „смеюсь расκатисто", *հին սլավ.* хохот, *որին հին վ. գերմ.* huoh *«ժպիտ, ծիծաղ», լատ.* cachinnus, *«խածանեմ, կծում եմ»=ասնս.* khād-*«կծել», լիտ.* khándu (id.),-*մուխ «ծուխ»=հին իռլ.* múch *«ծուխ», միջ. ե. գերմ.* smouch (id.), *հուն.* smýchō *«կիզում եմ, ոչնչացնում դանդաղ կրակով»*[1], *ուր տերի է ունեցել* sm ‖ m *հնչունական փոխանցում (ալտերնացիա), ալդպես նաև* gախ=*պարսկ.* šāx (<*kšāx), *ասնս.* çákhā- *«ցախ» և սլավ.* coxa (<*kakh) *«ծռած ճյուղ», ուր ունենք* *ksākh- ‖ *kākh։

Հայոց th=*հնդեվր.* *th *համապատասխանության համար ունենանք առայժմ մի լավ օրինակ՝ հայոց* որթ *(սեռ. որթու) «հորթ»,*

---

[1] *Այս առումպաշտությամբ ընկնում է իմը, որը ավել են մաս բառի նոր դիսիմիլատիվ կազմությամբ՝ ծուխ բառից։*

теленок» = սանսկր. prthukah «փոքր կենդանի», որի հանդեպ գավառական forpp (>forth) ձևը թերևս ավելի հին է իր սկզբնական «հ» հնչյունով։ Ենթադրվում է նաև, որ հայոց ուն բառի վերջում եղել է նախկին th, որովհետև տեսնենք սանս. pânthâḥ, սլավ. poti „путь", լատ. pons (սեռ. pont-is)։

Հնդեվրոպական «նախալեզվի» պալեթական բաղաձայնների և դրանցով կազմած արմատների ընդհանրությունը (ազգակցությունը) մարմաջը սալեթալման մեջ էր դրում մինչև իսկ այնպիսի գիտնականի ինչպիսին Ա. Մեյեն էր։ Նա, օրինակ, իր գրքում բերում կամ կրկնում է ուրիշների այնպիսի «ընդհանրությունը» (ազգակցությունը), ինչպես հայոց սպառնալ „угрожать" և լատ. sperno «արհամարհել», որովհետև հնչյուններով նման են, իսկ իմաստական տարբերությունը կարելի է անտեսել։ Այդպես նաև հայոց խաղամ «շարժվում եմ» կապակցվում է հուն. chalaô «թողնում եմ, բաց եմ թողնում», մուխ-մխեմ «շիկացած երկաթը գրի մեջ տանել պղտանցելու համար» կապակցվում է հուն. muchós բառի հետ, որ նշանակում է „самое внутреннее или удаленное место, самая внутренняя или задняя часть чего-либо, углубление" *Թեպետ Ա. Բուդդեի կողմից առարկված այս առուգաբանությունը Հյուբշմանը դնահատել է* „durchaus unsicher, Arm. Gr., էջ 473) և այլն, և այլն։

Պալեթական բաղաձայնների վերլուծման հետևանքով Ա. Մեյեն տալիս է մի ամփոփիչ տախտակ, որը կարևոր ենք համարում բերել այստեղ, փոխելով միայն նրա տերմինները՝ dentale *դարձնելով առաջնալեզվային,* palatalè՝ *միջնալեզվային և* gutturale, *որ տառացի նշանակում է կոկորդային, դարձնելով հետնալեզվային։*

	շրթնային	առաջնալ.	միջնալ.	հետնալ.
Հուլ հնդեվրոպականներ	h (w ւ)	t' թ	s ս	k' ք
Հուլ ասպիրատներ	p' փ	t' թ	—	x' խ
Ձայնեղ հնդեվրոպականներ	p պ	t տ, c ծ	c ծ	k կ
Ձայնեղ ասպիրատ	b բ (w ւ)	d դ	j ձ (z զ)	g գ ǰ ջ (žə)

Այս նշված հնչյունները կամ սկսում են բառերը և կամ ձայնավորների միջև են գտնվում. իսկ եթե կա և երկու դեպքն էլ, ապա միջձայնավորությունը դրված է փակագծերի մեջ։

Հնդեվրոպական շփական *s բաղաձայնը։ Հնդեվրոպական լեզվում եղել է շփական *s բաղաձայնը, որը կարող էր լինել նաև ձայնեղ (z), նայած թե դրան ինչ է հաջորդում (*zb, *zbh, *zg, *zgh և այլն)։

բառասկզբում ձայնավորից առաջ այդ *s-ն հայերենում սովորաբար չի ներկայացված, բայց անշուշտ առաջ եղել է հ, ինչպես ունեն հարևան իրանական և հունական լեզուները։ Օրինակ, աղ, աղտ=լատ. sal, սլավ. соль, հուն. hals., գոթ. salt, եւթ=սանս. saptá, ավեստ. hapta, հուն. heptá, լատ. septem և այլն։ Բայց բառասկզբում մնում է նաև հ, ինչպես տեսնում ենք ճիճ բառի մեջ, ազգակիցներն են սանս. sánaḥ, ավեստ. haṅō, լիտ. sēnas, լատ. senex։ Ենթադրվում է, որ ճիճ բառը, որ իր մեջի ի ձայնավորով զուտ հայկական բնույթ է կրում (<*e*-ից), ազգվել է իրանականից (ավեստ. hanō), որովհետև սկզբի «հ» շնչականը չպիտի լիներ։ Այդ իհարկե կարող էր լինել, որովհետև նման դեպք տեսնում ևմ և հայոց ճաճ «տատա» բառի մեջ, երբ լատիներենը ունի anus «պառավ կին», հին ի. գերմ. ana «տատա», պրուս. ane «պառավ մայր», բայց հայերենի հարևան խեթերենում՝ hannas «տատա», որը կարող էր իր «հ»-ով ազգել Հալաաալի հայոց լեզվի վրա։ Բայց մենք ունենք դեպքեր, երբ հայոց բառասկզբի «հ» հընչյունը չի արդարանում իր ծագումով, այլ միանգամայն նոր է, առաջացել է հայկական հողի վրա, ինչպես նմանը եղել է և հետագա բարբառներում դրսերի հանդեպ (հնկեր<ընկեր, հարբել<արբել...)։ Այդպիսի զարդացած նոր «հ» ունեն ճոտ=լատ. odor, հուն. odmē, ճում=հուն. ōmós, սանս. āmáḥ, haw «թռչուն»=լատ. avis, haw «պապ»=լատ. avus (հին auos), որը թևերս իր նոր «հ»-ով ազգված լինի han «տատա» բառից։ Հայոց «հ» հնչյունը, ինչպես երևում է երբեմն թուլ է արտասանվել, և, օրինակ, անհայտացել է կրկնավոր ճեղ-եղ (*>հեղ-հեղ), ճեծեծեմ, հեկեկամ և նմանների մեջ։ Այդպես և ճոզի (ստացվել է շոզի-ից), որը զառնում է ոզ, ոզի կամ ճատանեմ բայի hat արմատը սղվում է -at ձևի (կիս-ատ, կեն-ատ, ձեռն-ատ, պատ „с заячей губой"), փող-ար «փող փչողը» (համմն. փող հարի), զատ (զատանել (>զհատ (-զհատատանել), լատել), (<լ-հատել (լիսուն<լ-հիսուն<*հինգ-հիսուն, լօրալ «լսորիթ հալյո»<լ-հօրալ, լիտ<լ-հետ և այլն։

Բառի մեջ միջձայնավորյան հնդհվը. *s հայերենում նույնպես կորչում է, դառնալով սկզբում երևի «հ»։ Այդպես են՝ ճու=հուն. nuós, սանս. snuṣā, սլավ. снъха, ռուս. сноха, վերին հին գերմ. snura, լատ. nurus, բոի=լիտ. bâsas, վ. հ. գ. bar գարուճ=հուն. Fèap (wear), լիտ. vasoré, սանս. vasantáḥ, ուր հայոց ձևը առացվում է *wesr>*ge(h)ar-<*gar-ից. արիւճ=սանս. asṛk, հուն. ear «արյուն» և այլն, ուր հայոց ar- արմատը (-iwn ածանց

է) առաջվել է *esr- հին ձևից, որը դառնում է նախ *e(h)ar-, հետո՝ *ar. համեմատել նաև բոյր բառը, որի հնդեվրոպական նախաձևն է *swesör>*swehur>*sweur>բոյր:

Հնդեվր. *s հնչյունը մնում է հայոց լեզվի մեջ հետևյալ քիչ դեպքերում:

1. Երբ գործ ունենք տևական s-ի հետ, որ առաջացել է երկու ss հանդիպումից, ինչպես՝ bu=հոմերական essi, լատ. es, ալբ. ես՝ ess, որը հին բանաստեղծների մոտ համարվում էր երկար վանկ:

2. *t խուլ պալեթականից առաջ, ինչպես՝ սաներ=հուն. steira, լատին. sterilis, *k"h-ից առաջ, ինչպես սխալիմ=սանս. skhalati «սայթաքում է, երերում է, սխալվում է», հուն. sphállō «վայր եմ գցում», *ph-ից առաջ՝ սփիւռ=հուն. speiro.

3. Ինդալիենից հետո, որ ընկնում է -ուս=սանս. áṃsaḥ, գոթ. ams, ամիս=լատ. mensis.

4. *p-ից հետո, որն ընկնում է -սուս=հուն. pseūdos «կեղծ», եփեմ=հուն. hépso. Ա. Մելիեն հայոց երդա բառը ցանկանում է կապել երեւիմ=հուն. prépō արմատի հետ, երբ. eres<*prep-s, բայց սա սխալ է, քանի որ հայոց eres-ը ավելի մոտ է խեթերեն ēssri (ēsri, ēssari) „форма, вид, образ" բառին, որի դրափոխությունն է հայոց eres բառը:

Հնդեվր. ձայնեղ պարզ պալեթական *d-ից առաջ *s շփականն ևս ձայնեղանում է, դառնալով z, բայց քանի որ այդ „d"-ն հայերենում խլանում է և դառնում «ս», ուստի ամբողջ zd կոմպլեքսը հայերենում արտահայտվում է նույնպես խուլ ձևով սս, ինչպես հայոց nuսս=հուն. ózos, գերմ. ast (բոլորը *ozdos ձևից), նիսս=սանս. nīḍáḥ (<*niždas-ից), լատ. nidus (<*nisdos-ից), հին վերին գերմ. nest „Nest", սլավ. г-нездо: Հայերենի ներսում միայն մի դեպք ունենք, երբ «ս» շփականը հետընթաց առնմանության է ենթարկվում և ձայնեղ պալեթականից առաջ դառնում է «զ», դա սկիս- արմատն է (սկս-անիմ), որ տալիս է սկիզ- սկիզբն բառի «բ»-ից առաջ:

Հնդեվրոպական *s սուլականը „r" ձայնորդից հետո, այսինքն rs խմբակցության մեջ, հայերենում նման հնդիրանականին և բալթոսլավոնականին արտահայտվում է շշական š շփականով: Այդ rš կոմպլեքսը հայերենում կարող է վերածվել նաև ŕ (ռ) կոշտ ձայնորդի: Այդպես ունենք—թարշամիմ և թառամիմ «թոռոմում եմ», вяну=հուն. térsomai «չորանում եմ», գոթ. ƀaursus «չոր», սանսկր.

tṛsyati «ծարավում է», գարշիմ=սանս. hṛšyati «սիրաքաղցում է, մազերը ցից-ցից են լինում, վախենում է, ուրախանում է», hárṣate «ուժեղ ուրախանում է», ghṛšhù «ցնցված, excité», լատ. horrēre «սոսկալ», քարշիմ=սանս. kárṣati, ավեստ. karšaiti (id.), մռռանամ=սանս. mṛšyate «մռռանում է», լիտ. miřsti «մռռանալ», վ. պերմ. ars, հուն. órros (<órsos), խեթ. arra-.

*Երբ *s-ն *k պալեթականից հետո է, նույնպես դառնում է š հնդիրանական և լիտուա-սլավական լեզուներում: Հայերենում կարծես թե մնում է ks, որովհետև դրան, ինչպես և sk կոմպլեքսի դիմաց ունենք c (g), ինչպես վեց, հուն. *wéks, լատ. sex և այլն. gին=հուն. iktinos (kt=սանս. kš), բայց հայոց այս «ց»-ի դիմաց (վեց բառում) ունենք նաև վիշտասան, ուր «շ»-ն կորցրած լինելով պալեթական նախկին «թ» մոմենտը (թշ>չ), վկայում է հնագույն շչական «չ»-ի մասին, այսինքն որ եղել է *վիչտասան, ինչպես ունենք շչական «չ» արչ բառի մեջ, երբ արիշներին նայած (հուն. árktos, սանս. ṛkšaḥ, լատ. ursus) պիտի սպասեինք «*արճ»:*

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ՁԱՅՆՈՒԴՆԵՐԸ

Ձայնավորները: Հայոց լեզվի ձայնավորներն են ա, ե, է, ի, ո, ու, ը, որոնցից ը ձայնավորը ինքնուրույն չէ, գրվում է միշտ անշեշտ վանկը, վանկարար ըստ, ընդ ձևական բառերի (նախդիրների) և արտասանվում բաղաձայնների որոշ կոմպլեքսների մեջ՝ արտասանության հնչառության համար: Ի ձայնավորը առաջ եղել է դիֆտոնգ և, իսկ հետո առաջնալեզվային միջին բարձրացման փակ ձայնավոր, որի բաց (լայն) տեսակն է ե:

*Ալդպիսով, հնդեվրոպական մեր լեզվամատածքի համար կարևոր են հինգը՝ ա, ե, ի, ո, ու, որոնցից ի և ու կուսամնասխլվելն հնագույն ձայնորդների (սոնանտների) կապակցությամբ, իսկ ա, ե, ո ձայնավորները արտահայտում են հնդեվրոպական a, e, o թե՛ կարճ և թե՛ երկար: Հայերենը կորցնելով ձայնավորների քանակը, այսինքն՝ տևողությունը, կարճ և երկար տեսակները, և ի տրիտուր ընդգրկելով ինտենսիվ շեշտի դիրը, այնուամենայնիվ երկար ē և ō ձայնավորները հետագայում դարձել են ավելի նեղ (փակ), քան կարճերը (e, o): Հնդեվր. *ā-ն տալիս է հայոց ա, ինչպես, օրինակ, ածեմ=սանս. ájāmi, հուն. ágō, լատ. agō: Հնդեվր. *ē-ն տալիս է հայոց ե. ինչպես՝ ծեր=հուն. gérōn: Երբ e ձայնավորը մասամբ ընգալնասում է հետևյալ ընգալիններից (n, m) առաջ, ապա այդ ե-ն դառ-*

նում է ի, ինչպես ծին=հուն. gĕnos, լատ. genus, կամ թե՝ իմ=հուն. emé։ Հնդևիր. o կարճ ձայնավորը (ŏ) դառնում է հայոց ո (ո), օրինակ՝ ոտա=հուն. odmé, լատ. odor, իսկ ոնգալինից առաջ դառնում է u (ու), ինչպես ուսն=լատ. pons, սլավ. путь։ Հնդևիր. ā-ի համար ունենք հայոց ա, ինչպես էր և ă-ի համար, օրինակ ամ-ա-ւ «տարով»=սանս. sám-ā-bhiḥ «տարիներով», *ē-ն տալիս է հայոց ի, իսկ *ō-ն տալիս է հայոց ու, ինչպես՝ մի (ժխտական ձևական բառ)=հուն. mē, սանս. mâ, տուր-ք=հուն. dōron, հին սլավ. darŭ (=дар)։

Հնդևիր. *ə («շվա») ձայնավորը, որի գոյությունը ձևակերպվում է հետևյալ համապատասխանությամբ՝ սանս. i=հուն. ă, լատ. ă, հայերենում հանդես է գալիս ա ձայնավորով, լինի դա կարճ (ă), թե երկար (ā), ինչպես՝ սանս. pitâ, հուն. pătḗr, լատ. păter... և հայոց հայր, ինչպես սանս. mātâ, դորիական mâter, լատ. māter... և նմաններին համապատասխանում է հայոց մայր։ Բառամիջի վանկում այդ հնդևիր. *ə ձայնավորը ընկած է սլավոնական, բալթիկ գերմանական և իրանական, բայց և հայկական հետևյալ համապատասխանության մեջ՝ դուստր, գաթա-ավեստ. dug(ə)dā, հին սլավ. dŭšĭ, լիտ. dukter-, գոթ. dauhtar, բայց ունենք՝ սանս. duhi-tá, հուն. θυγά-τηρ (thygá-tēr)։

Ձայնորդները։ Հայտնի է, որ հնդևիրոպական *y, *w, *r, *l, *m, *n վից ձայնորդները ունեն որակ կամ հատկություն՝ լինել ձայնավորի դերում, դիֆտոնգի տարրի դերում և բաղաձայն—մի տեսություն, որ արդարացվել է այդ լեզուների պատմությամբ և Սոսյուրի փոքրիկ, բայց շատ կարևոր մի աշխատությամբ։ Դրանց ձայնավոր լինելու դեպքում, այսինքն՝ երբ երկու բաղաձայնների մեջտեղումն են, առաջին երկուսը՝ y, w նույնանում են i և u ձայնավորների հետ, մյուսների տակ դնում ենք փոքրիկ շրջագիծ՝ r̥, l̥, m̥, n̥.

Հնդևիր. *i ձայնորդը, լայն թե կարճ, ներկայացված է հայերենում ի ձայնավորով, ինչպես՝ ելիք «էթողեց»=հուն. élipe և հայոց ցին=հուն. iktínos։

Հնդևիր. *u ձայնորդը, կարճ թե լայն, տրված է հայոց ու ձայնավորով, ինչպես՝ դուստր=հուն. thygáter, լիտ. dukter, կու „навоз“=սանս. gūthaḥ։

Հնդևիր. *r̥ ձայնորդը տրվում է հայոց ար հնչյունակոմպլեքսով, ինչպես՝ արբի «խմեցնի»=լատ. sorbēre, լիտ. surbiù։ Երկար r̥ ձայնորդը, որը փաստորեն համարվում է այդ r̥ հնչյունի և հա-

ջորդ *ə (շվա) ձայնավորի միացումը հայերենում հանդես է գալիս անորոշ. նա կամ համապատասխան է ար ձևով արմուկն բառի մեջ այլ լեզուների -ir ձևին (սանս. īrmah «արմուկն»), հին պրուս. ir- ձևին (irmo «կուռք») և կամ ծագել *arə- ձևից, որ տալիս է հին սլավ. ramo բառը։ Այդ հնդեվր. r ձայնավորը անդուկցիալի ենթարկված մի այլ ձայնավորի հետ (°r) նույնպես տալիս է հայերենում ար. ինչպես՝ գառիճք=հուն. warēn, սանս. úraṇah (<*w°ren-)։ Հայերենի «ռա կոշտ հնչյունը ալառեղ առացվել է «րա-ից հետևյալ «նա-ի աղդեցությամբ, ինչպես այդ պարզ երևում է դուռն-դրանդուրք-դրաց... առնեմ—արարի և նման դեպքերից և առաջարանութիւնից։

Հնդեվր. *l ձայնավոր ձայնորդը դառնում է հայերենում աղ, ինչպես ունենք գաղա=լիտ.—vilti «խարիւն, նմանապես *ol «տալիս է ալ, ինչպես սալ «դարբինների պինդ քարը կամ երկաթը, наковальня"=սանս. çilá «քար»։ Այդպես և կաղին=հուն. bálanos, լիտ. gilė, հին սլավ. želadĭ, լատ. glans (glands-is) և այլն, առացված *g"alen-ից, ուր հայոց «կաղինա-ը պիտի լիներ հնադույն ժամանակ *կալին, բայց սեռ. հոլ. կաղնոյ, որից և կաղնի ծառը, ալսինքն հայոց «լ» հնչյունը եղել է փափուկ e, i ձայնավորներից առաջ և ղ վելար (հետնալեզվային) ձևով բաղաձայններից առաջ, ինչպես բացատրում է Ա. Մելիեն։ Նման պատճառներով պիտի բացատրել ըստ խա—փալ || փաղ-փաղ-ել, թոլլ- || թողուլ, այլ || աղաւաղել, նշոլլ || շողալ և այլն։ Հետո պիտի ընդգծել, որ հին «իա ձայնավորը այդ հետնալեզվալին «ղա-ից առաջ մեծ մասամբ դառնում է «եա (Նեղոս, Բարսեղ, առեղ և նման բառերի մեջ)։

Հնդեվր. *n և *m ձայնավոր ձայնորդները դառնում են հայերենում ան և ամ, ինչպես, օրինակ, քսան=բետտիական (հուն.) wikati, սլվեան. vīsaitī, լատ. vīgintī, այդպես նաև հնդեվր. °n, °m>հայոց ան, ամ ինչպես՝ ամառն=հ. ս. գերմ. sumar։

Հին e, o, a ձայնավորները, որոնց վրա հավելանում են i, u, r, l, m, n ձայնավոր սոնանտները, կազմում են հնդեվրոպական լեզուներում երկբարբառներ (դիֆտոնգներ)։ Հայերենում դրանք այսպես են ներկայացված—երգ=սանս. arkáḥ, սիրտ=հուն. kēr, գոթ. hairto, սանս. hárdi, աղտ «աղ»=գոթ. salt (գերմ. salz)։ Երիսուն=հուն. triaconta։ Այդպես նշվել է (էջ) ընդալին ձայնորդների հետ կազմվող երկձայնավորը (դիֆտոնգը), հաջորդ s-ի հետ, երբ այդ ձայնավորները արդեն հայերենում ընկած են, ինչպես՝ ուս=սանս. ámsaḥ, գոթ. áms, ամիս=լատ. mensis։

Նմանապես նշվել է հայոց աւծանել և աւձ բառերի w ձայնորդի ծագելը ավելի առաջ եղած հնդևվր. n-ից, բայց նման հընչյունափոխութիւն չի եղել մեր գիւտ բառի մեջ, որը ցանկանում են կապակցել առնս. vindâti «գտնում է», լատ. findō «գտնում եմ» բայաձևերի այդ ներկա բների „n" ձայնորդի հետ, որպես դիֆտոնգի տարրեր: Հայոց այդ գիւտ գոլականը w ձայնորդը առացել է գիտ (եգիտ «ես գտայ», գըտ-անե-ալ) բայից գոլական կազմելու համար, ավելացնելով այդ w-ն արմատի կամ բնի ձայնավորի վրա, ինչպես մատչիմ բայից ունենք մատ, ճիսում բայից՝ ճիւս, յառիմ բայից՝ յուս, արածեմ բայից՝ արօտ և այլն (տե՛ս իմ O внутр. законом. разв. арм. языка, էջ 17):

Հնդևվր. *ai և *au դիֆտոնգները հայերենում մնում են այդ պարզ գրութեամբ, ինչպես, օրինակ, հայոց այծ=հուն. aiks (aigós), ապր «դիշերը իջնելու տեղ»=հուն. aûlis. Հնդևվր. *eu (*ew) և *ou (ow) դիֆտոնգը հայերենում անդրադարձել է ոյ ձևով, ինչպես՝ լոյս=հուն. leukós, loûssos. բոյծ «անուռնդ»=առնս. bhôgaḥ (հնդկրան. *bhaugas) և այլն: Մենք արդեն տեսանք, որ հայոց բոյր բառը առաջացել է հնդևվր. *swesor >*sweth)or >*sweur ձևից, որի դիֆտոնգն է eu (ew): Բուն հայերենի հողի վրա ոյ դիֆտոնգը համապատասխանում է ui (=ույ) հնչյուններին, ինչպես ճեղոյր «թափում էր», նման կազմութեամբ ճեղու բնից, ինչպես բերն բնից ունենք *բերեյր>բերեր կամ աղա- բնից՝ աղայր և այլն, թեպետ աեր բառի մեջ մեր «է» ձայնավորը (փակ ē) առացվել է eaj արիֆտոնգից (=ti+ajr, ուր ti- մասը, որպես բառամնացորդ կա նաև տի-կին և տի-ղերք բառերի մեջ): Իրաներենից վերցրած բառերի մեջ «է» այդ ձայնավորը փոխարինում է aj դիֆտոնգը, ինչպես աեզ=պարս. tēγ (<*taiγa-), իսկ ոյ դիֆտոնգը փոխարինում է իրանական au (=պարսկ. ō), օրինակ, կապոյա=իրան, kapauta, պահլևի kapōt: Ինձ թվում է թե նման հին փոխառութեան ժամանակ, բայց առաքա-բարելական լեզվից, հին -ոյթ առանցի ոյ մասը իրեն յ հնչյունի հայտնութեամբ, այսինքն՝ ոյ= ուլթ հնչմամբ, ունենք նաև նրևոյթ, բնոյթ, ձանձրոյթ և նման բառերի մեջ (համեմատել առաքարար. šarr-uth-u «թագավորելը, թագավորութեանը»):

Հայերենի մյուս դիֆտոնգները բավականին փոխված են և չեն համընկնում հնդևվրոպականների հետ: Օրինակ ea մասը կամ եապրում եմ բայաձևի մեջ, առաջացած -*ija նախնականից, որ կա միայն *-ijo անգրով հուն. biônai ձևի մեջ, կամ թե eā մա-

սը ստորեսի բնում (գործեաց, գրեաց...) կարող էր ստացված լինել * is-ā նախաստիպից. կամ թե ea մասը ձեաճ հոլովաձևից, որ կաղված է *-ijon նախածանի վրա, նկատի ունենալով հուն. chiónos «ձյան» սեռական հոլովաձևը։ Այդպես կարող են տարբեր ծագումով լինել և մյուս հայ դիֆտոնգածևերը. ինչպես՝ iw ձիւն բառի մեջ, որն արտահայտում է -ijo (կամ -ijō) ածգալինից առաջ (=հուն. chiôn, chióna), iw մասը միւս բառի մեջ (=մի+իւս), iw մասը իւր դերանվան մեջ, որը (իւր) ստացված պիտի լինի նախկին *sewe-r կամ *sewo-r ձևից՝ համարժեք հուն. he(w)é կամ he(w)ós նույնիմաստ կազմությանն, ew>iw դիֆտոնգը այլ նայլ բառաձևերում՝ աղիւբ>աղիւիր, հիւս>հիւս «հյուս» բիւր>բիւր, առիւծ>առիւծ և այլն. իսկ ew դիֆտոնգը, որ սկզբնականն է նւթն, մնւք, ձնւք. արդեւք բառաձևերի մեջ, միտում է ստացել դառնալ eaw տրիֆտոնգ՝ նաւթն, մնաւք, ձնաւք, արդեաւք և այլն։

Դալով բաղաձայն r, l, m, n, w, y նոնանտներին, պիտի նշել դրանց առանձնահատկությունը հայոց լեզվում։

*r բաղաձայնը բառի սկզբում հայերենում արտահայտված էր ֆոնեմայով, միայն բառակզբում ունի նախդիր (պրոթետիկ) որևէ ձայնավոր, ինչպես և հունարենում, որովհետև դրանք, ինչպես և շատ ուրիշ լեզուներ, չեն սկսում բառեր այդ r (r)-ով։ Հետո, բառամիջում, n (n) ընդալինից առաջ այդ «բ»-ն դառնում է կոշտ n, որը կարող է ենթալ և այն դեպքում, երբ այդ հանգամանքը արդեն չկա։ Վերջապես այդ r ձոնանտը, որ հնում եղել է բաղաձայնից անմիջապես հետո, տեղափոխվում է այդ բաղաձայնից առաջ։ Այդպես ունենք, օրինակ, pbpbմ=սանս. bhárāmi, հուն. phérō, լատ. ferō և այլն։ Սկզբում՝ bpbl=գոթ. riqis «աղջամուղջ, մութը», սանս. rájaḥ «մութ տարածություն», հուն. erebos, արեւ=սանս. raviḥ, որթամ (<ո-բուծ-ամ) «ործկալ»=լիտ. rùgiu, լատ. ructo, հուն. ereùgomai և այլն։ Երեց «աւագ» (=լատ. priscus) և երկք (լատ. tres три...) բառերի սկզբի „e" ձայնավորը նույնպես նախադիր է, նոր դարգացած։ rn կոմպլեքսում առաջին „r"-ն դառնում է ր (n), ինչպես դառն, առն «մարդ» (=հուն. arneiós) և այլն, բայց դառն-դրան, ձմեռն-ձմերան և այլն։ sr հին հնչյունակոմպլեքսը դառնում է հայերենում ր (n), ինչպես՝ քեռ «քրոջ»=հնդեվր. *swesr-os, սանս. svásre, առու=սանս. srutiḥ, իռլանդ. sruth «գետ», հուն. hru'ós «հոսող»։ Դրափոխություն (մետաթեզ) ունեն՝ սուրբ=սանս. çubhráḥ «պայծառ, մաքուր», քիրարն=հուն. hidrós, լատ. swēdri, արաասուք (<*drak'u-)=հուն.

dákry, հ. վ. դ. trahan, երկաթ=սանս. grávā, լիտ. girnos, սլավ. жернов. *Վերջին երկու բառերը — արտասուք և երկան — ջր-ից առաջ ունեն նոր «ր» նախադիր ձայնորդը:* Եղբայր (=սանս. bhrā́tā, լատ. frater...) և աղբիւր (=հուն. phréw)ar) *բառերը ունեն թե՛ դրափոխութիւն* (br>rb), *թե՛ տարնմանութիւն* (rb>łb) *և թե՛ նախադիր* e ‖ a *ձայնավորները:*

**l* հնդեվր. *ձայնորդը հայերէն տալիս է ղ* (l), *թե բառասկզբում և ձայնավորների միջում, ինչպես* լիզեմ=հուն. leichō, լիտ. lẽžiù, լատ. linguo, գիւղ *«ոլորում եմ, տրորում եմ»=հուն.* welû-sthē *«ծռվիլ է, կռացել է», լատ.* volvō: *Այդ հնդեվր. «l"-ն բառամայնից առաջ հայերենում դառնում է* ղ (ł), *ինչպես՝* եղն- *«էգ-նիկ»=սլավ.* елень, *հուն.* ela-phos, *հին իռլ.* elit *«վայրի ալծ», բայց այդ «ղ»-ն տարածվում է «ռ»-ի նման և մյուս հոլովներում (եղին, եղինք, ինչպես՝ դառին, դառինք), ուր սպասելի էր «ղ», համեմատել մեր բարբառների* -ali *«աղիս» ձևը ածանցավոր անալի (>ալանի>անլի>ալլի), որ նշանակում է «ոչ աղիս»: Հնդեվր. sl հայերենում լինում է* լ *կամ* ղ, *ինչպես* ջիլ *կամ* ջիղ, *որի դիմաց ունենք լիտ.* gýsla, *ռուս.* жила. *Այդ նույն* sl *բառասկզբում կորցնում է իրեն "s" (u) բաղաձայնը նաև լու «լսած, հայտնի» բառի մեջ (լըս-եմ<լուս-եմ, անց. կատ. լու-ալ, հրամ. լո՛ւ-ր), որի դիմաց ունենք սանս.* çrutáḥ, *հուն.* klytós, *բայց բառասկզբի* լու- *մասը կարող է ստացվել նաև* plu- *(սանս.* plúṣiḥ *«լուս», ալբ.* pl'est *«լուս» (?) և կամ* blu- *ձևից (—լիտ.* blusà, *ռուս.* блоха, *ֆիգ.* vraža *«լուս»):*

**n* հնդեվր. *ձայնորդի դիմաց հայերենը ունի բառասկզբում և բառամեջ* ն, *ինչպես՝* նիստ=սանս. nīḍáḥ, *լատ.* nīdus, *հվգ.* nest, ոիճ=սանս. sánaḥ, *լիտ.* sẽnos, *լատ.* senex: *Հայոց* եղունգն *պետք է կապակցել ըստ Մեյեի հուն.* onyks (ὄνυξ), *լատ.* unguis, *նույնանիշ բառերի հետ, համաձայնելով հայոց սկզբի «ե» ձայնավորը նոր (նախդիր), իսկ «ղ» (հին* l*) տարնմանութեամբ առաջացած «ռ»-ից, այնպես որ հնագույն ժամանակ եղել է *nung-n: Հետո, նկատվում է հնդեվր. *sn-ի վերածումը հայերենում պարզ «ռ»-ի, ինչպես՝* ունւ=սանս. snuṣā́, *սլավ.* сноха, *հ. վ. դ.* snura, *հայոց* գիւ=սանսկր. vasnám *«գինն», հայոց* ղկենում *«հագնում եմ»<*z-ges-n-u-m) *(արմատն է* ges-<*wes):

*Հին -*pn- *կոմպլեքսը նախապատմական շրջանում դարձել է հայերենում -ո(-ն), ինչպես* քուն=սանս. svápnaḥ, *հուն.* hypnos *և այլն: Ուրիշ իր ուն- արմատով ստացվել է *op-ne- ձևից, որի ձայնավորը (ուն-) այնպես է հարաբերում խեթական* ep-mi *«վերց-*

նում եմ», ինչպես ուտ-եմ բայը իր ուտ- վոկալիզմով վերաբերում է լիտով. ėd-mi։ Հավելացնենք, որ խեթերենում կա նույնպես et- «ուտել», որի et-(ed.) «ուտել» հար և նման է ep- ‖ ap- «վերցնել» -es- ‖ as- «լինել», ekk- ‖ akk- «մեռնել» և այլն։ Ըստ իս, հայոց ուն-ի բայի արմատը «ունենալ, սեփականություն ունենալ» իմաստով թերևս ավելի լավ լինի կապակցել խեթ. unattalla— «վաճառական» գոյականի հետ, ուր -atal(l)- ածանց է նման ռուսաց -тель մասնիկի (покупатель, создатель)։

Հնդեվր. *m բառասկզբում և ձայնավորների մեջ միում է հայերենում, ինչպես, օրինակ, միս=սանս. māṃsàm, գոթ. mimz. սլավ. męso, „мясо“, իմ=հուն. emé։ Հայոց ամիս բառի արմատն է mis, նկատի ունենալով լատ. mensis, հուն. mḗn, menós և այլն. „a“ ձայնավորը նոր զարգացած հնչյուն է, ինչպես ունենք և ուրիշ դեպքերում։ *sm կոմպլեքսը վեր է ածվում հայերենում պարզ „m“-ի, ինչպես՝ մի=հուն. mía (<*smia), որի արտկանը heis (հայոց եք «մեկ») առացվել է *sem-s ձևից։ Մն-ամ բայի արմատը (մն-) առացվել է *mn- ձևից, որն էլ հնում եղել է men- (mēn.), համապատասխան հուն. mén-ō, լատ. man-ere և այլն հնդեվր. նույնարմատ բայերին։

Մենք ունենք -mn (սեռ. հ. -man) ածանց, որը հնդեվրոպական է համարժեք սլավոնական -мя (знамя, племя, время) <-мен-, լատ. men (ceptamen, examen...), հուն. ma (սեռ. հոլ. -mn̥-t-os) և այլն, ինչպես՝ ջերմ, գեղմ, սերմ և այլն։ Բայց մենք նաև այդ մն (-ման) ածանցի այլևայլ ձևավորումը դրան նախորդող a կամ u ձայնավորների հետ ինչպես՝ պաշտաւն—սեռ. հ. պաշտամանն, ուր այդ -աւն ածանցը կարծես թե տարբեր է -աւն (=օն) այն ածանցից, որ կա կտրօն, գործօն և նմանների մեջ։ Աճուն բառի մեջ կա -*u-mn>uwn=ուն (անուն, սեռ. անուան)։ Բայց մենք ունենք -u-mn ածանցը, որով բայերից կազմում ենք վերացական գոյականներ (շարժումն, սալթաքումն, ուսումն), որը ըստ իս համապատասխանում է խեթական -umar ‖ -umn բայածանցին, որով առնդվում են բայանուններ (verbal nomen), ինչպես tarnumar «թողումը, թողնելը», որը գրվում է նաև tarnuwar (m>v անցումով), ուղղական հոլովում լինում է -umar (>-uwar), իսկ թեք հոլովներում՝ -um(a)n- (tarnumnas, tarnumni“)։ Այդպիսի կազմություններ են նաև՝ duškumar «զրադում, վայելք» (dušk- արմատից), wašdumar «հանցանք» (wašt -արմատից), arkuwar «աղաչում», šunnumar «լցնելը, լցնումը» և այլն։ Բայց հայերենը

ունի և -մն (-ման) ածանց, կազմած գոյականներից նախորդող «ա» ձայնավորի հետ, ինչպես սառն-ա-մանիք, այծե-ամն, եղևամն: Մեկնի կարծիքը, որ հայոց -ուն (շարժուն, թռչուն, գնալուն...) ածանցը առաջացել է հնդեվր. -omno-ից (լատ. al-umn-us „питомец"), որ -omn> own>հայոց ու կասկած է հարուցում, քանի որ ավելի մոտ համապատասխանող նման ձևը կա սլավոներենում, ինչպես ցույց են տալիս ռուսաց грызун, хвастун, лгун և նմանները:

Հնդեվր. w բառասկզբում վեր է ածվում *g^w, ինչպես բրետոներենում, իսկ հայերենում դառնում է գ (g): Այդպես են՝ գիտեմ=սանս. véda, հուն. voîda, գոթ. wait, գործ=հուն. wérgon, [w]órganon, հ. վ. գ. werc. (գ-)գենում=հուն. wénnymai. wéstai. սանս. váste «հագնվում է». գին=սանս. vasnâm. «գառը»=հուն. warên, գաղա=լիտ.—vilti «խարթլ», գարուն=հուն. wéar, լատ. ver. գետ=սլավ. вода, միջագ. bedy (βέδυ). գեղմ. լատ. vellus. գելում=հուն. welýsthe «շրջվել է», լատ. volvō. եգիտ=սանս. ávidat և այլն: Բայց վեց բառը պահում է բառասկզբում վ նման հուն. wéks և հին պրուս. uschts «վեցկերորդ»: Ա. Մեյեն բերում է Ֆր. Մյուլլերի կռմից հայոց վառնել=լիտ. virti, սլավ. варить և այլն, առաջարանելությունը, որը կասկածի տակ դրեց դեռ Ս. Բուգգեն (KZ. 32, 56) և Հյուբշմանը (Arm. Gr., էջ 494), հայոց վառեմ բայը ըստ Հ. Աճառյանի և ուրիշների կապակցվում է խեթերեն var- նավթեմասա բայի հետ:

Այդ հնդեվր. *w-ն հայ բառերի մեջում տալիս է ւ (w) կամ վ (v) ո ձայնավորից հետո, որ ու չսառացվի: Այդպես ունենք՝ տիւ «օր»=սանս. divé-dive «օրեցօր». կով=սանս. gaváh, հուն. bo[w]ós, լատ. bovis և այլն: Բայց այդ կով բառի դիմաց ունենք և կոգի «կարապ», ինչպես ունենք արև (=սանսկր. ravih) և արեգ, արեգակն: Նմանապես ունենք առու (=հնդեվր. *sru-ից) և ոռոգել, ոռոգել (<հնդեվր. *srow-): Միայն գ (<w) բաղաձայնով ունենք՝ տայգր<սանս. devár-, հուն. daér, լիտ. dēveris, ռուս. деверь, լոգանամ=հուն. loýo, լատ. lavo. wr կոմպլեքսում w-ն կորչում է նոր բառի մեջ (=հուն. ne-(w)ar-ós), սոր «ծակ»=լատ. caver-na, որ cav-<*kow- ձևից: Համեմատել նաև ձագրիւր (>ագրիւր)=հուն. phréar <*phrewar «ջրհոր» ձևից որ հայ ձևերը հանդում են հնդեվր. *bhrevr (սեռ. *bhrevros), իսկ հուն.=*bhrēvr:

Հնդեվր. *sw տալիս է բառասկզբում հայոց խ (kh), ինչպես՝ խոյր=սանս. svásā, գոթ. swistar. խուն=սանս. svápnah. քիրտն=սանս. svédah, հին սաքս. swēt.

Հնդևր. *k'w *տալիս է հայոց բառերի սկզբում* sկ, *ինչպես* սկուճդ՝ *գշնիկ»=սանս.* çvá *(հայց.* çvánanı). *գոթ.* hunds, սկե-unıp=*սանս.* çvaçrú, *սլավ.* svekry, *հուն.* hekyrá, *գոթ.* swaiho *և այլն:*

Հնդևր. *tw *կոմպլեքսը հայերենում դառնում է բառասկզբում* p, *ինչպես* քեզ=*սանս.* tvám, *հուն.* sé(<*twe), *իսկ ներս այդ* tw-*ին նախորդում է* s, *այդ* tw *դառնում է ոչ թե* p, *այլ* կ, *ինչպես* st *(փոխառյալ* st^e^) *հնդևր.* *st-*ի հանդեպ (ասիլել, առաջնալ..., -ևստ || -ուստ *ածանցի մեջ և այլն); ներս այդ* p *դերանվանական հոլիական արմատի վրա* (pn || քե- *քեզ, քեն, քիս) ազդել են կամ կոնտամինացիա են գործել Հայաստանի հին (գրնիկ) լեզուների, քանի որ եղակի երկրորդ դեպքի համար նախալեզվային պալեթական բաղաձայն* (k, g) *ունին վրացական և սեմական մեր՝ շրջապատի լեզուների այդ դերանունը:*

Հնդևր. *dw *կոմպլեքսը մի դեպքում* երկու *բառի մեջ, դարձել է* րկ, *ինչպես են սանս.* duvā, *հուն.* dýō (δύω), dó-deka, *սլավ.* dūva, *լատ.* duo *և այլն, որոնց հանդեպ հայոց* երկու *բառը պահել է միայն վերջին «ու» կամ «ո» (երկոտասան) երկակի նիշը: Ըստ իս հնդևր.* *dw *անմիջապես չի դարձել* րկ *և այդ հայոց բառը հնչյունապես ձևավորվել է միայն իրեն թվականների շրջապատում: Նախնական* dvō *ձևը հայերենում պիտի անդրադառնար* *tgō *(*tgu) *ձևով, որը առաջընթաց առնմանութեամբ դառնում է հետո* *tko (*tku), *իսկ հետո՝* rko (rku) *ստանալով նախադիր* r, *ինչպես կա և երեք (<tre-) բառի մեջ: Ինչպես լատիներենում ունենք* quatuor-quinquc (<pinque *հին ձևից), այդպիսի ձևաբանական առնմանութիւն երևի եղել է նաև* e-tko-erekh, *որ դարձավ* erko-erekh: *Ա. Մելիե բերված այլ դեպքերը այս* *dw>*հայոց* rk *օրինաչափութեան համար անհամոզիչ են և արմեստական: Նախ, հայոց մեղկ «թուլլ, թուլամորթ» բառը իզուր է համեմատվում սանս.* mṛduḥ, *լատ.* mollis (<moldwi-) *և նման բառերի հետ, քանի որ կա ավելի մոտ մեր* մեղկ (melk) *բառին խեթերեն* milisku—*բառը նույն նշանակութեամբ* (weak „слабый, хилый"), *երբ շատ օրինաչափ է հին* -ll *կոմպլեքսի դառնալը հայոց* -եղ *ձևին (Մուշեղ և խեթ.* Muršil, *Բոսպեղ=հուն.* Basil-cus, *Նեղոս=* Nil *և այլն, իսկ հին* sk *բառամեջ հայերենում պահում է մեկ «կ», ինչպես* musk-=*մուկ-ն,* *usk- „ухо"=*ուլ(ն)կն և այլն, այնպես որ մեր* մեղկ *բառը=խեթ.* -milsk- *ձևին: Երկրորդ մեր* երկար *բառը, որի արմատն է* erk- *(համմ. երկայն) չի կարելի կապել հուն.* dărós, *կամ* dērós «երկար» *բառի հետ, որի իրը թե հին ձևը*

եղել է *dwārós, քանի որ այդ w առնանուի առկայութիւնն հետք չկա, իսկ հայոց երկար բառը ավելի շատ պիտի համարել խառնիատական ծագումով՝ խուռ. k(i)rar ‖ k(e)rar «երիտասարդ» (հնչվում էր krar). մեգրելական rikali (id.): Վերջապես հայոց երիկ-իմ (երիկուղ) բառի արմատի (erk-) նշանակութեան համընկնումը հուն. d(w)eyos «վախճան բառին այդ արվեստական ձևով դեռ ոչինչ չի ասում:

Հնդևր. *y ձայնորդը հայերենի բառասկզբում պարզել է յ. ինչպես՝ լուծ=սանս. yugám, պարսկ. juγ, հուն. zygón, լատ. jugum, սլավ. igo..., բոլորը *yugó-m նախաձևից, նմանապես՝ լեարդ=սանս. yákrt (սեռ. հ. yaknás), ավեստ. yākarə, պարս. jigar, հուն. hēpar, լատ. jecur և այլն. այժմ ևս բարբառներում (օրինակ Աշ: տարակում) կարելի է լսել յուպկա=ռուս. юбка, այնպես որ հնդևր. *y պիտի ընդունել թե յուծ և թե լեարդ բառերի սկզբում (յեարդի և մյուս նուիրարմատ բառերի համար առհասարակ են նախնական *lyēkrt): Բայց Ա. Մեյեն առաջարկում է հնդևր. *y հնչյունի համար նաև բառասկզբում հայոց «ջ», որ ինձ թվում է անհամոզիչ. ինչպես՝ ջուր=լիտ. júres, հին պրուս. juray «ծով» և ջանամ=հուն. zēlos (ζῆλος) «առնդ, ավյուն»: Ինչպես տեսնում ենք վկայութիւն բերվում է հայերենից և մի երկրորդ լեզվից, որ շատ քիչ է, իսկ ջանալ արմատը թվում է ինձ իրանական «ջանն» (=հոդի, մարմին) բառից, ինչպես մենք ունենք հոգի և հոգ տանել, հոգալ: Ա. Մեյեի ասելով, հնդևրոպական միջձայնավորյան *y-ն հայերենում (և հունարենում) ընկած է եղել միևնույն թեմատիկ ձայնավորների անկումը, ինչպես դոյականներից առեղծված բայերի մեջ (գրել, ջրել, սիրել..., յուսալ, թուալ...), ուր e խոնարհիչը առացվել է -eye (=սանս. -aya), իսկ ա խոնարհիչը՝ -āye (=սանս. -āya) ձևերից: Նուիրարմատ այդ -y ձայնորդը ընկած է երեք բառի մեջ, որ նախաձևում եղել է *treyes=սանս. tráyaḥ, սլավ. trĭje: Այդքան երեք բառի «ի» հոլովումը (երից, երիս, երիւք) չի՞ ասում հնադուն *երեք ձևի մասին, թեպետ շեշտափոխութիւն կա:

Մի շարք բառերից հետո եղած «ջ» բաղաձայնը ուզում են հանել հնդևր. *y-ից, ինչպես՝ առիրջ=հուն. steīra (<stérya-ից), աճուրջ «երազ» (*anōryo-ից) =հուն. óneiron (*>oneryon-ից), ողջ=իռլանդ. uile (<*olyos): Բնորում են և մուճջ, ջինջ (ջնջիմ, հուն. theinō) օրինակները, բայց դրանք սխալ են, քանի որ մուճջ բառը առացվել է մուռ (լատ ու մուռ) ձևից՝ մուռ>մուջ> *մուճջ, ինչպես *čar>čaǰl>ճանճ և այլն (տե՛ս իմ „О взаимоотношении арм. и лазо-мегр. языков".

Հնդևր. *ky տալիս է հայոց չ, ինչպես՝ աչք (=հուն. osse< <*ok*ye), չու=սանս. cyávate «շարժվում է» հուն. seúō, (<*ky-ew-) «շարժվում եմ»։

Հնդևր. *dhy տալիս է ջ մէջ բառի մեջ=սանս. mádhyaḥ, լատ. mediŭs և այլն, իսկ հնդևր. *sy միանում է-ոլ հոլովաձևի մեջ (սեռ. հոլ.) «ոս» թեմայով, ինչպես՝ մարդոյ=սանս. mártasya, հուն. (համեմատական) brotoîo «մարդու» -oio ձևով։

Եթե դանք այն նոր հնչյունափոխությանը, որ եղել է արդեն կազմակերպվող կամ կազմակերպված հնչերևույթում, ապա կարելի է շեշտել մի քանիսը։ Նախ, խուսափումը ks, kt հին կոմպլեքսներից, որոնցից առաջինը դառնում է „y“, իսկ երկրորդը հավանորեն «չ» (չորք բառի մեջ)։ Հայոց թն խումբը դարձել է թն>ռն դառնալ և բառնալ բայերի մեջ (համմտ. դարձալ և բարձի, որ ցույց է տալիս նեղիալի համար *դարձնալ և *բարձնալ)։ Մեռաթեղան եղել է հնուց և շարունակվում է արդի բարբառներում, երբ մանավանդ հետքադաձայնյան «ր» սոնանտը թռչում, ընկնում է այդ բաղաձայնից առաջ, ինչպես սուրբ (<*subro), քիրան (<*khitran), արտասուք (<*drak'ur), ինչպես բարբառներում՝ մրկատ (<մըկրատ), առկա «առատ» (<ակտա) և այլն։ Կրկնակի բաղաձայն լինում է երկվանկ բառի մեջ, ինչպես երկրորդ (առբիատի) ապառնիում՝ կևցցես, կացցես, ընթերցցիս (‖ ընդ+թերցցիս) և այլն, իսկ բազմավանկ բայերում այդ gg կոմպլեքսը դառնում է ug, ինչպես, սիրևացես, գնաացես, առաացիս (=ըստաացիս) և այլն։

Հատկապես պիտի նշել, որ հաջորդ վանկի «ու» ձայնավորը չի թողնում, որ նախորդ վանկում լինի «ի», որը սպասվում է ըստ օրինաչափության։ Օրինակ, տեր բառից ունենք տիրել, տիրական և այլն, բայց տերություն, տերության։ Հետո ճիշտ կերպով ունեն մեր բարբառները։ Վաթսունն ձևի տեղ ըստ այդ դիտողության սպասելի էր վեթսուն։

Բառաձևերում u (ու) և i (ի) ձայնավորներից հետո չի դրվում j (յ), երբ, օրինակ սպասվում է *խրատուլ, թողուլ, բերիլ և այլն։ Նմանապես u (ու) ձայնավորից հետո չի դրվում w, r (խրատուու, խրատուուլ)։

Վերջապես հնդեվրոպական հնչյունաբանության մեջ կարևոր տեղ բռնող e ‖ o ‖ - ալտերնացիայից, թե՛ թեքման ժամանակ և թե՛ բառակազմության, հայոց լեզվում հետքեր են միայն շատ քիչ հետացորդներ, որպես վերապրուկներ: Հոլովման «ո» թեմային ժամանակ հանդես էր գալիս հին ժամանակ դեռ հարսին—հարսամբ—հարսունք հնչյունափոխությունը, ուր in ‖ an ‖ un հայոց այդ փոխակերպումները արտացոլում են հնդեվր. -*en-os (=հուն. ev-os) ‖ -*n-bhi (=սանս. -abhiḥ հոգնակիում) ‖ *-on-es կամ -*ōn-es (=հուն. ον-ες կամ -ων-ες): Պիտի նշել նաև e ‖ o հոլովման թեմային առկայությունը հետ բառի համար—հնագույն հետեւ քարացած ձևի մեջ և սովորական «ոտ» հոլովման մեջ, ինչպես՝ հետ, հետոյ, հետույ: Հետո այդ հետ բառը «ոտ» իմաստով հնդեվրոպական լեզվում ուղղականում ունեցել է pod- ձևը հանդես թեք հոլովման ped- ձևի, որի հետացորդն է հայերենում ոտ-ն և հետ (որից լետա=լ-հետ): Համեմատել հուն. póda. «ոտն» և հայց. հոլովում pédon, սանս. padàm: Մեռանիմ բայը իր արմատում ունի „e" ձայնավորը («ոտ»-ի համար համեմատել խեթ. merr- «մեռնել»), իսկ նույն արմատից կազմած մարդ («մահկանացու») բառը իր -ar- հնչյուններով արտացոլում է r ձայնորդը (=սանս. mṛtàḥ «մահ»), առանց „e"-ի: Լոյս բառի (=հուն. leukós) դիմաց ունենք և լուսն „бельмо" լսենալ «աչքի վրա սպիտակ արատ ունենալ»: Բեր-եմ բայի ber- ձևի դիմաց ունենք և -wor ածանցը լուսաւոր=հուն. leukophoros) և Թերևս բարդ «դեղ» (որից՝ բարդել) e ‖ o ‖- (դերո) ալտերնացիայով: Կին բառը հոգնակիում ունի կան-ա-ք ձևը, որոնցից kin (<*ken-) ձևը ունի „e" ձայնավորը (=սլավ. жена, հին պրուս. genna), իսկ kana- ձևը դերո ալտերնացիա (=հուն. γυναῖκες, բնոտ. ϝανᾶκες): Մանր-մասը քառի մեջ արտացոլում է երկակի թիվ (=բնոտ. wikati), իսկ -սան մասը՝ հոգնակի (երեսուն=հուն. triákonta): Ունենք միակ օրինակ o ‖ ə փոխանակման -եսու (=սանս. ādām, հուն. édō·ka), տուր-ք (=հուն. dōron, սլավ. дарь) և մյուս կողմից տամ (<*də-ye), ինչպես լատ. dă-mus «տալիս ենք» ձևերի մեջ (տե՛ս Ա. Մեյեի „Esquisse", էջեր 61–62):

Հայոց լեզվի հնչյունաբանական սիստեմը և պատմական փոփոխումը շատ է տարբեր հնդեվրոպականից, և, ինչպես երևում է, այդ եղել է որոշ ներհուն միաումներից (տենդենցներից) դրդված, գլխավորապես նրանից, որ հայերենի շնչարը, որ վերջընթեր էր, կրում էր հենց սկզբից ուժական (ինտենսիվ) բնույթ և անշարժ

(ֆիքս) բնույթի, որ կայունացավ արդեն վերջին վանկի վրա, քանի որ նախկին վերջին վանկը չքացավ։ Հնդեվրոպական լեզուների շեշտը երաժշտական էր և շարժուն, ձայնավորները լինում էին կարճ և երկար, որից գուրկ էր հայերենը։ Համառոտ ակնարկ (ձայնորդ) հնդեվրոպական հնչյունները, որ երբեք ձևով էին հանդես գալիս այդ լեզուներում (բաղաձայն, ձայնավոր և դիֆտոնգի երկրորդ տարր), հայերենը բնավ զրկված էր այդ նրանց հատկանշից։ Իսկ հնչափոխությունները այնքան փոխվեցին, որ առաջին հայացքից ոչինչ նմանություն չեն տեսնում հայր և *patēr*, եղբայր և *bhrâter*, քոյր և *swasar* (սանս.) և մանավանդ երկու և *duwo* կամ հինգ և **penk*^{w}*e* բառերի մեջ Ա. Մեյեն այդ հիմնական փոփոխիչ տարրերը վերագրում է մեր երկրի ոչ հընդեվրոպական լեզուներին (Esquisse, 58—59)։

ԳԼՈՒԽ ՑՈՓԵՐՈՐԴ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԹԵՄԱՆ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Գոյականներ և ածականներ: *Թրաքարի հոլովումը կատարվում է երկու թվով՝ եզակի և հոգնակի, ունի յոթ հոլով՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, ներգոյական և գործիական: Ձկան տրական, իգական և չեզոք սեռեր:*

Սովորական հոլովումը լինում է յոթ տեսակի՝ ա, ի, ու, ո, ե, ր, ղ, որոնցից առաջին չորս տեսակը ձայնավոր տիպի են: Բնթերնք նախ հենց այդ ձայնավոր տիպի հոլովման պարադիգմաները և վերլուծենք դրանց հնդեվրոպական բնույթը, ինչպես բերում է Ա. Մեյեն (Esquisse, էջ 66 և շար.):

Ե զ ա կ ի

	ա թեմա	*ի թեմա*	*ու թեմա*
Ուղղ., Հայց.	*ամ*	*բան*	*զգեստ*
Սեռ., Տր., Ներգ.	*ամ-ի*	*բան-ի*	*զգեստ-ու*
Բաց.	*ամ-է*	*բան-է*	*զգեստ-է*
Գործ.	*ամ-ու*	*բան-իւ*	*զգեստ-ով*

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ.	*ամ-ք*	*բան-ք*	*զգեստ-ք*
Հայց., Ներգ.	*ամ-ս*	*բան-ս*	*զգեստ-ս*
Սեռ., Տր., Բաց.	*ամ-աց*	*բան-ից*	*զգեստ-ուց*
Գործ.	*ամ-ուք*	*բան-իւք*	*զգեստ-ուք*

Օ թեմա

Եզակի		Հոգնակի	
Ուղղ., Հայց., Ներգ.	գետ	Ուղղ.	գետ-ք
Սեռ., Տր., Բաց.	գետ-ոյ	Հայց., Ներգ.	գետ-ս
Գործ.	գետ-ով	Սեռ., Տր., Բաց.	գետ-ոց
		Գործ.	գետ-ովք

Ուղղական հոլովում ի ձայնավորով վերջացող բազմավանկ բառերը ենթարկվում են երկու տեսակ հոլովման: Առաջին տեսակները, որոնք -ացի ածանցով են (գիւղացի, կանացի...) և որոշ բառեր, ինչպես հոգի, որդի և այլն, ենթարկվում են ջ հոլովման, ուր այդ „i" ձայնավորը դառնում է w (io>wo), իսկ մյուս բառերը, մասնավորապես -ուհի ածանցով վերջավորվողները ենթարկվում են „a" հոլովման. պահելով „i" վերջին ձայնավորը, վերածելով էա դրութեյան (ia>ea), բայց սեռական-տրական հոլովաձևից, ուր լինում է -ւոյ (քրմուհւոյ, տեղւոյ...), ինչպես է բոլոր մյուս դեպքերում՝ էի ձայնավորով վերջացող գոյականների մեջ: Հատուկ անուններըը, որոնք ունեն -ուհի վերջածանցը, մինչև իսկ սեռական-տրականում ունեն -եայ ձևը (Տիգրանուհի—Տիգրանուհեայ—Տիգրանուհեաւ):

Հայերենի հոլովման հիմնական չորս հոլովումները մոտենում են հնդեվրոպական նույն տիպերին, որոնցից i և u թեմանները իրոք պատկանում են ձայնորդ «աթեմատիկ» տիպերին, ինչպես ունենք r, l, n հոլովման աթեմատիկ տեսակները: Սակայն հայերենում, ինչպես և շատ այլ լեզուներում i և u ձայնորդ տիպերը խառնվել են ձայնավորական o կամ a (ā) թեմատիկ հոլովումներին, ուր թեմատիկ ձայնավորը և վերջավորութեյան ձայնավորը խառնվում են, իսկ թեմատիկ բունը արդեն առանձին չի դիտակցվում, ինչպես դիտակցվել է հնում:

Ըստ հոլովման տիպերի կամ տեսակների, հայց o հոլովումը (օրինակ, քուն—քնոյ—քնով) համընկնում է սանս. svápnaḥ, լատ. somnus, հուն. hy'pnos բառերի հոլովմանը. a հոլովումը (ամ-ամի—ամէ-ամաւ... համընկնում է սանս. sáma բառին, արուեստ և st (փառաւոր, թաքուստ... գովեստ, ուսուցոտ... (վերջածանցով բառերի հոլովումը «i» հոլովմամբ համընկնում է, օրինակ, հին սլավոնական юность, молодость *նման կազմութեյամբ (-ti) բառերի հոլովման (խնթ. -asti վերջավորվող գոյականները նույնպես), իսկ „u" հոլովման*

համար (զարդ-զարդու) համեմատել օրինակ, հունարեն artys «հարդարանք» բառի նման ըստեմատիկ հոլովումը:

Թեմային ձայնավորի և վերջավորության խառնվելը և առանձին չգիտակցելը երևան է գալիս մինչև իսկ հին հունարենում III դարում (մեր էրայից առաջ), ուր աբեննացին չէր ընկալում hypno -բունը hy'pnos, hy'pnou և hypnō հոլովական ձևերում («Esquisse», 68): Իսկ այդ o տիպի -o-is վերջավորությունը անցնում է արական և չեզոք բառերի վրա հյուսիս-արևմտյան հունաստանում, ուր III դարում արդեն ունենք androis, somatois և այլն: Կամ լատիներենում «i» ընկ հոլովման -bus (=i-bus ինչպես pedi-bus) ձևը, որպես -ibus ասում, -mū (արակ. հոգն.) վերջավորությունը հոլովման թեմատիկ «i» ձայնավորի հետ միանալով դառնում է նոր -i-mū) slovesīmū և այլն:

Հայոց լեզվի շեշտի վերջընթեր լինելը և վերջին վանկի և ձայնավորի տարրեր փոփոխություններ կրելը, մինչև նրա անկումը ներառյալ, հիմք են ծառայել նաև հոլովականների փոփոխության և անկման, ինչպես սրանց հետ կապված նորամուծությունների, որ երբեմն դժվար է լինում բացատրել: Այնուամենայնիվ հայերենը հնդեվրոպական ութ հոլովներից կորցրել է միայն կոչական ձևը և պահպանել յոթը, այնինչ հունարենը, որ այդքան հին է իր ձևաբանության մեացած կողմերով, պահել է միայն հինգ հոլով: Բալթիկ սլավոնական լեզուները, որ հայոց լեզվի նման ուշ են փակված, նույնպես շատ հոլովականներ են պահել:

Հոլովականների և տիպերի հնդեվրոպական ծագման տեսակետից վերցնենք նախ ձայնավոր (վոկալ) տեսակները:

Աչքառու նշանի է վերջավանկ ձայնավորների անկման հետևանքով նախ ուղղական և հայցական հոլովների միատիպ լինելը, այնինքն՝ առանց դրանց հատուկ նշվածքի: Օրինակ, քուն ձևը համապատասխան է թե՛ սանս. svápnaḥ, լատ. somnus (=հուն. hy'pnos) եզակի ուղղականներին և թե՛ սանս. svápnam, լատ. somnum (=հուն. hy'pnon) եզակի հայցականին: Այդպես էլ աղ ձևը = սանս. sámā (ուղղ. եզ.) և sámām (հայց. եզ.), զարդ = հուն. artys (ուղղ. եզ.) և artyn (հայց. եզ.), սիրտ = լիտ. širdis (ուղղ. եզ.), širdin (հայց. եզ.) և կոչական širdē-ին: Հոգնակիում ուղղականի համար ավելացնում ենք p, որը ձևական տեսակետից երբեմն համընկնում է. հնդեվր. s-ին, ինչպես բալթական -մք վերջավորությունը (սիրեմք...) = սանս. -maḥ, գոթական -mes, լատ. -mus, -kp = լատ. -tis, p գոթականների հոգնակիում (nm-p) = s (սանս. pādaḥ, հուն. pódes),

-pp (գործիականում)=սանս. -bhiḥ, ավեստ. -bīš, լատ. bus և այլն։ Հնդեվր. երեք և չորք բառերը (սանս. -tráyaḥ, սլավ. triye, աւտիկ. treĩs և այլն) ունեն, ինչպես տեսնում ենք, հոգնակի նշան։ Ա. Մեյեն այս բոլորը նշելով հանդերձ, ավելացնում է, որ հայերենի ք մասնիկի երեակը հնդեվր. s-ի տեղ, անտարակույս է (n'est pas constante, էջ 70)։ Այդպես է գրված և Fsquisse-ի 1903 թ. հրատարակության մեջ։ Ըստ էս, ոչ մի տարակուսս չի կարող լինել, որ հայոց ք նշանը հոգնակիի համար է և որ դա հանդես է գալիս ոչ թե իբրև հոլովման և խոնարհման վերջավորություն, այլ իբրև վերջածանց։ Մասնավորապես մեր խոնարհումը՝ եմ—եմք (есмь—есмы), ես—էք (ecu—ecma), ինչպես և մյուս դեպքերում (գովեմ—գովեմք, գովես—գովէք, ագամ—ագամք, ագաս—ագայք) ավելի հարում է վրացական տիպի կառուցվածքին՝ var «եմ»—var-th «եմք», xar «ես»—xarth «էք», vakheb «գովում եմ», vakhebth «գովում ենք», akheb «գովում ես»—akhebth «գովում էք»։ Ա. Մեյեի և մյուսների այդ մեր «ք»-ի գենումը գուտ մեխանիկական, անենդենցիոզ և ձևական է։

Հայոց բառերի հոգնակի հայցական s ձևը անշուշտ հնդեվրոպական է, բայց հնդեվր. պարզ s հնչյունը հայերենում ըստ օրինաչափության պետք է ընկներ։ Ենթադրվում է, որ հայոց s ձևը հասել է իր նախնական վիճակում *ns, ինչպես նման տեսակը ունենք հունարենի կրետական բարբառում (*ns) և դոթերենում (-ns), այսինքն՝ հայերենում այդ ns դարձել է s, ինչպես մեր „мясо" (<menso), ամիս „месяц" (լատ. mens-is) և նաև այլ դեպքերում։ Իսկ քանի որ հայոց այդ հոլովաձևը ծառայում է նաև ներգոյական հոլովի համար (ի մեռս, ի սիրաս...), ուր հնդեվրոպական լեզուներում եղել է -*su (հնդիրանականում, բալթիկ-սլավոնականում) և հունարենում -*si, ապա ենթադրվում է, որ այդպիսի մի ձև եղել է և հայերենում։ Բայց ըստ հայոց հնչյունաբանական օրենքի, ձայնավորով վերջացող բառերին վրա ավելացած -su կամ -si ներգոյականի հոլովաձևը պետք է ընկած լիներ (երկու ձայնավորների մեջ s բաղաձայնը ընկնում է), ուստի ենթադրվում է, որ «աթեմատիկ» բնեռի (r, l, n հոլովումների վերջում) պահվող -su (-si) վերջավորությունը ըստ անալոգիայի անցել է նաև թեմատիկ հոլովաբնեռին (a, o, u, i)։

Գործիական հոլովաձևը ձայնավորով (ա, ո, ի, ու) վերջացող բնեռում նույն է թե՛ եզակիում և թե՛ հոգնակիում, երբ վերջինիս համար ավելանում է հոգնակիյա «ք» մասնիկը։ Գործիականի վերջավորությունն է -աւ (-aw), -ով (-ov), -իւ (-iw) և -ու (-u),

որը առացվել է -*uv (-*uv) հին ձևից։ Համեմատել հունարեն՝ -ēphi = հին -āphi (առնս. -ā-bhiḫ), հոմեր. -o-phi, հոմեր. -*u-phi (= սանսկր. -u-bhiḥ), հոմեր. i-phi (օրինակ՝ wiphi «ուժգին կերպով»)։ Հայերենը, ինչպես տեսնում ենք, իր w (v) վերջավորությամբ, որը հին *bh-ից է, մոտենում է հնդեվրոպական, հունական, լատինական և կելտական լեզուներին (բալթոսլավական և գերմանական լեզուները ունեն *m վերջավորությունը, ասլավ. -mi հզակիում և -*mi հոգնակիում)։ Հայոց այդ -w(-v) վերջավորությունը, ինչպես և -b (դառերը, անուամբ և այլն), ընձեռում են միասին մի փոնկցիա՝ գործիական հոլով, այնինչ հիշյալ հնդեվրոպական լեզուները այդ *bh կամ *m ձևերով առեղծում են գործիական, բացառական և տրական հոլովաձևերը (սանսկրիտում և ավեստայում միայն հոգնակի գործիականի համար, սանս. -bhiḥ, ավես. -biš)։

Դրաբարում հոգնակի սեռական-տրական-բացառական հոլովաձևերում, ինչպես ձայնավոր թեմաներում, այնպես էլ բաղաձայն («աթեմատիկ») հոլովումներում և դերանուններում (բացի անձնական 1-ին և 2-րդ դեմքերի), ունենք g (c) վերջավորությունը, որ նման հոգնակերտ «ք»-ին չի բացատրվում հնդեվրոպական հողի վրա։ Ձևական տեսակետից, քանի որ այլ դեպքերում անգալին և նաև (liguida) ձայնորդներից հետո եղած «ց»-ն (անձանց-հար-ց) վերարտադրել է հնդեվրոպական *sk հնչյունակոմպլեքսը և այդ «ց»-ն չի փոխանակվել ձայնեղ տեսակի հետ (ձ, ձՀ), ապա այս սեռ.-տր.-բաց. «ց»-ն ևս պետք է այդ նախկին *sk ծագումը ունենա։ Այդպես էր մոտենում վերլուծմանը Ս. Բուգգեն։ Նա առաջարկում էր այդ «ց»-ն ոչ թե որպես վերջավորություն, այլ որպես վերջածանց -sko ձևով ինչպես հին սլավոներենում ունենք nebesĭskŭ «երկնքի» (սեռ. հոլովի խմաստով), առաջացած nebes-ĭnĭjĭ» (=небо «երկինք»), ինչպես կան чудес-, колес-о, кудес-ник) և նման -es ձևով բներ։ Օրինակ, հայոց մի քնոց ձևը պիտի սկզբում ունենար ուղղականի *swopho-sko-s, հայցականի *swopno-sko-n ձևերը, որ առանում է (?) սեռականի և հետո նաև տրականի և բացառականի ֆունկցիա։ Ուրիշ ունենում ենք -os-kos, -askos, -iskos, -uskos ձայնավոր (թեմատիկ) հոլովման սեռ.-տր.-բաց. հոգնակի նախկին բարդ կազմություններ։ Այս արհեստական ձևակազմությունը ըստ իս, անհամոզիչ է նախ վերջավորության փոփոխումով վերջածանցի (-sk ածանցը կա և ուրիշ հնդեվրոպական լեզուներում բառաստեղծման համար) և հետո ֆունկցիայի տարօրինակ ձևակերպումով։ Ես կարծում եմ, որ այդ «ց» վերջավորությունը հնդեվրոպական չէ, ինչպես վրաց լեզուն

անի k'alak'-t'a «քաղաքաց», *ուր* t'(=th) *վերջավորությունը անիրևիք ֆունկցիա հոդնակիում (սեռ., տրական, բացառական) այլ-ապես էլ փոքրասիական (ասիանիկ) լեզուների (Հայոտասի) հիման վրա կազմավորվել է մեր ալ «ցց թնքուլքը, ինչպես և հոդնակերա «ք մասնիկը։ Ն. Մառը հայոց «ցց և վրաց նուշնապաշտան „t" ձևերը միևնույնն էր համարում ըստ ծագման, մանավանդ որ այդ հնչյունների փոխանակումը կարելի է տեսնել և այլուր. օրինակ վրաց* ცხა (thixa) «կնդա, ցեխա», *որը համընկնում է մեր «ցեխա» արմատին, կամ մեր «թխել»* (печь) *և վրաց* ცხორა (ցխորա) „печь, испекать(ся), выпекать(ся), согревать яйца (о наседке). *համեմատել մեր* թուխս *բառը։ Համեմատելի է նաև մեր բարբառային* -ից (-ուց <*ուից) *բացառականի վերջավորությունը վրաց գործիական-բացառական* -ით *ձևի հետ, որը կա և բնեռադիր խեթերենում* (-it) *և հիերոգլիֆ խեթերենում եզակիում և հոդնակիում* -ta *ձևով* (Abl. —Instr., *տե՛ս* I. Gelb, Hitt. hieroglyphs, III, Chicago, 1944, *էջ 41*)։ *Հետաքրքրական է նաև մեր հետադա* -ուր ‖ -ուց *այսերնագիտան, որ տեղի է ունենում բարբառներում բացառական հոլովաձևի մեջ. ինչպես՝ ճնուր «հնուց», մանկուր «մանկուց», հօրուվ «հորից», մօրուվ «մորից». այսինքն հորս և մորս ժամանակից։*

Հայերենի -իա *և* -ուա *հոլովման սեռական-տրական-ներգոլական սրտի և զարդու ձևերին համապատասխան են սանսկրիտերենի սեռ.* -iyaḥ, -uvaḥ, *տրական՝* -iye, -uve, *հունարենում՝ սեռական* -iyos, -uwos *և տրականում՝* -ī, -yi (-vi) *ձևերը։ Հետաքրքրական է սեռական-տրական սրտի* (srti) *ձևը համեմատելի է հուն. Πόλ-ιος «քաղաքի» ձևի հետ։*

Ավելի դժվար է բացատրել a *հոլովման սեռական-տրական-ներգոլական «իա» վերջավորությունը, օրինակ* ամ *բառից* ամի *ձևը, որը Ա. Մեյեն կոչում է առեղծվածային* (énigmatique)։ *Բայց և այնպես նման առեղծվածային ձևով առաջարկվում է համեմատել հայոց այդ ձևը իռլանդական լեզվի, օրինակ՝* túaithe «ժողովրդի» (*սեռ. հ.*) túath «ժողովուրդ» *ուղղականի հոլովից (հին արմատն է* *teuta, *որ կա բալթիկ լեզուներում* tauta *ձևով և գերմաներենում՝* teut-on, diutu „deut-sche") *և այլ ձևերի հետ։ Հայոց այդ սեռական ամի և նմանները, որոնք* a *հոլովման տակ են գնում, առաջարկվում է կապակցել նաև հնդիրանական* ā *թեմային, օրինակ, սանս.* senāyāḥ, *հին պարսկ.* haināyā «հնից» *սեռականների հետ։ Մեր հասուկ անուններին սեռական-տրական* -այ *ձևը (Տրդատայ, Արշակայ և այլն), ըստ Մեյեի, չի արտացոլում հին* -a *թեմատ։*

Հայց ո թեմային նգակի տրականը պիտի տար *ōl (=հուն. -ω; լիտ. -ul) և կորցնար վերջավորութիւնը. ենթադրվում է, որ նգակի սեռական հնդեվր. -*osyo (=սանս. -asya, հոմեր. -οιο) վեր է ածվել հայերենում -oյ ձևի, որը և այլ հոլովումների անալոգիայով անցել է նաև տրական հոլովաձևի. այդպես հայց քնոյ ձևը արտացոլում է սանս. svápnasya, հուն. (հոմերական) ὕπνοιο ձևերը:

Հնդեվրոպական հոլովման վերոհիշյալ թեմատիկ տիպերը կազմվում են կամ անմիջապես բառի արմատից և թեմային, կամ արմատից և մի որևէ ածանցից՝ նույն թեմատիկ ձայնավորով:

Այդպես են ο թեմայով—գործ (գործոյ, գործով)=հուն. wérgon «գործ» և wórganon «գործիք», կեր. որ պիտի արտացոլեր *կոր (>կաւր, կերակուր?), ձևով գոլական, եթե ճշտորեն հնդեվրոպական ձևավորում առանար նման հունական lógos, phóros և նմաններին: Մ ա ն ի կ ն ե ր ո վ ունենք -*yo- մ ա ն ի կ ո վ՝ մէջ (միջով) = սանս. mádhyaḥ, լատ. medius, -*no մ ա ն ի կ ո վ՝ մուճ (մուով) «ճանճ», համմ. այլ մ ա ն ի կ ո վ՝ լատ. mus-ca, լիտ. mus-é, հուն. myĩa (μῦια), սլավ. мухa, -*to- մ ա ն ի կ ո վ՝ մարդ (մարդով)=սանս. mrtáḥ «մահ», հուն. brotós<*mrotos «մարդ, մահկանացու», -*ro- մ ա ն ի կ ո վ՝ տուր-ք (տրով-ք) =հուն. δῶρον, սլավ. даръ (darŭ), -t- մ ա ն ի կ ո վ՝ գալար (գալարով) =հուն. θαλερός, -*tro- մ ա ն ի կ ո վ՝ արաւր (արաւրով)=լատ. arātrum և այլն:

Հնդեվր. -ā թեմայի տակ են գնում, ինչպես տեսել է, հայց a հոլովումը, ինչպես ամ (ամի, ամէ, ամաւ), սկեսուր (սկեսրաւ) =հուն. hekyrá. նմանապես մեր «լեզու» (լեզուաւ) բառը, որի վերջին մասը այդքան մոտ է սանս. jihvā, լատ. lingua բառերին: Որոշ բարդութիւններում և ածանցավոր բառերում, ինչպես ընկեր, բազուկ և այլն, մենք տեսնում ենք a հոլովում: Օրինակ ընկեր բառը, որ նշանակում է «միասին ուտող» նման է ռուսաց вое-вода, լատ. -agri-cola «երկրագործ», հուն. ορνιθο-θήρας «թռչուն որսացող» բառերի կազմութեան a հոլովումով, թեպետ կեր «տանուղ» առանձին բառը գնում է ο հոլովման տակ (կեր, կերոյ, կերով): Այդպես էլ բազուկ բառի -ուկ մ ա ն ի կ ը ավելի շատ արտացոլում է հնդեվր. -*bhorā, քան հունարէն -φόρος, որը «ο» հոլովում ունի: -իչ ածանցը (ստեղծիչ, դաստիչ, արարիչ...) հընդեվրոպական ծագում ունի և դրանով կազմած բառերը գնում են a հոլովման տակ (արարիչ—արարչաւ), իսկ ինքը մ ա ն ի կ ը առաջացել է հին -ik-yā ձևից, բայց ոչ -ik-yo ձևից (համմ. սլավ. „ко-

вачь, «гаррйнъ», которичь «маршйка» и мл.). Мйнк мрдмн хосьл йнк мидлкан-хайгякан хаймйнкнерим «н» дйцнавормуй вйрджацоц кнаконнери мосьн, ормнк йнкнарйвлим ен o кам a' хаймлосьн, пахнлоц кйнкнн дрцнлоц вйрнацрдйц нак хйн мракакан и ирцакан нанкнрнцнр. Айд капакцоцкйцмамб ен чйм цнцдунлим -мцй вйрджанлацоц стандйлоц жанакакан хнднлй. -*a-sk-lyo дйкр, мл айд -мцй дйкр камнармим йм масьнднлй, нднан лцлйлякакан нанцйлнмнаа -azi (spartazi «спартацц») кам -ezi жанлацлйн (syriezi «сцрцнлцц»).

Хайгоц хаймлосьн «н» кйлнан цйлй камнапнатнасьнднр и мрйдз хнднлйрнцякакан лцгдункнерим, йнцмакн՝ իժ (гнрж. хаг. իժիւ), ормр натмцйлй й хнднлйр. *eghi-ц и нанцйлй й нанн. áhiþ «йлйнн. ažis, хаг. ὄφις рнакнрй и дйкй хйнт: -ti мнднйлйлоц рнакнрй мцйнакн йн хаймлоцжй, йнцмакн՝ ատր «дйцшкйрлнц тнкр», aw- нрмнатйц, ормн цннднр нак ацакйлй, «йцшкйлй дйцшкйрлнц камнар» и кй хнд. ὀφθ и ἄδλις рнакнрйм: Кнрд (рнрдйц) и ацакйд (ацакндйц) рнакнрй -դի мнднйлйлр натмцйлй й нцйцнакн -ti- дйкц, мцйнйдр хайгоц «դ» дйцйкнлр n и r нпцнднпцйлйлц хйнт нрптнатцоцнм й йнн հին խոլ է բադաձայնը: Թնакйн ացանդ (ацакндй, ацакндйц) рнакнр кацакцоцнм й ацакн-нднйлй «ацакнтнм йнн» нрмнатй хйнт, рнацц թնրկա կտգվի և խնթ. spand- «гдйнкнрйкйлц, дйкдц, возлиять» нрмнатй хйнт: Хайгоц բան (рнкйц) «хнтнр» рнакр йнр -йц жанлацоц нцйцнакн գնում է „l" хаймлосьн, йнднан ццтнац цйцнкнрнмнатн басня կտմուքյան, йнк нрмнатй ицнднйкйцц дрцйнакн գձաւ, ատտիկ. գηաւ, գωτή, ццтнац баю и мл.: Мйр այծ рнакр, нр нрмнатоцнм цйцнцй й цйцнкнрнмнатн αἴξ (нкц. αἰγός), «այծ» рнакцй, йнр хаймлосьн թնмнатоцнм (այծկц.) нкрдйр է и йнр „l" թնмнатоцнм нрнкацоцнм է хйн իգական անձը (-l- кам ī дйцоц): Хнмнмнатц айд нкц ишацоцдр այծկանն рнакц мйщ (այծ- и -մն мнакдроцнм), йнднан йрйй եղեամն рнакц кацмуқйцнн (eł+amn) и թնмнатц цйцнкнрнмнатйр рнакц кацмуқйцнн, թնднкн վերջինս մեջ այդ «ի» նկատելի ձայնավորը չկա (կորած է):

Хайгоц ու (u) хаймлосьн թնмнан цнмнапнатнасьнднр й хнднлйр. u (кам ū) թնмнатйн, йнцмакн рнкцнцнм йнкр хйнкнатй դնպքերում -որթ (гнрж. որթու), «ճորթ»=нанн. pṛthuka-, -*tu- жанлацоц՝ զարդ (гнрж. զարդու)=хцн. ἀρτύς, ζῆνατα (гнрж. զգեստու) *wes- нрмнатйц цнмнапнатнасьнднр й լատ. ves-tis ձախ (натрйр թնмнатоцнм): Хайгоц рнакнрр, нрнкр վերջանում են ւ кам վ հնչյուններով

նախնական հնչարկվում են այն բառ (u) հոլովման, թևկուզ և տարբեր ծագումով լինեին, ինչպես՝ կով (գործ. կովու) նման է հուն. βοῦς, βο(ϝ)ός. հաւ (գործ. հաւու) բնիկ նման լատ. avis բնիկ բառին (տարբեր հոլովմամբ)։ Այդպես է նաև բառ անանգլիական ծով բառը, որը արարատական ծագում ունի (=ուրարտ. sue ջուր, ծով, ար § հնչյունը հնչվել է ts=մեր ձ-ի համա. վրաց. zɣue ջրավազան առացված *zue հին ձևից)։ Հին չնգոք բառերը, որոնք ու (u) ձայնավորով էին վերջանում, հետագայում առանում են հավելյալ ր (r) ձայնորդը և ունենք ծուռ (*<ծռնու-<*ծռնու-), որի հետ նույնն է հուն. γόνυ ջռանքս բառը, ինչպես են հավանորեն նաև ծաղր և մեղր բառերը (անս. ծաղու, մեղու), իսկ ապր բառը ևս համաբան եմ իր ակզբնաձևը և համեմատում խեթական asaras (asāras) գրաբդ. բրդի գործվածք բառի հետ (ըստ Գյոցեի և Մաուրուխանովի, տե՛ս Hitt. Gloss., Philadelphia, 1936, էջ 30 և Suppl. to a Hitt. Gl., 1939, էջ 14)։

Հոլովման ոնգային և նայ տեսակները։ Այս տեսակները, մանավանդ ոնգայինը, արտացոլում է հնագույն հնդեվրոպական սիստեմը։ Ոնգային թեմաներից որոշ կազմություններ արմ են պրոդուկտիվ են և կարող են անսահման նորաստեղծումներ տալ, ինչպես -ումն վերջացող վերացական գոլականները՝ որոնք բայերից են կազմվում։ Այս հոլովման ժամանակ վերջին ո (ն) ձայնորդից առաջ տեղի է ունենում ձայնավորների այլերևացում՝ ə ‖ ɨ ‖ á ‖ u։

Եթե վերջնենք աճմն բառը և նրանով բարդված միաճմն, վիճաճմն, դատարկաճմն երկու սիստեմները, տես կտեսնենք, որ մի կողմից ունենք՝ անձն—անձին—անձնէ—անձամբ և հոգնակի՝ անձինք (անձինս)—անձանց—անձամբք. իսկ բարդությունները հոգնակի ուղղական անձինքի ձևի փոխարեն տալիս են՝ միանձնք, վհանձնք և այլն։ Այսինքն ունենում ենք -ըն, -ին, -ան, -ուն փոփոխությունները։ Հոլովման մյուս տեսակները ավելի պարզ են՝ շարժումն—շարժմանն—շարժմունք, սկիզբն—սկզբան—սկզբունք, որդն—որդան—որդունք՝..., լեառն—լերին—լերինք, եզն—եզին—եզինք, դաշն—դաշին—դաշինք..., արիւն—արեան, արիւնք, անկիւն—անկեան—անկիւնք, դիտութիւն—դիտութեան—դիտութիւնք..., սրինքն՝ ևս է երկու ձևափոխություն՝ -իւն‖-իւն (-ան‖-ան), ինչպես ձիւն—ձեան, շուն—շան, տուն—տան։ Վերջին հարյուր „ո“ (ն) հոլովումը նախկին -*ար>-ըր վերջացող ածականների մեջ (ծանր, մանր, փոքր, քաղցր և թանձր) վեր է ածվում -ըր ‖ -ան պարզ մի ձևի մեջ, ինչպես ծանր—ծանու—ծանումբ, ծանունք—ծանուն—ծանունց—

ծանուցք։ Այդ վերջին հոլովման մեջ փաստորեն լինում է *-ուր> -ըր (ծանուր>ծանրը) -ու (ծանու) -ուն ալտերնացիա, որը նույնպես ունի հին սխատեմի ինացորդ, բայց ոչ մաքուր ընդալին հոլովման սխատեմ, այլ խառն՝ նալ- ընդալին կամ ավելի ճիշտ՝ նալ-ձայնավոր-ընդալին։

Ըստ Ա. Մեյեի սեռ.-տր.-ներդ. -in վերջավորությունը եղել է հնդեվրոպական *en-es կամ *en-os վերջավորությունը, ինչպես հունարեն poimén-os «հովիվ» (սեռ.) poimén-i (տրակ.). հին սլավ. kamen-e — քարե (սեռ.), սանս. brâhman-ah «աղոթքի» (սեռ.), իսկ հայոց սեռ.-տր.-ներդ. -ան վերջավորության համար եղել է հին *ŭ-es, որը պիտի տեղներ նաև սանս. vṛṣṇ-ah «արուի» (սեռ.). մեջ։ Հայոց -ին-ը տղղականին համապատասխանում է հնդեվր. *-en-es (համմտ. հուն. poim-én-es «հովիվներ»), իսկ -ուն-ը վերջավորությունը՝ *-on-es (հուն. -on-es)։ Եզակիում ձայնավորի տարբերության անհակևոիզ համմտ. լիտ. akmũo «քար» (ուղղ. հ.) և սեռ. akmeñs «քարի», գոթ. hairto (ուղղ. «սիրտ» և սեռ. hairtins «սրտի», իսկ հոդնակիում՝ hairt-ona «սրտեր» (չեզոք սեռի է)։

Հայերենում -իկ և -ուկ վերջացող մի քանի դոլականներ (անձեր և ածականներ) թեք հոլովներում և հոդնակիում դնում են -ան հոլովման տակ), ինչպես՝ աղջիկ—աղջկան—աղջկունք, մանուկ—մանկան—մանկունք, փոքրիկ—փոքրկան—փոքրկունք, Սաթենիկ—Սաթենկան, մարդիկ—մարդկան, ուր ալդ—իկ մասնիկը հոդնակի հայտքական իմաստ է արտահայտում։ Բացի այդ, կան -ուստ, -իստ, -ուրդ ածանցներով վերջացող բառեր, որոնք եզակիում երբեմն հոլովվում են -եան ձևով, ինչպես -իւն (արիւն, անկիւն... դիտութիւն և այլն) ածանցով վերջացողները—հանգիստ—հանդստեան, փախուստ—փախըստեան, ժողովուրդ—ժողովրդեան... և -իլ ածանցով՝ տեսիլ—տեսլեան բառերը։ Սրանք բոլորն էլ այս հոլովման ձևերը ստացել են հետագա ժամանակի անալոգիալով և ոչ թե դալիս են հնդեվրոպական ընդհանուր մի վիճակից կամ ժամանակից։ Միդ քաջ հայտնի է, որ -ուստ, -իստ, -եստ, -աստ (պահուստ, հանդիստ, ուտեստ, առաջաստ) ածանցները հնդեվրոպական ծագում ունեն և ենթարկվում են ուրիշ լեզուների նման „l“ հոլովման (համմտ. սլավ. ЮНОСТЬ, խեթ. dalugasti «երկայնութիւն» և այլն)։ Նմանապես -ուկ և -իկ մասնիկով բառերը այդ -ևան հոլովման ձևերը ստացել են հետագալում։ Ես արդեն մատնանշել եմ -ութիւն և -ումն ածանցների

մասին, որ դրանք փոքրասիական (ասիանիկ) լեզուների ազդեցությամբ են կազմված։ Երևույթ, բնույթ և նման կազմութիւնները պետք է բխեցնել -uth սեմական և ըստ երևույթին նաև ուրարտական նույն բառակազմական ածանցից և ոչ թե վերցնել -ութի (երևութի ⊥, բնութի ⊥ և այլն) և ավելացնել -ւն (-wn)-. այսպես կան երկու ածանցներ՝ -uth- և -iwn։ Նմանապես -ումն (*-ուման >-ըման) ածանցը, որ հնդեվրոպական է իր -մն մասով (գնդում, ջերմն, սերմն...), նման ասնս. -ma, հուն. μα, լատ. -men, սլավ. -men (знамя—знамени, пламя—пламени...), ունի իրեն նախորդող „u" (-ու-ն) ձայնավորը ոչ թե իբրև ընդարձակում, ընդլայնում (élargissement), որը իբրև թե „S'explique par la nécessité de donner plus de corps au suffixe", ինչպես նման փորձեր առաջարկել է Osthoff-ը (տե՛ս Ա. Մեյեի Esquisse-ում, էջ 80—81), այլ առաջացել է խեթերեն նման կազմութիւն ձևով, ուր բայերից կազմվող վերացական գոլականները ունենում են -umar ‖ -uman վերջամասնիկը։

Հոլովման p (r) և ղ (l) ձայնորդներով վերջացող թեմանները ավելի քիչ են, քան վերևում բերված ն (n) թեմայով բերված բազմաձև և բազմաքանակ բառակազմութիւնները։ Բացի այդ r և l թեմաներից առաջ եղած վանկում միայն e ձայնավոր է, չկա ուրիշ ձայնավորների ալտերնացիա, ինչպես վերոհիշյալ ընդալին հոլովման ժամանակ։ Բերենք այդ r—l հոլովման նորմատիվ ձևերը.

Ե ղ ա կ ի

Ուղղ. Հայց.	ոսկր	աստղ
Սեռ. Տր. Ներգ.	ոսկեր	աստեղ
Բայց.	ոսկերէ	աստեղէ
Գործ.	ոսկերբ	աստեղբ

Հ ո դ ն ա կ ի

Ուղ.	ոսկերք	աստեղք
Հայց. Ներգ.	ոսկերս	աստեղս
Սեռ. Տր. Բաց.	ոսկերաց	աստեղաց
Գործ.	ոսկերաւք	աստեղաւք

Վերջընթեր e ձայնավորը, որ անփոփոխ է և մնում է բոլոր դեպքերում այդ վանկում, գալիս է հնդեվրոպական շրջանից.

ինչպես տեսնում ենք դստերք=հուն. θυγάτερς կամ աստեղք= հուն. ἀστερές և այլն:

Հայկական այս տիպի բառերի հնչող մեծամասնությունը ունենում է a ձայնավորը եզակի դործիականում և հոգնակի բոլոր թեք հոլովներում, բայց լինում են դեպքեր, երբ առանց այդ ձայնավորի, որը, իրրև թե կոլեկտիվ գաղափար է նշում (B. S. L. XXXIII. էջ 7): Օրինակ, ունենք՝ տարերց, ճամերց, այերց և այլն:

Երեք բառ – հայր, մայր, եղբայր – նույնպես ենթարկվում են „r" հոլովման և ունեն շատ հին ձևափոխություններ: Օրինակ, հայր (=հուն. πατήρ), սեռ.-տր. հաւր (=հուն. πατρός, πατρί), հաւրէ, հարբ—հարբ, հարց, հարս, հարրք, ուր միայն հար- հիմքն է և դժվար է բացատրվում հնդեվրոպական ձևերի տեսակետից:

*Հինդ-վից թվականները, որոնք „r" ձայնորդով են վերջանում, ինչպես ծանր, վոբր, մանր, թանձր, քաղցր, նօսր, ունենում են -(ւ)r-ւ-ւռ- վերջավորություններ: Այսպես, ուղղ. հայց. ծաճր, ս.-տր.-ներգ. ծաճու, բաց. ծաճուէ, գործ. ծաճու, հոգնակիում՝ ուղղ. ծաճուճք, հայց.-ներգ. ծաճունս. ս.-տր-բաց. ծաճունց և գործ. ծաճումբք: Սկզբնական ձևը (ծանըր) ստացվել է *ծանուր-ից, որը նախնականում եղել է չեզոք սեռի թվական: Սրեց բառը (աւագ, «քահանա») ենթարկվում է եզակիում ու (ւ) հոլովման՝ երիցու (ս.-տր.-ներգ.), երիցուէ (բաց.), երիցու (գործ.), իսկ հոգնակիում լինում է՝ երիցունք, երիցունս, երիցունց, երիցամբք և ենթադրվում է, որ եզակիում չի ստացել ուղղականում «ր», որովհետև դա չեզոքի ձև կլիներ. այնինչ դա արական սեռի բառ է: Ըստ այսմ ծուռն, սար, ծաղր, մեղր բառերը չեզոք են համարվում: Ծուռը բառը կապվում է սանս. jânu, հուն. γόνυ, սեռ. γόν (β)-ατος, լատ. gēnu (ginu) «ծունր» բառերի հետ, թեպետ հայոց ծուռը ձևը եզակիում չի հոլովվում, ինչպես արտասր բառը, իսկ ծունդ ձևը ստացվել է հին երկակի *ծունեւի (*cunwi) ուղղականից, որ հետո հոլովվում է նաև -ան (-en) անգային հոլովմամբ (ծընդան, ծնդամբ) կամ „a" հոլովմամբ (ծնդաց, ծնդաւք):*

*r ‖ n ձայնորդների այսպիսի փոխանակությունը մի բացատրություն ունենք նաև հուր «կրակ» և *«հուն- (*hun-) ձևափոխության մեջ, որը նույնպես նշանակել է «կրակ» ածանցավոր հնոց բառի մեջ:*

Հնչյունափոխության մեջ խոսվել է մի շարք գոյականների մասին, ինչպես քոյր, այր, տէր, աւր և այլ բառերի մասին, որոնք ինչպես տեսնում ենք, վերջանում են «ր» ձայնորդով:

Հետաքրքրական պրոցես է տեղի ունեցել մի շարք բառերի հոլովման մեջ, որ կարծես թե եղել է միայն միավանկ բառերի մեջ։ Այդ բառերը ենթարկվել են եզակիում -n հոլովման, իսկ հետո նաև հոգնակիում։ Օրինակ, ունենք եզակիում ոտն, ձեռն, դուռն և նման բառեր, որոնց հոգնակիներն են ոտք, ձեռք և դուրք։ Հատուկտակես եղրակացվում է, որ հին ժամանակ, թերևս մեր էրայից դեռ շատ առաջ, եղել է եզակիում նույնպես ոտ, ձեռ, դուռ և այլն, որոնք հայցական հոլովում պետք է կրված ունեցային -n (ն) և ուրեմն այդ հայցական հոլովաձևերը պետք է հնչվեին ոտն, ձեռն, դուրն։ Բայց քանի որ մեր հոլովական սիստեմում և այլուր դոլականների մեջ ուղղական հոլովաձևը եզակիում համընկնում է հայցականի հետ, այսինքն՝ չի տարբերվում վերջինից, ապա ըստ նմանաբանության (անալոգիայի) այդ հայցական հոլովաձևը դարձավ և եզակի ուղղական հոլովաձև։ Այսպես ուրեմն հայոց ոտն նախկին հայցականը, որ հար և նման է հուն. πόδα, ձեռն, որ արտացոլում է հուն. χεῖρα և այլն, դարձան նաև ուղղականներ և ըստ կրկնության հոլովվին՝ ոտն-ոտին-ոտամբ, ձեռք-ձեռին-ձեռամբ և այլն, թեպետ հոգնակիում մնացին հին ձևերը՝ ոտք-ոտից-ոտիւք, ձեռք-ձեռաց-ձեռօք։ Բայց, օրինակ, դուռն բառաձևը, որ առաջվել է հնագույն դուր-ից (համեմատել՝ հուն. θύρα, գոթ. daúr, գերմ. Thür, լիտ. dūrys և այլն), որպես եզակի հայցական, ոչ միայն անցել է նաև եզակի ուղղական, սեռական և այլն, այլ նաև հոգնակի՝ դրունք, դրանց և այլն, թեպետ մնացել են և հին դուրք դրաց, դրաւք ձևերը։ Ես կմատնանշեի ձեր-(«ձեռն») հին ձևի համար ձերր-ա կալ բարդութիւնը, ուր մեզ հետաքրքրող բառը վերապրուկային ձեով մնացել և առանց -ն հավելվածքի և -ր (ոչ թե ո) հնչյունով։ Այդպիսի «ն» (n) անշուշտ ունեն քիրան, «քրտինք» (=հուն. hidrōs, հին գերմ. sveiz). դուրգն «բրուտի անիվը» (=հուն. τροχός, հին իռլ. droch «անիվ»), ամեռն-ամառն, (համեմատել ամեր-ոց, ամերկ..., ամարաչեմ, ամարատուն), ասեղն և այլն, քանի որ ազգակից օտար բառերն ևս այս վերջին անգալին ձայնորդը չունեն։ Ըստ Ա. Մեյեի հնարավոր է, որ ակն բառի «ն» (n) բազաձայնը եղած լինի եզակի հայցականի վերջավորութիւնը։ Հոգնակի աչք ձևի մեջ պետք տեսնել աչ- (ac-) մասը որպես եզակի «երկու աչք», նման համեմատական ὄσσε, հին սլավ. oči, „oru„, լիտ. akì երկակիներին, իսկ այդ մեր աչ-երկակի թվին, երբ նա չի դիտակցվել, ավելացվել է հոգնակի «ք» մասնիկը։

Տիւ «ցերեկ» բառի սեռ.-տրկ. աւուրընդեան (=աւրընդեան)

ձևը, որ համարվում է անմեկնելի, պիտի ըստ իս կապակցել վաղ-ընջեան (ի վաղընջենէ), մըշտ-ընջ-եան բառերի -ընջ ժամանակ ցույց տվող մասնիկի հետ, որ կա նաև խնթերևնում ժամանակ ցույց տվող բառերի մեջ (օր. աշուն, ձմեռ և այլն)։ Ի տուէ և ի պիշերի արտահայտության մեջ տուէ փոքրասիական լեզուների արակ.-ներպ. ձև է։

Հայոց դոլականների հոլովման սիստեմը, ինչպես Մելիե է ասում, իր զարգացման մեջ չհասավ մի հաստատ հավասարակշռության, դնդրելով առացված հնդեվրոպական ժառանգության, նրա մասնաճյուղերի և ոչ հնդեվրոպական անդական ուժեղ ազդեցությունների մեջ։ Այդ բանը մենք տեսանք հնչյունափոխության մեջ, ուր շեշտը այնքան մեծ «ավերիչ» դեր է խաղացել հոլովման թեմաների, վերջավորությունների, ալտերնացիայի (e ‖ o ‖ -) չքացման և այլնի վրա։ Երբեմն ինչպես տեսանք, հոլովման ձևերը կրում են եղակի բնույթ (դիւղ-գիղջ, տիւ-տուրնջեան-տուէ) կամ ազդեցությամբ, այն է անալոգիայով ստեղծվում են նորանոր ձևեր, ինչպես ոսկ, ձևան, դուռն մի քանի հզակի հայկական ձևերի շնորհիվ հայկական «ո» ձևեր տարածվում են բոլոր հոլովներում, կամ արամբ-արանց ձևերի ազդեցությամբ ձևավորվում է կանամբ-կանանց (կին-կանայք հիմնական հին թեմաներից), կամ բառի երկու-երեք բնաերի (թեմաների) ենթարկվելը, տարբեր հոդակի (կոնկոտիվ ձևեր գործածելը (մարդ-մարդիկ, մանուկ-մանկտի, խոզ-խոզան, աւազ-աւազանի...) և այլն։ Մելիե ասելով «այն հոլովումը, որ հանդես է գալիս հին հայերենում, դանվում է հետևապես անցողական շրջանում» (Esquisse, էջ 86)։

ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՁԵՎԵՐ

Անձնական դերանուններ։ Անձնական դերանունների ձևերի մեկնաբանումը, ինչպես Ա. Մելիե է ասում, դժվար է բոլոր հնդեվրոպական լեզուների մեջ, որովհետև այս դերանունները չունեն խոսացնա ասած հոլովական ձևեր հնդեվրոպականում (Esq., 91—92)։

Ուզղականը պահել է իր անկաս ձևավորվածությունը մյուս հոլովաձևերի հանդես. ես և դու ձևերը բացատրված են որպես հնդեվրոպական, բայց «հս» ձևը փոխանակ* ես (eç) <*eg'o-ից պիտի բացատրվի ըստ իս ուրարտական ieše=iese) և խուռիտներեն iša (=isa) նույնանիշ դերանվանական ձևի ազդեցությամբ՝ կոնտամի-

նացիալով։ Մեք ձևը համապատասխան է լիտ. mēs «մենք» ձևին, որին մոտ է նաև հին սլով. my „мы“։ «Դուք» ձևը ուղում են հանել ju-k՝ ձևից, ի նկատի ունենալով լիտ. jūs, գոթ. jus, ավեստ. yuš «Դուք» ձևերը, որը (դուք) ձևափոխվել է դու ձևի ազդեցությամբ։ Ըստ իս ոչինչ չի խանգարում հայոց «դուք» ձևը անմիջապես հանել «դու»-ից, ավելացած «ք» հոգնակերտ մասնիկը։

Իմ ձևը (սնս.) համապատասխան է հուն. emé, emoû ձևին։ Իճն (սրսկ.) ձևին համապատասխան է սանս. māhyam «ինձ», լատին. mihi «ամբր. mehe «ինձ», որտեղ ալդ սանս.—լատ. h հնչյունը առացվել է հնդեվ. *g՝h-ից։ Հայկական իս ձևը իրր թե առացվել է *ins նախնական վիճակից (=հուն. emége), որից ինչպես և սրսկան իճն ձևից, ճառացել է իճ-րտնը իճնճ «ինձնից» և իճնւ «ինձնով) հոլովաձևերի մեջ։ Եզակի երկրորդ դեմքի հոլովաձևերը, բացի ուղղական դու (du)-ից, վատ են բացատրվում հնդեվրոպական հողի վրա, առաջարկվում է ազդակցել ph- բունը (քեզ. քէն, քեւ) հուն. se (<*twe-ից), «քեզ» (հայց.) ձևի հետ։ Բայց հայոց ոչ մի այլ բառի սկզբնական «ք» հնչյունը չի արտացոլում հնդեվր. *tw. ալդ տեսակետից պիտի բացատրել նաև pn (սնս. հոլ.) ձևի հնդեվրոպական ծագումը։ Եթե անպատճառ համապատասխան ալլալեզու մոտ ձևեր են հարկավոր, ապա ես կմատնանշեի վրաց g (ვ) օրլնկախիլ երկրորդ դեմքի դերանվանական մասնիկը, որ դրվում է բայի սկզբում թե եզակիի և թե հոգնակիի համար (g-madlob «շնորհակալ եմ քեզ, ձեզ» կամ սեմական -k (=-kh, abei-kum «քեզ հետ»), քամյան kh-, որը թևրիս կար և ուրարտերենում (համմ. ikukani և inukani «դուքն» և «նուքն»։

Մն- և ձն- ձևերը հոգնակի մեք—դուք դերանուններին համար Ա. Մեյեն համարում է բալթական մոթ (asser abscurs)։ Ձն-բունը առացվել է անշուշտ դե-սկզբնականից, ինչպես խեթերենում ունենք zik «դուն» և tuk (հայց. սրսկ. նեբդ.)։

Ա. Մեյեն ուղում է մեր և ձեր սնսական հոլովաձևերի «r» ձևի մեջ տեսնել երկու օրլնկանների հակադրություն, ինչպես կա լատիներեն nostrum և vestrum, կամ գոթ. unsar և izwar ձևերի մեջ։ Բայց ալդ էր ձեր ալդ իմաստը չունեն իր դերանվան մեջ, որը առացվել է հնդեվ. *sewe-ro կամ *sewo-ro ձևերից, իսկ կան նաև ոյր, էր, սորին, սորա, ոյոր և այլն։ Ավելի ճիշտ կլիներ հայոց «ր» (սնս. հոլ.) կապել խեթ. նման „l“ ձևի նման դերանվանական «հոլովաձևի» հետ։ Գուցե մեր որ հարցական և հարաբերական դե-

բանական մեջ այդ «բ» մորֆեման իրոք ցույց է տալիս «որը երկուսից», բայց պնդել չի կարելի:

Հայկական հոդնակի մեզ և ձեզ հոլովաձևերը ըստ Մելիե հզել են *mens և *dzens, որ դառնալով *մես և *ձես և ազդվելով արական մեզ և ձեզ ձևերից, համընկել են այդ վերջիններին: Բացառական մեզնե և ձեզնե ձևերը կազմվել են այդ տրականից: Իսկ մենջ և ձենջ բացառականները ըստ իս առաջացել են ասիանիկ հոդի վրա և ինչպես խեթերենում ունենք šumel «ձեր» և apel «նրանց» հին խեթերեն šumenz a(n) «ձեր» և apenza(n) «նրանց» կամ թերևս նաև šumenza «ձեզնից», apenze «նրանցից», ինչպես թարգմանում էին առաջ, որպես բացառականի ձև), այդպես էլ խեթերենի մեջ մնացած այդ ասիանիկ ձևի նմանությամբ ունենք հայերենում մենջ և ձենջ:

Ցուցական, հարցական և անորոշ դերանունների ձևերը: Ցուցական դերանունները կազմվում են u, դ, ն տարածության ցույց տվող արմատ մասնիկներից («հոդերից»), որոնցից s-ն ցույց է տալիս տարածությունը խոսողին մոտ, „d"-ն՝ խոսակցին մոտ, իսկ „n"-ն՝ ավելի հեռու: Առաջին մասնիկը (s) համեմատում են սլավ. sĭ-, լիտ. šis, սլր. si- գոթ. hi-, լատ. cis, citra, միջուդ. semun «սրանց» (этому) և խեթ. kas «այս» ձևերի հետ: „d" էլեմենտը համեմատում են սանս. tá- և հուն. to- ձևերի հետ, իսկ n-ն՝ սլավ. onŭ (онъ). լիտ. ąñs, գոթ. jains և մյուսների հետ: Դրանցից կազմվում են.

1. s, d, n վերջադիր հոդերը, որոնք որոշում են բառը, բառախումբը և նախադասությունը. օրինակ ձայրս նշանակում է «այս հայրը», «ես որպես հայր», «իմ հայրը»:

2. Իսկական ցուցականները՝ այս, այդ, այն (հոլովումը՝ այս, այսր կամ այսորիկ, այսմ կամ այսմիկ, այսու կամ այսուիկ..., այսք կամ այսոքիկ այից կամ այսոցիկ և այլն):

3. Հարաբերական («անաֆորիկ») դերանուններ—սա, դա, նա, որոնք ունեն սո-, դո-, նո- (so-, do-, no-) արականածանձ բները և ա (a)< *-այ (*-aj) հավելումը վերջից (հոլովումը՝ սա, սորա, սմա, սմանէ, սովա-վ, սոքա, սոսա, սոցա և այլն):

4. Ամփոփման—դերանունը, որը ցույց է տալիս նույնություն (identité, тождество), սոյն, դոյն, նոյն, որոնց մեջ հոլովվում են so-, do-, no- արականածանձ բները և կրկնվում է դրանց վերջում նույնություն ցույց տվող -ին մասնիկը, որը կա և հունարենում (համեմատել հուն. οὗτος-ἱν «սո-յնս»):

6. Տնդի մակրալական դերանուններըը, ինչպես՝ աստ, այսր աստի, այդր, այսի, անդ, անդր-անտի (ո՞րանդ, դնդի ո՞ւր, որանդից հարցներով), որոնց վրա կարող է ավելանալ -ին (-in) նուխնութիյուն ցույց ավող մասնիկը, աստէն, այսրէն և այլն։ Կա նաև աստուստ, անդուստ, ինչպես և ուսի բաներր։

6. Ունենք նաև՝ աւասիկ, աւադիկ և աւանիկ մակրալական դերանունները, որոնց դիմաց արարատյան բարբառը ասլիս է՝ հրնսիկ, հրնսիկ և հրննիկ ձևերը։

Ցուցական դերանունները, ինչպես վերևում նշվեց, ունեն կարճ (այս, այսր, այսմ...) և երկար (այս, այսորիկ, այսմիկ...) ձևերը, որոնցից վերջիններրը դրվում են գոյականներից հետո (լերինս այսմիկ, բայց՝ այսմ լերինն)։

Հարցական n (ով) և գ-ի (=ինչ) դերանուններրը իրար են կապակցում հնդևր. *k^wo-(*k^wu) «ով» և *k^wi- «ինչ» արմատների հետ, քանի որ մի այլ դեպք չկա, ուր հնդևր. սկզբնական *k^w բազաձայնը հայերենում ընկած լիներ։ Նույն *k^wo- արմատից են ցանկանում հանել (Revue des Etudes arméniennes, V, էջեր 183—4, VII, էջեր 1—3), ուր «ր» (r) իրր արտացոլում է հնդևր. * ro (*k^wo-ro-=որ), նման մեր, ձեր, ներ- (ներ-ք-ին) բառաձևերին, որը շատ տարակուսելի է։

Անորոշ դերանուններից որ բառը գործ է ածվում բացատական և պայմանական նախադասություններում, որի -ր (նույնպես -*իր կազմության մեջ, որ կա բարբառներում և գրաբարի չիր բառում) ունի հնդևր. ծագում (=սանս. ca, լատ. que, հուն, τε)։ Այդպես ունենք -որ, ուրուք, ումեք ումեք-է, իսկ *իք դերանունից՝ *իր (չ-իք), իրիք- իմիք, իմեքէ-իւիք։ Որ դերանվան փոխարեն գործ է ածվում դրական նախադասություններում ոմն դերանունը, որի հոլովումն է՝ ոմն -ուրումն -ումեմն -ումեմնէ -ոմամբ (-an հոլովմամբ), որից արդեն ոմանք -ոմանս, ոմանց -ոմամբք։ Այս ոմ- արմատը համեմատվում է գոթ. sama «նույնը կամ իմաստով ավելի մոտ գոթ. sums «մեկը, ոմնէ (համմ. հուն. ὁμός („тот же"), σύν-αμός („вместе"):

Մի շարք հարաբերական և ստացական դերանուններ հոլովվում են -ո (-o) հոլովմամբ, բայց որոշ շեղումով, ինչպես՝ որ, որոյ, որում՝ որմէ, որով, մեր-մերոյ, մերում, մերմէ, մերով և այլն, բայց մի թվականը ունենում է սեռականում միջոց նման ձևուղ, կնոջ։— Ում (um) մասնիկը կար արդեն Աստվածաշնչում (էի հնումն և ի նորումս) որ հետո դառնում է ներգոյական հոլո-

մի նշան հունարենից թարգմանված որոշ դրվածքներում, իսկ ավելի մեր արևելյան բարբառներում և գրական լեզվում։

ԲԱՅԱԿԱՆ ՁԵՎԸՐԸ

Հնդեվրոպական բազմաթիվ և բազմատեսակ հնագույն բայաձևերը հետագայում պարզանում են, կազմելով քիչ թե շատ հավասարակշռված և ամուր մի սիստեմ, լուրաքանչյուր առանձին լեզվում, որոնց թվում և հայոց լեզվի բայի մեջ, ինչպես վկայված է հինգերորդ դարի առաջին անգամ գրանցված նրա ձևի մեջ, թեպետ հոլովումը այդ կուռ վերակազմությունը դեռ չէր ստացել։

Այսպես, օրինակ՝ մենք տեսնում ենք, որ հնում չտարմանալիորեն ակզբնական «թեմաները», որոնք անմիջապես կցվում էին բայարմատին, հետագայում կրճատվելով հասնում են մինչև երկուսի՝ ներկայի և անցյալ կատարյալի (աորիստի)։ Հին հունարենը դեռ ունեցել է հինգ նման թեմա՝ ներկայի (μιμνω), կրկնությամբ ներկայի (μίμνω), ապառնու (μενῶ), աորիստի (ἔμεινα), անցյալի՝ perfectum-ի (μεμένηκα), որոնցից հետագայում մնացել են հակադիր երկուսը՝ ներկայի (μένω) և աորիստի (ἔμεινα) թեմաները։ Լատիներենում դեռ հնագույն ժամանակ գտնում ենք միայն այդ երկու հակադիր թեմաները՝ manco «մնում եմ» և mansi «մնացի», ինչպես է և գրաբարում (մնամ և մնացի)։

Ներկայի թեմայից (բնից) կազմվում են—1) սահմանական եղանակի ներկան (լքանեմ, λείπω), 2) անցյալ անկատար (լքանէի, ἔλειπον), 3) ապղելական հրամայական (մի լքաներ, μήλειπε), 4) ստորադասական եղանակի ներկան (լքանիցեմ), 5) անորոշ դերբայը (լքանել)։ Անցյալ կատարյալի (աորիստի) բնից կազմվում են—1) սահմանականի անցյալ կատարյալը կամ աորիստը (լքի, ἔλιπον), 2) հրամայականը (լի՛ք), 3) ստորադասականի, resp. սահմանականի ապառնին (լքից), 4) սովորական անցյալ դերբայը (լքեալ)։

Այս երկու թեմաները ունեն կերպային (ասպեկտային) տարբերություն. մեկը ներկայի թեման ցույց է տալիս իր ձևավորվածությամբ տևական բնույթ, որի ժամկետը չի նշված, չի վերջացած, իսկ աորիստի թեման սահմանավորված է իր կատարման մեջ, ընդգրկում է տևողության իր հիշյա ժամկետը։ Յուրաքանչյուր թեմա տակն ունի տարբեր ձևավորվածություններ խոնարհման

մեջ, այն է՝ տարբեր տնտակներ՝ e, i, a, u հնչարժեքներ ըստ ներկայի թեմայի, ուր այդ ներկայի թեման իր այդ հնչարժեքներով ունենում է կամ պարզ անմատնիկ բնույթ և կամ ածանիկի հավելացում։ Նման տարբերաձև նշվում է նաև տարիատի բնի (թեմայի) մեջ—արմատական թեմա և «ցյ-ով («ցոյական») թեմայով տարիատ։ Սրանց վրա ավելանում են դիմավոր ձևերը՝ եզակի և հոգնակի (երկակի թիվը հայերենում անհայտացած է)։

ՆԵՐԿԱՑԻ ԲՆԻ (ԹԵՄԱՆԵՐԻ) ՏԵՍԱԿՆԵՐԸ
Ե ԵՐՆԱՐՀՈՒՄ

*Անմատնիկ ներկայի բունը, պարզ -եմ վերջավորությամբ, դալիս է կամ հին արմատներից, ուր այդ -e-m վերջավորության „e" ձևը շարունակությունն է իր նախկին (հնդեվր.) վիճակի և կամ նոր ծագում ունի, սովորաբար անունների աոաջացած -*eje ածանցի հավելմամբ։ Հին արմատական թեմայից են միայն երեք բայ -բերեմ (=սանս. bhárāmi, հուն. φέρω, լատ. ferō, իռլ. berim և այլն), ածեմ (=սանս. ājāmi, հուն. ἄγω, լատ. agō և այլն), ճաշեմ, որը ցանկանում են կապակցել սանս. sanōti «ձեռք է բերում» (ilgagne), բայց այդ առաջարկությունը միանգամայն սխալ է, քանի որ խեթերենում կա ḫan- արմատը նույն հնչմամբ և իմաստով, ինչ ունի հայերենը (խեթ. ḫāni «հանում է», Sturt. Hitt. Gl. 2, cd.'draw, dip', էջ 41)։ Այդ հայ բայերը արիսատ կազմում են առանց «ցյ» ձևի՝ բերի, ածի, հանի։ Ենթադրվում է, որ դրանք հնագույն վիճակում ունեցել են ներկայում bere-, açe-, hane- իսկ մյուսների արմատի վրա -eje ավելացնելով, որ դառնում է e (*worg'-eje>գործեմ), թեպետ սա տեսական բնույթ է կրում և անտեսվում է անալոգիական ազդեցությունը։*

Ինդալին an մասնիկի ավելացմամբ նույնպես ունենք մի շարք հին „e" հոլովման ներկայի թեմա, որով կազմված բայերը արիսատում ունեն արմատական (ոչ ցոյական) ձև։ Հնդեվրոպական մյուս նույնարմատ բայերը այդ ինդալին վերջածանցի դիմաց ունենում են հաճախ n կամ -ne- միջածանցը (infix-ը)։ Համեմատել՝

լքաշեմ *(արիսատ՝ լքի), համմտ. սանս.* riṇakti «թողնում է», *լատ.* linquō, *արտ.* līquī, *հին պրուս.—*linka «թողնում է».

աւծաշեմ *(աւծի), համմտ. սանս.* anákti «օծում է». *լատ.* ungō *(այստեղ ինդալինը պատկանում է արմատին, բայց հատկացվել է իբր արմատի տարր).*

բնկանիմ (*բնկի-*), համմտ. սանս. bhanákti «բնկում է, կոտրում է», հին իռլանդ. com-boing (id.).

բուծանիմ (*բուծի-*), «անուցում եմ», համմտ. սանս. bhuńkte «վայելում է և թևրևս լատ. iongor «կատարում եմ» (թևպետ իմաստները տարբեր են)։

գոանիմ (*գոի-, նգիտ, vgit-*) համմտ. ավեստ. vinasti «գտնում է», սանս. vindati (*սար. ávidat*)։

դիզանիմ (*դիզի-*), համմտ. լատ. iingō, հուն. δι-γγάνω (*ուր γ հնչյունը χ հնչյունին է փոխարինում ἴσ-χνος «դիզ» բառի մեջ*).

լիզանիմ (*լիզի-*), համմտ. լատ. lingō «լիզում եմ», հուն. λιχ-νεύω (id.) բառի մեջ վերջածանցը բռնել է նուազական նշանակութեան (*միջածանց*) տեսք։

անիծանիմ (*անիծի-*), համմտ. սանս. nindáti «վիրավորում է» և հունարէն ὄνειδος «նախատինք» (հայերէնում «ծ» առաջացել է նախկին «տ» բաղաձայնից), ինչպես ունենք հպարտ և պարծիմ, կեղտ և կեղծ, ապտ և ապծ (*ապծապիղծ*), պիղծ և պղտոր, թևրևս արտ<*արծ<*ածր=հուն. ἀγρός (*արտ, поле*) համմտ. և ագարակ, որպես ընդհանուր սումերական agar բառը, նախատիպը բոլոր հնդեվր. բառերի)։

հասանիմ (*հասի-*), համմտ. սանս. açnóti, թևպետ կա և սանս-կրիտ. naçati և լատ. nanciscor (*«ձեռք եմ բերում»*)։

Սրանց և այլոց ձևաբանական զուգորդութեամբ կազմվում են իրարկե շատ և շատ նման բայեր—անիմ թեմայով. այստեղ հարկավոր է հատկապես շեշտել երեք բայեր, որոնք մինչ այդ ձևը ունեն նաև «ց», ինչպես՝ հարցանիմ, լուցանիմ և ցուցանիմ, *որոնց մեջ «ց»-ն առաջացել է հին -*ske-ից։ Համեմատել հարց-անիմ բայի հետ սանս.* pṛcchámi, *լատ.* poscō, լուցանիմ *բայի դիմաց (հնդեվր. *leuk-ske-), հայոց* լոյս (**leuk-*), ցուցանիմ, *որի ցոյց ձևը առաջացել է *skeu-ske- ձևից (համեմատել հին վերին գերմ.* skouwan. *այժմյան գերմ.* schauen «հայել» skau-*արմատից), և հավանորեն այդպես է կազմվել նաև հայոց* աւցանիմ *բայը, որի առաջադրանութեյունը չի ճշտված։*

Պատճառական բայերը ևս իրենց -ուցանիմ (*<-ո՛յց—անիմ*) *մասնիկով այս „e“ հոլովման տակ են գնում, ունենալով* -ա-իմ *ընդալին թեման։ Այդ պատճառական բայերը ներգործական են, իսկ մյուսները՝ կամ ներգործական են, որ մեծամասնութեյուն են կազմում, կամ չեզոք, որ փոքրամասն են։ Վերջիններիս հաճախ ակում են խոնարհվել խոնարհման „i“ ձևով։*

Այս խոնարհումը ունենում է երկու ֆունկցիա. կամ ծառայում է որպես կրավորական „e" խոնարհման բայերի համար, օրինակ, բերիմ «բերում եմ» և բերիմ «բերվում եմ», և կամ ունենում է չեզոք բայի ֆունկցիա և ավելի սակավ դեպքերում հատարակ նշանակություն, նման լատիներեն verba deponentii *-ներին, ինչպես դատիմ «դատում եմ և դատվում եմ», խոսիմ «խոսում եմ և խոսվում եմ», համարիմ «համարում եմ և համարվում եմ» և այլն:*

Այս ի խոնարհումը ներկայի բունը կազմում է երկը ձևով առանց ընդային (-ան-) մասնիկի, այսինքն՝ մի «ի» խոնարհիչով, երկրորդ՝ -ան մասնիկով և «ի» խոնարհիչով (-ան-ի) և երրորդ՝ -չ կամ -նչ մասնիկով: Հավելված նույն խոնարհիչը:

*Առաջին խումբը (պարզ «ի» խոնարհիչով) ամենաշատն է և առիսատում ունենում է «ց» մորֆեման իր չեզոք-կրավորական -ալ, -ար, աւ, աք, -այք, -ան վերջավորություններով: Առանց «ց», այսինքն արմատական ձևով առիսատ ունի միայն նատիմ բայը (առիսատ՝ նատալ), որ եղել է հնդեվր. *ni->zd->ni-st-=նիստ, նատ-իմ. համմ. սանս.* ni -ṣ:dati *և ավեստ.* ni -šhi:i i *«նստում է»:*

Հատկապես նշելի են -an- մասնիկով հին կազմածները, որոնք սահմանափակ են. այդպես են -ագանիմ (առիսատ՝ ագալ), համմ. լիտ. aunu *«տանաման եմ հագնում», ծնանիմ (ծնալ), համմ. սանս.* jânate *«հղիանում», հուն.* γιγνομαι, *լատ.* gignō, nāscor *և այլն.* ուսանիմ *(ուսալ), համմ. հին սլավ.* выкнути *(vuknǫti «սովորում է, հարմարվում է» (արմատն է *unk-), լիտ.* j-ûnk-ti. *մնանիմ (մնալ), համմ. սանս.* mi:yáte, *հին սլավ.* мьру (mirǫ) „мру". *փլանիմ (փլալ), համմ. լիտ.* pûolu «քննկնում եմ», *հին բարձր գերմ.* fallan, *հուն.* ἀφάλλω *անկանիմ (անկալ), համմ. գոթ.* sigqan:

Նմանապես սահմանափակ են -չ կամ -նչ- ածանցներով օրինակները – թաքչիմ (թաքնալ), որի հետ համմ. հուն. πτώ̃, πτάΐ̃. πτω σκάζειν «հետ քաշվել վախենալուց» *և թերևս լատ.* tacēo. *գոթ.* thahan «լռել», թաչիմ *(թոռնալ), կառչիմ (կառնալ), հանգչիմ (հանգնալ), մատչիմ (մատնալ), փախչիմ (փախնալ), երկնչիմ (երկնալ), կորնչիմ (կորնալ), մարանչիմ (մարտնալ): Այսպիսի կազմություններ են նաև հանապչիմ (ծանենալ) և մեղանչիմ (մեղալ), բայց գնում են «ի» խոնարհման տակ: Առիսատի -եալ վերջավորությունը Ա. Մեյեին հետաքրքրել է տալիս, որ այդ վերջավորության i*

(<-iaj) հնչյունը պիտի հատկացվի արմատին՝ թաքի (թաք-ի-ալ), մատի-(մատի-ալ) և այլն։ Ենթադրվում է նաև որ չ մասնիկը համապատասխան է հնդեվր. -sk- մասնիկին և ցույց է տալիս սկսողական բայակերպը (verba inchoativa)։ Վերջապես կա -չիմ ~ -նամ վերջամասնիկների փոխանցումը, ինչպես՝ թաքչիմ և թաքամ, փախչիմ-փախնամ, խրտնամ-խրտչիմ, զարթնամ ~ զարթչիմ և այլն։

Ոմանք ուզում են մեր այս i խոնարհիչը կապակցել սլավոնական և լիտվական նման i խոնարհիչի հետ, ինչպես հին սլավ. bīd-i-tŭ „бдит“ (արթուն է). թեպետ կա և զարդացյալ ja մասնիկը հնդիրանականում, ինչպես սանս. budh-yá-te «զարթնել էր և կամ այդ մեր „i“ մորֆեմաին, օրինակ նաեիմ (բայի մեջ ուզում են կապակցել լատ. „ē“ ի (կամ-ēje-ի) հետ), sedeō (sedēre) «նըստում եմ, թեպետ Ա. Մեյեն ստիպված է խոստովանել, որ „Il convient par suit de ne rien affirmer précisément sur l'origine des verbes arméniens en -i- -i“ (Esq. էջ 109)։ Այս կապակցությամբ ևս կուզենայի շեշտել նախահնդեվրոպական տեղական լեզուների հնարավոր ազդեցությունը հայերենի վրա։ Օրինակ՝ ուրարտական բնեռագիր արձանագրությունները ունեն անցյալ կատարյալի „i“ և „a“ բնեռով հիմքեր (բներ), որոնք արտահայտում են չեզոք (կրավորական) սեռի իմաստ, այսպես՝ uluštai-bi «առաջնորդեց, ուղղությունն ցույց տվեցը, aišti-bi «վազեցը (ձին) ...ušta-bi «արշավեցը (uštadi «արշավեցիր»), šia-bi «բերեցը, եկավ», nuna-bi «եկավ» և այլն, որն ընդունվում է բոլոր ուրարտագետների կողմից (-u-թեմատիկ, օրինակ karu-bi «նվաճեցիր», ḫau-bi «գրավեցիր», uštu-bi «նվիրեցիր» և այլն ցույց է տալիս ներգործական իմաստ)։ „i“ մորֆեմայի կրավորական—չեզոք ֆունկցիան կա նաև վրացերենում, օրինակ v-šale «փոում եմ, բացում եմ», բայց v-išale «փովում եմ, բացվում եմ», šoba «ծնունդ», v-šob «ծնում եմ», բայց šob-i-li «ծնվածը» (m-šob-eli «ծնողը») կամ vaçvaleba (v-açvale) «առանջում եմ», իսկ v-içvaleba (v-içvale) «առանջվում եմ», v-phen (v-phine) «փոում եմ», v-iphinebi (v-iphine) «փոում եմ», phenili «փոխված» և այլն։

ա (ա) ԽՈՆԱՐՀՈՒՄ

Այս խոնարհման տակ գնացող բայերը մեծ մասամբ չեզոք են, ցույց են տալիս կացական վիճակ կամ դրա դառնալը։ Համե-

մատել նման a խոնարհումը, որպես չեզոք, լատիներեն cubāre «պառկած լինել», micāre «փայլել» և այլն: Գրաբարում անհինք ծխել, բայց՝ ծխալ, թուել, բայց՝ թուալ, կոծկել «խփել իրանց», բայց՝ կոծալ «խմելով աղբալ» և այլն, թողած գնա արմատան բարբառային բնաձայնական ծլկլալ, ֆշֆշալ, փսփսալ, գոգոռալ (և գոռալ), թռչալ և նման հարյուրավոր կրկնավոր և ոչ կրկնակ բայերը: Այս ա խոնարհման չեզոք բնաթթի վրա թներս ազգած լինի և վերևում նշված ուրարտական և մյուս ասեզական (ասիանիկ) լեզուների խոնարհման չեզոք սեռին պատկանող բայարները, թեև այդ հարանի է մատամբ և այն էլ աորիստի բնի ձևերում (uš-adi, ši-adi, nun-adi և այլն):

Ներկա բնի համար ոչ ածգային պարզ a թեմայով են կազմված հետևյալ հայկական բայերը, որոնք հնդեվրոպական ծագումով են: Այստեղ այդ a խոնարհիչը ենթադրվում է, որ ծագել է հնդեվր. *-ā-je- ձևույթից: Ունենք, օրինակ, որթամ «որթկում եմ», =հին. սլավ. rygajǫ „рыгаю", կնամ «ապրում եմ», հին. *gʷij-ā-je -ձևերից բարդված (հուն. ζη- արմատը առաջացել է *gʷjē-ից, իսկ ζω-ն առաջացել է *gʷijō-ից), մնամ հավանորեն առացվել է (ըստ Մելեի) հին *men -ā -je ձևից, ինչպես են ձևավորվել լատ. cēlā-re (cēlō) «թաքցնել», հին սլավ. -mēta -ti метать (ռուս. мета́ю), իսկ այդ մնամ բայի ազգակիցները լատ. manē-re, հուն. (μέ) μένη-κα այլ կերպ են ձևավորված: Ինգալին ձևով ներկան, բացի -նա մասնիկից բառնամ (<*բարձնամ-բարձի) և դառնամ (*դարձնամ-դարձալ) բայերի մեջ լինում է միշտ -ana- ձևով, որ հետագայում առանում է «դառնալ մի բանց մասնիկի իմաստ, ինչպես՝ քարանալ, մեծանալ, աստուածանալ և այլն: Հին կազմիչներ են՝ առնամ (առացալ), որին ազգակից են լատ. (de-, prae-) stināre հաստատել, նշանակել, ուրանամ (ուրացալ), համմ. հուն. ἀρνέομαι «մերժել ուրանալ», բանամ (բացի), լոգանամ =հուն. λούω, լուանամ =հուն. πλύνω և այլն: Կա և -նամ (-նացալ) ածանցը, ինչպես արբենամ, մերձենամ, լցնամ և այլն, որոնք սակավաթիվ են և համեմատաբար ուշ կազմություն բայեր: -նամ մասնիկը առացվել է -*նանամ ձևից:

Գոյականից ծագած «ա» խոնարհման բայերը, ինչպես օրինակ յուսամ (յուսացալ), իրենց «ա» խոնարհիչի մեջ թներս պահել են հնդեվր. -ā -je բարդ ածանցը, ինչպես ունենք սանս. prīṇayati «հոխում է», prīṇā «հոխ» գոյականից, հուն. τιμάω «գնահատում

նմա (տալդ «գինա»), սլավոն. kotorajǫ «կռվում նմա», kotora «կռիվ» գոյականից և այլն։

Ու (U) ՀՈՆԱՐՅՈՒՆ

*Առանց ոնգալին ածանցի հնդեվրոպական համապատասխանություն ունեն հայոց գելում (առր. գելի), հուն. welý-sthē «պատվից, գլորվեց» (βελώ-ω «գլորել»), լատ. volvo. գոթ. walwjan, հննում (հնևի) «հենում նմա»=լիտ. pinú «հրուսում նմա», գոթ. spinnan «մանել» (*spenwe-ից), հնդում (հնդի)=լիտ. (p i ú (id). գելում (գելի), «ճղում նմա բայի ու (-u-) թեման չի տեսնվում այդ արմատի ազգակից մյուս հնդեվրոպական արմատների մեջ (լիտ. skeliú, հին. իսլ. skilja «ճղել», խեթ. (i)skal a «ճղել»)։ Ինգալին մասնիկով (-նու-) ունենք մի քանի միայն հնդեվրոպական բայանձևերով ներկա, ինչպես առնում (առի) =հուն. ἀρνυμαι (աոար. ἠράμην), զգենում (զգեցայ) =հուն. ἐνυμαι.... իսկ լցում (լցի, լրից) բայի -նու ածանցի դիմաց ունենք սանս.- nā- (pṛnâti «լցնում է»)։ Արդյոք հայոց ու պարզ խոնարհման այդ բայերի մեծ մասի ներգործական լինելը չի՞ ազդվել ուրարատական բայերի u թեմայից (kar-u-bi, ǧa-u bi, uš-u-bi և այլն)։ Ըստ Ն. Մառի դրարարի քերականության (СП 3, 190², էջ 190) դրանք քան և լոթ բայեր են — արձակում, արգելում, հարում, լաւելում, կասում, զեղում, թողում, լիսամ և այլն։ Հնդեվրոպական լեզուներից միայն սանսկրիտերենը և հունարենը ունեն -նա մասնիկը ներկա բնի կազմության համար, որը համարվում է հետագա շրջանի ստացվածք (Esq, 112)։ Մենք նման զուգադիպությունն հայերենի և ուրարտերենի բայաթեմաների ֆունկցիաների մեջ արդեն տեսանք։*

*Բոլոր վերոհիշյալ e, i, a, u ներկայի թեմաներից բացի կա ևս մեկը, որ վերջանում է «օ»-ով, դա զոմ «գոյություն ունեմ, կամ բայն է, որի պարզ բունն է գո- (go-)։ Այդ պակասավոր բայը առաջացել է նախնական *wos-ից, որ եղել է անցյալ ժամանակով (perfectum) ձևակերպված, իբր *vóse և ազգակից գոթերեն was «եղա. էիմ, բայց հետո դարձել է ներկա, նման գիտեմ բային, որ նույնպես եղել է անցյալ, նման սանս. véda, հուն. βοῖδα. գոթ. wait «գիտեմ» (առաջ «իմացա»)։*

ԱՈՐԻՍՏԻ ԲՆՆԵՐԸ

Ունենք երկու տեսակ բայաբներ՝ արմատական և ցոյական («ց» մորֆեմայով)։ Ամեն մեկն էլ խոնարհվում է երկու ձևերով՝ e թեքույթաձևով (ներգործական), որի առաջին դեմքն է ի, իսկ ներ-

կան ենթարկվում է ե (e) խոնարհման, և ա թերությամբ (medio-passivum չեզոքակերպավորման), որի առաջին դեմքն է ալ, իսկ ներկան ենթարկվում է ի, ա, ու խոնարհման: Համեմատել՝ բերեմ —բերի, գործեմ—գործեցի, բերիմ—բերալ, գործիմ—գործեցալ, բարկանամ—բարկացալ, զգենում—զգեցալ և այլն:

Արմատական աորիստով են -աւեն -աւի, -ու, -ւու (այդ -ւու-ից առաջ չպիտի լինի ձայնավոր) թեմաներով վերջացող ներկաները, ինչպես և հանեմ, ածեմ, բերեմ և նաւիմ բայերը: Համեմատել՝ տեսանեմ—տեսի, տեսանիմ—տեսալ, մեռանիմ—մեռալ, հեղում—հեղի (կրավ. հեղալ), ջեռնում—ջեռալ և այլն: Երդնում բայը ունենում է երդու-ալ, իսկ -նու || -ի վերջացող ներկայի բների բայերը ունենում են աորիստում -եալ վերջավորությամբ արմատական բներ, որոնք իրր սկզբում ունեցել են այդ -եալ վերջավորության -ի- (>ե-) մասը, օրինակ զարթիմ—զարթեալ, պահնում-պահեալ և այլն: Համեմատել նաև՝ լսոնեմ—լսեալ, որի արմատն է (յ-) արի, որ մաքուր ձևով մնում է հրամայական արի (<ներ կաց»), նման լատիներեն ori-or «յառնել» ազգակից բայարմատին (արի-=ori-):

Ցոլական աորիստով են մյուս բայարները. այն է, որը ներկան խոնարհվում է a խոնարհումով՝ ճեամ—ճեացի, լուսամ—լուսացալ, լուանամ—լուացի, մեծանամ—մեծացալ, -ոտ մասնիկով բայերը, որը դրան նախորդում կամ նախորդել է որևէ ձայնավոր, ինչպես՝ զգենում—զգեցալ, լինում—լեցալ, լնում (<*լինում)-լցի և այլն, e և i խոնարհման բայերը, որոնք չունեն ոնգային մասնիկ (-անև, -անի), ինչպես՝ գրեմ—գրեցի, բաժմիմ—բաժմեցալ և այլն, բացի ածեմ, բերեմ, հանեմ և նաւիմ բայերից, որոնք ունեն արմատական աորիստ: e և i խոնարհման դեպքում աորիստի «ց» նշանը ավելացվում է ոչ թե այդ խոնարհանիշների վրա, այլ -եա (-ea-) մասնիկի նախորդումով, այսինքն գործեցի կամ գործեցալ ձևերը նոր են *գործ-եա-ց-ի կամ գործ-եա-ց-ալ, ուր այդ -եա մասը առացվել է բուս Mariés-ի *-is-ā կոմպլեքսից, իսկ դրա -is- մասը պետք է տեսնել օրինակ, լատ. ēg-is-ti, ēg-is-tis, ēg-er-ā-s (ուր -er -ā <-*is-ā-) ձևերի is-ի մեջ: Տես Ա. Մեյեի Esquisse-ում (էջեր 116—117): Այդ -ea- մասնիկը մանում է և -եա-լո- անցյալ դերբայի վերջավորության մեջ, ինչպես գործեալ, առեալ, բացեալ, զգեցեալ և այլն:

Իսկ ինչ վերաբերում է աորիստի «ց» ձևին, ապա ինչպես տեսանք, կան և ոչ այդ կերպ կազմված աորիստներ: Հայոց հա-

Ժամատակյան հնչյունափոխությունից մեզ հայտնի է, որ հնդեվրոպական -sk-հնչյունակապակցությունը վերածվում է հայոց «ց» աֆրիկատի: Եվ այդ նկատի առնելով վերականգնում են *-ske ածանց (>հայոց-ց), որը հատկանշում է գործիս անցյալում (praeteritum-ում), ինչպես՝ փձաց, փեսցաց, փսցաց, փսնեցաց և այլն: Լատիներենը, հունարենը, սլավոներենը և մյուս հնդեվրոպական լեզուները գործ են ածել անցյալ կատարյալում *s ձևը, և կարծում էին, որ հայոց «ց»-ն համապատասխանում է այդ *s-ին, բայց ըստ հնչյունափոխական օրենքի հայերենում այդ հնդեվ. -*s- շընչականը (սպիրանտը) պետք է ընկներ՝ ի միջի այլոց «ց»<հնդեվ. -sk ծագումով է դրարարի մեկ դերբայական պատճառական բայերի -ուց մասնիկը, ստացված -ոյց շեշտավոր ձևից (փախ-ուցանեմ), ասր. փախ-ուց-ի, 3-րդ դեմք՝ փախ-ոյց), ուր «ց» մորֆեման համապատասխան է հուն. σκω, լատ. sco: Նման հայոց «ց»=հնդեվ. *sk մենք տեսանք հոլովման մեջ, ուր սեռ. -ասր. -բաց. «ց» կապվում է -sk- (ռուսաց -ск-սն) ածանցի հետ:

ԲԱՑԻ ԹԵՔՈՒՄԸ

Ծոնարհման մեջ, ինչպես և հոլովման, հայերենը կորցրել է երկակի թիվը, չունի նեղդործական և չեզոք (կրավորական) բայաձևերի համար տարբեր վերջավորություններ, ինչպես այդ տեսնում ենք հնդիրանական և հունական լեզուներում: Բայի այս թեմաների մեջ, ինչպես և հոլովման ժամանակ, ե հնչյունը առաջանում է *ej երկբարբառից, -ույ և -իյ- կոմպլեքսները վեր են ածվում պարզ -ու- և -ի ձայնավորների: Ինգալին (ն, մ) հնչյուններից առաջ ե և ո ձայնավորները չեն դառնում ի և ու, ինչպես լինում է սովորաբար, այլ մնում են իրենց իսկական վիճակում, ինչպես ունենք -եմ, -են (գիտեմ, գիտեն) կամ -ոմ, -ոն (գոմ, գոն), բայց այս դեպքերում բալիմաստն է գերակշռում ձևական հանգամանքի վրա, ինչպես հաւք, թիւք և այլն չեն դառնում հօք, թյուք և այլն, իսկ օրինակ աւձ, աւր... կամ ամաւք, բանիւք... հընչվում են օձ, օր... կամ ամօք, բանյուք և այլն:

Ինչենք սահմանական ներկայի, հրամայական եղանակի, ստորադասական եղանակի (ներկայի և սորիստի), սահմանական առջեհաի և անկատարի դիմավոր վերջավորությունները:

Եզակի առաջին դեմքում ունենք -մ (-m) *բերե-մ, բերի-մ, աղամ, թողում, գո-մ: Էական* ե մ *բայը համապատասխան է սանս.* ásmi, *հուն.* ἐιμι, *հին սլավ.* jesmĭ *և այլն: Նույն համապատասխանությունը (հայոց* -մ = *հնդեվր.* -m) *ունենք բերեմ = սանս.* bhárāmi, *լատ.* berim, *սլավ. (սերբ.)* berem *կամ* a *խոնարհմամբ՝ բառնամ = հուն.* φέρω, *գրկում եմ, ընում = հուն.* ἔχθω *ատում եմ,* ненави-дю *և այլն: Հոգնակիում հայերենը ավելացնում է* -ք, *ինչպես եմք, բերեմք, բերիմք և այլն, որի դիմաց կա սանս.* -mah, *գոթական* -mēs, *լատ.* -mus, *բայց այս չի ներկայացնում ներքին, հնչյունաբանական-դեներատիկական կապ (ազգակցություն): Այս հակադրան բալակատուցվածքը կա ոչ միայն առաջին դեմքի համար, այլ նաև երկրորդ, ուր հոգնակիում ավելացվում է նուլդեպևս* -ք *(էք, բերէ-ք, բերի-ք, աղա-յ-ք...): Սրա զուգահեռականը ունենք և հոլովման ժամանակ՝ ամ—ամք, ամաւ—ամաւք և այլն: Վրացերենում համեմատել՝* v-ar «*եմ*» -v-ar-th «*եմք*», x-ar «*եաս*» -x-ar-th «*էք*» *կամ* v-akheb «*գովեմ*» -v-akhebt «*գովեմք*», akheb «*գովեսս*» -akhebth «*գովէք*» *և այլն: Այնպես որ հայոց խոնարհումը բացարձակ կերպով ցույց է տալիս մեր լեզվի ոչ հնդեվրոպական (տասհանիկ) կոմպոնենտի ներգործող ազդեցությունը:*

Եզակի երկրորդ դեմքում սպասվող միջձայնավորյան -s- *ձևը պետք է ըստ հայ հնչյունաբանական օրենքի ընկներ, այնինչ սանս.* bhárasi *և նմանների դիմաց սպասվող հայ* բերես *ձևը չէր կարող լինել: Այդ ձևը անշուշտ եղել է անալոգիայով* su *երկրորդ դեմքի էական բայի ազդեցությամբ, ինչպես որ բացատրվում է հնդեվրոպական* es-«*լինել*» *էական բայը պիտի տար* es-mi, es-si, es-ti *և այլ ձևերը, ինչպես որ կա մի շարք լեզուներում: Երկրորդ դեմքի երկա* -ss- *ձևը պահվել է օրինակ Հոմերոսի մոտ (*ἐσσι*), լատիներենում՝* ess (*Պլավտի մոտ*), *որ հետագայում դառնում են պարզեցմամբ հուն.* εἶ, es, *սլավ.* ecu, *սանս.* ási: *Հայոց* su *ձևը արտացոլելով հնագույն *ess(ó)-ն անալոգիայով անցել է բերես, բերիս, աղաս և մյուսների վրա: Իսկ հոգնակի երկրորդ դեմքի* -յք (*բերէք < *բերի-յ-ք, աղա-յ-ք.*) *վերջավորությունը իրեն «յ»-ով արտացոլում է հնդեվ. լեզուների* -te (*ձայնավորից հետո*), *ինչպես սանս.* bháratha *հուն.* φέρε-τε, *հին սլավ.* bere-te „sepeme“ *և այլն, բայց ավելացվում է հոգնակերտ* ք *մասնիկը, ապա թե ոչ կհամընկներ եզակի երրորդ դեմքին: Համեմատել այդ «ք»-ի հավելումը նաև հոգնակի առաջին դեմքի համար:*

Եզակի երրորդ դեմքում ունենք -i վերջավորությունը, որը ու (u) և ի (i) խոնարհիչներից հետո չի հնչվում, ընկնում է։ Այսպես՝ բերէ (<բերի-է), աղա-է, դու, բայց՝ բերի (<*բերի-է) «բերվում է», թող-ու (<թողու-է) «թողնում է»։ Այդ -է մորֆեման առաջացել է հնդեվր. -ti ձևից, ինչպես ունենք սանս. bhá-rati, հին ոուս. beretĭ „беретъ“ և այլն։ Հոգնակի երրորդ դեմքում ունենք -ն, ինչպես՝ բերին, բերին, աղան, թողուն, գոն, որը ըստացվել է -ւնթի (-nti) նախկին ձևից, համեմատել նպ=սանս. santi, հուն. *ἐντῑ<εἰσι. գոթ. sind.։

Ուշագրավ է այդ մեր էական բայի եզակի երրորդ դեմքի ե ձևը, որը բնավ չի համապատասխանում սանս. ásti, հուն. ἔστι, սլավ. есть, այլ անալոգիայով հետևել է բերէ կազմությանը։

ՀՐԱՄԱԲԱԿԱՆԻ ԶԵՎԵՐԸ

Հայերենի հրամայականը կազմվում է երկու տեսակ. մեկը առրիսաի բնից է և կրում է կոնկրետ ու կատարյալ բնույթ, ինչպես՝ բեր=սանս bhára, հուն. φέρε, լի՛ր=հուն. λίπε, ճա՛րպ=սանս. pṛc-chá. իսկ մյուսը կրում է արգելական բնույթ մի՛ մասնիկով (=սանս. má, հուն. μή), կազմվում է ներկայի բնից և ունի տևական չվերջացած նշանակություն, ինչպես մի բերեր, մի լքաներ, մի լնուր և այլն, հոգնակիում մի բերէք, մի լքանէք, մի լնուք և այլն։ Եթե «ք» հոգնակերտ մասնիկը առանձնացնենք, ապա բերէք, լքէք ձևերին կհամապատասխանեն հուն. φέρετε (=սանս. bhárata) և λίπετε.

Հրամայականի երկու բների առկայությունը ընդհանուր և կոնկրետ առումների համար տեսնում ենք և հունարենում և մանավանդ սլավոնական լեզուներում։ Համեմատել, օրինակ, ռուսաց возьми «վերցրու», բայց արգելականը՝ не бери (չի կարելի ասել не возьми), понеси բայց не носи և այլն։ Հունարենը դրական հրամայականը միայն կազմում է առրիսաից (λίπε), այնինչ ներկայի բնից կարող են կազմվել թե դրականը և թե արգելականը (λεῖπε «թող», μὴλεῖπε «մի թող»)։

Արգելական հրամայականի վերջին «ր» (մի՛ բերեր, մի՛ լնուր...) հնչյունը Ա. Մեյեն համարում է մի առանձին մասնիկ, նման հուն. ρα կամ αρα, αρ մասնիկին, որ բառից հետո է դրվում և ցույց է տալիս տրամաբանական անցում մեկից դեպի մյուսը, «իսկապես, հետևապես» (igitur) իմաստով։ Նշվում է նաև լիտ. ir

մանիկի նման հենց լիտվաներեն ei-ka «գնաց» (nogu-ka առաքինում) -ka մանիկով: Հետևապես բևեռ, լնար և նման-ները կազմված պիտի լինեն *bhere-re(e) *plenu-r(e) և նման ձևերով: Ա. Մեյեն այս մենկնաբանությանը համարում է պարզ և շատ մեքենա է համարում մյուս հրամայականները, որոնք վերջանում են -ի ձևով (անկ-իր, մեռ-իր...), -արուք (անկարուք, լուարուք...) կամ պարզ -ր ձևով, ինչպես՝ լուր «լսիր», տուր (հոգն. տուք), դիր (հոգն. դիք) և այլն: Ըստ իս, այդ բոլորը մի ծագում ունեն և հավանորեն ոչ հնդեվրոպական են: Ես նկատի ունեմ ուրարտական -ri (կամ -rie=-re) վերջավորությունը, որ կրում է turi (‖ turie=ture) «ջարդիր» ձևը կազմված tu- «ջարդել» արմատից, ինչպես այդ պարզ երևում է այսպես կոչված «անունների ֆորմուլայից»: Այստեղ կարդում ենք –aiuš tiulie ul.i.turi «ով ասէ գնա ջարդիր» (որտեղ uli «գնաց» կապ ունի հայոց ուղի բառի հետ, կա և uladi «գնացի, մեկնեցի»): Սրա ասորական թարգմանությունն է alik ḫipi «գնա ջարդիր», իսկ tu-re «ջարդիր» ձևի tu-արմատը ունենք և tu-lie (=tu-le) «ջարդեց» ասորագասական ներկալի մեջ (aluše ini DUB. TE tulie «ով այս արձանագրությունը ջարդեց»):

Հրամայական -իր վերջավորությունը, ինչպես և հոգնակի -արուք ձևը կապ ունեն աորիստի -եր -ար ձևերի հետ «ես հիմնական և ընդհանուր հնչյունով, որ երևան է գալիս և արգելական հրամայականում: Հրամայականներ—լուարուք, լուայք, կամ թագնայք, թագներուք (<թագիար-ուք) և նմանները նշանակում են նաև աորիստի երկրորդ դեմքերը հոգնակիում: Այդպես է նաև աորիստի ասորագասական -ջիք II դ. հոգնակի վերջավորությունը, որը ցույց է տալիս նաև հրամայական, ինչպես՝ հալեջիք, կալջիք, առաջիք և այլն, որոնց -ջիք ձևի հրամայական երկրորդ դեմքի նիշն է «ջ» ավելացած հոգնակի «-ք»-ով: Այդ «ջ»-ն կա և նգակիում, թե՛ նեբրալի և թե՛ աորիստի ասորագասականներից կազմած հրամայականներում (ազանիջիք, ուտիջիք..., տևաջիր, հալեջիր և այլն) և ենթադրաբար ազդակցում է առնս. -dhi և հունարեն -θι հրամայականի II դ. նգակիի վերջավորության հետ. եթե ընդունենք որ այդ -dhi ձևը մի հաջորդ ձայնավորից առաջ դառնում է -dhy-, թեպետ ըստ Ա. Մեյեի „Il est impossible de rien déterminer ici avec précision" (Esquisse, էջ 121):

Ծոլական աորիստի բնից կազմած միավանկ հրամայականում (II դ. նգակի) պահվում է այդ «ջ»-ն (կաց, կնաց, լից...), իսկ

բաղմավանկ կազմութիւններում այդ «ցց»-ն ընկնում է, ինչպես՝ գործնա (բայց հոգնակի գործնեք<*գործնա-ց-էք), մնա (=մընա, բունն է մնաց-), հաս (հոգն. հասուցէք, բունն է՝ *հասուց-) և այլն։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆԻ ԳԻՄԱՎՈՐ ՁԵՎԸՐԸ

Ստորադասական եղանակի էական բայի ներկան կինի իցեմ, որը խոնարհվում է ինչպես սահմանականի ներկան (եմ, ես, է և այլն)։ Այս իցեմ, իցես և այլնի մեջ հիմնական կարևոր բունն է ից-, ուր «ց» ձևը արտացոլում է *-ske-և իցեմ կազմութիւնը համապատասխան է լատ. escit «կլինի, il sera»։ Որոշ մեկնաբանութիւն անդիք է տալիս հայոց այդ ստորադասական ներկայի սկզբնական «i» ձայնավորը, որ փոխարինում է e-ին (es- «լինել» արմատում)։ Ոմանք (Մեյեն) ենթադրում են, որ էական բայի այդ i-ն կա նաև isk (իսկ) բառի մեջ, ստացված հին *is-two- ձևից, համեմատելով սլավ. истый, истина, истовый բառերի ist-ի հետ, հուն. ἶ-σθι «եղիր» հրամայականի i ձայնավորով is- ‖ es- ալտերնատի բների հետ, որը հարկավ ենթադրական է։

Ստորադասականի ներկան e, i, a, u, o խոնարհումներում կազմվում է այդ էական բայի (իցեմ և այլն) հավելացմամբ բայերի բների վրա և ստանում ենք բերե-իցեմ>*բերելցեմ>բերիցեմ (բերիցես, բերիցէ և այլն), իսկ i խոնարհման ժամանակ հավելացվում է իցեմ>-լցեմ, ուր վերջի «ե» ձայնավորը խոնարհման թեմատիկ i ձայնավորի նմանեցմամբ է, ինչպես u (ու) խոնարհման դեպքում նման ենք տեսնում (լնու-լցեմ>*լնուցեմ>լնուցում)։ Նորմալ են՝ ազա-լցեմ (կրավ. ազալցեմ), գո-լցեմ>գուցեմ։

Ստորադասականի սորիստը նույն բնութիւն ունի, թեպետ մի երկու արխաիկ շեղումներով։ Վերցնենք ներգործական բերեմ և աղամ բայերից այդ ստորադասական անցյալ կատարյալը՝ բերից, բերցես, բերցէ, բերցուք, բերջիք, բերցեն, նաև՝ ազացից, ազացես, ազացէ, ազացուք, ազաջիք, ազացեն։ Կարծես թե սահմանական սորիստի վրա (բերի, ազացի) ավելացնում ենք -ց, -ցես, -ցէ, -ցուք, -ջիք, -ցեն, բայց պատմականորեն ազացուցում է, որ առաջին դեմքը ստացվել է -իցց (բեր-ից, ազաց-ից) վերջավորութիւնից, որը արտացոլում է հնդևր. -isco ձևը. և այդ, ինչպես և տարբ «ստամ» կազմութիւնները, ապացուցում են, որ հայ լեզուն ունեցել է բայի առաջին դեմքում նաև-o վերջավորու-

թյունը, ինչպես լատ. fero. հուն. φέρω։ Երկու «ց» հնչյունների հանդիպման ժամանակ (բացից—բացցես, բացցէ, բացցուք...), երբ հիմքի «ց»-ն «ի» ձայնավորի անկման հետևանքով միասին է հնչվում վերջավորության «ց»-ի հետ, ևնում է այդ «ցց»-ն երկվանկ թյան դեպքում, իսկ բազմավանկության դեպքում դառնում է «ց» (աղացից—աղացցես—աղացէ—աղացուք և այլն)։ Հոգնակի երկրորդ դեմքի-ջիք վերջավորության մասին խոսվել է հրամայականը կազմելու հատվածում, իսկ առաջին դեմքի -ցուք վերջավորությունը լավ չի ճշտված։ Կամ դա հանում են *-ցամք ենթադրյալ վերականգնությունից, կամ այդ -ցուք մասնիկի մեջ «ուք» ձայնավորը հանում են հին «օ»-ից, ինչպես ունենք հունական աորիստական մեջ (φέρωμεν)։ Ջևդոք-կրավորականի աորիստական աորիստը նմանաբանությամբ (անալոգիայով) վերցնում է այդ տիպի սահմանական աորիստի առաջին դեմքը (բերայ, գրեցայ) և ավելացնում է -ց, -ցիս, -ցի, -ցուք, -ջիք, -ցին, դնդչելով աորիստի -ալ կամ -նալ վերջավորություններ եզակի երկրորդ դեմքից սկսած (բերցիս, բերցի..., գրեցայց գրեցիս, գրեցի...), բացառությամբ -եայ վերջացող աորիստից (չարեայ, լանցնալ, երկեայ, երկեալ, թագեալ...), ուր ունենում ենք՝ չարեալց -լարիցես -լարիցէ -լարիցուք, լարիջիք-լարիցեն։ Ինչպես տեսնում ենք բոլոր այս ձևերից, հոգնակի առաջին և երկրորդ ձևերը (-ցուք, -ջիք) ունեն թե ներգործական իմաստ և թե չեզոք -կրավորական։

Աորիստական այս աորիստով թարգմանվում է (ավետարանում և այլն) թե հունական բնագրի սահմանական սպառնին և թե աորիստական աորիստը (տե՛ս Esquisse, էջ 123)։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆԻ ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ (ԱՈՐԻՍՏԻ) ՁԵՎԵՐԸ

*Եզակի առաջին դեմքի վերջավորությունն է -ի (-i), որի ծագումը անհայտ է։ Եթե աորիստի բուն ունի ձայնավոր, ապա այդ «ի»-ն վեր է ածվում «յ» (լատ. առնանտի, որպես դիֆտոնգի երկրորդ տարրի։ Այսպես են՝ բեր-ի, տես-ի, գործեց-ի, լց-ի..., բայց՝ բեր-ալ, տեսայ, գործեց-ալ, երկ-նալ, եղէ (<*եղել) և այլն։*

Եզակի երկրորդ դեմքը ունի -ր (r)՝ բերե-ր, տեսե-ր, գործեցե-ր, եղե-ր, բերա-ր, տեսա-ր, գործեցար և այլն։ Այստեղ այդ «ր»-ն նույն ծագումն ունի, ինչ մենք տեսանք հրամայականի մեջ, որը Ա. Մեյեն ուզում է հրամայականի ապդնցությամբ բացատրել (c'est sans doute la même particule qu'à l'impératif ou plutôt

c'est une forme influencée par l'impératif', Esq., 125). և իրև թե սանս. bhárah և համեթական փέրեշ ձևերի մեջ պահվել է բերեր (<*bheres-r(e)) կազմութեյան թեքման „e"-ն։ Մենք այդ հրամայականի և անցյալների «ր» „(r)" վերջավորութեյունը համարում ենք ոչ հնդեվրոպական, այլ ուրարտական, resp. ասիանիկ ծագումով։

Եզակի երրորդ դեմքը ունենում է երկու տեսակ կազմութեյուն, մեկը պարզ արմատը, որի միավանկութեյան պայմաններում ավելացվում է ն (e) աճականը (ե-բեր, ե-լիք, ե-հարց, ե-լաց...), եթե այդ արմատը ձայնավորով չի սկսվում (ել, օծ, ած...), իսկ մյուսը չեզոք բայերում՝ -ա-ւ (-a-w) վերջավորութեյունը։ Այստեղ «ա» ձայնավորը չեզոքութեյան բնագիրն է, իսկ w վերջավորութեյունը, ըստ իս, գալիս է ուրարտական (resp. ասիանիկ) լեզվաշխարհից. թեպետ Ա. Մելեն դա համարում է արխաիկ հնդեվրոպական մի ձև, որ երևան է գալիս սանսկրիտների (վեդաների մեջ) perfectum-ում պահել է հետք նաև լատիներենում և թոխարերենում և «անկասկած խեթական որոշ ձևերի մեջ» (Esq., 124)։ Աճականը augmentum կա բացի հայերենից նաև հունարենում և հնդիրանական լեզուներում և դրվում էր երեք դեմքերում ևս, թեպետ կարող էր առանց իմաստի փոփոխութեյան նաև չդրվել, իսկ հայերենը այդ աճականը պահել է միայն երրորդ դեմքում, բացի մի քանի դեպքերից (եղի, եկի, ետու), իսկ հետիջևադարյան ձեռագրերում այդ աճականը դրվելիս է եղել ըստ անալոգիայի, նաև «ա»-ով սկսվող արմատների երրորդ դեմքի վրա (օրինակ եած «բերից» ած-ից բայից)։

Աորիստի առաջին դեմքը հոգնակիում ունի -աք (-akh). օրինակ՝ բերաք, որը թե ներգործականի համար է և թե չեզոք-կրավորականի, և -ս- ձևի բացակայութեյունը դրա մեջ, նկատի ունենալով սանս. -ma, հուն. μεν ձևերը նույն աորիստի հոգնակի առաջին դեմքում, պետք է բացատրել անալոգիայով, ինչպես ունենք առորադատականում բերցուք, նույն m ձևանիշի բացակայութեյամբ։

Աորիստի 2-րդ դ. հոգնակիում ունի այք ներգործականի համար (բերէք<*բերեյք), որ հետո դարձել է բերիք, և կրավորականի համար (բերայք)։ Ներգործական բերէք ձևին համապատասխանում են սանս. bhárata, հուն. φέρετε։ Հայոց այդ աորիստի -ք հոգնակերտ մասնիկը կա և ներկայում։ Այդ 2 դեմքի համար, բայց միայն չեզոք-կրավորականում ալստեղից և հրամայականի համար, ունենք -արուք վերջավորութեյունը, ինչպես ավետարանում (Ղուկ. XIII, 34)—քանի՞ցս անգամ կամեցայ... և ոչ կամեցարուք, իսկ հրամայականի առումով (անդ. XV, 10)—լուարուք և ի միտ առէք։

Աորիստի 3 դեմքերի համար (հոգնակիում) կա -ն (-n) վերջավորությունը, ներգործական -ին (-in) և կրավորական -ան (-an), որոնց սրտ -ն (-n) բաղաձայնը ծագել է նախկին -nt կոմպլեքսից: Այս երկու ձևերի տարբերությունները չեն բացատրվում:

Գրաբարի աորիստը իր իմաստով չի հետևում հանգամանից, ինչպես՝ լքի=հուն. ἔλιπον և այլն, որոնք հավասար արժեքի են:

Այդպես ուրեմն, անկախ բայասեռից, մենք ընդհանրապես ունենում ենք աորիստի հետևյալ վերջավորությունները. եզակի 1-ին դեմքում -ի, երկրորդում՝ ր, երրորդում՝ մաքուր բունը կամ արմատը և -ւ (-w), հոգնակիում. -լ դ. ար, II դ. —լը և —արուք (կրավ.) III դ. -ճ:

ՍԱՀՄԱՆԱԿԱՆԻ ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ (imperfectum)

*Բոլոր հոլովումների գծով սահմանականի այս անցյալ անկատարը կազմվում է դրանց ներկաների բնին («ենմանների») ավելացնելով որոշ թևքուլիններ: Պիտի նշել միայն, որ ե (e) և ի (i) հնչարհումների այդ անկատարը միանձն է, հար և նման էական (օժանդակ) բայի անցյալին (ևի, էիր, էր<*եյր. եաք, եիք, եին): Այդպես են՝ բերեի, բերեիր, բերէր<*բերեյր և այլն. լայի, լայիր, լայր, լայաք, լայիք, լային. լնուի, լնուիր, լնոյր<*լնուեյր, լնուաք և այլն: «Ա» հնչարհման ժամանակ բնի և թևքուլինների միջ ավելանում է «յ», իսկ «ե» հնչարհակերտը, հետագայում (միջին դարերից սկսած) գրվում է «է», այսինքն՝ էի, էիր, էր.... բերէի, բերէիր, բերէր և այլն, թևպես եր, բերեր ձևերը հին են: Այդպիսով մաքուր վերջավորություններն են՝ -ի, -իր, -յր, -ար, իր, -ին, որոնք մասամբ նման են սահմանական եղանակի աորիստ որոշ թևքուլիններին (համեմատել աորիստի թևքուլինները՝ բերի, բեր-եր (երեր), բեր-ար, բեր-եք ‖ բեր-իք, բեր-ին, թևպես կրավորականում կա՝ -յ, -ար, (-աւ), -աք, -այք. -ան): Այս անկատարի վերջավորությունները (-ի, -իր, -յր, -ար, -իք. -ին) ոմանք ենթադրում են, որ նման աորիստականին՝ բերիցեմ, բերիցեն, և այլնի կազմության նույնպես կարող էին բարդության հետևանք լինել. ինչպես նմանը ունեն լատ. legē-bam. հին սլավ. несъ-ахъ (neše-achŭ), գոթ. nasi-da և այլն: Եվ, ուրեմն ենթադրվում են, որ -ի, -իր և մյուսները «լինել, быть» բայի անցյալի (prétérit) ձևերն են և մտնում են նույնպես էական եմ բայի*

մեջ, որպես վերջավորութիւններ։ Սանսկրիտի åsa համեմ. էα համապատասխանները -ի հայոց վերջավորութեան կամ -յր ձևի համապատասխանները սանս. åḥ և հուն. ῆς ձևերին (<*ēsi) չոր և մեխանիկական նմանեցումներ են, այն էլ՝ հակառակ հայկական հնչյունաբանական օրենքներին, իսկ աորիստի նման վերջավորութիւնները չեն նպաստում հասկանալ այդ բարդութիւնը։ Երկրորդ դեմքի -իր (-ir) ձևը, որ կա և աորիստի -ր (r) ձևի մեջ (բեր-եր ‖ բեր-ար), ինչպես և հրամայականի մեջ (տուր, լու-ր...) և համաձայն է ութարաերենի նույն ձևին (tu-ri ջարդի՛ր), ինչպես և -յր (jr) երրորդ դեմքի նմանութիւնը փոյուգիական *-tor-ին (փոյուգ. ab-beretor=հայոց բերէր<բերե-յր), հակառակ են խոսում մեր անցյալ անկատարի վերջավորութիւնների վերոհիշյալ մեխանիկական կցումներին։ Գրաբարի -իւր վերջավորութիւնը (տեսա նիւր, տեսանվում էր, երևիւր երևում էր) առացվել են հին -*etro ձևից, թեպետ դրաբարում այդ -իւր ձևը չի համարվում դասական (հին)։

Սահմանականի այս անցյալ անկատարը ցույց չի տալիս լատիներենի նման մի պրոցես, որ նախորդել է մի այլ դեպքի, այլ հունարենի և ընդհանրապես հնդեվրոպականի նման մի պրոցես, որը տևել է անցյալում (համմ. ռուսաց „прошедшее время несовершенного вида")։ Բայց այդ անկատարը չունի աորիստականի իր առանձին արտահայտութիւնը, ինչպես սահմանականի ներկայի համար (բերիմ, ադամ) ունենք աորիստական ներկան կամ ապառնին (բերիցեմ, ադալցեմ) կամ աորիստի հանդեպ (բերի, ադացի...) ունենք աորիստականը (բերեց, ադացից...)։ Սահմանականի անկատարի ձևը տալիս է նաև աորիստականի իմաստ, ինչպես—սա թեև մարգարէ ոք էր՝ ապա դիտէր (ավետ. ըստ Ղուկ. VII, 39)։

ԲԱՑԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Բայի ներկայի բնից կազմվում է նախ անորոշ անունը (infinitivum. անորոշ դերբայը՝ անունը), որը վերջանում է -lo- (-լո-) թեքման մասնիկով՝ բերել, ադալ, լսել և այլն, ունենալով թե ներգործական և թե չեզոք-կրավորական իմաստ։

Այդ անորոշից սերվում են երկու դերբայ-ածականներ, մեկը -ի (-i) վերջամասնիկով, ինչպես՝ սիրելի, առելի, ըմպելի և այլն, որոնք մեծ մասամբ կրավորական իմաստ են ունենում, իսկ երբեմն՝ և ներգործական (սիրող, առող, ըմպող..., օրինակ՝ բարի

արարէք առնլեաց ձերոց», համմտ. նաև՝ ածելի, հոսելի, բանալի...), իսկ մյուսը, -ոց (-ос) վերջավորութիւնով ապառնի իմաստով (գալոց, մառնելոց և այլն), որոնցից ներգործական այդ ապառնի դերբայները կարող են ունենալ և կրավորական իմաստ, ինչպես՝ տորդի մարդոյ մառնելոց է («մարդու որդին մառնելու է») և ամի ոմն ի ձէնջ մառնելոց է զիս («մեկը ձեզնից մատնելու է ինձ»)—տե՛ս ավետ. ըստ Հովհաննու (XIII, 21) և ըստ Ղուկ. (IX, 44):

Անցյալ դերբայը, մնձ մասամբ կազմված անցյալի բնից, ունի -եալ վերջավորութիւնը (բերեալ, դրեալ, գնեալ, կարգացեալ...)՝ թե՛ ներգործական և թե՛ կրավորական բնույթով. օրինակ՝ տեսեալ գհաւատս նոցա ասէ (ἰδὼν τὴν πίστιν αὐτῶν εἶπε), իսկ կրավորական իմաստով՝ այլ ի հանդերձս փափկութեան զարգարեալ: Այդ դերբայը նաև կազմում է բարդ ժամանակներ՝ միացած եմ, էի և իցեմ օժանդակ բայաձևերի հետ (տեսեալ եմ, տեսեալ էի, տեսեալ իցեմ): Մազմանտեսակներից այդ -եալ ձևը կապակցվում է անորոշի -լ (-l) վերջավորութեան հետ, հոլովվելով -ո- (-o-) հոլովմամբ, այսինքն՝ ունենալով -լո-(-lo-) բնդհանուր մասնիկը: Եվ այդ կողմից -lo- մասնիկը (տեսանել, սեռ. տր. -բաց. տեսանելոյ, դործ. տեսանելով, տեսեալ՝ տեսելոյ, տեսելով) զուգադրակցվում է սլավ. -lo-(-лъ) դերբայական մասնիկի հետ, ինչպես нес-лъ есмь «բերել եմ», որ իսկապես նշանակել է «բերող եմ» (je suis porteur): Եվ ինչպես հայոց «նորա բերեալ է» դարձվածքից կարելի է մակաբերել այդ բերեալ ձևի նման անվանական իմաստը («իա բերելը նրա» il ya porter de lui), ատացվում է, որ անորոշը (infinitivum) և անցյալ դերբայը ունեն հավասարապես անվանական ձևավորում, բայց տարբեր կառուցվածքով, ինչպես կարծում է Mariés-ը (տես Revue des études arménienne, հատոր X, 1930, էջ 176): Այս հայկական և սլավոնական -*lo վերջածանցով կազմվող անվանական ձևերը միակ չեն, քանի որ հունարենում ևս կա στρῐβ-λό-ς «շրջված», μίμη-λό-ς «նմանվող», στγη-λό-ς «լուռ», αἰθαλος «մուր, մխալ» (копоть) և այլն:

Ներկա (ենթակայական) դերբայը իր -ող վերջավորութեամբ, որ „a" (i-a) հոլովման տակ է գնում, Ա. Մելիեն տարբերում է -ուղ ածանց ունեցող նման բայանունից: Առաջինի -(o)-l մասնիկը կապակցում է հուն. μοιν-λ-ης «կատաղի» ածականի -l-մասնիկի հետ, որը կա և թոխարական լեզվում, որի բարբառներից մեկում այդ -l- դրվում է ներկայի վրա, իսկ մյուսում՝ անցյալի

(prétérit) վրա։ Իսկ -աւղ (ծնաւղ) մասնիկը, ինչպես հայտնի է, հանդում է հնդեվ. ā-te ձևից (создатель, учитель), որ կա և խեթերենում (ḫalugatallas «լրարեր» ḫaluga «լուր բառից)։ Ըստ իս, վերոբերյալ կազմութիւնները, որոնք ունեն -l- մասնիկ, ինչպես և -ol- մասնիկով բայածականներ կամ բայանուններ առաջարանվում են ոչ համաձայն կիրպով, բացառութիւմբ -աւղ մասնիկով նեղիալի դերբայի, ուր այդ վերջավորութիւնը տալիս է նաև նշանակութիւնը, ինչ որ և ող վերջածանցը, իսկ աւ և ո (=o) հաճախ են շփոթվում (համմտ. օճիր, ‖ ոճիր, օսոխ ‖ ոսոխ, օրեար ‖ որեար և այլն)։

Վերջապես -ուն (-ūn) վերջածանցով բայածականները, ինչպես՝ դնալուն, շարժուն, անասուն և այլն, Ա. Մեյեն հանում է հնդեվ. *-omno- ձևից, որ կա ավեստական -amna- լատին. -umnus (alamnus) «սան. питомец» ածանցում, որը սերված է սովորական -*mn ածանցից։

Սրա հետ, ըստ իս, անխզելի է նաև հայոց -ումն (-umn) վերջամասնիկի ծագումը, որը, ինչպես ասվել է, ավելի շուտ կապակցվում է խեթ. umar համանակում բայածանցի հետ։

Բայց բայերը ունենում են նաև նախամասնիկ (praeverbium), որոնք առաջվել են ձևական բառերից՝ նախդիրներից, ինչպես զ-(z-)՝ զառանիմ, զդեռնիմ, զարմանամ..., ի- >j-(i->j)՝ յանցանիմ «հանցանք եմ գործում», յառնիմ (յարեալ, արի «վեր կաց»), առ (aŕ-)՝ առաւելում (համմտ. յաւելում-աւելի բառից), ընդ (and-)՝ ընդունիմ (ընկալալ). ըմբռնիմ (բռնիմ բայից) և այլն. ըստ-(əst-) ըստգտանիմ «մեղադրում եմ» (գտանիմ բայից), ըստանձնիմ (անձն բառից)։ Կան երկու նախամասնիկներ, որոնք առանձին նախդիր չեն եղել. դրանք են՝ -ամ կամ ճամ- (am- ‖ ham), ինչպես՝ ամբառնամ «բարձրացնում եմ (բառնամ բայից), համբերիմ (բերիմ բայից), համարձակիմ (արձակ ածականից) և ն(հ)- (n(i))՝ նայիմ (հայիմ բայից)։ Համեմատել նաև՝ նեցուկ և լինում-լեցալ, արարատյան բարբառում կա նի- (ni-) ձևական բառը՝ նի տալ «անհագաբար կուլ տալ», նի բերել «ցած բերել», նի ելնել>նիլնել «հեծնել (ձին), բարձրանալ ծառը, սարը» (взойти), նի մտնել «ներս մըտնել» և այլն։ Հայոց նիստ բառը, կազմված է հնդեվ. ni-sed ձևից, բայց ինարկե այդ չի գիտակցվում, թեպետ այդ վկայում է հնդեվ. ni- նախածանցի մասին։ Նորագույն հայկական նի ձևական բառը (կապը)-համմտ. «նի ա տալիս, նի ա բերում... կա ոչ միայն

արարատյան բարբառում, այլև Ղարաբաղի, Ղազախի և այլ, այսինքն հյուսիսային բարբառներում:

Ինչպես նշում է Ա. Մելիեն, հայոց լեզվի այդ նախնական մասնիկները անհետացման ուղու վրա էին, իսկ ալժմյան հայերենում գրաբարի այդ մասնիկները, որոնք մի ժամանակ ձևական, առանձին բառեր են եղել, բոլորովին չկան: Միայն հունարեն հայագետների կողմից մտցված վեր- արտա-, տրամա-, շաղ-, բազ- և մի քանի այլ նախնական ածանցները շարունակեցին հարատևել և դրանցից մի քանիսը գոյություն ունեն հիմա ևս և մեծ նպաստ են մեր ալժմյան լեզվի առաջընթացի նրբության և ստուգության համար:

Այդ խնդիրը «հնէաբանության» տեսակետից ևս իր ժամանակ նկատել եմ նաև մի մասնիկ, որը հին ժամանակ եղել է նախդիր տրական հոլովի խնդրառության համար և նշանակել է «տրա, համար» և հնչվել է an, կատարելով հետադրության բայական նախածանցի ֆունկցիա: Ածանցով և ֆունկցիայով (դերով) այդ ar-ը ևս կապակցում եմ հունական ἀνα, «դեպի վեր, ընդ, ընթացքով (вверх, по)», նման լատ. per մասնիկին: Այդ ana-ն կա նաև գոթերենում (=գերմ. an), «համ, վրա», սանս. ana (նույն իմաստով) և այլն, բայց որպես նախդիր կա նաև ակկադերենում (ասուրա-բաբելական լեզվում), ուր այդ նախդիրը տրականի համար է դրվում (anà Abimarda=Արիմարդային): Եվ, երկրորդ, հայոց այդ ան մասնիկը (չշփոթել բացասական «ան»-մասնիկի հետ) ավելի շատ է ծառայել մեր ալժմյան բարբառներում, քան գրաբարում, երկու դեպքում էլ նա հնացած էր և ծառայել էր հայագիտությանն անկասելի: Օրինակներ.

Անձեռոց, անձեռոցիկ «ձեռքի սրբիչ» (салфетка), որ սաւացի նշանակել է գրաբարում «ձեռքերի համար»:

Անոտնեայ «թաղավորական գահի կամ աթոռի տակի պատվանդան», առացվել է ան-ոտին «ոտքի համար», որից և անոտնեալ (գործ է ածվել Աստվածաշնչում):

Անոտք գրաբարում ըստ Առձևեն բառարանի նշանակել է «ոտքի կողմը, ոտքի ծայրից դուրս (թուրք. ալաղ թարաֆա):

Անկողին գործ է ածվել և հնում (գրաբարում) և ալժմ էլ կենդանի է մեր բարբառներում և գրական լեզվում, նշանակելով տաւացի «կողքի վրա (դեպլիք), постель», անցել է քրդերին kulin ձևով:

Անոռի «լայն փոկ կաշվից, որ ձիու պոչի տակից և գավա-

կի վրայից անցնելով կապվում է համեմատ երկու կողմերին» (տե՛ս Հ. Աճառյան. Դասք. բառ. 106), արտաբատյան բարբառում կոչվում է «ոռանէն» (-խոլնցոց «ոռատուա»):

Անբռանի «բահանոթի վրա ներքևից հաղցրած փոքրիկ տափակ այն փայտը, որին հենելով մի ոտքով փորում են հողը. գործ է ածվում մշնցոց մոտ և ատացի նշանակում է «բահի վրա (փայտ)»=թուրք. Քոփչաղ, հին հայոց ասպարակ (տես Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 61):

Անբռլկել մշնցոց և վանեցոց մոտ նշանակում է «հնահել, շպրտել, դուրս նետել», «արմունկով հրելով ցած դցել». արմատն է «թռրկել», որ գործ է ածվում մի շարք բարբառներում «թռշնել, դցել» նշանակությամբ (Դասք. բառ., 376) և հատուկ լինելով լատատանի հարավային մի շարք բարբառներին, ըստ իս, փոխառություն պիտի լինի արաբերեն թռտրաբա «թողնց» բայից:

Անբռնել խարխըդցիների մոտ նշանակում է «թռների կողքին կպցրած լավաշի վալը ընկնելը», կազմված է «թռափել» (=վալը ընկնել, падать), որը իր այդ չեզոք իմաստով այժմ էլ գործածական է արաբատյան բարբառում (ներգործական նշանակում է «թռափել, бросать"). օրինակ Աշտարակում՝ հողը թռափեց վրին, դեղձերը թռափել են տակը և այլն:

Անճողել վանեցոց մոտ նշանակում է «ողողել, полоскать», որի դիմաց արաբատյան բարբառը ունի ցօղել «կաթիոտ, թանատամանները ողողել»: Ագաբանում և Սիսիանում՝ անցօղ «խնոցին հարելուց հետո նրա մեջ լցրած ջուրը, որով ողողում են (Ամատ., էջ 40), համմտ. մշնցոց և մյուսների «ցօղվուցք, ցօղվանք» (=կաթիոտ անոթիների լվացած ողողած ջուրը):

Նման օրինակներ շատ կան (տե՛ս իմ «Հնէաբանական մի քանի նշանագրություններ հայկեղնում, Երևան, 1927, էջեր 4—8), բայց ինչպես տեսնում ենք այդ աճ- նախդիրի և նախաբայ ածանցի գործածությունը դադարել էր դեռ պրաբարի ժամանակաշրջանից, համեմատաբար սահլի հարատևելով ժողովրդական բարբառներում:

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՑԵՐ

Ունենք երկու տեսակ անկանոնություններ, մեկը, երբ ներկան և աորիստը պատկանում են նույն արմատին, իսկ մյուս տեսակը, երբ ներկան և աորիստը տարբեր արմատից են:

Առաջին տեսակից նշելի են—1) եղանիմ, աոր. եղէ (եղեր, եղեւ...) աորտ. եղէց, եղիցիս, եղիցի և այլն. 2) լինիմ, լինէի, լի-

նիցիմ... չանի առիսա (սահմ. եղ.) հրամ. լեր-լերուք, ստորադ. լիցիս, լիցի, լիցուք, լիջիք, լիցին (չանի I գ.). դերբ. լինալ, 3) գոմ (գոս, գոլ, գոմք, գոլք, գոն), անց. անկ. գոլը և գոլին. ստոր. Ներկայից միայն գուցէ, 4) առնիմ ջանում նման, առրիսա՝ արարբի, որը իր կրկնութեամբ նման է հուն. նուլնսրմատ ἀραρεῖν «կարգի դնել», հրամ. արա-արարէք, ստոր. առարից. արաացես, արաացէ և այլն, ուր ջաջ-ն ստացվել է նմանարանութեամբ. 5) դնիմ, որի դիմաց կան սանս. dádhāmi, հուն. τίθημι, իսկ առրիսաի եղ ձգրեց» =սանս. ádhāt. հրամ. դի՛ր (հոգն. դիք), ստորադ. առրիսա՝ եղից. դիցես և այլն, անց. դերբայը՝ եղեալ, 6) ասամ, որը ունի երկու բներ՝ սա- և ասու-, որոնցից առաջինը սերտում է հնդեվ. *dʒə- ձևից, իսկ երկրորդը՝ *do-ից (tam<də-le-=սլավ. datę „даю“) առրիսաը՝ նաու, նասուր, նա, տուաք. նասուք. նասուն, ուր նա (et) =սանս. ádāt. ստոր.՝ տաց, տացես, տացէ և այլն, ուր տաց< <*dŭskō, որից և մյուս ձևերը և ոչ թե իցեմ, իցես և այլն բարդութեամբ, ինչպես այլ դեպքերում. 7) լսեմ. ստոր. լուալ, հրամ. լուր-լուարուք, անց. գերբայ՝ լուեալ. Ներկա բանը (*լուս-եմ) եղել է *slus-em, ինչպես սլավ. слухать ‖ слышать, հնդեվրոպական k'lu- արմատից „s“ ածականով, որ հաճախ է նաև այլ հնդեվ. լեզուներում (սլավ... հնդիրանական), իսկ առրիսաի բանը (lu-) կորցրել է արմատի սկզբի „s“-ն (lu-<slu-). 8) հարկանիմ, ստոր. հարի, որի Ներկան ունի «կ» (>g) ածականը, այսինքն <*pr-g, ազգակից լիտ. peru, pērt. սանս. Parj-ányaḥ (ամպրոպի աստված էր), հին սլավ. Перун (նոյն աստվածն է), լիտ. Perkūnas ունենք և հարում (ստոր. հարի) և զարկանեմ (ստոր. զարկի) նույն արմատ ձևերը: Տանիմ բայի կատարյալը սարել ստացված է համարվում միանգամայն հին tarn- արմատից ունենալով համապատասխան tan և tar- տեսակները նաև վրացերենում նույն իմաստով:

Երկրորդ տեսակի անկանոն բայերը լինում են պակասավոր նրանով, որ Ներկայի և անցյալի (առրիսաի) ձևերը կազմված են լինում տարբեր բայարմատներից: Իմ կարծիքով գրանք տարբեր ցեղային լեզուների Ներդրումն են ընդհանուր էթնիկական լեզվում, ուր այդ համանիշները կամ ավելի շուտ նույնանիշները օգտագործվում են տարբեր ժամանակների (Ներկա և առրիսաի) քեմատիկ կազմութիւնների համար: Հունարենում, ինչպես և. Մեկն է նշանակում, կարող են լինել մինչև անգամ երեք տարբեր բայարմատներ (resp. արմատներ) մի բայիմաստի համար, ինչպես օրինակ, ձգը-

նայ» բայի համար կան աոտիկական ἔρχομαι (ներկան), ἦλθ- (ապառնին) և ἐλήλυθα (արիստս), կամ «տեսնել» բայի համար՝ ὁράω (ներկան), ὄψομαι (ապառնին) և εἶδον (արիստս)։ Հայերենում նման դեպքեր չկնում են. միայն երկու տարբեր բայարմատների կցումով, որոնցից մեկը ծառայում է ներկային, իսկ երկրորդը՝ արիստից առնդծվող ձևերի համար։

Ուտեմ բայարմատը (ատ- ut-) կազմում է ներկայի և նրանցից սերված քերականական ձևերը և ազգակից է ատեն. ádmi, լատ. edō, հուն. ἔδομαι և մյուսներին. «ուտ» սկզբնական ձայնավորը եղել է հնում *o, որը կա և հունական կրկնավոր գոլական ἔδωδή «կերակուր, մնունդ» բառի մեջ։ Եվ ինչպես ատենկրիտներնը և հունարենը արիստում օգտագործում են մի այլ արմատ — ատես. ágh-ah «կերայ», հուն. ἄχαρε (նուլյը) -այդպես և հայերենը ունի կերայ, որ ազգակից է ատես. gīráti «կուլ է տալիս», հին սլավ. Žĕzetŭ „жрет", լատ. vorō «կլանում եմ» և այլն։ Արիստի 3-րդ դեմքի եկեր և հրամայական կեր ձևերը ներդործականի պարադիգմային են հակառակ կերայ առաջին դեմքի կրավորական կազմությանը, որից կազմված ճիշտ կերպով ատորադատական կերայց, բայց կերիցեա, կերիցէ և այլն։

Ըմպեմ «խմում եմ» իր ըմպ-əmp-(<ump ից) ձևով անմիջապես չի կապվում ատես. pĭbati, լատ. bibō. հին իռլ. ibim «խմում եմ» բայերի հետ, իսկ արիստում ունի այլ արմատ արրի, որը ազգակից է լատ. sorbeō, լիտ. srebiù, surbiù «ծծում եմ», հուն. ῥόφεω «կլանում եմ, ներս եմ ծծում» արմատների հետ։

Գամ ունի ներկայի բնի համար գա-ga-, որը զարդացումն է հնդեվ. *wā-արմատի և այդ ձևով առկա է նաև խեթերենում (we-‖ wa-c'omē, տես F. Sturtevant, II ed., 1936, Philadelphia, էջեր 174, 180)։ Իսկ եթե ընդունենք նաև dh բաղաձայնի ավելացումը (աճականը), որ շատ կատածելի է, ապա կունենանք նաև լատ. vādō, հին անգլ. wadan. հին վերին գերմ. watan «գնալ» (շրով)։ Իսկ հայերենի անցյալի (արիստսի) բուրը կազմվում է եկ-(ek-) ձևից (եկի, եկիր, եկն...), որը իր e աճականով (առդմնատով) և արմատով ու ձևով նման է ատես. ágām, դորիական ἤβᾱν, աոտիկական ἤβην։ Գրաբարում այս e առդմնատի ավելանալը առաջին դեմքում առաջացել է միաձանկափթյունից խուսափելու պատճառով, ինչպես՝ նաև «ավելցի» և եկի «գրեցի»։ Հայոց եկ-ի ձևի արմատն է հնդեվ. *gʷā-, որը պետք է տեսնել հրամայական եկա-յք ձևի մեջ։ Իսկ երրորդ դեմքի բացատրիկ եկն արիստական այս ձևը պատկանում է իր արմատով (e-kn) նույն այդ gʷā-արմատին, որը առացել է անգլերեն հավելացում

(*g^{w}en-, *g^{w}em-), *ինչպես անանում ենք, վերջավորյան (սանս.)* ágan *«հասել», գոթ.* giman *«գալ», լատ.* venio *«գալիս եմ» և այլ նախալատցիերենների մեջ: Մատրաստականի հիմից, հիմացնս նրն իր ընդհանրացած առումներով և -ag (<gg) ցոլական տորիսան անասկով անշուշտ եղել է համանատանութիմբ (անալոգիայով):*

Երթամ *«գնում եմ» բայարանից ունենք* երթալ, երթամ, երթայի, երթայցեմ, *ինչպես նաև հրամ.* երթ, *ատորդ.* երթայց *(երթիցես...) և անց. դերբայ* երթեալ: *Իսկ սահմանական ատրիսատ կազմվում է չոդ—արմատից (չոդալ, չոդար...), որը կազմված է հին* čow-լաչնացած առումանից (=*k^{w}yow-?), *ունենալով նաև չու (ču) ատորին առումանը, համեմատել -սանս.* čyuti *«հեռացում», čyávatē «հեռանում է» գաթատվեստայում* šavaitē (id), *հին պարսկ.* ašiyavam *«մեկնեցի, գնացի», նոր պարս.* šavam *«գնում եմ, դառնում եմ», հուն.* σεύω *«հետապնդում եմ»: Հայոց* երթ *արմատը ազգակցում են հուն. ἐρχομαι նույնիմաստ բայի հետ, որտեղ ընդհանուր արմատն է համարվում* er-, *իսկ հայոց «թ» և հուն. χ բաղաձայնները՝ ավելացումներ: Հայոց* եր-թ-ա-լ *կազմությունը իրը թե արտացոլում է հնդեվր.* *ser-the/o- *ձևը (տես* M. S. L., XXIII, 249—259): *Ըստ իս, հայոց* ert'*-արմատը ավելի շատ տեղական ոչ հնդեվրոպական արմատ է, որը տեղաբաշխվում է ակկադական* retu *«քայլել» բայի հետ:*

Ուգիմ *«վերցնում եմ, ունեմ» տորիսատում փոխաբինվում է* կալայ *(հրամ.* կալ*) բայի հետ, որի ծագումը ըստ ն. Մառի ոչ հնդեվրոպական է, կապված* kal *«ձեռք» («բռնել») արմատի հետ (համմ. վրաց* kxeli>xeli *«ձեռք»), որը կա նաև կարկառուլ «ձեռք մեկնել» kar-արմատաձևի մեջ:*

Գոգ *«սառ» կազմված է մի բայի անցյալ կատարյալի (առրիսատի) բնից, որից ունենք նաև տատրաստականի՝* գոգցես, գոգցի, գոգցուք, գոգջիք, գոգցեն *և հրամայականի* գոգջիր *ձևերը, որպես ՁԱցատրդ տորիսատի ձևերից: Այս գոդ- «սառել» արմատը երևի չի ունեցել ներկալի բունը և նրանից սերված ձևերը, կամ, գուցե, չի մնացել: Համենայն դեպս դիտված է, որ «սառել» նշանակութիմբ բալերը ամենից շատ են միմնուն լեզվում իրենց տարբեր արմատներով, ինչպես, օրինակ, հունարեն λέγω, ἐρῶ, εἶπον: Հայոց* gog- *արմատը հնդեվրոպական ընդհանուր* *weg^{w}h- *արմատից է, որին պատկանում են նաև լատ.* voveo *«ուխտում եմ», սանս.* vāghát-*«առաջնորդ, խնդրող», գաթա-ավեստ.* aogədā *«սառույց» հնդիրանական* *augh-*տարատեսակից* (<anegh-), *որոնց պիտի ավելացնել նաև խեթական* vek- *«խնդրել, աղաչել» և հայոց* ոգել, ա ո-ոգացնել *և փոխառյալ (իրանականից)* ուխտ *բառերը:*

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԲԱՌԱՊԱՇԱՐ

Հայերենում կան որոշ բառախմբակներ, որոնց բառամիջյան ադերսը բացահայտ է, թեպետ երբեմն ներքին կապական իմաստը կամ հարաբերությունը դժվար է սահմանվում։ Օրինակ ունենք սեր- իմ «սերունդ տալ», որին համարում են սեր («իւ» հոլովմամբ), սեռ, սերուեդ, սերուեն, որոնք ըստ Ա. Մեյեի չեն առեղծվել անմիջապես դասական հայերենում, այլ դրանից առաջ, կամ հնդեվրոպական լեզվական առաջին բաժանման շրջանում, կամ դրա և դասական դրաւոր հայերենի միջև ընկած մի որևէ մոմենտում։ Արմատը ser- կապակցվում է լատ. creāre «առեղծել» բայի հետ։ Այդ առնակիտը կարելի է պաշտպանել նման կազմություններով և նման հնդեվրոպական ծագում ունեցող այլ իմբակային բառերով, ինչպես բերիմ, բեր («իւ» հոլովմամբ) «բերելը», բեր («ոս» հոլ.) «բերք», բեռ „нога", բերրի «արդավանդ», -ւոր ածանցը («բերող, կրող») կամ ջեր «առաքություն», ջեռնում (ջեռալ), ջերմ, ջերմն և այլն։

Հնդեվրոպական բառարմատների քանակը հայերենում Ա. Մեյեն չի անցկացնում չորս հարյուրից, հակառակ Հ. Աճառյանի, որ հաստնում է 713 «մաքուր» արմատների, առանց «առարատնակների», իսկ Հյուբշմանի մոտ կա մինչև 300 արմատ։ Ճշմարտությունը անշուշտ երեք-չորս հարյուրների միջումն է, որի մասին մենք կխոսենք իր տեղում։ Հ. Աճառյանի «Արմատական բառարանը» իր վերջին հատորով լույս է տեսել մինչև Ա. Մեյեի Esquisse-ն, մի տարով շուտ (տես Esq. էջ 18), սակայն ֆրանսիացի նշանավոր լեզվաբանը Հ. Աճառյանի այդ 713 (կամ 900-ից

ավելի «տարատեսակներով») ուղղած թիվը չի ընդունել նա առում է. «Հայերեն բառերի իմաստների (ինչպես վերևում տեսանք) թիվը, որ կարելի է ծագումով հնդեվրոպական համարել, չի հասնում չորս հարյուրյակի (ne va pas á quatre centaines)»: Այդ բառերը իհարկե բոլոր հնդեվրոպական լեզուներում չեն պահվում, այլ մեկ կամ մի քանի լեզուներում կամ լեզվախմբերում:

Այդ տեսակետից կարելի է նշել օրինակ «աղ» (соль) և «տարաբ» բառերի ներկայությունը հայերենում, բալթիկ-սլավոներենում, գերմաներենում, հունարենում, լատիներենում, բայց ոչ հնդիրանական լեզուներում: Միևս կողմից, այն արմատները, որ կան Եվրոպայի հյուսիսային և արևմտյան լեզուներում, բացակայում են հունարենում և հայերենում, ինչպես sē- «ցանել» և «հատիկ» նշանակող արմատները (լատ. grānum, գոթ. kaurn, հին սլավ. zrŭno „зерно"): Երբևիցե հայերեն արմատը գտնվում է ազգակից մեկ կամ երկու լեզուներում: Օրինակ արեւ=սանս. ravih, երգ=սանս. ârka- իճՀ (леопард)=սանս. simhah, հայոց այրեմ=ավեստ. ātar «կրակ», գլուխ=լիտ. galvá, սլավ. глава, մաձաձիմ=հին սլավ. marati „мазать", ձուկն=հուն. ιχθύς, լիտ. žuvis:

Հատկապես պիտի նշել բազմաթիվ և ստույգ կապակցությունները հունարենի և հայերենի միջև, որոնց մասին մասամբ խոսել է Հոլգեր Պեդերսենը: Հայտնի են բառերի հնաձայլ ստուգաբանությունները միայն այդ երկու լեզուների միջև,— այծ=հուն. αἴξ, աղամ=հուն. ἀλέω (ալիւր=ἄλεορον, աղտւրի=ἀλέτριος), արդ «այժմ»=հուն. ἄρτι, աղրիւր=հուն. φρέαρ, անուրջ=«հերագանդ»=հուն. ὄνειρον, աւր=հուն. ἦμαρ, «արար + «արեց»=հուն. ἄραρε, ուրանամ=հուն. ἀρνέομαι, եփեմ=հուն. ἕψω, երեւիմ=հուն. πρέπω, դալար=հուն. θαλερός, կամուրջ=հուն. γέφῦρα, որոնց մեջ -*ūr-yā-ն ընդհանուր մասնիկը, բայց մ և հուն. φ արտասովոր հարաբերությամբ (կամուրջ բառը կա և Դաղստանի լեզուներում, ինչպես նշել է Ն. Մառը, իսկ ևս կապակցում եմ kamar փոքրասիական և խառիտական բառի հետ), ծաղր=հուն. γέλως, ձիւն=հուն. χιών, սին «դատարկ»=հուն. κενος, κενεός, սիւն=հուն. κίων, սուտ=հուն. ψεῦδος, ճերմուկ (-ըևան, -րիւնի) «հնչուն, շիլո"=հուն.. περόνη և այլն: Պետք է ընդգծել, սակայն, որ շատ ստուգաբանություններ էլ կասկածելի կամ միանգամայն սխալ են: Այդ կարգին են պատկանում հայոց ասր=հուն. πόκος, թեպետ իմաստով նմանն են, բայց հնչյունաբանորեն կարող են ազգակցվել եթե ծագած լինեն «նախալեզվից», այնինչ խեթերենում կա asar-as «ասր» բառը,

որն անմիջապես աղբյուրն է հայերենի, նմանապես երաստացք «նաստիկ, բաղդ»=հուն. πρακτός կասկածելի է, իսկ երկար բառի -ար մասը ածանց է, քանի որ կա երկայն, և չի կարելի երկու բառի բացառիկ հնչյունական փոխոխության հիման վրա (*duo-ից) հանել հնդեվրոպական և կապել հուն. δ(ϝ)ᾰρόν բառի հետ։ Հայոց դամբան (=դամբարան) «գերեզման» բառը կապակցում են հուն. τάφος «գերեզման», τάρρος «հոր» բառաձևերի հետ, որը առաջարկել է Liden-ը (Arm. Stud., 42—43), ընդունվել է Boisacq-ի կողմից, բայց առարկվել է Ա. Մեյեի կողմից (MSL, XVI, 218) և մանավանդ Ն. Մառի կողմից, որը դամբարան հասկանում է «ոսկորների տեղ, ոսկրարան», որպես փոխառություն սիրիական ţamma «ոսկոր» բառից։ Հնագույն բառերից, որոնց պարզ խոլ պալթիականը բառասկզբում, ձայնավորից առաջ, դառնար հետագայում ձայնով պարզ պալթիական, մեզ հայտնի է միայն դու դերանունը։

Հայերենը և հունարենը ունենում են նախադիր («պրոթեմեմիկ») ձայնավոր ոչ միայն ր (r) ձայնորդից առաջ, որ նկատվում է ոչ հնդեվրոպական լեզուներում, այլև այլ բաղաձայններից առաջ։ Այսպես— ակուն=հուն. ὄνομα, այր=հուն. ἀνήρ, ասող=հուն. ἀστήρ աստամն=հուն. ὀδών, իմ=հուն. ἐμέ, իննն=հուն. ἐννέα և այլն, թեպետ այժմ աստղ և հուն. ἀστήε բառերին իրենց նախադիր a ձայնավորով պիտի ավելացնել նաև խեթ. astir-as (տես Sturtevant բառարանում, II հրատ., էջ 31)։

Կարելի է ընդգծել նաև հայոց կաճայ-ը և հուն. γυναι- նույնանիշ բառերի նման կազմությունը, ինչպես և հնդեվ.— *bhi գործիական հոլովաձևի գործածումը միայն ազակիում թե հայերենում և թե հունարենում։ Համեմատել նաև մարու «խորթ մայր» և հուն. μήτρυια նման հօրու(‖ յօրայ), «խորթ հայր» և ուրջու «խորթ որդի» իրենց վերջին -ու (համար, փոխարեն, տեղը) ձևավորությամբ։ Երբեմն էլ հայերեն բառը քրիստոնեական գաղափարախոսության պատճառով ընդունել է հունարեն նույնանիշ բառի նոր իմաստը կամ առումը, ինչպես հայոց երկ «ավագ» բառը հետո նշանակել է նաև «քահանա» հունական πρεσβύτερος «ավագ» և «քահանա» իմաստների ազդեցությամբ։

Ա. Մեյեն, ընդգծելով, որ հին հնդեվրոպական բառերը հայոց բառապաշարի միայն մի փոքր մասն են կազմում (ne forment qu'une petite partie du vocabulaire arménien), շեշտում է նաև իրանական, հունական և սլուբիական փոխառյալ բառերի մուտքը հայերենում, ինչպես մասամբ և միջերկրյածովյան, սասուրական

(օրինակ՝ կնիք բառը), կովկասյան և այլ ազդեցություններ։ Վերջինիս համար հատկապես նշում է այսպիսի կարևոր բառերի մասը, ինչպիսին են ճարիւր թվականը և զորանչ ազգակցական բառերը, որոնք կովկասյան ծագում ունեն (Ն. Մառը ճարիւր բառը կապակցում էր սվաններեն äšir «հարյուր» բառի հետ)։

Վերջում (Esquisse, էջ 144) նա եզրափակում է նույն խոսքերով, ինչ արել է 1903 թ. այդ նույն գրքի առաջին հրատարակության մեջ։

«Հայերենը, թեպետ վկայված է հարաբերականորեն մի ցած թվարկության մեջ, պահում է սակայն հնդեվրոպական բնութագրական հատկանիշների մի թիվ՝ հոլովների պաշտոնը, *n դոյականական թեմանների բնբռում օրինակ, որոնք ակներև արխաիզմ են»։

«Բայց, ընդհանրապես, հայերենի հնչյունական և ձևաբանական համակարգը խորապես տարբեր է նույնից հնդեվրոպականում, արտասանության ընդ նոր տևող, քերականական ձևերը առաջ են բերացել օրիգինալ ձևով, և այն մոմենտին, երբ հայերենը ֆիքսացիայի է ենթարկվել գրի միջոցով (V դար), վերակազմությամբ (réfection) այնքան է առաջ դնացել, որ անկանոնությունների մեծ մասը չքացել է և քերականությունը հասել է կանոնավորության մի բարձր աստիճանի»։

ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՏՆԵՐԸ

Մենք իր տեղում արդեն ընդգծել ենք, որ հնդեվրոպական կոչված լեզուները ունեն իրենց խմբավորումներում մոտ ազգակցություն, երբեմն էլ այդ խմբերի միջև, բայց և որոշ օդակներում և միավորներում ցուցաբերում են շատ հետաքրքիր մերձեցում և արտաֆորմացիա, որ այդքան հատուկ է օրինակ հայերենին։ Պետք է ընդգծել նաև, որ որոշ քննադատական մոտեցում է հայտնաբերվում նաև հնդեվրոպական «նախամայր» լեզվի (=«նախալեզվի») նկատմամբ իր սխեմատիկ միաձույլ ըմբռնմամբ, ինչպես նաև նախահայրենիքի և տեղադրության (դիսլոկացիայի) նկատմամբ, նման հետագա միտքացիաների հետևանքով եղած դրությամբ։ Այդպես թվացող եզրակացություն են գալիս և «նախալեզվի» արմատների արհեստական և չափազանցրած քանակի (2223) մասին։

Ժխտելով ցեղերի ազգակցությունը, նրանց խմբավորումների բաժան-բաժան լինելը և միգրացիան, նրանց հետագա նորանոր միացումները այլևայլ և այլալեզու ցեղերի հետ, որպես խաչավորում, մենք պետք է նշենք հատկապես, որ այդ տոհմա-ցեղային բարդ հասարակական դիֆերենցիացիաների և ինտեգրացիաների ժամանակ են ստեղծվում նոր որակի լեզուներ, որ ազգակցությունը ստեղծվում է նաև հետագայում միացման և խաչավորման ընթացքում այդ ցեղային հասարակությունների մեջ և ոչ միայն նախնամայր լեզվի բաժանման հետևանքով։ Այստեղ է, որ պետք է գտնել ավելի լեզուն կրողների հնագույն պատմությունը, էթնոլեզական ձևավորման հիմնական բովանդակությունը։

Մասնավորապես այդ պիտի ընդգծել հայ ժողովրդի և նրա զավակ՝ հայ լեզվի նկատմամբ, որ այդչափ բարդ են իրենց Հայաստանի և Փոքր Ասիայի (Հայասայի) պատմական կուլտուրական և էթնոլեզական պատմություններում։ Հայերենի ձևակերպված պատմական կացությունը (V դարից) լեզվագիտությանն ընդունված չափանիշների տեսակետից մեզ թույլ է տալիս հորջորջել «հնդեվրոպականացրած»։ Բայց ինչպես ցույց տվեց Ա. Մեյեի Esquisse-ի քննությունը, այստեղ շատ բան ոչ միայն թվացող (кажущийся) բնույթ է կրում, որ երբեմն ընդգծում է և հնդեվրոպական, այլև նաև կանխ նաև նախապատմական, որովհետև հայերենի հարուստ դանձը (դրարարում և բարբառներում) իր ուսումնասիրության մեջ դեռ շատ հետու է վերջացած լինելուց, իսկ շատ և շատ աղբյուրագիտական աղբակացությունները կարող են միայն սպասված համարել այդ ուսումնասիրությունը։ Ժխտելով հայերենի բացահայտ և ուժեղ այն կոմպոնենտը, որ իրավամբ գալիս է հնդեվրոպական «մայր» լեզվի ցեղատիպական կառուցվածքից, որ այդքան ակներև է, մանավանդ patronomica-ի և համրանքի (թվականների) մեջ, թեպետ այստեղ ևս կան և այլատարբեր, մենք այս դիտում կբերենք այլաբանական կարգով նախ այն հնդեվրոպական հայ բառարմատները, որոնք կան Հյուբշմանի Armenische Grammatik— գրքում, ինչպես նաև Մեյեի Esquisse-ում (նշված են վերևում)։ Հյուբշմանի մոտ հավաքված են 428 բառարմատներ (իրեն և ուրիշների կողմից մատնանշվածները), սակայն հեղինակը ենթարկում է դրանք ուժեղ և խիստ քննադատության, համարելով հնդեվրոպական մոտ երեք հարյուրը։ Մեյեն դրանց թիվը համարում է, հետագա հետազոտությունների հետևանքով (մինչև 1936) չորս հարյուրից պակաս։ Իսկ Հր. Աճառյանը իր «Արմատական բառարանում» (յոթ

հատոր) և «Հայոց լեզվի պատմության» մեջ (Երևան, հատոր 1, էջեր 34—80) այդ արմատների թիվը հասցնում է 713-ի, որը իմ կարծիքով արհեստական է և չի համապատասխանում իրականությանը:

Ճշմարտությունը անշուշտ երևք-չորս հարյուրյակի միջն է, և պիտի ասեմ, որ Հյուբշմանի խիստ զգույշ և բազմանկատ մեթոդը այստեղ բացակայում է, իսկ սուբյեկտիվ, ոչ պատմական և անդենդրոգ նկրտումները սմենևին կերպ արհեստականորեն ավելացնել այդ թիվը (երկրորդական «ածանցյալ» արմատներով հասցրնելով մինչև իսկ 910 թվի) հեռու է գիտական ճշմարտությունից: Մինչև իսկ Ա. Մեյեի մոտ նկատելի է որոշ թևքն մեխանիկական մոտեցում, որը հոգիով թև արդարանա, ի նկատի ունենալով, որ հայերենի լեքսիկայի սավարագույն մասերը մեր լեզվի գենդրիի տեսակետից մեզ հայտնի չեն, իսկ դրանք բոլորը դարձնել փոխառյալ՝ կլիներ հակապատմական և անճիշտ: Փոխառությունները արդեն երևան են հանված ըստ մեծի մասին: Հենց միայն նա կմատնանշեի, թե ինչքան մեծ կորեկտիվ մացրեց մինչև այժմյան մեր եղած դիտելիքների և մեթոդական վերլուծությունների մեջ խեթական նորահայտ լեզուն իր սեփական և փոխառյալ (որ նշվում է գրությամբ) բառերով. Թողած դեռ Հայասայի ցեղատիրական պետականության առկայության փաստը: Իսկ որքան լեզվական նման ակունքներ և կոմպոնենտներ կան, որ մտած են մեր լեզվի մեջ և մեզ անհայտ են: Միայն գրաբարից մեզ հայտնի են մոտ վեց հազար չտուգաբանված բառեր և արմատներ, Թողած դեռ բարբառների ոչ պակաս նման արմատները:

Քննենք այստեղ հնդեվրոպական արմատները, որոնք Հյուբշմանը համարում էր քիչ թե շատ հավաստի, թվով 298, թեպետ նա անտարակույս է իր գրքում 428 առաջարկած «հնդեվրոպական» բառեր: Հետո առանձին կքննվեն Հ. Աճառյանի մոտ բերված մաքսիմալ քանակի առաջարկությունները, որոնք մոտավոր հայտնի են եղել և առաջ:

1. Ագանիմ (արտ. ագալ) «հագնել», առ-ագ-աստ «զարդարուլր»=ավեստ. aoθra «ոտնամաև», լիտ. av-iû «կոշիկ եմ կրում», սլավ. об-у-ть «կոշիկ հագնել» (об-у-вь «ոտնամաև»), լատ. ind--u-o «հագնում եմ», ex-u-o «հագածը հանում եմ» և այլն: Bugge-ն միացնում է նաև աւգ. (ի, ո) «կոշիկ»: Հնդեվրոպական նախաձևն է *ov-

2. Ալի(ք) *երկու նշանակութ[յամբ]— 1) ալիք* волна, *որից ալեկոծել, ալեակ «փոքր ալիք», ալիասաստ... 2) ալիտակ մորուք, ալիտակ մազ, որից՝ ալեւոր: Սովորաբար այդ բառը անեղական է (ալ-ոյ, ալեաց հոլովմամբ): Համեմատել հուն. poliós «ճեր»* (weissgrau greis) *թե մազերի և թե ժայռերին բախվող ծովի մասին.* hai poliai *«ճերմակ մազեր»:* Brugge-ի *այս համեմատութ[յանն] ավելացնում են նաև նաև.* palitá *«սպիտակ ալիք» (ըստ Աճառյանի, Արմ. բառ. I, էջ 51), «ծերուկ»* („greis, latersgrau" *ըստ* Hubschmann-*ի,* Arm. Gr., *էջ 412), քրդերեն* pēl *«կոհակ», պարսկ. պահլևի* pīr *«ծերուկ»: Հնագույն ընդհանուր ձևը հունարենի և հայոց բառերի համար՝* *polio—:

3. Ածիմ *(ածի) «բերել», բայց տասից ավելի նրբիմաստներով՝ փոխադրել, շարժել, վերածել, պատել, լցնել— կաթեցնել (շուրը), խրել (ապատակ, սուր), կտրել մազերը (ածելի* „бритва"*), բուսցնել (ածք «բերուկ ճյուղ», ածու «մարդ»), նվագածել, ձու ածել (համմտ. ռուս.* нести *«առանել» և «ձու ածել») և այլն, ինչպես և ածանցական ձևերով՝ ածանցիմ, յածեմ «թափառել,* бродить", *ածոդել «բռնել առանել» և այլն: Համեմատել՝ սանս.* ájāmi, *ավեստ.* azāmi *«առնում եմ, շարժում եմ», հուն.* ἄγω *«առնում եմ», լատ.* agō *և այլն: Պատահական չէ արդյոք, որ ուրարտերենում* ag-ubi *նշանակում է «առատ (яувал)», օրինակ՝ գերիներ* (Biainddi *«Վ.ան, դեպի Վ.ան), «անցկացրի»* (я провел), *օրինակ, շրանցք* (pili):

4. Ակն *(ական, ակամբ) «աչք,* глаз", *հոգն.* աչ-ք *(աչաց, աչաւք)=սլավ.* око, *երկակի՝* oči, *ռուս.* око, очи, *լիտ.* okis, *լատ.* oculus, *հուն.* ὄμμα *(—*οπ-μα*) «աչք», համեմ. ἄπα «երես, դեմք» հետապա ὤφ «աչք» և այլն: Հնդեվրոպականում եզակի ուղղականը եղել է *ôkī, սեռ.* *oknós, *ուղղ. երկակի* *okī *(ըստ* Yoh. Schmidt-*ի): Հայոց* աչ-ք*=հնդեվ. երկ.* *okī*—սլավ.* oči *(համմտ. հուն.* ὄσσε*=*okye*—*okie*): Հայոց* ակն *բառը մտնում է բազմաթիվ դարձվածքների մեջ, մեր ալիմյան բարբառների նման, և ունի այլ լեզուների նման նաև փոխաբերական առումներ՝ աղբյուր (լատ.* coput fon is), *ճյուղի ակնուռը (ռուս.* почка), *թանկագին քար, ծակ կամ փոս (ակն ոսկանի, տապարի), անիվ (բարբառներում) և այլն: Ինչպես հուն.* ὀπή *«բացվածք, ծակ», լիտ.* ākas *«բացվածք սառույցի մեջ», սլավոն.* okno *«լուսամուտ», կամ արաբ.* a'in *(հըրեակ.* ayin*) «աչք» և «աղբյուր» և նմաններըը:*

5. Աղ *(ի հոլ.) «աղ,* соль", աղի *բայց աճալի, որը դառնում է բարբառներում՝ անալի (շրջմամբ>անլի>ալլի): Ունենք և* աղի

*«կծու» փոխարինաբար (աղի ողբ, աղի աղբմ), աղու «համով», աղուր լավ. աղկի (<աղու-ական)՝ նման արաբ. molih «աղի» և «գեղեցիկ»։ Կա և աղա «աղ, աղի հանք» (ծով աղուից քաղաքի աղուից, հովիվ աղուից..., աղաք կողմայ, մեր աղուց կէան — ասես վիմ., արձ. 1235 թվի, բայ աղուից և այլն, տես Աբմ. բառ. I, էջ 162), ինչպես նաև՝ աղաղուին, աղաղաուակ «աղի, լեղի»։ Կա և հնչյունափոխված աղծ «աղ» միայն «աղծեալ» բայաձևի մնջ «աղած, աղը դրած»։ Համեմատիլ՝ հուն. ἅλς, լատ. sal, սլավ. soli „соль", գոթ. salt (որից և saltan „salzen"), հին իռլանդ. salann, կրամբր. halan. «աղ», հնդեվ. թևքամբ եղել է՝ ողղ. եզ. *sâld. անս. եզ. *salnês (բատ. Y. Schmidt-ի), հայոց ազա՝ alt «աղ»=գոթ. salt (գերմ. salz), լատ. sāl— (sallo «աղի եմ դարձնում»), հնդեվ. *sald-ից։ Տես Arm. Gr. 414, Աբմ. բառ., 105—111, 152, 162)։*

*6. Աղ-ամ «աղում եմ, мелю", «մանրում եմ», «որճում եմ», աղօրի «ջրաղացք», աղօն (>աղուն) «աղաւիքը»—հուն. ἀλέω «աղում եմ», ἀλέτης «երկանդ», ἀλετών «ջրաղացք», ἄλευρον «ալյուր», պարսկ. ard «ալյուր», պհլ. ār-tan «աղալ»։ Հայոց ալեր (անս. ալեր) փոխառյալ չի հունարեն ἄλευρον բառից, այլ ունի արմատ ալ (‖ -աղ-) տարբերակը նման «աղ» և «անադի» տարբերակներին, իսկ աղաւրի բառը ըստ Hübschmann-ի առացվել է *alatrio-ից և համեմատ է հուն. ἀλέτριος, ունենալով -*awr (<-*atr) ածանցը ինչպես ար-աւր (արօր) բառը=լատ. aratrum, հուն. ἄροτρον նուխնանիշ բառերում (համմ. նաև *-աւղ ածանցը ծնաւղ և նմաններում=խեթ. -atall., սլավ. -а-тель)։*

*7. Աղբեւր, աղբիւր (անս. աղբեր) «աղբյուր, источник"= հուն. φρέαρ<*φρεϝαρ «ջրհոր»։ Հայոց ձևը առացվել է հնդեվ. bhrevr (անս. *bhrevros) նախաձևից, իսկ հունականը՝ *bhrēvr (անս. *bhrēṇtos) ձևից։ Եւ>իւ երկձայնի փոփոխության և դրության համար ունենք նաև առիւծ>առիւծ, հեւս>հիւս, բեւեր>բիւր, հեղ>իւղ և այլն։*

8. Աղուէս (անս. աղուեսու) «աղվես», лиса" =հուն. ἀλώπηξ (անս. ἀλώπηκος), սանս. lōpāçà- «շակալ, աղվես», պհլ. rōpās, պարսկ. rōbāh «աղվես» և այլն։

9. Ամ (ի-ա) «տարի»=սանս. sámā «կես տարի, տարվա ժամանակ, տարի», ավեստ. hama- «ամառ», հին իռլ. sam «ամառ», կիմր. ham և գալլ. háf «ամառ» և այլն։

10. Ամառն (անս. ամառան կամ ամարան), ամարալին, ամա-

բարեխ „летом“ պատկանում է նաև հնդեվ. sam- «ամառ, տարի» արմատին, որից ունենք և „r“ ածանցով վերին հին դևրմ. sumar, գերմ. sommer «ամառ», ինչպես հարևրենում կա և ձմեռն նման կազմութիւնը։ Համմտ. ամառն (անո. ամարան) և ավեստ. hам- (անո. hamō) «ամառանոց, ինչպես՝ ձմեռն (անո. ձմերան) և ավեստ. zim (անո. zimō) ձմեռ»։

11. Ամրողջ=ամբ-ողջ (ըստ Միքեի), ուր ամբ-=հուն. ἀμφί երկու կողմից, լատ. ambi-(ambiegnus), amb- (ambire, ambages). հին իռլ. imb, imm-, imme-, հրպ. umbi, հին իռլ. umb, դևրմ. um «շուրջը»։ Հայոց ամբ- (amb-) մասնիկը, որը թերևս կա և ըմբռնում բառի մեջ, ծագում է ṃbho>ambho «երկուսն էլ, օба“ =հուն. ἄμφω, լատ. ambō. լիտ. abù, սլավ. oba („оба“), սանս. ubhá, թոխար. āmpi և այլն։

12. Ամեն, ամենայն (ի հոլ.) իրենց amen-a- մասով=հուն. ἀμο- «միասին», գոթ. sums, հին ս. դևրմ. sum, հին իռլ. sumr «ոմն», սանս. sama- «մեկը, միևնույն մի», ավեստ. և հին պարս. ha-ma- «ըստ բաղադրչության, միևնույն մի», բոլորը հնդեվ. *sṃmo-ից։

13. Ամիս (-ոյ, -ոց, -հան)=սանս. mās— «լուսին, ամիս», պարսկ. māh, հուն. μήν, լատ. mēnsis «ամիս», գոթ. mēna „mond“, սլավ. měseci, կիմր. mîs։ Հայոց ամիս բառի «ա» ձայնավորը նթե հին է, ապա արմատը եղել է *a-mēns—։

14. Ամպ կամ ամր (ո հոլ.)=սանս. nábhas «ամպ, երկինք, մթնոլորտ, ámbhas կամ ambhu «ջուր», հուն. νέφος, νυφ'ελη «ամպ», լատ. nebula «ամպ, մշուշ», հրպ. nebul, գերմ. Nebel, «մշուշ», սլավ. небо «երկինք» և այլն, որոնք առաջացել են nébh- արմատից, իսկ սրա կրճատ ձևից՝ ṇbhō կամ ṇbhó ունենք հայոց ամբ>ամպ (Arm. Gr., 417, Արմ. բառ. I, 234)։ Այդ հնդեվ. արմատից է նաև հայոց ամպրոպ «փոթորիկ», -ro- ածանցով, ինչպես նաև հուն. ὄμβρος «անձրև», լատ. imber «անձրև, ամպ», սանս. abhrá- «ամպ, փոթորիկ», ավեստ. awra- «ամպ», օսս. arw «երկինք», պարսկ. abr «ամպ», իռլ. imrim «փոթորիկ» և այլն (Արմ. բառ. I, 236)։ Իսկ այդ ամպրոպ բառի վերջին -պ բաղաձայնը համարվում է մասնիկ (ածանց)։ Այս ամպրոպ բառը (համմտ. Մ. Խորենացու «ամպրոպալին Արամազդ») չի հիշել Arm. Gr.։

14 ա. Այլ (ո հոլ., արևկ. այլում) «ուրիշ, другой“,=հուն. ἄλλος, կլասպ. αλλος, լատ. alius, գոթ. aljis, հին իռլ. aile, հնդեվ. *aljo- արմատաձևից։ Այլ— հայկական «փափուկ» ձևը ունի նաև աղ— տարբերակը, ինչպես՝ աղաւաղել>աղաւաղել. որ համընկնում

է այնայլել կազմութիյան հետ, ինչպես կան թոռլ—թոռ, փռլ—փռ, նշոլ—նշոդ, յոլլ—յոդալ, որը պիտի է հետքմանը (Yndog, Forsch., 19, տես նաև Աբմ. բառ., I, 125 և 230):

15. Այծ (ի հոլ.) և այծի (այծիկ, այծեաց) «այծ», «коза», այծեամմ (id.), այծենի «այծի մորթ» (համմտ. коза-кожа), այծեայ «այծի մազե» և այլն: Համմտ. հուն. αἴξ (սեռ. αἰγός), «այծ», αἴγειος «այծյա, այծենի», սանս. ajā «այծ», aji- «բուժ», ajna «մորթ», ասիս. izaēna կամ īzaena- «մաշկյա, կաշեզէն», պահլ. azak «այծ», լիտ. ožỹs «բուժ», ožká «այծ»: Միայն հայերենը և հնդաբերենը ունեն արմատը «j» կիսաձայնով (-մմ ածանցի համար այծի-ամմ>այծեամմ «газель» բառի մեջ ևս կհամեմատեի՝ սառն—սառնիք, հզեամմ<հզիամմ, կրիկ—ամմ):

16. Այտ «բեռը». այտնում (այտ-եալ) «ուղում եմ»=հուն. οἶδος «ուռուցք», οἰδάω «ուղում եմ», οἴδημα «այտուցք», հրգ. eiz «պալար»:

17. Այր «տղամարդ» (առն. արամբ)=ասիասա. arša «այր, արականց», հայց. aršinəm. սեռ. aršnō. սեռ. հոգ. aršnąm, հուն. ἄρσην, ἄρρην (սեռ. ἄρρενος), լակ. εἰρήν, իոն. ἔρσην (ἐρσήν) «արականց, այրուկ», սանս. ršabhā- «ցուլ» (Arm. Gr. 417): Հայոց առն=ասլ. aršnō=հնդեվր. *ṛsnós. Բուգգեն և Մեյեն այր բառը կապակցում են հուն. ἀνήρ «առն»=ἀν(ϝ)ερ-, որը հետքմանը չի ընդունում և այր (արր) ձևը այլ բնից է ծագած համարում:

18. Այր-եմ «այրում եմ», զայրանամ, զայրացնեմ և այլն առացվել են չգտնված *այր «կրակ» արմատից, որը հդել է *ater և համեմատվում է հիմնականորեն իրանական նախնարմատ բառերի հետ՝ ասիասա. ātar- (ուղղ. հ. ātaiš «կրակ») պահլ. ātur, պարս. ādar կամ ātaš, օսս. art' «այրվող կրակ, բոց» և այլն:

19. Այց (անհոլով) «ճանապարհ մեջ «այցելութիյուն, տրնտիյուն, քննութիյուն, խնամատարութիյուն» հնդեվ. *ais-sk'ha ձևից: Համեմատել՝ հրգ. eisca «հարցուփորձ» eiscōn «հարցնել, քննել, խուզարկել, անգ-աք āsce «քննութիյուն», անգլ. ask «հարցնել», սլավ. iskati «искать», սանս. icchati «փնտրում է, ցանկանում է», ավ. isaiti «փափագում է» և այլն (Arm. Gr., 418): Թևակոտ Հետքմանը հայց-ել բառը առանձին արմատից է համարում, սակայն Հ. Աճառյանը կցում է այս այց արմատին (Աբմ. բառ., I, 276):

20. Այն- ժխտական նախամասնիկը հնդեվ. n- մասնիկն է, որ ունեն սանս. ասիասա. և հին պարս. a- (բաղաձայնից առաջ), an- (ձայնավորից առաջ), հունարենը ἀ-, ἀν-, լատիներենը in-:

գերմ. un-։ Համմտ. սանս. án-āgas- «անմեղ» áĮ̄ātā=հուն. ἀγνός «անծանոթ», á-nāman-=հուն. ἀ-νώνυμος «անանուն», լատ. inermis «չզինված», infans «անխոս>խուլ, երեխա», գոթ. unkunþs «անհայտ» և այլն։ Հայերենում կա, ինչպես ես ցույց եմ տվել 1927 թ. («Հնէաբանական մի քանի հետաքրքիր հայերենում»), նաև մի այլ ան- նախամասնիկ «վրա, համար» իմաստով (անձնաց, անուանեալ, անբարի, անուռ և այլն), որը համապատասխան է հուն. ἀνά, գերմ. an և այլն, թեպետ կա և սեմիտաբանում (ակկադերենում), որն անշուշտ պատահական է։

21. -Անդ «շեմք» բառը, որ մտնում է դր-անդ կամ դր-անդի բարդության մեջ, ուր դր- կրճատվել է դուր- (դուռն, դրան) արմատից։ Ազգակից են սանս. ātā «դռան շրջանակը», ավեստ. aiθyā «դռան ցցերը կամ գերանները», լատ. antae «դռան երկու կողմի սյուները», հին իսլ. önd «նախասենյակ»։ Հայոց բառը հետք է նաև բարբառներում, օրինակ Բալահովիտում, ուր դրդնդի նշանակում է «դռան վերի շեմքը» (Արմ. բառ., I, 304)։

22. Անկ-անիմ (անկ-ալ) «ընկնում եմ, падаю"=գոթ. siggqan, հդգ. sinkan, գերմ. sinken, անգլ. sink «սուզվել, խորն իջնել», գոթ. sagqjan, հդգ. senchan «սուզել», լիտ. senkú, sėkti «ընկնել, ջրի խորն իջնել, ջուրը ցած բանալ»։ Հայոց ank կամ ang- արմատը զարգացել է հնդեվ. sṇg (sṇk) ձևից, թեպետ մյուս լեզուների օրինակները կարող են վկայել seng, senk-ʷ կամ sek-ʷ ձևերի մասին։ Հ. Աճառյանը իր Արմ. բառ.-ում (I, 336—340) հայոց անկանիմ կամ անգանիմ այս արմատի (ank-, ang-) հետ է կապում մի շարք բառահոդմոթլուններ, որոնք, ըստ իս, այլ արմատից պիտի լինեն, ինչպես՝ ցանկ «ճլուզերով և այլն հյուսված պատ» (ограда, изгородь), զանգանել «խառնել, շաղախել» (месить), զանգված, «բազադրություն, խմոր ձուլր, հալած, լանգչել կամ լանկչել «սիրով կապվել», անկանիմ (անկի, անկ) «հյուսել», լանգավորիլ «վերջանալ», անգանակ «վերջ», անգաւան «ծայր, դագաթ», անգուրգ «վերջ, կատարելություն», անկ է «պատշաճ է», ցանկ «միշտ» և այլն։

23. Անկիւն անկյուն, угол հնդեվ. ang- արմատից և -իւն ածանցով։ Համեմատել լատ. angulus «անկյուն, խորշ, ծայր», հին սլավ. ągŭlŭ=уголъ «անկյուն, խորշ»։ Հայերենում պատահում է նաև անգիւն գրությունը, քանի որ ն անգականից հետո խուլ և ձայնեղ պայթականները փոխանակվում են թեպետ ինգ=հնդեվ. *penkʷe։

24. Աճառի «նեղ, կիրճ, նեղ անցք» (тесныня), «կարատփափագ», աճակալի «կարոտալի, ցանկալի», աճկաճամ «կարոտելով փափագել», աճկնի կամ աճկալ «փափագել» և այլն։ Արմատն է *ang'hu-, որ ասիա են ասնս. aṅhú- «նեղութիւն», «նեղ», ավեստ. ązō «նեղութիւն, սրտի անձուկ», օս. ungag «նեղ», հուն. ἄγχω «խեղդել, նեղել, վշտացնել», լատ. ango «նեղմել, խեղդել», angor «սրտի անձուկ, սրտնեղութիւն», angustus «նեղ», գոթ. aggvus «նեղ», հին սլաւ. ąziti «նեղմել» (узить), ązūkŭ «նեղ», узкий, գերմ. eng «նեղ», Angst «սրտի անձուկ», Enge «կիրճ» և այլն։

25. Աճուճ (սեռ. անուան)=ասնս. nāma, ավեստ. nąma, հին պարս. nāma, հուն. ὄνυμα, լատ. nōmen, գոթ. namō, սլաւ. imę „имя" և այլն։ Հնդեւրոպական ընդհանրով, որ m հնչյունը կարող է վերածվել հայերենում v-ի, anun (սեռ. anvan) ձևը վեր է ածում *anuvan, իսկ սա էլ *anuman, որն արտացոլում է հնդեվր. *anōmn̥։

26. Աճուրջ (ճ» հոլ.) «երազանք=հուն. ὄναρ, ὄνειρος, ὄνειρον (հոդն. ὀνείρατα) տեսիլ, երազ»։ Հայերենի նախաձևն է *anēr—իսկ «ջ»-ն նոր է, ինչպես անձնք ատերջ, գաղջ, ողջ և այլ ածականներում։

27. Առ-ճե-մ (ապր. ար-ար-ի) «անում եմ»=հուն. ἀραρίσκω (ապր. ἄραρον) «հարմարեցնում եմ, կցկցում եմ, պատրաստում եմ» (Arm. Gr., 420)։ Ըստ Մեյեի պիտի կցել այս ar- արմատին նաև ավեստ. ərə nāvi «արարու» (=արվեց), āši (<*rti) «գործ» (Արմ. բառ, I, 321)։

28. Առճում (ապր. ար-ի) «վերցնում եմ, առնում եմ»=հուն. ἄρνυμαι (ապր. ἠρόμεν) «ստանում եմ, ձեռք եմ բերում, добываю, получаю" (Arm. Gr., 420)։

Ներներն arnu-mar բայի հետ կապակցելը (ըստ Մաոիկյանի ՀԱ. 1919, 32, տես Արմ. բառ., I, 482—483) սխալ է, քանի որ այդ arnu- բայը նշանակում է «շարժել, բերել, թաղել» ('move, bring, bury' տես Sturt. Hitt., Gr., 1936, էջ 28), իսկ ասնս. rnomi «առնեմ» չի բերվում Հյուբշմանի Arm - Gr.-ում։

29. Առու «առու, գետակ, ջրի ճամբա, անցք, փոս, երակ» գոյացել է հնդեվր. *sruḷós կամ *srufis ձևից sru- «հոսել» արմատից, ինչպես են ասնս. srávati «հոսում է», sruti- «հոսում», srótas- «հոսանք, գիւտ, ելք, երակ, բացվածք», հին պարսկ. rauta «գետ», հուն. ῥύτός «հոսուն», ῥοῦς «հոսում», գերմ. strom «հեղեղ, հոսանք», սլաւ. струя և այլն։ Այս *sru- արմատի *srow- բարձր աստիճանից անձնք՝ առնգ(ան)ել, առնգ(ան)ել «ջրել, ո-

ливать», որի այդ ստամբանը կա նաև հուն. ῥοFός «հնդնդում», լիտ. sravá «հոսանք», սլավ. о-стровъ «կղզի» և մյուսների մեջ։ Հայոց առոգ-ել (առոգ-ել) այնպես է հարաբերում առու ձևին, ինչպես չոգ-ալ (<*չով-ից) վերաբերում է չու ձևին։ Համեմատել w ǁ g տյանբնագիտալի անսակետից կով և կոզի «կարապ, արու և արիզ, աւ-ղ «ոսոնամանդ և ագաճիմ «հոդնում եմ»։ Հյուբշմանը S. Bugge-ի այս սաստգաբանության անսագահով (nicht sicher) է համարում, նրա չհաստատուի առու բառի «հոսելը» սկզբնական գաղափարից առաջանալը։ Վրաց ruvi «ջրանցք, առու» բառը ըստ Աճառյանի փոխառություն է հայերենից, ինչպես նման հին փոխառություն պիտի տեսնել phoni<հայոց հուն բառից, և հետևապես կարող է վկայել այդ հին իմաստը։

30. Ասեղն «ասեղ»=լատ. acus (նուկը), acuo «սրել», acies «ծայր, սայր» acer «սուր», հուն. ákiç «ծայրը, ἄκρος, ἄκρον ծայր, սանս. áçri— «սուր ծայր, անկյուն» լիտ. asztrús հին սլավ. ostrŭ „острый", լատ. ass «սուր» և այլն։ Հայերենի նախնական ձևն է հնդևրդ. *asĺn<*ak'lōn կամ *ak'lŋ։

31. Աստղ (սեռ. աստեղ) «աստղ, звезда»=հուն. ἀστήρ (id.), ἄστρον «համաստեղություն», սանս. star-, ավեստ. star-. լատ. stella, գոթ. stairnō, գերմ. stern և այլն, որոնց այժմ պիտի միացնել և խեթ. astiras։ Հայերենը, հունարենը և խեթերենը ունեն նախդիր a ձայնավորը, մյուսների նախաստիճն է əstĕr, սեռ. stros (Arm. Gr., 421)։

32. Ա ր (սեռ. առու, արոյ) «յուրդ, գեղձ», առուեայ, առուի, առուեղ «բրդի» իրենց asu- բնույ ծագած են հնդևրդ. *pºk'u-ից, համեմատել հունարեն πεχος «կտրված բուրդ», արմ. пехоς «գեղմ», πήχω «մազը սանտրել, բուրդ խուզել», լատ. pexus «բրդոտ» pecus (pecoris) «արջառ, պաճար, պախրա», pecūnia «դրամ» հրդ. fahs «մազ» fihu «արջառ», գոթ. faihu «ինչք, դրամ», գերմ. vieh «արջառ», լիտ. pekus «արջառ», peszù «մազերը պոկել», սանս. paçu «ոչխար», ավեստ. pasu հոտ, արջառ, ոչխար, պարսկ. pašm «բուրդ» (Arm. Gr., 422, Արմ. բառ., I, 582—3)։

33. Ատամն (-ման, -մունք) «ատամ, зуб»=հուն. ὀδούς, իոն. ὀδών, լատ. dens (սեռ. dent-is) սանս. dán (instr. datâ), dànta, ավեստ. dantan-, պարսկ. dandān, գոթ. tunþus, հնդ. zand, լիտ. dantis, կիմր. dant «ատամ»։ Ըստ Հյուբշմանի ատամն բառի -մն վերջամասը այնպիսի զուտ հայկական ածանց է, ինչպես նունը ուղնք կողմն բառի մեջ հանդևպ կող բառի (Arm. Gr., 422)։

34. Աառեամ *(առևցի)* «առևում եմ»=լատ. ōdi «առևում եմ», ōdium «առևլութիյունն», անգլոս. atol «առևլի, ոգեղ», հին խոլ. atall «չարագուշակ», հուն. ὀδύσσομαι կամ ὀδύομαι «վիրան բարկանալ», Ὀδυσσεύς հատուկ անունը («ցասնալ»)։ Arm. Gr., 422. Արմ. բառ. I, 595։

35. Արաւր *(-ոյ)* «արոր». ոռγr"=հուն. ἄροτρον. լատ. arātrum. համմտ. լիտ. árklas (-kla<-tlo), սլավ. ralo, լեհ. radło (-dło< dhlo)։

36. Արբանեակ «ծառա, ապատավոր, օգնական, հետևորդ»= սլավ. rabū (robū) «ծառա». գոթ. arbaiþs «աշխատանք», գերմ. Arbeit «աշխատանք, նեղութիյուն»։ Հնդեվ. արմատն է *arbh կամ rabh (Arm. Gr. 423)։ Ալսահդ համընկնում է քրդերեն raban «ապատավոր» բառը, որը գուցե հայերենից է վերցրած։

37. Արբեցամ «ըմպել, խմել» (արբեցալ), ըմպեմ բալի առբիատը կլինի արբի=հուն. ῥοφέω «ջրալի կերակուր ուտել», լատ. sorbeo (id.) լիտ. srebiu կամ srobiù (id.)— բոլորի սկիզբն է հնդեվ. *sṛbh—(‖ *srobh-, *srebh-)։

38. Արգել *(անհոլով)* «արգելք, խափանարար, խոչընդոտ», արգելան «բանտ, բանտարկութիյուն», արգելում «արգելում եմ, չեմ թողնում, բանտարկում եմ»։ Համմտ. հուն. ἀρκέω «վանել, հեռացնել, խափանել, դիմադրել», լատ. arceo «փակել, գոցել, կոդպել, հեռու պահել, չթողնել որ մտանեմ, արգելել» (Arm. Gr., 423)։ Արմատը համարում են arg-, որ տարածում են նաև areq-, aleq- ձևերի մեջ (լիտ. rakinti «փակել», գերմ. riegel «նիգ, խափան, արգելք», լատ. arcanus «ծածուկ, փակ, գաղտնի», սանս. argala- «նիգ», հուն. ἀλέξω «վանել, հեռացնել» և այլն),— տես Արմ. բառ., I, 645։ Ըստ Հ. Աճառյանի մեր բարբառներում (Երևան, Նոր Բայազետ) կա բարգ բարդութիյունը, որ ցույց է տալիս արգել բառի arg-, իսկական արմատը և -el ածանցի դրանորումը, ինչպես տեսիլ բառի մեջ։ Բայց ինձ թվում է, որ դա արհեստական է և ինձ հայտնի չէ արարատյան բարբառում բգ-արգ ձևը և կարծում Գ. Գառշյանը ինքն է հորինել։ Համեմատությունը արգել արմատը հնդեվրոպական չէ և ճիշտ է Մառը փոխառութիյուն համարում ասորերենից, ուր կա a'rqel «խանգարել, արգելել, ետ պահել», ūrkāla «արգելք»։

39. Արդ «հիմա, ուրեմն, հետևաբար» և «նոր» բարդութիյուններում, ինչպես՝ արդածին (=նորածին)=հուն. ἀρτιγενής նոր ամե· ւնացած= ἀρί-γαμος և այլն, այս արդ արմատից է նաև արդի, արդուք, արդէն և ծագմամբ նույնն է հուն. ἄρτι «հիմա, այս

վայրկյանիս, մի քիչ առաջ» (‚eben, junqst"). համմտ. լիտ. arti «մոտս»:

40. Արդ (ու հոլ.) «ձև, կարգավորում», արդել «կոկիլ, շոկիլ», խորանարդ, զմբեթարդ, ծործորարդ (-հովտաձև, գոգավոր), զարդ (ու հոլ.), զարդարել, յարդարել և այլն=հուն. ἀρτύς «կարգավորություն», ἀρτύω, ἀρτύνω կարգավորել, պատրաստել, հորինել, լատ. ars (սեռ. art-is) «ձևորի կամ մտքի ճարտարություն, արհեստ, ճարտարապետություն», artifex «վարպետ, բանվորներին պետը», artus հոգ, մարմնի հոդված, անդամ», սանս. ṛtu «կարգ, կանոն», ṛti «ձև, եղանակ», դևրմ. Art «ձև, եղանակ, տեսակ, կերպ»:

41. Արդար (ո հոլ.) ուղիղ, ճշմարիտ, հավատարիմ, ստույգ, իրավ (խոսք) ունենալով -ար մասնիկ (համմտ. զարդարեմ, լարգարեմ, մեծարեմ...) իր ard- ճշմարիտ արմատով=սանս. ṛtá- «սուրբ հրաման, իրավունք, ճշմարտություն», ṛtávan «սուրբ, արդար», ավեստ. aša (<arta -ից), ašavan-, հին պարսկ. arta (օրինակ Artaxšaθra- բառի մեջ). այն ինչ մյուսները այս արդար բառարմատը միացնում են նախորդի հետ (Արմ. բ. I, 651—655), միացնելով նաև արդակ (մակարդակ և այլն) «հարթ», արդիւց «արդասիք» (Արմ. բառ., I, նույն տեղը), որոնք սակայն կարող են, ըստ իս, այլ ծագում ունենալ:

42. Արեւ (ու հոլ.), արևելք, արևմուտք, արեգ-ակն և այլն իրեն arev- և նոր արևգ- (<արեւ-) ձևով=սանս. ravi- «արև» (նախնդալան բառ է): Այս մեր արև բառը, ըստ իս, գալիս է ոչ թե «նախահնդիից», այլ մեր էրայից հազար տարի առաջ եղած մերձավոր Արևելքում (Մյուրիայում, Միտաննիում) հնդկական ցեղերի լեզուներից, որոնք ազդել են խուռի, խեթ և մյուս լեզուների վրա: Հայաստանի դնչունները («բոշաները») մոտավոր գուցե այդ ժամանակից են:

43. Արիւն (սեռ. արեան) «արյուն», кровь=սանս. ásṛk (սեռ. asnáḥ), հուն. ἔαρ (ϝαρ, εἶαρ), հին լատ. assir, asser, լատիշ. assins «արյուն» (Arm. Gr. 424), որոնց վրա այժմ ավելացվում է խեթ. eshar կամ escar (սեռ. eshanas), «արյուն, սպանություն»: Հայոց արիւն=ար- (<*asr)-իւն (համմտ. անկ-ի-ն, հեր-իւն...), հնդհվ. *esr(g)-ից ինչպես գար-ուն բառի gar-<*vesr- (Արմ. բառ., I, 683—4):

44. Արծաթ (ո հոլ.) «արծաթե մետաղը, серебро»=սանս. rajatá- «սպիտակավուն, արծաթագույն, արծաթե», ավեստ. ərəzata-, լատ. argentum, գալլ. argento (Argento-ratum), հին իռլ. ar-

gat, հուն. ἄρκτος «արծաթ» (Arm. Gr., 42)։ — բոլորը իրր թե հնդեվ. areg- «փայլել» արմատից, որից տարբեր մասնիկով ծագում է նաև նշված հունարենը։ Համանորեն նյութական կուլտուրայի զարգացման տեսակետից այդ *argat>*arzat արմատը լինի ոչ հնդեվրոպական, այլ միջերկրածովյան, ինչպես ամանք այդ կարծում են։ Կովկասյաններում կա *araz կամ arz «արծաթ»։

45. Արծուի (ո հոլ.) և հետագա արծիւ (ի կամ ո հոլ.) «արծիվ, орел»=սանս. rjipyá- (վերադիր է çyēnâ- «արծիվ» բառի), ավեստ. ərəzifya- մի լեռան անուն է և ərəzifyôparəna «արծվիփետուր» բարդ բառի մեջ, հին պարսկ. ᾰρζιφος, որը բուռ Հերոդոտոսի պարսկերեն բառ է, «արծիվ» թռչունի համար (Arm. Gr., 424—425)։ Ես կարծում եմ, որ հնդեվ. *rgipyo- վերականգնելը սխալ է, քանի որ բառերը կան միայն հնդիրանական լեզուներում, իսկ հալերենում (արծաթ<*arçipia-), որից և վրաց փոխառյալ arcivi(id.), հնչառաքլամբ կարող էին վերցրած լինել իրանիներից։ Այդ պատմական և աշխարհագրական նեղ սահմաններով պիտի բացատրել նաև չինեն ärzu «արծիվ», լակերեն b-arzu(id.), ուր „b"-ն անվանական սեռի (կինդանու) նիշն է։ Արիական այս rjipia- || arzipia- բացատրվում էր *arziptia- «արծակաթիվ», որը ևս կարող եմ պաշտպանել խեթ. pittarpalḫis «թևալայն» մի թռչնանունի ձևով, ինչպես ունենք հալերենում նման մաշկաթև «չղջիկ, летучая мышь» մանգաղաթև «стриж» բառերի կազմութիւնը։

46. Արմուկն (-ան) ձեռքի արմուկը»=սանս. īrma- «բազուկ, նախաբազուկ», ավեստ. arəma «բազուկ», օսս. arm «բուռ», լատ. armus «բազուկ, թիկունք», գոթ. arms=գերմ. Arm «ձեռք», պրուս. irmo «ձեռք», սլավ. ramo, ramę «ուս»։

47. Արջ (ո հոլ.) «արջ медведь»=սանս. ṛkša- ավեստ. arša- օսս. ars, նոր պարսկ. xirs, հուն. ἄρκτος, լատ. ursus (Arm. Gr., 425)։ Ըստ իս, հին աղուանից Արավաղ անունը նշանակել է «Արջի սերունդ», այդպես էլ Վաղարշ և Վաղարշակ «Վիրունդ արջի», նմանապես Աբշ-ակ և Աբշ-ամ անուններըր, որոնք նույն ծագումով են, իրենց ձևով մոտ են ավեստական arša- և օսերի ars ձևին (որից թևերևս չերքեզների erš «արջ»)։ Համմտ. նաև Aršdata անունը («Արջի տված, Արջատուր»?) =հայոց Աշտատ։

48. Արտասուր, հոգն. արտասու-ք (-աց) «արցունք, слеза»=հվգ. trahan, գերմ. Träne (<*trahnu-<հնդեվ. *draknu-), գոթ. tagr հուն. δάκρυ, լատ. lakruna և այլն, հնդեվ. *dak'ru-ից (Arm. Gr., 425—426)։ Ա. Մեյեի այս մեկնաբանությունը, որ նա ավել

է (Jndg. Forsch, V, 331), պաշտպանում է նաև նախ իր Esquisse-ում (հրատ. 1936 թ., էջ 46), հնդեվրոպական նախաձևը ընդունելով *dra´ku-, համեմատելով հայոց artasu- բունը հուն. δάκρυ, հին վերին գերմ. trahan, միջ. գերմ. traher «արցունք» ներկայացուցիչների հետ։ Հ. Աճառյանը, հետևելով Walde-ին, Boisacq-ին, Trautmann-ին և մյուսներին, ընդում է երեք հնդեվ. նախաձևեր՝ *drakru (որից և հայոց ձևը), հետո՝ կրճատված *dak'ru- և վերջապես *ak'ru-, որից առաջանում են հնդիրանական (սանս. açrū, ավես. asrū, պարս. ars «արտասուք»...) և բալթիկ ձևերը (լիտ. aszará, լատ. asara),- տես Արմ. բառ., I, 768։ Ըստ իս, հայոց artasu-<*rtasu-<*trasu-<հնդեվ. *drak'u-, իսկ վերջին -r սոնանտը (արտասուր<*արտասու-ր) հետո է դրվել, ինչպես ունենք ասր (<*ասու-ր), ծաղր, մեղր... փոքր, քաղցր և մյուսների մեջ։

49. Ա֊ծանիմ (ա֊ծանիմ), ասր. աւծ-ի, «օծում եմ, լուղ քսում»=սանս. añj- «օծել» (anák-ti «օծում է»), լատ. unguo, unguen «օծանելիք, լուղ», հին վերին գերմ. ancho «կարագ», պրուս. anktan և այլն։ Հայոց աւծ- awç- <հնդեվ. *ong^{w}-? (Arm. Gr., 426)։

50. Օձ (աւձ. ի հոլովմամբ) «օձ, змея»=լատ. anguis «օձ» (anguil la „Aol", „yroph, ձկնօձ), հվգ. unc «իժ», լիտ. angis «իժ, օձ» ungurýs «ձկնօձ», սլավ. yroph, հին իռլ. esc-ung «ձկընօձ»։ Հայոց աւձ (awdz) <հնդեվ. *ang^{w}h ? (Arm. Gr., 426)։

51. Օր (աւր, սեռ. աւուր) «օր»=հուն. ἦμαρ (ἡματος), ἡμέρα, լակրիդ. ἀμάρα, որոնք «օր» են նշանակում։ Ըստ Ա. Մեյեի հայոց awr-ը առացվել է հին *ämôr ձևից (Arm. Gr., 426)։

52. Բաճ (ու կամ ի հոլ.)- երկաթեն բահ «заступ», ըստ Հյուբշմանի կազմվել է bher- բալարմատից (*bhrírom?), ինչպես մաճ, հնում մարճ, կազմվել է mer «մահանալ» արմատից։ Նա ի նկատի ուներ սանս. bhrī, ավեստ. brōiδra «կացին», նոր պարսկ. burīden «կտրել», bēl «բահ» և այլն, որ չեշտում է ինքը (Pers. St, 28, 34 և Bartholomae, Studien II, 27, 107, 130)։ Վրաց bari «բահ» (որից barva «փորել») հիմք էր տալիս Հյուբշմանին վերադասնդնել հայոց հին *barh ձևը։ Տես Arm. Gr., 427, սակայն որոշ լեզվաբաններ (Walde, Boisacq, Kluge, Berneker և ուրիշներ), այդ հնդեվ. bher- արմատին տալով ընդարձակ նշանակություն «ծեծել, ծակել, ճեղքել, փորել», միացնում են նաև թրով, βρῖλων «սայրիչ», հուն. φάρω «ճեղքել», φάρος «տրոր, հերկ», φαρόω «հերկել», լատ. ferio «ծեծել, բախել, հարվածել» forare «ծակ ծակել»,

սլավ. бритъ, брич «ածելիք», борю «կռվում եմ», брань «կռիվ», ռուս. борона «ցաքան», броня «զրահ», бритъ «ածելով», бритва «ածելիք», հին բ. գերմ. barôn «ածիկ», bora «գգիր» և այլն։ Հ. Աճառյանը, բերելով այս հավիտենական (Արմ. բ., I, 913—4), ցանկացել է այս հնդեվ. bher- արմատին կցել և հայոց բիր բառը („кол") և այստեղից բրել «փորել», որը իմ կարծիքով սխալ է, որովհետև հին *birh- հայերենում պիտի տար հետագայում *բրհ և ոչ թե բիր, ինչպես մարհ>մահ, զարհ (արհ)>զահ-անդամ, ահ, ճանապարհ>ճամփա(հ), zôra>զոհ (զորհ-ից), hammiôria>ամհի և այլն։

53. Բամ «խոսում եմ, ասում եմ» պակասավոր բայ է և ինձ ներկայի եզակի բամ, բաս, բայ և սակավադեպ հոգն բամք, բաճ և հրամ. բա՛, որոնք գործ են ածվում միայն ասել բայի հարադրությամբ, ինչպես — Ասացի բամ ցրնցից զնոսա. Քնզէն խոկ ասացեր բաս լերկրէն լաշխարհէն ճննաց եմք. Բերոսոս-բայ ասէ յառաջնում մատենին. Աևն բան՝ ազատելով ազատին արարած. Ոչ կթէ ասեմք բամք կուրգ ինչ իցեն. Աևն բան կին մի... խօսէր և այլն (տես Arm. Gr. 427, Արմ. բառ., I, 885—887)։ Ասել բայի հարադրությունը մթագնել է բամ, բաս, բայ և այլնի գործածությունը, դարձնելով դրանց շաղկապի վիճակում, ինչպես լատիներեն quidem կամ մեր «թե, որ» իսկական շաղկապների պես, որոնք երբեմն փոխանակվում են։ Ba- արմատը, որ առաջին անգամ ճշտորոշեց Ալդինյանը, հանվում է հնդեվ. *bhā-ից «խոսել» իմաստով, որը կա հունարենում φημί «ասում եմ», ὠνυμι «անուն», φάμα «ձայն, աստվածների հայտարարություն», սանս. bhan, bhánati «խոսել», լատ. fāri «ասել, խոսել», fama «լուր, համբավ», fabula «խոսք, դրույց, առակ», սլավ. баять, баснь, լիտ. bóju, bóti «մեկի մասին հարցնել» և այլն։ Հ. Աճառյանը այս bhā- հնդեվ. ընդհանուր արմատի մեջ է դնում նաև հայոց բայ «խոսք, մարգկային բան, պարապ սուտ խոսք, բառ, բայ (verbum)». բաճ (ի հոլ.) «խոսք, բառ, պատգամ, հրամանն, խորհուրդ», բառ (ի հոլ.) «բառ, լեզու, բարբառ, երդի նդանակ», բարբառ «հնչյուն, ձայն, խոսք, լեզու»։ Բամբասել կազմվել է բամ «ասում եմ» և բաս «ասում եմ», ինչպես ժողովրդական բարբառներում ասում են ասե-կոսե, կասե-կուսե, ըսի-ըսավ և այլն (տես Արմ. բ., I, 891)։ Հյուրշմանը առանձնացնում էր բայ „глаголъ, verbum, zeitwort", համեմատելով հուն. φάσις «խոսք, հայտարարություն, տարածայնություն, վճիռ», φάτις (=բայ) «խոսք, լեզու, անուն, տարածայնություն»,

ծագեցնելով հնդեվ. *bhotis ածանցյալից, իսկ բաճ=հուն. φωτή «ճաշ», անգլս. bēn «խնդիր» և սլավ. ba-s-nĭ „басня" (<առակ)։ Նա չէր խոսում բառ, բարբառ (բարբառել) ձևերի նույն ծագում լինելու մասին և կարծում ենք իրավացի էր։

54. Բարձր (տես. բարձու) «բարձր», բերձ հնչյունափոխ ձևը տալիս են երկնաբերձ, լեռնաբերձ, ուղղաբերձ, բարձրաբերձ և այլն։ Նույն արմատին է պատկանում բարձ- «բարձրացնել, поднять», որ տալիս են բառնամ, առ. բարձի, ամբառնամ (համբառնամ), առ. ամբարձի (համբարձի), ուր «ձ» արմատական հնչյունը ներկայի բնում -ն-ամ կցությից առաջ ընկնում է (համմ. դառնամ—դարձալ, ընթհանում-ընթերց-ալ, որոնց արմատն է դարձ- և թերց-)։

Հայոց բարձու «բարձր»=հնդեվ. *bhrg'hú- բերձ=հնդեվ. *bhérg'hos (Arm. Gr. 428)։ Ինձ թվում է, որ բերձ հնչյունափոխը ոչ թե դալիս է հնդեվրոպական նախալեզվյան *bherg'h-ից, այլ հետագա հայկական առանձնագործությունն է a ‖ e սովորական փոփոխումով, ինչպես՝ հառաջմանում, ուր «մհառա»-ը անջատվում է նման բարձրաբերձի բերձ մասից։ Համմ. նաև խալտաբղետ։ Հնդեվ. ձևերն են— սանս. bṛhánt- բարձր, մեծ, ավես. bərəzaṇt- «բարձր», օսս. bärzond, պարս. buland, հրգ. berg „Berg" և այլն։

55. Բեկ-ամիմ (առ. բեկ) «կոտրում եմ», բեկոր, «կտոր», բեկ-ամիմ «կոտրտել», բեկչիլ «կոտրիլ» (անբեկչելի «չկոտրվող»)= հնդեվ. *bheg- կամ *bheng- արմատից, որից են սանս. bhaṅj- (bhanákti «կոտրում է»), bhaṅga- «բեկում, խորտակում, ալիք», հին իռլ. beingim «խորտակում եմ», com-laig «կոտրել, խորտակել», լիտ. bangà «ալիք», ռուս. бужать «քար կոտրել», գնչուական pangáva pagiom «բեկանել, կոտրել», իսկ r-ի ներմուծումով՝ լատ. frango (perf. frēgi) «կոտրում եմ», fragmentum «կտոր», գոթ. brikan, հրգ. brechan, գերմ. brechen, անգլ. break «կոտրել» (Arm. Gr. 429, Աբմ. բ., I, 1050—1052)։ Հայերենում նույնպես եղել է արմատի առաջին պալաթականներից նոր հնչյունի ներմուծում, այն է «ղ»-ի ներմուծում, ինչպես ակկադական կապուտ (ակկ. habtu) «ավար, կողոպուտ» բառից հետո նաև՝ կողոպուտ (<*կղապուտ), մեզրելական čobur «ընկուզ» բառը դարձել է Ղարաբաղի հայոց բարբառում ճղոպուր և այլն։

56. Բերան (ո հոլ.) «բերան, pom»—լիտ. burnà «բերան», իռլ. bern (հայց. beirn) «ճկեղքվածք», *bernā ձևից կամ berna (հայց. bernaid) նույն նշանակությամբ (*bernāt- ձևից)։ Թեպետ

Հյուբշմանը միայն բերում է եղած այս կարծիքը (Arm. Gr., 429), իսկ Հ. Աճառյանը հավելում է Walde-ի Boisacq-ի և Trautmann-ի զարգացումը այլ օրինակներով իբրև «ծակ, անցք» հասկացով մի նախնական *bher- «ծակել, ճեղքել» բայարմատից (տես բաճ բառի բացատրության հետ), այնուամենայնիվ ինձ թվում է բերած բառի ստուգաբանությունը չլուծված։

37. Բեր-եմ (առ. բերի) «բերել, ածել, կրել—տանել, պտուղ տալ», բեռն (-ին) «բեռ, ношa» -ա-ւոր «կրող» (թագաւոր «թագ կրող» (=սանս. bhárāmi կրում եմ, ավեստ. barēmi «կրում եմ, բերում եմ», հուն. φέρω «կրում եմ», լատ. fero «կրում եմ, բերում եմ», գոթ. baira «կրում եմ», սլավ. berą „собираю, читаю" (бремя «բեռ»), հին իր. berim «կրում եմ» և այլն։ Հնդևր. *bhérō։

Հայոց -աւոր (թագաւոր, մտաւոր, կրաւոր,...) ածանցի մեջ «ա» ձայնավորը հոդակապ է և կարող է չլինել, ինչպես գինուոր «գինք կրող» (gēn+wor) ինչպես մեր ժողովուրդն է հաճախ գործածում մաքուր- wor «կրող, ունեցող» այդ ածանցը՝ հնձվոր, ուղվոր, ամուրացկան», բանվոր, սելվոր, «սայլ բանեցնող» և այլն, այդ -wor ածանցը գալիս է հնդևր.—*bhor ձևից («կրող») և *bher- «բերել, կրել» արմատի փոխակերպումն է։ Համեմատել նաև գործիական w ձևի (գործով, բանիւ, ամաւ...) ծագումը հնդևր. bh-ից, որ եղակիում կա և հունարենում (φι)։ Կան նաև այլ ածանցավոր կազմություններ — բերուատ, բերիւր = բերրի, համբերել, բերք և այլն։ Հետաքրքիր է արմենյան ժողովրդական «երեխա բերել»= (ծնել), որին նման է դևրմ. gebören քրդերեն kur brin։

38. Բուկ «բոբիկ, босой», որից բոկագնաց, բոկոտն, բոկություն, բոկանի, բոկիկ (>արդի՝ բոբիկ) ուր bo-k<bos-(k)= սլավ. bosŭ «босой», իռ. bāsas «բոպիկ», հին գևրմ. bar «մերկ» bar.-fuss «ոտաբոպիկ», անգլ. bare «մերկ» և այլն։ Համանորեն լատ Chr. Bartholomae-ի (Stud. II, 13) հայկական -k մասնիկը դրվել է հայոց bo- արմատի վրա, որը ծագել է հնդևր. *bhosó- արմատից և ոչ թե հնդևրոպական անմիջական *bhosko- ձևից (Arm. Gr. 430)։

39. Բուծ (ի-ա), «կաթնակեր գառնուկ կամ ուլիկ» =սանս. bukka «բուծ», bukkā «այծ», ավեստ. būza «ուլ». պահլ. būj, պարս. buz «այծ, ուլ», գևրմ. Bock, հրգ. boc, հոլլ. bok, անգլ. buck «հնոխազ, արու այծ» (Arm. Gr. 430, ԵՒրմ. բ., I, 1191—1195)։ Հնդևր. նախաձևն է *bhug'o-։

60. Բուծ-անիմ (տարբ. բուծի), բուծ-իմ «անուցանել, պահել, մեծացնել», որի բոյծ առանձին չգործածված արմատից ունենք նաև՝ բուծարան, մեղուաբոյծ, պտղաբոյծ, անասնաբոյծ և այլն։ Անմիջական ազգակիցը կա սանս. bhuj (bhuñuté, bhuñjátē) «վայելել, ուտել, օգտվել» bhōjayati «կերցնել, սնուցանել», bhōga «ուտելիք, կերակուր, վայելումն, գործողություն», bhōjana «կերակուր, ուտելիք» և նման ածանցյալներ (Arm. Gr., 430)։ Բայց բացի հայերենի և սանսկրիտերենի այս ընդհանուր *bhuǧ- արմատից հավանորեն եղել է և *bhruǧ- ալտերնատիվ ձևը „r" հնչյունի հավելացմամբ, ինչպես այդ տեսանք bheg- և bhreg- «կուտրել» արմատի վերաբերմամբ։ Այս bhrūǧ- «ուտել, վայելել» փոխարմատը տալիս են լատ. fruor «վայելել, գործածել», սպառել, պտուղը քաղել, fructus «վայելումն, օգուտ, շահ, պտուղ», անգ.-սաք. brucan «վայելել», հ. սաքս. brūkan, գոթ. brūkjan «վայելել, գործածել», անգլ. brook «տանել, ժամալ» (ըստ Walde-ի, Kluge-ի, տես Արմ. բառ., I, 1152)։

61. Գայլ (ո հոլ.) «գայլ, волк»=սանս. vr'ka- ավեստ. vəhrka-, նոր պարս. gurg, գոթ. vulf-s, սլավ. vlūkū=ռուս. волкъ, այր. ulʻk։ Սրանց հետ է նաև հուն. λύκος, լատ. lupus «գայլ», որոնք <հնդեվ. *luk^{w}o- ձևից, այնինչ մյուսները հնդեվ. *o|k^{w}o-ից, իսկ հայոց գայլ ձևը հանվում է կամ *vl̥yo- նախնականից (ըստ Hübschmann-ի) և կամ *vallo-ից (ըստ Fick-ի), համեմատելով խալանդական fael «գայլ» մերձավոր ձևի հետ (Arm. Gr. 431)։ Հնդեվրոպական լեզուների «գայլ» բառի այդ երեք բավական տարբեր ձևավորումները ուզում են բացատրել այդ բառի թաբուով, որով զգուշանում էին արտասանել և հնչառությամբ փոխում կամ փոխարինում էին, ինչպես տեսանք «արջ» բառի նկատմամբ (տես նաև Արմ. բառ., II, 51—52)։ Վրաց mgeli «գայլ» պիտի հայտնել հայերենից փոխառություն։

62. Գան (ի հոլ.) «ծեծ, побои» փոխաբերաբար նաև՝ վիրավորված մասը մարմնի, քուլսի և այլն, ունենք նաև գանել, գան ըմպել «ծեծ ուտել», գան հարկանել «ծեծել» և այլն։ Համմտ. սանս. ghana «բիր, կոպալ» ghāta- «զարկ, հարված», hati-. hátha-(id), hatyá- «սպանություն», hánti. «խփում է, սպանում է»=ավեստ. ǰainti=պարս. zanad «խփում է», հուն. θείνω «խփում եմ, հարվածում եմ», φόνος «սպանություն», տարբեր՝ ἔ-πε-φν-ο-ν, հին իռլ. guin «վերք», ge- gen «սպանեց», հին իռլ. gudr, gunnr «կռիվ», լիտ. ginczia' «պայքար, կռիվ», սլավ. жну «հնձում եմ», гоню

«հայածում եմ» և այլն (Arm. Gr. 432, Աբմ. բառ., II. 59—60)։ Հնդեվ. նախաձևն է *gʷhəni- կամ *gʷhṇi (>գան)։

Սխալ պիտի համարել Հ. Աճառյանի կողմից այս արմատին կցելը հայոց ջին «գավազան» և գավառական գանիլ «զզվիլ, գարշել» բառերը։ Առաջինը կա և վրացական լեզուներում և հայերենից փոխառություն չէ։ Մեգրելերենում և ճանաերենում (լազերենում) ունենք ճինու (կամ ճինի) «ճիպոտ», «երկայն կապելու ճիպոտ», օճինիվև „местность с мелким лесом“ (Н. Кипшидзе, грам. минг. яз., էջ 389, Н. Марр. Грамм. чанс. яз., 228), որի հանդեպ համեմատել հայոց ոչ միայն ջին «ծեծելու գավազան, ձողիկ, այլև ոջին «կապոց փայտի» (Առձ. բառ.), «ճյուղերի կապոց, արցակ» (Աբմ. բ., V, 1216)։ Վերջինի «ո» նախաձանցը (ոջին, գերված՝ ոջին), որ կա օրինակ և ոճիր (ոճիր) բառի մեջ, ցույց է տալիս մեգրելա-լազական ո- նախաձանցը, որը նշանակում է «մի բանի համար. для чего-л» և փոխառում է հօգուտ ոջին բառի փոխառությանն։

63. Գառն (-ին, -ինք) «գառ, ոչխարի ձագ»=հուն. (attրկ) ἀρήν «գառնուկ», կրետ. (դորտին), Fαρήν, հոմեր. *Fρήν «ոչխար», πολύρρην «շատ ոչխարավոր», սանս. uraṇa «խոյ, գառ», պարս. barra «գառ» (<*varnak ձևից), պհլ. varak «խոյ» (Arm. Gr., 432)։ Հայոց գառն=հուն. Fαρήν=հին պարս. *varnā հնդեվ. *vərên-ից։

64. Գարուն (գարնան) «գարուն, весна»=ավեստ. vaŋri, պհլ. vahār, պարս. bāhar, հին պարս. vahara (θuravāhara-ի մեջ), հուն. ἔαρ, հոմեր. Fέαρ<*Fεσαρ, լիտ. vasarà «ամառ», սլավ. vesna=ռուս. весна, սանս. vasantá- «գարուն», լատ. vēr, հին իռլ. vār «գարուն» (Arm. Gr., 432—433)։ Ենթադրվում է, որ հնդեվրոպական առաջին նախաձևն է հղել wesr (ues r) կամ wēsr (ues r), որից առաջացել է կրճատված vēr ձևը, իսկ սկզբնական weser ուղղական հոլովի հետ է անտական wesnes, որից առաջացել է весна սլավոնական ձևը։ Ենթադրվում է նաև նախնես, որ հայոց գարուն ձևը ազդված է աշուն բառից, ինչպես նման ձևաբանական հարմարեցում (բառային առնմանություն) կա օրինակ ձմեռն-ամառն, երկին-երկիր (հին *երկիր ձևից) և այլն, իսկ գարուն բառի արմատը հղել է gar, որը առացվել է vesar հնագույն ձևից (vesar>*Գահար>*գահար>*գար, տես Աբմ. բառ., II, էջ 93), կամ ինչպես Հյուբշմանն է գծում, հայոց գար-<*gehar=*vesr=հուն. ἔαρ։

65. Գել-ում (աոր. գել-ի) «ոլորել, ճմլել, պրկել» (սիրտը, մարմինը), գելարան կամ գելոց, «պրկելու գործիք». Ա. Մեյեն (M. L, VIII, 163) համեմատում հուն. εἴλύμαι(=Fελυμαι) «գլտորեցիր», volvi, εἰλεῖν «գալարվել, հյուսվել», լատ. volvo «ոլորում եմ, գլորում եմ» ձևերը, որոնք առլիս են velu և vlū- արմատները: Բայց Ա. Մեյեն սրան ավելացրեց նաև հայոց գել—գլեմ, գլորեմ, գլան, գլխիկն՝ gil<*vēl- «գլորել, катать» փոփոխակը (MSL, IX, 144), որոնք ընդունվեցին Հյուբշմանի կողմից (Arm. Gr. 433, 435): Համեմատել ռուս. valiti գցել գետնին, շուռ տալ» (повалить), բոլգ. val «գլանակ»=ռուս. вал, սանս. valayati «պտտեցնել, գրկտորել», գոթ. valvjan=գերմ. wälzen, լատ. volvo և այլն: Հ. Աճառյանը իր կողմից ավելացնում է հայոց գալ-ար «ոլորք» (օձի և այլն), изгиб, извилина (գալարափող, գալարել...), գալ գաղափարական բառը «չորացնելու համար հյուսված բանջարեղեն (ավելուկ, շրեղ, շիպ) ձմեռը պահելու համար» և գաղձն ‖ գեղձ, «բրդեղ, պատատուկ» (=գաղձ բուլսը, որ փաթաթվելով չորացնում է մյուս գալար բուլսերին) և հետևապես ունենում են գել, գիլ, գալ, գաղձ (գեղձ) արմատաձևերը նման գեղ, գալար, գեղձ, գաղձ տեսակներին («բուլս», «խոտ» և այլն), որտեղ կան -ար և -ձ ածանցները (Արմ. բ., II, 113—114): Հայոց գեղձ բուսանունը (գեղձ պատալ) պիտի տարբերել հետևյալ երկու նույնանուններից:

66. Գեղձ-ք «գեղձեր»=սլավ. žleza „glandula" ռուս. железа, և մյուս կողմից նույնպես բատ Bugge-ի (KZ, XXXII, 5):

67. Գեղձ (-ի) գեղձումն «բաղձանք, սաստիկ խղձ», ցանկութիւնն, որ Բուդգեն (KZ, XXX, 6) աղդակցում է սլավ. želěti, želati, „желать" «բալի հետ, հնդեվ. *gʷhel- արմատից, (Arm. Gr. 435): Բայն է՝ գեղձամ (-ացայ) կամ գեղձիմ (հցայ) «բաղձանքով վառվիլ»:

68. Գեղմն (գեղմանն) «բուրդ, ասր»=լատ. vellus (<*velnos-) «գեղմ. բուրդ, մուշտակ», lāna·(<*vlana) «բուրդ», գոթ. vulla (=*vlnā) «բուրդ», հբգ. wolla, գերմ. welle, անգլսք. vull, անգլ. wool, հոլլ. wol, լիտ. vilna «բրդի թել» (հբ. vilnos «բուրդ»), հպրուս. wilna «գգեստ», հին սլավ. vlūna, չեխ. vlna, ռուս. волна, հուն. λῆνος, դորիական λᾶνος «բուրդ», սանսկր. ūrṇa (<vlnā) բուրդ և այլն: Բոլորի արմատը vel, vol, vl, իսկ հայոց գեղմն <gelman=հնդեվ. *velmn̥, նթե դա չեզոք սեռի է (Arm. Gr., 434, Արմ. բ., II, 130):

69. Գետ (ո) «գետ, река»=սանս. udán-, udaká «ջուր»,

հուն. ὕδωρ (ὕδατος) «ջուր», լատ. u-n-da «ալիք», գոթ. vatō, հվգ-wazzar „Wasser", լիտ. vanda, սլավ. voda «ջուր»? (Arm. Gr.,434)։ Հյուբշմանը գնում բառի այս ստուգաբանությունը գնում է հարցականի տակ, ի նկատի ունենալով, որ հայոց բառի իմաստը (գնում, река») տարօրինակ է մյուս ներկայացուցիչների «ջուր» իմաստի հանդեպ, որ արմատի e ձայնավորը չի հավաստվում ուրիշ լեզուներով և վերջապես դրանք ունեն r կամ n վերջացող բներ (Arm. Gr., 434)։ Բայց հայտնի է դարձել նաև «գնում» իմաստով բոլորը. vada բառը, բնագնում, բուն իմ, դա հետագա իմաստաբանություն կարող է լինել, և երկրորդ, կան նաև e ձայնավորով կազմություններ, ինչպես հին ֆրիղերեն wēt, անգլոս. waet, անգլ. wet բոլորն էլ «թաց» իմաստով, ինչպես և սլավ. vědro «դրաման, դույլ» (ռուս. ведро) և կասկածելի փոյուգիական βαδο «ջուր թև «օդ», ապա նեֆտանվիչը, որին միանում է Հր. Աճառյանը, վերացված են համաբան Հյուբշմանի կասկածը գնում բառի ստուգաբանության հանդեպ (Արմ. բ., II, 136—137)։ Իմ կողմից կավելացնեի, որ խեթերենում նախ witen «ջուր» ունի և wetar, widar ձևերը (ինչպես և թևք հոլովներում weten, witen- ձևերը), որից հայերը՝ (հայասցիք) փոխ են առել verd «ջուր» Լատինվերա, Օլմվերա, Շաղվերա <*Շաղվերդ (ասվի կամ գետակի անուն է Օշականի մոտ), Թաղավերդ... ինչպես և urդ հատարակ բառը «ջրի ճամբա պարտեզը ջրելու, ջրի ավազան», որոնց մեջ տեղում ենք ջուր>ասվակ>գնում իմաստաշրջումը (շաղ-վերդ խեթերեն տառացի նշանակում է «մեծ ջուր» šalli- «մեծ» և wetar>werd «ջուր»)։ Այսպիսով՝ գնա բառը կապվում է փռյուգա-սլավոնական լեզուների հետ, վերդ (Ա վարդ՝ նվիրվարդ, Թաղավարդ) և urդ բառը՝ խեթական լեզվի հետ (որպես փոխառություն) և «ջուր» բառը հայտնորեն՝ ասիանիկ— փռյգասիական անդրական լեզուների հետ բոլորն էլ «ջուր» նշանակությամբ։

70. Գին (ո) «մի բանի արժեքը, цена», որից՝ գին հատանել (կամ գին արկանել) «արժեքը որոշել», գնել, գնացող, գանձագին և այլն։ Համմտ. սանս. vasna- «գին», vasnayāmi «առակարկել», հուն. ὠνος «գին», ὠνή «գնումն» ὠνέομαι «գնում եմ», գոթերեն. ὠνῆν «ծախել», լատ. vēno, vēnui «վաճառքի համար», vēnum darc, vendere «ծախել», համմտ. պհլ. vahāk=պարսկ. baha «գին» (Arm. Gr. 434, Արմ. բ., II, 196)։ Հայոց գին=հնդեվ. vēs-no-m.

71. Գինի (գին—ոյ) «գինի, вино=հուն. οἶνος (<Foινος), լատ. vīnum, ալբան. vēnə <*vainā)։ Հայոց գինի <*geni<նա-

հատակի. *voinio-։ Թևպետ հարևան ճրագերենում ունենք* gvino *(մեգր.* gvini) *«գինի», բայց ըստ Հյուբշմանի այդ չի նշանակում, որ հայերը այդ գինի բառը վրացերենից են փոխ առել* (Arm. Gr. 434—435)։ *Ա. Մեյեի կարծիքով գինին միջերկրյա հին ժողովուրդներին է պատկանել և հետո անցել է սեմիտներին (հրեաներին, արաբներին, աստուրներին) և հնդեվրոպացիներին (հուլներին, հայերին, ալբաններին) և սրանց միջոցով՝ նիլրոպալի մյուս ժողովուրդներին (լատին, գերմաներ, կելտ, սլավ) Գերմանիա է մտել լատիններից միջոցով, և հետո անցել սլավոններին, իսկ հայերի միջոցով տարածվել դեպի Կովկաս (տես Արմ. բ., II. 201—202)։*

72. Գիշեր (ո կամ ի·ա հոլ.) *«գիշեր,* ночь, *գիշերից» գիշերանոց,* Nachts *գիշերային (նուագը), գիշերավար, «արուսյակ» և այլն։ Համմ. հուն.* ἕσπερος *«երեկո»,* τὰ ἕσπερα *«երեկոյան ժամանակ», լատ.* vesper *«երեկո», հին իռլ.* iescor (<*vespero-ից), *լիտ.* vākaras, *սլավ.* večerŭ „вечер, երեկո»։ *Ինչպես Հյուբշմանն է նշում, այս բառերը անհնար է իրարից անջատել, ինչպես և հնչունական օրենքներով միացնել։ Հայերենի* i *շեշտակորուստ (վերջընթեր) ձայնավորը, ինչպես ցայժմ դիտված է եղել, գալիս է հնդեվ.* oi *կամ* ei *դիֆթոնգից, իսկ հայոց նման* i=հնդեվ. ē *չնկատված պիտի համարել* (Arm. Gr., 435)։ *Բերած օրինակներիդ նախաձևերն են* vespero- *կամ* veqero-, *որին հարում է և հայոց գիշեր բառը հին* *գիշեր ձևից, թևպետ կային լեզվաբաններ* (Brugmann, Bolsacq), *որոնք դեմ էին հայոց բառի հնդեվրոպական ծագման (Արմ. բառ., II, 205—208)։*

73. Գիտ-եմ *(աորիստի) «գիտեմ», արմատն է գէտ=* *առնս.* vēda, *ավեստ.* vaēδa, *գաթա-ավեստ* vaedā, *հուն.* οἶδα, *գոթ.* vait, *սլավ.* vĕmi (vědě) *«գիտեմ». պրուս.* waidimai *«գիտենք»* (Arm. Gr., 435)։

74. Գոյ *«գոյություն ունի», հնում կային նաև գոն, գոլր, գոլին, գուցէ, որոնց հիման վրա անալոգիայով ստեղծվում են նաև* I *և* II *դեմքերը։ Այս գոյ երրորդ դեմքը դառնում է նաև գոլական (գոլ, գոլի, գոլիս) ունենալով «գոյացություն, գոլք (ինչք), հարստություն, աստված», ինչպես է* „есть“ *դառնում է «էություն, աստված», կամ* „стоит, пребывает“ *նշանակում է նաև «կայանում»* (στάσις), *բայ «աստում է, խոստում է», դառնում է բայ* „глагол“ (φάσις)։ *Արմատն է գո-* (go-), *որը ծագել է նախկին* vos- *հնդեվ. ձևից և նշանակել է «բնակվելը», հետո նաև «ապրել, կեցություն» (գոյություն) ունենալը, Համմ. առնս.* vasáti *«բնակվում է», va-*

sati- «բնակատեղին, բանը» ավեստ. vaŋhaiti «բնակվում է», գոթ. visan «լինել, մնալ, ապրել», vas «էի», vists «էությունն, բնությունն», հվգ. wesan «լինել, գոյություն ունենալ» և այլն (Arm. Gr., 435—436, ԵՒրմ. բ., II, 257—259)։ Հայոց գո- (go-) ձևը մեացել է ոչ թե հնդեվ. ves- ներկայի բնից (ve'sò), այլ անցյալի (perfectum) vos- (vóse) ձևից։

73. Գործ (ո հոլ.) «գործ, աշխատանք, պաշտոն, բանվածք, վարք», որից գործել, գործած, գործի «գործիք», գործարան, գործունակ «իանութիւն» և այլն։ Համմտ. հուն. ἔργον (<Fέργον) «գործ», ἐργάζομαι «կաշխատեմ, կրանեմ» ὄργανον «գործիք. գործարան», հբգ. werk, verch «աշխատանք, գործ, գործառնություն», գոթ. vaúrkjan «գործել, անել», ավեստ. vərəzyeiti «անում է, մշակում է, vərəza «գործ», նոր պարս. barz, varz «գաշտաւին աշխատանք»։ ԵՒրմատն է *verg'- (Arm. Gr., 436), որի երկրորդ (o-ով) հնչյունափոխ արմատից է հայոց «գործ», ինչպես ունենք հուն. ὄργανον «գործիք», անգլ. work «գործ, գործել», և այլն (ԵՒրմ. բ., II, 283—4)։

76. Գորա (ի կամ ո հոլ.) «գորտ, лягушка»=լատ. warde, լիտ. vorlė «գորտ» (Arm. Gr., 437)։ Թեպետ այս բառը և մեգրելերենում գորդի ձևով է և կովկասյան մի այլ լեզվում kuarti ձևով, այնուամենայնիվ դրանք դժվար թե փոխառյալ լինեն հայերենից, իսկ հայոց գորտ բառի հնդեվրոպական լինելը, ըստ իս, խիստ կասկածելի է, քանի որ միայն երկու լեզուներում են (հայոց և բալթիկ) և հավանորեն բնաձայն են։

77. Գտաւնիմ (տար. գտի, III դ. ե-գիտ). գտակ, գիւտ „находка", որն, ըստ իս, նորաստեղծ է գիտ- բայական բնից ա տնանոնի բառակազմական նեղմտծութեամբ։ Գիտ- արմատը=տանս. vid «գտնել», ներկան vindâti, տար. ávidat, passiv, vidyâtē, ավեստ. vindaiti «գտնում է, ձեռք է բերում», հին իռլ. finnaim «գտնում եմ, փնտրել եմ տալիս» (Arm. Gr., 437)։

78. Ի (գերանվ. վերջածանց)=տանս. tá-m, ավեստ. tə-m, հուն. τό-ν (հայց.) և այլն։ Նշանակության և ածանցման մասին տես ս գերանվանական վերջածանցի տակ։

79. Գալ<գայլ «մոր առաջին կաթը», գիտմ «ծիծ եմ ուտում», գիեցուցանեմ «ծիծ եմ տալիս, գիեցիկ» ծիծ ուտող, առնգի կուրծք ծծող=տանս. dhâyati «կաթ է ծծում», գերբ. dhītá- dhāyas- «գիեցում», dhēnú- «գիեցիկ» dhātrī- «գալակ, մայր», ավեստ. *daenu- «մատակ», պարսկ. dāya «գալակ», հուն. θῆσασται «գիել»,

θῆλυ *մոր ատինքը, պտուկը*, θῆλυς *դաստիարակ* լատ. fēlāre *ծիծ տալ, դիեց* fēmina *կին*, filius *որդի*, հվգ. taun *կաթ տալ*, tila *կնոջ ատինքը*, սլավ. doją „дою", dėte *երեխա*, дитя, լատ. dēju *անուշում եմ կաթով*, dēls *որդի* և այլն (Arm. Gr., 437)։

80. Θαλαρ *(n հոլ.) փոսուտ, կանաչութիւն, բանջար, մատղաշ թարմ=հուն.* θαλερός *ծաղկող, փթթող, թարմ*, θάλλω *ծաղկում փարթամանում եմ*, θαλλός *ոստ, ճյուղ, սաղարթ* θάλος *ընձյուղ։ Հայոց գալար բառը ունի վերջում -ար վերջածանց, ինչպես կա արդ-ար բառի մեջ* (Arm. Gr., 438)։

81. Դաբբին *(i-ա հոլ.) երկաթագործ, կա և գաբբին պըղնձոյ, հոդնակի* գաբբնայք *և այլն։ Հին իմաստն է վարպետ, արհեստավոր-ին վերջածանցով։ Համմ. լատ.* faber *վարպետ, արհեստավոր (երկաթագործ, պղնձագործ, հյուսն, քարտաշ և այլն)* fabre *ճարտարարուեն, վարպետութեան*, fabrica *արվեստ, արհեստ, գործարան, արհեստանոց*, *գոթ.* ga-daban *հարմարութեան*, ga-dōbs *պատշաճ, հարմար*, *լիտ.* dabinù *զարդարում եմ*, *սլ.* doba *հարմարութիւն* (удобный, добрый) *և այլն* (Arm. Gr., 438)։ *Թևախտ նախնական պարզ արմատն է* dhabh-, *բայց հայոց և լատինական ձևերը վկայում են* *dhabhro- *նոր կազմութեան մասին։ Առաջարանութիւնը* A. Meillet-*ինն է։*

82. Դեդեսիմ *գնա ու դեն եմ շարժվում, երթում=անես.* dhū *(ներկան* dhūnoti*) երերալ, ինտենսիվ՝* dōdhavīti, *դերբ.* dávidhvat- *շուտ շուտ երերալ, գնա ու դեն շարժվելը։ Հայոց բայը կրկնավոր է դեւ-=հնդեվ.* dhev- *արմատից* (Arm. Gr., 438)։ *Մի քանի գիտնականներ այդ արմատին տալիս են նախնական իմաստ շուժգին շարժուել (ծխի և փոշու մասին), որից՝ աւելորդել* (бушевать), *ինչպես հուն.* θύω, *հին սլավ.* дуть, *լիտ.* dùja *փոշի և այլն (Արմ. բառ., II, 478)։*

83. Դեռ *գնա,* еще, пока*=լիտ.* dár *(նույնը)։ Այս առաջարանութիւնը առաջարկել է Ա. Մեյեն* (MSL, IX, 150), *տես* Arm. Gr. 438. *բայց Ն. Մառը դերազասում էր հայոց դեռ բառը կապակցել վրաց* ძერ *(ჯერ «ջեր») մեռանելի հետ, որը իմ կարծիքով ավելի ճիշտ պետք է լինի, մանավանդ որ ձայնավորով դրանք մոտ են և երկու կից ցեղակիցների բառ են, նկատի ունենալով հին Հայաստանի տեղագրութիւնը։*

84. Դիզանիմ *(դիզալ) կուտակվում, հավաքվում եմ (ամբոխը, ամպը, ծուխը, ալիքը, մեղքերը)*, դեզ *«ջեղջը, կույտ», որից*

դիզադէզ, փրփրադէզ, դիզանալ և այլն։ Հնդեվ. *dheig'h արմատից է, համմտ. սանս. dēhi- «թումբ, պատնէշ, ամբարտակ», ավեստ. dīz, daēzayeiti «դիզում բարձրացնում է», uzdaēza «դնդ, պատ», paitidaēza «շրջապարիսպ», հին պարս. didā- «ամրոց», պարս. diz, dīz «բերդ, դղեակ», հուն. τεῖχος, τοίχος «պարիսպ, պատ». օսկ. feihucs «պատեր, պարիսպներ» (հայց. հոլ.)։ Arm. Gr., 439։

85. Դնեմ «դնում եմ, кладу, ставлю» (աոր. եդի, եդիր, եդ, եդաք, եդիք, եդին, II ապառնի՝ եդից, դիցես, դիցէ, դիցաք, դիջիք, դիցեն, հրամ. դիր, դիք, անց. դներ. եդեալ) =սանս. dádhāti «դնում է», աոր. ádhāt, ավեստ. daδāiti «դնում է, անում է, տանջում է», աոր. dāt, հին պարս. adadā «արեց», adā «տանջեցց», հուն. τίθημι (θήσω, ἔθη-κ-α) «դնում եմ, անում», հրգ. tāt «գործ», tuon «անել», սլավ. dějǫ, deždǫ, děti деть «դնել», լիտ. démi, dedù, dėti «դնել»։ Հայոց ed «դրեց»=*édhēt=սանս. ádhāt (Arm. Gr., 439)։

86. Դու «դու, ты»=հուն. դոր. τύ (աատա. σύ, ուր σ-<tv-), լատ. tū, գոթ. þu, հրգ. du, dū, սլավ. ty=առս. ты, լիտ. tû, պրուս. tou, tu, հին իռլ. tù, ավեստ. tûm, օս. du dı, հին պարս. tuvam, սանս. tuvám, tvám, հնդեվ. *tū և *tū ձևից՝ Սկզբի t իսկը ձայնեղ է միայն հայոց du-ի, նման օս. du-ի, և հայոց դերանվանական դ (=*to) հոդի մեջ։ Arm. Gr. 440։

87. Դուռն (դրան, հոգն. դուրք—դրաց) «դուռ, դուրս, բարդութեան մեջ դր- դրակից, «դրացի, դրանդ... կամ դռն- (դռան-)՝ դռնափակ, դռնապան, դռնաբաց և այլն=հուն. θύρα «դուռ, լատ. forēs, գոթ. daûr, հրգ. turi „Thür", լիտ. dùrys (հոգն.) «դուռ», dvāras «բակ», սլավ. dvĭrĭ (հոգն. dvĭri) dvorŭ «բակ, հին իռլ. dorus, ավեստ. dvar-əm (հայց.) պարս. dar, հին պարս. duvarayā «բակում», սանս. dvār, dur «դուռ»։ Հնդեվ. *dhvor-, *dhver-, *dhur-։ Հայոց ի դուրս «դուրս» (вон, вне, вы-) իմաստը «դուռն» բառի կապակցութեամբ կա և այլ լեզուներում, ինչպես հուն. θυραξε «դուրս» θύρηθι, θύρηφι «դրսում» լատ. forās «դուրս», foris «դրսեր» նոր պարս. dar «դուրս, դրսեր» (Arm. Gr., 440)։

88. Դուստր (-եր հոլ.) «դուստր, աղջիկ զավակը, дочь»=սանս. duhitár-, ավեստ. duγδar-, գաթաուավեստ. dugədar, նոր պարս. duxtar, duxt, հուն. θυγάτηρ, գոթ. daûhtar, Tochter, սլավ. dŭšti, «дщерь- дочь (дочерь)», լիտ. duktė։ Հնդեվ. հիմնական ձևն է *dhughotér-, հերկրորդական՝ dhughtr-՝ =dhugdhr-, (ըստ Bartholomae-ի Indg. Forsch. VII 54)։ Arm. Gr., 440։

89. Դուրգն (-ան հոլ.) «բրուտի անիվը»=հուն. τροχός «անիվ, բրուտի անիվ, դուրգն», հին իռլանդ. droch «անիվ»: Նախնական ընդհանուր ձևն է եղել *dhrogho- (կամ *dhrōgho-), իսկ հայերենում դուրգ— շրջված է *դրուգ ձևից, վերջածանց (նախկին հոլց. հոլովի) «ն»-ի հավելմամբ, ինչպես այդ հաճախ է լինում հայերենում (դուռ-ն, ակ-ն, ոտ-ն և այլն): Arm. Gr. 440:

90. եկն «եկավ»=սանս. ágan «եկավ, գնաց» (III դ. առ. gam «գնալ», գալ բայից)=հնդհվ. é-g^{w}em-t: Նույնարմատից են հուն. βαίνω «գնում եմ», լատ. venio «գալիս եմ», գոթ. qima «գալիս եմ», գերմ. komme և այլն (Arm. Gr. 441): Մյուս դեմքերը և առբիտից առաջացած ժամանակները և ձևերը առացվում են եկ- բնից՝ եկի, եկիր, եկաք, եկիք, եկին, ապառնին՝ եկից, եկեսցես... հրամ. եկ, եկայք, անց. գերբ. եկեալ, ներկ. գերբ. եկող: Կա և եկ- որպես բարդութ յան մաս՝ նորեկ, դեռևկ «նոր եկած», եկամուտ, նախնկող, երթևեկ, չեկ «անընդհատ գնալ-գալ» և այլն: Այդ եկ- ձևը մոռնում է դեկուցանել, իրարեկ կռվմութ յուններին մեջ, ինչպես ներկա գամ բառը մտած է զգամ բայի մեջ:

Հնդեվրոպական լեզուներում համապատասխան կար երկու արմատ, մեկը g^{w}em- «երթալ, գալ», ինչպես սանս. gamati, որից gatá- «գնացած», ágan «եկնա», gántu- «ճանապարհ», ավեստ. jamaiti «գնում է», լատ. venio «գալ», գոթ. qiman=գերմ. kommen և այլն: Մյուսը՝ g^{w}ā-. ինչպես սանս. ágām «գնացի» հուն. ἔρχ=դորիակ, ἔβαν «գնացի», βῆμα «քայլ», լիթվ. gāju «գնացի» և այլն: Հայոց եկ- բառը, ինչպես ցույց է տալիս եկայք «եկէք» հրամայականը իր նախկին -ka (-կա) բնով մտանում է այդ հնդեվ. g^{w}ā- ձևին (Արմ. բ., II, 676—677): Իսկ ներկայի բնի գա-մ ga-m ga- արմատը, ըստ իս, պիտի կապակցել խեթ. we ‖ wa- «գալ» արմատի հետ:

91. եղբայր (ավտ. եղբաւր) «եղբայր, брат» սանս. bhrátar-, ավեստ. brātar-, հին պարսկ. brātar-, նոր պարս. birādar, հուն. φρᾱτωρ կամ φρᾱτηρ «միաառիթյալի մասնակից», լատ. frāter, գոթ. brōpar, սլավ. bratrū և այլն: Հայոց եղբայր=հնդեվ.*bhrátor կամ *bhrātēr, եղբաւր=հնդեվ. *bhrātrós:

92. եղն (եղին) «էգ եղջերու»=սլավ. jelenĭ, լիտ. élnis «եղջերու, հյուսիսային եղջերու», կիմր. elain «եղնիկ», հուն. ἔλαφος (=elnbhos) «եղջերու», ἐλλός «եղնիկ, եղնորթ», հիռլ. elit «ուլ»:

93. եմ «եմ, կամ»=սանս. ásmi, ավեստ. ahmi, հուն. εἰμί,

լատ. sum, գոթ. im, լիտ. esmi, սլավ. jesmi, bu (–ll դեմք)= հոմեր. ἐσσί Հնդեվ. 1-ին դեմք=ésmi, ll ési և ésti։

94. bu «ես» я°=ա նա. ahám, ավեստ. azem, հին պարս. adam, հուն. ἀγώ, լատ. egō, գոթ. ik, սլավ. azŭ, լիտ. èsz, àsz, լեթ. es, պրուս. es, as։ (Համմտ. նաև տրպրտ. ieše, խոտ. iša-)։

95. bրասուսն (ի-ա հոլ.) «լեռոտք, նռռաուեղի, թանչք, լեռոտքի վրա վերքեր», կազմված է *երասա— արմատից և -ան վերջածանցից։ Հնդեվ. արմատն է pr̥kto-, որը կա հուն. πρακτός «հետոտք, սրբան» (Steiss, After) բառաձևով, բստ Bugge, Btrg. 12—13) տես Arm. Gr. 443, Ամմ. բառ., II, 771)։ Հյուբշմանը պր առուգրանութիյունը դնում է հարցականով։

96. bրգ («ոտ» հոլ.) երգ. песня=սանս. arká- «երգ, նուագ, հիմն» fk (սնս. rčás) «բառանավոր, քերթուած» (բստ Հյուբշմանի arká և fk նույն նշանակութիյամբ են. Arm. Gr. 443)։

97. bրդնում (առ. երդուալ, անց. դևրբ. երդունալ, հրամ. երդտիր) «երդվում եմ», երդումն (-ան հոլ.), որոնց բանն է երդու- (erdu-) նախնի ertu- ձևից։ Համմտ. օս. ard, art «երդումն, ուխտ», և թեկուզ նաև հին սլավ. rotŭ, rota «ուխտ», rotitise «երդնուլ»։ Հյուբշմանն (Arm. Gr. 443) և lF. Anz 10, 45. Ամմ. բառ., II, 781։

(Հայոց erdu և օս. ard անմահան փոխառութիյուններ են, համմտ. ակկադ. irtu «երդում»)։

98. bրեկ. երեկոյ, երեկոր, երեկորեալ, ցերեկ և այլն «երեկոյ, вечер»=սանս. rājas- «մթութիյուն, մուխ, մշուշ, ծուխ, շոգի», rajanī «գիշեր», գոթ. riqis «խաւար, մթութիյուն», հնսկ. rokkr «մթութիյուն, վերջալոյս», հուն. ἔρεβος «սաորերկրյա աշխարհի՝ դժոխքի խաւարը», ἐρεβεννός, ἐρεμνός «մութ, մթին, խաւարային», Հյուբշ. Arm. Gr., 443, Ամմ. բառ., II, 785։

99. bրևիմ «երեկոյ», երեկ «Ջոհալ մոլորակը, Saturnus», երեւլթ ևն=հուն. πρέπω «երևալ, աչքի ընկնել, թվալ, πρέπει պատշաճ է», —πρεπής «երևելի»։ Մեկեի այս առարկութիյունը ընդունելի է բստ Հյուբշմանի, եթե հանարևն prep- արմատի „p" հնչյուններբ բխած են p-ից (ոչ kʷ-ից), մի բան, որ առուգված է։

100. bրեք («ի» հոլ.) երեք, трu=սանս. tráyas, ավեստ. θrāyō, հուն. τρεῖς, լատ. trēs, գոթ. preis, սլավ. trĭje, լիտ. trỹs, Հնդեվ. *tréyes։

101. bրեց (-ս, -ամբ, -ունք, -անց կամ հետո երիցունիք, -ունեաց) «ավագ, մեծ, քահանա», որը համապատասխան է նա-

խոզուն preisk'hu- *ձևին։ Համեմատել հուն. πρέσβυς «ծեր», πρεσβύτερος «ծերագույն, երիցագույն», կրետ. πρεῖσγς, լատ. prīscus «հնավանդ, վաղեմի»։ Հնդեվրոպական ձևերի սկիզբն է *preis-g^{w}u-, *pres-g^{w}u-, իսկ լատինականինը՝ *preis -ko-։*

102. Երկաճ «ջրաղաց, ջրաղացի քար»=սանս. grāvan «սոճան հանելու քարը, քար», գոթ. quairnus «ջրաղացի քար», լիտ. girnos «երկնաքար», սլավ. žrŭny=առաց „жернов", կիմր. breuan «ձևաքի ագռիկ, երկնաքար»։ Հայոց երկաճ=հնդեվ, g^{w}rā-ni-?։

*103. Երկու (սեռ. երկուց)=հնդեվ *dwō, dwōu=սանս. dvā, qvāû, հուն. δύω, լատ. duo, գոթ. twai, գերմ. zwei, սլավ. dva, dūva և այլն։ Բարդությունների մեջ մնացել՝ երկու (երկոտասան երկոքին— երկոքեան), երկի- (երկնամ, երկերիւր, երկնակ), երկ- (երկբայեմ, երկդիմի, երկմիտ...)։ Մնացեալ կարծիքը, որ երկիւղ, երկնչիմ (երկեամ) նման կազմություն ունի, ինչպես գերմ. Zweifel «կասկած», հյուրշմանը վիճարկում է (Arm. Gr., 445)։ Նույն արմատից է նաև կր-կին (ինչպես ունենք՝ մե-կին, երեք-կին, չորեք-կին...)։ Հայերենում միայն այս երկու բառի մեջ է, որ երեք բառի ermատի ազդեցությամբ ձևակերպվել է երկու բառի սկիզբը (եր-կու), իսկ մյուս դեպքերի rk=dv համապատասխանությունը արհեստական է և հակապատմական, ինչպես՝ երկնչիմ, երկար (երկայն)։*

*104. և (եւ) «եւ» շաղկապը=սանս. ápi, նաև, դեռևս, էլ կից, հին պարս. apiy, ավեստ. aipi հենց, ըստ, մոտը, միջոցին, հուն. ἐπί «վրա, արա վրա» (dazu)։ Հնդեվ. *épi (Arm. Gr., 445)։ Ավելացնում են նաև թոխարներեն pi «նաև» (Արմ. բառ., II, 865)։*

*105. Եւթն (եւթան) «յոթ»=սանս. sapta, sápta, ավեստ. hapta, նոր պարս. haft, հուն. ἑπτά, լատ. septem, գոթ. sibun, սլավ. sedmĭ, լիտ. septyni։ Հնդեվ. *septṃ։ Նոր ձև է եաւթն (եօթն)։*

*106. Եփեմ «եփում եմ»=հուն. ἕψω «եփում եմ, խաշում եմ», ἑφθός «եփված», գալն և արմատակից են ὀπτάω «խորովում եմ, տապակում», ὀπτός «խորոված, եփած»։ Առաջիններն նախարմատն է *sephs- (տես Arm. Gr. 446 և Արմ. բառ., II, 871)։ Իմ կարծիքով «պատահական նմանություն» չէ հայերենի եփ- արմատին սեմական նման ձևեր կցելը, ինչպես՝ ասոր. efā «եփելը», ասուր. epû, նբր āfā «եփելը», եգիպ. âpa «խորովում» և այլն (Արմ. բառ. II, 873), քանի որ նման ազգակցություն կա և այլ դեպքերում («ցամաք, «փոխել», «շերտ» և այլն)։*

107. Զգենում (ասր. զգեցայ) «հագնում եմ», զգեստ («ուս

հոլ.)=սանս. vas «զգեստ հագնել, վրան մի ծածկոց գցել», vásīra «հագուստ, զգեստ», ավեստ. vaŋh (3-րդ դեմք՝ vastē). հուն. ἕννυμι «հագնվում եմ», ἕσθος «զգեստ» ἐσθής «զգեստավորում», լատ. vestis «զգեստ, հագնվելը», գոթ. vasti «զգեստ», vasjan «հագնվիլ» և այլն: Հայոց զգենում (<զգես-նու-մ) և զգեստ բառերի մեջ զ-ն նախածանց է:

108. Զերծանիմ «հրկիզում եմ, պրծնում եմ, ազատվում եմ», զերծում (զերծի) խլում եմ, պոկում եմ, զերծ «ազատ, ապահով», մեհենազերծ «մեհյան կողոպտող», սեղանազերծ «սեղան կողոպտող» են=սանս. sṛj. sarj «արձակել, ազատել ձեռքից, բաց թողնել», ավեստ. harəz «արձակել, թողնել», նոր պարս. hištan «արձակել»: Հայոց «արձակ» և «ապահարզան» բառերը փոխառություններ են իրաներենից (Arm. Gr. 446, Աբմ. բ., II, 937): Աչառող արմատն է երծ (սկզբի զ» նախածանց է), բայց այս երç- արմատը կարող է հայերին անցած լինել և ուրարտերենից, ուր erṣi (ertsi) dubi նշանակում է «ազատանցի, արձակեցի» (առաջի՝ ազատ արի, բաց թողի):

109. Ըղձբ-ք (ընդերաց) «փորոտիք, աղիք», գրվում է նաև ընտեր-ք և անեզական է: Համմտ. հուն. ἔντερα «աղիք, փորոտիք», սանս. antra-, āntrá-, «փորոտիք», սլավ. jetro «լյարդ» (ռուսաց ятро), ątroba «ույտроба փորոտիք», օսկ. entrai և այլն: Հայոց ըղձբ- ծագել է inder- <*ender-ից, ուր e>i ինչպես հինդ <*հենգ, հին <*հեն և այլն, իսկ «ընդեր» ընտրի պատճառով դառնում է ընդեր— աղիվելով թերևս (ըստ Հյուբշմանի) ընդ— նախդիրով կազմած բառերից: Հնդեվրոպական նախաձևն է *entero-:

110. Ըղձայ («ի» հոլ.) «նվիեր, ձոն», գրված նաև ըղձայ, ըստ Bottticher-ի (ZLMS. 1850. էջ 350), հետո նաև Լագարդի և Գատրնյանի, ազգակից է համարվում սանս. ghati կամ aḷiti «նուէր, պարգև» բառի հետ, որ բառարանից է միայն հայտնի: Հյուբշմանը (Arm. Gr. 448), համեմատությունը հարցականի տակ է դնում: Ըստ իս, այդ տուգարանությունը սխալ է: Իմ կողմից դիտված է, որ «ընկոյզ»-ը ստացվել է nigoz-ից, ընդղայ («ծովալին հրեշ») <ակկ. niggal-ից, և սպասելի է ընձայ<niça, որն իր վերջին «ա»-ով ստացել է ասորական (սիրիական) ազդեցություն: Ալնպես որ մաքուր արմատը (առանց- a) պիտի լինի niç-, որը համընկնում է, ինչպես ճիշտ դիտել է Ն. Մառը, վրացական niĉ-ի «ընծա» (մեգրելական ձև է) բառարմատի հետ: Թերևս niç- || niĉ- արմատը դալիս է ուրարտա-խուռիտական ընտանիքից:

111. Թաթաւեմ *«թաթախել»*, погружать *կրկնված է պարզ* thaw-, *որը գալիս է հնդեվ.* tar- *ձևից։ Համմտ. հալավ.* topiti *«ընկղմել, թաթավել, մխրճել», ռուս.* топить *«ընկղմել, խեղդել»,* утопать *«խեղդվել, ընկղմվել, մխրճվել»։ Այս ստուգաբանությունը տվեց* Müller-ը (Armeniaca, VI 2), *ընդունվեց* Meillet-ի *կողմից* (MSL. 9, 154). *Թեպետ Հյուբշմանը հարցականի տակ է դնում։ Տես* Arm. Gr., 448, *Աճ., Արմ. բ.*, II, *էջ 1081—82։*

112. Թանձր *(«ուռ հոլ.) «թավ, հաստ, ստուար։ Ազգակից են սանս.* tañč *(նկրկ.* tanakti*) «պնդել, ամրացնել, մակարդել, թանձրացնել», նոր պարս.* tanǰīdan *«պնդել, ամրացնել»,* tang *«նեղ», ավես.* taxma- *(<*tṇkmo-) «զորեղ, քաջ», լիտ.* tánkus *«թանձր», գոթ.* ga-þaihan *=գերմ.* gedeihen *«աճել» և այլն։ Այս օրինակները ցույց են տալիս հնդեվ. *tṇkû-, որի հանդեպ սպասելի էր հայոց *թանգու, այնինչ հայոց «բանձուս» ձևի համար սպասվելու էր հնդեվ. *tṇǵhû-։*

113. Թառամիլ *(‖ թոռոմիլ>թոռմիլ) կամ* թարշամիլ *(‖ թորշոմիլ>թոշոմիլ>թոշմիլ) «թառամելը=սանս.* tršyati *«ծարավում է», ավեստ.* taršna- *«ծարավ», հուն.* τέρσομαι *«չորանում եմ», լատ.* torreo *«չորացնում եմ», գոթ.* ga-þairsan ga-þaûrsnam, *«չորացնել»,* þaursus *«չոր», «ցամաք»,* þaurstei *«ծարավից», հին իռլ.* tart *«ծարավ» և այլն։ Հայոց* թարշամ *ձևը տալիս է Թորշոմ նոր (բարբառագիտական) ձևը, որոնք կորցնում են «ր» ձայնորդը, դառնալով* թառամ *և* թոռոմ։ *Համեմատել մոռանալ<*մորշանալ, առաքինի, <*արշաքինի, առն<*արշն։ Հայոց Թարշ-ամ *(‖ Թորշ-ոմ) բառաձևերը ունեն նոր -ամ ‖ -ոմ ածանցները (համմտ. ճառ-ոմ<*ճառ-ամ-<ճառ արմատից)։*

114. Ի *հարցական դերանունը՝ գ-ի «ինչ» էր (սեռ.) իմ, (առիմ), իւ (ինչով), *ի՛ք (չ-ի՛ք), իրի՛ք, իմի՛ք, իմի՛ք, իւի՛ք=հնդեվ.* kʷi- *«ով», ավեստ.* či-š *«ոմն», սանս.* ki-m *«ինչ», «ինչու», հուն.* τίς *(չեզոք* τί*), լատ.* quis, quid *և այլն։ Թեպետ Հյուբշմանի համար անհավանական է թվում, ի նկատի ունենալով հնդեվրոպական բառասկզբի *kʷ պահպանվելը հայերենում (համմտ. չոր-ք=*kʷet-vores), բայց էլի համաձայնվում է Մեյեի այս ստուգաբանությանը, որ կարելի է օրինք ընդունել, որ բառասկզբի հնդեվ.* kʷo- kʷu-, kʷi *խմբակցությունները այդ* kʷ- *հայերենում ընկնում էր։*

115. Իժ *«իխ» հոլ.) «թունավոր օձ=սանս.* áhi-, *ավեստ.* aži- *«օձ», հուն.* ἔχις, ἔχιδνα *«իժ», «*гадюка*»։ Հնդեվ.* *cgʷhi-*։ *Համեմատում սպասելի էր *հգ (*eg) կամ *հջ (*eǰ). Թեպետ *հժ (*ež)*

ձևն էլ հնարավոր էր։ Գուցե հարց իմ ձևը հնդեվ. *eg^{w}hi- (երկար ē-ով) ձևին է համապատասխանում։ Իրանական փոխառութիւն չի կարող լինել հակառակ Chr. Bartholomae-ին (St. II, 34), որովհետև համեմատում այդ դեպքում սպասելի էր *až (=ավեստ. ąži-, ինչպես ունենք ąži-dahaka=աժդահա)։ Arm. Gr., 450։

116. Իճձ կամ իձձ (տուն հոլ.) «ինձ» „барс, леопард" (գազան է)=ասես. sṭhā—տառապ։

117. Իճճ (հոգն. իմանք, անս. իմանց) «ինք»=սանս. nāva, ավեստ. nava, հուն. ἐννέα, լատ. novem, գոթ. niun, սլավ. deveti, լիտ. devyni և այլն։ Հնդեվ. *nevn̥ և *envn̥։

118. Իւր «յուր. сваи» «իր իւ— մասով համապատասխան է =ավեստ. hava- «անփական, իրեն հատուկ», հուն. ἑός, լատ. suus =sovos, օսկ. sûvad? Սպասելի էր հնդեվ. *sevo-ի դիմաց հայերեն եւ (ev-)։

119. Լայն «լայն, широкий»=սանս. prthû- «լայն, ընդարձակ», práthatē «լինդլայնի», práthos- «լայնութիւն», ավեստ. fraθah- «լայնութիւն», հուն. πλατύς «լայն» πλάτος «լայնութիւն», լիտ. platûs «լայն», հին իսլ. lethan, կիմր. litan «լայն» և այլն։ Հայոց բառը հանում են հնդեվ. *plātno- ձևից, թեպետ կա կարծիք, որ լայն բառի արմատն է լ-, լա, իսկ -այն ածանց է ուն-այն, երկ-այն, ամեն-այն, համ-այն և այլ ածականների մէջ։ Arm. Gr. 451, Աբմ. բ., III, *151—152*)։

120. Լաւ «լավ, лучший»=հուն. λωίων ավելի լավ, лучший <*λωFων կամ լիտ. lābas «լավ»?։

121. Լափել «լափիլ»=հուն. λάπτω «լափում եմ», λαφύσσω «ագահաբար ուտում եմ», լատ. lambo, հին վերին գերմ. laffan «լափիլ»։ Արմատը ընդունում է lāph (Bartholomae, BB. 10, 289) կամ lab (Brugmann, Kluge)։

122. Լեարդ «լիր» «լերդ, печень»=սանս. yákṛt (անս. yaknás), ավեստ. yākarə, նոր պարս. jigar, հուն. ἧπαρ, լատ. jecur, լիտ. jeknos (հոգն.) պրուս. iagno (=jagno?), գերմ. Leber, հին վեր. գերմ. lebara, հիսլ. lifr։ Ըստ Ych. Schmidt-ի (KZ 25, 23, Pluralbildung, էջ *199*) նախաձևն է *lyēk^{w}rt։

123. Լեզու «լ-ա հոլ.) «լեզուա»=լիտ. lēžùvis, իսլ. ligur։ Առանձին ձևերը կարծես թե հնդեվ. ligh- «լիզել» արմատից են և մյուսների հետ ազգակից, թեպետ և շատ հետու, ինչպես սանս. jihvā, լատ. linguu (հին ձևն է dingua), գոթ. tuggō և այլն։ Նախաձևն է *dnguā?

124. Լի (ած հոլ.) «լի, լիք»<*plēyo-=հուն. (հոմեր.) πλεῖος «լիա, լաս. ex-plē-nu-nt «լցնում են», հիռլ. linaim «լցնում եմ», սանս. prā «լցնել», հուն. πίμπρης «լիա», πι-μ-πλη-μι «լցնում եմ», լատ. plēnus «լիա և այլն: Համմտ. լը-նում և լիր:

125. Լիզել (լէզ-) «լիզել»=սանս. rih, lih «լիզել», ավես. riz, նոր պարս. lištan (ներկան՝ lēsam<*lēzam), հուն. λείχω, լատ. lingo, գոթ. bilaigōn, «belecken» սլավ. lizati, ližą, լիտ. lēszti, lėžiù, հին իռլ. ligim: Նախաձևն է *ligh:

126. Լոգանալ (լոգացալ) արմատն է լոգ=հուն. λούω, «հոմեր. λόω=λόϜω «լոգանում, լվացվում եմ», լատ. lavo (id.):

127. Լոյս («ած), լուսին («իա և «ած), լուսն (հոգն. լուսունք), «աչքի վրա սպիտակ փութ, бельмо (=հուն. λευκός «լուսավոր, պայծառ, սպիտակ», լատ. lux «լոյս», lūceo «լուսավորում եմ», lumen (<*leuksmen) «լույս» lūna (<*louesnā) «լուսին», Lucerna «ճրագ», հին իռլ. lōche «փայլակ», սլավ. луча «ճառագայթ», луч «փայլ», луна, лысый, սանս. ruč, rōčate «երևիլ, փայլիլ», rōka- «լուսավոր», ավես. raočah- «լույս, փայլ և այլն: Հնդևրոպ. արմատն է luk և luk', հայոց lois=louk'o-, լուսին=*louk'eno-, լույս=*luk'ōn:

Այլ հնդևր. luk (‖ luk') «լույս», *արմատը գտնվում է գրեթե բոլոր հնդևրոպական լեզուներում և բարբառներում: Գործ է ածվում և նորագրաս խոթերենում, ուր* luk- *նշանակում է «լուսանալ»:*

128. Լու (ած հոլ.) «լու միջատը»=աֆղ. vraža (<իրան. *brusā), սլավ. блоха, լիտ. blusá, հիմնական նախաձևն է *bhlusā, իսկ հունարենում ունենք φύλλα =*bhsulja (դրափոխութ.):

129. Լու «լսելը», լու առնեմ «լսել եմ տալիս», լու լինիմ «լսվում եմ», լու ի լու «լսելով, լսվելով», ի լու «հնազանդ», լուլսեմ բալի անցյալ բունը (լուալ, լուալց, լուանալ, լուր— լուարուք) լուացանիմ, լուսկան «լսելու բանն», լուր «տեղեկութ., համբավ, հնազանդութ., ձայն», լուռ «լուռ մնացած» (ինչպես՝ լսող)=սանս. çru «լսել», çrutá «լսել», çrutá «լսած», çrùti- «լսելը, լուր, տեղեկութ.», çruš «լսել», ավես. sru «լսել» (srūta- «լսած»), sruš «լսել», հուն. κλύω «լսում եմ», κλυτός «հռչակավոր», լատ. cluo, in-clutus, գոթ. hliuma «լսելը, լսողութ.», հվգ. hlūt «բարձրաձայն», իռլ. clunim «լսում եմ», cluˊ «փառք», սլավ. sluti, slovą «հռչակվել», slyšati „слышать", слух, լիտ. klùsti, klausýti «լսուլ և այլն:

Հայոց lu=հնդեվ. *k'luto- կամ k'luti-։ Հայոց յա-ն-մ <*lus--e-m< հնդեվ. k'lusk'ô? (Barth., Stud. II, 41, 48)։ Անցյալ կատարյալի բնից՝ լուալ, լուար..., լուալց, լուեալ, լուր— լուարուք, լուացանեմ միջին դարերում (X—XII դ.) ըստ անալոգիայի դառնում են՝ լանցի, լանել (լսած), լսիր և այլն։

130. Լուացեամ (առր. լուացի) «լվանում եմ», հրամ. լուա, անլուալ կամ անլուաց «չլվացված», լուալիք «բաղնիք»=հուն. πλύνω «լվանում եմ», πλυτός «լվացած», սանս. â-plu «լվացվել, լողանալ», լիտ. pláuti «ողողել»?։

131. Լուծ («ոգ հոլ.) «լուծ, ярмо*», որից լծեմ. համմտ. սանս. yugá-m, նոր պարսկ. Juγ, հուն. ζυγόν, լատ. jugum, սլավ. иго «*иго», լիտ. jùngass, հնդեվ. *yugó-m.

132. Լուսաւուցք (հոգն.) «լուսան գազանք»=հուն. λύγξ (սեռ. λυγκός), հվգ. luhs. գերմ. Luchs, լիտ. lùszis, պրուս. luysis, սլավ. rysi „рысь", Fr. Müller, Armeniaca, VI, էջ 3։ Հայոց բառի հնդեվ. արմատն է *louk'-, հուն. բառինը՝ *lunk'-=luk'n- հին գերմ. luchs<luk's-, (Arm. Gr., 454)։ Հր. Աճառյանը նշում է նաև հայ բարբառային ձևերը— Ղարաբաղի լյուսիմն (լիւսինը) և Ղազախի լիսամ, որոնք նշանակում են «կզազքիս» (Արմ. բառ. III, էջ 283)։ Ըստ իս, սյստեղ ունենք նույն -ամն ածանցը, ինչպես աթնաման բառի մեջ պարզ ալծ ձևից։

133. Լուցանիմ «վառում եմ», լուցկի և բարդութիւններում (ճրագալոյց, լուցափայտ «լուցկի, կրակալոյց» ևլն)=հնդեվ. *louk'-արմատից է, ինչպես լոյս բառը, միայն ավելացած s ածականը, սյսինքն՝ *louk's-, ինչպես ունենք վեց =*svek's կամ հարց-(անեմ) և հարս (<*prek'-) բառերի կազմութիւնը։ Իմաստի տեսակետից (լոյս և լուցանել «վառել») համեմատել ավեստ. aiwiraočayeiti=նոր պարս. afrôzad «լուցկի է վառում» luk- (=ավեստ. ruč-) «լոյս» արմատից։

134. Լքանիլ (առր. լքի, լքեր, ն-լիք...) «ձգել, թողնել, կրավ. լքանիլ, «թողնվել, անճարականալ», որի լիք- արմատը=սանս. rič- (riṇákti) «թողնել, պարպել, արձակել, ոչնչանալ», ավեստ. irič- «թողնել, լքել», նոր պարս. gu-rêxtan «գրկվել, խուսափել», հուն. λείπω, λιμπάνω «թողնել», լատ. linguo «թողնել, լքել», գոթ. leihva=գերմ. leihe «փոխ եմ առնում», լիտ. lêkù, likti «թողնել», հետ գցել, մնալ» և այլն։ Հնդեվ. *lik^w-, հայոց ելիք=հուն. ἔλιπε։ [Իգդիրում, Տաշրուրունում լքվիլ նշանակում է «ջան հարձակվելը որսի վրա, набрасываться», որը լքանել,

լքել «ձդել, թողնել» հին իմաստով բայն է և ոչ լինել «լրբանալ» բայը, որից իբրև թե կան Ալաշկ. լքնել «հարձակիլ, վրան լքնել, վրան հարձակիլ», տես Աճառ. Արմ. բառ., III, 237—238 Գ. Ղափ.]։

135. Ծաղր (ծաղու) «ծաղր, ծիծաղ ծաղրական, ծիծաղիմ, ծիծաղկոտ են, իրեն ծաղ- արմատով=հուն. γέλος, γελως «ծիծաղ, ծաղր», γελάω «ծիծաղիմ», γελαστός «ծիծաղելի» Հնդեվ. *g'l-(‖ gél- ‖ g'ol-), ծիծաղ <*ձիձաղ [համեմատել խեթ. me-mal «ալյուր», mal- «մաղել, աղալ արմատից]։

136. Ճաճ-եայ «ճանաչելի, ծանաւթ. ծանուցանել ևլն, որի նեռևան ճան-աչ-ել <*ճանաչել (նորընթաց առնմանութեամբ)= սանս. jnā (jānâti) «ճանաչել, գիտել, ծանոթ լինել», jñātá- «ծանոթ», jñāti- «խնամի», ավեստ. zan- «ճանաչել, գիտենալ», հուն. γι-γνώσκω- նպեր. γνώσκω «ճանաչիմ», γνωτός «ծանոթ, խնամի, ազգական, եղբայր», լատ. gnō-sco, nōsco «ճանաչել, գիտենալ, սովորիլ», գոթ. kann «գիտեմ», kunnum «գիտեմք», kunnan «գիտենալ», գերմ. kennen, լիտ. žinaũ, žinóti «գիտենալ», սլավ. знать, знаю և այլն։ Հնդեվ. *g'n̥- =ծան- (մյուս ձևերն են *g'e-nē-, g'enō, g'nē-, g'nō-)։

137. Ծեր «ոտ հոլ.) «ծեր, ծերուկ»=սանս. ja'rant- «ծեր», օսս. zärond «ծեր», նոր պարսկ. zar «ծերուկ», հուն. γερων (γεροντ-) «ծեր, ծերունի»։

138. Ծին «ծնունդ, ծագումը», ի ծնէ «սորից ծնած ժամանակից», ծնունդ (-նան, -նէ, -նամբ, ծննդոց), ծննդական «լոյս. ծնօղ, ծնանիմ, բազմածին, ընդոծին, միածին ևլն, որոնց ծին արմատը (հնդեվ. g'en.) =սանս. jan (ja'nati) «ծնանել, ծնվելը», jāta' -ծնված», jánas- «ցեղ, սերունդ», janiman- «ծնունդ, ծագում, հատնորդք», ավեստ. zī-zan-āt «կծնվիմ», zāta- «ծնված», հուն. γί-γν-ο-μαι «լինում եմ, դոյանում, ծագում եմ», γέν-σι-ς «ծագումն», γενος «ցեղ, սերունդ», լատ. gi-gn-o «ստեղծում եմ, ծնում եմ», genus «ծնունդ. սերունդ», գոթ. kuni «ցեղ», գերմ. kind «արդի» ևլն։

139. Ծնաւտ «կղակի ամբողջ ոսկորը, челюсть», համմտ. հուն. γένυς «ծնոտ», γναθμός «ծնոտ, ատամ», γνάθος «ծնոտ», լատ. gena «ատամ», գոթ. kinnus «ծնոտ, ատամ», գերմ. kinn «ծնոտ», սանս. hánu-, hánū- «ծնոտ», նոր պարս. zanax, «բալուճիի» zanūk, zanīk «ծնոտ» և այլն։ Հայոց ծնաւտ բառը ծագել է *հին- աւտ, ինչպես ծղաւտ ծիղ -աւտ ձևերից։

140. Ծունր *(հոգն. ուղղ. ծունկ-ք, հայց. ծունկս, սեռ. ծնգ-ոց)* «ծունկ»=հուն. γόνυ «ծունկ», γνύξ «ծնկի վրա», γωνία «անկյուն», լատ. genu «ծունկ», գոթ. kniu, «ծունկ», սանս. jānu «ծունկ», ավեստ. žnū-m *(հայց.)* «ծունկ», պեհլ. zānūk=նոր պարս. zānū (id.), խեթ. genu «ծունկ»: Հայոց ծունգ ենթադրվում է g'onwi *(կամ g'omwi)* հնդեվ. ձևից, ուր ի չնդոք սեռի երկակի ուղղ. հայց. ձևն է *(ըստ Մեյեի)*:

141. Ծուռ «ոչ ուղիղ, թյուր, կորց, ծռել, ծռություն, ծամածռուռ, ծնքածուռ, ծուռումուռ ևլն=հուն. γῦρός «կոլոր, կորացած, γῦρος շրջանակ, բոլորակ, ծոր, γυρόω «ծռել, կորացնել»: Նախնական *g'uro-ի Դրանցից գուրս, ասիենքն՝ հաբերենից և հունարենից բացի, այս բառը այլ ևերկայացուցիչ չունի: Սուռգարանությունը Մեյեինն է (MSL, VII, 165):

142. Կաղին, «կաղնի ծառի պտուղը՝ պնդուկ, ֆընդըխ» արքայական կաղին, խոզակաղին, կաղնատուուղ, հնդեվ. *g^we leno-=հուն. βάλανος [դորիական՝ γάλανος], լատ. glans (սեռ. gland-is), սլավ. želądĭ „желудь", լիտ. gilė, պրուս. gilē:

143. Կեալ «ապրիլ» *(կեցի<*կեացի)*, կեանք *(կենաց)*. կենցաղ, կենդանի..., հնդեվ. *g^wyō-, g^wyē- արմատից, ինչպես ասիս. gyōtum *(հայց.)*, gyāīti «կյանք», հուն. ζῆ «ապրում է», ζή-σω «կապրեմ», ζή-σομαι (id): Բայց կա և *g^wiv- արմատաձևը, որից սանս. jīvati «ապրում է», jīva «կենդանի», jīvitā-jīvitu «կյանք», հուն. βίοτος, βιοτή «կյանք, բարիք, կարողություն, լատ. vīvo «ապրում եմ», vīvus «կենդանի», գոթ. kius «կենդանի». սլավ. живъ կենդանի, животъ «կյանք», լիտ. gývas «կենդանի» gyvatà «կյանք», հին իռլ. bíu, béo «կենդանի» և այլն:

144. Կեղ *(«ոչ հուլ.)* «խոց, ուռուցք, պալարց, կեղել «առնչել, նեղել»=լիտ. gélti «ուժեղ ցավել, ցավ զգալ (ոսկորի, առամի, ոսի և այլն), gelonis «պալարի թանձրացած թարախոց». սլավ. žali „жаль", գերմ. Qual «ցավ, չարչարանք», հին վերին գերմ. quālan «ցավ զգալ»: Արմատն է g^wel (Meillet, MSL 8, 165): Հր. Աճառյանը ավելացնում է նաև կեղ-եր-ել «չարաչար առնչել, բզիկ-բզիկ անել, պատառոտել» (Արմ. բառ., III, 1124):

145. Կեր *(«ոչ հուլ.)* «առնելիք, կերակուր, կեր (անասնոց)», «կեր-ի «կերած» (ուտեմ բայի անց. կատ.),— կեր բարդությունների երկրորդ կոմպոնենտ (արմատակեր, շատակեր...), կուր- անասունների ուտելիք, կերակուր *(«ոչ հուլ.)*, կերակրել և այլն=հուն. βι-βρώ-σκω «ուտել, լափել, ճարակել», βορά «կեր, ճարակ անասնոց»,

βορός «որկրամոլ», լատ. voro «կուլ տալ, լափել», vorus (օրինակ carnivorus «մսակեր»), հին բ. գերմ. quërdar «խոյի ձկան», լիտ. geriù, gérti «խմել», սլավ. zirą, žrěti „жрать", grůlo „горло". Հնդեվ. արմատն է *g^{w}er-։

146. Կին (անտ. կնոջ, գործ. կնաւ, հոգն. ուղղ. կանայք, հայց. կանայս, ս.-տր., բաց. կանանց, գործ. կանամբք — կոլեկտիվ՝ կանանի (-նուլ), կանացի և այլն=սանս. gnâ- «աստվածամայրը», jánī- «կինը», jāni «օրինավոր ամուսինը», ավեստ. (գաթա) gənā-, ավեստ. γnā- «կինը», նոր պարս. zan, գոթ. qēns, qinō «կինը» (weib), հիսլ. kona, հուն. γυνή (անտ. γυναικός), «կին, ամուսին», բնատ. βανά, պրուս. genne, gənno «կինը» (weib), սլավ. žena «կին» և այլն։ Հայոց կին=հնդեվ. *g^{w}en- կամ *g^{w}-en-, հայոց կան-= հնդեվ. *g^{w} n-։

147. Կալնիմ (առր. III դ. նկուլ) «կուլ տալ», կլնում, բարդութիւններում -կուլ (ամենակուլ, լեռնակուլ, աշխարհակուլ), ընկլնում, ըն-կլուզ-անիմ և այլն, որոնց կուլ- արմատը=լատ. gula «կոկորդ» glūtio «կլանում եմ», գերմ. kehle «կոկորդ», հին իսլ. gelid «լափում է», սլավ.- glūtati «կուլ է տալիս», glūtŭ «կոկորդ»։ Հայոց կուլ-=հնդեվ. g^{w}ul-։

148. Կոգի (կոգուլ) «կարագ=սանս. gavya- «կովից ստացված, կովից առաջացած» (կաթ, պանիր, կարագ, մեզ, թրիք), ավեստ. gāvya- «կովից ստացված» (=կաթ), gaoya- (id)։ Հայոց կոգի հնդեվ. *g^{w}ovio-։

149. Կով (ու հոլ.)=սանս. gārús «կովս», ավես. gāuš «եզ, կով», նոր պարս. gāv «եզ», հուն. βοῦς (անտ. βοFος) «եզ, կով», լատ. bōs (անտ. bovis) «եզ, կով» հին գերմ. chuo, լիտուա. gůvs «կովս», սլավ. govedŏ «եզ», հին իսլ. bō «կով»։

150. Կու («ոտ» հոլ.) և ավելի հին կոյ («ին» հոլ.) «անասունի ազգ», որից կոլաղնդիա «ազգի մեջ սպրող բզիզ», կոլանոց «ազբանոց», կոլաջուր և այլն=սանս. gūtha- «ազգ, կղկղանք», ավեստ. gūθa-, պարս. gūh, քրդ. gū, gau, սլավ. govĭno „говко" և այլն։ Հայոց կոյ<հնդ. govyo (համմտ. սլավ. govĭno) կամ gouto, իսկ կու<gūto, այնինչ հնդիրանական ձևերը ծագում են *gūtho- ձևից։

151. Կռունկ «կռունկ թռչունը»=հուն. γέρανος, լատ. grūs, հին բ. գերմ. chr-an-ah, լիտ. gérvi, պրուս. gerwe, սլավ. žeravl „журавль, կորն. կիմր., բրետ. garan «կռունկ»։

152. Կրծեմ «առաջին ակռով կտրել, փրցնել», կրծում, կաշառակուրծ, կրծելի «ագահ, կծծի»=սլավ. gryzą, grysti, «կծել, խածնել»,

լիտ. yráu- žiu, grāužti «կրծել, ատամներով պոկել (ոսկորի վրայի մսաը)», gružinéti «կրծոտել», լատ. graûžu «կրծել», ռուս. грызть և այլն։ Հայոց ձևը կուրծ, որը շրշված է հին *grug'-ից։

153. Հայր (սեռ. հաւր)=սանս. pitā (սեռ. pitúr, արտ. pitrê), ավեստ. pita, պարս. pitar, հուն. πατήρ (սեռ. πατρός), լատ. pater գոթ. fadar, հին իռլ. athir։ Նույն արմատից է հարու ‖ յարբայ «խորթ հայր»։ Հայոց հայր=հնդևր. *pətēr, անատական հաւր= հնդևր. pətrós։

154. Հաւ («ա» հոլ.) կամ հաւի (-ւոյ), նվազ. հաւիկ=լատ. ānus «պառավ կին», աֆղ. anā «տատա», հին բ. գերմ. ana «տատա», ano «պապա», գերմ. Ahn, Ahne «պատա», պրուս. ane «պառավ մայր», լիտ. anýta «խորթ մայր»։ [Իմ կարծիքով հայոց han- անմիջապես իր սկզբնական «ն»-ով մտանում է խեթական hanna- «տատ» բառին]։

155. Հասանիմ (աորր. հասի) «հասնել, ժամանել, հասունանալ, հաս («ի» հոլ.) ուրք, հարկ, հասու լինել, հասուն, հասակ (стан, возраст), հասոյթ ևլն=սանս. (aç açnóti) «հասնել, ձեռնհաս լինել, գտնել, ժամանել, փափագածին հասնել», ավեստ. aš- naoiti «հասնում է», սանս. aç, ավեստ. aš, որպես հնդևր. *ņk', պիտի հավելենում փոխանցվեր *ans կամ *h-ans ձևով, որի ns հնչյունները գալով հնդևր. *nk'-ից կամ *ns հավելենում պիտի ևս էին s ձևով, այսինքն բառը պիտի լիներ *as կամ has, ինչպես նմանը ունենք ուս, միս և ամիս բառերում, ուր s-ից առաջ եղել է m ձայնորդ հնչյուն։ Հր. Աճառյանը այս հաս- արմատին է կցում և հասկանալ, ևս կհամեմատեի ռուսաց достигать «հասնել» և постигать «մտքով հասնել, հասկանալ» նույնարմատ բառերը։

156. Հաստ «ամուր, հաստատուն»=գերմ. fest «ամուր», հին սաքս. անգլ. fast, հին իսլ. fastr և այլն, որոնց նախկին ձևն է *fastu։ Այդ արմատը գտնվում է հավելենում և գերմանական լեզուներում։ Հայոց «հաստատ»-ից է հաստատ ածանցյալ բառը։

157. Հարսն (հարսին, հարսունք) «հարս» նույնարմատ է հարց («ի» հոլ.) բառին, որոնք հնդևր. *prk- «հարցնել» արմատից են։ Համմ. սանս. praçna- «հարցում, ծանոթություն հակառակություն», prččháti «հարցնում է», prčchā- «հարցում», ավեստ. frašna «հարցում», pərəsaiti «հարցնում է»=պարս. pursad, լատ. precor, proco, posco (<*porc-sco) «ուզել, աղաչել, խնդրել, պահանջել», գոթ. fraihnan «հարցնել» հին ի. գերմ. forsca «հարց,

նդիրք», forscôn «հարցնել», գերմ. fragen, սլավ. prositi և այլն: Հալոց ճարսն=հնդեվ *prkēn, հարց<հնդեվ. prk'-sk'- աճական ձևից, արմատական k'-ի անկումով, իսկ prek'- «խնդրել, հարցնել» մասնավորապես ստանում է «ամուսնութլուն խնդրել» իմաստ (լատ. procus «աղջիկ հարցնող», լիտ. peršù, pìršti «հետը ամուսնանալու համար աղջիկ փնտրել» և այլն):

158. Հացի (հոդն. սեռ. հացեաց) «հացենի ծառը»=հբգ. asc, հին. ascr, լիտ. ûsis, գերմ. Esche, ռուս. ясень:

159. Հաւ (ռուս հոլ.) «թռչուն, հավ, աքաղաղ»=լատ. avis «թռչուն»:

160. Հաւ—«պապ, նախնիք»=լատ. avus «պապ, նախնիք», avun- culus «քեռի», գոտ. avō «տատ», լիտ. avýnas «քեռի», պրուս. avis «քեռի», սլավ. ujĭ «քեռի»:

161. Հեղում «ջուր եմ թափում», հեղեղ (<հեղ-հեղ), ողողեմ «հեղեղում եմ, ջրով մաքրում եմ», հեղուկ, զեղում, զեղանիմ «թափվելու չափ լցվել»=լիտ. pilù, pìlti «թափել, լցնել», pìlituwas «ջրի գալը», լատ. pilu, pilēt «կաթկթել, ծորել շատ բարակ վազել», pîle, pîlens «կաթել», pali, pal'i «գետի զեղում», ռուս. водо-поль, поло-водье «գետի հորդում», по́лая «եզերքներից դուրս հորդած ջուր» (Arm. Gr., 466 Արմ. բ., IV, 242):

162. Հեծում «հյուսում եմ», կա նաև ճաճում հին ձևը և մանավանդ ճիճեմ թե հին և թե ալժմյան (ժողովրդական) ձևը, որի, հեն- || հին- արմատի հետ ազգակից են լիտ. pinù, pinti «հյուսել», լատ. pinu, pît «հյուսել», հին սլավ. pęti (pīną) «լարել», pąto «կապոց», չեխ. pnouti «լարել», ռուս. за-понъ «գոգնոց», գոթ. spinnan «մանել, հյուսել». գերմ. spinnen, spannen և այլն: Մուրաբյանը Müller-ը (Armeniaca, VI, էջ 4), Հր. Աճառյանը վերցնում է հալոց երեք արմատաձև ճեճ, նկատի ունենալով բարբառային հէնք ձևը, և ճեճ, ճաճ ձևերը (Արմ. բ., IV, 292):

163. Հեռի «տևողով կամ ժամանակով հեռու», *per- նախարմատով մոտ է՝ սանս. pára- հեռու, ի բացակ, յայնկոյս, յառաջ ժամանակակ, parás «հեռու, հեռացյալ», ավեստ. parō, հուն. πέρᾱ «հեռուս (ըստ տեղի, ժամանակի, չափի), πέρᾱν «գետի այն կողմը», περαῖος «այն կողմը գտնվածը», գոտ. fairra «հեռու», հբգ. fërro= գերմ. fern «հեռու» և այլն:

164. Հետ («ոտ հոլ.) «ոտքի հետք», զհետ «հետևից», հետըզհետե «քայլ առ քայլ», հետևակ, հետի «ոտքով», նոյնհետայն «նույն ժամին, իսկույն, որովհետև, հետամուտ, հետազօտել=սանս.

padâ- քայլ, հետք, կնցած տեղը, տաք», patti- «հետեւակազնաց», ալնատ. paδəm «տաքի հետք», պարս. pāi «տաքի հետք», բնլուճ. pad «տաքի հետք», padā հետեւից, հետը, վերջը. օսս. fād «հետք», հուն. πεζός «հոտս, հետի, հետեւակ», լեռ. բնոտ. *pēδā հետեւից, գրկեն, հետը, միասին, լատ. peda «մարդու ոտքի հետք», pedes «հետեւակ», լիտ. pėdà «տաճնուչափ, ոտքի հետք», լատ. péz «հետս, հետեւնլը», pēda «հետք» և այլն: Հայոց het=հնդեվ. *pedo- «տաքի հետք», հայոց յետ «հետեւից, գրկեն» իմաստով=լեռ. բնոտ. *pēδā և այլն, իսկ ոտ-ն (ոտ-ք). որ ուղղականի ձևն է նույն արմատի (*pod-s) տես ատանձին:

165. Հերիւն (-ևան հոլ.) «ծակելու գործիք, մախաթ, բիզ»=հուն. πείρω «ծակել», πρόνη «ծակելու գործիք, ճարմանդ, գնդասեղ և նմաններըը», πορόω «ծակել», սլավ. na-perją, na-periti, «ծակել»: Հնդեվ. արմատն է *per-:

166. Հերու «անցյալ տարի»=սանս. parut, հուն. πέρυσι, դոր. πέρυτι, մրգ. vērt, հիւլ. inn uraid «անցյալ տարի», նոր պարս. pār «անցյալ տարի», օսս. farā, faron «անցյալ տարի», վախի pard «անցյալ տարի»: Հայոց հերու=հնդեվ. *peruti:

167. Հին «ոս» հոլ.) «հին, վաղեմի, հնացած ժամանակ»=սանս. sána- «հին» sanaká «հինավուրց, վաղեմի», ալնատ. hanō «հին, ծեր», hana «ծեր, կին», պրլ. hān, հուն. ἔνος «հին», լատ. sen-ex, հայց. senem «ծեր», գոթ. sin-eigs «երէց», sinista «երիցագույն», լիտ. sēnas «հին», հին իռլ. sen «հին», կիմր. kyrn. hēn, բրետ. hen:

168. Հինգ (չհոլովվող, հետագալում՝ հնգից) «հինգ», հնգետասան «տասնհինգ». հինգերորդ=սանս. páñca, ալնատ. panča, նոր պարս. panǰ, հուն. πέντε, լատ. quinque, գոթ. fimf, լիտ. penki, սլավ. pętĭ, հին իռլ. cóic, կիմր. pimp, ալբ. pesë «հինգ»: Հայոց հինգ=հնդեվ. *penkʷe:

169. Հովիւ (ի-ա հոլ.) «հովիվ, ոչխար արածացնող»=հնդեվ. *ovi-pā «ոչխար արածացնող»: Համատ. սանս. avi, հուն. οἶς, լատ. avis, սլավ. ovĭca „овца" և լատ. pāsco, սլավ. pasą, pasti, «արածել», հուն. πῶϋ «հօտ» և այլն: Անկրիտում կար avipālá- «ոչխարի հովիվ» և gōpá կամ gōpālá- «կովի հովիվ», ուր հնդկերան. pā- «պաշտպանել, պահել»: Fr. Müller-ի և S. Bugge-ի այս առաջարանութիւնը առարկվում է Հյուբշմանի կողմից. ի նկատի ունենալով, որ այդ բառի երկու բաղկացուցիչ մասերից (ovi «ոչխար» և pā- «պահել») ոչ մի հետք չկա հայերենում (Arm.

Gr., 468)։ Հր. Աճառյանը մատնանշում է, սակայն, հետևյալ հընդհանրական բառերի առկայությունը բարդություններում։ Ինչպես՝ հունա (=կրակ) ճնոց» ածանցյալ բառի մեջ, *տի (=կապ) բառը սամիթի, կալոտի և այլն բառերի մեջ, *տի (=մեծ) տիկին, տէր, տիեզերք բառերում, *անդ (=շեմք) դր-անդ բառի մեջ և այլն (Արմ. բառ., IV, 378—379)։

170. Հոտ (<ո» հոլ.) «հոտ, запах», հոտ-ոտ-ել (կրկնավոր), հոտիլ «գարշահոտիլ»=հուն. ὀζω, ὀδούς «հոտ, բուլր, անուշահոտութիլուն», ὄζει։ «հոտ է տալիս», εὐ-ώδης «անուշահոտ», լատ. oleo «բուրում եմ», odor «հոտ բուլրա», լիտ. ûʼdžiu, ûʼšti «հոտոտելը։ Հալոց hoto- թերևս=հնդկ. *odos- (արմատն է *od- բուրել, հոտ արձակել)։

171. Հում «չեփած, անեփած»=սանս. āmá-. հուն. ὠμός, հին իռլ. om նույն իմաստներով։ Հումիլ, հոտ, հում բառերում սկզբի հ»-ն հայերենում է պարզացել։

172. Հուն «դետի միջով անցնելու մի ծանծաղ տեղ, брод»=սանս. pánthās (սեռ. pathás) «ճամբա», ավեստ. pantā, panta (սեռ. paθō) «ճամբա», հին պարս. paθim (հայց.) «ճամբա», օսս. fändag, fändäg «ճանապարհ, փողոց», հուն. πάτος «շավիղ», լատ. pons (սեռ. pont-is) «կամուրջ», սլավ. pąti «ճանապարհ» путь», պրուս. pintis «ճանապարհ»։ Իմաստի զարգացման տեսակետից համմատ. ավեստ. pərətu- «կամուրջ» և pəšu- «հունա, հուն. πόρος «հուն, ճանապարհ, շավիղ» և այլն հին per- «անցնել» արմատից։

173. Հուր (<ո» հոլ. գործ. հ. նաև հուրբ) «կրակ»=հուն. πῦρ (սեռ. πυρός), ումբր. pir «կրակ», գերմ. Feuer, հբգ. fiur<ավելի հին fūir։ Այժմ պիտի ավելացնել նաև խեթ. paḫḫur (սեռ. paḫḫwenas, տրակ. paḫweni կամ paḫḫuni)։ Հլուբշմանը ազգակցութիլան հարց է դնում (թեպետ հարցական նշանով) այս հուր և հնոց «վառարան» բառի հուն—արմատի միջև, քանի որ կա նաև այդ ձևը, ինչպես՝ գոթ. fon (սեռ. funins), հին իռլ. fune «կրակ», պրուս. panno «կրակ», որոնց վրա պիտի ավելացնել և խեթական pahwen- ‖ pahun- թեև հոլովների «ո» վերջավորութիլամբ ձևը։ Այս ալտերնացիան r ‖ n վերջածանցների մեջ կա շատ ուժեղ խեթական լեզվում և հայերենում (փոքր ‖ փոքուն—, մանր ‖ մանուն—, բարձր ‖ բարձուն— և այլն)։

174. Ձաղկ (ի-ա հոլ.) «ոստ, ճիպոտ, գավազան, ծեծ», «ցըցված (մազեր)», ձաղկել «ծեծելը»=լիտ. žalgà «ձողը», լատ. žalga «բարակ ու երկար ձողը», գոթ. galga «կախաղան, խաչը», հվգ. gal-

go «կախաղան, խաչ, հորից ջուր քաշելու անիվ»։ Fr. Müller, WZKM, 5, 68. Bugge, Btrg. p. 18։ Հայոց ձաղկ<հնդեվ. *g'halg-, գոթ. galga<հնդեվ. *g'halgh-?։

175. Ձեռն (ձևին, ձևամբ), հոգ. ձևոք (ձևաց, ձևաք), բարդութիւններում՝ ձևնա- և ձևա-. կա նաև ձեր-ք (հին գործիական), ինչպես՝ ձերբակալ։ Համմտ. հունա. χειρ (հոգն. տրակ. χερσι) «ձևոք» χείρ-νιψ «ձևոքի համար լուացքաջուր», հուն. էոլ. χῖρ, ալբ. dorə (=*g'hērā). «ձևոք»։ Հայոց ձեռ-ք կարող է=հնդեվ. *g'hérse (Arm. Gr., 482)։ Ուրիշները ավելացնելով լատ. hīr «ձևոքի ափ», սանս. hárati «առնում է, բռնում է», haraṇa «բռնում», թոխար. tsar «ձևոք» և այլն վերաստիճում են g'her- և g'hers- արմատները «բռնել» իմաստով (Աբմ. բ., IV, 486)։

176. Ձեա («ոտ» հոլ.) «բրդոտ պոչ», շան, աղվեսի, առյուծի=ավես. zaδah- «հատկ, սրբան», հուն. χόδαξ «հատկ, նատ տեղի» (կցվում է հուն. χέζω «բնական պետքը հոգալ», սանս. had, hadati նույն իմաստով, ալբ. ðjés «աղբել»)։ Հնդեվ. *g'hédos-ից։

177. Ձի («ոտ» հոլ.)=սանս. háya «նժույգ», որ ծագում է հնդեվ. g'heyos կամ g'həyos ձևից։ [Բայց հայ հին քերականները տալիս են որպես համանիշ և դդի ձևը, որը կարող է տեղական (փոքրասիական) նախաձև լինել]։

178. Ձիր («ի» հոլ.) «պարգև, նվեր, ընծա», որից ձրի «даром»=սանս. χάρις (սեռ. χάριτος «շնորհք, հաճույք, ուրախություն, բարեհաճություն, հարգանք, երախտագիտություն, վարձատրություն», լատ. grātus «ախորժելի», gratia «շնորհք», gratis «ձրի», գերմ. gern «հաճույքով, ախորժանոք» և այլն. նախաձևն է *g'her-։

179. Ձիւն (ձևան), ձմեռն (ձմեռան) «ձմեռ», ձմերային (ներգ.) ձմերայնոյ (սեռ.) ձմերայնով (գործ.), ձմերեմ «ձմեռում եմ»=սանս. héman «ձմռանը», hēmantá- «ձմեռ» himá-, «ցուրտ, ձմեռ, ձյուն», ավեստ. (ուղղ.) zyà (հայց. zyąm, սեռ. zimô), zima- «ցրտություն, ձմեռ», zayana- «ձմեռ», հուն. χιών «ձյուն», χειμών «ձմեռ, սառնամանիք, անձրև, բուք փոթորիկ», լատ. hiems «փոթորիկ, անձրև, ձյուն», սլավ. zime, լիտ. žēmà, ալբ. dimən (<*deimen-) «ձմեռ»։ Հայոց ձիւն=χιών, որը առաջվել է հնդեվ. *g'hiyōm, իսկ ձմեռն<ձիմ-եռն նման ամ-առն և հուն. χειμερινός «ձմեռային»։

180. Ձուկն (-ան, -ունք) «ձուկ»=հուն. ἰχθύς, լիտ. žuvis, լատ. zuvs, zuve, հին պրուս. suckis (հայց. նգ.) suckans (հայց.

հոգն.), որոնց հնդեվ. նախաձևը կլինի g'hyu. (ըստ. Yohansson-ի) կամ g'hzu- (ըստ Bartholomae-ի)։

181. Մալիմ «մանրում եմ, տրորում եմ, մալեալ «կոտրած= լատ. molo «աղում եմ», գոթ. mala «աղում եմ», հուն. μύλη «ջրաղաց», սլավ. melja „мелю", լիտ. malù, հին իռլ. meltm «աղում եմ» և այլն։ (Հնատաբրքրական է ձավնավորի տնասկատից խեթ. mallanzi «աղում են»)։

182. Մահ («ուս հոլ.) հին ձևով՝ մարհ=սանս. mrtyù-ավեստ. mərəθyu, «մահ», հին պարսկ. uvāmršiyu «ինքնասպան», օսս. mālāt «մահ»։ Համմա. գոթ. maùrðr «սպանութիւն»։ (Կարող է և փոխառութիւն լինել հին իրաներենից *marθra ձևից, որը կտա մարհ>մահ)։

183. Մաղթել «աղոթել, մաղթել, պաղատել», որը ենթադրում է *mlth- ձևը, բայց տեղեկ *mldh-ի դեմս լիտ. maldýti «շշարունակ աղաչել, թախանձել», maldà «աղոթք, աղաչանք», ռուս. молю, молить, սլավ. moljǫ, moliti, լեհ. modta «աղոթք», չեխ. modla «կուռք, տաճար»։ (Սրանց պիտի ավելացնել խեթ. malt- կամ mald- «խնդրել, աղաչել», malti—maldi «աղաչում է», անորոշ անունը malduwar)։

184. Մայր (սեռ. մաւր) «մայր=սանս. mātā (սեռ. mātur), ավեստ. māta, նոր պարսկ. mādar, հուն. μήτηρ, դորիական μάτηρ, լատ. māter, հրգ. muoter, սլավ. mati և այլն։ Հայոց մայր=հնդեվ. *mātér, մաւր (սեռ. հ.)=*mātrós, մաւրու «խորթ մայր»=*mātruyā=հուն. μητρυιά «խորթ մայր»։

185. Մանր (-ու հոլ. հոգն. մանրունք) «փոքրիկ, մանր»,=իռլ. menb «փոքր», լիտ. meñkas «սակավ, չնչին», սանս. manāk «մի քիչ, սակավ, մխալն»։ Հայոց մանու=հնդեվ. *mənu-, նույն արմատից է հայոց մանուկ (-կան) «աղա, մանչ, կտրիճ, զինվոր»։

186. Մարդ («ոյ հոլ. հոգն. մարդիկ, -կան) «մարդ»=սանս. márta- «մահկանացու մարդ», mártya (mártia-), ավեստ. marəta- «մարդ», պհլ. mart, նոր պարսկ. mard, հուն. βροτός «մեռնող, մահկանացու, մարդ» (<*mrotos<*morto-) -բուլորը հնդեվ. *mṛto- «մահկանացու»։

187. Մարմին («ոյ հոլ.) «մարմին, մխա «հոգիները, մարմնի բաց տեղը, որը մանավանդ ենթակա է մահացու հարվածի, մարդու թուլլ տեղը»։ Ուրիշ հնդեվ. լեզուներում չկա այս բառը։ Իմ կարծիքով հայոց բառը քիչ ձևափոխմամբ վերցված է այն հնդկական լեզուներից, որոնք եղել են Միտաննի—Խուռի (Խոռ)

երկրներում, իսկ հետո տարածվել է մերձավոր հին արևելքում:

188. Մարտ *(«իր հոլ.)*, մարտնչիմ *(առր. մարտ-նալ)* «կրտվեցի, պատերազմեցին», որի արմատը մարտ- հնդեվ. *mṛd նախաձևից է և չի համընկնում հուն. μόρ-μα-ρα «կռվում եմ» բային (Arm. Gr. 473). բայց կան mṛd. (mṛdh-) արմատի ձևերն ևս d.dh.t աճականներով, ինչպես սանս. mardati «ջարդում է, փշրում է», mṛdha «մարտ», գնչու mardan «կռիվ», mardak «կռվարար», ավեստ. marəd- «ոչնչացնել», լատ. Mars (Mart-is) «Արևս կռվի աստվածը», հին իսլ. marða հարվածել (տես Ամմ. բառ., IV, էջ 933):*

189. Մեծ *(«ի-ա» հոլ.)* «մեծ»=սանս. mahān, mehānt., máhi «մեծ», ավեստ. maz-, mazi, maza, mazant «մեծ» հուն. μέλας՝ μέγα, μεγάλη «մեծ», խեթ. mekki «շատ», լատ. magnus «մեծ», գոթ. mikils և այլն: Հայոց մեծ =հնդեվ. *mégʻə ‖ *mégʻa-:

190. Մեղ *(ի-ա)* «մեղք, հանցանք», մեղանչիմ *(առր. մեղալ)*, մեղանչական ևլն=լիտ. mēlas «ստախոսություն», հուն. μέλεος «զուր, անօգուտ, թշվառ», իսլ. mell «մեղք, հանցանք, սխալ», mellaim «խաբում եմ», թևրևս լատ. malus «չար, վատ»:

191. Մեղկ «կակուղ, փափուկ, մեղմ, թույլ, թուլամորթ»= հուն. μαλακός «փափուկ, մեղմ», μαλθακός «փափուկ, քնքուշ, մեղկ», հին իսլ. meldach «կակուղ, փափկիկ», գերմ. mild, գոթ. mildiþa «քաղցրություն, հեզություն», լատ. mollis (<*molduis) «կակուղ, թույլ», սլավ. mladŭ „молодой“, սանս. mṛdú- «կակուղ, հեզ, թույլ» (Ավժմ պիտի ավելացնել նաև խեթ. miliskus «թույլ, մեղկ», E. Sturtewant, Suppl. to a Hitt Gl. 1939, էջ 31. „weak“ «ըստ Հրոզնու, Վեյդների և Գյուտերբոկի»):

192. Մեղր *(«ու» հոլ. սեռ. մեղու)*, մեղու *(«ի-ա» հոլ.)* «մեղու, пчела»=հուն. μέλι *(սեռ. μέλιτος)*, μέλισσα «մեղու», լատ. mel *(սեռ. mellis)*, գոթ. miliþ, հին իսլ. mil «մեղր»:

193. Մեռանիմ *(առր. մեռալ)* «մեռնում եմ, անմեռ=սանս. mriyátē, ավեստ. miryeite, նոր պարսկ. mīrad «մեռնում է», լատ. morior «մեռնում եմ», սլավ. mrěti „умереть“, լիտ. miřti: (Ավելացնել նաև խեթ. merr-, merta «մեռավ», merdu «թող մեռնի», merranda «մահացած», E. Sturt., Suppl. to Hitt. Gl. 102):

194. Մերձ «մոտ, մոտիկ», մերձավոր, մերձենամ (<«մերձիս-ից)=հուն. μέχρι «մինչև, ց» նախնական *megʻhri ձևից (ըստ Meillet-ի, Bugge-ի, Pedersen-ի, և Petersson-ի), թեպետ Հյուբշ-

մանը կատկածելի է համարում դրանց բովանդակութիւնների տարբերութեան պատճառով:

195. Մե-ք, մե-ր, մե-զ *և այլն պատկանում են իրենց* me-*ով եղակի առաջին դէմքի դերանուան թեք (ոչ ուղիղ) ընկն, ինչպես են սանս. և ավեստ.* mā- *(բաց.* má-d, ma-ţ, *արակ.* ma-hyam, ma-ibuā *և այլն), հուն. μέ, լատ.* me, *գոթ.* mi-k *և այլն: Համմտ. նաև լիտ.* mēs, *սլավ.* my „мы": *Այդպես է դուք եղակի դու ձևից հոդնակերտ ք մասնիկի ավելացմամբ: (Իմ կարծիքով թերևս կոնտամինացիա է եղել նաև ուղարտական* -me *հինձ դերանվանական կցութեի աղդեցութեամբ, օրինակ, խալդ.* հինձ *(*Haldis-me*) թագավորութեան ունեց: Այդպես է նաև bu դերանունը իր* ես*-ով, նկատի ունենալով ուրարտ.* iese *և խուռ.* isa *ես դերանունը):*

196. Մեգ *(ի-ա հոլ. գործ. նաև միգով) մշուշ, մառախուղ* =*սանս.* mēghá-*ամպ, ավեստ.* maeγa-, *նոր պարս.* mēγ *ամպ, օս.* məγā, mīγ *մշուշ, ամպ, հուն.* ὀμίχλη=*սլավ.* mĭgla=*լիտ.* miglá *մշուշ, մառախուղ:*

197. Մեզ—*ջուր, ջրվեժ, միզամ* =*սանս.* mēha-*մեղ»* mêhati *միզում է», ավեստ.* maeza-, maesman- *մեզ»,* maezaiti= *նոր պարս.* mēzad *միզում է», օս.* mēzun, mīzjn *միզել» հուն.* ὀμιχέω *միզում եմ», ὄμιχμα մեզ, լատ.* mingo, mējo, *լիտ.* mēžù, *հիսլ.* miga *և այլն: Հայոց* մեզ *և* մեզ *Հյուբշմանը համարում է բուն հայկական, թեպետ դրանք կարող են դրվել և որպես իրանական փոխառութեններ (*Arm. Gr., 47*):*

198. Մէջ *(«ես հոլ.) միջը»=սանս.* madhya-*միջին»* mádhyan *միջը», ավեստ.* maiδye *միջը»,* maiδuąna=*նոր պարսկ.* miyān *միջը», հուն.* μέσσος, μεσος *միջին», το μέσον միջը», լատ.* medius *միջին, միջև»,* medium *միջը», գոթ.* midjis *միջև», սլավ.* mežda *միջը»,* meždu *միջև», գալլ.* medio-, *հիոլ.* medón *միջը»: Հայոց* մէջ <*medyo- =հնդևվ. *médhyos:*

199. Մի *արգելական հրամայականի մասնիկը=սանս., ավեստ., հին պարս.* mā, *հուն.* μή: *Հնդևվ.* *mē:

200. Մի *(«ես հոլ. սեռ. միոջ, արակ. միում) միակ»=հուն.* εἷς, μία, ἕν, *որոնք առացվել են* *sem-s, *smia, *sem: Համեմատումը ընդունելի է, եթե հայոց* mi *միակ» սկզբում իրական սեռի լիներ (=*smia, *հուն.* μία*) և տարածվեր հետո մյուս սեռերի վրա և կամ նախկին* *smio-*ից գոյանար (*sem-ավելացրած* io-*վերջածանցը): Մի բառից է միայն, միմեանք, միւս:*

201. Միս (*ես հոլ.*) *միս=սանս.* māsá-, *գոթ.* mimz, *սլավ.* męso, *պրուս.* mensā, *ալբ.* miš *միս*։

202. Միտ (*ի-աց հոլ.*) հաճախ հոդնակի՝ միտք (*մտաց*) *միտք*, мысль, думы*=հուն. μῆδος, հոթ. μῆδεα *միտածմունք, միտք, պլաններ*, μήδομαι *հնարամտում եմ, հնարում եմ*, μέδομαι *խորհրդածում եմ, հոգ եմ տանում*, լատ. meditari *խորհել, հշտադատել*, modus *չափ, քանակ, կերպ, եղանակ*, գոթ. mitan *չափել*, mitōn *միտածել, դատել*, midiur *կարծում եմ, անցյալ կատ.* ro-midar *դատեցի, դատապարտեցի*։

203. Մնամ (*առ. մնացի*) *մնում եմ, սպասում եմ*=հուն. μένω *մնալ, կանգնել, սպասել*, μι-μνω *մնալ*, լատ. maneo *մնում եմ, սպասում եմ*, հին պարս. a-man-aya *սպասում էր* (*ինձ*), ավեստ. upa-maṇ-ayen *պիտի սպասենք*, նոր պարսկ. mānam *մնում եմ* ևլն։ Արմատն է *men->մին-ալ>մնալ*։

204. Մոզի *հորթ*=հուն. μοσχίον, որը նվազականն է μόσχος *ամնասունի ձագ, երինջ կամ հորթ, հորթուկ* բառի։ Հնդեվ. *mozg'ho- (ըստ Bortholomae-ի)։

205. Մոռանամ (*առ. մոռացայ*) *մոռանում եմ*=սանս. mrš(mṛšyatē) *մոռանալ, անհիշաչար լինել, համբերությամբ տանել*, լիտ. miršti *մոռանալ*, Bugge, Btrgp. p. 23։ Հնդեվ. *mors- արմատից։

206. Մուխ (*ես հոլ.*) *ծուխ*=հին իռլ. much *ծուխ*, մկգ. smouch *ծուխ, շոգի, հուն.* σμῦχω *քիչ և անորոշ կրակով եփել կամ պրկել* (*ըստ* Bugge-ի և Meillet-ի)։ Հյուրշմանը կասկածելի է համարում և հարցականով դնում է—հին իռլ. *mūkā-ից, մբգ.* smouch <*smúg-ից, հուն. σμῦχω<*smúgh-ից և հայոց mux< *(s)múkho-ից ? Հր. Աճառյանը բերելով մյուս օրինակները կելտական և գերմանական լեզուներից, ավելացնում է նաև լիտ. smáug-ti *խեղդել* և թևրևս ռուս. смуглый *թխտ, սևորակ*=*ուկր.* smuhłyi (*Արմ. բ., IV, էջ 1140*)։ Բայց լիտվական և հունական ձևերը խմաստով հեռու են, իսկ ռուսականի և ուկրաինականի դիմաց կա ավելի լավ համապատասխանություն արդի հայերենի և բարբառների (օրինակ, արարատյան) մուզ *թխտոտ, մուր*, смуглый *բառի մեջ։ Բացի այդ, հնարավորություն կա անկախ կերպով առանալու լեքսիկական տարնմանությամբ ծուխ ձևից նոր մուխ բառը, ինչպես ունենք մեսա *ինքնուրույն բառը հատ ձևից (համմտ. նաև հատամասնա), ուսար *տղա, բառը դուսար-ից (համմտ.՝ ծնող ուսերս և դուսերս բազում), մշրել բայը փշրել ձևից, մուճղ<մուռ>լուռ *բառից ևլն։

207. Մուկն (-ան հոլ.) «մուկ, մկան»=սանս. mūš մուկն, mūša., mūšaka, músika «մեծ մուկ» (крыса) «մուկ», նոր պարս. mūš «մուկ», օսս. mjst', հուն. μῦς «մուկ, մկան», լատ. muš «մուկ» musculus «մկնիկ, մկան», հբգ. mbg. mūs „maus" (=մուկ, մկան), սլավ. myši „мышь", myšica „мышца" և այլն:

208. Մուճ («ոտ» հոլ.) «մանր մժեղ խայթողը»=հուն. μυῖα «ճանճ», լատ. musca, լիտ. musė, պրուս. muso «ճանճ», սլավ. mucha „муха", ռուս. мшица, мошка «ճանճիկ, մունջ», սլավ. můšica «մոծակ» և այլն: Հնդեվր. *músno-: [Բարբառներում մեծ մասամբ մուն=մանր ոջիլ» և վրացկերենում muni «քոր, բորոտություն, քոս», ասն Աբմ. բ., IV, 1158—60]:

209. Մրջիւն (-ջման) կամ մրջիւճ (-ջճան) «մրջյուն»=հուն. μύρμηξ, μύρμαξ, լատ. formīca, սլավ. mravijī (<*morvijī) „муравой-", հին. իսլ. maurr(<*marva-), ալեսաս. maoiri (<*marvī կամ *margvī), նոր պարս. mōr, սանս. vamrá-, vamrī- «մրջյուն», valmīka- «մրջյունների կույտ» և այլն: Հնդեվր. հիմնական ձևը *morvī? Հայոց բառի բունն է մուրջ-:

210. Մօրուք («ի-ա» հոլ.) սովորաբար հոդնակի մօրուել, մօրուանի... գրվում է նաև մորու, մորուք, մուրուք (մուրօք), բարբառներում՝ միրուք: Համմ. սանս. çmáçru-(*smaçru-) «մորուք», լիտ. smakrà, լատ. smakrs «ծնոտ, քիմք», հին իսլ. smech «ծնոտ», ալբ. mjekre «ծնոտ, կզակ, մորուք»: Հայոց մորուք եթե ընդունվի նախնական ձևը, ուր «ոտ» ձայնավորն է և ոչ թե «ուա» =o, ապա ըստ Bartholomae-ի moru (մորու-) բունը առաջացած պիտի լինի *smosru- ձևից համապատասխան հնդեվրոպական smokru- կամ smokru- (Arm. Gr., 477), թեպետ ըստ Pedersen-ի կարող է առացվել *smakru- ձևից սկզբի s-ի անկումով և k-ի վերածումով «ւա» (w) ձայնորդի, ընդունելով ուրիշ հայկական նախնական ձևը մաւրու- (Աբմ. բառ., IV, 1214—1216):

211. Ցառնիմ (առ. յարևալ, հրամ. արի, հոգ. արիք) «վեր կենալ»=հուն. ὄρνυμαι «վեր են կենում», առ. ῶρτο «վեր կացավ», սանս. ṛṇóti, առ. úd-ārta «վեր կացավ», լատ. orior «վեր եմ կենում»:

212. Ցաւրայ (սեռ. յօրայի), խորթ հայր =հուն. πάτρως «հորեղբայր», լատ. patruus, հբգ. fatureo, սանս. pitroya «հորեղբայր»: Հայոց հաւրու (հօրու) հնուսդա նոր կազմություն է հայր բառից, ինչպես ունենք մաւրու (մօրու)՝ մայր բառից հին ձևը:

213. Ցիսուն «հիսուն» =սանս. pančāçát-, սլավ. pančāsat-, հուն. πεντήκοντα, լատ. quinquāginta, հնդեվր. *penkʷēk'omt-=հայ.

*հինգիսուն կամ *լինգիսուն=*լնգսուն, վերականգնած (հինգ բառի ազդեցութեամբ) ի ձայնավորով սառնում ևնք՝ լինգսուն>*լինսուն>լիսուն։

214. Ն հոդը=սանս. ana-«այլ», ավես. (գոթ.) ana, լիտ. anàs, ānS «այն», սլավ. onŭ «այն, նա»?

215. Նեարդ («ին» հոլ., սեռ. հոգն. ներդից) «բարակ ջիլ-ջղեր, ներվ»=սանս. snâvan-, snāván- «հոդ, ջիղ, լար», ավես. snāvarə «ջիղ», հուն. νευρά, νεῦρον <sneuro «նյարդ, ջլան, կորուվ», νευρή «աղեղի լար», լատ. nervus «նյարդ», հնդեվ. ձևն է *snēurt-, իսկ ըստ Bartholomae-ի հայոց նեարդ <հնդեվ. ձևն է *snēyrt (տես Arm. Gr. 478 և Ärm. p., V, 78)։

216. Նետ («ին» հոլ.) «նետ, стрела»=սանս. nadá- «եղեգ», պեհլ. nad, nat, գիլանի nad, նոր պարս. nai «եղեգ»։

217. Նիստ («ում» հոլ.) «նստավայր, գետնեղման ձև, կալան, աքոռանիստ քաղաք», նստիլ «նստել, բազմիլ»=սանս. nīdá «դադար, կալան, թռչունի բույն», լատ. nīdus, գերմ. Nest «թռչունի բույն, ավետ», ավես. nišhiδaiti «նստում է», հին պարս. niy-a -sādayam «նստուցանեմ», պեհլ. նոր պարսկ. nišastan «նստել», սանս. niśīdati «նստում է», սլավ. гнездо «ձու» Հայոց նիստ բառը առացվել է ni «դնել» +sed-«նստել» հնդեվ. ձևերից։ Վերջին արմատի հետ համմտ. սանս. sad-(sīdati) «նստել», sūdaḥ «կալան, տեղ», ավես. և հին պարսկ. had «նստել», հուն. ἕζομαι «նստում եմ», ἕδος «նստարան, կալարան», լատ. sedeo, հիբր. saidim, գերմ. sitzen, հսլավ. sěděti „сидеть“, saditi „посадить“, садъ, съдло և այլն։ Նիստ բառի հնդեվ. նախաձևն է *nizdo- (տես Arm. Gr, 478, Ärm. p., V, 126—127)։

218. Նոր («ում» հոլ.) «նոր», новый=սանս. náva-, návya, ավես. nava-, հուն. νέος, νεαρός, լատ. novus, գոթ. niujis, լիտ. naũjas, սլավ. novŭ, հիոլ. nūe։ Հայոց նոր բառը առացվել է ըստ Bortholomae-ի հնդեվ. *novros ձևից։

219. Նու («ում» հոլ.) «հարսը»—փեսի, ծնողների և հարա-զատների համար=սանս. snuṣā-, հուն. νυός, լատ. nurus, հրգ. snura, snur, անգլս-սաք. snoru, նրգ. schnur, սլավ. snŭcha „сноха“։ Հնդեվ. *snusós։

220. Շուն «ձև» հոլ. սեռ. շան) «շուն. собака»=սանս. çvā (սեռ. çúnas), ավես. spa (սեռ. sūnō), հուն. κύων (սեռ. κυνός), լատ. canis, գոթ. hunds, լիտ. szů (սեռ. szuns), հին իռլ. cú (սեռ. con)։ Հնդեվ. k'vôn. k'uôn, սեռ. k'unós։

Ըստ Հյուբշմանի թեպետ š հնչյունը շուն բառի մեջ հանդիպ

հնդեվ. k'v- որոշ դժվարություններ է հարուցում, այնուամենայնիվ այդ առուգաբանությունը հիշտ է։ Ուրիշները այդ եվրոպական բառերին ցանկանում են կապակցել հայոց սկուճդ «շուն, շնիկ» բառը, ինչպես որ մատնանշվում է հայոց սկեռուճ=սանս. çvaçrú-։

221. Ո, ոլ (սեռ. ոլր, տր. ոլմ) որ ոմն (ուրուհե, ումեմն), ոք (ուրուք, ումեք) ուր „где, куда"=հնդեվ. հարց. դերանուն *k^wo և k^wu-=սանս. և ավեստ. ka և ku-, հուն. πο- (πόθεν «որտեղից?», πού, ποῦ «որտեղ, որևէ տեղ»), լատ. quo-, լիտ. kás «ով», kur «դեպի ուր, որտեղ», սլավ. kŭ-to «ով» և այլն։ Հետևապես հնդեվ. k^w հաջորդ o և u ձայնավորներից առաջ ընկնում են։

222. Ոզնի (-նւոյ, -նեաց) «ոզնի, еж»=հուն. ἐχῖνος, հվբ. igil, սլավ. ježĭ „еж", լիտ. ežỹs «ոզնի»։

223. Ողբ («ող» հոլ.), ողբամ „оплакиваю"=հուն. ὀλοφύρομαι «ողբում եմ», ὀλοφυδνός «ողբագին»։ Հլուբշմանը դնում է հարցականով։ (Հր. Աճառյանը նշում է պատահական նմանությունը հբր. abl, ասոր. ebl, արամ. abl «սգալ, ողբալ» բալարմատի և հայոց ałb- արմատի մեջ, Արմ. բ., V, 480—481, որ կարող է պատահական չլինել)։

224. Ողջ («ող» հոլ.) «բոլոր, ամբողջ, առողջ», որը կազմված է «ջ» մասնիկի ավելացմամբ, ինչպես անուրջ, առերջ, գաղջ, շուրջ, վերջ և այլն և ol- արմատով, որ կա կելտական և գերմանական լեզուներում=հ. խոլ. uile «բոլոր, ամբողջ, բոլորովին», կորն. holl «ամբողջ», գոթ. alla-(<*alna), գերմ. all, հդգ. al, անգլ. all, հոլլ. al «բոլոր, ամբողջ»։ Տես Arm. Gr. 481 և Jndogerm. Forsch. 19, էջ 476։

225. Ոռ «հասուկ, նամելատեղ» (մարդու, անասունի), մանավանդ հոդնակիում՝ ոռք առարկաների համար («տակ, հատակ») =հուն. ὄρρος «ողնաշարի ծայրը, անասնոց գավակ», խեթ. arra-, հդգ. ars (<*orsos), գերմ. arsch, անգլ. arse, հխլ. ars, հիռլ. err «պոչ, վերջ, ծայր» (<*ersos)։

226. Ոսկր (-ևր հոլ.) «ոսկոր»=հուն. ὀστέον, սանս. ásthi, ավեստ. ast-, լատ. os, սլր. ašt «ոսկոր»։ Հայոց ոսկր=*osthkr (ըստ Meillet-ի)։

227. Ոստ («ոս» հոլ.) «ծառի ճյուղ»=ὄζος «ոստ, ճյուղ», գոթ. asts „Ast"։ Հնդեվ. *ozdo-s, իսկ անգլոս. ôst, մ. հյուս. գերմ. ôst «ոստոց տալիս են *ōzdo-s։

228. Ոտն (սեռ. ոտին, բաց. յոտանէ, գործ. ոտամբ, հոգն. ոտք, հայց. ոտս, սեռ. ոտից, գործ. ոտիւք) «ոտ, нога»=սանս.

pād (ուղղ. pât, սեռ. padás), ազնաս. pāδ-, pāδa-, նոր պարսկ. pāi, հուն. πούς (սեռ. ποδός), լատ. pēs (սեռ. pedis), գոթ. fōtus „Fuss“:

229. Որբ (ուս հոլ.) «որբ, cuporա» =հուն. ὀρφανός «որբացած», ὀρφο-բաղադրութիւններուն մէջ, լատ. orbus «որբացած»: Հնդեվ. *orbho-s: Վրաց oboli «որբ»:

230. Որթ (ուս հոլ.) «հորթ» (կովի կամ եղնիկի) հնդեվ. *porthu- ձևից ի դևմս հուն. πόρτις, πόρταξ «հորթ, երինջ, փոքր տղա կամ աղջիկ», սանս. pṛthuka- «մանուկ, տղա, անասունի ձագ»: (Փոխաբերաբար որթ (ուս հոլ.) նշանակում է «խաղողի տունկ, մատը». ինչպես արաբատյան բարբառում երինջ նշանակում է «էգ հորթ», բայց և «խաղողի որթի մատ, որ առանձին անկվում է», կամ հուն. μόσχος «հորթ, անասունի ձագ», բայց նաև «ընձյուղ, ծիլ. շառավիղ»: Նույն «հորթ» կամ «որթ» արմատին ցեղակից են դնում որդի (-ւոյ ‖ -ւա հոլ.) հնդեվ. *portiyo-ձևից. ուր rt հաչերևնում դառնում է օրենքով rd. արմատն է per, por «ծնել, ձագ բերել», ինչպես ունի լատ. parīo, peperī «ծնել, երկնել, տղա բերել», որը կա հուն. πόρτις, սանս. pṛthuka-, լատ. partus «ջուլակ, ծնունդ, ձագ», հուն. πόρις «հորթուկ, ձագուկ» ևլն (տես Աբմ. բ., V, 570, 560):

231. Ործալ, ործկալ, ործկտալ «սիրտը խառնել, փսխել» =հուն. ἐρεύγομαι «փսխել, զկռալ», լատ. ructo (id.), ērūgo «նողկալ, զկռտալ», սլաւ. rugajǫ „рыгаю“, լիտ. raugmi, raugiù, rùgiu «սիրտը խառնել», անգլոսաք. rocettan «զկռտալ» և այլն: Ործ<որուծ-: Հնդեվ. *rug-:

232. Որձ-բառարունը «ձուանք, testiculum» իմաստով հանելայ բառերում-մխրձի=հուն. μόνορχις (Lev. 21, 20) «միաձուա, որձի-ք «ձուանք», ամորձի-ք «երկձուանի», ամորձաա «կռտած», որձաա „каплун“ որձի «չկռած», որձիք «արուներըն», որձ «արու» (կենդանի, բույս, չոր, անբեր), որձակ (բարբառներում) «աքաղաղ»=ազնաս. ərəzi «ձուանք», հուն. ὄρχις «ձու, ամորձիք», այր. herδe (id.), լիտ. ėržilas «քուռակ»: Հայոց որձ-= հնդեվ. *org'h-:

233. Ուր. (սեռ. հոգն. ուրից) «ուրց»=սանս. aṣṭáu, aṣṭā ազնաս. ašta, հուն. ὀκτώ, լատ. octō, հին իռլ. ocht, գոթ. ahtau, լիտ. asztūnī, սլաւ. osmī „восемь“: Հնդեվ. *ok'tō:

234. Ուռայն «քաստարիկ», ուր -այն ածանց է, ինչպես երկ-այն, ամենայն, համ-այն և այլն: Արմատը ուռ- ծագած է *oιn- կամ oun-(ún-) ձևերից: Համմա, սանս. ūnā-, ազնաս. ūna-«պակասավոր»,

հուն. ἐν-π-ός, գրկված», լատ. vanus «ունայն, թափուր», գոթ. van-s «գրկված» և այլն։

235. Ուշկն (-ան, ունկան) «ականջ»=ավեստ. uši «երկու ականջներըս», հուն. οὖς, լատ. auris, գոթ. ausō, լիտ. ausìs սլավ. ucho (երկակի՝ uši), հիսլ. au, ó «ականջս։ Հայոց ուն-կն (նման՝ մուկն, արմուկն, ձուկն) առացվել է usn-(kn)։ Հնդեվ. արմատն է՝ aus-, us- կամ ōus-, ōs-։

236. Ուս. (ոս հոլ.) «ուս, плечо»=սանս. áṣa-, հուն. ὦμος լատ. umerus (<*omesos), գոթ. ams, amsa (միայն հոգն. հայց. amsans) «ուսս», հնդեվ. *ōmso-։

237. Ուսանիմ (ուս-ալ) «սովորում եմ»=սանս. ûčyati «սխորժում է, վարժվում է», սլավ. vyknąti «վարժվել, սովորել» (при-выкнуть), икй «ուսումն» (на-ука), učiti «սովորեցնել». լիտ. júnkti «սովորել, վարժվել», գոթ. bi-ūhts «վարժ, սովոր»։ Հնդեվ. *euk-։

238. Ուսար (-սեր, -սերաց) «արու գավակ, մանչ», սովորաբար դուստր բառի հարադրութիւնամբ ու ձևավորմամբ ազգայնութիւնամբ, բայց ծագումով հնութիւնին թվում էր անորոշ (Arm. Gr., 484)։ Իսկ Strassburger Festschrift, 1901, էջ 69, առաջարկից բառիս նախաձևը ընդունել sukter «որդի», որի-ga ածանցավոր ձևը պահել է անգլոսաքսոնական suhterga «հղթորորդի»։ Արմատը դրվում է seug-(sug-) կամ seuk- (suk-) «ծծել, կաթ ծծել» լատ. sugo, հիսլ. sūgim, անգլոս. sucan, գերմ. saugen և այն կամ ավելի հավանաբար հնդեվ. seu-, su- «ծնել» ի դեմս սանս. sávati «ծնում է», sū- «ծնող», ավեստ. hav-, hunāmi «ծնում եմ», հիսլ. suth «ծնունդ, պտուղ», մանավանդ՝ սանս. sūnu-, ավեստ. hunu-, գոթ. sunus, գերմ. Sohn, անգլ. son, սլավ. рус. сын, լիտ. sū́nùs, հուն. υἱός «որդի» (Արմ. բ., V, 684—687)։ Ուսար բառը քանի որ մեծ մասամբ հարադրութիւնամբ է գործ ածվում դուստր բառի հետ և հակերևում (դրաբարում) առկա է բառային տարբերակումնութիւնը, ինչպես ես ցույց եմ տվել, պետք է համարել զուտ հակիական առեղծագործութիւն։

239. Ուտեմ (առ. կերալ) «ուտում եմ»=սանս. ádmi, հուն. ἔδω, լատ. edo, գոթ. itan, սլավ. jami „ем", լիտ. ėmi, ėdmi, ėdu և այլն։ Հայոց ut-<ōd- (ըստ Bartholomae-ի) հնդեվրոպական արմատն է ēd-։

240. Զոր „сухой"=հուն. ξηρός, ξερός «չոր», լատ. seresco «չորանում եմ»։ Առացվել են *kʷsoro-s (>չոր), *kʷsēro-s (հուն. ձևերը)։ (Կցվում է նաև չիր բառը)։

241. Չոր-ք *(չորից)* «չորս»=սանս. čatváras, ավեստ. čaδwāró, հունգ.-գոթ. tēturas, հոմեր. τεσσαρες, լատ. quattuar, գոթ. fidvōr, լիտ. keturi, սլավ. četyre, հին իռլ. cether և այլն: Հնդեվ. *k^{w}etvores:

242. Չու *(«ի-ա» հոլ.)* «երթ, ուղևորություն», որից չուեմ *(չուեցի)*=սանս. čyuti «երևան գալը, ելք, հեռացում, անկում», čyávatē հեռանում գնում է, ավեստ. šavaitē, šūta- «քշած, հեռացրած», նոր պարս. šavam «գնում եմ, դառնում եմ», թուրգ. čun «գնալ», հուն. σεύω «շարժում եմ, մղում եմ, հալածում եմ» և այլն: Սուն չու ձևին կցվում է նաև չոգ-ալ *(երթամ բայի առթիվը)*, ինչպես ωκυ և ոռոգել: Չոգ-<հնդեվ. *k^{w}yov-, չու=սանս. cyuti=հնգ. *k^{w}yuti:

243. Չհանում *(չհոալ)* «տաքանալ, կրակ կարել *(սրտով)*, այրել *(արևի)*, հավի թխսելը», չեր *(«ո» հոլ.)* «տաքություն, լավ եղանակ», չերանիմ «տաքացնում եմ, տենդ ունեմ, այրվում եմ հիվանդությամբ, ցավով կամ մոլությամբ», գերմ. *(«ո» հոլ.)* «տաք», տաքություն, չերմն *(չերմանն)* «տենդ»=սանս. ghṛṇā- «տաքություն, այրելը», ghṛṇi *(նուլնը)*, gharma- «խորշուկ, տաքություն, տաք եղանակ», ավեստ. garəma, նոր պարսկ. garm «տաք», հուն. θέρος «ամառ» θέρομαι «տաքանում եմ», θερμός «տաք, չերմ», գոթ. warmjan «տաքանալ», հիռլ. gorim «տաքանում եմ», սլավ. goréti гореть, греть, жар, горе, горький, горн և այլն: Հայոց չեր=հուն. θέρος=հնդեվ. g^{w}heros-, հայոց չերմ=հուն. θερμος<հնդեվ. g^{w}hormó-s ձայնավորի խնդրում փոխված հայոց չեր=հուն. θέρος բառերի ազդեցությամբ:

244. Ջիլ *(«ի-ա» հոլ.)* «ջիղ», «թել», «նյարդ» *(=հուն. νεῦρον)*. գրվում է նաև ջիղ, ջեղ=սլավ. žila „жила", պրուս. gisło «երակ», լիտ. gysla «երակ, ջիղ, նյարդ», լատ. dzīsla, լատ. fīlum «թել», ալբ. dhe «ջիղ. երակ, նյարդ»: Հայոց և բալթոսլավ ձևերը վկայում են հնդեվ. *g^{w}hisla-ձևի մասին:

245. Ռունգն *(ռնգան և ռնգամբ)*, սովորաբար հոգն. ռնգունք *(ռնգանց, ռնգաց)* «քթի ծակերը, քիթ»=հուն. ῥώγχος «խոզի դունչ, շան մռութ, թռչունի կտուց»: Հուն. ῥ սկզբում vr կամ sr երկհնչյունն է մատնանշում և հայոց բառի ինքնությանն դևպքում հայ և հուն բառերը տալիս են *srungh- նախաբմատը: Հուն և կելտական լեզուներում կա նաև *srenk- «խորդալ, փռնչալ» բնաձայն արմատը— հուն ῥεγχω, հիռլ. srennim (<*srenk-nā-mi), srōn «քիթ», նոր բրետ. fron «քթի ծակերը», բայց այդ չի խանդարում մեր առաջարանությանը: (Աբմ. բ., V, 1287):

246. U դերանվանական ածանցը՝ հոդը=լիտ. szis «այս» սլավ. sĭ, հիսլ. cé, գոթ. hi (himma daga «այսօր») «այս», լատ. ci-s «այս կողմը», ci-ter, ci-trā, ալբ. si- «այս» (si-vjet „в этом году"), հուն. ἐκεῖ և այլն։

247. Uալ (<ին հոլ.) «տափակ քարի մեծ հատոր», «մեծատղի մեծ կտոր, դարբնի երկաթի կոճղը»=սանս. çilā «քար, ժայռ» Իմաստի զարգացման տեսակետից համմտ. հուն. ἄκμων «դարբնի սալը» (զնդանը) և սանս. áçman-«ժայռ, քար» և այլն։ Թեպետ Հյուբշմանը կասկածելի է համարում Բուդգեի (kz. 32, 24) այս առաջարկը, բայց և ընդգծում է այդ երկուսի նախնական ձևը հարցականով-*kəlā-?

248. Uամի-ք (uամեաց) «լծի երկու ծակերից անցնող երկու փալտիկները, որոնք եզան վզի տակ կապով միանում են», uամի-ի-ք «uամիի կապը»=սանս. çámyā-«լծի հավուկը, փալտե սեպը, ցնցակը», համմտ. սանս. yugaçamyám «լուծը հավուկով միասին», ավեստ. simā-, simōiδrā- «լուծ» (yochbalken), նոր պարսկ. sīm «կապը, որը լծի երկու կողմերից կապվում է իրար» Uամե-ի-ք բառի ti-«կապ, կապել» (հնդեվ. dē-, սանս. dā, dī, հուն. δη, δε) տես առանձին։ Uանս. çamyā-, հայ. saml, պարսկ. sīm առաջացել են հնդեվ. *kémiyā?

249. Uառն (-ին) «uառուլց», uառնամանիք (uառամանիք) «uառուլց», uառը եղանակ (օդ, հող), uառնում կամ uառչիմ (uառնալ), uառուցանեմ և այլն=հին իսլ. hjarn «կարծրացած ձյուն», լիտ. szarná «հղեամձ», նոր սլավ. srēn(<*sernū) «uառած ձյուն», l բաղաձայնով r-ի տեղ ունենք լիտ. szāltas «uառը, szalna «հղեամձ», սլավ. slana «հղեամձ և անորոշ՝ uանս. çiçíra «գարնան սկիզբը, հոլ եղանակ՝ ցուրտ, uառնձ, ավեստ. sarəta-«ցուրտ», նոր պարսկ. sard «ցուրտ», sarmā (garmā «տաքություն բառի ազդեցությամբ) և այլն։

250. Uաuա (<ին հոլ.) «հանդիմանություն, uաuտիմ, uաuտիկ uաuտիչ և այլն=uանս. çāsti- կամ çīšti «պատիժ, uաuա, պատուհասություն, հրամանձ», çāstár- «պատժող, հրամայող, uաuտող, իշխանավոր», çās (çīš) «պատոնել, հրամայել, պատժել, տիրել, կրթել, uովորեցնել», ավեստ. sāstor- «տիրող, բռնակալ» Հայոց sasti-= uանս. çīšti-=հնդեվ. *késti-։

251. Uար (<ոռ հոլ.) «լեռան գլուխ, բարձունք», uարակ «բլրակ», uարանալ «բարձրամտել», uարաւանդ «ծովի կողմը բարձրացած տեղ, հրվանդանձ», uարաւլիճ «բարձր պալատ», «եկե-

դնցու բակում կրնամփոր կամ առաջնորդի շինք»=սանս. çirasէգլուխ, գագաթ, վերին կողմը», ավեստ. sarah «գլուխ». նոր պարսկ. sar «գլուխ», օս. sär (id.), հուն. κάρα, κάρη, κάρηνον «գլուխ», լատ. cerelrum «ուղեղ» և այլն: Հյուբշմանի կարծիքով հայոց բառը ինքնուրույն բառ է, իսկ Meillet-ի կարծիքով փոխառյալ է իրաներենից: Տե՛ս նաև Հր. Աճառյան, Արմ. բ., VI, էջ 118—122:

252. Սխտոն (սխտուան կամ սխտան) «սխտև, ropox»=լատ. cicer, պրուս. keckers, հուն. κρόκος-սխտոի մի տեսակն է (<*κικρός կամ *κικρός), մակեդ. κίκερδι. Հայոց սխտու-ն ստացվել է *k'eik'er կամ *k'oik'er, լատ. cécer<*k'ik'er-:

253. Սիրտ (հի հոլ.) «սիրտ»=սանս. hṛd-, hṛdaya-, hārdi «սիրտ», ավեստ. (գաթա-ավես.) zərəd-, zarədaya-, նոր պարսկ. dil, հուն. κραδίη, κῆρ, լատ. cor (cord-is), գոթ. hairtō, լիտ. szirdis, սլավ. srŭdĭce „сердце", հին իռլ. cride «սիրտ» և այլն: Հայոց սիրտ=հնդեվ. *k'ērdi-:

254. Սիւն (սեան) «սյուն»=հուն. κίων: Երկուսն էլ հնդեվ. *k'īyōn, ինչպես ունենք ձիւն=հուն. χιών, հնդեվ. *g'hiyōm-ից:

255. Սիմ «դատարկ, պարապ», մեջը փուչ, «անուտիլ», ոսին «սին, վախ, ապազուն», որից ոսնիլ «անանալ, ապազիլ» (ռամկ. հոսնիլ, հոսնալ). սնին=հուն. κενεός, առտին. κενός դատարկ, փուչ, ոչինչ ստացված κεναρός, κενρος: Միայն այդ երկու լեզուներում:

256. Սխալ «պակասութիւն, սխալ, հանցավորութիւն, թիվով պակաս» (միով սխալ «մեկ պակաս», երկու սխալ «երկու պակաս, minus 2»), սխալանք «հանցանք, թերացում, սխալ», սխալիլ կամ սխալիլ «վրիպել, գալթակղիլ, սխալ գործել», սխալիլ ի ծննդենէ «ծիծկել», սխալակիլ «տարբերել»=սանս. skhal, skhalatē «սխալվիլ, երերալ, դողդոջալ, թերանալ», անց. դերբ. skhalita «դողդոջուն, վարանող, սխալ, թերի, ոսկորվիկ, պակասավոր», skhalana «վարանում, սայթաքում, սխալանք», հուն. σφάλλω «ցած եմ դցում», σφάλλομαι «սայթաքում եմ, երերում եմ, ընկնում եմ, սխալվում եմ», σφάλμα- «սխալանք, վրիպակ, թերութիւն, արկած, պղտա»: Արմատն է հնդեվ. *skhal-:

257. Սկեսուր (ի-աց հոլ.) «կնեսուր, կնոջ ամուսնու մայրը», որից սկեսրայր կամ սկեսրեայ «կնոջ ամուսնու հայրը»=սանս. çvaçrā- «սկեսուր». հուն. ἑκυρά, լատ. socrus, գոթ. vaihrō, հրպ. swigar, սլավ. svekry „свекровь" և այլն: Հնդեվ. բառն է *swek'-rū-:

258. Սուն «առաջը, երեսուն, քառասուն, լիառն, վաթառն»,

եւթանասուն, ութսուն և իննսուն բաների մեջ=հուն. κοντα (τριᾶ-κοντα „30", τετταράκοντα „40" *և այլն), լատ.* -ginta (triginta „30" *և այլն), հին իռլ.* -cha, -ga, -ca (tricha „30" *և այլն), սանս.* -çat (triçát-*և այլն), ավեստ.* vrîsat- „30" *և այլն:*

Հայոց sun=*հուն.* κοντα *հնդեվ.* *k'omtə, *k'ontə *կամ* *k'ōnte *ձևերից:*

259. Սուտ *(«ոչ հոլ., «ոչ ճշմարիտ, կեղծ», որից* սուտիւն, սուել, սուտակ, *«սուտախոս, սուղ» և այլն=հուն.* ψεῦδας *սուտ, սուտախոսութիւն, խաբեութիւն,* ψευδής *«սուտ»,* ψεύδω, ψεύδομαι *«սուտում, խաբում եմ»* (Bugge, KZ. 32, 25)*: Հլուբշմանը կասկածում է, քանի որ այս օրինակները չկան հայոց բառապաշարի* u (s) =*հուն.* ψ (ps)*. Բայց համմ. հայոց* վոխասուլ *սաղմոս=*ψαλμός*: Հայոց և հունական ընդհանուր («նախալեզվային») ձևը կլինի* psudo-*:*

260. Սուրբ *(«ոչ հոլ.) «մաքուր, սուրբ», որում եմաքրում եմ հոգով և մարմնով», որբութիւն և այլն=*çubhrá- *«փայլուն, պարզ, մաքուր»: Հնդեվ.* *k'ubh-ró-*:*

261. Ստանամ *(«սայլ) «ձևով քերել, գնել», ստացված ձևից, ստացող «պատվիրող»=լատ.* *stanare, *որ գործածական է* praestinare *«գնել»,* dēstinare *«հաստատել, որոշել, նախատել գնում կատարել»=հնդեվ.* *stə-nā-mi *«հաստնում եմ, վեր եմ կենում»* -Bugge, KZ, 32, 26*: Հլուբշմանը, կասկածելով նախաձևի մեջ, առաջարկում է* *stn̥-nā-mi, *կապելով լատ.* -stināre *և նոր պարսկ.* sitā-dan *(ներկան՝ sitānam «վերցնում եմ») բաների հետ, սահմանելով առանձին հնդեվրոպական* sten *արմատ (*Arm. Gr., *էջ 492)*: *Ինչպես նշվում է Աբեղ. բ., IV, 421—422, Բրուգմանի մոտ (*Grundriss², II 303) *այդ բալի բունն է* stə-nā- *կամ* stn̥nā- *և մաքուր* sta- *«կենալ, կանգնել, հաստատուել» արմատը (սանս.* tiṣṭhati, *ավեստ.* hištatti *«կանգնել, տարի վրա մնալ», հուն.* ἵστημι *«կանգնել», լատ.* stō *«կանգնել»,* sistō *«գնել, հաստատուել» և այլն) կարող է ունենալ այդ* stā- *արմատի վրա n ածական (ներկայում և ամբողջ բնում), ինչպես* ста-ть, ставить, стан-у *և այլն: Համմ. սանս.* sthāna-*«տեղ», հուն.* ἱστάνω *«կանգնել, կանգնեցնել, անկել», լատ.* destināre *և այլն:*

262. Սանդն *(-դան, -դին, -դունք, -դանց) «բույսի ցողուն, ծիլ, ճյուղ»=հուն.* στέλεχος *«ծառի բուն, կոճղ, ցողունք», հոմեր.* στειλειόν *«կացնի կոթ»,* στελεά=*հոմեր.* στειλειῆ *«կացինի անցքը, ուր մտնում է կոթը», անգլոս.* stela=*գերմ.* stiel *«կոթ»?*

263. Ստերջ «անպտուղ ամուլ, չբեր (անասուն)». գրված է և ստերդ, ստերջանամ կամ ստերջիմ=հուն. στεῖρα «անպտուղ» (կով), սանս. starī- (ուղղ. starīš) «անպտուղ» (կով), գոթ. stairō «անպտուղ», նհդ. stärke «ամառաղ կով որ չի ծնել», լատ. sterilis «անպտուղ»:

264. Ստեպ «հաճախ, շտապ», ստիպեմ «ստիպում եմ, заставляю, принуждаю»=լատ. stīpare «խիտ միացնել, ճնշել, անդամելով լեցնել» (Bugge, KZ. 32, 61), որի իմաստը շատ քիչ է համընկնում հայկականին, իսկ Մելեի կողմից համեմատելյան դրվող հուն. στείρα «ոտքի տակ կոխոտել (ճանապարհը), στεῖρος «բանուկ ճանապարհ», στειβρός «կոխոտված, անդամ և այլն, շատ հեռու են իմաստով թե բառավերջի բաղաձայնի չհամընկնելը և ենթադրական «խտացնել» նախիմաստը:

265. Ստին (սեռ. ստնան, ստննէ, հոգն. ստնանց) «կնոջ ծիծը», ստն-դիաց, ստն-դիալ, ստն-դի «ծիծ ուտող, ստն-ատու «ծիծ ավող»=սանս. stana- «կնոջ ստինքը» stanam dhaye- «ստնդեայ», ավեստ. fštāna(<*pstāna-). նոր պարսկ. pistan (<*pəstāna-) «կնոջ ստինքը»: Բոլորի նախաձևն է pstēn-:

266. Ստուար (ի-ա հոլ.) «հաստ, թանձր»=ավեստ. stavah -«ամրություն, հաստություն», stūi-, stvi- «ստուար», stawra «ուժեղ, զորավոր», պահլ. stavar «թանձր, հաստ, ստվար», սանս. sthāvarā- «ստվար, թանձր, հաստատուն», sthūrā- «թանձր, լայն և այլն, որոնց ազգակից են նաև հուն. σταυρός «ցից», լատ. re-staur-are «վերականգնել», գոթ. stiurjan «հաստատել» և այլն: Թևակտ հայոց ստուար բառը մատնանշում է հին *stūvrό-, իսկ սպասելի էին հայոց *stur կամ *-tevar ձևերը փոխանակ stvar ձևի, այնուամենայնիվ Հյուբշմանը հայոց ստուար բառը դնում է բնիկ հնդեվրոպական բառերի շարքում (այդպես էլ Schleitelowitz, BB. 29, 30): Հր. Աճառյանը (Արմ. բ., VI, 455) միտ ստուար բառը ընդունում է որպես իրանական փոխառություն:

267. Սրունք (հոգն.) սեռ. սրանից կամ սրնոց կամ սրունից կամ սրունց «սրունքը», нижнее бедро, берцовая кость (κνήμη, κνημαι)=լատ. crūs (սեռ. crūris)-id, լատ. հոգն. ուղղ. crūra< *k'rūsə, հայոց սրուն-(ք) <*k'rūsni-: Հայոց սեռ. հոգն. սրուանց ստացվել է sru-n ձևից, որ է *k'rus-n-: Նորակազմ սրանկն-սրընկունք կազմվել է մուկն, արմուկն այն բառերի լեքսիկական նմա-

նողութիւամբ։ Իսկ սրուն-սրուան համար ունենք անուն-անուան, ձեղուն-ձեղուան, ցողուն-ցողուան և այլն։

268. Սիռեմ (-ացի) «տարածել, ցրվել», սիռե (սիռեւ) «ցըրված, ցիրուցան», ի սիռեւս- «ամբողջ տարածութիւան մեջ»=հուն. σπείρω «ցանում եմ, ցրում եմ»? Հայոց սիռե ձևը կարող է սկզբնական *srer=նախաձևը պահանջել (Arm. Gr., 494)։ Այդ սիռե հին ձևից է առաջացել *փիռ-, որից փռել «տարածված բալը, ինչպես հուն. σπάλλω «տապալել, վայր ձգել» և հայոց փուլ, փլանիմ և այլն։ Իսկ սիռեւ գոլականը ստացել է ւ (w) ձայնորդի ավելացում, ինչպես՝ գառանեմ, նդիտ և գիւտ, հես-ում և հեւս, հիւր և այլն, որոնցից օրինաչափութիւան մասին իմ կողմից դրված է։

269. Վառ-եմ «վառում եմ, топлю, жгу», համեմատում են սլավ. vrěti, պրուս. variti և լիտ. virti=ռուս. варить, որ չեն ընդունում նշանակութիւան տարբերութիւան տեսակետից Bugge (KZ. 32, 56) և Հյուբշման (Arm. Gr., 494)։ Իրարից անկախ հայոց վառել նախդրծական բալը էր. Աճառյանը և ես համեմատել ենք խեթ. war-«գոբեթ. վառվիլ չեզոք բալի հետ, որից ունենք պատճառական war-nu- „(ver) brennen“ «վառել» ձևը։ Հայոց ուռաճ «աշտանակ, հրաբան, վառարան» հազվագյուտ գոլականը (մեկ անգամ է գործածված) նույն var-<ur-արմատից է։ Համմտ. խեթ. urr-ir «վառվեցինն»։

270. Ի վեր «դեպի վեր» ի վեր, քան «ավելի վեր», վեր ի վերոյ «երևոյթից, հարևանցի», վեր ի վայր «տակնուվրա», ի վերուստ «վերևից», վերին և այլն=սանս. uparí, ավեստ. upairi, պահլ. apar, նոր պարսկ. bar, հուն. ὑπερ, լատ. s-uper, գալլ. ver-, գոթ. ufar, գերմ. über «վեր, ի վերա» և այլն, հնդեվ*. up'ero-ից։ Առաջ ցանկանում էին հայոց բառը կապակցել հնդեվ. *vers. արմատի հետ ի դեմս սանս. várš-man «բարձրութիւուն, վերը, վերինը», váršīyas «բարձրագույն, վերնագույն», լիտ. virszùs «վերինը», սլավ. vrŭchŭ „вершина, верх“ և այլն, բայց հնդեվ. rs սալիս է հայոց ռա և ոչ ր-ր (իմ կարծիքով հայոց վեր արմատից սերված պիտի համարել վերջ գոլականը, թեպետ այդ ջ ֆորմատիվը ստեղծում է հատկապես ածականներ, ինչպես՝ դաղջ, սառջ, ողջ և այլն)։

271. Վեց (վեցից) «վեց», վեցտասան «տասնուվեց», վաթսուն=սանս. šaṭ, ավեստ. xšvaš, նոր պարսկ. šaš, հուն. ἕξ, Fέξ (կրետ. θεξηκοτα „60“), լատ. sex, գոթ. saihs, սլավ. šestĭ, լիտ. szeszí և այլն։ Հնդեվ. svek's, *vek's, *sek's։ Վեց<*vek's.

272. S- բացասական նախածանց, ինչպես օրինակ՝ ա-գէտ, ա-հաս, ա-կար և այլն=սանս. dus-, dur- (օրինակ՝ durvēda- «անուս», durmanus- «հուսահատ, տխուր»), ավեստ. duš-, duž- (dušmanah- «վատամիտ»), հուն. δυσ-(δυσμενής «թշնամամիտ»), գոթ. tuz-(tuz-vērjan «երկրպաղել» բառում), հին իռլ. du- (օրինակ՝ dophlu «անիծառունակ»): Պարսկական հայ փոխառութիւններում դրա տեղը կան dž-, tž-, t'š-:

273. Տամ «տալիս եմ», առր. հաու, հաուր, հա, տուաք, հաուք, հաուն, կրավ. տուալ և այլն, ապառնի՝ տաց, տացես և այն, դերբ. տուեալ, հրամ. տուր, տուք, տուրբ (<ռ հոլ.)=սանս. dādāmi= ավեստ. qaδąmi=հուն. δίδωμι «տալիս եմ», հուն. δῶρον «տուրք», նվեր, gar", լատ. do, սլավ. damĭ „даю" (անոր. дать), даръ, լիտ. dūmi, dū'du «տալիս եմ», արմատն է dō. də, d- տալ:

Հայոց ta=հնդեվ. də-, հայոց tu=հնդեվ. dō—, հայոց tur-k' =հուն. δῶρα, սլավ. dara=հնդեվ. *dōrā «նվիրատվութիւն», հայոց III դ. առր. et=սանս. ádāt', ավեստ. dąt=հնդեվ. *é-dō-t:

274. Տայգր (-եր հոլ.) «հնոջ ամուսնու եղբայրը, տեգր»=սանս. dēvár-, հուն. δᾶηρ, լատ. levir, հվգ. zeihhur, անգլոս. tācor, լիտ. dēueris, սլավ. děverĭ «տալգր»: Հնդեվ. *daiwér- կամ *dəiwér-:

275. Տալ «հնոջ ամուսնու քույրը», որը գործ է ածվել մեկ անգամ XIII—XIV դարերում (երգնկացու քերականութեան մէջ) Ըստ Bugge-ի (KZ. 32, 27) այդ բառը ազգակից է հուն. ταχώς, լատ. glōs. սլավ. zlŭva „золовка" բառերի հետ, լինելով հնում *ձալ և հետագայում ազդվելով տալգր բառից (*ձալլ>*ձալ>տալ?):

276. Տասն (-ան) «տասը»=սանս. dáça, ավեստ. dasa, նոր պարսկ. dah, հուն. δέκα, լատ. decem, գոթ. taihun, հրգ. zēhan, սլավ. desetĭ, լիտ. dēszimtis, և այլն: Հնդեվ. *dék'm:

277. Տնանձիմ (տնսի) «տեսնում եմ», տեսակ, տեսիլ (տեսլեան) «լն=հուն. δέρκομαι «տեսնում եմ», ἔδρακον (անկ.), δέδορκα (pirf.) «հառած նայեցի»=սանս. dadárça=ավեստ. dadarəsa «տեսնում եմ», հիռլ. derc «աչք» ad-kon-darc «նայեցի», գոթ. ga tarhjan «նկատել» և այլն: Հնդեվ. dork'-derk', drk': Հայերենում սպասելի էր *տերս-անիմ:

278. Տնծիմ (տնցի) «տեսում եմ, լսում»=լատ. dū-r-o տեսլ. տոկալ dudum «վաղուցվանից», սլավ. davĕ «երբևիցե», davĭnŭ „давно", հուն. δηϑ (<δήϑην), δᾶρόν «երկար ժամանակ, վաղուց» և այլն:

279. Տիզ (տո հոլ.) տիղ, клещукъ=գերմ. zecke. մրգ. zëcke տիսալաոջիլը, անգլ. tike, tick տոշխարի տիղ, միջ. dega մի տեսակ բզեզ, որոնք ծագում են deig'h տխալթելը արմատից (Arm. Gr., 497, Սրմ. բ., VI, 896)։

280. Տիւ (սեռ. տուրնջեան, ի տուրնջենէ, ի տուէ-ցերեկը) օրը=սանս. div, որ դանվում է dívā օրում, divê-divê օրըստօրէ, divasa-օր, dyáus երկինք, օր, լատ. dies օր, հին իռլ. in-diu այսօր, կիմր. dyw օր։

281. Տուն (սեռ. տան) տուն, տանուտէր, տանիք վերուր =սանս. dam- (հմմտ. dámpatiš տեր, սեռ. dán հմմտ. pátir dán տիր=հնդեվ. *pótiz dèmz տերը տան), dáma- տուն, դաֆա-ավեստ. demāna- (=dmāna-)= ավեստ. nmāna- բընակատեղի, տուն, dam- տուն, հոմեր-հուն. δῶ, δῶμα տուն, բնակարան, տուն, δομ- (սեռ. *δεν̆ς բարդ δεσπότης=հնդեվ. *dems-potis), լատ. domus, սլավ. domŭ „дом"։

Հնդեվ. (ուղղ. հ.)=*doms=dōs, հնորակազմ *dōm=գոթ. tun, հնդեվ. սեռ. հոլ. *dems։

282. Ցախ (տո հոլ.) ճյուղ, հացի ծառը=սանս. çākhā- տուտ, ճյուղ, նոր պարսկ. šāx տուտ, ճյուղ, կոտոշ, լիտ. szaká տուտ, ճյուղ (նույնպես ողջերուի կոտոշը)։ Հնդեվ. k'hākā- (ըստ Bartholomae, Stud. II, 41), իսկ ըստ Peterson-ի (Ar. u. Arm. Stud., 98) հայերենի նախաձևն է հնդեվ. *s'kə-kho։

283. Ցլում (ցլվի) ճեղքել, պատառել=լիտ. skeliù, skéliti ճեղքել, պատռել, հին իսլանդ. skilja ճեղքել, բաժանելը, գոթ. skilja մամադրծա (Bugge KZ, 32, 72)։

Հայոց ցել- (cel-)=հնդեվ. sk'el, լիտ. skel-=հնդեվ. sk(h) el- (Barth., St, II, 51)։

284. Ցիւն (տո հոլ.)—դիշատիչ մի թռչուն է (կաքաւ)=հուն. ἰκτῖνος ցիւն, սանս. cyēná -տարծիվ, բազե, ավեստ. saena և նոր պարսկ. sīmurγ <ավեստ. saenō+mərəγā-մի առասպելական թռչուն։ Հայոց ցիւն=հուն. ἰ-κτῖνος=հնդեվ. *k'yīno-s (ըստ Bartholomae-ի, St. II, էջ 8—9)։

285. Ցանել տարտինը ճեղքռանել, բզկտել, պատառոտել, դանակացիա տրանսիով ճեղքռտոդ=սանս. čhid- կտրել, ճեղքել, պատռել, փշացնել, ավեստ. sid (hi-siδ-yā-t) ճեղքել, հուն. σχίζω ճեղքում, բաժանում նման, լատ. scindo, scidi ճեղքել, բաժանել, պատռել, կտրատել, գոթ. skaidan, գերմ. scheiden բաժանել և այլն։

Հնդեվ. արմատն է *k'hid-.

286. Փոյր *(«ոտ հոլ.), փութամ (փութացայ)* = հուն. σπεύδω *«ընդամբ, ջանք, փութք, նոանդ», σπεύδω «շտապել, փութալ», σπουδάζω «շտապում եմ, ժրաջան եմ», լատ.* studium *«ժրաջանութիւն»,* studeo *«ջանում եմ»: Հայերենում սպառնալի էր* *p'oit:

287. Փուլ *«փլած տեղ, դարափլակ, լուանի փուլը* (фаза луны)*», փլանիմ (փլայ), փլուցանիմ (փլուզանեմ)* = լիտ. pūlu, pùlti *«ընկճել, ցած ընկնել», գերմ.* fallen: Meillet-ն սրանց է միացնում և հուն. σφάλλω *«տապալել, վայր գցել»: Հայոց* փուլ < հնդեվ. *phōl-?

288. Փուք *(«ոտ հոլ.) «փչած շունչը, փուքից դուրս ելած օդը», փքալ, փքանալ «ուռիլ, տկռիլ»* (հպարտութիւնից), *փչել «շնչել մարդու, անասունի կամ քամուց փչիկ ամիզափամփուշտ», որպես բնաձայն* phu-*արմատ կապվում է անմիջապես հուն.* φῦσα *«փուքս»,* φύσκοι *«ամիզափամփուշտ»,* φυσάω *«փչում եմ», լիտ.* pūslē *«ամիզափամփուշտ»,* pūsti *«փչել», ռուս.* пышать, пыхнуть *«փչել»,* опухоль *«ուռուցք» (համմ. աշտարակիների փուչիկ «ուռուցք, միզափամփուշտ») և այլն: Փուք բառը փոխառյալ չէ պարսկերենից* (puk), *իսկ փչել բառի փուչ- արմատը Հյուբշմանը հանում է հնդեվ.* *S(phu-skhō (?) *ձևից:*

289. Ր *անորոշութիւն ցույց տվող դերանվանական վերջամասնիկը (ո-ր, ի-ր, ուսուց-ր...)* = *ավես., սանսկ.* -ča, *հուն.* -τε, *լատ.* gne, *գոթ.* -h = *հնդեվ.* *k^we:

290. Քան *«քանդ», քանի, քանդորդ, քանդի* = *լատ.* quam *հնդեվ.* *-$k^wām$ *կամ* *$k^wān$(i), «ինչպիսի», quantus *«ինչքան», ? ինչպես է, որ բառասկզբի* k^w *հայերենում ձեացել է ?:*

291. Քառ *«չորս» հնագույն ժամանակ միայն* քառասուն *«40» բառի մեջ, պատկանում է չոր-ը արմատին, ինչպես սանս.* turīya *«չորրորդ» պատկանում է* catváras *«չորս». ավեստ.* ā-xtūcrīm *(հայց. հ.) «չորրիցս»* tūirya *«չորրորդ» պատկանում է* čaθwārō *«չորս», հուն.* τρα- (τράπεζα *բառի մեջ*) τέτταρες, τεττάρες, *լատ.* quartus *«չորրորդ» բառը՝ օսերեն* petora-*ին, այսինքն հնդեվ.* k^wtur-, $k^wtuŗ$- *ձևերը հնդեվ.* k^wetuor-*ին:*

Հայոց քառ- < *$^*ivŗ$- = *$^*(k^w)ivŗ$-: *Ըստ Մելիե* (MS L, 7, 162) *հայոց այդ քառ- <* *$kvŗ$- = *$k^w(t)vŗ$-:*

292. Եկն *«մեկի կնոջ քույրը»* = *լիտ.* sváinė *«քենի», svainis, svaĩnius, լատ.* swāinis *«քննակալ, անհրորդի», հրգ.* geswio *«անհրձագ», մրգ.* geswie *«քենի», ռուս.* свояк *«անհրորդի», сво-*

ячина «քնին», որոնք ծագած են հնդեվ. svo «լուր» դերանունից։ Հայոց քնին հնդեվ. *sve-nye- ձևից. թեպետ ավելի սպասելի էր քինի, իսկ ավելի սպասելի էր քնոի ձևի հնչյունաբանորեն վերականգնել *քեանի<*sve-sanyo- (Arm. Gr. Աբմ. բ., VI, 1446)։

293. Բերիմ (քերեցի) «քերել, քերծել, պլոկել, մաքմինը (մորքը) քերթել, փորագրել, քանդակել, գրել, բանաստեղծել», որ «նաև մաքմաշ, քորել, քերական = հուն. χείρω «խուզել, կտրել», հրգ. scēran «խուզել, կտրել», Meillet-ի այս առաւգաբանութիւնը (MSL. 8, 281) շատ կասկածելի էր համաբում Հյուբշմանը (Arm. Gr.. 503), որովհետև հուն. χείρω հանում է հնդեվ. kers- արմատից, որ պիտի տար հայոց *քեռ։ Բայց ինչպես դիտում է Հ. Աճառյանը (Աբմ. բ., VI, 1451), բոլոր նոր քննիչները kriper դնում են ker-արմատի տակ։ Կան նաև „t" աճականներով այդ sker- || ker-արմատից կազմվածները, ինչպես սանս. kṛntati= ավեստ. kərəntati «կտրել», լատ. cortex «կեղև», ալբ. kéθ «ածիլել», սանս. kṛti, ավեստ. kərəta, նոր պարսկ. kard «դանակ», հաաքս. skarð «կտրատել» և այլն։

294. Քիրան (-ան) «քրտինք»=սանս. svēda-, ավեստ. xᵛ aēδa-, նոր պարսկ. xᵛ ai, հուն. ἱδρώς, լատ. sūdor, հրգ. sveiz, կիմր. chwŷs, գերմ. Schweiss։ Հայոց քիրան <*kʻirt-<*kʻitr-=հնդեվ. *svidro-, համմտ. հուն. ἱδρώς, լատ. swīdri (հոգն.) «քրտինք»։

295. Ծոյր (քեռ, քեռէ, քերբ, քորք, քերց, քերբք) «քույր» =սանս. svásar-, ավեստ. xᵛ aŋhar-, նոր պարսկ. xᵛāhar, լատ. soror, գոթ. svistar, սլավ. sestra „сестра" և այլն։ Հնդեվ. *svésor-, ասղս. հ. *svésōr=հայոց kʻoir, սեռ. հ. *svésrôs=հայոց kʻeŕ։

296. Քուն (առ հոլ.) «քուն»=սանս. svápna-, ավեստ. xᵛafna , պարսկ. xᵛāb, հուն. ὕπνος, լատ. somnus, հիսլ. svefn, սլավ. sŭnŭ, լիտ. sāpnas և այլն։ Հնդեվ. *svepnos և *supnos։

297. Քաան (սեռ. քաանից) «քաան»=սանս. vịçati-, ավեստ. vīsaiti, նոր պարսկ. bīst, բէռատ. Fικατι, լոն. աատիկ. εἴκοσι, լատ. vīginti. հիսլ. tíche։

Հնդեվ. *vīkʻṃti, *uīkʻṇti=հայոց *gisan>*gsan>kʻsan (քսան)։

Հյուբշմանի Arm. Gr-ում բերված վերոհիշյալ մոտ երեք հարյուր հնդեվրոպական արմատներին կցվում է Բրուգմանի (Idr. II, 892 flg.) կազմից մատնանշվող քո «քո, твой» արմատը (քh-q, քհ-ճ, քh-ւ) որ կա սանս. tvá-m «դուն», tvá-m «քեզ», tvá-t «քեզնից», ավեստ. θwąn, tava և այլն, հուն. σέ, σοί և այլն, հնդեվ.

*tve-, *tvo. բայց չկա մի ուրիշ նման դեպք, որ հայերենում բառասկզբի քո- ~ քն-հնչունափոխությունը բխեր հնդեվ. tvo- ~ tve- ձևերից։ Մենք գիտենք միայն, որ բառասկզբի st- կամ kʷ-տալիս են հայերենում ք-, իսկ tv- կոմպլեքսի համար այդպիսի դեպք գոյություն չունի։ Այդ պատճառով էլ Մելիե, Աճառյանի և այլոց մոտ չի բերվում վերոհիշյալ առուգաբանությունը։ Թեև այդ pn-(pb-) բնիկ տեղական (ուրարտական) լինի և կապվի նաև սեմական լեզուների հետ (համմ. ակկադ. -ka. արամ. -ku, ինչպես abu-ka «քո հայրը», արաբ. alet-kum «քեզ հետ» և այլն)։ Հայ դերանունների միջև և ոչ հնդեվրոպականները (քո, քեւ, ձե-, իրենար, ինքն...)։

Բայց իհարկե հնդեվրոպական արմատները հայերենում ավելի են, քան բերված ևրնք հարյուրը։ Մենք այստեղ կմատանշենք 4—5 հնդեվ. արմատներ, հետո մանրամասն կվերլուծենք Հ. Աճառյանի «Արմ. բառ.»-ում բերվածները, որոնք մեծ մասամբ ընդունելիան չեն դիմանում և Մելիեն դրանց վերաբերմամբ կամ կասկածամտում կամ չի հիշատակում իր գրքում (հրատ. 1937 թ.), որ լուսն է տեսել «Արմատական բառարան»-ից հետո[1]։

1. Արգանդ (<ի-ա հոլ.) «արգանդ, մոր փորը, պավակատունը» ըստ Լիդենի (Arm. Stud, էջ 21) ծագում է հնդեվ. arg*- արմատից, որին Հ. Աճառյանը ավելացնում է արգաճատել «խղճալ, կարեկցել» (Արմ. բ., I, 640—641), բայց Մելիեն այդ ընդունում է կասկածով։ Լիդենը հայոց այդ արմատը համեմատում է կիմր. arffed(<*arpet) «ծոց, գիրկ» և թեև գալէ. arcuinn «կռնի ծիծ» բառերի հետ ես համեմատել եմ արգաւանդ, զարգաճալ բառերի հետ (ZBO 23, 353)։ Բայց մենք ավժմ ունենք մի հաջող սուգաբանություն, որը իմ կարծիքով դեբազատելի է։ Այդ հայտնի լեզվաբան Հոլգեր Պեդերսենի սուգաբանությունն է, տպված 1949 թ. լեհ. „Lingua Posnani ensis" ժողովում (Poznan, 1949, էջեր 1—2), որը անհայտ մնաց նախորդներին։ Ըստևրով հին սլավ. grъ-

---

[1] Ուշ. խմբ. Հեղինակը, ինչպես այդ երևում է այս տողերից, ժամանակ է եղել վերլուծելու Հրաչյա Աճառյանի «Արմատական բառարանի» հնդեվրոպական համարված այն բառերը, որոնք նա չէր ընդունում, սակայն վերահաս մահը հնարավորություն չտվեց իրագործելու այդ։ «Հայոց լեզվի պատմության» (հին շրջան), ներկա աշխատությունը ավարտվում է առանց այդ բաժնի։ Մեր որոնումները նրա վրա ծախած արխիվում որևէ արդյունք չտվեցին և չգիտենք արդյոք նա երբևէ այդ մասը գրել էր թե ոչ։

dī «կուրծք, սրինգ» բառի բոլոր առաջարկված առուգաբանություններն մասին, ինչպես իսլ. bruinne «կուրծք» բառի հետ կամ հուն. φρήν, φρενός «միտք, ոգի» և այլնի կապակցությամբ, որոնք չունեն -d ալսլավական կրնասպոնդեննցիան, Հ. Պեդերսենը նշում է նաև լիտ. grandis «օդակ>կլոր կարկանդակ», սանս. granthi- «հանգույց», հուն. γρόθος «աղմած բունցք» և այլերի իմաստաբանական անհարիր լինելը ալդ ալսլ. grądī «կուրծք» բառի հետ։ Որպես ունալ համապատասխանություն նա տալիս է հայոց արգանդ բառը. թե հնչյունական և թե իմաստական տեսակետից։ Հայոց g- բաղաձայնը= հնդեվ. gh ձայնեղ ասպիրատն է, ինչպես և -d-=հնդեվ. dh։ Հայտնի է նաև, որ նախորդ (հնդեվ.) gr չի կարող ունալ հարերիզում, այլ դառնալու է rg, սահմանալով նախդիր e կամ a, ինչպես, օրինակ, արտասուք բառի հետ է եղել։ Իսկ իմաստական տեսակետից (կուրծք և արգանդ) նշում է ֆրանս. sein բառը, որ ունի ալդ երկու իմաստն էլ (sein „грудь; чрево утроба; недра, лоно“) կամ կելտական brú «փորը», որը ծագմամբ կապված է брюхо («փորը») և հին բ. գերմ. Brust «կուրծք» բառերի հետ և ածանցումով ունել է bruinne «կուրծք» բառը և այլն։ Այնպես որ հայոց արգանդ բառը արմատական բառ է և ոչ թե arg- արմատն է և -and վերջածանց, եղել է grand=հին սլավ. grądī (ռուս. грудь) բառին, թե՛ հնչյունաբանական տեսակետից և թե՛ իմաստաբանական։

2. Արտոյտ «արեգածագ թռչունը», գրված է նաև՝ արտուտ, արտիւտ, արտուտ. (տաճկ.՝ չալիր դուշը)։ Իմ կարծիքով հնդեվ. բառ է, որ տալիս են լիտ. strāzdas, ռուս. дрозд (<tozd-ձևերը հետընթաց ասոմիլյացիայով), հին իսլ. þrǫstr, լատ. turdus, որից հայոց նորաթուխ՝ տորդիկ=ֆրանս. grive, թուրք. արտըճ գուշու, (Ամս. բ., VI, 957), նոր իսլ. truid։ Մեկին բերելով այս օրինակները (իր Introduction-ում) չի տալիս նախնական ձևը։ Ինչպես տեսնում ենք, ալդ նախկին ձևին մոտենում է trost-կամ trod—։ Վերջինը մոտ է լատ. turd-us և նոր իսլ. truid ձևերին և նախնական trod-ձևը դարձել է *rtod (rtut)>արտուտ, որը ինչպես երևում է հին և բարբառային հնչական ձևերից, ավելի հին է, քան արտոյտ ձևը (բարբառներում՝ Ախց., Տփ. արտուտ, Վն. արտուտիկ, Երև. տատուտ, Ալշ. արդուդ, Մշ. լարդուդիկ, Ագր. արդուդիկ)։ Հայերենում թևերս սպասելի էր *արթուտ, իսկ նշանակության չնչին տարբերությունը արժեք չունի։

3. Մոր «մի տեսակ թունավոր միջատ, լատ. tarantula. մոբահար, «մորից խայթված». մուր «մի տեսակ վնասակար միջատ»

(Ալիշան, Հին հավ., 155, առանց վկայության) մորմ, որը գործ է ածվել վարդանա առակներում (էջ 332) և գործածվում է արդի բարբառներում (Ջուղա, Արարատ)։ Սրա բառարմատն է, ըստ իս, հնդեվ. mer- «մեռնել», որի ալտերնացիայի (mer-, mor-mr) միջին ձևից է։ Համեմատել ալժմյան պարսկերենի նման ձայնափոխը mär «օձ»։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հայերենում կան հնդեվ. mer- «մեռնել» արմատի երեք ձայնափոխները—մեռ-անիմ «մեռնում եմ» (mer-) մոր կամ ածանցավոր մոր-մ (mor-ձայնափոխը) և մարդ (mr-to-) գրա ձայնափոխը։ Աշտարակում կա նաև մըռ „mildium" խաղողի ճյութերի չորացումը, «չոռ» հիվանդությունը, որը նույն արմատից պիտի կարծել։ Ներքևում այս արմատը երկու „r"-ով է գրվում merr- «մեռնել», merranda «մեռած» (բայց merdu «թող մեռնի», merta «մեռավ», տես Sturt., Hitt. Gloss, II, էջ 102), նման. hurri-=խոռ, arra- խուռիա. zarra (šarri) =ծառա և այլն։

Հնդեվ. mer-արմատից ցանկացել են հանել մոր-p «մորքի, կաշի» բառը (Patrubány), («Հանդես ամս.», 1908, էջ 246) և ևս (Տեղեկ. ինստ., II, 109), բայց պնդել դրա վրա դժվար է, այլ անալոգիաների բացակայության պատճառով։

4. Մուգ արարատյան և Ղարաբաղի բարբառներում նշանակում է «մթագույն» (մուգ կարմիր, մուգ կանաչ), ասվում է ներկած ձվի մասին (մուգ ներկած) և թեյի մասին (մուգ թեյ), ռուսերեն крепкий чай. Թեպետ Ամատունու բառարանում (Հայոց բառ ու բան, 491) գրված է «մուգ», որ իրոք այդպես է արտասանվում, բայց Հ. Աճառյանի «Դավառական բառարանում» (էջ 794) հին ձևով է տրված՝ մուգ, մուգաւուն, մուգիլ։ Այս մուգ արմատը իմ կարծիքով չի կարելի ծագմամբ անջատել սլավոնական с-муг-л-ый ձևից (կամ смуг-лый), և հնդեվ. smugh- (կամ mugh-) հայերենում պիտի տար mug-։ Իմաստի տեսակետից մեծ տարբերություն չկա, բայց տարօրինակ է, որ հայոց միայն երկու բարբառում է մնացել, այն էլ հյուսիսայինն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 5

Նախաժուխյուն 11
Հայոց լեզվի ուսումնասիրության պատմությունը 22

ԻՄԱՍ

Գլուխ առաջին

Հայ ժողովրդի և լեզվի կազմավորումը 33

Գլուխ երկրորդ

Հայասայի լեզվի պահպանումը հարևան խեթերենի և արևմտյան վրացերենի հետ 62

Գլուխ երրորդ

Հայասայի լեզվին, այլ կերպ՝ հայերենի պահպանումը վրաց լեզվախմբի հետ 69
Լազո-մեգրելական և հայոց ընդհանուր բառամթերքը 77
Ոչ փոխառյալ ընդհանուր հայ լազո-մեգրելական բառեր . . . 92

Գլուխ չորրորդ

Հայերենի պահպանումը խուռի և ուրարտական լեզուների հետ 102
Խուռիերենի (խուռերենի) շերտը հայերենում 104
Ուրարտա-հայկական լեզվապերտը 130

Գլուխ հինգերորդ

Ընդհանուր լեզվաառերեր խեթերենի և հայոց լեզվի մեջ 147
Հայ-խեթական ընդհանուր բառամթերքը 148
Հայ-խեթական քերականական համընկնումները 207

Գլուխ վեցերորդ

Հայ լեզվի հնդեվրոպական նախածը (բազկացուքյունը) 220
Ընդհանուր հանդիպումներ 224
Հնչյունաբանություն 228

Գլուխ յոթերորդ

Քերականական կառուցվածքը 234
Թեքման հոլովական ձևերը 234
Դերանվանական հոլովական ձևեր 267
Բայական ձևերը 271

Գլուխ ութերորդ

Բառապաշար 293
Հայերենի հնդեվրոպական բառարմատները 298



ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶԻ ՂԱՓԱՆՑՅԱՆ

ГРИГОР АЙВАЗОВИЧ КАПАНЦЯН

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(ՀԻՆ ՇՐՋԱՆ)

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
7	10 ն.	Բլսուսան	Բյսուն
8	16 վ.	(էջ 275)	(էջ 223)
26	13 ն.	Sprachge schichte	Sprach Geschichte
47	5 վ.	հնդեվրոպարձությամբ	հնդեվրոպարձությամբ
72	10 վ.	Սաքսիքո	Սաքսիքո
72	2 (տողատակին)	գրավել է	գրվել է
75	13 վ.	հնդեվրոքեն	հնդեվրոքեն
80	1 ն.	Wolde-Pakorny	Walde-Pokorny

Վ-Ց 00413, պատվեր 146, հրատ. 1840, ձեռ. 609, տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 15/VII 1960 թ., ստորագրված է տպագրության 22/III 1961 թ., տպագրական 22 75 մամուլ, հրատ. 18,12 մամուլ, թուղթ 60×92¹/₁₆, Գինը կազմով 1 ռ. 28 կ.

Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ. տպարան, Երևան, Բաբկովմանի 24։

ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶԻ ՔԱՓԱՆՑՅԱՆ
ГРИГОР АЙВАЗОВИЧ КАПАНЦЯН

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
(ՀԻՆ ՇՐՋԱՆ)

Հրատ. խմբագիր՝ Ա. Հ. ՇԱՂԱՄՄՅԱՆ
Կազմը նկարիչ՝ Գ. ԽՈՒԴՅԻԿՅԱՆԻ
Տեխ. խմբագիր՝ Լ. Ա. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ
Վերատեսուչ սրբագրիչներ՝ Ս. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Ջ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ

ՎՖ 00413, պատվեր 146, հրատ. 1840, ծավ. 609, տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 15/VII 1960 թ., ստորագրված է տպագրության 22/III 1961 թ., տպագրական 22 75 մամուլ, հրատ. 18,12 մամուլ, թուղթ 60×92¹/₁₆։ Գինը կազմով 1 ո. 28 կ.

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ. տպարան, Երևան, Բաբկենամուրյան 24։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0222081

ЦЕНА
AII
9399